----------------------------------	------------------	----------------------------------	-------------------

կա	կար	չկա	չկար
կան	կային	չկան	չկային

Первые два лица глагола "կամ" в прошедшем времени так же мало употребительны, как и в настоящем времени, а третье лицо, напротив, весьма частотно.

В прошедшем времени именные сказуемые образуются также при помощи именной части сказуемого и форм прошедшего времени вспомогательного глагола. В отрицательной форме вспомогательный глагол **следует** за причастием, как и в настоящем времени. Так:

ես	ազատ էի	ազատ չէի	ուսանող էի	ուսանող չէի
դու	ազատ էիր	ազատ չէիր	ուսանող էիր	ուսանող չէիր
նա	ազատ էր	ազատ չէր	ուսանող էր	ուսանող չէր
մենք	ազատ էինք	ազատ չէինք	ուսանող էինք	ուսանող չէինք
դուք	ազատ էիք	ազատ չէիք	ուսանող էիք	ուսանող չէիք
նրանք	ազատ էին	ազատ չէին	ուսանող էին	ուսանող չէին

Слова

դպրոցական – школьный	որոնք – которые
հուշ – воспоминание	քիմիա – химия
երեկ – вчера	ֆիզիկա – физика
մոտ – у (кого, чего) (послелог)	մյուս – другой
ուսուցիչ – учитель, р.п.	առարկա – предмет
ուսուցչի	ուժեղ – сильный
ուսուցչուհի – учительница	պարզապես – просто
ուսուցչուհու մոտ – у учительницы	տնային տնտեսուհի – домохозяйка
միասին – вместе	նկարիչ – художник
նայել – смотреть	հպարտանալ – гордиться
դասարան – класс	համալսարան – университет
շատերը – многие	դասախոս – преподаватель, лектор
վերհիշել – вспоминать	թատրոն – театр
դպրոց – школа	մարդիկ – люди (դ=թ)
կարդալ – читать (դ=թ)	մայրաքաղաք – столица
զոհ – довольный	մյուսները – другие
հայտնի – известный	տարբեր – разные
ֆուտբոլիստ – футболист	շրջան – район
նշանավոր – знаменитый	այցելել – навестить
երգիչ – певец (զ = ք), р.п.	մոռանալ – забыть
երգչի	ծիշտն ասած – по правде говоря
ԱՄՆ – США	դժգոհ – недовольный
ապրել – жить	հիշել – помнить
ամերիկացի – американец	Միացյալ Նահանգներ – Соединенные Штаты
շուտով – скоро	գիտնական – ученый
ամուսնանալ – жениться, выйти замуж	միշտ – всегда
Ֆրանսիա – Франция	ոչ միայն ... այլև – не только ... но и
ֆրանսուհի – француженка	հպարտ – гордый
հայոց լեզու – армянский язык	հանդիպել – встретить, -ся
մասնագետ – специалист	անպայման – обязательно
մաթեմատիկա – математика	ցավոք – к сожалению
թույլ – слабый	
գերազանցիկ – отличник, -ица	
աշակերտ, -ուհի – ученик, -ица	



Ռպրոցական հուշեր

Երեկ ես ուսուցչուհուս մոտ էի: Միասին նկարներ էինք նայում: Մեր դասարանից շատերը ինձ նման գալիս են նրա մոտ ու միասին վերհիշում են դպրոցն ու դպրոցական տարիները:



Մեր դասարանում մի տղա կար, շատ վատ էր սովորում, գիրք չէր կարդում, ուսուցիչներն ու ուսուցչուհիները նրանից գոհ չէին, բայց տղաները նրան շատ էին սիրում, նա մեր դասարանի հայտնի ֆուտբոլիստն էր: Հիմա նա մեր նշանավոր երգիչներից մեկն է:

Մի գեղեցիկ աղջիկ էլ կար, հիմա նա ԱՄՆ-ում է ապրում, նրա ամուսինը ամերիկացի է: Իսկ մի տղա մեր դասարանից շուտով մեկնում է Ֆրանսիա, ամուսնանում է մի ֆրանսուհու հետ:

Մեր ընկերուհիներից երկուսը մեր ուսուցչուհու նման հայոց լեզվի մասնագետ են, նրանք մաթեմատիկայից շատ թույլ էին: Իսկ մեր գերազանցիկ աշակերտուհիները, որոնք այն ժամանակ քիմիայից, ֆիզիկայից ու մյուս առարկաներից շատ ուժեղ էին, հիմա պարզապես տնային տնտեսուհիներ են:

Իսկ մեր դասարանի "մաթեմատիկոսը" նկարիչ է: Հիմա մեր ուսուցչուհին մեզնով հպարտանում է՝ մեկս* բժիշկ է, մեկս՝ համալսարանի դասախոս, մեկս՝ թատրոնի դերասանուհի: Բոլորն էլ լուրջ մարդիկ են: Շատերը մայրաքաղաքում են ապրում, մյուսները Հայաստանի տարբեր շրջաններում:

*մեկս – один из нас



Պետական համալսարանի շենքը ↑
← Պետական օպերայի շենքը
Դիլիջան ↓



–Որտե՞ղ էիր երեկ երեկոյան:

–Ուսուցչուհուս մոտ էի:

–Ի՞նչ էիք անում:

–Միասին նկարներ էինք նայում:

–Ձեր դասարանի մյուս աշակերտներն է՞լ են հաճախ այցելում ձեր ուսուցչուհուն:

–Այո, շատերն են նրան այցելում: Մենք նրան չենք մոռանում:

–Երգիչ Ղազարյանը ձեր դասարանում էր սովորում, չէ՞:

–Այո, նա մեր դասարանի հայտնի ֆուտբոլիստն էր:

–Իսկ դպրոցում նա լա՞վ էր սովորում, ուսուցիչները նրանից գո՞հ էին:

–Չէ՛, ուսուցիչները գոհ չէին, ճիշտն ասած՝ նա ինքն էր ուսուցիչներից դժգոհ: Բայց մենք նրան շատ էինք սիրում:

–Իսկ ձեր դասարանի գեղեցկուհին, անունը չեմ հիշում, ինչպե՞ս է, որտե՞ղ է, ի՞նչ է անում:

–Միացյալ Նահանգներում է:

–Իսկ Նարինեն ու Մարինեն հիմա ի՞նչ են անում: Հիշում եմ, դու միշտ ասում էիր, որ նրանք մաթեմատիկայից շատ թույլ են:

–Այո, մաթեմատիկայից թույլ էին, բայց հիմա երկուսն էլ հայոց լեզվի ուսուցչուհիներ են:

–Իսկ մեր դպրոցի նշանավոր գերագանցիկներին հիշու՞մ ես: Նրանք արդեն հայտնի գիտնականներ են:

–Չէ, ի՞նչ ես ասում: Նրանք հիմա տնային տնտեսուհիներ են:

–Իսկ դու ինչպե՞ս էիր սովորում, պարոն ինժեներ:

–Էհ, լավ չէի սովորում: Բայց տղայիս միշտ ասում եմ, որ լավ էի սովորում:

–Հիմա ձեր ուսուցչուհին ձեզնից գո՞հ է:

–Ոչ միայն մեզնից գոհ է, այլև մեզնով հպարտ է: Բոլորս էլ լուրջ մարդիկ ենք:

–Իսկ դուք հաճա՞խ եք հանդիպում:

–Ցավոք, մենք տարին մի անգամ ենք հանդիպում: Մեզնից շատերը Հայաստանի տարբեր շրջաններում են ապրում, բայց տարին մեկ անգամ անպայման հանդիպում ենք:

Задания и упражнения

1.  Спишите; потренируйтесь в написании буквы *Ֆ*:

*Ֆրիկը Ֆրիկու է: Նա ապրում է Ֆրեյնդում
Վաշինգտոնի Լահանգում:*

2. а) Выпишите из текста те слова, в которых звонкие согласные произносятся как глухие.

б) Напишите в два столбика слова с оглушающимися звонкими согласными и слова с неизменяемыми согласными (укажите, в каких словах есть как оглушающийся, так и неоглушающийся согласный):

Հակոբ, երբեք, նրբերշիկ, սրբիչ, արաբ, եղբայր, համբույր, տարբեր, այգի, հոգի, գարուն, հագուստ, հագնել, հագնվել, շոգ, անգամ, Գրիգոր, Քևորգ, երգիչ, երգչուհի, գույնզգույն, մանուշակագույն, վարդագույն, մարդիկ, արդեն, ընդունակ, օդաչու, դար, դանակ, կարդալ, անդամ, հանդիպել, բրինձ, բարձ, խնձոր, հուշարձան, անձրև, ձյուն, աղջիկ, տեղ, խաղող, աջ, առաջ, լուրջ, մեջ, վերջ:

в) Разделите следующие слова для переноса:


Նկարիչ, (ինձ) նման, նրա (մոտ), դպրոցական տարիներ, տղա, տնային տնտեսուհի, դժգոհ, հպարտ, բժիշկ, բժշկուհի:

3. 

 и  Замените:

а) –Սա ի՞նչ ծառ է, ծիրանի ծառ է:

–Ոչ, դեղձենի է:

դեղձ → բալ, թուզ,
խնձոր, կաղին, 


б) –Երեխաները որտե՞ղ են խաղում,

թթենու տա՞կ:

–Ոչ, դեղձենու տակ են:

ընկույզ, շագանակ,
տանձ, փշատ



В)  Перепишите текст и вместо названий плодов поставьте названия деревьев (внимание на артикль!):

Հայի համար ջուրը կրակի նման սրբազան մի բան է:

Ֆրեզնոյի ջուրը Հայաստանի ջրին շատ նման է: Հողն էլ բավականին նման է Հայաստանի հողին կամ գուցե հիշեցնում է Հայաստանի շատ շրջանների հողը: Այստեղ ծաղկում են շատ մրգատու ծառեր, մանավանդ ծիրանի ծառը: Հայկական հրաշալի երգերից մեկը կոչվում է «Ծիրանի ծառ»: Հայերն այստեղ (թուփ) են տնկում որովհետև (թուփ) այն ծառն է, որ դեռ Հայրենիքից գիտեն և սիրում են: Տնկում են նաև (նուռ, ձիթապտուղ, նուշ և ընկույզ). շատերը փորձում են նաև (պիստակ) աճեցնել, բայց (պիստակ) չի աճում Կալիֆոռնիայում: Ցանում են ծմերուկ և սեխ: Ցանում են սմբուկ, լոբի, վարունգ, դդում, լոլիկ, պղպեղ, ազատքեղ, անանուխ և ամեն տեսակ կանաչի:

Ըստ Վիլիամ Սարոյանի

Слова

սրբազան մի բան – нечто

священное (բ=փ)

հող – земля, почва

հիշեցնել – напоминать

ծաղկել – цвести (ղ=խ)

մրգատու – фруктовый (գ=բ)

մանավանդ – особенно

հրաշալի – чудесный

երգ – песня (գ=բ)

կոչվել – называться

տնկել – сажать

նաև – также

որովհետև – потому что

գիտենալ – знать

փորձել – пытаться (ծ=ց)

աճեցնել – выращивать

աճել – расти

սմբուկ – баклажан

վարունգ – огурец

դդում – тыква (второе դ=թ)

լոլիկ – помидор

պղպեղ – перец

ազատքեղ – петрушка

անանուխ – мята

ամեն տեսակ – всякий

կանաչի – зелень



4. Поставьте слова, приведенные в скобках, в указанном падеже:

Անահիտի (մատանի – род. п.) քարը սև է: Երեխաները որտե՞ղ են: (Այգի – местн. п.) խաղում են: Մենք մի նամակ ենք գրում ("Ոգնի" – дат. п.) հայ (ոգի – род. п.) մասին: Ես Ձեր (որդի –род.-дат. п.) ամեն օր տեսնում եմ համալսարանում: Այս (գինի –отл. п.) ուզում եմ: Նա սիրում է ձի նստել, բայց միշտ (ձի –отл. п.) ընկնում է:

5. Ответьте на вопросы, пользуясь подсказками в скобках:

Ի՞նչ ես ուզում դառնալ (статья) (երգիչ, երգչուհի, դերասան, դերասանուհի, ինժեներ, բժշկուհի): Ու՞մ հետ է ամուսնանում եղբայրդ (մի երգչուհի, մի նկարչուհի, մի ֆրանսուհի, մի իտալուհի, մի իսպանուհի): Ու՞մ հետ է ամուսնանում քույրդ (մի նկարիչ, մի ֆիզիկոս, մի քիմիկոս, մի ամերիկացի, մի անգլիացի, մի մեքսիկացի): Ու՞մ մոտ ես գնում (բժիշկ, բժշկուհի, ուսուցիչ, ուսուցչուհի, նկարիչ, նկարչուհի): Ու՞մ մասին է (о ком?) այս գիրքը (ամերիկացիներ, մի ուսուցչուհի, մի նկարիչ, հնդիկներ): Դուք ումի՞ց դժգոհ չեք (բժիշկ, բժշկուհի, ուսուցիչ, ուսուցչուհի):

6a)

բժիշկ - բժշկի(ն), բժշկից բրինձ - բրնձի(ն), բրնձից, բրնձով գիրք - գրքի(ն), գրքից, գրքով, գրքում գրիչ - գրչի(ն), գրչից, գրչով դարչին - դարչնի(ն), դարչնից, դարչնով երաժիշտ - երաժշտի(ն), երաժշտից երգիչ - երգչի(ն), երգչից երկինք - երկնքի(ն), երկնքից, երկնքով, երկնքում նարինջ - նարնջի(ն), նարնջից, նարնջով	նկարիչ - նկարչի(ն), նկարչից մածուն - մածնի(ն), մածնից, մածնով միրգ - մրգի(ն), մրգից, մրգով մոխիր - մոխրի(ն), մոխրից, մոխրով, մոխրում պանիր - պանրի(ն), պանրից, պանրով, պանրում ջուր - ջրի(ն), ջրից, ջրով, ջրում սունկ - սնկի(ն), սնկից, սնկով ուսուցիչ - ուսուցչի(ն), ուսուցչից գիծ - գծի(ն), գծից, գծով
--	---


и Замените:



б) Ես այս բժշկին դեռ դպրոցից եմ հիշում, միասին էինք սովորում:	բժիշկ → նկարիչ, երաժիշտ, երգիչ, ուսուցիչ
в) Արդեն քսան րոպե է, ինչ երկնքին ես նայում, ի՞նչ ես մտածում:	երկինք → այս գիրքը, իմ գրիչը, մոխիրը, ջուրը, այս գիծը
г) –Սա ի՞նչ է: Սա ինչո՞վ եմ ուտում: – Բրնձով :	բրինձ → դարչին, նարինջ, մածուն, միրգ, պանիր, սունկ

7a)


Ես **քույրերիս** հետ մեկնում եմ Հայաստան: → Ես **քրոջս** հետ մեկնում եմ Հայաստան:


Ես **քույրերիս** հետ մեկնում եմ Հայաստան: Նա իր **եղբայրներով** հպարտանում է: Այն **աղջիկներին** տեսնում ես: Ուսուցիչը իր **աշակերտուհիներից** դժգոհ էր: Աշակերտները լսում են **ուսուցիչներին**: Ես այս **բժիշկներին** չեմ հավատում, մեր **բժիշկներին** եմ հավատում:

- 6) 


Ես քույրերիս հետ մեկնում եմ Հայաստան:	→	Ես նրանց հետ մեկնում եմ Հայաստան: 
Ես քրոջս հետ մեկնում եմ Հայաստան:	→	Ես նրա հետ մեկնում եմ Հայաստան: 



См. предложения пункта а).

- 7a) 


Նա բժշկին չի լսում:	→	Նա բժշկներին չի լսում: 
----------------------------	---	--

Նա **բժշկին** չի լսում: Այս մատանիները **քրոջս** համար են (дтя сестры): Նա ուզում է իր **հորեղբոր** նման մաթեմատիկոս դառնալ: Ի՞նչ ես ուզում այս **աղջկանից**:

- 6) 


Նա բժշկին չի լսում:	→	Նա նրան չի լսում: 
Նա բժշկներին չի լսում:	→	Նա նրանց չի լսում: 


См. предложения пункта а).

- 9 a) 


Ի՞նձ եմ հարցնում:	→	-Այո, քեզ են հարցնում: -Ոչ, քեզ չեն հարցնում:
-------------------	---	--


Ի՞նձ եմ հարցնում: Դու նրանց նամակ գրու՞մ ես: Դուք նրան հաճա՞խ եք հանդիպում: Դու նրան հավատու՞մ ես: Իսկ ի՞նձ: Դուք մեզ հետ գալի՞ս եք համալսարան: Դու ինձ լա՞վ ես լսում: Նրանք մեզ հետ գալի՞ս են թատրոն: Իմ տղան ինձ նմա՞ն է: Բժիշկ, ինձ արդեն կարելի՞ է աղի, կծու, թթու ուտել:

- 6) 


Այս մատանին քեզ համար է:	→	-Այս մատանին ի՞նձ համար է: 
---------------------------------	---	---

Այս մատանին **քեզ** համար է: Ես նրանց վատ եմ հիշում: Մենք նրան լավ ենք հիշում: Երեկ երեկոյան նա ինձ մոտ չէր: Առավոտյան նրանք մեզ մոտ էին: Ես չեմ ուզում քեզ նամակ գրել: Ես Ձեզ հավատում եմ: Տղան, ես քեզնից շատ գոհ եմ, ես քեզնով միշտ հպարտանում եմ, դու ինձ նման ես: Ալլո՛, ես ձեզ եմ դիմում: Ես Ձեզ լավ եմ լսում: Այս տոմսերը ձեզ համար են, ես ձեզ հրավիրում եմ օպերա: Նա ինձ չի հավատում:

10. 

Երեկ ես մեր ուսուցչուհու մոտ էի :	→	Երեկ մենք մեր ուսուցչուհու մոտ էինք : 
---	---	--

Երեկ **ես** մեր ուսուցչուհու մոտ **էի**: Ուսուցիչը նրանից դժգոհ չէր: Նա ֆիզիկայից թույլ էր: Մեր ուսուցչուհին մեզնով չէր հպարտանում: Դու մայրաքաղաքու՞մ էիր ապրում: Ամռանը ամեն առավոտ ես վեր էի կենում ժամը յոթին ու բակում մարզանք էի անում: Իսկ դու ամռանը ժամը տասին էիր վեր կենում և մարզանք չէիր անում:


11. 

Մենք նկարներ էինք նայում:




Ես նկարներ էի նայում: 


Մենք նկարներ էինք նայում: Որտե՞ղ էիք երեկ երեկոյան: Այս տղաները մաթեմատիկայից շատ ուժեղ էին: Ամռանը մենք անտառում սունկ էինք հավաքում, ծաղիկ էինք հավաքում, աղբյուրից ջուր էինք խմում:

12.  Ответьте на вопросы:

Երեկ դուք միասի՞ն էիք: Դուք դպրոցում լա՞վ էիք սովորում: Երբ Դուք Հայաստանում էիք, այնտեղ ի՞նչ եղանակ էր: Երբ վերջին անգամ դուք թատրոնում էիք, այնտեղ շա՞տ մարդ կար: Դուք ի՞նչ էիք ուզում դառնալ:

 13. Отрицая следующие утверждения, проследите за тем, чтобы сохранилось смысловое членение:

Հայկուհին իմ ընկերուհին էր: Արմենն էր իմ ընկերը: Այն ժամանակ նա հինգ տարեկան էր: Տղան լսում էր մայրիկին: Տղան մայրիկին լսում էր: Դպրոցական տարիներին նա շատ էր կարդում:

14. 




и



Замените:


- Երեկ նա շատ զբաղված էր, ժամանակ չունեիր, հյուր ունեիր:
- Առավոտյան դու տա՞նն էիր:
- Երբ դու երիտասարդ էիր, ի՞նչ էիր ուզում դառնալ:
- Ուզում էի քիմիկոս դառնալ:
- Բայց, կարծեմ, քիմիայի ուսուցիչը դժգոհ էր քեզնից:
- Իսկ ես սիրում էի քիմիան:

- նա → ես, մենք, նրանք
- դու → նա, դուք, նրանք
- դու → նա, դուք, նրանք


15 a) 

Այստեղ գրքեր ու տետրեր կան:



Այստեղ գրքեր ու տետրեր կային: 

Այստեղ գրքեր ու տետրեր կան: Մեր դասարանում մի գերազանցիկ կա: Ձեր քաղաքում նշանավոր մասնագետներ կան: Մեր համալսարանում հայտնի դասախոսներ կան:


б) 

Այստեղ գրքեր ու տետրեր կան:
Այստեղ գրքեր ու տետրեր կային:




Այստեղ գրքեր ու տետրեր կա՞ն:
Այստեղ գրքեր ու տետրեր չկան:
Այստեղ գրքեր ու տետրեր կայի՞ն:
Այստեղ գրքեր ու տետրեր չկային:

См. предложения пункта а).

16. 

Երևանում մենք լավ
բարեկամներ ունենք:



Երևանում մենք լավ
բարեկամներ ունեինք: 

Երևանում մենք լավ բարեկամներ ունենք: Ամեն տարի ամռանը նրանք մեզ հրավիրում են Հայաստան, իսկ հայրս սովորաբար ասում է. "Ժամանակ չունենք": Ես կարող եմ կարդալ միայն նամակի սկիզբն ու վերջը: Քեռի Վարդանն ու տիկին Սրբուհին մի տղա ունեն, նրա անունը Հակոբ է: Հակոբն ուսանող է: Հակոբն ընդունակ տղա է, սիրում է կարդալ, լավ է սովորում: Մենք արդեն տոմս ունենք: Հայաստանում հոկտեմբերի սկզբին դեռ բավականին տաք է: Իսկ ի՞նչ եղանակ է Իջևանում սեպտեմբերին:

Բաղնիսում տեղ չկա, բայց մարդիկ գալիս են ու գալիս: Իսկ բաղնիսի դռան առաջ մի մեծ քար կա: Մարդիկ գալիս են, բաղնիսի դռան առաջ ընկնում են, հետո վեր են կենում ու գնում:

Մենք բակ չունենք: Իմ քրոջ սկեսրոջ տան բակում ենք: Նա հյուրասեր տանտիկին է: Բարի է ու կատակասեր: Հետաքրքիր կին է: Քրոջս ամուսինն էլ է իր մոր նման հյուրասեր ու սրամիտ: Բակում մի մեծ ծիրանի ծառ ունեն, ծառի տակ՝ սեղան, մեծ մասամբ այնտեղ են ուտում: Հենց բակում, ցայտադբյուրից ջուր են խմում: Իսկ տանը ջուր չունե՞ն, նրանց ջուրը բակում է: Չէ, տանը ջուր կա: Տաք ու սառը ջուր ունեն, բայց երբ նրանք բակում են, իսկական աղբյուրի ջուր են խմում:

Ես սպանաղ սիրում եմ, բայց սխտոր չեմ ուզում:


Ամեն առավոտ վեր են կենում, պատուհանից դուրս են նայում և աչքերիս չեմ հավատում: Լուսամուտից մի հոյակապ, հմայիչ տեսարան է բացվում: Բայց մի քանի օր է, որ Մասիսը լավ չի երևում, ամպերը ծածկում են: Սևանում արդեն ցուրտ է, ջուրը սառն է, հաճախ անձրև է գալիս: Իսկ լեռներում արդեն նույնիսկ ձյուն է գալիս: Մի կես ժամվա ճանապարհ է մեքենայով, բայց լեռներում կարող է կարկուտ գալ, իսկ Երևանում դեռ ոսկի աշունն է շարունակվում: Ցերեկվա ժամերին այլևս շոգ չի, արևը չի վառում: Այնտեղ բոլորն ասում են, որ այս տարվա աշունը շատ սիրուն է: Երեկոյան մի քիչ ցուրտ է ամառվա թեթև հագուստներով: Շատերը արդեն տաք են հագնվում: Անձրևոտ օրերին ես սև կոշիկներս եմ հագնում: Բայց Երևանում գրեթե անձրև չի գալիս, 20-22 աստիճան է: Փողոցներն ու պարտեզները լի են գույնզգույն տերևներով:

Հայի համար ջուրը կրակի նման սրբազան մի բան է:

Ֆրեզնոյի ջուրը Հայաստանի ջրին շատ նման է: Հողն էլ բավականին նման է Հայաստանի հողին կամ գուցե հիշեցնում է Հայաստանի շատ շրջանների հողը: Այստեղ ծաղկում են շատ նրգատու ծառեր, մանավանդ ծիրանի ծառը:


17. Вместо точек поставьте слово рѣчь. Обратите внимание не только на артикль, но и на требуемый падеж:

Եղբայրս ... է, քույրս էլ է ..., իսկ ձեր ընտանիքում քանի՞ ... կա: Երբ նա հիվանդ էր, ամեն օր մի ... էր գալիս: Ամեն ... չի կարելի դիմել: Վարդանի ... շատ լավ մասնագետ է. Այն ... մեր բակում է ապրում: Ո՞վ է քո ... լուրջ էր: Մենք մեր ... շատ գոհ ենք: Գու՞մեր ... հիշում ես: Գու՞ այս ... հավատում ես:

18.a) 

Դուք ի՞նչ մասնագետ եք: Ի՞նչ մասնագիտություն ունեք:
 – Кто Вы по профессии? Какая у Вас профессия?

մասնագետ "специалист" մաթեմատիկոս ֆիզիկոս քիմիկոս մարզիկ "гимнаст" հայագետ (հայերենագետ) ռուսագետ տնտեսագետ "экономист"	մասնագիտություն "специальность" մաթեմատիկա ֆիզիկա քիմիա մարզանք "гимнастика", ֆիզկուլտուրա հայոց լեզու (հայերեն) ռուսաց լեզու (ռուսերեն) տնտեսագիտություն "экономика" (наука, дисциплина) ու: տնտեսություն "экономика" (хозяйство) գրականություն "литература "
գրականագետ "литературовед" նկարիչ "художник" երաժիշտ "музыкант" պատմաբան "историк" իրավաբան "юрист" փաստաբան "адвокат"	նկարչություն "рисование" երաժշտություն "музыка" պատմություն "история" իրավաբանություն "юриспруденция"

б)  Ответьте на вопросы:

Դուք սովորու՞մ եք: Ի՞նչ եք ուզում դառնալ: Դուք աշխատու՞մ եք: Ի՞նչ մասնագիտություն ունեք: Ձեր հայրը դեռ աշխատու՞մ է, թե՞ արդեն թոշակառու է (пенсионер): Նա ի՞նչ մասնագետ է(եր): Իսկ Ձեր մա՞յրը: Ի՞նչ մասնագիտություն ունի Ձեր եղբայրը: Իսկ Ձեր քու՞յրը: Իսկ Ձեր հարևա՞նը (сосед): Իսկ Ձեր ընկե՞րը: Իսկ Ձեր ընկերուհի՞ն:

Ի՞նչ առարկաներ են անցնում (проходят) հիմա դպրոցում: Ի՞նչ առարկաներ էիք անցնում Դուք դպրոցում: Ի՞նչ առարկաներ են անցնում Ձեր ինստիտուտում:

19. 


(ռուսաց լեզու)
 Դպրոցում ես թույլ էի
 ...: Ես սիրում էի ...:
 Մենք անցնում էինք ...:

→ Դպրոցում ես թույլ էի
 ռուսաց լեզվից: Ես սիրում
 էի ռուսաց լեզուն: Մենք
 անցնում էինք ռուսաց լեզու:


(ռուսաց լեզու) Դպրոցում ես թույլ էի ...: Ես սիրում էի ...: Մենք անցնում էինք ...: (անգլերեն) Իմ դպրոցական ընկերը ուժեղ էր ...: (ֆրանսերեն, գերմաներեն) Դպրոցում մենք ... էինք անցնում, բայց ես շատ էի սիրում ...: (լատիներեն) Հիմա դպրոցներում ... անցնու՞մ են: (գրականություն, ֆիզիկա, քիմիա) Քույրս շատ է սիրում ..., բայց ... ու ... էլ թույլ չի: (հայոց լեզու) Այս տարվանից մեր դպրոցում ... են անցնում: (պատմություն) Եղբայրս ... մի քիչ թույլ է, ոչինչ չի հիշում: (երաժշտություն, նկարչություն) Իմ դպրոցական ընկերուհին շատ էր սիրում ... ու ...: (տնտեսագիտություն) Եղբայրս դպրոցում արդեն ... է անցնում: (ֆիզկուլտուրա) Այսօր մենք ... չունենք, ... ուսուցիչը հիվանդ է:

20. Расскажите о владельцах визитных карточек (այցելողն):


Նրա անունը ... է: Նրա ազգանունը (фамилия) ... է: Նա ապրում է..., նրա հասցեն (адрес) է ...: Մասնագիտությամբ նա ... է, աշխատում է ...:




Կարեն Առթույան
Երևան, Արուսյան փող., 57 բն. 99
ԱՏԱՆԱԲՐՈՅԺ



Վիգեն Փորսուղյան
Երևան, Թումանյան փող., 189, բն. 9
գրականագետ, Երևանի պետական
համալսարանի դասախոս



Տաթևիկ Չարդարյան
Երևան, Սայաթ-Նովայի փող., 102, բն. 3
դրամատիկ թատրոնի դերասանուհի




Արսեմ Ղազարյան
Երևան, Հերաշու փող., 64, 214
երգիչ, Երևանի պետական
համալսարանի դասախոս




Վրույր Զրբաշյան
Երևան, Կոմիտասի փող., 153, բն. 119
տիկնիկային թատրոնի նկարիչ



Սուրեն Բաղդասարյան
Դիլիջան. հեռ. 22 33 44
փաստաբան



Խաչատրուր Ավետիսյան
Երևան, Մաշտոցի պող. 96, բն. 103
մաթեմատիկոս, Երևանի պետական
համալսարանի դասախոս



Զավեն Փափազյան
Երևան, Իսահակյան փող., 58, բն. 19
ֆիզիկոս, Երևանի պետական
համալսարանի դասախոս

21. а)  и 

Հայրը վճռում է խոսել լրջորեն:

– Հիմա ի՞նչ առարկաներ ես սովորում պարոն Ավագյանից:*

– Արդեն հունարեն ենք կարդում, հայրիկ: Ֆիզիկա էլ ենք անցնում, պատմություն, աշխարհագրություն:

Բագրատյանը գլուխը բարձրացնում է: Ստեփանը հայերեն է խոսում: Արդյոք ինքն է՞լ է հայերեն հարցնում: Իրար հետ սովորաբար խոսում են ֆրանսերեն: Որդու հայերեն խոսակցությունը հուզում է հորը: Ստեփանն իր աչքին ավելի շատ ֆրանսիացի էր, քան հայ:

– Աշխարհագրություն, – կրկնում է Գաբրիելը*, – հիմա ո՞ր աշխարհամասն եք անցնում:

– Փոքր Ասիայի և Սիրիայի աշխարհագրությունը, – պատասխանում է Ստեփանը:

Գաբրիելը փորձում է խոսակցությունը մանկավարժորեն ավարտել:

–Կարո՞ղ ես այստեղ գծագրել Մուսա լեռան քարտեզը:
 Ստեփանը երջանիկ է, որ հայրն իրեն այդպիսի բան է վստահում:
 –Այո, հայրիկ: Քո սենյակում դեռ կախված է հորեղբայր Ավետիսի քարտեզը՝ Անտիոքն ու ծովեզերքը: Մնում է միայն մասշտաբը մեծացնել և լրացնել պակասը:

!*Ավագյան (գ=ք), Գաբրիել (բ=փ)

ըստ Ֆրանց Վերֆելի ("Մուսա լեռան քառասուն օրը")



Слова

վճռել – решить
 խոսել – говорить
 լրջորեն – серьезно
 աշխարհագրություն – география
 գլուխ – голова, ր.п. գլխի
 բարձրացնել – поднимать (ծ=ց)
 արդյոք – ли (вопросительная частица, դ=թ)
 հարցնել – спросить
 իրար հետ – друг с другом
 որդի – сын (դ=թ)
 խոսակցություն – разговор
 հուզել – волновать
 իր աչքին – в его глазах
 կրկնել – повторить
 ո՞ր – какой?

աշխարհամաս – часть света
 Փոքր Ասիա – Малая Азия
 պատասխանել – отвечать
 փորձել – пытаться (ծ=ց)
 մանկավարժորեն – педагогично
 ավարտել – завершить
 գծագրել – чертить
 քարտեզ – карта
 երջանիկ – счастливый
 այդպիսի բան – такую вещь
 վստահել – доверять
 կախված է – висит
 ծովեզերք – побережье
 մնալ – оставаться
 մասշտաբ – масштаб
 մեծացնել – увеличить
 լրացնել – дополнить
 պակասը – недостающее

Կ) Какие из следующих утверждений правильные, а какие ошибочные?

	ճիշտ է	սխալ է
1. Խոսում են երեք հոգի՝ հայրը, որդին, ուսուցիչը:		✓
2. Հոր անունը Ստեփան է:		
3. Գաբրիելն ու Ստեփանը միշտ ֆրանսերեն են խոսում:		
4. Ավետիսը Գաբրիելի հորեղբայրն է:		
5. Ստեփանը Գաբրիելի աչքին ավելի շատ ֆրանսիացի էր, քան հայ:		
6. Պարոն Ավագյանը Ստեփան Բագրատյանի ուսուցիչն է:		
7. Ավետիսի քարտեզը կախված է Գաբրիելի սենյակում:		
8. Մուսա լեռը Հայաստանում է:		
9. Գաբրիելը որդուն վստահում է գծագրել Մուսա լեռան քարտեզը:		

 Исправьте ошибочные утверждения: 

1. Խոսում են երկու հոգի՝ հայրը և որդին:

Урок 8. Ալֆբերրդ դաւ

Алфавит. Числовое значение армянских букв.

Грамматика

Порядковые числительные.

Неличные формы глагола. Склонение неопределенной формы глагола.

Причастие сопутствующего действия.

Тексты

Մեծամոր (Հրանտ Մաթևոսյան)

Պըլը Պուլիմ վարժապետի մոտ

Выучите армянский алфавит. (см. стр. 8). Перепишите в алфавитном порядке фамилий визитные карточки из урока 7.

Порядковые числительные

Դասական թվականներ



Порядковые числительные в армянском языке образуются при помощи суффиксов -րորդ (добавляемого к основе числительных երկու, երեք, չորս – երկ-, եր-, չոր-) и -երորդ (добавляемого к числительным выше "пяти"). Исключение составляет лишь առաջին "первый" (ք=չ, как в наречии и послелого առաջ).

В порядковых числительных звонкое դ суффикса -րորդ/-երորդ произносится оглушенно и с придыханием (դ=թ).

Порядковые числительные записываются так: 1-ին, 2-րդ, 5-րդ, 100-րդ и т.д.

Суффикс -երորդ не несет ударения. Так, երկրորդ, երրորդ, չորրորդ, но: հինգերորդ, տասնհինգերորդ, քսաներորդ. Вопросительный знак (и интонация) приходятся на ударный слог, а не на суффикс -երորդ.



մեկ – առաջին	տասնմեկ – տասնմեկերորդ
երկու – երկրորդ	տասներկու – տասներկուերորդ
երեք – երրորդ	տասներեք – տասներեքերորդ
չորս – չորրորդ	տասնչորս – տասնչորսերորդ
հինգ – հինգերորդ	տասնհինգ – տասնհինգերորդ
վեց – վեցերորդ	քսան – քսաներորդ
յոթ – յոթերորդ	երեսուներորդ
ութ – ութերորդ	քառասուներորդ
իմը – իններորդ	հարյուր – հարյուրերորդ
տասը – տասներորդ	հարյուր մեկ – հարյուր մեկերորդ
կամ տասերորդ (разг.)	հարյուր երկու – հարյուր երկուերորդ
	հազար – հազարերորդ
	հարյուր հազար – հարյուր հազարերորդ



քանի՞երորդ կամ ո՞րերորդ – который по счету?



Բ-ն այբուբենի ո՞րերորդ տառն է Ո՞րն է այբուբենի երկրորդ տառը:	-երկրորդ: -Բ-ն է:
ո՞ր հարկը, – какой этаж? ո՞ր հարկում – на каком этаже? ո՞ր էջում կամ ո՞ր էջին – на какой странице?	առաջին երրորդ իննսուններորդ
ո՞ր դասարանում – в каком классе? ո՞ր կուրսում – на каком курсе?	չորրորդ հինգերորդ

❖ Ответьте на вопросы:

Տարին դարի ո՞ր մասն է: (100-րդ): Ամիսը տարվա ո՞ր մասն է:
Օրը ամսվա ո՞ր մասն է: Օրը տարվա ո՞ր մասն է: Օրը շաբաթվա ո՞ր
մասն է: Ժամը օրվա ո՞ր մասն է: Բոպեն ժամվա ո՞ր մասն է:
Վայրկյանը բոպեի ո՞ր մասն է: Վայրկյանը ժամվա ո՞ր մասն է:

Դու ո՞ր դասարանում ես: Իսկ քու՞յրդ: Իսկ եղբա՞յրդ: Դուք ո՞ր
կուրսում եք: Իսկ ձեր հարևանը: Իսկ ձեր հարևանուհի՞ն: Դուք ո՞ր
հարկում եք ապրում: Իսկ ձեր ընկերուհի՞ն: Այսօրվա դասը ո՞ր էջում
է: Ո՞րն է հայերեն այբուբենի երրորդ տառը: Իսկ ո՞րն է ռուսերեն
այբուբենի երրորդ տառը: Վ-ն հայերեն այբուբենի ո՞րերորդ տառն է:
Ո՞րերորդ տառն է հայերեն այբուբենի է-ն: Իսկ ռուսերեն այբուբենի
է՞-ն:

❖ Прочитайте и задайте вопрос:

Օրը ժամվա քանիչորսերորդ մասն է: Տասիկա ապրում է
յոթերորդ հարկում: Մեր դասը հարյուր երեսունմեկերորդ էջում է:
Փոքր քույրս սովորում է առաջին դասարանում:

Числовое значение армянских букв

Ա – 1	Ժ – 10	Ճ – 100	Ռ – 1000
Բ – 2	Ի – 20	Մ – 200	Ս – 2000
Գ – 3	Լ – 30	Յ – 300	Վ – 3000
Դ – 4	Խ – 40	Ն – 400	Տ – 4000
Ե – 5	Ծ – 50	Շ – 500	Ր – 5000
Զ – 6	Կ – 60	Ո – 600	Ց – 6000
Է – 7	Չ – 70	Չ – 700	Ի – 7000
Ը – 8	Ձ – 80	Պ – 800	Փ – 8000
Թ – 9	Ղ – 90	Ջ – 900	Ք – 9000
Վ – 10 000 (քյուր)			

Таким образом: 1998 = ՌՋՂԸ

Неличные формы глагола: неопределенная форма

Բայի անդեմ ձևերը. անորոշ դերբայ



Неопределенная форма глагола, принимая определенный артикль, выполняет роль абстрактного существительного,

обозначающего название действия. Ср. русск. "Курить вредно" –
 "Ծխելը վնասկար է:"

Склонение неопределенной формы глагола

Неопределенная форма глагола склоняется по типу -ու.

Им.-вин. п. Ուղղ.-հայց. հ.	ծխելը	կարդալը
Род.-дат. п. Սեռ.-սր. հ.	ծխելու(ն)	կարդալու(ն)
Отл. п. Բաց. հ.	ծխելուց	կարդալուց
Тв. п. Չործ. հ.	ծխելով	կարդալով
Местн. п. Ներգ. հ.	ծխելում	կարդալում

Родительный падеж неопределенной формы глагола может быть определением: խմելու ջուր "питьевая вода", գրելու թուղթ "писчая бумага" и т.д. В сочетании с различными предлогами и послелогоми употребляется в функции дополнения: կարդալու մասին "о чтении", или различных обстоятельств: կարդալու համար "для чтения", կարդալու նպատակով "с целью чтения", կարդալու պատճառով "из-за чтения", կարդալու ժամանակ "во время чтения", անց կարդալու "не читая" и т.д.

Дательным падежом без артикля оформляется обстоятельство цели: Վերջապես երեխաները գնում են բալ խաղալու, իսկ մենք նստում ենք սուրճ խմելու: "Наконец дети идут во двор играть, а мы садимся пить кофе." Ժամը իննին երեխաները գնում են քնելու: "В девять часов дети идут спать." Неопределенная форма глагола, принимая артикль, т.е. перейдя в разряд существительных, в дательном падеже выполняет функцию дополнения: Նրա խոսելում մի՛ նայեք: "Не смотрите (не обращайтесь внимания) на то, что (как) он говорит."

Отложительным падежом оформляется обстоятельство причины: Շատ աշխատելուց ես չեմ հոգնում, գործ չունենալուց եմ հոգնում: "Я не устаю от того, что много работаю, я от безделья устаю." Или другие обстоятельства: Ծխելուց օգուտ չկա: "В курении нет пользы." В сочетании с послелогоми հետո и անց неопределенная форма глагола в отложительном падеже выполняет функцию обстоятельства времени. Например: քնելուց անց "перед сном", ուտելուց կես ժամ հետո "через полчаса после еды".

Творительным падежом оформляется обстоятельство сопутствующего действия, которое обычно переводится на русский язык деепричастием: Կարծելով, որ բաղնիխում մարդ չկա, տերը հանգիստ գնում է բաղնիխ: "Думая, что в бане никого нет, хозяин спокойно идет в баню."

Местным падежом можно оформить обстоятельство, типа "в курении, в чтении", хотя предпочтительнее сочетание род. п. + մեջ: ծխելու մեջ, կարդալու մեջ.

Причастие сопутствующего действия.

Հարակից դերբայ

Причастие сопутствующего действия образуется при помощи окончания **-իս**, прибавляемого к неопределенной форме глагола, т.е. имеет окончание **-ելիս**, **-ալիս**. (В сущности, при помощи этого причастия, а не причастия настоящего времени, строится настоящее время глаголов գալ, լալ, տալ). Причастие сопутствующего действия иногда переводится на русский язык деепричастием, но чаще оборотом "при + абстрактное существительное-название действия": կարդալիս "при чтении", ուտելիս "при еде", ծիծաղելիս "смеясь". При отсутствии соответствующего абстрактного существительного употребляется придаточное предложение времени, описывающее сопутствующее действие.

Сравните значение и употребление творительного падежа неопределенной формы глагола в функции обстоятельства сопутствующего действия (с одной стороны) и причастия сопутствующего действия (с другой стороны):

Երաժշտութիւնը լսելիս նա փակում է աչքերը: "Когда он слушает музыку, он закрывает глаза".

Երաժշտութիւնը լսելով նա դասերն է սովորում: "Слушая музыку, он учит уроки".



և Մեծամոր

Արմավիր գյուղի դպրոցական տղաները պեղելով կավից զատում են օրական մի ուլունք, ջնարակած մի կտոր ափսե, երբեմն՝ կոպիտ մի արծաթադրամ, կավե մի սալ և դպրոցում Հայոց պատմութիւնից ստանում են անբավարար: Հիմա կավե ավերակներում նստած՝ ամաչում են նայել ուսանողուհու բրոնզագույն ոտքերին և սիրահարվում են լաց լինելու չափ: Ինչի՞ համար են այս պեղումները, ինչու՞ ամուսնանում են քսան տարեկանից հետո, ինչու՞ տասը տարեկան աղջիկը մարդու չի տխրեցնում, իսկ մեծ աղջիկները տխրեցնում են, հաց ուտելիս ինչու՞ դասախոսի և մյուս տղաների ծամելը տգեղ է, իսկ աղջկա ծամելը՝ տխուր ու գեղեցիկ: Ահա նրանցից ՄԵԿԸ ԱՐԱԳ ՎԱԶՈՒՄ Է ԴԵՊԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՎԵՐՋԻՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ ՎՈԱՄՇԱՊՈՒՅ ԱՐՔԱՅԻ ՄՈՏ: "Վարդապետը գրերը բերում է":

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ
Ժ	Ի	Լ	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ
Ռ	Ս	Վ	Տ	Ր	Յ	Ի	Փ	Ք

–Ապա, ապա, – սպասում է Վռամշապուհը:

–Էս է:

–Մնացածը:

–Լրիվ է:

–Լրի՞վ:

–Էս է:

-Է՛, ուրեմն չկարողացար¹:

-Կարողացա՛, էս է:

-Էս ի՞նչ է:

-Ա, Արարատ:

-Է, չէ՛, չէ՛: Արարատը բա էսպե՞ս կլինի²: Հապա գրիր Արարատ:

ԱՐԱՐԱՏ:

-Է՛, մարդ աստծու³, աստծու տարին⁴ ենք սպասում վարդապետը գիր է գտնում, գիր է գտնում, գտածդ ու՞ր է: Հապա գրիր ծիրան:

ԾԻՐԱՆ:

-Ո՞վ գիտի, գուցե եղ է: Սա ո՞վ է:

-Ճ-ն է, չե՞ս ճանաչում:

-Նման է, ինքն է, - Վռամշապուհը փառ-փառ ծիծաղում է Փ տառի վրա, - էս Փ չի՞:

...
- Ուրեմն լրի՞վ է, - դարձյալ հարցնում է արքան:

-Լրիվ: Ամբողջը:

-Ապա մի գրի՛ր քո անունը:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՇՏՈՅ:

-Լավ գիր է, - տխրում է Վռամշապուհը, - գեղեցիկ, էսպես ինքն իր համար: Սա Հայոց գիրն է և միայն Հայոց գիրն է: Մեր մասին ու մեզ համար ճիշտ գիր է:

ըստ Հրանտ Մաթևոսյանի ("Մեծամոր")

¹չկարողացար – (ты) не смог, կարողացա – (я) смог

²Արարատը բա էսպե՞ս կլինի – Апарат разве так будет?

³մարդ աստծու – человек Божий (обращение)

⁴աստծու տարին – целый год



Մեծամորի պեղումներից

Մաշտոցի հուշարձանը. Հայոց այբուբենը քանդակագործ՝ Ղ. Չուբարյան (ոսկյա) գործ՝ Բ.Արզումանյանի և Ժ. Չուկոյանի

Слова

գյուղ – деревня, село
պեղել – откопать, делать раскопки
կավ – глина
գատել – отделять
օրական – в день
նլունք – бусинка
ջնարակած – покрытый глазурью
ջնարակել – покрывать глазурью

կտոր – кусок
ափսե – тарелка
երբեմն – иногда (բ=փ)
կոպիտ – грубый
արծաթադրամ – серебряная монета
կավե – глиняный
ուալ – плита, плитка
ստանալ – получить (без "скрытого слога" или լ в самом начале)

անբավարար –
 неудовлетворительно
 ավերակ – развалина
 անաչել – стесняться
 ոտք – нога
 սիրահարվել – влюбляться
 լաց լինել – плакать
 սիրահարվում են լաց լինելու
 չափ – влюбляются до слез
 պեղումներ – раскопки
 ինչի՞ համար – для чего?
 ի՞նչու – почему?
 տխրեցնել – заставить
 грустить, давать повод к
 грусти
 ծամել – жевать
 տգեղ – некрасивый,
 безобразный, некрасиво,
 безобразно
 տխուր – грустный, грустно
 արագ – быстрый, быстро
 վազել – бежать
 դեպի Վաղարշապատ – в
 сторону Вагаршапата
 վերջին – последний (ջ=չ)

Արշակունի – Аршакиды
 արքա – царь
 վարդապետ – 1.
 архимандрит, 2. древнеарм.
 учитель, доктор (դ=թ)
 գիր, գրեր – письмо (буква),
 письменность, письмена
 բերել – приносить
 աշխ, հաշխ – ну-ка
 սպասել – ждать (без
 "скрытого слога" или ը в
 самом начале)
 մնալ – оставаться
 լրիվ – полностью
 գտնել – найти
 գուցե – может быть
 ճանաչել – знать, узнавать
 փառ-փառ ծիծաղել կամ քահ-
 քահ ծիծաղել – хохотать
 ուրեմն – итак, значит
 հարցնել – спросить
 ամբողջ – весь, целый (դջ =
 խչ)
 տխրել – грустить
 ճիշտ – правильный

Комментарии, задания и упражнения

1. Какого мнения Вы об армянских письменах? Проверьте, как Вы запомнили армянский алфавит; "пропустите" все буквы (и звуки) по следующим "шкалам":

Լայն – նեղ "широкий – узкий" Երկար – կարճ "длинный – короткий" Հաստ – բարակ "толстый – тонкий" Բարձր – ցածր "высокий – низкий" (ծ=ց) Ուրախ – տխուր "веселый – грустный" Դժվար – հեշտ "трудный – легкий" Գեղեցիկ – տգեղ "красивый – некрасивый" Հաճելի – տհաճ "приятный – неприятный" Նուրբ – կոպիտ "нежный – грубый" (բ=փ) Մեծ – փոքր "большой – маленький" Տաք – սառը "горячий – холодный" Բութ – սուր "тупой – острый"

Например: ա-ն լայն, հաստ ու կարճ տառ է, ա հնչյունը (звук)
 նուրբ է ու գեղեցիկ:
 Ե-ն "դժվա՞ր" տառ է: Ե-ն "դժվա՞ր" հնչյուն է:
 Փ-ն իսկապե՞ս (на самом деле) ուրախ և ծիծաղելի (смешной)
 տառ է:

2. Постройте предложения:

Տղաները կամ Դպրոցականները Վռամշապուհը կամ Արքան Վարդապետը կամ Մաշտոցը	բերել սփռել ճանաչել գրել սպասել տխրել փառ-փառ ծիծաղել ամաչել նայել սիրահարվել ծամել գտնել ստանալ	ջնարակած մի կտոր ափսե կոպիտ մի արծաթադրամ մի ուլունք կավե մի սալ գրերը անբավարար Արարատ ծիրան իր անունը ուսանողուհուն
--	---	---

*Տղաները ծանուխ են: Դպրոցականները ամաչում են
կայել ուսանողուհուն:*

3. Подберите подходящие прилагательные к приведенным
существительным:

Մաքուր, հանգիստ, մեծ և այլն ... գյուղ

գյուղ, քաղաք,
աստղ, ամպ, ուլունք,
ափսե, սալ,
պատմություն,
ավերակ, տեսարան,
տերև, հարևան,
զարմիկ, պեղումներ,
արքա, դեղձ, գագաթ,
աղբյուր, ձյուն,
կարկուտ, անձրև,
ճանապարհ

կոպիտ, հետաքրքիր, երջանիկ, նուրբ,
ուժեղ, թույլ, համեղ, քաղցր, գույնզգույն,
անգույն, տգեղ, ուրախ, տխուր, հաճելի,
ջնարակած, տաք, սառը, ծույլ, կույր, ազատ,
զբաղված, մաքուր, երկար, կարճ, հաստ,
բարակ, լայն, նեղ, բարձր, ցածր, ընդունակ,
հիվանդ, առողջ, հանգիստ, հոգնած,
զայրացած, մեծ, փոքր, երիտասարդ,
հմայիչ, հյուրասեր, կատակասեր, սրամիտ,
բարի, չար, լուրջ, ծանր, թեթև, գոհ, դժգոհ,
հայտնի, նշանավոր

4. Вычеркните лишнее слово в приведенных рядах.

Ա. Բակ, փողոց, ճանապարհ:

Բ. Գիրք, տետր, թուղթ, թերթ, կրակ:

Գ. Արծաթ, ոսկի, կավ, ծառ, ջուր:

Դ. Սալ, ափսե, դանակ:

Ե. Անտառ, այգի, պարտեզ, լեռ:

Զ. Ծառ, ծաղիկ, ծիրան, թուփ:

Է. Ցերեկ, երեկ, երեկո, լուսաբաց, մայրամուտ:

Ը. Աշխարհագրություն, պատմություն, ավերակ, պեղում, արքա:



- Թ. Սատիտ, գրիչ, ռետից, քանոն, ժամացույց:
 Ժ. Շուն, կատու, մուկ, հավ, գառ, խոզ, ոչխար, կով, ձի:
 ԺԱ. Հարիսա, չխրթմա, բոզբաշ, սպաս, մածուց, խորոված:
 ԺԲ. Ժամացույց, օրացույց, կողմնացույց, ժամանակ:
 ԺԳ. Կողմնացույց, օրացույց, ծովեզերք, քարտեզ:
 ԺԴ. Կին, գլուխ, մազ, մատ, աչք, ոտք, ձեռք:
 ԺԵ. Անուն, ազգանուն, հասցե, այցետոմս, մասնագիտություն:

5. Подберите к следующим глаголам наречия и дополнения:
 (помните! вин.п.= им.п. при неперсонифицированном склонении и
 вин.п.= род.-дат.п. при персонифицированном склонении):

լրջորեն, պարզապես, վերջապես, արագ, դանդաղ, հանգիստ	մոռանալ, հիշել, վերհիշել, սիրահարվել, հավատալ, համոզել, հուզել, տխրեցնել, ստանալ, համբուրել, պատրաստել, բարձրացնել, մեծացնել, եփել, թխել, խորովել, հարցնել, պատասխանել, սպասել, գտնել	բժիշկ, բժշկուհի, հարևանուհի, նամակ, ծեռք, ձվածեղ, տոլմա, գաթա, ձուկ, երեխա, քարտեզ, անբավարար, բավարար, գերազանց, դաս
---	---	--

Պարզապես մոռանալ: Մոռանալ բժշկին, բժշկուհուն,
 հարևանուհուն, քարտեզը, դասը:

Скажите противоположное (замените выделенные слова
 антонимами):

6.  Արմավիր գյուղի դպրոցական տղաները պեղելով կավից գատում են օրական մի նուրբ արծաթադրամ:	նուրբ ≠կոպիտ →	Արմավիր գյուղի դպրոցական տղաները պեղելով կավից գատում են օրական մի կոպիտ արծաթադրամ: 
--	----------------------	---

Արմավիր գյուղի դպրոցական տղաները պեղելով կավից գատում են օրական մի **նուրբ** արծաթադրամ: Դպրոցում Հայոց պատմությունից ստանում են **գերազանց**: Ահա նրանցից մեկը **դանդաղ գնում** է դեպի Վաղարշապատ: Նրանց գյուղում ամուսնանում են քսան տարեկանից **առաջ**: Ուսանողուհու ծամելը **տոգել** է: Ուսանողուհին այսօր **ուրախ** է: Վարդապետը գրերը **տանում** է:

7. Перескажите одну часть текста, опираясь на следующие глаголы:

Պեղել, ստանալ, ամաչել, նայել, սիրահարվել, տխրել ու տխրեցնել, գեղեցիկ ծամել,

и другую часть текста, опираясь на следующие глаголы:

արագ վազել, բերել, սպասել, մանաչել, սրճաղել, գրել, տխրել:



Պըլը Պուղին վարժապետի մոտ

Առաջին օրն է, որ¹ Պըլը Պուղուն ուղարկում են վարժապետի մոտ գրել-կարդալ սովորելու: Վարժապետը գիրքը տալիս է Պըլը Պուղու ձեռքը և ասում.

– Պուղի, ասա՛ այբ:

Պուղին լուռ է:

– Պուղի, ասա՛ այբ, – կրկնում է վարժապետը:

Պըլը Պուղին լուռ է:

– Պուղի՛, ասա՛ այբ, – դարձյալ ասում է վարժապետը:

Բայց Պըլը Պուղին լուռ է ու լուռ:

Այդ ժամանակ ներկաները համոզում են Պուղուն:

– Ինչու՞ չես ասում "այբ", Պուղի, – ասում է մեկը:

– Տնաչեն, ի՞նչ մի դժվար բան է "այբ" ասելը, ասա՛, էլի:

– Որ ասեմ "այբ", – վերջապես խոսում է Պըլը Պուղին, – հետո էլ պիտի ասի² ասա՛ "բեն": Որ ասեմ "բեն" հետո էլ պիտի ասի "գիմ":

"Այբ" չեմ ասում, որ միանգամից ձեռք քաշի³ ինձանից:

¹ առաջին օրն է, որ – первый день, как

² որ ասեմ ... պիտի ասի – если скажу ..., (он) скажет

³ որ ... ձեռք քաշի – чтобы (он) отстал

Слова

վարժապետ – учитель (устар., в совр. языке иронич.-насмешл.)

ուղարկել – послать

ձեռք – рука

լուռ – молчаливый, նա լուռ է

– он молчит

կրկնել – повторить

դարձյալ – вновь (ծ=ց)

ներկա – присутствующий

համոզել – уговорить

տնաչեն – разговорное обращение к человеку, образованное от формулы пожелания "да построится твой дом!"

դժվար – трудный

վերջապես – наконец (ջ=չ)

միանգամից – сразу (գ=բ)

ձեռք քաշել – отстать, оставить в покое





8. Постройте предложения:

Վարժապետը Պըլը Պուղին Ներկաները	գիրքը	տալ ասել կրկնել լուռ լինել համոզել	Պըլը Պուղուն
---------------------------------------	-------	--	--------------



Վարժապետը գիրքը տալիս է Պըլը Պուղուն:

9. Подберите синонимическое высказывание:

<p>1) Պըլը Պուղուն ուղարկում են վարժապետի մոտ գրել-կարդալ սովորելու:</p>	<p>Ա. Պըլը Պուղուն ուղարկում են վարժապետի մոտ գրելու: Բ. Պըլը Պուղուն ուղարկում են վարժապետի մոտ կարդալու: Գ. Պըլը Պուղուն ուղարկում են վարժապետի մոտ ուսանելու:</p>
<p>2) Պըլը Պուղին լուռ է:</p>	<p>Ա. Պըլը Պուղին ոչինչ չի ուզում: Բ. Պըլը Պուղին ոչինչ չի պատասխանում: Գ. Պըլը Պուղին ոչինչ չի հարցնում:</p>
<p>3) –Պուղի, ասա՛ այբ, – դարձյալ ասում է վարժապետը:</p>	<p>Ա. –Պուղի, ասա՛ այբ, – ձեռք չի քաշում վարժապետը: Բ. –Պուղի, ասա՛ այբ, – խնդրում է վարժապետը: Գ. –Պուղի, ասա՛ այբ, – կրկնում է վարժապետը:</p>
<p>4) Այդ ժամանակ ներկաները համոզում են Պուղուն:</p>	<p>Ա. Այդ ժամանակ ներկաները խնդրում են Պուղուն: Բ. Այդ ժամանակ ներկաները հուզում են Պուղուն: Գ. Այդ ժամանակ ներկաները վստահում են Պուղուն:</p>
<p>5) Ներկաները Պուղուն համոզելով ասում են, որ "այբ" ասելը դժվար բան չէ:</p>	<p>Ա. Ներկաներն ասում են, որ "այբ" ասելը վատ բան չէ: Բ. Ներկաներն ասում են, որ "այբ" ասելը հեշտ բան է: Գ. Ներկաներն ասում են, որ "այբ" ասելը թեթև բան է:</p>

10.Ա  Երեխաները գնում են իրենց սենյակը: Երեխաներն ուզում են քնել: → Երեխաները գնում են իրենց սենյակը քնելու: 

Երեխաները գնում են իրենց սենյակը: Երեխաներն ուզում են քնել: Նա գալիս է ձեր տուն: Նա ուզում է մի քիչ հանգստանալ: Ամեն կիրակի մեր բակի տղաները դուրս են գալիս բակ: Նրանք ուզում են ֆուտբոլ խաղալ: Առավոտյան մեր հարևանուհին գալիս է ինձ մոտ: Մենք միասին սուրճ ենք խմում: Մեր պապը հաճախ վերցնում է իր նարդին ու գնում է պարտեզ: Նա ուզում է իր ընկերների հետ նարդի խաղալ:

Բ.  Երեխաները մածուն են ուտում, ապա քնում են: → Քնելուց առաջ երեխաները մածուն են ուտում: Կամ՝ Մածուն ուտելուց հետո երեխաները քնում են: 

Երեխաները մածուն են ուտում, ապա քնում են: Երեխաները խաղում են, ապա մի քիչ հանգստանում են: Նա ստանում է նամակը, ապա պատասխան է գրում: Նա համբուրում է մորը, ապա գնում է աշխատանքի: Արքան մի լավ ծիծաղում է Փ տառի վրա, ապա տխրում է:

6. Երեխաները դաս են սովորում ու երաժշտություն են լսում: → Երեխաները դաս սովորելով երաժշտություն են լսում: Կամ՝ Երեխաները երաժշտություն լսելով դաս են սովորում:

Երեխաները դաս են սովորում ու երաժշտություն են լսում: Վարդուհին ճաշ է եփում ու երգում է: Աննան դաս է պատրաստում ու հեռուստացույց է նայում: Առավոտյան հայրը նախաճաշում է ու կարդում է օրվա թերթը: Նա իր կնոջը հավատում է ու մնում է տանը: Նա վստահում է իր ընկերոջը ու տալիս է նրան մեկ միլիոն դրամ:

7. Այդ նամակը գրելու ժամանակ նա մտածում էր իր ընկերուհու մասին: → Այդ նամակը գրելիս նա մտածում էր իր ընկերուհու մասին:

Այդ նամակը գրելու ժամանակ նա մտածում էր իր ընկերուհու մասին: Ծովի մոտ խաղալու ժամանակ նա գտնում է մի կտոր հակինթ (янтарь) ու մի մարգարիտ (жемчуг): Ջուր խմելու ժամանակ չի կարելի ծիծաղել: Ծիծաղելու ժամանակ նա շատ նման է մեծ եղբորը: Մեր ուսուցչուհուն հիշելու ժամանակ ես միշտ տխրում եմ:

12. :

и Замените:

Տղաները ճաշից առաջ ուզում են կինոթատրոն գնալ: ճաշ → ընթրիք, դասերը սովորել, սուրճ խմել, խորոված անել

Վարդան, դասից հետո գնում ենք Անահիտին հյուր, գալի՞ս ես մեզ հետ: դաս → աշխատանք, այս քարտեզը գծագրել, քարտեզի մասշտաբը մեծացնել

13.Ա)	զայրանալ – զայրացած	հոգնել – հոգնած
	կախվել – կախված	կանգնել – կանգնած
	մերել – մերած	ծածկվել – ծածկված



	նստել → նստած, կանգնել → կանգնած
	կախվել → կախված, ծածկվել → ծածկված
но:	կարդալ → կարդացած "прочитанный, начитанный" մնալ → մնացած
а также:	զայրանալ → զայրացած "сердитый" մոռանալ → մոռացած "забытый" մոտենել → մոտեցած "подошедший" վախենալ → վախեցած "испуганный"
и еще:	մեծացնել → մեծացրած "увеличенный" լրացնել → լրացրած "дополненный" մոտեցնել → մոտեցրած "приближенный" վերցնել → վերցրած "взятый"
и наконец:	գտնել → գտած "найденный", մտնել → մտած "вошедший", տեսնել → տեսած "увиденный, увидевший"

բ) Ձ Սա ձեր (կարդալ) գի՞րքն է: → Սա ձեր կարդացած գի՞րքն է:


Սա ձեր (կարդալ) գի՞րքն է: Սա Մաշտոցի (գտնել) գի՞րն է: Սա իմ (սպասել) նամակն է: Ես վերցնում եմ (մնալ) տետրերը: Սա իմ պապի (ջնարակել) ափսեմ է:

գ) Ձ -Տատիկը որտե՞ղ է:
(-Հեռուստացույցի առաջ նստել:) → -Հեռուստացույցի
առաջ նստած է:

- Տատիկը որտե՞ղ է: (-Հեռուստացույցի առաջ նստել:)
- Ու՞ր է Գայանեն: (-Դռան առաջ կանգնել)
- Մասիսը երևու՞մ է: (-Ոչ, ամպերով ծածկվել:)
- Ինչպե՞ս ես: (-Հոգնել:)
- Պապիկն ի՞նչ է անում: (-Պառկել:)
- Երեխաները դեռ խաղու՞մ են: (-Ոչ, արդեն քնել:)

14. Ա ճանաչել (ծանոթ լինել) – знать
(быть знакомым);
узнать знакомого, нечто знакомое;
признать ճանաչել
մարդկանց,
քաղաքը, Արցախի
անկախությունը:

գիտենալ – знать, иметь
информацию (в разговорной
речи тж. в значении ճանաչել)
գիտեմ, որ ... – знаю, что ...
ո՞վ գիտի (գուցե) – кто знает?
(может быть) Գիտեմ, որ նա այսօր գալիս
է: Նա գիտե շատ լեզուներ,
իր դասը, իմ հեռախոսի
համարը: Նա գիտե քո
եղբորը:

 գիտություն – наука, գիտելիք – знание,
գիտական – научный, գիտնական – ученый,
մասնագետ, մասնագիտություն, տնտեսագետ,
տնտեսագիտություն, հայագետ, գրականագետ

Спряжение глагола գիտեմ (спрягается как ունենալ)

настоящее время		прошедшее время	
գիտեմ	չգիտեմ	գիտեի	չգիտեի
գիտես	չգիտես	գիտեիր	չգիտեիր
գիտե կամ գիտի	չգիտե կամ չգիտի	գիտեր	չգիտեր
գիտենք	չգիտենք	գիտեինք	չգիտեինք
գիտեք	չգիտեք	գիտեիք	չգիտեիք
գիտեն	չգիտեն	գիտեին	չգիտեին



իմանալ – узнать,
понять, получить
информацию

Վերջապես կինոնկարի վերջում
հայրն իմանում է, որ այն
երիտասարդը իր որդին է:



իմաստ – смысл, իմաստուն – мудрец,
իմաստասեր – философ, իմաստասիրություն – философия,
եսի՞մ (разг.) = ի՞նչ իմանամ =ես ի՞նչ գիտեմ = ես չգիտեմ –
как (мне) знать?

Գ) Заполните пропуски:

1.–Դու եղբորս ..: ես: Դու ..:, որ նա շատ ընկերներ ու
ընկերուհիներ ունի: Պատկերացնում ես, երեկ երեկոյան մենք ...
ենք, որ նա շուտով ամուսնանում է ու մեկնում է Ավստրալիա: 2.–
Բարև, Հակոբ, ի՞նչ է, չե՞ս ... ինձ: 3. –Լևոնի՛կ, քույրիկդ ինչու՞ է լաց
լինում: – Ի՞նչ ...: 4. –Երեխաներ, որտե՞ղ է շոկոլադդ: –Մենք ...: 5.
Թթենին այն ծամն է, որ հայերը դեռ Հայրենիքից ... և սիրում են:

Դ) Переведите:

Я хорошо знаю наш город, но я не знаю, где живет моя
школьная подруга. А сегодня утром она мне звонит, и я узнаю, что
мы соседи.


Դ) Запомните, что выгравировано на фронтоне
Матенадарана: (первая фраза, записанная армянскими
письменами – начало Притчей Соломоновых, переведенных на
армянский язык Месропом Маштоцем и его учениками сразу
после создания Учителем армянского алфавита)

"Ճանաչել զիմաստությունն և զխրատ¹, իմանալ զբանս¹
հանճարի²": (на грабаре).

"Познать мудрость и наставление, понять изречения разума".

!¹Произн. ըզխըրատ, ըզբանըս.

!²Произн. հանճար.



15. ☞

Ծանոթացի՛ր, ծանոթացե՛ք, խնդրեմ – познакомься (-тесь), пожалуйста
 Ի՞նչ է Ձեր անունը (անունդ) – как Вас (тебя) зовут?
 Շատ հաճելի է – очень приятно!

☛ Составьте два диалога из следующих реплик и скажите, сколько участников в каждом диалоге:

- Մա՛, դու իմ ընկեր-ընկերուհիներին ճանաչու՞մ ես:
- Այո, իհարկե՛ն, ծանոթ եմք: Ինչպե՞ս չէ: Արա՛մ, ծանոթացի՛ր ընկերոջս հետ:
- Գիտե՞ք, Ձեր դեմքը (лицо) ինձ ծանոթ է: Մենք ծանոթ չե՞նք:
- Վարդգեսին ծանոթ եմ, իսկ օրիորդներին չեմ ճանաչում:
- Իմ անունը Վարդան է:
- Ծանոթացի՛ր, մա՛, Աստղիկ ու Արևիկի հետ: Աղջիկներ, ծանոթացե՛ք, խնդրեմ, մայրիկիս հետ:
- Շատ հաճելի է: Աղջիկներ, Վարդգես, մե՛րս եկեք:
- Շատ հաճելի է, Արամ:

Составьте аналогичные диалоги: **Շատ հաճելի է**

–Իսկ Ձեր դեմքն ինձ ծանոթ չէ: –Իմ անունը ... է: Իսկ ի՞նչ է Ձեր անունը:

–Ծանոթացե՛ք, խնդրեմ:

–Դու նրան ճանաչու՞մ ես: Սա ...

☛ 16. Ա) В следующих словах пропущен звук р. Какой буквой его записать: р или q?

Ձեռ., գիր., Գրի.որ, Գևոր., ար.ա, մա.ուր, եր.իչ, հավա.ել, միան.ամից:

Բ) В следующих словах пропущен звук չ. Какой буквой его записать: չ или ջ?

Վեր.ին, առա.ին, ամա.ել, ճանա.ել, ամբող., աղ.իկ, իմ.ու:

Գ) В следующих словах пропущен звук g. Какой буквой его записать: g или ծ?

Ձայրա.ած, դար.յալ, դպրո.ական, դեղ.եմի, փոր.ել, հար.նել:

17. ☞

Ինչու՞... – Որովհետև (потому что) ...

☛ Выберите правильный ответ:

1) Ինչու՞ Պոլդին "այբ" չի ասում:	Ա. Որովհետև "այբ" ասելը դժվար բան է: Բ. Որովհետև "այբ" ասելը հեշտ բան չէ: Գ. Որովհետև "այբը" դեռ միայն առաջին տառն է:
2) Ինչու՞ մեր հյուրը բոզբաշ չի ուտում:	Ա. Որովհետև նա չգիտի, թե ի՞նչ է բոզբաշը: Բ. Որովհետև նա բոզբաշ չի սիրում: Գ. Որովհետև նրան կծու, թթու չի կարելի:

3) Ինչու՞
մարդիկ քարը
չեն վերցնում
բաղնիսի դռան
առաջից:

Ա. Որովհետև նրանք քարը չեն տեսնում:
Բ. Որովհետև նրանք ծուլլ են:
Գ. Որովհետև նրանք կույր են:

4) Ինչու՞ են
հայերը
Ֆրեզնոյում
թթենի տնկում:

Ա. Որովհետև թթենին այն ծառն է, որ հայերը դեռ
Հայրենիքից գիտեն և սիրում են:
Բ. Որովհետև հայկական հրաշալի երգերից մեկը
կոչվում է «Թթենի»:
Գ. Որովհետև Կալիֆոռնիայի հողն ու ջուրը նման
են Հայրենիքի հողին ու ջրին, բայց այնտեղ
պիստակենի չի աճում:

◇ Ответьте на вопросы:

Ինչու՞ է Լևոնը հագնում իր սև կոշիկները: Ինչու՞ է ծառան ասում,
որ բաղնիսում մարդ չկա: Ինչու՞ է տերը զայրանում: Ինչու՞ են
Արմավիր գյուղի դպրոցական տղաները սիրահարվում
ուսանողուհուն:

Попробуйте найти ответы также на такие вопросы:

Ինչու՞ են ամուսնանում քսան տարեկանից հետո: Ինչու՞ են
աղջիկները մարդու տխրեցնում: Ինչու՞ են տղաները դպրոցում
Հայոց պատմությունից անբավարար ստանում: Ինչու՞ է
Վռամշապուհը փառ-փառ ծիծաղում Փ տառի վրա: Ինչու՞ է
Վռամշապուհը տխրում: Ինչու՞ Կալիֆոռնիայում պիստակենի չի
աճում:

18. Обратите внимание на стилистические варианты (многие
авторы пользуются разговорными вариантами, и это придает
живость речи):

ապա – հապա (а, ну-ка) – բա (а, разве)

այս – էս

այդ – էդ

այն – էն

այսպես – էսպես

այդպես – էդպես

այնպես – էնպես

այսքան – էսքան (столько)

այդքան – էդքան

այնքան – էնքան

այստեղ – էստեղ – ստեղ

այդտեղ – էդտեղ

այնտեղ – էնտեղ

Можно привести также примеры параллельного
использования литературных и нелитературных слов:

կաղամբ / քալամ – капуста

ճակնդեղ / բազուկ – свекла

ստեպղին / գազար – морковь

Մտրուգարք

Задание 1.

Сделайте правильный выбор:

1. –Ես ամեն օր ... տեսնում եմ համալսարանում:	Ա. Անահիտ Բ. Անահիտը Գ. Անահիտին
2. –Իսկ այն ... հանդիպու՞մ ես:	Ա. աղջիկը Բ. աղջիկին Գ. աղջկան
3. Չեր պատուհանից դու կարող ես ... տեսնել:	Ա. մեր բակ Բ. մեր բակը Գ. մեր բակին
4. Ընթրիքին միշտ տալիս են ... երշիկ ու ...:	Ա. տապակաց ... մացուն Բ. տապակած ... մածուն Գ. տապակած ... մածուն
5. Ասում ես՝ ժամանակ չունեմ, բայց սա մի ... գործ է:	Ա. վայրկյանվա Բ. վայրկյանի Գ. վայրկյանով
6. Ես արդեն ազատ եմ, հինգ ... հետո կարող եմք գնալ:	Ա. թոպեներ Բ. թոպեն Գ. թոպե
7. Բարև, հազար բարի: Ինչպե՞ս ես, ... ինչպե՞ս են:	Ա. ձեր քույրերը Բ. քույրերդ Գ. քույրներդ
8. Այս ամառ ուզում ենք ... ներկել:	Ա. դուռերն ու լուսամուտերը Բ. դուռներն ու լուսամուտները Գ. դռներն ու լուսամուտները
9. Լազարյան ճեմարանում սովորում էին ..., ... և ուրիշներ:	Ա. հայեր, ռուսեր Բ. հայեր, ռուսներ Գ. հայներ, ռուսներ
10. Բոլոր ... սովորելուց հետո կարող ես գնալ բակ:	Ա. դաս Բ. դասը Գ. դասերը
11. Ամբողջ ... մի օրում չեմ կարող կարդալ, մայրի՛կ, դժվար է:	Ա. գիրք Բ. գիրքը Գ. գրքերը
12. Երեկ մեր տանը հյուրեր ... Լեհաստանից:	Ա. կային Բ. կար Գ. կան




13. Նրան սառը ջուր չի կարելի, բայց նա ... չի լսում և խմում է:	Ա. բժիշկուհիին Բ. բժիշկուհուն Գ. բժշկուհուն
14. Դ-ն հայերեն այբուբենի ... տառն է:	Ա. երրորդ Բ. չորրորդ Գ. հինգերորդ
15. ... նա նման է իր հորը:	Ա. Ծիծաղելիս Բ. Ծիծաղելով Գ. Ծիծաղելուն

Задание 2.

Прочитайте и скажите, какой из двух художников правильно понял диалог?

—Դե՛, պատմիր, ի՞նչ կա, ի՞նչ չկա Հայաստանում, ի՞նչ նորություն կա Հայաստանից:

—Հայաստանում ամեն մի տան առաջ մի խնկի ծառ կա: Իսկ իմ մորաքրոջ տանը մի աղբյուր կա: Նրանք այնտեղից են ջուր խմում: Ծիրանն ու խաղողը առաստաղից են քաղում: Իսկ ծիրանի տակ մի սեղան ունեն, այդ սեղանին խորոված են անում: Թուփը քաղում են ու նրա մեջ տոլմա են փաթաթում: Իսկ տատիկս պանիրը հացի մեջ է փաթաթում:



Материалы для чтения

Ընթերցանության նյութեր

–Ի՞նչ անուն եք տալիս սրան, – ասում է մանկաբարձուհին, գրկելով երեխային:

–Շահնուր, – շշնջում է մայրս:

–Շահ... Ի՞նչ, – հարցնում է մանկաբարձուհին:

–Շահնուր, – կրկնում է մայրս:

Բացատրում եմ.

Շահնուր ասելու համար հարկավոր է լավ արտասանել "ն"-ի առջևի "հ"-ն, այնպես, կարծես "Շահ"-ին հաջորդում է "աահի" բացականչությունը, որն արտաբերում ենք ախորժալի կարկանդակ տեսնելիս: Հեշտ չէ արտասանել, ընդունում եմ: Վերջապես շատ մի տանջեք ձեզ այդ անունը սովորելու համար, որովհետև, գտնելով, որ Շահնուր անունը այնքան էլ հեշտ չէ արտասանել, մանկաբարձուհին ինձ տալիս է Շարլ անունը:

Վերջին հաշվով "Շարլը" "Շահնուրից" այնքան էլ հեռու չէ:

Եվ այսպես, 1924 թվականի մայիսի 22-ին, Փարիզի ծննդատներից մեկի մանկաբարձուհին, չտիրապետելով օտար լեզուների հնչունաբանությանը, իր վրա է վերցնում¹ որոշելու Քնար և Միշա Ազնավուրյանների միակ մանչ ներկայացուցչի անունը:

ըստ Շարլ Ազնավուրի "Ազնավուրը Ազնավուրի մասին" գրքի

¹իր վրա վերցնել – взять на себя

Слова

մանկաբարձուհի – акушерка
(ծ=ց)

գրկել – взять на руки

շշնջալ – шептать

բացատրել – объяснять

հարկավոր է – необходимо

արտասանել – произносить

առջև – перед

հաջորդել – следовать (դ=թ)

բացականչություն –

восклицание

արտաբերել – выговорить

ախորժալի – аппетитный

ընդունել – принимать (դ=թ)

տանջել – мучить; մի տանջեք

ձեզ – не мучайте себя

վերջին հաշվով – в конечном
счете

տիրապետել – владеть

օտար – иностранный

հնչունաբանություն –

фонетика

ծննդատուն – родильный дом

որոշել – решать, определять

միակ – единственный

մանչ – мальчик

ներկայացուցիչ –

представитель

Տղան և նրա բարի թզուկները

Աշխարհում ապրում էին մի փոքր քույր ու մի փոքր եղբայր: Մի անգամ այս քույրն ու եղբայրը գնում են անտառ սունկ հավաքելու: Եվ երբ ուզում են տուն վերադառնալ, տեսնում են, որ կորցրել են¹ ճանապարհը ու սկսում են լաց լինել: Այնքան են լաց լինում, որ նրանց արցունքներից մի մեծ սունկ է բուսնում և սունկի տակ երեք փոքրիկ թզուկ՝ ճաղատ ու մորուքավոր: Եվ ահա այս բարի թզուկները օգնում են անտառում մոլորված եղբորն ու քրոջը:

Եվ հիմա էլ ասում են, որ երբ հողագնդի որևէ անկյունում երեխա է լալիս, նրանք իսկույն օգնության են հասնում նրան: Չէ՞ որ այդ բարի թզուկները երեխաների արցունքներից են ծնվել² և շատ լավ են հասկանում, թե որքան դառն են նրանց արցունքները:

– Իսկ որտե՞ղ են նրանք ապրում:

– Հեքիաթներում, տղաս, միայն հեքիաթներում:

ըստ Ազատ Շահինյանի

¹կորցրել են ճանապարհը – (они) заблудились

²ծնվել են – (они) родились

Слова

թզուկ – гном

աշխարհ – мир, земля (հ не произносится)

հավաքել – собирать

վերադառնալ – возвращаться

սկսել – начать (ը в начале

или между կ и и, но не между

и и կ)

արցունք – слеза

բուսնել – расти

մոլորված – заблудившийся

ծաղատ – лысый

մորուքավոր – бородатый

օգնել – помочь (գ=բ)

հողագնդ – земной шар

որևէ – какой-нибудь

անկյուն – угол

լալ – плакать (спряг. как գալ,

տալ), Գ. Ջ. լաց լինել

իսկույն – сразу

օգնության հասնել – прийти

на помощь (գ=բ)

չէ՞ որ – ведь

հասկանալ – понимать

որքան – насколько, как

դառը – горький

որքան դառն են – как горьки

հեքիաթ – сказка

Աջլիկն ու ձախլիկը

Երկու ընկեր մտնում են սրճարան և ուզում են սուրճ պատվիրել: Նրանք կանչում են սրճարանի տիրոջը և հարցնում են.

– Ձեր սրճարանում կա՞ արդյոք սուրճի գավաթ, որի կոթը ձախ կողմից է: Մեզնից մեկը ձախլիկ է, դժվարանում է սովորական գավաթներից սուրճ խմել:

– Չէ՛, չկա, – ասում է սրճարանի տերը, – բոլոր գավաթների կոթերը աջից են, աջլիկների համար են:

Ընկերները մի քանի սրճարան են մտնում և ամեն տեղ նույն պատասխանն են ստանում: Միայն մի սրճարանում տերն ասում է, որ իրենք ամեն տեսակ գավաթ ունեն: Սուրճը մատուցելուց առաջ գավաթներից մեկը շրջում է և կոթը ձախից՝ տալիս է ձախլիկին:

Ընկերները խմում են իրենց սուրճը և գոհ՝ հեռանում են:

Слова

աջլիկ – правша

ձախլիկ – левша

կանչել – звать

գավաթ – чашка

կոթ – ручка

դժվարանալ – затрудняться

նույն – тот же самый

իրենք – они (возвр. местоим. 3-го л.мн.ч.)

ամեն տեսակ – всякий

մատուցել – подать

շրջել – повернуть

հեռանալ – удалиться

Խնդիր

Երեք ընկեր մտնում են հյուրանոց և երեքտեղանոց սենյակ են ուզում: Սենյակն արժե 3000 դրամ: Ընկերներից յուրաքանչյուրը հազար դրամ է վճարում: Քիչ հետո հյուրանոցի տերն ու հաշվապահը ստուգում են և տեսնում, որ սենյակն արժե 2500 դրամ: Հյուրանոցի տերը հինգ հարյուր դրամ է տալիս հաշվապահին և ասում.

—Տար տուր մեր հյուրերին:

Հաշվապահը մտածում է, որ հինգ հարյուր դրամը հնարավոր չէ երեքի բաժանել և որոշում է նրանց տալ միայն երեք հարյուր դրամ, իսկ երկու հարյուր դրամը՝ իրեն պահել:

Ուրեմն ընկերներից յուրաքանչյուրը վճարում է ինը հարյուր դրամ: Երեք անգամ ինը հարյուր հավասար է երկու հազար յոթ հարյուրի, գումարած հաշվապահի երկու հարյուր դրամը՝ անում է երկու հազար ինը հարյուր: Իսկ ու՞ր է հարյուր դրամը:

Слова

խնդիր – задача (դ=թ)

հյուրանոց – гостиница

երեքտեղանոց – трехместный

արժե – сто́ит

յուրաքանչյուրը – каждый

վճարել – платить

հաշվապահ – бухгалтер

ստուգել – проверить

հնարավոր – возможный,
возможно

բաժանել – делить

իրեն պահել – оставить себе

անել – делать, эд. անում է –

будет

Урок 9. Իններորդ դաս

Грамматика

Склонение существительных (род. п. мн. ч. на -g)
 Наречия-послелого, выражающие пространственные отношения, и их склонение: առջև (առաջ), ետև, ներս, դուրս, վերև, ներքև, դիմաց, կողք, վրա, տակ, մոտ, մեջ, միջև, շուրջը.
 Наречия քիչ, մի քիչ, մի քանի. Наречие էլ.
 Составные глаголы.
 Страдательная форма глаголов.
 Подчинительные союзы որ и քե.

Текст

Երկու եղբայր (Պերճ Զեյթունցյան)

Склонение существительных – родительный падеж множественного числа на -g.

Քոյականների հոլովումը




Существительные մարդ и կին имеют форму множественного числа մարդիկ и կանայք. Склонение существительных մարդիկ и կանայք отличается от склонения правильных форм множественного числа.

Зват.-им.п. Կոչական-ուղղական հոլով	մարդիկ	կանայք
Род.-дат.-вин. п. Սեռական-տրական-հայցական հոլով	մարդկանց	կանանց
Отл. п. Բացառական հոլով	մարդկանցից	կանանցից
Тв. п. Փորձիական հոլով	մարդկանցով	կանանցով
Местн. п. Ներգոյական հոլով	не употр.	

Запомните также обращение տիկնայք և պարոնայք – дамы и господа.

К этому типу склонения относятся собирательные существительные, обозначающие семейства, кланы или любые другие группы людей, которые воспринимаются говорящим как чем-то объединенные между собой (сторонники). Такие собирательные существительные образуются чаще всего от имен собственных (имена или фамилии) при помощи суффиксов -ենք, -անք, -ոնք. Например Վարդանանք. Суффикс -անք встречается в диалектных образованиях, -ոնք в словах մերոնք "наши", ձերոնք "ваши", պապոնք "сторона деда", а суффикс -ենք очень продуктивен: Անահիտենք, Աննայենք*, Վարդյենք*, Փայանենք, Անիենք, Պետրոսյանենք. Такие существительные никогда не принимают определенного артикля.

!*Обратите внимание на соединительный звук j, который пишется после гласных ш и п, но не пишется после других гласных, хотя и произносится.

 Для обозначения династий употребляется обычное окончание множественного числа -ներ: Բագրատունիներ, Ռոմանովներ.

Склонение этих собирательных существительных выглядит так:

Ուղղ. հ.	մերոնք, ծերոնք	պապոնք	Պետրոսյաններ
Սեռ.-սր.-հայց. հ.	մերոնց, ծերոնց	պապոնց	Պետրոսյաննց
Բաց. հ.	մերոնցից, ծերոնցից	պապոնցից	не употр.
Գործ. հ.	մերոնցով, ծերոնցով мало употр.	պապոնցով мало употр.	не употр.
Ներգ. հ.	не употр.		

Послелogi и их склонение Կապերը և նրանց հոլովումը



Большинство армянских послелогов – слова другой части речи, выполняющие связующую функцию. Они могут употребляться с артиклем (определенным или притяжательным) и склоняться, выражая различные пространственные и другие отношения. По значению армянские послелogi близки русским предлогам и наречиям. Ср.

- | | |
|--------------------------------|-------------------------|
| առջև – перед (զ = չ) | վերև – верх |
| էտև* – зад | ներքև – низ |
| ներս – внутренняя часть | դիմաց – напротив |
| դուրս – наружная часть | կողք – бок |

*Часто встречается вариант հետև (с придыханием)

Так:

Ուղղ. հայց. հ.	առջև(ը)	(հ)ետև(ը)	ներս(ը)	դուրս(ը)
Սեռ.-սր. հ.	առջևի	(հ)ետևի	ներսի	դուսի*
Բաց. հ.	առջևից	(հ)ետևից	ներսից	դուսից
Գործ. հ.	առջևով	(հ)ետևով	ներսով	դուսով
Ներգ. հ.	առջևում	(հ)ետևում	ներսում	դուսում

!*Обратите внимание на чередование ու / скрытый слог ր

Ուղղ. հայց. հ.	վերև(ը)	ներքև(ը)	դիմաց(ը)	կողք(ը)
Սեռ.-սր. հ.	վերևի	ներքևի	դիմացի	կողքի
Բաց. հ.	վերևից	ներքևից	դիմացից	կողքից
Գործ. հ.	վերևով	ներքևով	դիմացով	կողքով
Ներգ. հ.	վերևում	ներքևում	–	–

Прямой – **именительный падеж** служит для названия данного места: Տան ներսը մտրւր է: Форма **винительного падежа** указывает на направление действия, но часто применяется шире, как немаркированное обозначение места.



Форма **родительного падежа** употребляется как определение: դիմացի շէնքը "дом (строение) напротив", հետևի դուռը "задняя дверь".


Отложительный падеж показывает точку исхода действия (откуда?): դրսից գալ; а также обозначает край, конец какого-либо действия или ряда: անցկից, ետևից գնալ, հետևից խոսել "говорить за глаза".

Творительным падежом указывается то место, через которое, сквозь которое происходит действие: անցնելով անցնել.


Местный падеж в разговорной речи часто заменяется формой винительного падежа; обозначение места местным падежом более конкретизировано: – Որտե՞ղ է Արմենը: – Վերևում է (կամ վերևն է):

Упражнения Վարժույթուններ

1. ԵՏ	 
Ա) – Ե՞րբ են մեկնում Գագիկները: – Վաղը, ժամը վեցին:	Գագիկ → Վարեն, Վարդուհի, Քոչարյան, դուք
Բ) – Դու հաճա՞խ ես գնում պապոնց տուն: – Երբեմն:	պապ → մենք, դուք, Հասմիկ, Գալստյան
Գ) – Ու՞մ ես ուղարկում այս նամակը: – Ձերոնց:	դուք → մենք, Վարինե, Վարդանյան
Դ) – Երեկ երեկոյան ու՞մ հետ էիր: – Ռազմիկեց հետ էի:	Ռազմիկ → Ռուզան, դուք, պապ, մենք, Մարտիրոսյան
Ե) – Մարոյենց տեսնու՞մ ես: – Ամեն օր: Նրանք մեր բակում են ապրում:	Մարո → Արա, Հռիփսիմե, Արսենյան, մենք, դուք
Զ) – Այդ նորությունները ումի՞ց ես իմանում: – Ձերոնցից:	դուք → մենք, պապ
Է) – Ուրեմն դու մերոնցից դժգո՞հ ես: – Չէ, ձերոնցից գոհ եմ, պապոնցից եմ դժգոհ:	դժգոհ → գոհ, գոհ → դժգոհ




2.68



Ա) – Որտե՞ղ ես ապրում: – Դիմացք:	Դիմաց → կողք, ներքև, վերև,
Բ) – Տղան, դու ո՞ր շենքում ¹ ես ապրում: – Կողքի շենքում:	կողք → ետև, ներքև, վերև, դիմաց
Գ) – Որտե՞ղ եք, երեխաներ: – Վերևը (վերևում):	վերև → ներքև, դուրս, ներս, ետև, առջև
Դ) – Որտե՞ղ էիր, որտեղի՞ց ես գալիս: – Վերևում էի, վերևից եմ գալիս:	վերև → ներքև, ներս, դուրս
Ե) – Տատիկ, ո՞րն է ծիրանի ծառը: – Դիմացի ծառը:	Դիմաց → կողք, ներքև, վերև, դուրս, ներս
Զ) – Դու մենա՞կ ես դպրոց գնում: Ինչպե՞ս: – Խանութի ² ետևով:	ետև → առջև, դիմաց, կողք, վերև, ներքև
Է) Թատրոնում – Ո՞րն է իմ տեղը: – Առջևի տեղը:	առջև → ետև, կողք, վերև, ներքև

¹շենք – дом, строение

²խանութ – магазин





Հազվագյուտ այցելություն: Դուռը բացվում է ու ներս է մտնում Կարենը: Հարկավոր է նույնիսկ վեր կենալ, աթոռ առաջարկել: Հյուրասիրել կոնֆետով... Բայց եղբայրս լուրջ մարդ է, գիտաշխատող, ու ինչպես բոլոր լուրջ մարդիկ, նա ևս կոնֆետ չի սիրում:

Կարենը խորամանկ ժպտում է: Անմիջապես հասկանում եմ, որ ասելու բան ունի: Ես քմծիծաղ եմ տալիս ու հայացքով հետևում նրան: Միևնույն է¹, ոչինչ չի կարող թաքցնել ինձանից, ես մինչև ուղն ու ծուծը² ճանաչում եմ մեծ եղբորս: Նա ման է գալիս սենյակում, մոտենում է գրադարանիս, ուր քիչ գրքեր կան, բայց բոլորն էլ ընտիր են:

– Ի միջի այլոց³, – ասում է նա, – հայրիկն ու մայրիկը տանը չեն:

– Իսկ ու՞ր են, – անտարբեր հարցնում եմ:

– Կարծեմ Մոկացյանենց տանը:

Սրա՞ն տեսե՞ք⁴, կարծեմ:

– Ո՞վ է այդ Մոկացյանը, – զգույշ հարցնում եմ:

– Դասախոս, – ժպտում է եղբայրս, – ի միջի այլոց, ամսի հինգին

նա քննություն է ընդունում:

– Հետո՞ ինչ⁵, – արդեն լարվում եմ ես:

– Ոչինչ, առանձնապես մի հուզվիր⁶, – ժպտում է եղբայրս, – նրանք լավ ծանոթներ են:

Ու նույն խորամանկ ժպիտը դեմքին դուրս է գալիս սենյակից:

Ես զայրույթից բարձս շարտում եմ նրա հետևից⁷: Բայց դուռն արդեն փակվում է, և բարձը նպատակին չի հասնում:

Ձայրացած վեր եմ կենում ու գնում եղբորս սենյակը: Բաց եմ անում դուռը ու պատրաստվում եմ արդեն վերջնականապես կռվել նրա հետ: Ինչպես տղամարդը՝ տղամարդու: Եվ ի՞նչ: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ եմ տեսնում: Եղբայրս կանգնած է լուսամուտի մոտ ու ժեստերով կատակներ է անում դիմացի շենքում ապրող⁸ հարևանուհիներից մեկի հետ: Հարևանուհին, գեղեցիկ, խարտյաշ մի աղջիկ, նույնպես կանգնած է լուսամուտի առաջ ու ծիծաղում է:

Ես ականա ժպտում եմ և զգում, որ այլևս չեմ կարող բարկանալ:

ըստ Պերճ Չեյթունցյանի "Մեզանից հետո"

¹միևնույն է – все равно

²մինչև ուղն ու ծուծը – до мозга костей

³ի միջի այլոց – между прочим

⁴սրան տեսե՞ք – посмотрите-ка на него!

⁵հետո՞ ինչ – ну и что

⁶մի հուզվիր – не волнуйся

⁷նրա հետևից – вслед за ним

⁸ապրող – живущий, -ая

Տառեր

հազվագյուտ – редкий

այցելություն – визит

բացվել – открыться

հարկավոր է – нужно

աթոռ – стул

առաջարկել – предложить

(ը=չ)

կոնֆետ – конфета

գիտաշխատող – научный

работник

բոլոր(ը) – все

ևս – также, тоже.

խորամանկ – хитрый, хитро

ժպտալ – улыбаться

անմիջապես – сразу (ը=չ)

քմծիծաղ – усмешка, ~ փալ –

усмехнуться

հայացք – взгляд

հետևել – следовать

ոչինչ – ничего

թաքցնել – прятать
ման գալ – пройтись,
 прогуляться
մոտենալ – подойти
գրադարան – библиотека
քիչ – мало
ընտիր – отборный,
 избранный
անտարբեր – безразлично
զգույշ – осторожно
դասախոս – преподаватель
քննություն – экзамен, ~ **ըն-
 դունել** – принимать экзамен
լարվել – напрячься,
 завестись
առանձնապես – особенно
հուզվել – волноваться
ծանոթ – знакомый
Ժպիտ – улыбка
դեմք – лицо
գայրույթ – гнев
բարձ – подушка (ձ=g)

շարկել – кидать
փակվել – закрыться
նպատակ – цель
հասնել – достичь
բաց անել – открыть
պատրաստվել – приготовиться
վերջնականապես – оконча-
 тельно (զ=չ)
կռվել – драться, ссориться
Ժեստ – жест
կարակ – шутка, ~ **անել** –
 шутить
շենք – дом, здание
դիմացի շենք – дом напротив
հարևանուհի – соседка
խարտյաշ – блондин, -ка
ակամա – невольно
զգալ – чувствовать,
 почувствовать
այլևս – больше не
բարկանալ – сердиться, т.ж.
 գայրանալ

Комментарии, задания и упражнения

Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

3. 

В армянском языке очень употребительны аналитические глаголы. Часть таких глаголов дублируется в языке, т.е. существуют простые глаголы, обозначающие те же действия. Другая часть таких глаголов не имеет дублетных форм. При спряжении вспомогательный глагол ставится после неглагольного компонента и ударение падает на неглагольный компонент.



բացել = բաց անել
 կատակել = կատակ անել
 կռվել = կռիվ անել



Ուսուցիչը ... դուռը ու ներս է մտնում:



Ուսուցիչը բաց է անում (բացում է) դուռը ու ներս է մտնում:

Ուսուցիչը ... դուռը ու ներս է մտնում:

Ես ..., իսկ դու չես հասկանում:


Ինչու՞ եք ...:


Երեխաները ... իրենց գրքերը ու կարդում են դասը:


Մեր ուսուցիչը դասի ժամանակ հաճախ է մեզ հետ ...:


Մի քիչ առաջ երեխաները բակում հանգիստ խաղ էին անում, իսկ հիմա ...:


4.Ա) 

էլ (безударный) = նույնպես = և	
	<p>Լուրջ մարդիկ կոնֆետ չեն սիրում: Կարենն¹ էլ կոնֆետ չի սիրում: = Կարենը նույնպես կոնֆետ չի սիրում: = Կարենը և կոնֆետ չի սիրում:</p> <p>Եղբայրս կանգնած է լուսամուտի մոտ: Հարևանուհին էլ է կանգնած լուսամուտի մոտ: = Հարևանուհին նույնպես կանգնած է լուսամուտի մոտ: = Հարևանուհին և կանգնած է լուսամուտի մոտ:</p>

	էլ (с ударением) = այլևս (в отрицательных предложениях)
---	--

	Ես այլևս չեմ կարող բարկանալ: = Ես էլ չեմ կարող բարկանալ:
---	---

	էլ (безударный) = և, բայց, իսկ (частица усиления значения, лексический эквивалент которой не всегда можно указать)
---	---

	<p>Գրադարանումս քիչ գրքեր կան, բայց բոլորը ընտիր են: = Գրադարանումս քիչ գրքեր կան, բայց բոլորն էլ ընտիր են: Այսօր տխուր օր է, և առավոտից անձրև է գալիս: = Այսօր տխուր օր է, առավոտից էլ անձրև է գալիս: Կարելի է ասել, որ տղաները ամբողջ օրը ավերակներում հայոց պատմություն են սովորում, իսկ դպրոցում անբավարար են ստանում հայոց պատմությունից: = Կարելի է ասել, որ տղաները ամբողջ օրը ավերակներում հայոց պատմություն են սովորում, դպրոցում էլ անբավարար են ստանում հայոց պատմությունից:</p>
---	---

¹Выделенные жирным шрифтом слова произносятся с логическим ударением.

Դ) Определите значение наречия էլ и замените его правильным синонимом:

Նա էլ* չի գալիս մեր տուն: = Նա նույնպես չի գալիս մեր տուն:
 Նա **և** չի գալիս մեր տուն: (тоже не)

Նա էլ* չի գալիս մեր տուն: = Նա այլևս չի գալիս մեր տուն:
 (больше не)

- Նա էլ* չի գալիս մեր տուն:
- Ես էլ եմ սիրում Ազնավուրի երգերը:
- Էլ չենք կարող ու չենք ուզում այսպես ապրել:
- Ես քեզ էլ* չեմ հավատում:
- Մենք էլ ենք գալիս թատրոն:
- Նա էլ է ինձ վստահում:

Ներկաներն էլ են համոզում Պըլը Պուղուն "այբ" ասել: Պըլը Պուղին էլ* չի խոսում:
 Մարդիկ ծույլ են, ծառան էլ գալիս է ու ասում, որ այնտեղ մարդ չկա:
 Դուք տանը չէի՞ք, մենք էլ կարծում էինք՝ տանն եք ու ամբողջ երեկո ձեզ էինք զանգում:

!*Без контекста невозможно определить значение էլ. Это зависит только от ударения на выделяемых словах — նա, քեզ, Պըլը Պուղին или на наречие էլ.

5.Ա) 


բացել (կամ բաց անել) ≠ ծածկել, փակել



Բացել (կամ բաց անել) դուռը, գիրքը, բերանը ("բոտ"), անկողինը, պահարանը, գրադարանը, խանութը: Պահարանը (գրադարանը, խանութը) **բաց է**:

Ծածկել դուռը, գիրքը, մարդուն (օրինակ՝ հիվանդին), հատակը (գորգով), անկողինը (**ծածկոցով**): Մասիսի գագաթը **ծածկված է** ձյունով: Հիվանդը (անկողինը, հատակը, սեղանը) **ծածկված է**:

Փակել դուռը, գիրքը, բերանը, պահարանը, գրադարանը, խանութը: Պահարանը (գրադարանը, խանութը) **փակ է**:

ԴԲ) 



Այս երեխան դասի ժամանակ բերանը **չի բացում**:

բացել ≠ փակել
АНТОНИМЫ (հակամիջներ)

Այս երեխան դասի ժամանակ բերանը **չի փակում**:

Այս երեխան դասի ժամանակ բերանը **չի բացում**:

Գրադարանը **բաց է**:

Ես մտնում եմ նրա սենյակը ու տեսնում եմ, որ նրա անկողինը

բաց է:

Ժամը երկուսն է, խանութը դեռ **բաց է**:

Ինչու՞ եք **բաց անում** գրքերը:

Կարելի՞ է **բացել** այս դուռը:

6.Ա) 

հարևանուհիներից մեկը, մեզմից մեկը, ձեզմից երկուսը




Հարևանուհիներից մեկը կանգնած է պատուհանի մոտ: Մեր դասարանի **աղջիկներից երկուսը** Ռուսաստանում են:

Մեր **տղաներից երեքը** ինժեներ են:

Քո **գրքերից մեկը** ինձ մոտ է:

Այսօր գնում ենք մեր բակի **տղաներից մեկի մոտ**՝ շախմատ խաղալու:

ԴԲ) 



Քո մի քրոջը ես ծանոթ եմ:


→ **Քո քույրերից մեկին** ես ծանոթ եմ:

Քո մի քրոջը ես ծանոթ եմ:

Մեր դասարանի մի տղա հայտնի ֆուտբոլիստ է:

Երեկոյան նա իր մի ընկերոջ հետ գնում է թատրոն:

Ես ամեն օր տեսնում եմ քո մի եղբորը:

7.Ա) 

քիչ = мало

մի քիչ = немного

մի քանի = несколько



Ես **քիչ** գիրք եմ տանում դպրոց: Այս գաթայի մեջ **քիչ** մեղր կա: Հիվանդը շատ **քիչ** է ուտում: Նա **քիչ** է խոսում:


Նրան **մի քիչ** մեղր կարելի է: Նա **մի քիչ** ջուր է ուզում: Ես արդեն **մի քիչ** հայերեն եմ խոսում: Մեծ եղբայրս **մի քիչ** ծուլլ է:


Մենք **մի քանի** անգլերեն գիրք ունենք: Վարժապետը **մի քանի** անգամ կրկնում է՝ Պուլի, ասա՛ այք:

Р) Найдите возможные сочетания:


քիչ խմել, ծիծաղել, գգույշ, անտարբեր, դժգոհ, մատիտ,
 մի քիչ աթոռ, բարձ, հաց, մածուկ, խաղող, ընկեր, սրամիտ, յուղ,
 մի քանի ման գալ, օր, շաբաթ, արև, երեկո


քիչ խմել, մի քիչ խմել, մի քանի մատիտ 

8.  բոլոր + сущ. мн. ч. с опред. артиклем – բոլոր գրքերը

 Вместо точек поставьте слово աթոռ: (Կետերի փոխարեն օգտագործելք "աթոռ" բառը.)

1. Քանի՞ ... կա այս սենյակում: 2. Ես կարող եմ մի քանի ... բերել: 3. Ո՞ր ... է քո ...: 4. Անահիտի ... մի վերցրու: 5. Նա իր եղբորը ... չի առաջարկում, եղբայրն էլ մի ... է վերցնում ու նստում: 6. ... ազատ չէ: 7. Այս ... ազա՞տ է, կարելի՞ է այս ... նստել: 8. Բոլոր ... ազատ են: 9. Ամեն մի ... համար (номер) ունի:


9.  քննություն ընդունել ≠ քննություն հանձնել
 քննական հանձնաժողով





 Ответьте на вопросы: (Պատասխանելք հարցերին.)

Քանի՞ քննություն ունեք հանձնելու այս տարի (Դուք կամ ձեր ընկերը, ծանոթը):

Ո՞վ է ընդունում մաթեմատիկայի քննությունը, ձեր ուսուցի՞չը, թե՞ քննական հանձնաժողովը:

Ամսի քանիսի՞ն եք հանձնում ռուսերենը: Իսկ անգլերե՞նը:

10.  Суффикс -վ- между глагольной основой и глагольным окончанием -ել придает прямопереходным глаголам значение возвратности, взаимности или страдательности.

			
A → B	A ⇨	A ↔ B	A ←
активное действие, выраженное переходным глаголом, типа умыть, продать: սանրել, համբուրել, վաճառել	возвратное действие, типа умыться: (-վ-) սանրվել	взаимное действие, типа здороваться: (-վ-) համբուրվել	пассивное действие: книга продается (-վ-) վաճառվել Գիրքը վաճառվում է, գիտությունը չի վաճառվում:



գրել – գրվել լսել – լսվել փակել – փակվել ծածկել – ծածկվել բացել – բացվել պատրաստել – պատրաստվել հուզել – հուզվել	համոզել – համոզվել հագնել – հագնվել համբուրել – համբուրվել շարունակել – շարունակվել ուտել – ուտվել լարել – լարվել գտնել – գտնվել
--	--



Դու ճիշտ չես գրում այս բառը: Այս բառը այսպես **չի գրվում**:
 – Ալլո, Հայկ, դու ինձ լա՞վ ես լսում: – Չէ, **չի լսվում**:
 – Ինչու՞ պահարանդ չես փակում: – Այս պահարանը **չի փակվում**:
 – Սենյակում ցուրտ է, հիվանդին հարկավոր է ծածկել:
 – Հիվանդն էլ ասում է՝ շոգ է, **չի ուզում ծածկվել**:
 Գրադարանը **բացվում է** առավոտյան ժամը իննին:
 Մայրս միշտ համեղ ճաշեր է պատրաստում: Դու՛ման հեշտ ու արագ **չի պատրաստվում**:
 Որդու հայերեն խոսակցությունը հուզում է հորը: Հայրը **հուզվում է**:
 Ներկաները համոզում են Պըլը Պուղուն մի բան ասել, Պըլը Պուղին էլ **չի համոզվում**:
 Անծրևի ժամանակ սև կոշիկներս են հագնում: Ձմռանը հարկավոր է տաք **հագնվել**:
 Նամակի վերջում նա գրում է. համբուրում եմ՝ Լևոն:
 Կինոնկարի վերջում նրանք հանդիպում են ու **համբուրվում են**:
 Արդեն ժամանակն է դասը ավարտել, բայց ուսուցիչը դեռ շարունակում է բացատրել: Ու դասը **շարունակվում է**:
 Երեխան այս խաղողը **չի ուտում**, որովհետև թթու է:
 Այս խաղողը **չի ուտվում**, որովհետև թթու է:
 Ես ամեն առավոտ լարում եմ ժամացույցս: Այս երեկո տանը բոլորը **լարված են**:
 Տղաները մի հազվագյուտ ուլունք են գտնում ու տալիս են ուսանողուհուն: Որտե՞ղ է **գտնվում** ձեր դպրոցը:



Выберите правильную форму глагола:
 Տրված բայերից ընտրեք ճիշտը.




1. – Ուրեմն վաղը մեկնու՞մ ես: – Այո, ես արդեն ... եմ:	պատրաստել / պատրաստվել
2. Այդ գիրքը ինձ շատ է ...:	հուզել / հուզվել
3. Այսօր անծրև չկա, կարող ես թեթև կոշիկներդ ...:	հագնել / հագնվել
4. Ժամը քանիսի՞ն եմ ... ու ... խանութները:	բացել / բացվել, փակել / փակվել
5. Ես չեմ կարող եղբորս ..., նա չի ...:	համոզել / համոզվել
6. Աշուն է, անտառը ... է գույնզգույն տերևներով:	ծածկել / ծածկվել
7. Այս ֆիլմում բոլորը ... են:	համբուրել / համբուրվել
8. Ինչու՞ չես ... պատուհանը, ցուրտ է:	ծածկել / ծածկվել
9. Պեղումների ժամանակ ուսանողները ... են մի հետաքրքիր խաչքար:	գտնել / գտնվել
10. Եղբայրս ու հայրս ամեն առավոտ ... են:	սափրել / սափրվել



Найдите "лишнее" слово:
Գտե՛ք "ավելորդ" բառը.




Բնծիծաղ, ծիծաղ, ժպիտ, կախապ: 
 Ծիծաղել, ծամել, ժպտալ, կատակել:
 Ջայրանալ, բարկանալ, կռվել, զգալ:
 Գրադարան, ծանոթ, քննություն, դասախոս:
 Հայացք, դեմք, ժպիտ:



Из двух рядов слов составьте словосочетания:
Երկու շարքի բառերից կազմե՛ք հնարավոր բառակապակցություններ.



խորամանկ հարևան 

խորամանկ, հազվագյուտ,
զգույշ, անտարբեր, ընտիր


այցելություն, կոշիկներ,
գիտաշխատող, հարևան, խնձոր,
բարեկամ, ծանոթ, կոնյակ



Прочитайте и скажите, правильны или
ошибочны следующие утверждения:
Վարդացե՛ք և ասացե՛ք ճի՞շտ է, թե՞ սխալ.



	ճիշտ է	Սխալ է
1. Կարենը հաճախ է գալիս իր եղբոր սենյակը:		✓
2. Հարկավոր է գիտաշխատողներին աթոռ առաջարկել. նրանք բոլորն էլ լուրջ մարդիկ են:		
3. Կարենը կոնֆետ չի ուտում, որովհետև գիտաշխատողներին չի կարելի քաղցր ուտել:		
4. Կարենը չի ուզում իր եղբորից ոչինչ թաքցնել:		
5. Կարենի եղբայրը սիրում է կարդալ և լավ գրքեր ունի:		
6. Դուռը բացվում է և Կարենը գալիս է իր եղբոր սենյակը գրքերին նայելու:		
7. Կարենը խորամանկ ժպտում է, որովհետև իր եղբայրը անտարբեր ու զգույշ երիտասարդ է:		
8. Կարենը խորամանկ ժպտում է, որովհետև իր եղբայրը լարվում է ու հուզվում:		
9. Կարենի փոքր եղբայրը հուզվում է, որովհետև նա փոքր է, ծնողներն էլ տանը չեն:		
10. Կարենի ծնողներն ու Մոկացյանը իրար լավ են ճանաչում:		
11. Կարենի փոքր եղբայրը հուզվում է, որովհետև նա շուտով քննություն է տալիս, իսկ ծնողները գնում են ծանոթ դասախոսի մոտ, որը քննություն է ընդունում:		
12. Տիգրանը մի բարձ է շարտում, բայց Կարենն այլևս սենյակում չէ:		
13. Կարենը պատրաստվում է վերջնականապես կռվել իր եղբոր հետ:		
14. Կարենի եղբայրը լուսամուտի մոտ կանգնած կատակներ է անում մի գեղեցիկ հարևանուհու հետ:		
15. Կարենն էլ չի բարկանում:		

14.Ա) 

որ = что (подчинительный союз)
որ = какой? который? (вопросительное местоимение)
որ(ը) = который (относительное местоимение)



- Հայրիկն ու մայրիկը տանը չեն:
- Ի՞նչ:
- Ասում եմ, **որ** հայրիկն ու մայրիկը տանը չեն:
- Ու՞ր են:
- Սոկացյանենց տանը:
- **Ո՞ր** Սոկացյանենց:
- Դասախոս Սոկացյանենց, **որ(ը)** ամսի հինգին քննություն է ընդունում:



որ = что	թե = что
Подчинительный союз, употребляется, когда в косвенной речи сообщается точная информация: կարծել, ասել, մտածել, պատասխանել, որ...	Подчинительный союз, употребляется, когда в косвенной речи передается субъективная, непроверенная информация: կարծել, ասել, մտածել, թե... Но только: հարցնել, թե... թե ինչ, թե ով, թե երբ (и др. вопросит. слова)
- Ասում եմ, որ հայրիկն ու մայրիկը Սոկացյանենց տանն են: (говорю, потому что знаю.)	- Ասում եմ, թե հայրիկն ու մայրիկը Սոկացյանենց տանն են: (говорю, потому что мне так кажется.)
Ես կարծում եմ, որ նա ճիշտ է ասում:	Ես կարծում էի, թե նա ճիշտ է ասում, բայց ճիշտ չէր ասում:



- Բաղնիսում մարդ կա՞:
- Բաղնիսում համարյա մարդ չկա:
- Քանի՞ մարդ կա:
- Միայն մի մարդ կա:



Տերը գնում է բաղնիս: Նա մտածում է. ծառան ասում է, որ բաղնիսում մարդ չկա, որ բաղնիսում միայն մի մարդ կա և կարելի է հանգիստ գնալ բաղնիս: Իսկ մենք գիտենք, որ ծառան ասում է, թե բաղնիսում մարդ չկա, բայց այնտեղ ազատ տեղ չկա, շատ մարդ կա: Ծառան ուզում է ասել, թե ծուլյ մարդը մարդ չէ:



Выбором подчинительного союза **որ** и **թե** говорящий выражает свое отношение к сказанному, свою уверенность, убежденность или, напротив, субъективность, неинформированность, например, после вопросительных слов.



Перескажите диалог двух братьев 1) от имени Карена и 2) от имени его брата:



Պատմե՞ք երկու եղբոր խոսակցությունը 1) Կարենի անունից և 2) նրա եղբոր անունից.

1) Ես ասում եմ, որ հայրիկն ու մայրիկը տանը չեն: Եղբայրս հարցնում է, թե ...

2) Կարենն ասում է, թե հայրիկն ու մայրիկը տանը չեն: Ես հարցնում եմ, թե...



Перескажите текст, опираясь на ключевые глаголы:




15.

Պատմեք տեքստը՝ հիմնվելով բանալի բայերի վրա.

Բացվել, վեր կենալ, առաջարկել, հյուրասիրել, սիրել, ժպտալ, հասկանալ, քննօրհանել, հայացքով հետևել, թաքցնել, ճանաչել, ման գալ, մոտենալ, ասել, հարցնել, քննություն ընդունել, լարվել, դուրս գալ, շարտել, փակվել, նպատակին չհասնել, գնալ, բաց անել, պատրաստվել, տեսնել, կանգնած լինել, կատակներ անել, ծիծաղել, ժպտալ, չկարողանալ բարկանալ:

16. Ա)


- | | | |
|---------------------------|-----------------------|-------------------|
| 1. միջանցք (ջ = չ) | 9. սառնարան | 16. խորհրանոց |
| 2. կախիչ | 10. սալօջախ | 17. լոգասենյակ |
| 3. կոշիկների պահարան | 11. էլեկտրական օջախ | 18. լողարան |
| 4. ճաշասենյակ | 12. ամանեղենի պահարան | 19. լվացարան |
| 5. ննջասենյակ կամ ննջարան | 13. կախովի պահարաններ | 20. լվացքի մեքենա |
| 6. մանկասենյակ | 14. լվացարանի կոնք | 21. ցնցուղ |
| 7. աշխատասենյակ | 15. զուգարան (զ = ք) | 22. պատշգամբ |
| 8. խոհանոց | | 23. ծաղիկներ |




Տ Բ)  Замените номера нужными словами: 

Թվերի փոխարեն օգտագործեք համապատասխան բառերը.

Մայրիկս հիմա (8 – ներգ. հ.) է: Եղբայրս երգել չգիտի, բայց սիրում է փակվել (17 – ներգ. հ.) ու երգել (21 – ուղղ.-հայց. հ.) ընդունելիս: Նրբերշիկն ու աղցանը (9 – ներգ. հ.) են, կարող ես այնտեղից վերցնել: Ամռան տաք երեկոներին տատիկը դուրս է գալիս (22 – ուղղ.-հայց. հ.) ու նայում է (23 – սեռ.-տր. հ.): Մեր (20 – ուղղ.-հայց. հ.) (17 – ներգ. հ.) չէ, որովհետև (17 ուղղ.-հայց. հ.) փոքր է, մեր (20 ուղղ.-հայց. հ.) (8 – ներգ. հ.) է: Տիգրանիկ, զգույշ, (10 – ուղղ.-հայց. հ.) տաք է, չի կարելի (10 – սեռ.-տր. հ.) մոտենալ: Մեր (1 – ուղղ.-հայց. հ.) նեղ է ու երկար, (3 – սեռ.-տր.) տեղ չկա, մենք էլ մեր կոշիկները (16 – ներգ. հ.) ենք պահում: Երեխաները սիրում են իրենց հոր (7 – ներգ. հ.) խաղալ, որովհետև այնտեղ շատ հետաքրքիր բաներ կան: (6 – սեռ.-տր. հ.) դուռը բացվում է ու այնտեղից դուրս է գալիս փոքրիկ Անահիտը մայրիկի կոշիկներով ու տատիկի լայն ու երկար հագուստով: (5 – սեռ.-տր. հ.) դուռը փակ է, ուրեմն հայրիկն ու մայրիկը դեռ քնած են:



17.Ա) 

վաճառել, վաճառք – продавать, продажа
փոխանակել, փոխանակություն – обменять, обмен
քանի՞ սենյականոց, մեկսենյականոց, երկուսենյականոց
– сколько комнат (в квартире)? однокомнатная,
двухкомнатная ...
քանի՞ հարկանի, մեկհարկանի, երկուհարկանի... –
сколько этажей (в доме)? одноэтажный, двухэтажный...
միասին ≠ առանձին – совмещенные ≠ отдельные
քառակուսի, քառակուսի մետր – квадрат, квадратный
метр
պատուհանը (լուսամուտը) նայում է (դեպի) բակ, փողոց –
окно выходит во двор, на улицу
վերելակ – лифт
աղբատար խողովակ (դր = խպ) – мусоропровод
ծեղնահարկ – чердак
նկուղ – подвал

Բ)  և 

- Ալլո, դա 52 – 64 – 32°-ն է:
- Այո:
- Դուք Ձեր բնակարանը վաճառու՞մ եք:
- Այո:
- Քանի՞ սենյականոց է ձեր բնակարանը:
- Երեք:
- Քանի՞ քառակուսի մետր է:
- Քառասունմեկ:
- Լոգասենյակն ու զուգարանը միասի՞ն են, թե՞ առանձին:
- Առանձին են:
- Քանի՞ քառակուսի մետր է խոհանոցը:
- Ութ:
- Իսկ քանի՞ քառակուսի մետր են սենյակները:
- Տասնհինգ, տասնչորս և տասներկու:
- Իսկ միջանցքը:
- Վեց:
- Ու՞ր են նայում պատուհանները, բա՞կ, թե՞ փողոց:
- Տասնհինգմետրանոց սենյակի պատուհանը նայում է փողոց,
իսկ մյուսները բակ: Շատ հանգիստ բնակարան է:
- Պատշգամբ ունե՞ք: (Պատշգամբ կա՞: Բնակարանը
պատշգամբ ունի՞:)
- Այո, բակի կողմից պատշգամբ կա:
- Իսկ խորդանո՞ց:
- Չէ, խորդանոց չունենք:
- Ո՞ր հարկում է ձեր բնակարանը:
- Յոթերորդ:
- Քանի՞ հարկանի է ձեր շենքը:
- Տասներկուհարկանի է:
- Վերելակ կա՞: Իսկ աղբատար խողովակ՞:
- Իհարկե, և վերելակ կա, և աղբատար խողովակ:
- Եվ ի՞նչ եք ուզում ձեր բնակարանի դիմաց:
- ...



4)  Задавайте вопросы и отвечайте на них:

Հարցեր տվեք և պատասխանեցեք հարցերին:

Ձեր շենքը քանի՞ հարկանի է: Ձեղնահաճիքն է՞ կա: Իսկ նկու՞ղ: Դուք ո՞ր հարկում եք ապրում: Ձեր շենքում վերելակ կա՞: Դուք աստիճաններո՞վ եք բարձրանում, թե՞ վերելակով: Ձեր բնակարանը պատշգամբ ունի՞: Քանի՞ պատշգամբ ունեք: Ու՞ր են նայում Ձեր բնակարանի պատուհանները: Քանի՞ սենյականոց է Ձեր բնակարանը: Խորդանոց ունե՞ք: Խոհանոցը, լոգասենյակն ու միջանցքը մե՞ծ են, քանի՞ քառակուսի մետր են: Իսկ սենյակնե՞րը: Ձեր լոգասենյակն ու զուգարանը միասի՞ն են, թե՞ առանձին: Դուք վրձարկի մեքենա ունե՞ք: Որտե՞ղ է այն, լոգասենյակում, թե՞ խոհանոցում:



7) Прочитайте объявления и задайте вопросы о доме (количество этажей, наличие чердака, подвала, мусоропровода, лифта) и о квартире (количество комнат, их величина, подробности о кухне, коридоре, ванной и туалете, наличие балкона, чулана) и ответьте на них.



Կարդացե՛ք հայտարարությունները և հարցեր տվե՛ք տան ու բնակարանի մասին, թե քանի՞ հարկանի է շենքը, թե կա՞ արդյոք շենքում վերելակ, աղբատար խողովակ, ձեղնահարկ, նկուղ, թե ու՞ր են նայում պատուհանները և այլն, պատասխանեցե՛ք նման հարցերի:

**Բնակարանների վաճառք
Վաճառում եմ.**

Բնակարանս, հեռ. 57-64-32

Երկուսենյականոց
բնակարանս, հեռ. 22-22-23

Մեկսենյականոց
բնակարանս, հեռ. 26-25-24

Բնակարանս, հեռ. 58-47-36

Ամառանոցային տնակս
Բժնիում, հեռ. Երևանում՝
63-94-85

**Բնակարանների փոխանակություն
Փոխանակում եմ.**

Երեքսենյականոց բնակարանս՝
Երևանում երկուսենյականոցի հետ՝
Սանկտ-Պետերբուրգում:

Երկուսենյականոց ու մեկսենյականոց
բնակարաններս երեք կամ
չորսսենյականոց բնակարանի հետ:

Հինգսենյականոց բնակարանս երկու
մեկսենյականոցի ու մեկ
երկուսենյականոցի հետ:


Մեկսենյականոց բնակարանս ու
ամառանոցային տնակս՝ Գառնիում՝
երեքսենյականոց բնակարանի հետ՝
Երևանում:



8) Составьте объявления о продаже и обмене квартиры, дома. Не скупитесь на информацию о квартире, доме.



Տան, բնակարանի վաճառքի, փոխանակման համար
հայտարարություններ կազմեք: Տան, բնակարանի
մասին շատ տեղեկություն տվեք:



18. Ա)

- | | | |
|-------------|----------------------|-------------|
| 1. սեղան | 7. պահարան | 13. ներքնակ |
| 2. սեղանիկ | 8. զգեստապահարան | 14. սավան |
| 3. աթոռ | 9. ամանեղենի պահարան | 15. թախտ |
| 4. ճոճաթոռ | 10. մահճակալ | 16. կարպետ |
| 5. բազկաթոռ | 11. բարձ | 17. հատակ |
| 6. բազմոց | 12. վերնակ | 18. գորգ |



վրա – на



обстоятельство места может оформляться и дательным падежом



սեղանի վրա, աթոռի վրա,
պատի վրա, մահճակալի
վրա, բազմոցի վրա

սեղանին, աթոռին, պատին
մահճակալին, բազմոցին,
հատակին, առաստաղին,



տակ – под



Ծիրանի ծառի տակ մի սեղան կա:



ճոճաթոռի տակ, բազկաթոռի տակ, մահճակալի տակ



մոտ – у, около

կողքին – рядом с




պահարանի մոտ
около шкафа

պահարանի կողքին
рядом со шкафом

NB: Также: у кого-то – իմ գիրքը Արսենի մոտ է: Երեկ ուսուցչուհու մոտ էի:

Но: У кого-то есть ... только глагол ունենալ – Արսենը անգլերեն գրքեր ունի: Ես երկու եղբայր ունեմ, քույր չունեմ:



- 19. գրասեղան
- 20. լամպ
- 21. լուսամտիովի
- 22. ջահ
- 23. առաստաղ
- 24. կախիչ
- 25. պատ

- 26. նկար
- 27. քարտեզ
- 28. պատուհան
- 29. վարագույր (գ=ք)
- 30. գրադարակ(ներ)
- 31. ծաղկաման

- 32. պատուհանի (լուսամտի) գոգ (второе г=р)
- 33. ատելի
- 34. հեռուստացույց
- 35. ձայնասփյուռ



մեջ (ջ = չ) – в, внутри



обстоятельство места может оформляться и местным падежом



պահարանի մեջ - в шкафу,
внутри шкафа
տետրը գրքի մեջ է - тетрадь
лежит в книге, внутри книги

պահարանում – в шкафу
գրքում գրված է – в книге
написано



միջև (ջ = չ) – между



երկու բազկաթոռի միջև կամ բազկաթոռների միջև
երկու պատուհանի միջև կամ պատուհանների միջև



շուրջը – вокруг





սեղանի շուրջը, պապիկի շուրջը, ծառի շուրջը



առաջ (ջ = չ) – перед (разг.).



դռան առաջ, պատուհանի առաջ, հեռուստացույցի առաջ

բ)  Опишите комнату (Вашу, Ваших друзей, знакомых). 

Սկարագրե՛ք Ձեր (Ձեր ընկերների, ծանոթների) սենյակը: Օրինակ.

Սենյակը փոքր է, հազիվ¹ տասը քառակուսի մետր: Երկու մահճակալ, մի սեղան, պահարան, երկու աթոռ և ուրիշ ոչ մի կահույք²:

¹հազիվ — едва

²ուրիշ ոչ մի կահույք — никакой другой мебели

գ)  Задавайте вопросы и отвечайте на них:

Հարցեր տվե՛ք և պատասխանեցե՛ք հարցերին:




Ձեր խոհանոցում ի՞նչ կա: Քանի՞ պահարան և քանի՞ կախովի պահարան կա Ձեր խոհանոցում: Որտե՞ղ է սառնարանը, սալօջախի մո՞տ, թե՞ սալօջախից հեռու: Լվացարանի կոնքը սալօջախի՞ կողքին է, թե՞ սառնարանի: Ի՞նչ կա լվացարանի կոնքի և սալօջախի միջև: Ձեր խոհանոցում թախտ կա՞: Իսկ ձայնասփյուռ՞ն կամ հեռուստացու՞յց: Նկարներ կա՞ն: Ի՞նչ գույնի է վարագույրը:

Ննջարանում ի՞նչ կա: Քանի պահարան կա Ձեր ննջասենյակում: Աթոռ կա՞: Իսկ ճոճաթո՞ռ: Իսկ բազկաթո՞ռ:

Դուք բազմոցի վրա՞ եք քնում, թե՞ մահճակալի, թե՞ բազկաթոռն եք բացում քնելիս: Ձեր սենյակի հատակին գորգ կա՞: Դուք սիրու՞մ եք հատակին քնել: Իսկ Ձեր քու՞յրը կամ եղբա՞յրը: Քանի՞ բարձ եք դնում, մե՞կ, թե՞ երկու: Երբ Դուք փոքր էիք, սիրու՞մ էիք բարձեր չպարտել: Ձեր մայրիկը բարկանու՞մ էր: Իսկ հիմա Դուք բարձերով չե՞ք կռվում:

Ի՞նչ կա մահճակալի վրա: Ձեր մահճակալին ներքնակ կա՞: Իսկ բազմոցին քնելիս ներքնակ օգտագործու՞մ եք, թե՞ ոչ: Ամռանը ինչո՞վ եք ծածկվում, միայն սավանո՞վ, թե՞ վերմակով: Ինչու՞: Ձեր տանը ցու՞րտ է, տա՞ք է, շո՞գ է: Ձեր մահճակալի մոտ լամպ կա՞: Գիշերը անկողնում կարդու՞մ եք: Ննջարանում գրքեր կա՞ն: Դուք հիմա որտե՞ղ եք այս գիրքը կարդում. նստած եք բազկաթոռին, գրասեղանի առա՞ջ, թե՞ բազմոցին, թե՞ հատակին, գորգի վրա՞:

Ճաշասենյակում ի՞նչ կա. գրասեղա՞ն, սեղանիկ ու բազկաթոռնե՞ր, ճաշասեղա՞ն, ամանեղենի պահարա՞ն: Վարագույրն ի՞նչ գույնի է: Իսկ բազմոցն ու բազկաթոռները ի՞նչ գույնի են: Պատերին նկարներ կա՞ն: Իսկ գրադարակնե՞ր: Որտե՞ղ է Ձեր հեռուստացույցը: Ի՞նչ կա պատուհանի գոգին: Ածելի կա՞, ո՞չ, իսկ որտե՞ղ է Ձեր կամ Ձեր հոր ածելին: Ձեր ճաշասեղանի՞ն ծաղիկներ կա՞ն: Իսկ պատուհանի գոգի՞ն: Գրասեղանին գրիչներ ու մատիտներ կա՞ն: Իսկ ծաղկամա՞ն: Որտե՞ղ է ջահը:



19. Ա)  Ответьте на вопросы: Պատասխանեք հարցերին.

Որպե՞ղ չի կարելի քնել:

ճաշասենյակում, միջանցքում, աշխատասենյակում, խոհանոցում, խորդանոցում, լոգասենյակում (լողարանում), պատշգամբում, սեղանի վրա, բազկաթոռին, ճոճաթոռին, բազմոցին, մահճակալին, պատուհանի գոգին, թախտին, հատակին՝ գորգի կամ կարպետի վրա, գրասեղանի առաջ:

Որպե՞ղ չի կարելի կարդալ:

ճաշասենյակում, ննջասենյակում, մանկասենյակում, աշխատասենյակում, խոհանոցում, խորդանոցում, լոգասենյակում, զուգարանում, պատշգամբում, ճոճաթոռին, բազկաթոռին, բազմոցին, գրասեղանի առաջ, անկողնում, պատուհանի գոգին:

Որպե՞ղ կարելի է թաքցնել նամակը:

Կոշիկների պահարանում, սառնարանում, սալօջախում, ամանեղենի պահարանում, լվացարանի տակ, լվացքի մեքենայի մեջ, աստիճանի տակ, զգեստապահարանում, բարձի տակ, ներքնակի տակ, նկարի ետևում, քարտեզի ետևում, վարագույրի ետևում, գրադարակների միջև, ծաղկամանի մեջ, հեռուստացույցի տակ, ձայնասփյուռի ետևում, ծաղիկների մեջ, կախիչի տակ:

Ի՞նչն է ավելորդ (դ=թ) ննջարանկում: (ЧТО ЛИШНЕЕ?)

Կախիչը, կոշիկների պահարանը, սառնարանը, սալօջախը, ամանեղենի պահարանը, կախովի պահարանները, լվացարանի կոնքը, լողարանը, լվացարանը, լվացքի մեքենան, ցնցուղը, ծաղիկները, ծաղկամանը, աստիճանը, աթոռները, ճոճաթոռը, բազկաթոռը, բազմոցը, զգեստապահարանը, մահճակալը, անկողինը (ներքնակը, սավանը, վերմակը, բարձը), թախտը, գորգը, վարագույրը, գրասեղանը, լամպը, պատի նկարը, քարտեզը, գրադարակները, հեռուստացույցը, ձայնասփյուռը:

Ի՞նչն է ավելորդ միջանցքում:

Կախիչը, կոշիկների պահարանը, սառնարանը, սալօջախը, ամանեղենի պահարանը, կախովի պահարանները, լվացարանի կոնքը, լողարանը, լվացարանը, լվացքի մեքենան, ցնցուղը, ծաղիկները, աստիճանը, ճոճաթոռը, բազկաթոռը, բազմոցը, զգեստապահարանը, մահճակալը, անկողինը (ներքնակը, սավանը, վերմակը, բարձը), թախտը, գորգը, գրասեղանը, պատի նկարը, քարտեզը, վարագույրը, գրադարակները, հեռուստացույցը, ձայնասփյուռը:

Ի՞նչն է ավելորդ աշխատասենյակում:

Կոշիկների պահարանը, սառնարանը, սալօջախը, ամանեղենի պահարանը, լվացարանի կոնքը, լողարանը, լվացարանը, լվացքի մեքենան, ցնցուղը, ծաղիկները, աստիճանը, գրադարակները, աթոռները, ճոճաթոռը, բազկաթոռը, բազմոցը, զգեստապահարանը, մահճակալը, անկողինը (ներքնակը, սավանը, վերմակը, բարձը), թախտը, գորգը, գրասեղանը, լամպը, լուսամփոփը, ջահը, պատի նկարը, քարտեզը, վարագույրը, ծաղկամանը, հեռուստացույցը, ձայնասփյուռը:

բ) Куда поставить следующую мебель и предметы?

Ու՞ր դնենք այս կահույքն ու իրերը:

Կախիչը, կոշիկների պահարանը, սառնարանը, սալօջախը, ամանեղենի պահարանը, կախովի պահարանները, լվացարանի կոնքը, լողարանը, լվացարանը, լվացքի մեքենան, ցնցուղը, ծաղիկները, աստիճանը, սեղանը, աթոռները, ճոճաթոռը, բազկաթոռը, բազմոցը, պահարանը, զգեստապահարանը, ամանեղենի պահարանը, մահճակալը, անկողինը (ներքնակը, սավանը, վերմակը, բարձը), թախտը, գորգը, գրասեղանը, լամպը, լուսամփոփը, ջահը, պատի նկարը, քարտեզը, վարագույրը, գրադարակները, ծաղկամանը, հեռուստացույցը, ձայնասփյուռը:

խոհանոց	լոգասենյակ	խորդանոց	ճաշասենյակ	մանկասենյակ

20.    Прослушайте и заполните пропуски:

Լսե՛ք ձայնագրությունը և լրացրե՛ք բացթողումները.

Մ) – Խնդրեմ, վարպետ, համեցեք: Սկսենք ...:
վարդագույն սալիկներ, իսկ պատերին վառ գույնի պաստառներ:

– Ամբողջ կաֆել, թե՞ մենակ գազի ու ... մոտ:

– Գազօջախի և լվացարանի պատը մինչև ...: Իսկ դիմացի պատը՝ գունավոր ...:

– ... ու վանճան էլ ե՞ք կաֆել անում:

– Այո, այս երկնագույն սալիկները զուգարանի ու ... համար են:

– Հետո՞, իսկ ... ի՞նչ ենք անում:

– Սենյակներն էլ ենք պաստառապատում: ... սպիտակ, ... բաց ...,:

Բ) – Մամ, օրագիրս ու՞ր ա:

– Երևի ... վրա:

– Գրասեղանիս վրա չկա, մամ:

– Իսկ մահճակալի կամ ... տա՞ն:

– Է, մամ, մի հատ ... նայի, էնտեղ չի՞:

– Խոհանոցում որտեղ, ..., թե՞ գազօջախում:

– Խոհանոցի պատուհանի գոգին, կամ ..., կամ էլ ...:

– Էստեղ ոչինչ էլ չկա, ... նայի:

– Հեսա, մա, ննջարանում էր, հայելու վրա:

Գ) – Մարո՛, Էսօրվա թերթը ու՞ր ա:

– Օ՛Ֆ, հիմի էլ Էսօրվա ...: Ննջարանում: Երևի բարձի տակ կամ էլ ...:

– Ննջարանում չկա:

– Ուրեմն խորդանոցի ...:

– Մարո, ի՞նչ ես ասում, ո՞նց թե, Էսօրվա թերթը ...:

– Բա էլ ո՞րտեղ:

– Եսիմ, միջանցքում կամ ...:

– Բա որ գիտես, էլ ինչի՞ ես հարցնում:

Урок 10. Տասներորդ դաս

Грамматика

Желательное наклонение: образование и употребление в независимых предложениях. Речевые формулы, содержащие глагол в желательном наклонении.

Склонения послелогов (продолжение).

Детские стихи

Ծոճանակ

Ձի, ձի (Ռուբեն Ղարիբյան)

Օրոր

Մողես, մողես (Ռուբեն Ղարիբյան)

Թան, թան (Ռուբեն Ղարիբյան)

Тексты

Պըլը Պուլիմ և իր հարևանը

Օր ու մեջ ապրես

Желательное наклонение Ըղձական եղանակ



Желательное наклонение обозначает действие желательное или вызывающее сомнение, сожаление, опасение и т.д. Употребительны два времени желательного наклонения: будущее и будущее в прошлом.

Образование желательного наклонения (будущее время – ապառնի ժամանակ)

գրել		կարդալ	
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև	утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև
գրեմ	չգրեմ	կարդամ	չկարդամ
գրես	չգրես	կարդաս	չկարդաս
գրի	չգրի	կարդա	չկարդա
գրենք	չգրենք	կարդանք	չկարդանք
գրեք	չգրեք	կարդաք	չկարդաք
գրեն	չգրեն	կարդան	չկարդան

գիտենալ	ունենալ	լինել	տալ	գալ
գիտենամ	ունենամ	լինեմ	տամ	գամ
գիտենաս	ունենաս	լինես	տաս	գաս
գիտենա	ունենա	լինի	տա	գա
գիտենանք	ունենանք	լինենք	տանք	գանք
գիտենաք	ունենաք	լինեք	տաք	գաք
գիտենան	ունենան	լինեն	տան	գան

Употребление желательного наклонения в независимых предложениях



Желательное наклонение употребляется для выражения пожелания, воли, вежливой и мягкой просьбы, предостережения, побуждения к действию со стороны говорящего.

Желательное наклонение часто употребляется со словами, выражающими пожелание, типа երանի՛ "вот бы!", գո՛նե "хоть бы!".

երանի՛ շյուր անձրև չգա: Գո՛նե անապատյան ճարգանք անես:

1 • Относясь к первому лицу, желательное наклонение выражает намерение: **Գնամ տեսնեմ** ի՞նչ էլա շյուր խանութքում: "Пойду посмотрю, что есть сегодня в магазине."

• Во множественном числе желательное наклонение выражает призыв к совместному действию: **Գնանք տեսնենք** ի՞նչ էլա շյուր խանութքում: "Пойдем посмотрим, что есть сегодня в магазине."

• В сочетании с модальным словом թող (мн. ч. թողեք) первое лицо желательного наклонения выражает просьбу дать возможность совершить действие: **Թող (թողեք) դուրս գամ**: "Дай (дайте) мне выйти"; **Թող (թողեք) հանգիստ ճաշենք**: "Дай (дайте) нам спокойно пообедать".

• Множественное число первого лица часто употребляется в сочетании с повелительным наклонением глагола գալ: **արի՛, եկե՛ք**; тогда с повелительным наклонением единственного числа (արի) выражается призыв к совместному действию, обращенный к одному лицу, а с повелительным наклонением множественного числа – призыв к совместному действию, обращенный ко многим: **Արի՛** շյուտեղ արև **նկարենք**: **Եկե՛ք** սեղանը շյուտեղ **դնենք**: "Давай нарисуем!" "Давайте поставим!"

• Вопросительная форма желательного наклонения выражает т.н. совещательный вопрос, которым как бы спрашивается мнение, желание, совет собеседника. **Ի՞նչ անեմ**: **Ի՞նչ անենք**: **Ո՛ր գնամ**: **Ո՛ր գնանք**: **Ինչպե՞ս ասեմ** նրան այդ բանը: **Ինչպե՞ս ասենք** նրան այդ բանը: "Что бы мне (нам) сделать? Куда бы мне (нам) пойти? Как бы мне (нам) сказать ему это?"

Вопрос в желательном наклонении может быть и риторическим. Такой вопрос предполагает, что говорящий не ожидает обратной реакции на него. Այդ էլ **չասե՛մ** նրան: "И этого мне ему не сказать?" էլի **լռե՛նք**: "Опять (нам) молчать?"

Риторические вопросы, вопросы, выражающие колебание, часто не относятся к какому-либо лицу и тяготеют к неопределенно-личным конструкциям. Поэтому эти вопросы могут оформляться и вторым лицом единственного числа (которое в данном случае выступает как неопределенно-личная форма), и третьим лицом единственного числа при неопределенно-личном подлежащем մարդ. Ср. Այդ էլ **չասե՛ս** նրան: Այդ էլ մարդ **չասի՛** նրան: էլի **լռե՛ս**: Մարդ էլի **լռի՛**: А также: **Ի՞նչ անես**: Մարդ **ի՞նչ անի**: "Что делать?" **Ո՛ր գնաս**: Մարդ **ո՛ր գնա**: "Куда пойти?"

2 • Второе лицо желательного наклонения выражает просьбу. Интонационное оформление такой просьбы очень близко к вопросительной: Մի քիչ ջուր **դա՛ս**: Այն բերրը **դա՛ք** ինձ:

• Отрицательная форма второго лица выражает запрет, предостережение: Մայրիկին **չասե՛ս** ուր ենք գնում: Երեխաներ, դուռը **չբացե՛ք**:

3 • Третьим лицом желательного наклонения говорящий высказывает свое пожелание, обращенное к третьему лицу; в сочетании с модальным словом բող ("пусть") выражается просьба, побуждение, приказ. Թող բժիշկ **կանչի**: Թող երեխաները փողոցում **չխաղան**:

• Вопросно-отрицательная форма желательного наклонения в третьем лице выражает опасение (как бы не ...). Կարենը տոմար **չմոռանա՛** տանը: Չգնա՛ն ուսուցչին ամեն ինչ պատմեն:

Так как желательное наклонение выражает действие, совершение которого зависит от воли говорящего, оно часто употребляется для формулирования добрых и недобрых пожеланий, т.е. в благословениях и проклятиях, в поздравлениях, клятвах и других речевых формулах.

Կեցցես, կեցցեք, ապրես, ապրեք – молодец! (ты) – молодцы! (вы)

կեցցե, ապրի – молодец! (он, она) да здравствует!

կեցցեն, ապրեն – молодцы! (они)

դունդ շինվի – да построится твой дом!, отсюда – **դնաշեն**

դունդ չքանդվի – да не разрушится твой дом!

յոթը որդվով սեղան նսրես (նսրի, նսրեք, նսրեն) – сесть бы тебе (ему, вам, им) за стол вместе с семьей сыновьями!

ցավդ տանեմ – унести бы мне твою боль! варианты: **մաման ցավդ տանի, չարդ տանի, չարդ տանեմ**

մեռնեմ քեզ – умереть бы мне ради тебя! варианты: **ջանիդ մեռնեմ, հոգուդ մեռնեմ, մաման քեզ մեռնի, ջանիդ մեռնի, հոգուդ մեռնի**

Ասրված պահի – да хранит Бог!

Ասրված դա – дай Бог!

Ասրված չանի – не дай Бог!

մի բարձի ծերանաք (ծերանան) – состариться бы вам (им) на одной подушке! (благословение вступающим в брак)

քիթս կտրեմ, թե սուր եմ ասում – отрежу себе нос, если вру (клятва)

գեղնի տակն անցնեմ, թե ..., գեղինը մտնեմ, թե ... – провалиться мне сквозь землю, если ...

սատանան տանի, գրողը տանի – черт поberi!

անիծվես դու – да будешь ты проклят!

անիծվի ... – да будет проклят ...!

շնորհավոր (լինի) քո (ձեր) տոնը, Նոր Տարին – поздравляю тебя (вас) с праздником, с Новым Годом!

Ուրախ տարի լինի, երջանիկ տարի լինի – пусть год будет веселым, пусть год будет счастливым!

անուշ (լինի) – на здоровье! (говорится при угощении)

բաղնիսդ անուշ (լինի) – с легким паром!

բարով մաշես (մաշի, մաշեք, մաշեն) – носи (-те), пусть носит (-ят) на здоровье!

Форму желательного наклонения имеют также выражения: **ասենք** "скажем", **ասես** "точно, как будто", **տեսնենք** "посмотрим, увидим", **տեսնես** "интересно", **կարծեմ** "по-моему", **կարծես** "как будто", **խնդրեմ** (դ=թ) "пожалуйста", **հուսամ** "надеюсь", **հուսանք** "надеемся", **ի՞նչ իմանամ** "почем знать?"

Задание

Множественно прослушайте и прочитайте следующие стихотворения (считалки, колыбельные, скороговорки); обратите внимание на употребление желательного наклонения; добейтесь хорошего произношения звуков ճ, ձ, ը, զ, ք.

Բազմիցս լսեք և կարդացեք հետևյալ ոտանավորները՝ համրանքախաղերը, օրորոցայինները, շուտասելուկները, ուշադրություն դարձրեք ըղձական եղանակի գործածությանը, հետևեք ճ, ձ, ը, զ, ք հնչյունների լավ արտասանությանը:



և ձոճանակ

ճոճանակ, ճոճանակ,
Գնամ ու գամ շարունակ:
Գնանք ասենք հավիկին՝
Գա օրորի լալիկին:
ճոճանակ, ճոճանակ,
Գնամ ու գամ շարունակ:
Գնանք ասենք փիսիկին՝
Գա օրորի լալիկին:
ճոճանակ, ճոճանակ,
Գնամ ու գամ շարունակ:
Գնանք ասենք քուչիկին՝
Գա օրորի լալիկին:
ճոճանակ, ճոճանակ,
Գնամ ու գամ շարունակ:



Ալ. Բաթբեուկ-Մելիքյան.
ձոճանակ, 1964

Слова Բառեր

գնամ ու գամ – зд. туда-сюда

շարունակ – непрерывно

հավիկ – курочка (уменьш.-ласк.)

օրորել – качать, баюкать

փիսիկ – киска (уменьш.-ласк.)

քուչիկ – собачка (уменьш.-ласк.)



և Ձի, ձի (Ռուբեն Ղարիբյան)

Ձի, ձի, ձիավոր,
Մի ձի ունեմ թևավոր,
Նստեմ, թռնեմ Սասնասար¹
Սասնա սարեր¹ քահրուբար

Նստեմ, թռնեմ, գնամ Մուշ²,
Մշո երկիր շատ անուշ,

Նստեմ, թռնեմ Ավարայր³,
Քաջ Վարդանի³ կռվի վայր.

Նստեմ, թռնեմ, գնամ Վան²,
Վանա էն ծովն² աննման.

Ձի, ձի, ձիավոր,
Մի ձի ունեմ թևավոր...

¹Սասուն, Սասնասար, Սասնա սարեր – Сасун, Сасунские горы: район и горы в Западной Армении, ныне на территории Турции.

²Մուշ, Վան – Муш, Ван: города Западной Армении, ныне на территории Турции; Մշո երկիր – страна Муш, Վանի ծով (լիճ) – Ванское море (озеро)

³Ավարայր, Վարդան – на Аварайрском поле в 415 г. произошла знаменитая битва армян с персами. Армянами командовал полководец Вардан Мамиконян.

Слова Բառեր

ձիավոր – всадник
 թևավոր – крылатый
 թռնել – летать
 քահրուբար – (հակինթ)
 янтарь



քաջ – храбрый
 կռվի վայր – место боя
 ծով – море
 աննման –
 бесподобный



և Օրոր



Օրո՛ր, օրո՛ր, իմ սիրունիկ,
 Օրոր ասեմ, դու նանա.
 Երկար ապրես կարմիր օրեր,
 Կարմիր արև ունենաս,
 Օրո՛ր, օրո՛ր, իմ անուշիկ,
 Օրոր ասեմ, դու նանա,
 Այլ վարդ դառնան քարն ու փուշը,
 Որ ճամփով էլ դու գնաս,
 Օրո՛ր, օրո՛ր, իմ անուշիկ,
 Օրոր ասեմ, դու նանա:



Слова Բառեր


օրո՛ր, օրո՛ր – баю-бай
 նանա – баиньки
 երկար – длинно, долго
 ալ վարդ – алая роза

դառնալ – стать, превращаться в
 փուշ – колючка
 ճամփա – (ճանապարհ) дорога



և Մողես, մողես (Ռուբեն Ղարիբյան)

Մողես, մողես
 Կանաչ մողես,
 Կանաչ մողես
 Պոչըդ թողես,



Պոչըդ թողես
 Մողոն խաղա,
 Մողես, մողես,
 Պոչըդ թողես...

Слова Բառեր

մողես – ящерица
 պոչ – хвост

թողել (разг.), թողնել (лит.) – оставить
 Մողո – Մողոմոն (имя)



և Թան, թան (Ռուբեն Ղարիբյան)

Թան, թան, թթու թան,
 Թան, թան, քաղցր թան.
 Քաղցր թանը
 Թաթոսին,
 Թթու թանը
 Մաթոսին,
 Թաթոսն ուտի,
 Հիանա,
 Մաթոսն ուտի,
 Նեղանա:

Слова Բառեր

թան – пахта
 հիանալ – восхищаться
 նեղանալ – обижаться

Упражнения Վարժություններ



Երանի՛ ինձ
դաս չհարցնես:

Երանի՛
ինձ դաս
հարցնես:

Ցավդ փանեմ, ջանիդ
մեռնեմ, ակնոցս փա՛ս:




1. Ա)



(զանգել) Արմենը էլ ինձ չի հիշում, երանի նորից ... :	→	Արմենը էլ ինձ չի հիշում, երանի նորից <i>զանգի</i> .
пожелание (զանկություն)		

- (տանել) Հայրիկս ու մայրիկս ուզում են մեկնել Սանկտ-Պետերբուրգ, երանի ինձ էլ ...:
- (գալ) Արդեն ժամը յոթն է, իսկ բժիշկը դեռ չկա, երանի հիմա ...:
- (գնալ) Սեպտեմբերին Ղրիմում դեռ լավ եղանակ է, երանի այս սեպտեմբեր ... Ղրիմ:
- (ուղարկել) Արսենին ուղարկում են Ֆրանսիա՝ սովորելու, երանի քեզ էլ ...:
- (կարդալ) Առավոտից բակում խաղում ես, գոնե մի գիրք ...:
- (ուտել, խմել) Գիտեմ, որ դուք ժամանակ չունեք, բայց ճանապարհից առաջ գոնե մի բան ..., մի բաժակ սուրճ ...:
- (վստահել) Մայրիկ, մենք կարող ենք տանը մենակ մնալ, ի՞նչ կլինի, մի քիչ մեզ ...:
- (դաս չանել) Այսօր լավ եղանակ է, երանի այսօր մենք ...:
- (չգտնել, չկարդալ) Նամակը սեղանի վրա է, երանի եղբայրներս ցամակը ...:
- (չքնել) Արայիկը շատ ծույլ տղա է, գոնե դասի ժամանակ ...:
- (ժպտալ) Նա միայն քնժիծաղ է տալիս, գոնե մի անգամ էլ ...:
- (չթաքցնել) Այսօր բոլորը խորամանկ հայացքով ինձ են հետևում, գոնե ոչինչ ... ինձանից:
- (առաջարկել) Բոլորը լուռ են ու տխուր, գոնե հայրիկը մի բան ...:
- (հասնել) Երանի դու քո նպատակին ...:
- (զգալ, մոտենալ) Երանի նա ..., որ ես իրեն եմ սպասում ու ... ինձ:

(նայել) Ամեն անգամ, երբ ես նայում եմ այն խարտյաչ գեղեցկուհուն, նա թաքցնում է դեմքը, երանի մի անգամ էլ նա ինձ ...:

Գ) 


9.00 չմոռանալ ուղարկել
նամակը.

→

Ժամը իննին չմոռանամ
ուղարկել նամակը:

намерение – по записям из ежедневника (մտադրություն – ըստ
օրագրի գրառումների)

- 9.00 - չմոռանալ ուղարկել նամակը.
- 9 30 - զանգել ինստիտուտ.
- 10.00 - գիրքը տանել Սերոբին.
- 11.00 - գնալ դասի.
- 18.00 - վերջնականապես կռվել Արփիկի ընկերոջ հետ.
- 19.00 - Արփիկին հրավիրել թատրոն:

Գ2. Ա) 

Ուզում եմ մի քիչ
հանգստանալ՝ հեռուստացույց
նայել կամ թերթ կարդալ:

→

Մի քիչ հանգստանամ՝
հեռուստացույց նայեմ կամ
թերթ կարդամ:

намерение (մտադրություն)

Ուզում եմ մի քիչ հանգստանալ, հեռուստացույց նայել կամ թերթ
կարդալ:

Խորտիկներից ուզում եմ սպանաղ վերցնել:

Ուզում եմ այս քարտեզի մասշտաբը մեծացնել ու կախել պատից:

Այսօր ուզում եմ հարիսա եփել:


Այս երեկո ուզում եմ պատասխանել նրա նամակին:

Ուզում եմ մի քիչ էլ անտառում մնալ ու սունկ հավաքել:

Ուզում եմ շուտ վազել տուն ու մայրիկին ցույց տալ այս մեծ
սպիտակ սունկը:

Ուզում եմ հեռուստացույցը բարձրացնել ու դնել սեղանին:

Ուզում եմ գնալ գրադարան, մի ընտիր գիրք վերցնել:

Գ) 


Մի քիչ հանգստանամ՝
հեռուստացույց նայեմ կամ
թերթ կարդամ:

→

Մի քիչ հանգստանանք՝
հեռուստացույց նայենք կամ
թերթ կարդանք:

призыв к совместному действию (համատեղ գործողության կոչ)

(см. предложения из пункта У)

Գգ) 


Մի քիչ հանգստանանք՝
հեռուստացույց նայենք կամ
թերթ կարդանք:

→

Արի՛ մի քիչ հանգստանանք՝
հեռուստացույց նայենք կամ
թերթ կարդանք:
Եկե՛ք մի քիչ հանգստանանք,
հեռուստացույց նայենք կամ
թերթ կարդանք:


усиление призыва к совместному действию модальными словами
արի՛, եկ՛, եկե՛ք ("արի", "եկ", "եկեք" եղանակավորող բառերն
ուժեղացնում են համատեղ գործողության կոչը)

(см. те же предложения из пунктов У, Բ)


Տ3. Ա) 

Մայրիկ, ես ուզում եմ քո կոշիկները հագնել:	→	Մայրիկ, <i>թող</i> քո կոշիկները <i>հագնեմ</i> :
просьба – թող/թողեք + 1-е л. жел. накл. (խնդրանք – թող/թողեք+ ըղծական ապառնու 1-ին դ.)		

Մայրիկ, ես ուզում եմ քո կոշիկները հագնել:
 Ուզում եմ (ուզում եմք) հեռուստացույց նայել, ծայնասփյուռ (ռադիո) լսել, այսօրվա դասը կրկնել, նրա հետ լրջորեն խոսել, անմիջապես գնալ ման գալու:


ՏԲ) 

Թող (թողեք) հեռուստացույց նայեմ (նայեմք):	→	Թող (թողեք) հեռուստացույց <i>նայի</i> (նայեմ):
просьба о 3-м лице (3-րդ դ. վերաբերող խնդրանք)		
(см. предложения из пункта А)		

ՏԳ) 


Այս գիրքը կարդալ.	→	<i>Թող</i> այս գիրքը <i>կարդա</i> . <i>Թող</i> այս գիրքը <i>կարդան</i> :
повеление – թող + 3-е лицо жел. накл. (իրաման – թող + ըղծական ապառնու 3-րդ դ.)		

Այս գիրքը կարդալ, դասի ժամանակ չխոսել, ամաչել, չամաչել, միսը լավ ծամել, հիշել այս օրը, չմոռանալ այս օրը, Գալուստի հասցեն իմանալ, վազել խանութ կամ շուկա ու մի կիլո բալ բերել, անմիջապես ինձ մոտենալ, առանձնապես չհուզվել, չլարվել, քննությունից հետո մի քիչ ման գալ, բարձերը չշարտել, չբարկանալ:

Տ4. Ա) 

- Խմենք (մի գավաթ սուրճ): - Դառնաս (բժիշկ):	→	- Մի գավաթ սուրճ <i>չխմե՞նք</i> : - Բժիշկ <i>չդառնա՞մ</i> :
предложения, оформленные как вопросы, типа "не пойти ли нам..." (առաջարկություն հարցի ձևով)		

- Հարցնենք (այն կնոջը, մեր ճանապարհը):
- Դառնաս (նկարիչ կամ երաժիշտ):
- Մոտենանք (այն խարտյաչ աղջկան):
- Դենք (մահճակալը պատուհանի մոտ):
- Անենք (խորոված):
- Թխենք (գաթա):
- Եփենք (այսօր, սպաս):
- Հավատաս (նրան):

ՏԲ) 

Չի կարելի, որ նա կոպիտ պատասխանի ուսուցչին:	→	Կոպիտ <i>չպատասխանի՞</i> ուսուցչին:
опасение, предостережение (երկյուղ)		

Չի կարելի, որ նա կոպիտ պատասխանի ուսուցչին:
 Չի կարելի, որ երեխաները մոռանան իրենց պայուսակները:
 Չեմ ուզում, որ նրանք քո հասցեն իմանան:
 Չեմ ուզում, որ հայրիկին ամեն ինչ պատմեն:
 Չի կարելի, որ նա մեռնակ բարձրացնի այս քարը:
 Չեմ ուզում, որ երեխաները այս հազվագյուտ գրքերը տանեն դպրոց:
 Չեմ ուզում, որ Արսենը քննությունից առաջ լարվի:
 Չեմ ուզում, որ Արսենն ու Վարդանը քննությունից հետո կռվեն:

4) 




Այս ժամացույցի տերը
(երգել, պարել...)



-Ի՞նչ անի այս ժամացույցի տերը:
-*երգի, պարի...*

игра в фанты (գրավախառ)

Մատանու տերը, մատիտի տերը, ռետինի տերը, քանոնի տերը, գրչի տերը (ծիծաղել, լաց չլինել, սեղանի տակ մտնել, բարձր շարտել դիմացի շենքի հարևանունուն, նարդի խաղալ):

5. Ա) 




Այս քարը վերցնել, մի կողմ դնել:



Այս քարը *վերցնես (վերցնեք)*,
մի կողմ *դնես (դնեք)*:

вежливая просьба – с интонацией, близкой к вопросительной
(քաղաքավարի խնդրանք – գրեթե հարցական հնչերանգով)

Թերթերը բերել: Գիրքս գտնել: Այն նամակը ուղարկել: Վերջին կտորը նորից կարդալ: Այս խնդիրը նորից բացատրել: Եվս մի աթոռ բերել:

Բ) 



Չի կարելի լաց լինել:



Լաց *չլինես (լաց չլինեք)*:

запрет – отрицательная форма 2-го л. желательного наклонения
(աղգելք – ըղձական ապառնու ժխտական 2-րդ դ.)

Չի կարելի այստեղ ծիծաղել, բժշկից ամաչել, դասարանում վազել, կոպիտ խոսքին պատասխանել, նրանց հավատալ, նրանց վստահել, կռվել, բարձերը շարտել, բարկանալ:

6. Заполните пропуски одобрительными репликами:

Լրացրեք բացերը խրախուսական արտահայտություններով.

- Լավ ես երգում, Արմեն, ...: - Արմենը լավ է երգում, ... Արմենը:
- Շատ լավ եք պարում, երեխաներ, ...: - Շատ լավ են պարում երեխաները, ... երեխաները:

Поздравьте вступающих в брак. Поздравьте кого-нибудь с Новым Годом, с другим праздником.

7. 

կարծեմ – по-моему

Կարծեմ լոբին էլ է սխտորով:
Հայրիկն ու մայրիկը *կարծեմ*
Մոկացյանենց տանն են:



կարծես – как будто, кажется

Կարծես ձյուն է գալիս:

Ա) 



Նրանց բնակարանը
խորդանոց չունի:



Նրանց բնակարանը *կարծես*
խորդանոց չունի:

Նրանց բնակարանը խորդանոց չունի:

Լվացքի մեքենան լոգասենյակում էր դրված:

Բակում ճոճանակ ունեին:

Բոլոր ներքնակներն ու վերմակները նույն մահճակալին էին դրված:

Խոհանոցում թախտ կար:

Սենյակները բավականին մեծ էին:

Միջանցքը նեղ ու երկար էր:


Բոլոր պատուհանների գոգին ծաղկամաններ կային:

ճաշասենյակի ջահը բյուրեղապակյա էր:

ասենք, ասենք թե – скажем, предположим



- Դուք ձեր բնակարանը փոխանակու՞մ եք:



- *Ասենք*, փոխանակում ենք, հետո՞:
(*Ասենք թե* փոխանակում ենք, հետո՞
ինչ):

- Դուք ձեր բնակարանը փոխանակու՞մ եք:
- Գիտաշխատողները կոնֆետ սիրու՞մ են:
- Կարենին աթոռ առաջարկել հարկավո՞ր է:
- Հայրիկն ու մայրիկը տանը չե՞ն:
- Ամսի հինգին Մոկացյա՞նն է քննություն ընդունում:
- Այն խարտյաչ գեղեցկուհին քո հարևանուհի՞ն է:



ով (ովքեր) ասես (ուզես) – кто только ни (кто хочешь)
ուվ ասես (ուզես) – кого (кому) только ни (хочешь)
ինչ (ինչեր) ասես (ուզես) – что только ни (хочешь)
ինչքան ասես (ուզես) – сколько угодно (хочешь)
երբ ասես (ուզես) – когда угодно (хочешь)
որտեղ ասես (ուզես) – где только ни (угодно, хочешь)
ուր ասես (ուզես) – куда только ни (хочешь)



- Ու՞մ է հրավիրում եղբայրդ:



- Ում *ասես (ուզես)*:
 - Ում *ասես*՝ հրավիրում է:
 - Ում *ասես*՝ չի հրավիրում:*

*Можно употребить как положительную, так и отрицательную формы глагола, здесь они синонимичны. Переведите ваши ответы на русский язык.

Ո՞վ կար թատրոնում:

Ի՞նչ կար շուկայում:

Դուք շա՞տ թերթ եք ստանում: (Ինչքա՞ն թերթ եք ստանում):

Ե՞րբ կարող ենք հանդիպել:

Քույրդ ու՞մ է տալիս իր գրքերը:

Ու՞ր է գնում նա մե՞նակ:

Որտե՞ղ կարելի է գտնել այդ թերթը:



տեսնես – интересно



- Ու՞մ է հրավիրում եղբայրդ:



- *Տեսնես* ու՞մ է հրավիրում եղբայրդ:

(См. предложения пункта Գ)



Պըլը Պուղին և իր հարևանը

Պըլը Պուղու հարևանը շարունակ փող էր փոխ առնում:

- Պուղի՛, մի հիսուն դրամ փող տա՛ն:

- Ինչու՞ չէ, հարևան, - պատասխանում էր Պըլը Պուղին, փողը գտնվում է բարձի տակ, գնա վերցրու՛:



Հարևանն էլ այդպես էր անում:

– Պուղի՛, փողը բերել եմ², – ասում էր մի քանի օրից հետո հարևանը:

– Տար դիր³ այնտեղ, որտեղից վերցրել ես⁴:

Հարևանը փողը տանում դնում էր բարձի տակ:

Եվ այսպես շարունակ:

– Պուղի՛, մի հիսուն դրամ փող տա՛ն:

– Ինչու՞ չէ, հարևան: Փողը բարձի տակն է, գնա վերցրու:

Մի օր էլ Պըլը Պուղու հարևանը մտածում է. "Պըլը Պուղին չի նայում բարձի տակ, չի ստուգում՝ փողը բերել եմ, թե չէ: Արի այս անգամ էլ փողը չդնեմ": Ու փողը գրպանում ետ է դառնում բարձի մոտից:

Անցնում է երկար ժամանակ: Հարևանը Պըլը Պուղուց այլևս փող չի ուզում: Բայց մի օր նա փողի խիստ կարիք է զգում: Ի՞նչ անի: Ստիպված է դարձյալ Պըլը Պուղուն դիմել:

– Պուղի՛, մի հիսուն դրամ փող տա՛ն:

– Ինչու՞ չէ, հարևան: Փողն իր տեղում է, գնա վերցրու:

Հարևանը գնում է բարձի մոտ և դատարկ գտնելով՝ ետ է գալիս:

– Պուղի՛, բարձի տակ փող չկա, – ասում է հարևանը:

– Դրե՞լ ես⁵, որ լինի, – պատասխանում է Պըլը Պուղին:

¹գնա վերցրու – пойди возьми

²բերել եմ – (я) принес

³տար դիր – отнеси положи

⁴վերցրել ես – (ты) взял

⁵դրե՞լ ես – (ты) положил?

Слова Բառեր

շարունակ – все время, непрерывно, постоянно

փող – деньги

փոխ առնել – взять взаймы

գտնվել – находиться

ստուգել – проверить

գրպան – карман

ետ դառնալ – возвращаться

անցնել – проходить

երկար – долгий, длинный

խիստ – зд. очень сильно

կարիք զգալ – нуждаться

ստիպված լինել – быть

вынужденным

դիմել – обращаться


դատարկ – пустой

գտնել – находить


ետ գալ – возвращаться

Комментарии, упражнения и задания

Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

8.  Сочетание "существительное + послелог" склоняется, выражая различные пространственные отношения. В сущности склоняется только послелог, а существительное остается в родительном падеже.

Им.-Вин. п.	բարձի տակ (վրա, մեջ, մոտ)
Род. п.	բարձի տակի (վրայի ¹ , միջի ² , մոտի)
Отл. п.	բարձի տակից (վրայից ¹ , միջից ² , մոտից)
Тв. п.	բարձի տակով (վրայով ¹ , միջով ² , մոտով)

 **Բարձի տակի** փողը – деньги, которые лежат под подушкой
Բարձի վրայի փողը – деньги, которые лежат на подушке
Բարձի միջի փողը – деньги, которые лежат в подушке
Բարձի մոտի փողը – деньги, которые лежат около подушки
Փողը վերցնել բարձի տակից – взять деньги из-под подушки
Փողը վերցնել բարձի վրայից – взять деньги с подушки
Փողը վերցնել բարձի միջից – взять деньги из подушки
Փողը վերցնել բարձի մոտից – взять деньги около подушки

¹Вспомните: между двумя гласными, из которых первый ш и п слышится и пишется полугласный j.

²Обратите внимание на чередование *ե/ի* при склонении послелога *մեջ*.

9. 

Ա) – Արմեն ջան, բերթը տա՛ս:

– Ո՞ր բերթը:

– **Սեղանի վրայի:**

Բ) – Հասմիկ ջան, մի գրի՛չ տա՛ս:

– Ո՞րտեղից:

– **Սեղանի վրայից:**

Գ) – Գնա՛ս կարագ ու կաթ բերե՛ս:

– Ո՞րտեղից:

– Մեր **տան երևի** խանութից:

Դ) – Մայրի՛կ, ինչպե՞ս անցնեն գամ քեզ մոտ:


– Այս **քարի վրայով**:



սեղանի վրա → գրքի տակ,
լամպի մոտ, լուսամտի վրա,
պահարանի մեջ, բարձի
ետև:

տան ետև → տան առջև, տան
դիմաց, տան մոտ:

քարի վրա → քարի մոտ, ծառի
տակ, ծաղիկների մեջ:





10.



Հարևանը շարունակ փող է փոխ **տալիս**:

տալ ≠ **առնել**
антонимы (հակամիջներ)

Հարևանը շարունակ փող է փոխ **առնում**:

Հարևանը շարունակ փող է փոխ **տալիս**:

Կարճ ժամանակ է անցնում:

Մի քանի օրից հետո նա փողը **տանում** է Պըլը Պուղուն:

Հարևանը փողը **վերցնում** է բարձի վրայից:

11. Ա)

միշտ, հաճախ, երբեք, երբեմն, այլևս, շարունակ

Բ) Заполните пропуски подходящим наречием:

Լրացրեք բացերը համապատասխան մակբայով.

Հայրս ... ասում է. "ժամանակը ոսկի է:"

Նա իր ուսուցչին ... չի հիշում:

Ամռան շոգին մենք ... անտառ ենք գնում:

Այսօր հեռուստացույցով ... տխուր երաժշտություն են տալիս:

Ամուսինդ ... ժամանակին տուն չի վերադառնում:

Ամռանը ... անձրև է գալիս:

Նա մեզ ... նամակ չի գրում:

Ես ... չեմ մտածում նրանց մասին:

Ընկերուհիս ու ես ... գնում ենք թատրոն՝ Ջիզարխանյանի խաղը նայելու:

Ես ... այցելում եմ նրան ու նա ... նույն հարցերն է տալիս ինձ:

Քույրդ ... գեղեցիկ է ու հմայիչ:

12. Соедините попарно фразы из первого и второго списков так, чтобы получились осмысленные высказывания:

Միավորեք առաջին և երկրորդ ցուցակի անավարտ նախադասություններն ըստ իմաստի.

Պըլը Պուղու հարևանը հաճախ փողի կարիք էր զգում ու շարունակ փող էր փոխ առնում Պըլը Պուղուց:

- ✓ Ա. Պըլը Պուղու հարևանը հաճախ փողի կարիք էր զգում
- Բ. Վստահելով իր հարևանին, Պուղին ասում էր.
- Գ. Ամեն անգամ Պուղին ասում էր.
- Դ. Հավատալով իր հարևանին Պուղին
- Ե. Ստածելով, որ Պուղին իրեն վստահում է,
- Զ. Այս անգամ արդեն նա գնում է բարձի մոտ ու
- Է. Մի օր այս մարդը ոչ մի դրամ չուներ
- Ը. Այս անգամ արդեն նա գնում է բարձի մոտ ու

- 1. հարևանը մի անգամ փողը չի դնում տեղը:
- 2. փողը գրպանում ետ է դառնում բարձի մոտից:
- 3. ու ստիպված էր դարձյալ դիմել Պըլը Պուղուն:
- 4. դատարկ գտնելով ետ է դառնում բարձի մոտից:
- 5. չէր ստուգում բարձի տակ:
- 6. "Տար դիր այնտեղ, որտեղից վերցրել ես:"
- ✓ 7. ու շարունակ փող էր փոխ առնում Պըլը Պուղուց:
- 8. "Փողը բարձի տակ է, գնա վերցրու:"



13.

- Перескажите текст 1. от имени Пылы Пуги,
2. от имени соседа.
Պատմեք տեքստը 1. Պըլը Պուղու անունից,
2. հարևանի անունից:



Օր ու մեջ ապրես

Երկու օր Պըլը Պուղին չի երևում, մեկիք Շահնազարը անհանգստանում է:

– Գնացեք¹ Պըլը Պուղուն ասեք¹, թող ես ըոպեիմ² գա, – հրամայում է մեկիք Շահնազարը:

Պըլը Պուղին գալիս է: Մեկիք Շահնազարը նայում է, տեսնում, որ Պըլը Պուղու հագուստը նոր կարկատաններ ունի մի քանի տեղ:

– Տեղ-տեղ շնորհավոր լինի հագուստդ, Պուղի՛, – ասում է մեկիք Շահնազարը:

– Օր ու մեջ ապրես, Մեկի՛ք, – պատասխանում է Պուղին:

¹գնացեք, ասեք – пойдите скажите

²ես ըոպեիմ – сию же минуту

Տրամաբանական բառեր

անհանգստանալ – беспокоиться
հրամայել – приказывать
հագուստ – одежда (զ=ք)
նոր – новый

կարկատան – заплатка, латка
փեղ-փեղ – местами
օր ու մեջ – через день (раз в два дня) (ջ=չ)



†14. Прослушайте оба текста и выпишите слова, в которых оглушаются согласные; укажите, какие согласные оглушаются и произносятся с аспирацией.

Լսեք երկու տեքստերը և դուրս գրեք այն բառերը, որոնցում կան խուլ արտասանվող բաղաձայններ, նշեք, թե ո՞ր բաղաձայններն են խլանում և շնչեղանում:

†15. Перепишите следующие предложения без переносов:

Արտագրեք հետևյալ նախադասություններն առանց տողադարձի.

Փո-ղը գըտ-նը-վում է բար-ձի տակ: Մի օր հա-րե-վա-նը մը-տա-ծում է. "Պը-լը Պու-ղին չի ըս-տու-գում բար-ձի տակ" ու փո-ղը չի դը-նում իր տե-ղը, փո-ղը գըր-պա-նում ետ է դառ-նում:

Մե-լիք Շահ-նա-զա-րը ան-հան-գըս-տա-նում է Պը-լը Պու-ղու հա-մար և հը-րա-մա-յում է՝ գը-նա-ցեք ա-սեք թող Պը-լը Պու-ղին գա: Մե-լիք Շահ-նա-զա-րը Պը-լը Պու-ղուն տես-նե-լով ա-սում է՝ տեղ-տեղ շը-նոր-հա-վոր լի-նի հա-գուս-տող, Պու-ղի՝



16. Перекажите текст, опираясь на ключевые глаголы:
Պատմեք տեքստը հիմնվելով բանալի բայերի վրա.



երևալ, անհանգստանալ, հրամայել, գալ, նայել տեսնել, նոր կարկատաններ ունենալ, շնորհավորել (поздравить), պատասխանել:



17. Сгруппируйте следующие предложения и перепишите их в таком порядке, чтобы получились две истории:



խմբավորեք և դասավորեք բերված նախադասություններն այնպես, որ ստացվեն մեզ ծանոթ երկու պատմությունները.

✓ ՊՐԸՐ ՊՈՒԼՈՒ հարևանը շարունակ փող էր փոխ առնում

ՊՐԸՐ ՊՈՒԼՈՒԳ:

✓✓ ՊՐԸՐԸ ՊՈՒԼՈՒԿԻՆ մի երկու օր չի երևում:

ՊՐԸՐ ՊՈՒԼՈՒԿԻՆ վստահում էր իր հարևանին:

"Պու տեղը գիտես, տար դիր փողը բարձի տակ:"

"Օր ու մեջ ապրես:"

ՊՐԸՐ ՊՈՒԼՈՒ հագուստը նոր կարկատաններ ունի:

Նորից գալիս է իր հարևանի մոտ ու մի հիսուն դրամ փող է փոխ ուզում:

"Տեղ-տեղ շնորհավոր լինի հագուստդ:"

Այս անգամ էլ նա գնում է բարձի տակից փող վերցնելու, բայց այնտեղ դատարկ է գտնում:

"Փողը գտնվում է բարձի տակ, գնա վերցրու:"

Վստահելով հարևանին, ՊՐԸՐ ՊՈՒԼՈՒԿԻՆ չէր նայում բարձի տակ, չէր ստուգում:

Բայց մի օր դարձյալ փողի խիստ կարիք է զգում:

Նա իր ծառային ուղարկում է ՊՐԸՐ ՊՈՒԼՈՒ մոտ և հրամայում է, որ ՊՈՒԼՈՒԿԻՆ գա:

Մի անգամ հարևանը փողը չի դնում բարձի տակ:

✓ ՊՐԸՐ ՊՈՒԼՈՒ հարևանը շարունակ փող էր փոխ առնում ՊՐԸՐ ՊՈՒԼՈՒԳ:

Եթե փողը չդնես իր տեղը, փող չես գտնի:

Նա մահճակալի մոտից վերադառնում է փողը գրպանում:

Իսկ երբ մելիք Շահնազարը մի քանի օր ՊՐԸՐ ՊՈՒԼՈՒԿԻՆ չի տեսնում, անհանգստանում է:

ՊՐԸՐ ՊՈՒԼՈՒ հարևանը գնում էր ու բարձի տակից վերցնում էր փողը:

Այդ օրվանից հետո, երկար ժամանակ ՊՐԸՐ ՊՈՒԼՈՒ հարևանը նրանից այլևս փող չի ուզում:

✓✓ ՊՐԸՐ ՊՈՒԼՈՒԿԻՆ մի երկու օր չի երևում:

Հարևանը միշտ ժամանակին փողը ետ էր բերում:

18. Вместо точек поставьте один из глаголов правого столбца:

Կետերի փոխարեն օգտագործեք աջ սյունակի բայերից մեկը.

Ես ..✓.. եմ այս երեկո գնալ մեր ուսուցչուհու մոտ:	այցելում, ✓ առաջարկում
Ու՞ր ես: Մենք արդեն երկար ժամանակ է քեզ ենք ...:	ստուգում, սպասում, ստանում
Այսօր շոգ չէ, ինչու՞ եք պատուհանը ...:	բացում, բացատրում
Բժիշկն ասում է, որ հարկավոր է երկար ...:	ծածկել, ծամել, ծիծաղել
Մեր հայրը ... է իր որդիներով:	հավատում, հպարտանում
Կիրակի օրը երեխաները ամբողջ օրը բակում ... են:	խաղում, աշխատում, խաշում
Ուսուցիչը ներս է մտնում և աշակերտները ... են:	լսում, լրացնում, լռում
Քույրս ու քրոջս ընկերուհիները հաճախ են ... ինձ:	անցնում, այցելում
Եղբայրս ու մեր հարևանը ամեն առավոտ ... են մեր բակում ու միասին մարզանք են անում:	հանդիպում, հրամայում

19.  և 

այցելել – այցելություն
պատմել – պատմություն

Угадайте значение выделенных слов:


Կռահե՛ք ընդգծված բառերի նշանակությունը.

Ես մի լավ **առաջարկություն** ունեմ՝ եկեք սար գնանք: Դու գիտե՞ս այդ հեքիաթի **շարունակությունը**: Բոլորս դեպի **ընկերություններ**: Ես ուզում եմ անպայման լսել Լևոն Ներսիսյանի՝ մեր հայտնի դերասան Հրաչյա Ներսիսյանի որդու **դասախոսությունը**: Այսօր դիրեկտորը չի ընդունում, այսօր **ընդունելություն** չկա: **Զգուշությունը** լավ բան է: Ի՞նչ **նորություն** կա: **Ծանոթությունը ընկերություն** չէ:

20. Вместо точек поставьте слово բնակարան.

Կետերի փոխարեն օգտագործեք "բնակարան" բառը:

1. Ո՞ր ... եք փոխանակում: 2. Ուզում ենք պապոնց ... փոխանակել: 3. Ամբողջ ... վաթսուներեք քառակուսի մետր է: 4. Այս շենքի բոլոր ... երեքսենյականոց են: 5. Ձեր շենքում քանի՞ չորսսենյականոց ... կա: 6. Ամեն ... լոգասենյակ ու զուգարան ունի: 7. Մեր ... պատշգամբ չունի:




21. Ա)

- | | | |
|--------------------------------|-----------------|----------------|
| 1. փողկապ | 8. անձրևաթափ | 16. փրկօղակ |
| 2. ձեռնոցներ | 9. անձրևանոց | 17. լողազգեստ |
| 3. գլխաշոր | 10. հովանոց | 18. ճամպրուկ |
| 4. շրջագգեստ | 11. հովհար | 19. պայուսակ |
| 5. կիսաշրջագգեստ | 12. արևի ակնոց | 20. դրամապանակ |
| 6. շալվար (տաքատ, անդրավարտիք) | 13. սրբիչ (բ=փ) | 21. թաշկինակ |
| 7. թիկնոց | 14. գոտի | 22. գուլպա |
| | 15. փրկագոտի | 23. կիսագուլպա |

Բ) ? Ответьте на вопросы: Պատասխանեցեք հարցերին.
 Что, когда и где нужно? Ի՞նչը ե՞րբ և որտե՞ղ է պետք:

Անձրևաթափ, անձրևանոց, արևի ակնոց, բաճկոն, բաճկոնակ, բոկոտիկներ, գիշերանոց, գլխարկ, գլխաշոր, գոտի, գուլպա, դրամապանակ, թաշկինակ, թիկնոց, լողազգեստ, կիսագուլպա, կիսամուշտակ, կիսաշրջագգեստ, կիսավարտիք, կոշիկներ, կրծկալ, հողաթափեր կամ տնային կոշիկներ, հովանոց, հովհար, ձեռնոցներ, ճամպրուկ, ճտքավոր (երկարաճիտ) կոշիկներ, մուշտակ, շալվար (անդրավարտիք, տաքատ), շապիկ, շրջագգեստ, պայուսակ, սրբիչ, վարտիք, վերարկու, վերնաշապիկ, փողկապ, փրկագոտի, փրկօղակ:

տանը	դրսում	ամռանը	գարնանն ու աշնանը	ձմռանը	միշտ



- | | | |
|----------------|----------------------|-----------------|
| 24. վարտիք | 29. ճոքավոր | 33. վերնաշապիկ |
| 25. կիսավարտիք | (երկարաճիտ) կոշիկներ | 34. գիշերանոց |
| 26. կրծկալ | 30. հողաթափեր կամ | 35. գլխարկ |
| 27. բաճկոն, | տնային կոշիկներ | 36. մուշտակ |
| բաճկոնակ | 31. բոկոտիկներ | 37. կիսամուշտակ |
| 28. կոշիկներ | 32. շապիկ | 38. վերարկու |

Ամռանը դուք մեկնում եք Ղրիմ. ի՞նչ եք վերցնում:

Մի անձրևանոց և մի հովանոց, բաճկոնակ, թիկնոց, մի լայնեզր ծղոտե գլխարկ ու մի մորթե գլխարկ, գլխաշոր, մի փողկապ ու մի գոտի, փրկագոտի կամ փրկօղակ, արևի ակնոց, հովհար, մի քանի գուլպա, կիսագուլպա, կիսավարտիք և կրծկալ, գիշերանոց, սրբիչ, դրամապանակ, ճամպրուկ, պայուսակ, մի քանի թաշկինակ, լողազգեստ, մի քանի շրջազգեստ ու կիսաշրջազգեստ, ձեռնոցներ, բոկոտիկներ, տոնական կոշիկներ, հողաթափեր, ճոքավոր կոշիկներ, շալվար, շապիկ ու վերնաշապիկ, տաք վարտիք ու մի անդրավարտիք, վերարկու կամ կիսամուշտակ:

Զմռանը դուք մեկնում եք Սանկտ-Պետերբուրգ. ի՞նչ եք վերցնում:

Մի անձրևաթափ ու մի թիկնոց, մի անձրևանոց կամ մի հովանոց, մի բաճկոն, մի ծղոտե ու մի մորթե գլխարկ, գլխաշոր, մի քանի գոտի, փողկապ և թաշկինակ, գուլպաներ և կիսագուլպաներ, դրամապանակ, ճամպրուկ, պայուսակ, սրբիչ, կիսավարտիք, վարտիք և կրծկալ, գիշերանոց, ամենօրյա և տոնական կոշիկներ, հողաթափեր, ճոքավոր կոշիկներ, ձեռնոցներ, մուշտակ, կիսամուշտակ կամ տաք վերարկու, մի քանի շալվար, շապիկներ և վերնաշապիկներ, մի քանի շրջազգեստ և կիսաշրջազգեստ, լողազգեստ, արևի ակնոց, հովհար, բոկոտիկներ, փրկագոտի կամ փրկօղակ:

22. Ա) Запомните:

շոր – 1. одежда, 2. тряпка
 հագուստ – одежда (զ=ք)
 հագուստեղենի հանուրթ –
 магазин одежды (զ=ք)
 գունավոր – цветной
 միագույն – однотонный
 ծաղկավոր – в цветочек
 զոլավոր – в полоску
 վանդակավոր – в клеточку
 պուտրավոր, պուտրերով – в
 горошек
 ամենօրյա – каждодневный, на
 каждый день

տոնական – праздничный,
 нарядный
 տափակ կրունկով – на плоском
 каблуке
 բարձրակրունկ – на высоком
 каблуке (ծ=g)
 ծղոտե – соломенный
 լայնեզր – широкополый
 (լայնեզր գլխարկ)
 մորթե – меховой
 մորթի – шкура
 փափախ – папача
 սազել – подходить

բ) ? Ответьте на вопросы: Պատասխանեցեք հարցերին.

Երբ անձրև է գալիս, Դուք ի՞նչ եք օգտագործում՝ անձրևաթափ, թե՞ անցրևանոց: Իսկ Դուք հովանոց ունե՞ք, թե՞ արևոտ օրերին Ձեր անձրևանոցն եք օգտագործում կամ լայնեզր ծղոտե գլխարկը: Ձեր անձրևանոցն ի՞նչ գույնի է՝ գունավոր, թե՞ միագույն, թե՞ ծաղկավոր: Դուք թիկնոց ունե՞ք, ե՞րբ եք հագնում այն: Շատերը թիկնոց չեն սիրում, բաժկոնակ են հագնում, իսկ Դու՞ք: Ծղոտե լայնեզր գլխարկի հետ արևի ակնոց է՞լ եք դնում, թե՞ ոչ: Թե՞ միայն արևի ակնոց եք օգտագործում, առանց լայնեզր գլխարկի: Ձեր լողազգեստն ի՞նչ գույնի է՝ ծաղկավոր, զոլավոր, վանդակավոր, թե՞ միագույն: Իսկ Ձեր սրբի՞չը: Դուք փրկագոտի կամ փրկողակ օգտագործու՞մ եք:

Ո՞ր ամիսներին են բուկոտիկ հագնում, ո՞ր ամիսներին՝ սովորական կոշիկ, ո՞ր ամիսներին՝ երկարաճիտ կոշիկ: Թատրոն գնալիս Դուք տոնակա՞ն կոշիկ եք հագնում, թե՞ ամենօրյա կոշիկ: Ձեր տոնական կոշիկները բարձրակրունկ են, թե՞ տափակ կրունկով: Իսկ տղամարդիկ բարձրակրունկ կոշիկ հագնու՞մ են, թե՞ ոչ:

Զմռանը Ձեզ մոտ շա՞տ ցուրտ է, թե՞ բավականին տաք է. կանայք Ձեզ մոտ մորթե գլխա՞րկ ե ն հագնում, թե՞ գլխաշոր են օգտագործում: Գիտե՞ք, որ հայերը չեն սիրում գլխարկ դնել, մույնիսկ ձմռանը: Իսկ տղամարդիկ ձմռանը անդրավարտիքի տակից վարտիք հագնու՞մ են, թե՞ միայն կիսավարտիք ու գուլպա են հագնում:


Ձեր վերարկուն ի՞նչ գույնի է, միագույն է, թե՞ զոլավոր, թե՞ վանդակավոր: Շալվարի հետ մուշտա՞կ են հագնում, թե՞ կիսամուշտակ: Իսկ կիսաշրջազգեստի հե՞տ՝ մուշտակ կամ վերարկու՞, թե՞ կիսամուշտակ:

Իմ պայուսակում միշտ մի թաշկինակ, դրամապանակ, գրիչ կամ մատիտ, բանալի, ձմռանը՝ ձեռնոց, ամռանը՝ արևի ակնոց և հովհար կա: Իսկ ի՞նչ կա Ձեր պայուսակում:



Ի՞նչ եք կարծում, վանդակավոր կիսաշրջագետի հետ կարելի՞ է պուտավոր վերնաշապիկ հագնել, իսկ գուլավոր՝ վերնաշապիկ: Ջուլավոր շալվարին ու բաճկոնին պուտավոր կամ ծաղկավոր փողկապ սազու՞մ է: Իսկ վանդակավոր շալվարին և բաճկոնին ի՞նչ փողկապ է սազում: Ամառվա թեթև ծաղկավոր շրջագետին սև գուլպա սազու՞մ է: Սև գուլպաներին ի՞նչ շոր է սազում:

Հիմա Ձեր հագին ի՞նչ կա: (Что Вы носите?)

Դգ)  և  և  Прослушайте и заполните пропуски:

Լսեցե՛ք և լրացրե՛ք բացերը.

– Ի՞նչ վերցնենք հայրիկի շորերից: Ի՞նչ շոր վերցնեն իմ ու քո ...: Հայրիկին ..., ..., ..., քեզ շորեր, մի բաճկոնակ, մի քանի ... ու կիսաշրջագետս:

– Մայրիկ, դու ... վերցրու՛ քո երեկոյան ...: Վա՛յ, ես շոր չունեմ, բոլոր շորերս: Ի՞նչ անեմ, ի՞նչ վերցնեմ:

– Ստիպված եմք նոր շորեր գնել: Արի ... պատրաստի հագուստեղենի ..., ... ի՞նչ կա:

Դդ)  և  և  Прослушайте и заполните пропуски:

Լսեցե՛ք և լրացրե՛ք բացերը.

– Ի՞նչ արժեն այդ մոխրագույն ... :

– Երեք հարյուր ...:

– Կարելի՞ է փորձել¹:

– Ո՞ր չափսն եք հագնում:

– ...:

– Երեսունութ չափսի միայն ... ունենք:

– Չէ, շնորհակալություն, կապույտը իմ ... չի սազում²:

¹փորձել – примерить (ծ = ց)

Եե)  և  Прослушайте и скажите:

Լսեցե՛ք և ասացե՛ք.

Ի՞նչ շալվար ունի երեխան: Ո՞ր բաճկոնակն են գնում երեխայի համար: Երեխան փորձու՞մ է այդ բաճկոնակը: Գլխաշոր գնու՞մ են, թե՞ ոչ: Ինչու՞: Ինչպիսի՞ լողազգեստ են գնում: Ի՞նչ կոշիկներ են գնում երեխայի համար: Ի՞նչ կոշիկներ է ուզում փորձել նա: Ո՞ր չափսի կոշիկներ է հագնում երեխան:



Урок 11. Տասնմեկերորդ դաս

Грамматика

Желательное наклонение: употребление желательного наклонения в придаточных предложениях.

Склонение существительных (абстрактные существительные с суффиксом -ութիւն) .

Словообразование: чередование гласных при словообразовании.

Подчинительные союзы որովհետև, որպեսզի.

Послелого հետո, առաջ.

Вопросительное местоимение ի՞նչ (какой?)

Детские стихи

Շուկը (Հովհ. Թումանյան)

Песня

Կիլիկիա

Текст

Կաթիս

Желательное наклонение (продолжение)

Ընթացան եղանակ (շարունակութիւն)

Употребление желательного наклонения в придаточных предложениях



Первое, глагол в придаточном дополнительном предложении ставится в желательном наклонении:

- после оборотов, выражающих пожелание:

Sw' Usut'ad, որ այդպես լինի: (дай Бог!...)

Ե՞րբ կլինի, որ այս օրն ինձ համար էլ գա: (Когда будет так, чтобы...?)

Արդյոք կլինի՞ մի օր, որ ինձ հավաքաս: (Настанет ли день, когда...?)

Ի՞նչ կլինի, այն նկարը ինձ ցույց տաս: (Ну что тебе сто'ит?, пожалуйста!...)

• после оборотов, выражающих необходимость, сожаление, колебание и т.д.

պէտք է – надо

հարկ է, հարկավոր է – нужно

անհրաժեշտ է – необходимо

ժամանակն է – пора

վայել է – пристойно

ամոթ է – стыдно

արժանի է – достойно

արժե – сто'ит

չարժե – не сто'ит

ափսոս է – жаль

մեղք է – жалко (ղ=խ)

չլինի՞ թե – как бы не

վա՛յ թե, մի՛ գուցե – может быть



Многие из этих оборотов возможны также с неопределенной формой глагола. Однако заметим, что в этом случае теряется конкретизация лица, присущая желательному наклонению: *Պետք է ժամանակին տուն գալ*: *Անհրաժեշտ է իրար լավ հասկանալ*: *Ամոթ է այդ բանն անել* (к кому относятся эти утверждения?). *Վեր կենալու ժամանակն է* (вообще). Ср.

Պետք է, որ ժամանակին տուն գաս:

Ժամանակն է, որ վեր կենաք:

Անհրաժեշտ է, որ դուք իրար լավ հասկանաք:

Մեզ համար ամոթ է, որ դու այդ բանն անես:

Թե ճիշտը ասեմ նրան, վա՛յ թե նեղանա:

(Մի) գուցե գնաս փեսնես, ինչ են անում երեխաները:

• после слов и оборотов, выражающих неуверенность, вероятность (или невероятность), ожидаемость (или неожиданность) совершения данного действия:

<i>հազիվ թե, դժվար թե</i> – вряд ли	<i>չեմ կարծում</i> – не думаю
<i>թերևս, գուցե, կարող է պատահել</i> – может быть	<i>ասես (թե), կարծես (թե)</i> – как будто
<i>անկարելի է, անհնար է, չի կարող պատահել</i> – не может быть	<i>անբնական է</i> – неестественно
<i>հավանական է</i> – вероятно	<i>բնական է</i> – естественно
<i>անհավանական է</i> – невероятно	<i>սպասելի է</i> – ожидается

а также после таких глаголов, как

սպասել – ждать

հույս ունենալ – иметь надежду

հուսալ – надеяться

Վռամշապուհը սպսում է, որ Մեսրոպ վարդապետը մնացած գրերը ցույց տա:

Հույս ունեմ, որ այս տարի գնանք Հայաստան:

Հավանական է, որ ամսի հինգին Մոկացյանը քննությունը ընդունի:

Դժվար թե այս մսից լավ խորոված ստացվի:

Չեմ կարծում, թե նա այս երեկո գանգի կամ գա:

Անհավանական է, որ նա լավ չիմարեն իմանա:

• после глаголов, выражающих волю, надежду, требование и т.д., таких, как:

<i>ցանկանալ</i> – желать	<i>կարգադրել</i> – распоряжаться (զ=ք)
<i>համաձայնել, համաձայն լինել</i> – согласиться	<i>ուխտել</i> – дать обет
<i>դեմ լինել</i> – быть против	<i>կրակել</i> – завещать
<i>խնդրել</i> – просить	<i>համոզել</i> – уговорить
<i>աղաչել</i> – умолять	<i>ստիպել</i> – заставить
<i>մաղթել</i> – желать (добра)	<i>հանձնարարել</i> – поручить
<i>թույլ տալ</i> – разрешить	<i>հայտնել</i> – известить
<i>արգելել</i> – запретить (զ=ք)	<i>հաղորդել</i> – сообщить (դ=ք)
<i>պահանջել</i> – требовать	<i>իմաց տալ</i> – дать знать
<i>պնդել</i> – настаивать	<i>հիշեցնել</i> – напомнить
<i>հրամայել</i> – приказать	<i>հրատարակել</i> – издать
<i>որոշել</i> – решить	<i>հայտարարել</i> – объявить
	<i>առաջարկել</i> – предложить

Практически желательное наклонение употребляется после всех глаголов "говорения" в главном предложении, когда в придаточном предложении выражено повеление говорящего или субъекта главного предложения. Иными словами, повелительное наклонение в прямой речи передается желательным наклонением в косвенной.

Например:

Մելիք Շահնազարն ասում է. "Պըլը Պուղի, արի:" Մելիք Շահնազարն ասում է, որ Պըլը Պուղին գա:

Մայրիկը գրում է. "Լավ սովորիր": Մայրիկը գրում է, որ լավ սովորեմ:

а также:

<i>նպաստել</i> – способствовать	<i>խղճալ</i> – жалеть кого-либо
<i>օգնել</i> – помочь	<i>խանգարել</i> – мешать
<i>հսկել</i> – стеречь, присматривать	<i>զգուշանալ</i> – остерегаться
<i>ամաչել</i> – стыдиться	<i>խուսափել</i> – избегать
<i>քաշվել</i> – стесняться	<i>խնայել</i> – беречь, щадить
<i>ափսոսալ</i> – жалеть, что	<i>վախենալ</i> – бояться

NB: Обратите внимание: *վախենում եմ, որ նա գա* – боюсь, что он придет (не хочу, чтобы приходил); *վախենում եմ, որ նա չգա* – боюсь, что он не придет (хочу, чтобы приходил).

Второе, желательное наклонение употребляется в различных обстоятельственных придаточных предложениях.

- в придаточных цели после союзов որ, որպեսզի, тогда они воспринимаются как желанное следствие (для говорящего или для субъекта главного предложения):

Ես գնում եմ գրադարան, որ (որպեսզի) այն գիրքը վերցնեմ:

Հեռուստացույցը դնենք տատիկի մահճակալի դիմաց, որ (որպեսզի) նա լավ փեսնի:

Տիգրանը գնում է իր եղբոր՝ Կարենի սենյակը, որ (որպեսզի) վերջնականապես կռվի նրա հետ:

- в придаточных уступительных, особенно после слова կուզի, после таких оборотов, как ինչ էլ..., ինչքան էլ..., որքան էլ..., ինչպես էլ..., ինչպիսին էլ լինի, երբ էլ..., ով էլ...

Ինչ կուզի՝ ասի, ես նրան չեմ հավատում:

Ինչ էլ ասի, ես նրան չեմ հավատում:

Ինչքան էլ խնդրեմ, միևնույն է, նրանք չեն ուզում ինձ սպասել:

Ինչպես էլ դասը պատմեն աշակերտները, ուսուցիչը միշտ գոհ է:

Երբ էլ Կարենենց տուն գնաս, նրանք միշտ հյուրասեր են ու ծպտադեն:

- в придаточных времени, когда говорится о моменте, который еще не настал, после союзов երբ (որ), հենց (որ), մինչև (որ):

Հենց որ եղբայրս տուն դառնա, ես կարող եմ քեզ մոտ գալ:

Ամեն օր նա մնում է իր հիվանդ տատիկի մոտ *մինչև* ծնողները աշխատանքից վերադառնան:

- в придаточных условия, после подчинительных союзов քե, եթե ("если"): *Թե (եթե) նա գա* մեզ մոտ..., *թե (եթե) ինձ հարցնեն...*

Третье, глагол в относительном придаточном предложении, после относительного местоимения *որ*, ставится в желательном наклонении, когда говорящий хочет выразить, что характеристика антецедента (определяемого слова) воспринимается им как искомая, желанная, нереальная. Для выражения реальной характеристики, как известно, прибегают к изъявительному наклонению. Ср. употребление этих наклонений (изъявит. и жел.):

Այս աշխատանքի համար պետք են երիտասարդներ, որ լավ անգլերեն ու հայերեն գիտեն: "Для этой работы нужны молодые люди, которые хорошо владеют английским и армянским языками" (т.е. нужны конкретные, известные молодые люди).

Այս աշխատանքի համար պետք են երիտասարդներ, որ լավ անգլերեն ու հայերեն իմանան: "Для этой работы нужны молодые люди, которые хорошо владели бы английским и армянским языками" (т.е. нужны такие молодые люди, которые отвечали бы определенным требованиям, и предстоит их найти, отобрать).

Отрицательной или вопросительной формой главного предложения часто усиливается оттенок неуверенности в том, что антецедент приводимой характеристики существует в реальности.

Մի ընկեր չունեն, որ ինձ հասկանա: Կա՞ այստեղ մեկը, որ ինձ հավաքա:

Задания Առաջադրանքներ

Многократно прослушайте и прочитайте следующее стихотворение; обратите внимание на употребление желательного наклонения; добейтесь хорошего произношения звука *h*.

Բազմիցս լսեցե՞ք և կարդացե՞ք ոտանավորը, ուշադրություն դարձրե՞ք ըղձական եղանակի գործածությանը, հետևեցե՞ք "h" հնչյունի լավ արտասանությանը:



Շուկը (Հովհ. Թումանյան)

Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,
Ահա այսպես
Հաչում եմ ես.
Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,
Ու տունն այսպես
Պահում եմ ես:
Թե գա մեզ մոտ
Մի հին ծանոթ,
Ստոն եմ վազում,
Պոչըս շարժում:



Բայց թե մի գող,
Չար կամեցող
Ուզի թաքուն
Ստնի մեր տուն, –
Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,
Ահա այսպես
Հաչում եմ ես.
Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,
Ու տունն այսպես
Պահում եմ ես:

Слова Բառեր

հաչել – лаять
պահել – беречь, охранять
հին – старый
ծանոթ – знакомый
պոչ – хвост

շարժել – двигать; зд. махать
գող – вор
չար կամեցող – недоброжелатель,
желающий зло
թաքուն – тайком

Разучите ностальгическую песню "Կիլիկիա"; обратите внимание на употребление желательного наклонения в придаточных времени.

Սովորեցե՛ք "Կիլիկիա" երգը, ուշադրություն դարձրե՛ք ըղձական եղանակի գործածությանը ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների մեջ:



ԿԻԼԻԿԻԱ

Moderato Չափավոր

Երբ որ բացվին դռներն հուսո,
Եվ մեր երկրեն փախ տա ձմեռ,
Չքնաղ երկիր մեր Արմենիո,
Երբ փայլին յուր քաղցրիկ օրեր,
Երբ որ ծիծառն իր բույն դառնա,
Երբ որ ծառերն հազնին տերև,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև:

Когда откроются врата надежды,
И из нашей страны убежит зима,
Прекрасная страна моя Армян(ская),
Когда засветятся ее сладостные деньки,
Когда ласточка вернется в свое гнездо,
Когда деревья оденутся в листья,
Желал бы я увидеть свою Киликию,
Страну, которая дала мне жизнь (досл.
солнце)



Обратите внимание на западноармянские особенности, характерные для языка этой песни:

երբ որ բացվին – երբ որ բացվեն

մեր երկրեն փախ տա ձմեռ – մեր երկրից փախ տա (փախչի, փախնի) ձմեռը

երբ փայլին յուր քաղցրիկ օրեր – երբ փայլեն իր (նրա) քաղցրիկ օրերը

ծիծառ – ծիծեռնակ

հազնին – հազենն (զ=ք)

զիմ Կիլիկիա – իմ Կիլիկիան (վին. ո.)

Աշխարհ, որ ինձ ետուր արև – Աշխարհ, որ ինձ տվեց արև

Упражнения Վարժություններ

1. Найдите две половинки каждого предложения в левой и правой части и соедините их в одно.

Չախ և աջ կողմերում գտե՞ք յուրաքանչյուր նախադասության երկու կեսերը և միավորե՞ք:


Ե՞րբ կլինի, որ դուք ձեր ուսուցչուհուն այցելեք: 

<p>Ա) ✓ Ե՞րբ կլինի, որ դուք ... Տա՛ Աստված, որ այն աղջիկը... Արդյոք կլինի՞ մի օր, որ նա նորից ... Ի՞նչ կլինի (դու) ...</p>	<p>դասախոս կամ լավ նկարիչ դառնաս: մի անգամ իմ կողմը նայի և ժպտա: ✓ ձեր ուսուցչուհուն այցելեք: փառ-փառ ծիծաղի:</p>
<p>Բ) Պետք է, որ Արսենը ... Հարկ է, որ երեխան ... Ժամանակն է, որ դուք ... Անհրաժեշտ է, որ նրանք ... Ամոթ է, որ մենք ... Քեզ վայել չի, որ ... (Մի) գուցե այս անգամ դու ... Վայ թե նա ... Չարժե, որ Իսկուհին ... Արժե, որ այս երեկո Վարդուհին ...</p>	<p>այս կարկատաններով հյուր գնանք: մի քիչ սպասեն: մի հազվագյուտ արծաթադրամ գտնես: սովորի փողոցն անցնել: գրադարանից մի հետաքրքիր գիրք վերցնի: ձեր նպատակին հասնեք: ընտիր կոշիկներ հագնի: ամուսնու գրպանները ստուգի: ամաչի: խորամանկ ժպտաս:</p>
<p>Գ) Ցանկանում եմ, որ ... Մենք համաձայն ենք, որ ... Ներկաները դարձյալ խնդրում են, որ Պըլը Պուղին ... Աղաչում եմ, որ ... Մայրիկս թույլ չի տալիս (արգելում է), որ ես ... Տատը ստիպում է, որ ... Հայրս պահանջում է, որ ... Մեկիք Շահնազարը հրամայում է, որ ... Արքան կարգադրում է, որ բոլորը... Ներկաները արդեն համոզում են, որ ... Ո՞վ է քեզ ստիպում, որ... Եղբայրս հանձնարարում է, որ... Նա ուզում է քեզ օգնել, որ ... Ուսուցիչը հսկում է, որ ... Ծնողներս ստիպում են, որ ... Հայրդ թույլ տալի՞ս է, որ ...</p>	<p>ժառան անմիջապես գա: աշակերտները գործերը չչարտեն հատակին: դուք մնաք տանը: վարժապետը Պըլը Պուղուց ձեռք քաշի: "այք" ասի: երբեք փողի կարիք չզգաս: երեխաները ճաշից հետո քնեն: չարունակ ինձ չիտեսնես: գիրքը վերադարձնեմ գրադարան: այն պարոնին ամեն տեղ հետեսնես: մոտենամ լուսամուտին, բաց անեմ լուսամուտը: նպատակիդ հասնես: ամբողջ օրը կատակեն ու ժպտան: միշտ ժամանակին վերադառնամ: բարձրակրունկ կոշիկներ հագնես: մուշտակ ու երկարաճիտ կոշիկներ հագնեն:</p>
<p>Դ) Ամաչում եմ, որ ... Տիգրանը վախենում է, որ ... Ամուսինս դեմ է, որ ... Եվ այդ կինը շարունակ խանգարում է, որ ...</p>	<p>դարձյալ Մոկացյանը քննություն ընդունի: դու նորից հարևանից փող փոխ առնես: սիրահարները հանդիպեն: ես այս հին թերթերը չպարտեմ:</p>

2. Выразите предположение, надежду, ожидание; пользуйтесь следующими оборотами и глаголами: *սպասելի է, որ..., բնական է, որ..., հավանական է, որ..., սպասել, հույս ունենալ*. Բերված դարձվածքներով և բայերով ենթադրություն, հույս, սպասում արտահայտեք.



Մոսկվայում հիմա ցուրտ է:



Բնական է, որ Մոսկվայում հիմա ցուրտ լինի:
Հավանական է, որ Մոսկվայում հիմա ցուրտ լինի: և այլն:

Մոսկվայում հիմա ցուրտ է:
Նրանք շուտով նոր տուն են ստանում:
Ամսի հինգին Սոկացյանն է քննություն ընդունում:
Ռուբենը հրավիրում է ինձ Մեծ թատրոն:
Հարևանը նորից ստիպված է դիմել ՊՐԼՂ Պոլոուն:
Դուռը բացվում է ու ներս է մտնում դիմացի շենքի խարտյաշ հարևանուհին:

3. Выразите неуверенность, пользуйтесь следующими оборотами: *հազիվ թե, դժվար թե, թերևս, գուցե, կարող է պատահել, անկարելի է, որ..., անհնար է, որ..., չի կարող պատահել, անհավանական է, որ..., անբնական է, որ..., չեմ կարծում, (թե, որ...)*. Բերված դարձվածքներով և բայերով ենթադրություն, անվստահություն արտահայտեք.



Նա դեռ սպասում է փողոցում:



Դժվար թե նա դեռ սպասի փողոցում:
Չի կարող պատահել, որ նա դեռ սպասի փողոցում:
Անհավանական է, որ նա դեռ սպասի փողոցում:

Նա դեռ սպասում է փողոցում:
Համլետն ու Օֆելիան ամուսնանում են:
Այս տարի Մայքլ Ջեկսոնը գալիս է Հայաստան ու երեք հարյուր համերգ է տալիս:
Բոլոր ամերիկացիները դպրոցում հայերեն են սովորում:
Ամեն մի հայ վեց կամ յոթ լեզու գիտի:
Արթուրի եղբայրը ամեն առավոտ հինգ գավաթ սուրճ է խմում:



4. Вспомните ответы бабушки из "Красной шапочки".

Ստաբերեք տատիկի պատասխանները "Կարմիր գլխարկը" հեքիաթից:



գրկել – обнимать

- Տատիկ, ինչու՞ այդքան մեծ աչքեր ունես: - Այդ նրա համար է, որ (որպեսզի) քեզ լավ ...:
- Տատիկ, ինչու՞ այդքան մեծ ականջներ (յառ) ունես: - Այդ նրա համար է, որ (որպեսզի) քեզ լավ ...:
- Տատիկ, ինչու՞ այդքան մեծ ձեռքեր ունես: - Այդ նրա համար է, որ (որպեսզի) քեզ լավ ...:
- Տատիկ, ինչու՞ այդքան մեծ ատամներ ունես: - Այդ նրա համար է, որ (որպեսզի) քեզ լավ ...:

5. Найдите ответы на вопросы:

Գտե՛ք հարցերի պատասխանները.

✓ 1. Ինչու՞ (ինչի՞ համար) է տերը ծառային ուղարկում բաղնիս:

2. Ինչու՞ (ինչի՞ համար) են Պըլը Պոլոլուն ուղարկում վարժապետի մոտ:

3. Ինչու՞ (ինչի՞ համար) են աշակերտները հաճախ այցելում իրենց ուսուցչուհուն:

4. Ինչու՞ (ինչի՞ համար) է Տիգրանը գնում Կարենի սենյակը:

5. Ինչու՞ (ինչի՞ համար) է Կարենը պատուհանի մոտ կանգնած կատակներ անում:

Որպեսզի նա գրել-կարդալ սովորի:

Որպեսզի նրա հետ կռվի:

Որպեսզի խարտյաշ գեղեցկուհին ծիծաղի:

✓ Որպեսզի նա տեսնի, թե բաղնիսում մարդ կա՞:

Որպեսզի միասին դպրոցական տարիները վերհիշեն:

6.

ինչու՞ - որովհետև (причина)
ինչու՞ (ինչի՞ համար) - որ (որպեսզի) (цель)

Ответьте на вопросы. Начните с **որովհետև** или **որպեսզի** (по смыслу):

Պատասխանե՛ք հարցերին: Սկսե՛ք "որովհետև" կամ "որպեսզի" շաղկապով՝ ըստ իմաստի.

(գեղեցիկ ծամել) Ինչու՞ են տղաները սիրահարվում ուսանողուհուն:

(բարձը նպատակին չհասնել) Ինչու՞ է Կարենը անմիջապես փակում սենյակի դուռը:

(որդին հայերեն խոսել) Ինչու՞ է հայրը հուզվում:

(դասերը չսովորել) Ինչու՞ են Մեծամոր գյուղի տղաները հայոց պատմությունից անբավարար ստանում:

(նոր գիրք վերցնել ու կարդալ) Ինչու՞ են մարդիկ գնում գրադարան:

Словообразование

Բառակազմություն



Присоединяясь к основе глагола, к прилагательному или существительному, суффикс **-ություն** образует абстрактное существительное со значением наименования действия, признака, собирательности, отраслей науки и т.д. Суффикс **-ություն** очень продуктивен.



պատմություն, նկարչություն, երաժշտություն, աշխարհագրություն, տնտեսություն, իրավաբանություն, գիտություն, տնտեսագիտություն, հայագիտություն, նորություն.

Чередование гласных

Հնչյունափոխություն



При словообразовании и/или словоизменении словесное ударение в армянском языке сдвигается на конечный слог и гласный в прежнем ударном слоге, лишившись ударения, подвергается различным позиционным чередованиям.

Односложные слова более подвержены чередованиям, чем многосложные.

В грабаре эти чередования были регулярными, в современном армянском языке сохранились в виде определенных тенденций.

•Чаще всего наблюдается чередование при словообразовании. В современном армянском языке сохранились сложные слова, как готовые лексические единицы.

•Менее часто чередование гласных встречается при склонении существительных, т.к. в сознании говорящих достаточно живучи модели образования косвенных падежей, присущие древнему состоянию языка.

•Реже всего наблюдается чередование при образовании множественного числа существительных, т.к. в сознании говорящих форма единственного числа присутствует автономно и от нее по известной модели образуется форма множественного числа.


Запомните некоторые закономерности:



ե>ի	սեր > սիրել տեր > տիրոջ, տիրուհի, տիրել տնտեսագետ > տնտեսագիտություն
ույ>ու	գույն > գունավոր ծույլ > ծուլանալ (лениться)
ու>скрытый слог ը или ու>"օ"	ջուր > ջրի, ջրեր (ջը-րի) տուն > տներ (տը-ներ) տխուր > տխրել (տրխ-րել)
ի> скрытый слог ը или ի>"օ"	գիրք > գրքեր (գըր-քեր) անհանգիստ > անհանգստանալ (անհանգըս-տանալ) երաժիշտ > երաժշտություն (երաժըշ-տություն) թնիր > թնրի (թն-րի), но թնիրներ նկարիչ > նկարչություն (նկար-չություն)

7. По приведенной модели образуйте существительные от глаголов и запишите их:


Հիմնվելով բերված կաղապարի վրա հետևյալ բայերից գոյականներ կազմեք և գրի առեք.

պատմել	рассказать	պատմություն 	история
այցելել	навестить		визит
փոխանակել	обменять		обмен
սովորել	научиться, привыкнуть		привычка
ցանկանալ	желать		желание
համաձայնել	согласиться		согласие
կարգադրել	распорядиться		распоряжение
հանձնարարել	поручить		поручение
հայտարարել	объявить		объявление
առաջարկել	предложить		предложение
շարունակել	продолжить		продолжение
բարկանալ	сердиться		гнев
անհանգստանալ	беспокоиться		беспокойство
պատրաստել	приготовить		приготовление
հետևել	следовать		вывод
գրել	писать		записка

8. По модели բարի – բարություն ("доброта") образуйте существительные от прилагательных и запишите их:

Հիմնվելով բարի – բարություն կաղապարի վրա հետևյալ սծականներից գոյականներ կազմեք և գրի առեք.

без изменений корневого гласного

լավ	хороший	լավություն 	добро (сделать)
վատ	плохой		зло (сделать)
անտարբեր	безразличный		безразличие
արագ	быстрый		скорость
բարձր	высокий		высота
լայն	широкий		ширина, широта
նոր	новый		новость
երկար	длинный		длина
մեծ	большой		величина
խորամանկ	хитрый		хитрость
ուրախ	веселый		радость, веселье
առողջ	здоровый		здоровье
դժվար	трудный		трудность
հեշտ	легкий (не трудный)		легкость (не трудность)
ծանր	тяжелый		тяжесть
թեթև	легкий (не тяжелый)		легкость (не тяжесть)
հպարտ	гордый		гордость

чередование ի > "Օ" или ի > скрытый слог (ը)			
ուշադիր երջանիկ հին ընտիր գեղեցիկ սրամիտ հետաքրքիր կոպիտ	внимательный счастливый старый, древний отборный красивый остроумный интересный грубый	ուշադրութիւն նշխարհագրութիւն	внимание счастье древность выбор красота остроумие интерес грубость
чередование ու > "Օ" или ու > скрытый слог (ը)			
լուրջ տխուր ուր	серьезный грустный острый (предмет)	լրջութիւն ուրություն	серьезность грусть острота (предмета)
чередование ույ > ու			
թույլ ծույլ զգույշ	слабый ленивый осторожный	թուլութիւն ծուլություն	слабость лень осторожность
чередование ե > ի			
ընկերասեր հյուրասեր հայրենասեր	дружелюбный гостеприимный патриот	ընկերասիրություն հյուրասիրություն	дружелюбие угощение патриотизм

9. По той же модели образуйте абстрактные существительные от приведенных существительных и запишите их:

Ըստ նույն կաղապարի բերված գոյականներից կազմեք և գրի առեք վերացական իմաստով գոյականներ.

без изменений корневого гласного			
ուսանող ընկեր	студент товарищ, друг	ուսանողություն ընկերություն	студенчество дружба, товарищество, общество
ղեկավար իրավաբան ազգ ծանոթ մայր հայր դասախոս խոզ	руководитель юрист нация знакомый мать отец лектор свинья	ղեկավարություն իրավաբանություն ազգություն ծանոթություն մայրություն հայրություն դասախոսություն խոզություն	руководство юриспруденция национальность знакомство материнство отцовство лекция свинство
чередование ի > "Օ" или ի > скрытый слог (ը)			
բժիշկ երաժիշտ նկարիչ	врач музыкант художник	բժշկություն երաժիշտություն նկարչություն	медицина музыка рисование
чередование ու > "Օ"			
մանուկ	ребенок	մանուկություն	детство
чередование ե > ի			
տնտեսագետ հայազետ	экономист арменист	տնտեսագիտություն հայազետություն	экономика арменистика



Կարթսա

Մի անգամ մոլլա Նասրեդինը հարևանից մի մեծ կարթսա է խնդրում, որ փլավ եփի: Հարևանը տալիս է և մոլլան հաջորդ օրը վերադարձնում է մի փոքրիկ կարթսա էլ հետը¹:

– Այս ի՞նչ կարթսա է², – հարցնում է հարևանը:

– Ձեր կարթսայի ճուտն է, նա երեկ երեկո մեր տանը ծնեց³:

Հարևանը մտքում⁴ ծիծաղում է մոլլա Նասրեդինի վրա և վերցնում է երկու կարթսան էլ:

Մի քանի օրից հետո մոլլան նորից է խնդրում մեծ կարթսան: Հարևանը ուրախությամբ տալիս է, հուսալով, որ այս անգամ էլ կծնի⁵: Սակայն անցնում է մի քանի օր, բայց մոլլան չի վերադարձնում կարթսան:

– Մոլլա, ու՞ր է կարթսան, – հարցնում է հարևանը:

– Մեռավ⁶, – պատասխանում է մոլլան լրջությամբ, – դու ողջ լինես⁷:

– Ի՞նչ ես խոսում, – բարկանում է հարևանը, – կարթսան էլ մեռնի⁸:

– Եթե կծնի, ապա և կմեռնի⁸, – պատասխանում է մոլլան, – ինչու՞ ծնելուն հավատում ես, իսկ մեռնելուն չես ուզում հավատալ:

¹ մի փոքրիկ կարթսա էլ հետը – вместе с маленькой кастрюлей

² այս ի՞նչ կարթսա է – это что за кастрюля?

³ ծնեց – (он, она) родил(а)

⁴ մտքում – в уме

⁵ կծնի – родит

⁶ մեռավ – умер(ла)

⁷ դու ողջ լինես – будь ты здоров!

⁸ եթե կծնի, ապա և կմեռնի – если родит, то и умрет

Տրտրեր

հաջորդ – следующий (դ=թ)

վերադարձնել – возвращать (ծ=թ)


ճուտ – детеныш

սակայն – однако





Комментарии, задания и упражнения

Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

11.Ա) 

մի քանի օր (օրից) հետո ≠ մի քանի օր առաջ
 через несколько дней ≠ несколько дней назад
 մեզանից հետո ≠ մեզանից առաջ
 после нас ≠ до нас
 ճաշից հետո ≠ ճաշից առաջ
 после обеда ≠ до обеда (перед обедом)

ԴԲ) 





Անցնում է մի քանի օր և նա վերադարձնում է կաթսան:



Մի քանի օրից հետո նա վերադարձնում է կաթսան:

Անցնում է մի քանի օր և նա վերադարձնում է կաթսան:
 Անցնում է մի ժամ ու նա ուտելու բան է պահանջում:
 Անցնում է մի տարի և նա դիպլոմ է ստանում:
 Անցնում է երեք րոպե և նա հուզված դուրս է գալիս սենյակից:
 Երկար ժամանակ է անցնում և նա հասկանում է իր սխալը:

ԴԳ) 




Ինձնից հետո բժիշկը քեզ է սպասում:
 Արի նախաճաշից առաջ մի քիչ ման գանք այգում:




Ինձնից առաջ բժիշկը քեզ է սպասում:
 Արի նախաճաշից հետո մի քիչ ման գանք այգում:

Ինձնից հետո բժիշկը քեզ է սպասում:
 Պատկերացնում ես՝ մի ժամ հետո նա գալիս է ու ասում, որ երեկոյան մեկնում ենք Հայաստան:
 Արի նախաճաշից առաջ մի քիչ ման գանք այգում:
 Հունաստանից առաջ ես ուզում եմ Հայաստանը տեսնել:
 Բնությունից հետո նրանք բոլորովին չեն հուզվում:

12. Ա) 

Ուղղ.-հայց. հ.	ասել(ը)
Մեռ.-փր. հ.	ասելու(ն)
Բաց. հ.	ասելուց
Գործ. հ.	ասելով

ԴԲ) 




Հարևանը հավատում է, որ կաթսան ծնի:



Հարևանը հավատում է կաթսայի ծնելուն:

Հարևանը հավատում է, որ կաթսան ծնի:
 Հարևանը չի հավատում, թե կաթսան մեռնի:
 Ես չեմ հավատում, թե այդ ծուլը լավ սովորի:
 Կոնստանցիան սպասում է, որ դ' Արտանյանը զարդը բերի:
 Մարդիկ մի ամբողջ տարի սպասում են, որ Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերը գտնի:
 Ես չեմ հավատում, թե նա այսօր զանգի կամ գա:
 Նա չի սպասում, որ մենք իրեն օգնենք:
 Կինը երկար սպասում էր, որ ամուսինը վերադառնա:




Նա քարը վերցնում է ճանապարհի վրայից, ապա ներս է մտնում:



Ճանապարհի վրայից քարը *վերցնելուց հետո* նա ներս է մտնում: կամ՝
Ներս մտնելուց առաջ նա քարը վերցնում է ճանապարհի վրայից:

Նա քարը վերցնում է ճանապարհի վրայից, ապա ներս է մտնում: Ստեփանը մեծացնում է քարտեզը, ապա այն կախում է պատից: Վաճառատունը փառ-փառ ծիծաղում է Ծ տառի վրա, ապա կարդում է Մաշտոցի գրածը:
Նա միշտ ճաշում է, ապա մի գավաթ սուրճ է խմում:



Պըլը Պուղին վստահում է իր հարևանին ու ասում է, որ նա փողը վերցնի բարձի տակից:



Վստահելով իր հարևանին Պըլը Պուղին ասում է, որ նա փողը վերցնի բարձի տակից:

Պըլը Պուղին վստահում է իր հարևանին ու ասում է, որ նա փողը վերցնի բարձի տակից:
Երեկ մեր ուսուցչուհու հետ դասարանի նկարներն էինք նայում և հիշում բոլորին:
Աշակերտները պեղում են և կավից զատում են օրական մի ուլունք կամ մի կտոր հազվագյուտ ափսե:
Պըլը Պուղին ցանկանում էր, որ վաժապետն իրենից ձեռք քաշի ու լուռ էր:
Տիգրանը բարկանում է ու բարձր շարտում է եղբոր հետևից:
Պըլը Պուղին վստահում է իր հարևանին ու ասում է, որ նա փողը դնի բարձի տակ:
Մելիք Շահնազարը կարծում է, թե իր սրամիտ կատակին պատասխան չկա ու «տեղ-տեղ» շնորհավորում է Պըլը Պուղու հագուստը:
Պըլը Պուղին չի ցանկանում անպատասխան թողնել մելիք Շահնազարի կատակը և «օր ու մեջ կյանք» է մաղթում նրան:
Հարևանը ծիծաղում է Նասրեդինի վրա ու վերցնում է երկու կաթսան էլ:

13.

ի՞նչ կաթսա – какамя (что за) кастрюля?



Նա *հայերեն* ու *հունարեն* գրքեր ունի:



Նա *ի՞նչ* գրքեր ունի:

Նա *հայերեն* ու *հունարեն* գրքեր ունի:
Մատենադարանում *շատ հին* ձեռագրեր կան:
Գնում են գրադարան մի *հետաքրքիր* գիրք վերցնելու:
Մեր դիմացի շենքում մի *գեղեցիկ խարտոյաշ* աղջիկ է ապրում:
Փլավ եփելու մի կաթսա տա՛ն:
Այսօր կինոթատրոնում *նոր* կինոնկար կա:
Պըլը Պուղու հագուստը *նոր* կարկատաններ ունի:
Տղաները խաղալիս *արծաթե* ուլունք են գտնում Մեծամորում:


14. 

ի՞նչ + սущ. без артикля = какой, какие (что за) + сущ.	Ի՞նչ օր է այսօր: Ի՞նչ եղանակ է:
ո՞ր + սущ. с опред. артиклем = какой, какие (который) + сущ.	Ո՞ր գիրքն (գրքերն) ես ուզում:
մյուս, հաջորդ + սущ. с опред. артиклем = другой, следующий + сущ.	Մյուս (հաջորդ) օրը Նասրեդինը վերադարձնում է կաթսան:

 Поставьте вместо точек слово зրջագետստ.

Կետերի փոխարեն օգտագործեք "зրջագետստ" բառը:

1. Աղջիկս ուզում է փորձել մյուս ...: 2. Քանի՞ ... եք ուզում գնել:
3. Բոլոր ... էլ գեղեցիկ են: 4. Բայց ամեն մի ... քեզ չի սագում: 5. Ես կարծում եմ, որ կարելի է վերցնել մի ... ու մի շալվար: 6. Ամբողջ ... պուտերով է ծածկված: 7. Կարիների ... գուլավոր է, վանդակավոր չի, իմ ... է վանդակավոր: 8. Սա .. է, իսկ ես կարծում էի, թե լողագետստ է: 9. Ի՞նչ ... ես հագնում, երեկոյան, թե՞ սովորական: 10. Ո՞ր ... հագնեմ, տոնակա՞ն, թե՞ սովորական:

 15. В следующих предложениях определите функцию слова **թե** – подчинительный союз, вводящий косвенную речь (или косвенный вопрос) или вопросительно-альтернативный союз "или".

Հետևյալ նախադասություններում որոշեք "թե" բառի գործառույթը, արդյոք այն ստորադասակա՞ն, թե՞ երկընտրանքի շաղկապ է:


1. Պըլը Պուլիին ի՞նքն էր իր հարևանին փող տալիս, թե՞ ասում էր՝ գնա, վերցրու: 2. Հարևանը մտածում է, թե Պըլը Պուլիին չի ստուգի բարձի տակ և փողը գրպանում վերադառնում է: 3. Մի օր մեկիք Շահնագարը հարցնում է, թե Պըլը Պուլիին ու՞ր է, ինչու՞ չի գալիս, չի երևում: 4. Մուլան է խորամանկ, թե՞ իր հարևանը: 5. Հարևանը մուլային հարցնում է, թե սա ի՞նչ կաթսա է: 6. Մուլան լրջությամբ պատասխանում է, թե հարևանի կաթսան գիշերը ծնեց: 7. Հարևանը միայն ի՞ր կաթսան է վերցնում, թե՞ երկուսն էլ: 8. Մի քանի օրից հետո մուլայի հարևանը հարցնում է, թե ու՞ր է իր կաթսան: 9. Մուլան տխուր պատասխանում է, թե կաթսան մեռավ:

16.  Перескажите текст, опираясь на ключевые глаголы:

Պատմեք տեքստը հիմնվելով բանալի բայերի վրա.



Խնդրել, եփել, վերադարձնել, ծնել, ծիծաղել, վերցնել, խնդրել, տալ, անցնել, չվերադարձնել, հարցնել, մեռնել, պատասխանել, բարկանալ, հավատալ:



17.Ա)




- | | | |
|--------------|------------|---------------------|
| 1. ափսե | 10. թավա | 19. թեյաման, թեյնիկ |
| 2. դանակ | 11. կաթսա | 20. թուրմի թեյաման |
| 3. պատառաքաղ | 12. թաս | 21. բացիչ |
| 4. գդալ | 13. մաղ | 22. պահածո տուփերով |
| 5. բաժակ | 14. ցանց | 23. շաքարաման |
| 6. գավաթ | 15. քամիչ | 24. շիշ |
| 7. պնակ | 16. գրտնակ | 25. շամփուր |
| 8. շերեփ | 17. ալյուր | 26. զամբյուղ |
| 9. թիակ | 18. սրճեփ | 27. դույլ |


Բ) Ответьте на вопросы: Պատասխանեցե՛ք հարցերին:

Ի՞նչն է ավելորդ այս խոհանոցում, ի՞նչը խոհանոցից տանենք սենյակ, խորդանոց:

Ովքե՞ր են օգտագործում այս իրերը:

Շերեփը, թիակը, թավան, կաթսան, թասը, մաղը, ցանցը, քամիչը, գրտնակը, թեյամանը, սրճեփը, բացիչը, շիշը, շամփուրը, զամբյուղը, դույլը, անձեռոցիկը, մսաղացը, սրճաղացը, քերիչը, ավելը, աղբահանը, թելը, գոգնոցը, ասեղը, մկրատը, մեխը, մուրճը, կացինը, սղոցը, պարանը, պտուտակը, պտուտակահանը, ձագարը, արդուկը, սանրը, հայելին, ամրակը, պնդիչը:

կանայք 	տղամարդիկ 	և՛ կանայք, և՛ տղամարդիկ 
--	---	---



- 28. անձեռոցիկ
- 29. մսադաջ
- 30. սրճադաջ
- 31. քերիչ
- 32. ձագաթ
- 33. ավել
- 34. աղբահան (դբ=խա)
- 35. թել
- 36. անոթ

- 37. զոզոնց (второе q=թ)
- 38. մկրատ (դ=թ)
- 39. արդուկ
- 40. սանր
- 41. հայելի
- 42. պարան
- 43. պտուտակ
- 44. պտուտակահան
- 45. ձայնասփյուռ

- 46. կոճակ
- 47. ամրակ
- 48. պնդիչ
- 49. մեխ
- 50. մուրճ
- 51. կացին
- 52. սոց

Գ) Решите кроссворд: Լուծեք խաչբառը.

10 ⬇

	1	блюдечко →							
	2	зеркало →							
3		ножницы →							
	4	утюг →							
5		салфетка →							
	6	веник →							
	7	терка →							
	8	совок →							
9		мясорубка →							

Դ) Найдите лишнее в ряду:
Գտեք, թե ինչն է ավելորդ.

1. Դանակ, պատառաքաղ, շերեփ, գդալ:
2. Ափսե, թավա, պնակ, գավաթ, բաժակ:
3. Մաղ, ցանց, քամիչ, քերիչ, թել, ձագար:
4. Թել, ասեղ, մկրատ, արդուկ, սանր, կոճակ:
5. Աղբահան, սանր, հայելի:
6. Մսաղաց, սրճաղաց, գրտնակ, պտուտակահան:
7. Մեխ, ամրակ, պնդիչ, պտուտակ, աղբահան, ասեղ:
8. Սղոց, մուրճ, պտուտակահան, թեյաման, կացին:
9. Թեյաման, թուրմի թեյաման, բաժակ, պնակ, քամիչ, ավել:
10. Սրճեփ, թաս, շամփուր, շիշ, կաթսա, դուլլ:
11. Պարան, պլուր, թել:
12. Դանակ, պատառաքաղ, բացիչ, անձեռոցիկ, մեխ, պտուտակ:
13. Պահածո, պլուր, գոգնոց:
14. Սրճաղաց, սրճեփ, թավա, կաթսա:
15. Սրճաղաց, մսաղաց, արդուկ:
16. Սրճաղաց, սրճեփ, գավաթ, պնակ, ցանց:
17. Ձագար, կոճակ, բացիչ, գրտնակ:
18. Ամրակ, ասեղ, ափսե:
19. Պարան, պնդիչ, պտուտակ:
20. Թաս, թեյաման, թել, թիակ, թավա:



18.

Прослушайте диалоги и заполните

пропуски:

Լսե՛ք երկխոսությունները և լրացրե՛ք բացերը.

Ա) – Մա, կարելի՞ է այսօր ես ... պատրաստեմ: Ի՞նչ ճաշ է այսօր:

– ու կարտոֆիլ:

– Ուրեմն խոր ... ու գդալներ պետք չեն: Միայն տափակ ափսեներ, ...-...: Էլ ի՞նչ, մամ:

– Բաժակներ:

– ... գավաթներ էլ՞ դնեմ:

–Չէ, պետք չի: Վերջում ես ինքս սուրճ կպատրաստեմ: Դու ... դիր, չմոռանաս:

Բ) Մայրը. – Ու՛ֆ, ի՛նչ շատ բան կա ...:

Երեխա. – Հիմա պապան կհավաքի կացին-մացինը:

Հայրը. – Հապա, բալիկ ջան, տուր այստեղ սղոցը, ..., ... մեխերը: տա՛ր գրասեղանի մեջ դիր:

Մ. – Իսկ թելերն ու մատիտների ինչի՞ են խոհանոցում, ... ինչի՞ ա խոհանոցում:

Ե. – Մա, ես ուզում էի քեզ հետ ... կարել, հետո ուզում էի քո կողքին ...:

Մ. – Այլուր ինչի՞ ա ...:

Ե. – Ես ուզում էի ... թխել:

Մ. – Դե լավ, արի խոհանոցը հավաքենք ու մի բան թխենք:

Урок 12. Տառերկուերրորդ դաս

Грамматика

Условное или сослагательное наклонение: образование и употребление.

Каузативный залог.

Глаголы, имеющие дублетные формы.

Отрицательные местоимения и их склонение.

Определенные местоимения նրան, ուրիշ, вопросительное местоимение ինչպիսի՞ (какой?).

Относительное местоимение и подчинительный союз որ.

Указательные местоимения այսպիսի, այդպիսի, այնպիսի.

Суффиксы -ային, -ե (-յա), -որդ, префикс ան-.

Текст

Գարնանային փողոց (Պերճ Ձեյթունցյան)

Условное или сослагательное наклонение

Ենթադրական եղանակ



Условное (или сослагательное) наклонение употребляется для обозначения предположительного действия (кстати, это наклонение по-армянски так и называется – предположительным). Употребительны два времени условного наклонения: будущее и будущее в прошлом.

Будущее время условного наклонения обозначает действие, совершение которого предполагается в будущем.

Утвердительная форма будущего времени условного наклонения образуется при помощи частицы **լ**-, которая ставится перед формами желательного наклонения и пишется с ними слитно*.

Отрицательная форма будущего времени условного наклонения – аналитическая, она состоит из отрицательной формы вспомогательного глагола **եմ** и причастия отрицания. Причастие отрицания глаголов спряжения -ալ имеет окончание -ա: կարդալ – կարդա, խաղալ – խաղա, գալ – գա, փալ – փա и т.д.; а причастие отрицания глаголов спряжения -ել – окончание -ի: գրել – գրի, ուրել – ուրի, լինել – լինի, վերցնել – վերցնի и т.д.

!*Если глагол начинается с гласного, частица **լ** произносится слитно с глагольной основой, в частности, буква **ե** произносится **t**, а буква **ո** – **o**, как в середине слова (կըրգեմ, կըրռշեմ); а если глагол начинается с согласного, то после частицы **լ**- слышится (и произносится) скрытый слог **ը** (կըլխալամ).

Спряжение глаголов в будущем времени условного (сослагательного) наклонения

երգել		խաղալ	
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ծխտական ձև	утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ծխտական ձև
կերգեմ կերգես կերգի կերգենք կերգեք կերգեն	չեմ երգի չես երգի չի երգի չենք երգի չեք երգի չեն երգի	կխաղամ կխաղաս կխաղա կխաղանք կխաղաք կխաղան	չեմ խաղա չես խաղա չի խաղա չենք խաղա չեք խաղա չեն խաղա

ունենալ	լինել	լրալ	գալ	отр. ф.
կունենամ	կլինեմ	կլրամ	կգամ	չեմ ունենա
կունենաս	կլինես	կլրաս	կգաս	չես լինի
կունենա	կլինի	կլրա	կգա	չի տա
կունենանք	կլինենք	կլրանք	կգանք	չենք գա
կունենաք	կլինեք	կլրաք	կգաք	չեք ...
կունենան	կլինեն	կլրան	կգան	չեն ...

Употребление сослагательного наклонения



1 Будущее время сослагательного наклонения употребляется для обозначения действия в будущем. В этом значении оно синонимично будущему времени изъявительного наклонения и переводится на русский язык простым будущим временем. Ср. գիրքդ վաղը **կբերեմ**: "Я принесу твою книгу завтра". Երեկոյան քաղաքն **կգնանք**: "Вечером пойдем в театр". Եւ քեզ ոչինչ **չի ասի**: "Он тебе ничего не скажет".

2 • Действие в будущем, выраженное сослагательным наклонением, – это предположительное действие, которое может совершиться при определенном условии. Тогда в сложноподчиненном предложении с придаточным условным глагол главного предложения ставится в сослагательном наклонении, а глагол придаточного предложения в – желательном.

Прид. Усл.	<i>Եթե ուզես,</i> "Если захочешь,	գիրքդ վաղը կբերեմ . завтра принесу твою книгу".	главн. предл.
жел. накл.	<i>Եթե տոմս չիմի,</i> "Если будут билеты,	երեկոյան քաղաքն կգնանք . вечером пойдем в театр".	сослаг. накл.
жел. накл.	<i>Եթե չհարցնես,</i> "Если не спросишь,	եւ քեզ ոչինչ չի ասի . он тебе ничего не скажет".	сослаг. накл.

•Сослагательное наклонение употребляется для обозначения ожидаемого, предполагаемого события. Ср. употребление желательного и сослагательного наклонений для выражения цели или ожидаемого, предполагаемого события:

Մենք սպասում ենք, որ նա այսօր գա: "Мы ждем, чтобы он сегодня пришел (приехал)."	Մենք սպասում ենք, որ նա այսօր կգա: "Мы ждем, что он сегодня придет (приедет)."
Հարևանը հույս ունի, որ իր կաթսան նորից ծնի: Сосед надеется на то, что его кастрюля может снова родить.	Հարևանը հույս ունի, որ իր կաթսան նորից կծնի: Сосед надеется, что его кастрюля снова родит.
Բնական է, որ նա այդպես մտածի: "Естественно, чтобы он так думал."	Բնական է, որ նա այդպես կմտածի: "Естественно, что он так подумает."

•Сослагательное наклонение, выражая действие в будущем, употребляется в главном предложении при придаточном уступительном (которое ставится в желательном наклонении). Ср. сложноподчиненное предложение с главным предложением в изъявительном наклонении и сложноподчиненное предложение с главным предложением в сослагательном наклонении.

прид. уступит.	<i>Ինչ էլ ասի,</i> "Что бы он ни говорил,	ես նրան չեմ հավատում: я ему не верю.	изъявит. накл.
	<i>Ինչ էլ ասի,</i> "Что бы он ни говорил,	ես նրան չեմ հավատա: я ему не поверю".	сослаг. накл.
жел. накл.	<i>Ինչքան էլ նրան հարցնես,</i> Сколько его ни спрашивай,	ոչինչ չի ասում: ничего не говорит.	изъявит. накл.
	<i>Ինչքան էլ նրան հարցնես,</i> Сколько его ни спрашивай,	ոչինչ չի ասի: ничего не скажет.	сослаг. накл.

•Сослагательное наклонение употребляется для обозначения действия в будущем. Тогда, как известно, в придаточных времени – когда речь идет о моменте, который еще не настал, после союзов երբ (որ), հենց (որ), об отрезке времени, который длится до определенного момента (действия) в будущем, после союза մինչև (որ) – ставится желательное наклонение. Ср. сложноподчиненное предложение с придаточным времени, относящимся к будущему, с главным предложением в изъявительном наклонении и сложноподчиненное предложение с придаточным времени, относящимся к будущему, с главным предложением в сослагательном наклонении.

прид. врем.	<i>Հենց որ</i> եղբայրս տուն <i>դառնա</i> , "Как только мой брат вернется,	ես <i>կարող եմ</i> քեզ մտ գալ: я могу прийти к тебе."	изъявит. накл.
жел. накл.	<i>Հենց որ</i> եղբայրս տուն <i>դառնա</i> , "Как только мой брат вернется,	ես <i>կկարողանամ</i> քեզ մտ գալ: я смогу прийти к тебе."	сослаг. накл.

Порядок следования главного и придаточного предложений – свободен, не фиксирован.

изъявит. накл. (привыч- ное, повторя- ющееся действие)	Ամեն օր նա <i>մնում է</i> իր հիվանդ տատիկի մոտ "Каждый день он остаётся с больной бабушкой,	<i>մինչև</i> ծնողները աշխա- տանքից <i>վերադառնան</i> . пока родители не возвращаются с работы".	прид. врем
сослаг. накл. (кратное действие)	Եւ <i>կմնա</i> իր հիվանդ տատիկի մոտ "Он останется с больной бабушкой,	<i>մինչև</i> ծնողները աշխա- տանքից <i>վերադառնան</i> : пока родители не вернутся с работы."	жел. накл.

3 Вторым лицом будущего времени сослагательного наклонения можно выразить настоятельное повеление (утвердительная форма) и категорический запрет (отрицательная форма). **Կգնաս կասես** Պըրը Պուղուն, թող շուտ գա այստեղ: "Пойдешь, скажешь..." Այսօր **կմնաս** տանը, բալկ **չես գնա**, հեռուստացույց **չես նայի**: "... не пойдешь, ...не помотришь."

Сравните побуждение к действию и запрет, обращенные к собеседнику (второе лицо) в желательном наклонении и в сослагательном.

Անահիտի հեռախոսի համարը ինձ ասե՛ւ . = Ասա՛ ինձ, <i>խնդրեմ</i> , (<i>խնդրում եմ</i>) Անահիտի հեռախոսի համարը:	<u>жел. накл.</u> (вежливая просьба)
Անահիտի հեռախոսի համարը դու ինձ կասե՛ւ : = Ասա՛ ինձ Անահիտի հեռախոսի համարը:	<u>сослаг. накл.</u> (веление, почти приказ)

Չգաս նրան իմ հեռախոսի համարը, (<i>խնդրում եմ</i>): = Մի՛ տուր նրան իմ հեռախոսի համարը, <i>խնդրում եմ</i> :	<u>жел. накл.</u> (просьба, даже очень настоятельная, остается в рамках пожелания)*
Չես գա նրան իմ հեռախոսի համարը: = Մի՛ տուր նրան իմ հեռախոսի համարը:	<u>сослаг. накл.</u> (запрет, приказ, иногда с оттенком угрозы со стороны сознающего свою силу)

*В сознании многих армян это употребление желательного наклонения полностью соответствует отрицательной форме повелительного наклонения и даже более частотно, чем сама отрицательная форма повелительного наклонения.

4 Будущее время сослагательного наклонения может относиться к настоящему моменту. Тогда оно употребляется не для сообщения о реальных событиях (как настоящее время изъявительного наклонения), а для выражения предположения, сомнения, неуверенности, недостоверности сказанного. Сослагательным наклонением нечто сообщается, но не утверждается. В значении настоящего времени сослагательное наклонение часто употребляется в поговорках и пословицах, а также в стилистически близких контекстах и для передачи оттенка повторяемости, привычности действия.

Գողը տնից կլինի: "Вор (бывает) обычно из дома (из своих)."

Ետերն աշնանը կհաշվեն: "Цыплят по осени считают".

Այդպես չեն պատասխանի մեծերին: "Так не отвечают (нельзя отвечать) старшим".

Сравните разницу между настоящим временем изъявительного наклонения и будущим временем сослагательного наклонения.

Այսպիսի բան քիչ է պատահում: "Такое редко случается".	Այսպիսի բան քիչ կպատահի: "Такое редко может случиться".
изъявит. накл. – утверждение	сослаг. накл. – возможность

Упражнения Վարժություններ

1. Ա) 

Այսօր դու կգնա՞ս խանութ:

→ Այո, այսօր ես կգնամ:
Ոչ, այսօր ես չեմ գնա, նա կգնա խանութ:

Այսօր դու կգնա՞ս խանութ:

Այսօր դու չախտիքի կեփե՞ս:


Այսօր դու նրա նամակին կպատասխանե՞ս:



Այսօր դու Հակոբի գիրքը կտանե՞ս:

Այսօր դու թերթերը կվերցնե՞ս:

Այս կիրակի ինձ կնկարե՞ս:

Այս երեկո ինձ հետ կգա՞ս թատրոն:


Բ) 

Այսօր դուր կգնա՞ք խանութ:

→ Այո, այսօր մենք կգնանք: Ոչ, այսօր մենք չենք գնա, նրանք կգնան խանութ:

См. предложения пункта А)

2. 

– Դու թումանյանի "Անուշ"-ն ես կարդո՞ւմ:
– Ոչ, "Մարո"-ն:

→ – Դու թումանյանի "Անուշ"-ն ես կարդո՞ւմ:
– Ոչ, "Անուշ"-ը ես հետո կկարդամ, հիմա "Մարո"-ն եմ կարդում:

– Դու թումանյանի "Անուշ"-ն ես կարդո՞ւմ: – Ոչ, "Մարո"-ն:

– Նա մեր փողոցն է նկարում: – Ոչ, իրենց փողոցը:

– Դու սուրճ ես եփո՞ւմ: – Ոչ, ճաշ:

– Դուք դա՞ս եք սովորում: – Ոչ, թերթ ենք կարդում:

– Երեխաները բա՞կ են գնում: – Ոչ, հեռուստացույց են նայում:

3. Найдите для каждого придаточного предложения из левого столбца подходящее по смыслу главное предложение из правого столбца.

Գտե՛ք ձախ սյունակի յուրաքանչյուր երկրորդական նախադասությանը համապատասխան գլխավոր նախադասությունը աջ սյունակում:

Եթե անձրև գա, սունկ կհավաքենք: 

✓ Եթե անձրև գա,
Եթե անձրև չգա,
Եթե ժամանակ ունենամ,
Եթե զբաղված չլինես,
Եթե տանը մարդ լինի,
Եթե շոգ լինի,
Եթե նա ժամանակին վերադառնա,

կգամ քեզ մոտ:
միասին երաժշտություն
կլսենք:
✓ սունկ կհավաքենք:
այսօր չենք աշխատի:
անտառ կզնանք:
նարդի կխաղանք:
կզանգես:

4. 

 և 

Եթե դասը չլսես, չես հասկանա:

→ Եթե դասը լսես, կհասկանաս:

Եթե դասը չլսես, չես հասկանա:
Եթե անձրև չգա, սունկ չենք գտնի:
Եթե փող չունենամ, չեմ կարողանա նրան փոխ տալ:
Եթե քեզ դպրոց չուղարկենք, գրել-կարդալ չես սովորի:
Եթե տղաները չմոռանան դաս սովորել, հայոց պատմությունից անբավարար չեն ստանա:

Եթե հարևանը բարձի տակ փող չղնի, փողն այնտեղ չի գտնի:
Եթե նա փողի կարիք չզգա, Պըլը Պուղուն չի դիմի:
Եթե նրանց չպատմեք այս դեպքը, նրանք չեն անհանգստանա:
Եթե նրա գրպանները չստուգես, նամակը չես գտնի:
Իսկ եթե այն նամակը չգտնես, նրան չես վստահի:

5. 


 և 

Եթե քարը վերցնեք, մի կողմ դնեք, բաղնիսի դուռը կազատվի:

→ Եթե քարը չվերցնեք, մի կողմ չղնեք, բաղնիսի դուռը չի ազատվի:

Եթե քարը վերցնեք, մի կողմ դնեք, բաղնիսի դուռը կազատվի:
Եթե անձրև գա, սև կոշիկներդ կհագնես:
Եթե ժամանակ ունենամք, այս ամառ Հայաստան կզնանք:
Եթե շոգ լինի, բակում կճաշենք:
Եթե ջուր ուզենանք, ցայտաղբյուրից կխմենք:
Եթե միշտ այդպես ծուլլ լինես, ուսուցիչները քեզնից դժգոհ կլինեն:

Եթե տղաները ուլունք կամ մի կտոր ջնարակած ափսե գտնեն պեղումների ժամանակ, դպրոց կբերեն և իրենց ուսուցչին ցույց կտան:


Կ6. 



– Երեխաներ, ո՞վ կտա ինձ այն գիրքը:
– Տատիկ, ես զբաղված եմ, բայց եթե Հասմիկը ..., ես ...:

→ – Տատիկ, ես զբաղված եմ, բայց եթե Հասմիկը քեզ գիրքը *չտա*, ես *կտամ*։

- Երեխաներ, ո՞վ կտա ինձ այն գիրքը: – Տատիկ, ես զբաղված եմ, բայց եթե Հասմիկը ..., ես ...:
- Ո՞վ կբերի այսօրվա թերթերը: – Տատիկ, ես ժամանակ չունեմ, բայց եթե Արտակը ..., ես ...:
- Ո՞վ կգտնի կոշիկներս: – Տատիկ, ես արդեն գնում եմ, բայց եթե Սոսը ..., ես ...:
- Ո՞վ կասի ժամը: – Պապիկ, ես ժամացույց չունեմ, բայց եթե Վազգենը ..., ես կնայեմ խոհանոցի ժամացույցին ու ...:
- Ո՞վ մի քիչ ջուր կտա: – Պապիկ, ես դասերս եմ սովորում, բայց եթե Պետրոսը..., ես ...:
- Ո՞վ կաթ կբերի: – Պապիկ, ես հոգնած եմ, բայց եթե Շուշանիկը ..., ես...:


Կ7. 




(Դու) դասի ժամանակ /ծիծաղել/, գերազանց /ստանալ/:

→ *Եթե* դասի ժամանակ *ծիծաղես*, գերազանց *չես ստանա*։

- (Դու) դասի ժամանակ /ծիծաղել/, գերազանց /ստանալ/:
- (Դու) դասի ժամանակ /ժամել/, գերազանց /ստանալ/:
- (Հակոբը) մաքենատիկայից անբավարար /ստանալ/, այս ամառ Դրիմ /գնալ/:
- (Դու) ընկերուհուդ մոտից շուտ տուն /դառնալ/, նրա նկարները /տեսնել/:
- (Դու) Նրան /ասել/ իմ հասցեն, քեզ հետ /խոսել/:


Կ8. Ա) 



Եթե նա (զալ) մեր տուն, ես նրան (ցույց տալ) մեր հին լուսանկարները:

→ *Եթե* նա *զա* մեր տուն, ես նրան ցույց *կտամ* մեր հին լուսանկարները:

- Եթե նա (զալ) մեր տուն, ես նրան (ցույց տալ) մեր հին լուսանկարները:
- Եթե Վարսենիկին (տեսնել), նրան ամեն ինչ (պատմել):
- Եթե դու այդ գիրքը (չբերել), ես շատ (ամաչել) Գագիկից, որովհետև դա նրա գիրքն է:
- Եթե հիմա տուն (վազել), քեռիդ դեռ տանը (լինել) և դու նրան (տեսնել):
- Երեխաներ, եթե դուք իմ սիրած երգը (երգել), ես ձեզ խնձոր (տալ):
- Եթե այսօր փող (ստանալ), քեզ համար նոր հագուստ (գնել):



Եթե ամեն օր թերթ (չկարդալ),
նորությունները (չիմանալ):



→ Եթե ամեն օր թերթ *չկարդաս*,
նորությունները *չես իմանա*:

Եթե ամեն օր թերթ (չկարդալ), նորությունները (չիմանալ):

Եթե քեզ (չհարցնել), դու ոչինչ (չասել):

Եթե նրան թատրոն (չհրավիրել), նա ինքը (չգնալ):

Եթե մայրդ նրանց (չհանդիպել), նա (չանհանգստանալ):

Եթե մենք այս քարտեզի մասշտաբը (չմեծացնել), ոչինչ (չերևալ)

և դուք ոչինչ (չհասկանալ):

Եթե այսօր շուտ (չպառկել) քնելու, վաղը (չկարողանալ) երկար ճանապարհ գնալ:

Եթե քամի (չլինել), այսքան ցուրտ (չլինել):

Եթե փողի կարիք (չզգալ), ստիպված (չլինել) այսքան աշխատել:

9. Ա)

Մոսկվայում հիմա ցուրտ է:


+

см. ур. 11, упр. 2

բնական է, որ..., հավանական է, որ..., սպասելի է,
որ..., հույս ունեն, որ..., կարծում եմ, որ...

=

ожидание, надежда, предположение	Բնական է, որ Մոսկվայում հիմա ցուրտ <i>լինի</i> : Հավանական է, որ Մոսկվայում հիմա ցուրտ <i>լինի</i> : Սպասելի է, որ Մոսկվայում հիմա ցուրտ <i>լինի</i> :
некоторая (большая) уверенность	Բնական է, որ Մոսկվայում հիմա ցուրտ <i>կլինի</i> : Հավանական է, որ Մոսկվայում հիմա ցուրտ <i>կլինի</i> : Կարծում եմ, որ Մոսկվայում հիմա ցուրտ <i>կլինի</i> :



Մոսկվայում
հիմա ցուրտ է:

+

բնական է, որ..., հավանական է, որ..., սպասելի է,
որ..., հույս ունեն, որ...

Մոսկվայում հիմա ցուրտ է:

Նրանք շուտով նոր բնակարան են ստանում:

Նոր բնակարանում խոհանոցը մեծ է և միջանցքը նեղ ու երկար է:

Այդ շենքի պատուհանները նայում են ծովեզերքին:

Այս շենքը վերելակ ու աղբատար խողովակ ունի:

Ամսի հինգին Մոկացյանն է քննություն ընդունում:

Նա այս գիրքը ընկերներին չի տալիս:

Ամռանը նրանք ծոծաթոռը տանում են իրենց ամառանոցային տնակը, իսկ ձմռանը ետ են բերում քաղաքի բնակարանը:

Ամառանոցային տնակում ժամանակը շատ արագ է անցնում:


Ռուբենը հրավիրում է ինձ Մեծ թատրոն:

Հարևանը նորից ստիպված է դիմել Պըլը Պուլուն:

Դուռը բացվում է ու ներս է մտնում դիմացի շենքի խարտյաշ հարևանուհին:

Լվացքի մեքենան միայն խոհանոցում կամ լոգասենյակում է աշխատում, պատշգամբում չի աշխատում:

Մեր կաթսան ձեր տանը նորից ծնում է:


10.  Դուք ինձ նամակ կգրե՞ք: → -Այո, կգրեմ (կգրեմք):
-Ոչ, չեմ գրի (չեմք գրի):



Դուք ինձ նամակ կգրե՞ք: Իսկ նրա՞ն: Դուք իմ նամակին կսպասե՞ք: Դուք ինձ կզանգե՞ք: Դուք իմ մասին կմտածե՞ք: Իսկ դուք ինձ վրա չե՞ք ծիծաղի: Իսկ նրա՞նք: Նրանք ինձ կկատախե՞ն: Իսկ դու՞ք: Դուք ինձ կհիշե՞ք, չե՞ք մոռանա:

11.  Ответьте на вопросы: Պատասխանեք հարցերին.

Ա) Ե՞րբ կպատասխանեք մեր նամակին: Ե՞րբ ինձ կհավատաս վերջապես: Ե՞րբ ինձ կուղարկեն Փարիզ սովորելու: Ե՞րբ կվերադառնանք Հայաստան: Ե՞րբ նորից կտեսնեմ Վենետիկը: Ու՞մ հետ կպարես: Ու՞մ կտանես քեզ հետ թատրոն: Ի՞նչ կվերցնեք, խորոված, թե՞ տոլմա: Իսկ դու ի՞նչ կուտես, չխրթմա՞, թե՞ բոգբաշ: Ե՞րբ կգա բժիշկը: Ե՞րբ հայրիկը փող կստանա:


Բ) Ի՞նչ կանեք, եթե հանկարծ շատ փող գտնեք: Ի՞նչ կանեք, եթե հինգ-վեց օտար լեզու իմանաք: Ի՞նչ կանեք, եթե փողոցում լինեք ու հանկարծ կարկուտ գա: Ի՞նչ կանեք, եթե ձեր հարևանը ձեզնից փող փոխ առնի ու ետ չտա:

12. 

Ում էլ /ասել/ (դու), /հավատալ/ Ով էլ /լսել/, /ծիծաղել/ Ով էլ /գալ/, դուռը /բացել/ (դու) Ինչ էլ /ստանալ/ (դու), գոհ /լինել/ (ես) Ինչ ջահ էլ /լինել/, գեղեցիկ /լինել/	→	Ում էլ <i>ասես, կհավատա:</i> Ով էլ <i>լսի, կծիծաղի:</i> Ով էլ <i>գա, դուռը կբացես:</i> Ինչ էլ <i>ստանաս, գոհ կլինես:</i> Ինչ ջահ էլ <i>լինի, գեղեցիկ կլինի:</i>
---	---	---

- Ում էլ /ասել/ (դու), /հավատալ/:
 - Ում էլ /հարցնել/ (դու), /պատասխանել/:
 - Ում էլ /ցույց տալ/ (դու), /չհավատալ/:
 - Ով էլ /լսել/, /ծիծաղել/:
 - Ով էլ /տեսնել/, /ծիծաղել/:
 - Ով էլ /գալ/, դուռը /բացել/ (դու):
 - Ով էլ /գալ/, դուռը /չբացել/ (դու):
 - Ով էլ /գալ/, ուրախ /լինել/ (մենք):
 - Ինչ էլ /ստանալ/ (դու), գոհ /լինել/ (ես):
 - Ինչ էլ /ուզեցալ/ (դու), հայրդ /անել/:
 - Ինչ էլ կինը /եփել/, ամուսինը /ուտել/:
 - Ինչ էլ /որոշել/ (դու), համաձայն /լինել/ (ես):
 - Ուր էլ /դնել/ (ես) կոնֆետները, երեխաները /գտնել/:
 - Ուր էլ /զնալ/ (ես), մայրենի լեզուն /չմոռանալ/ (ես):
 - Ուր էլ /կախել/ (մենք) այս նկարը, լավ /չերևալ/ (նկարը):
 - Ինչպես էլ թռռները /երգել ու պարել/, պապը /ուրախանալ/:
 - Ինչպես էլ /վազել/ (դու), նրան /չհասնել/ (դու):
 - Ինչքան էլ նրան /ստիպել/ (նրանք), զինի /չխմել/ (նա):
 - Ինչքան էլ /համոզել/ (ես), ինձ /չլսել/ (նա):
 - Ինչքան էլ հարևանը /սնդրել/, ոչ մի դրամ փոխ /չտալ/ (նա)
- Նրան:
- Ինչ գույնի էլ /լինել/ վարագույրը, այս պատերին /սազել/:
 - Ինչ ջահ էլ /լինել/, գեղեցիկ /լինել/:
 - Ինչ կաթսա էլ /տալ/ Նասրեդինը, հարևանը /վերցնել/:

13. Ա) 

Երբ որ (հենց որ) նրանից նամակ ստանամ, անմիջապես քեզ կհայտնեմ:

Մայրիկ, մինչև դու տուն գաս աշխատանքից, ես դասերս կսովորեմ:

придаточное времени, событие относится к будущему

Դ) Найдите для каждого придаточного предложения из левого столбца подходящее по смыслу главное предложение из правого столбца.


Գտե՛ք ձախ սյունակի յուրաքանչյուր երկրորդական նախադասությանը համապատասխան գլխավոր նախադասությունը աջ սյունակում:

Հենց որ խանութները բացվեն, կգնամ հացի: 


✓ Հենց որ խանութները բացվեն,	կգնանք ման գալու:
Հենց որ երեխաները դպրոցից տուն գան,	մի նոր ջահ կգնեմ:
Հենց որ լավ հայերեն սովորեմ,	✓ կգնամ հացի:
Հենց որ շատ փող ունենամ,	հայերեն Պարույր Սևակ կկարդամ:
Հենց որ անձրևը վերջանա,	խորոված կանենք:

Կ) Найдите для каждого главного предложения из левого столбца подходящее по смыслу придаточное предложение из правого столбца.

Գտե՛ք ձախ սյունակի յուրաքանչյուր գլխավոր նախադասությանը համապատասխան երկրորդական նախադասությունը աջ սյունակում:

Մենք կմնանք սրճարանում, մինչև անձրևը վերջանա: 

✓ Մենք կմնանք սրճարանում, ես կսպասեմ,	մինչև ճաշը պատրաստվի:
Մենք այգում կաշխատենք,	մինչև ես չասեմ:
Դուք դուռը չեք բացի,	✓ մինչև անձրևը վերջանա:
Նա քեզ ոչինչ չի տա,	մինչև ես նրան չհամոզեմ:
	մինչև նա հաջորդ անգամ այստեղով անցնի:

14. Ա) 



Բժիշկ կանչել	→	բժիշկ կանչե՛ս, բժիշկ կանչե՛ք	просьба: желат. накл.
		բժի՛շկ կկանչես, բժի՛շկ կկանչեք	требование: сослаг. накл.

Բժիշկ կանչել:

Գնալ հարևանի մոտ ու փողը բերել:



Մի գրիչ տալ:

Այս նամակը ուղարկել:

Մի բռպե սպասել:

Լվացքից առաջ գրպանները ստուգել:

Գնալ հարևանին շնորհավորել:



այս ջրից խմել



այս ջրից չխմեն,
այս ջրից չխմե՛ք
այս ջրից չե՛ս խմի,
այս ջրից չե՛ք խմի

совет, предупреждение:
желат. накл.
запрет, с оттенком
угрозы: сослаг. накл.

Այս ջրից խմել:

Նրան գանգել:

Այսօր բաղնիս գնալ:

Այդ մասին ("об этом") խոսել:

Անհանգստանալ (возможна только просьба):

Այս պատմությունը հարևաններին պատմել:

Այն դռնից ներս մտնել:



желательное наклонение րդծական եղանակ	
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև
мягкая просьба	побуждение

сослагательное наклонение ենթադրական եղանակ	
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև
побуждение	запрет

≠



Ով էլ գա, դուռը կբացես.

≠

Ով էլ գա, դուռը չբացես.



Выберите "совет, побуждение", (а не "вежливую просьбу" или "строгий запрет с оттенком угрозы"):

Ուր էլ լինես, քո մայր լեզուն չմոռանաս / չես մոռանա:

Ով էլ հարցնի, այս նամակը նրան տաս / կտաս:

Տղաս, ով էլ քեզ դիմի, օգնես/կօգնես, չմերժես / չես մերժի:


Պապդ ինչ էլ ասի, կոպիտ չպատասխանես / չես պատասխանի, լռես / կլռես:

Երբ էլ վերադառնաս, զանգես / կզանգես, չմոռանաս / չես մոռանա:

Ինչ էլ պատահի, ինձ իմաց տաս / կտաս, չթաքցնես / չես թաքցնի:

15. Ա)

Пословицы	
Գողը մութ գիշեր ("темная ночь") կսիրի:	= Рыба ищет, где глубже
Ձեռքը ձեռք կլվանա (լվանալ "мыть"):	= Рука руку моет.
Ջրի բերածը ջուրը կտանի:	= Бог дал, Бог взял.
Ջուրն ընկնողը անձրևից չի վախենա	= Снявши голову, по волосам не плачут.
Մի ձեռքը ծափ չի տա (ծափ տալ "хлопать"), մի ծաղկով գարուն չի գա:	= Один в поле не воин.



Ամռանը մուշտակ չեն հագնում:
 Утверждение, относящееся к
 настоящему моменту.

→ **Ամռանը մուշտակ չեն հագնի:**
 Утверждение обобщающего
 характера

Ամռանը մուշտակ չեն հագնում:

Առանց գուլպաների և բոկոտիկներով թատրոն չեն գնում:

Ջուլավոր շալվարի հետ վանդակավոր բաճկոնակ չեն հագնում:

Ծաղկավոր վերնաշապկին փողկապ չի սագում:

Պղբահանն ու ավելը աթոռին չեն դնում, հատակին են թողնում:

Պտուտակահանը պատառաքաղների և դանակների հետ չէ:

Թեյի քամիչը գդալների հետ է:

Այլուրի մաղը աղբի դուլի մոտ չեն դնում:

Դու՛ման թավայի մեջ չեն տապակում, այլ կաթսայի մեջ են եփում:

Թելերն ու ասեղները խոհանոցում չեն թողնում:

Քարտեզը զուգարանում չեն կախում:

Գրքերը զգեստապահարանը չեն դնում:

Ստով ճաշերը սառնարանն են դնում:

Այնպիսի բան ես ասում, որ եփած հավը ծիծաղում է:

Отрицательные местоимения и их склонение

Ժխարական դերանունները և նրանց հոլովումը



Запомните следующие отрицательные местоимения и их склонение. Заметьте, что при склонении изменяется только последний компонент: *մեկը, ոք, բան, տեղ* (кроме местоимения *չիմնչ*), в конструкции "*ոչ մի + существительное без артикля*" склоняется существительное.


ո՞ւյ	ոչ մեկը, ոչ ոք, ոչ մի մարդ	НИКТО
ի՞նչ(ո)	ոչ մի բան, ոչինչ	НИЧТО, НИЧЕГО
ի՞նչ + сущ. без арт. ո՞ր + сущ. с арт.	ոչ մի + сущ. без арт.	НИКАКОЙ, НИ ОДИН
որտե՞ղ, ու՞ր	ոչ մի տեղ	НИГДЕ, НИКУДА

Персонифицированное склонение (Անձի առում)

Ուղղ. հ.	ոչ ոք, ոչ մեկը
Սեռ.-սր.-հայց. հ.	ոչ ոքի, ոչ մեկի(ն)
Բաց. հ.	ոչ ոքից, ոչ մեկից
Գործ. հ.	ոչ ոքով, ոչ մեկով

Неперсонифицированное склонение (Իրի առում)


Ուղղ.-հայց. հ.	ոչ մի բան, ոչինչ	ոչ մի տեղ
Սեռ.-սր. հ.	ոչ մի բանի, ոչնչի	ոչ մի տեղի
Բաց. հ.	ոչ մի բանից, ոչնչից	ոչ մի տեղից
Գործ. հ.	ոչ մի բանով, ոչնչով	ոչ մի տեղով
Ներգ. հ.	ոչ մի բանում, ոչնչում	

16.Ա) 

– Որտե՞ղ կա այդպիսի փողոց:

→ – Ոչ մի տեղ:
– Ոչ մի տեղ չկա:
– Ոչ մի տեղ չկա այդպիսի փողոց:

- Որտե՞ղ կա այդպիսի փողոց:
- Ձեզնից ո՞վ կբարձրանա այս ծառը:
- Ո՞վ է անընդհատ ազդանշան տալիս բակում:
- Ի՞նչ ես անում այստեղ:
- Ի՞նչ եք խմում:
- Ի՞նչ է ասում այն երիտասարդը:
- Ի՞նչ հարց է Ձեզ հետաքրքրում:
- Ի՞նչ մասնագիտություն ունի այն տղան:
- Ու՞ր ես գնում:

Գ) 

– Ու՞մ է հետևում այս մարդը:

→ – Ոչ ոքի:
– Ոչ ոքի չի հետևում:
– Ոչ ոքի չի հետևում այս մարդը:

- Ու՞մ է հետևում այս մարդը:
- Ու՞մ է նման քույրդ:
- Ու՞մ են հարցնում:
- Ունո՞վ է հետաքրքրվում եղբայրդ:
- Ունի՞ց է բողոքում տատիկդ:
- Ունի՞ց ես նեղանում:
- Ի՞նչն է թեզ հուզում:
- Ինչի՞ց ես դու հուզվում:
- Ի՞նչ եք պատվիրում:
- Որտեղի՞ց գիտեք այդ բանը:
- Որտեղի՞ց եք գալիս:
- Ի՞նչ գիրք ես կարդում:
- Ո՞ր աղջկան ես հրավիրում պարելու:
- Ի՞նչ (ո՞ր) թերթից է այս նկարը:
- Ո՞ր այգով է անցնում Կարմիր Գլխարկի ճանապարհը:



Քարնանային փողոցը

Արմենը տաքսի է կանգնեցնում և երկուսն էլ¹ նստում են:

- Քարնանային փողոց, – ասում է Արմենը:
- Իսկ դա որտե՞ղ է գտնվում:
- Սա չորրորդ տաքսին է, որ նստում եմ, – գայրամում է Արմենը:

– Եվ ոչ մեկը չգիտի այդ փողոցը:

- Դե լավ, մի բան կանենք, – ասում է վարորդը:

Այդ փողոցը արդեն նրան էլ է հետաքրքրում: Անահիտը, որ լուռ հետևում էր տղամարդկանց, հասկանում է, որ դա խաղ է, ու լավ է զգում իրեն:

Խաչմերուկներից մեկի մոտ վարորդը հարցնում է մի անցորդի.

- Չգիտե՞ք որտեղ է Քարնանային փողոցը:
- Այդպիսի փողոց կա Բոստոնում, – ասում է անցորդը, որն ըստ երևույթին, հայրենադարձ է: Անգլերեն կոչվում է Սփրինգ Գարդեն:
- Շնորհակալություն:

Տաքսին շարունակում է ճանապարհը և գնում աննպատակ:

– Առանց իմանալու ու՞ր ենք գնում, – հարցնում է Արմենը, գուցե հեռանում ենք Քարնանային փողոցից:

- Կամ գուցե մոտենում ենք:
- Արմենը չի կարողանում առարկել, որովհետև երկու դեպքն էլ հնարավոր է:
 - Դանդաղ գնա, – հանկարծ ասում է Արմենը վարորդին:
 - Ինչու՞ դանդաղ, – աշխուժանում է վարորդը:
 - Որպեսզի հանկարծ չանցնենք փողոցը:
 - Եթե արագ գնանք, ավելի շուտ կհասնենք:
- Արմենը էլի չի կարողանում առարկել, որովհետև դա ևս հնարավոր է:
 - Որտե՞ղ է գտնվում Գարնանային փողոցը, – վարորդը հարցնում է մի ուրիշ անցորդի:
 - Անցորդը ծեռուկ է, նա զբոսնում է իր պառավ կնոջ հետ:
 - Գարնանային փողոց: Զգիտե՛մ: Բայց լավ անում է:
 - Վարորդը մի անգամ էլ է կանգնեցնում մեքենան, մոտենում է մի ոստիկանի, նույն հարցը տալիս ու վերադառնում:
 - Գուցե իսկապե՞ս չկա այդպիսի փողոց, – դժգոհ ասում է նա:
 - Չի կարող պատահել:
 - Բայց անհնար բան է, որ որևէ մեկը չիմանա, – բողբջում է վարորդը:
 - Ի՞նչ կա որ, մեծ քաղաք է, կարող է նաև չիմանան:
 - Նրանք մտնում են նորակառույց, ոչ ասֆալտապատ մի փողոց: Վարորդը չի դադարեցնում ընթացքը: Եվ անընդհատ ազդանշան է տալիս:
 - Հանկարծ ուժեղ արգելակում է ու կանգ առնում:
 - Ինչու՞ կանգնեցինք²:
 - Հասանք³:
 - Ինչպե՞ս թե հասանք:



Արմենը նայում է դուրս և տեսնում, որ փողոցի մեջտեղում, տախտակե ցուցանակի վրա, կարմիր ներկերով գրված է "Գարնանային փողոց":

ըստ Պերն Զեյթունցյանի՝ "Երևանյան օրերի խրոնիկա"

¹երկուսն էլ – оба

²ինչու՞ կանգնեցինք – почему остановились (мы)?

³հասանք – доехали (мы)

Слова Բառեր

- կանգնեցնել – остановить
- վարորդ – водитель (դ=թ)
- հեփաքրքրել – интересоваться
- լուռ – молча
- հեփևել – следовать
- զզալ (իրեն) – чувствовать (себя)
- խաչմերուկ – перекресток
- անցորդ – прохожий (դ=թ)
- հայրենադարձ – репатриант (ծ=ց)
- կոչվել – называться
- աննպատակ – бесцельно
- գուցե – может быть
- հեռանալ – отдаляться
- մոտենալ – приближаться
- առարկել – возражать
- դեպք – случай

- հնարավոր – возможно
- դանդաղ – медленно
- արագ – быстро
- ավելի շուտ – раньше
- հասնել – достичь
- աշխուժանալ – оживиться
- ուրիշ – другой (иной)
- ծերուկ – старик
- զբոսնել – гулять, прогуливаться
- պառավ – старый (пожилой)
- ոստիկան – полицейский
- նույն – тот же
- իսկապե՞ս – действительно? в самом деле?
- պատահել – случаться

անհնար – невозможно
 բողոքել – протестовать
 նաև – также
 նորակառույց – новостройка
 ասֆալտապատ – асфальтированный
 դադարեցնել – прекращать
 (второе դ=թ)
 ընթացք – ход, процесс, зд.: езда
 անընդհար – беспрерывно (դ=թ)
 ազդանշան – сигнал

ազդանշան տալ – сигнализировать
 արգելակել – тормозить (զ=թ)
 կանգ առնել – остановиться
 մեջտեղ – середина (ջ=չ)
 տախտակ – доска
 տախտակե – дощатый
 ցուցանակ – указатель
 ներկ – краска
 գրված – написано,
 написанный

Комментарии, задания и упражнения

Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

17.Ա) ☞

Суффикс -ային образует прилагательные со значением "типичный, присущий, относящийся к (месту, времени)".			
զարուն	весна	զարնային	весенний
ամառ	лето	ամառային	летний
աշուն	осень	աշնային	осенний
ձմեռ	зима	ձմեռային	зимний
հյուսիս	север	հյուսիսային	северный
հարավ*	юг	հարավային*	южный
արևելք	восток	արևելյան	восточный
արևմուտք	запад	արևմտյան	западный


но:

*(վ=ֆ)

Բ) Угадайте значение следующих прилагательных:
 Կռահեք հետևյալ ածականների նշանակությունը.

անտառային	◊	անտառ – лес
տնային	◊	տուն – дом
փողոցային	◊	փողոց – улица
գիշերային	◊	գիշեր – ночь
հեքիաթային	◊	հեքիաթ – сказка

Գ) ☞



Հենգելն ու Գրետելը մոտենում են (անտառ) տնակին և պատուհանից ներս են նայում:

→ Հենգելն ու Գրետելը մոտենում են անտառային տնակին և պատուհանից ներս են նայում:


Հենգելն ու Գրետելը մոտենում են (անտառ) տնակին ("домик") և պատուհանից ներս են նայում:

Իմ (աշուն) վերարկուն շատ տաք է, ես (ձմեռ) վերարկու չեմ ուզում գնել:

Մենք մի ծանոթ ունենք Դրիմում, նրա տան պատուհանից մի (հեքիաթ) տեսարան է բացվում:

(Գիշեր) քամին սառն է, նույնիսկ (ամառ) թեթև շրջագգեստով ամռան գիշերներին ցուրտ է:

Կանադան գտնվում է ... Ամերիկայում, իսկ Արգենտինան ... Ամերիկայում:

18.Ա) 

Суффикс -ե (вариант -յա) образует прилагательное, указывающее на материал, из которого сделан предмет.			
կավ	глина	կավե (սալ)	глиняный
փայտ	дерево	փայտե, փայտյա	деревянный
տախտակ	доска	տախտակե, տախտակյա	дощатый
մարմար	мрамор	մարմարե, մարմարյա	мраморный
մետաղ	металл	մետաղե, մետաղյա	металлический
երկաթ	железо	երկաթե, երկաթյա	железный
բրոնզ	бронза	բրոնզե, բրոնզյա	бронзовый
արծաթ	серебро	արծաթե, արծաթյա	серебряный
ոսկի	золото	ոսկե, ոսկյա	золотой
բամբակ	хлопок	բամբակե, բամբակյա	хлопчатобумажный
բուրդ*	шерсть	բրդե*, բրդյա*	шерстяной
մետաքս	шелк	մետաքսե, մետաքսյա	шелковый
ապակի	стекло	ապակե, ապակյա	стеклянный
բյուրեղապակի	хрусталь	բյուրեղապակյա	хрустальный
հախճապակի	фарфор	հախճապակյա	фарфоровый
ճենապակի	фаянс	ճենապակյա	фаянсовый

*դ=թ


Բ) 



– Քույրիկ ջան, Նոր Տարուն քեզ (արծաթ) գդալներ կնվիրեմ:
– Իսկ ես քեզ (ոսկի) գրիչ:

→ – Քույրիկ ջան, Նոր Տարուն քեզ արծաթե (արծաթյա) գդալներ կնվիրեմ:
– Իսկ ես քեզ ոսկե (ոսկյա) գրիչ:

- Քույրիկ ջան, Նոր Տարուն քեզ (արծաթ) գդալներ կնվիրեմ:
– Իսկ ես քեզ (ոսկի) գրիչ:
- Ու՞ր են տանում այս (մարմար) աստիճանները:
- Փոքր եղբայրս սիրում է իր (փայտ) ձին:
- Խորոված անելու համար (երկաթ) շամփուրներ են հարկավոր:
- Բնակարանը փոխանակելուց հետո արժե (մետաղ) դուռ դնել:
- Զգույշ, զամբյուղի հատակին (ապակի) բաժակներ կան:
- Զմեռ է, Արմենուհին հագնում է իր (բուրդ) գլխարկն ու ձեռնոցները:
- Այս (մետաքս) գլխաշորը քեզ շատ է սագում:
- Տատիկս չի սիրում (մետաքս) գիշերանոցներ, միայն (բամբակ) գիշերանոց է հագնում:

19 Ա) 

<p>Префикс ան- с отрицательным значением образует прилагательное:</p>	
<p>от прилагательного с положительным значением:</p>	<p>от существительных и глагольных основ (со значением "без чего-то")</p>
<p> <i>հետաքրքիր</i> ≠ <i>անհետաքրքիր</i> <i>զգույշ</i> ≠ <i>անզգույշ</i> <i>լուրջ</i> ≠ <i>անլուրջ</i> <i>հյուրասեր</i> ≠ <i>անհյուրասեր</i> <i>բնական</i> ≠ <i>անբնական</i> <i>հավանական</i> ≠ <i>անհավանական</i> <i>գրագետ</i> ≠ <i>անգրագետ</i> "грамотный" ≠ "неграмотный" </p>	<p> <i>աննպատակ</i> "бесцельный, бесцельно" <i>անժպիտ</i> "неулыбчивый" <i>անգույն</i> "бесцветный" <i>անպատասխան</i> "безответный" <i>անընդհատ</i> <i>անտարբեր</i> <i>անկարելի</i> <i>անհնար</i> </p>

Բ) 



Կարենը *բուրբուրով* *լուրջ* գիտաշխատող է:

→ Կարենը *անլուրջ* գիտաշխատող է:

Կարենը *բուրբուրով* *լուրջ* գիտաշխատող է:

Առանց գիրքը կարդալու ինչպե՞ս ես ասում, որ այն *հետաքրքիր*

է:

Ընկերդ բարի մարդ է, բայց *հյուրասեր* է:

Հավանական է, որ որևէ մեկը չիմանա Գարնանային փողոցի տեղը, եթե այդպիսի փողոց իսկապես կա:

Երրորդ տաքսու վարորդը *առանց ժպտալու* նայում է Անահիտին ու Արմենին և ասում է, որ ամնիջապես իջնեն մեքենայից:


Մենք այստեղ այլևս չենք կարող մնալ, դա *հնարավոր* է:

Այս ծերուկն ու իր պառավ կինը զբոսնում են *առանց նպատակի*:

Վարորդը ազդանշան է տալիս *առանց ընդհատելու*:

Նրա տատիկի մայրը *գրագետ* կին է, բայց շատ *հետաքրքիր* պատմություններ գիտի:

Պըլը Պուղին մեկիք Շահնազարի կատակները երբեք *առանց պատասխանի* չի թողնում:



20 Ա) 

Суффикс -որդ (դ=թ) указывает на деятеля			
<i>անցնել</i>	проходить	<i>անցորդ</i>	прохожий
<i>վարել</i>	водить	<i>վարորդ</i>	водитель
<i>զնել</i>	покупать	<i>զնորդ</i>	покупатель
<i>հաճախել</i>	посещать	<i>հաճախորդ</i>	посетитель
<i>լողալ</i>	плавать	<i>լողորդ</i>	пловец
<i>որսալ</i>	охотиться	<i>որսորդ</i>	охотник
<i>դիմել</i>	обращаться	<i>դիմորդ</i>	абитуриент

Կ) Вместо точек поставьте одно из подходящих слов из правого столбца:

Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

1. ... մոտենում է անտառային տնակին ու պատուհանից լսում է թռռնիկի ու տատիկի խոսակցությունը. "Տատիկ, ինչու" այդքան մեծ ատամներ ունես:"	անցորդ
2. Դեռ դպրոցում Արսենը շատ արագ էր լողում, նա մեր դասարանի հայտնի ... էր:	հաճախորդ
3. – Տղաս, ի՞նչ ես ուզում դառնալ: – ..., ես շատ եմ սիրում մեքենա վարել:	գնորդ
4. Փակվելուց առաջ խանութը գրեթե դատարկ է, քիչ ... կա:	վարորդ
5. Մի ... հարցնում է եզրվալուսին, թե ինչքան ժամանակում նա կհասնի հարևան գյուղը, սակայն եզրվալուսը չգիտի, թե նա ինչ արագությամբ է քայլում ու ոչինչ չի պատասխանում նրան:	դիմորդ
6. Արդեն սրճարանը փակվելու ժամանակն է, բայց ... դեռ գալիս են ու գալիս:	որսորդ
7. Համալսարանի բակում շատ ուսանողներ և ... կային:	լողորդ

21. Ա) 	Суффиксы -ացն-, -եցն-, -ցն- ставятся между глагольной основой и глагольным окончанием -ել и придают непереходным глаголам значение причинности и переходности	
	A → (нейтральное действие, непереходный глагол)	→ A (причинное действие, глагол, ставший переходным, действие, переходящее на "бывшее" подлежащее)
	աճել "расти" դադարել "перестать" տխրել "грустить" հիշել "помнить" ծիծաղել "смеяться" կանգնել "стать, встать" սովորել "учиться"	աճեցնել "выращивать" դադարեցնել "прекращать" տխրեցնել "заставить грустить" հիշեցնել "напоминать" ծիծաղեցնել "смешить" կանգնեցնել "остановить" սովորեցնել "научить, обучить"
но:	հավատալ "верить"	հավատացնել "уверить"
а также:	մոտենալ "подойти" վախենալ "бояться" մեծանալ "расти (самому)" բարձրանալ "подняться" հասկանալ "понять" հեռանալ "отдалиться"	մոտեցնել "приблизить" վախեցնել "пугать" մեծացնել "увеличить" բարձրացնել "поднять" հասկացնել "объяснить, добиться понимания" հեռացնել "отдалить"
и наконец:	մտնել "войти" փախչել/փախնել "убегать" թռչել/թռնել "летать, прыгать" հագնել "надеть (на себя)"	մտցնել "звести" փախցնել "обратить в бегство" թռցնել "умчать, подбросить" հագցնել "надеть (на другого)"
а также:	թաքնվել "прятаться, скрываться"	թաքցնել "прятать, скрывать"



1. Պապս յոթերորդ հարկում է ապրում և ամեն օր ուտքով է **բարձրանում** յոթերորդ հարկ, բայց ծանր պայուսակները վերելակով է **բարձրացնում**:
2. Եղբայրս **մուրե՛նում է** լուսամուտին և աչքերով լուռ հետևում է մեր դիմացի շենքի հարևանուհուն: Ես լամպը **մուրեցնում եմ** տատիկիս, որ նա կարողանա կարդալ որդու նամակը:
3. Կարծես թե **հեռանում ենք** Գարնանային փողոցից: Հարկավոր է երեխաներին **հեռացնել** հիվանդի մոտից:
4. Այս երաժշտությունը **տխրեցնում է** ինձ: Երբ որ ես լսում եմ այդ երգը, ես միշտ **տխրում եմ**:
5. Անձրևը **դադարում է**, կարող ենք գնալ զբոսնելու: Վարորդը **դադարեցնում է** ընթացքը և մենք իջնում ենք մեքենայից:
6. Ամեն երեկո Կարենը **կանգնում է** պատուհանի առաջ ու կատակներ է անում հարևանուհու հետ: Հարկավոր է մի տաքսի **կանգնեցնել**:
7. Վռամշապուհը Օ տառը տեսնելիս փառ-փառ **ծիծաղում է**: Կարենը **ծիծաղեցնում է** խարտյաշ հարևանուհուն:
8. Երեխաները արագ **են մեծանում**: Հայրը վստահում է Ստեփանին Անտիոքի ծովեզերքի քարտեզի մասշտաբը **մեծացնել**:
9. – Ես չեմ կարողանում **հիշել** քո հեռախոսի համարը: – Ոչինչ, ես քեզ նորից **կհիշեցնեմ**:
10. Նասրեդինի հարևանը **չի հավապում**, թե կաթսան մեռնի, սակայն Նասրեդինը **հավապացնում է** հարևանին, որ կաթսան մեռավ:
11. Ես **չեմ վախենում** անծանոթ մարդկանցից, իսկ դատարկ փողոցներն ինձ **վախեցնում են**:
12. Իմ աղջիկը սիրում է զգեստապահարանում **թաքնվել**: Մենք ձեզանից ոչինչ **չենք թաքցնում**:
13. Այդ երաժշտությունը քունս ("сон") **փախցնում է**: Այդ երաժշտությունից քունս **փախցնում է**:



Բ) Выберите правильный залог глагола из правого столбца:

Ընտրե՞ք բայի ճիշտ սեռը աջ սյունակից.

1. Երբ ուսուցիչը մտնում է դասարան, երեխաները ... խաղը և պատրաստվում են դասին: Առավոտից անձրևը չի ...:	դադարել / դադրեցնել
2. Ամեն անգամ այս փողոցով անցնելիս աղջիկը ... խանութի առաջ ու երկար նայում է իր սիրելի տիկնիկին: Հանկարծ մի մարդ դուրս է վազում ճանապարհի վրա և ուզում է ... մեր մեքենան:	կանգնել / կանգնեցնել
3. Տղաները ամաչելով նայում են ուսանողուհու գեղեցիկ ուտքերին ու ...: Ինչու՞ են մեծ աղջիկները մարդու ...:	տխրել / տխրեցնել

4. Կարո՞ղ ես ինձ ..., որ վաղը գնամ բժշկի: Դու ...՞ մեր դասարանի հայտնի ֆուտբոլիստին:	հիշել / հիշեցնել
5. Չեր տղան դասի ժամանակ շարունակ ...: Նրա ուրախ կատակները բոլորին ...:	ծիծաղել / ծիծաղեցնել
6. Ամբողջ կինոնկարի ընթացքում բոլորը նրան ..., որ նրա աղջկը կգտնվի: Ես նրան այլևս չեմ ...:	հավատալ / հավատացնել
7. Մայրը ... խոհանոց ու տեսնում է, որ երեխան ուզում է պտուտակահանը ... կարկանդակի մեջ:	մտնել / մտցնել
8. Շատերը արդեն ամառային թեթև զգեստ են ...: Մայրը ձմռանը իր աղջկան տաք է ...:	հագնել / հագցնել
9. Արի մեր հոր լուսանկարը ... ու կախենք պատից քո գրասեղանի վերևը: Այս ծառը էլ չի ...:	մեծանալ / մեծացնել
10. Եղբայրս ինձ թույլ չի տալիս ծանր բաներ ...: Երեկոները մենք ... Ծիծեռնակաբերդ ու հիանում ենք Երևանի տեսարանով:	բարձրանալ / բարձրացնել
11. Ընկերս ինձ միշտ ...: Չեմ կարողանում նրան ..., որ ժամանակին տուն վերադառնա, կամ գոնե գանգի, եթե ժամանակին չի գալիս:	հասկանալ / հասկացնել
12. Մայրիկը զգույշ ձեռքը ... թեյնիկին, որ ստուգի, տաք է, թե ոչ: Դասերից հետո մենք հաճախ ... մեր ուսուցչին և խոսում վերջին նորությունների մասին:	մոտենալ / մոտեցնել
13. Ցավոք վերջին ժամանակներս շատերն են ... Հայաստանից: Բժիշկն ասում է, որ կարդալիս հարկավոր է գիրքը ... աչքերից երեսուն սանտիմետր:	հեռանալ / հեռացնել
14. – Ես ձեր շնից մի քիչ ...: – Իսկապես, մեր շունը բարձր հաչում է ու բոլորին ...:	վախենալ / վախեցնել
15. Մեր կատուն ... բազմոցի տակ: Մայրիկս ամեն անգամ մի նոր տեղ է գտնում ու ... շոկոլադը:	թաքնվել / թաքցնել
16. Հայերն ուզում են պիստակենի ... Ֆրեզնոյում, բայց պիստակենին չի ... Կալիֆոռնիայում:	աճել / աճեցնել

Վ22. Вместо точек поставьте: Կետերի փոխարեն գրե՛ք.

Ա) ե կամ ի՝

Առանց .մանալու ու՞ր .նք գնում, գուց. հ.ռանու՞մ .նք:

Բ) ա կամ ո՝


Արմենը տաքսի է կ.նգնեցնում և հ.րցնում է վ.ր.րդին, թե .րտեղ է Գ.րն.ն.յին փ.դ.ցը: Իսկ վ.ր.րդը դիմում է մի .ստիկ.նի:

Գ) ո կամ օ՝

Մի քանի .րից հետո. հարևանը մ.լլային հարցնում է, թե .րտեղ է իր կաթսան:

Դ) դ, թ կամ տ՝


Մի օր մոլլան հարևանից մի կա.սա է խն.րում: Հաջոր. օրը նա կա.սան վերա.արձնում է: Վարոր.ը, առանց .ա.արեցնելու ըն.ացքը, ազ.անշան է .ալիս:

23.Ա) 

ուրիշ ≠ նույն

ուրիշ + сущ. без артикля
= другой, -ие + сущ.

նույն + сущ. с опр. артиклем
= тот же, те же + сущ.


Բ)  (NB: артикль!)



– Սրանք նույն, անցյալ տարվա կոշիկներն են:

→ – Ոչ, սրանք ուրիշ կոշիկներ են:

- Սրանք նույն, անցյալ տարվա կոշիկներն են:
- Մեր վարորդը դարձյալ նույն անցորդին է դիմում:
- Սա ուրիշ վերարկու է:
- Սովորաբար քննության ժամանակ ուրիշ հարցեր են տալիս:
- Նույն գլխաշո՞րո՞ղ ես ուզու՞մ:
- Սա ո՞ր պտուտակահանն է, սա նույն պտուտակահանը չի՞:
- Սա ուրիշ ջուջանակ է:

24.Ա) 

ինչպիսի՞ (или ի՞նչ)
+ сущ. без артикля=
какой, ая, ое, ие + сущ.?

այսպիսի (այդպիսի, այնպիսի)
+ сущ. без артикля= такой,
ая, ое, ие + сущ.

NB: այնպիսի ..., որ + желат. накл. (см. 11-րդ դաս)

Բ) 



- Սև երկնագույն ծաղիկներով լողազգեստ ունե՞ք:
- Ոչ, այդպիսի լողազգեստ չունենք:
- Իսկ ինչպիսի՞ լողազգեստ ունեք:
- Ահա այսպիսի լողազգեստներ ունենք՝ սև վարդագույն ծաղիկներով, սև մանուշակագույն ծաղիկներով, սև ու կարմիր գուլավոր:
- Ես այնպիսի լողազգեստ եմ ուզում, որ երկնագույն բոկոտիկներին սազի:

լողազգեստ →
վերնաշապիկ

Գ) Поставьте вместо точек слово рѣчь.

Կետերի փոխարեն օգտագործեք "բավա" բառը:

1. Սա ... է: 2. Սա ... չէ, կաթսա է: 3. Սա վարդուիու ... է: 4. Քեզ քանի՞ ... է հարկավոր բլիթ տապակելու համար: 5. Բոլոր ... մաքուր են, ո՞ր ... ես ուզում: 6. Այս ... այլևս պետք չի՞: 7. Ուրիշ ... տա՞մ:
8. Ի՞նչ ... ես ուզում, չեմ հասկանում: 9. Ինչու՞ նույն ... չես վերցնում: 10. Ես այնպիսի ... եմ ուզում, որ բլիթները լավ տապակվեն: 11. Գնանք խանութ, մի (նոր) ... գնենք: 12. Այս ... ի՞նչ արժե: 13. ... սալօջախի վրա է: 14. Ես այստեղ ոչ մի ... չեմ տեսնում:

25. Переведите прямую речь в косвенную; пользуйтесь подчинительными союзами որ или թե:


Ուղղակի խոսքը դարձրեք անուղղակի օգտագործելով "որ" կամ "թե" շաղկապը.

Վարորդը հարցնում է. որտե՞ղ է գտնվում Գարնանային փողոցը:
Արմենը զայրացած պատասխանում է. չորրորդ տաքսին է, որ նստում եմ, և ոչ մեկը չգիտի այդ փողոցը:

Մի անցորդ ասում է. այդպիսի փողոց կա Բոստոնում, անգլերեն կոչվում է Սպրինգ Գարդեն:

Արմենը հարցնում է. առանց իմանալու ու՞ր ենք գնում: Հետո ասում է վարորդին. դանդաղ գնա:


Հանկարծ վարորդն արգելակում է. հասանք:

26.Ա) 

որ – относительное местоимение (= который)
որ – союз (= что)
 В качестве **относительного местоимения** **որ** может иметь определенный артикль, а **союз որ** – никогда.



Սա չորրորդ տարսին է, **որ** նստում եմ: ...ստում է անցորդը,
որն ըստ երևույթին, հայրենադարձ է:
 Անահիտը, **որ(ը)** լուռ հսկում էր տղամարդկանց,
 հասկանում է, **որ** դա խաղ է:


Դ) 



Անցորդն ուզում է մեզ օգնել:
 Անցորդը ցույց է տալիս
 ճանապարհը:

→ Անցորդը, որն ուզում է մեզ օգնել,
 ցույց է տալիս ճանապարհը:

1. Անցորդն ուզում է մեզ օգնել: Անցորդը ցույց է տալիս ճանապարհը:
2. Ես սպասում եմ Արմինեին: Արմինեն ինձ հայերեն է սովորեցնում:
3. Մայրը նամակ է գրում որդուն: Որդին Ֆրանսիայում է ապրում:
4. Տղան դիմացի շենքում է ապրում: Տղան քեզ հրավիրում է բատրոն:
5. Վարորդը չգիտի, թե որտեղ է Գարնանային փողոցը: Վարորդն ասում է. "դե լավ, մի բան կանենք":

27Ա) 

Некоторые глаголы имеют дублетные формы настоящего и прошедшего несовершенного времен.

(глагол-связка)	եմ ես է ենք եք են	էի էիր էր էինք էիք էին	լինում եմ լինում ես լինում է լինում ենք լինում եք լինում են	լինում էի լինում էիր լինում էր լինում էինք լինում էիք լինում էին
(обозначение наличия чего-л.)	կա կան	կար կային	լինում է լինում են	լինում էր լինում էին
	ունեմ ունես ունի ունենք ունեք ունեն	ունեի ունեիր ուներ ունեինք ունեիք ունեին	ունենում եմ ունենում ես ունենում է ունենում ենք ունենում եք ունենում են	ունենում էի ունենում էիր ունենում էր ունենում էինք ունենում էիք ունենում էին
	կարող եմ կարող ես կարող է կարող ենք կարող եք կարող են	կարող էի կարող էիր կարող էր կարող էինք կարող էիք կարող էին	կարողանում եմ կարողանում ես կարողանում է կարողանում ենք կարողանում եք կարողանում են	կարողանում էի կարողանում էիր կարողանում էր կարողանում էինք կարողանում էիք կարողանում էին
Ср. русск.	Он по утрам <i>занят</i> . Он не <i>может</i> пилить.		Он по утрам <i>бывает занят</i> . Он не <i>умеет</i> пилить.	
	простой факт или явление		повторяющийся, характерный факт или явление	

բ) 

1. Նա հիմա **չի կարող** համալսարանում սովորել, ամբողջ օրը աշխատում է, ժամանակ չունի: Նա **չի կարողանում** համալսարանում սովորել, շատ ծուլ է, շարունակ անբավարար է ստանում: 2. – Անցյալ տարի մեր կողքի գրախանութում հայերեն գրքեր **էին լինում**: – Երեկ ձեր գրախանութում դարձյալ հայերեն գրքեր **կային**: Ըստ երևույթին, դու ձեր գրախանութը բոլորովին չես մտնում: 3. Երեկոները մենք միշտ տանն **ենք լինում**, ոչ մի տեղ չենք գնում: Առավոտյան նրանք ազատ **չեն**: 4. Այն ծաղկավաճառը ալ վարդեր է **ունենում**, եթե ծաղիկներ են հարկավոր, գնանք նրա մոտ: Նա երեք տղա **ունի**: 5. **Լինում է** մի սար, էն սարում մի ծառ...: 6. **Լինում են չեն լինում** (жили-были), մի ծերունի ու մի պառավ կին **են լինում, ունենում են** երեք որդի:

NB:
характерно
для языка
сказок!

Գ) Замените выделенные глаголы дублетной формой и наблюдайте, как изменяется смысл сказанного.

Նշված բայերի փոխարեն օգտագործեք նրանց կրկնակ ձևերը և դիտե՛ք, թե ինչպես է փոխվում ասվածի իմաստը.

Գարնանը նա անընդհատ գլխացավեր (головные боли) **ունի**: Երեկոյան ես ազատ ժամանակ **չեմ ունենում**:

Մեր տակի խանութում լավ կարտոֆիլ **կա**, բայց խաղող **չկա**:

Մի՞թե ձեր շուկայում կժու պղպեղ **չի լինում**, հապա ի՞նչ է **լինում**, գոնե կանաչի **լինու՞մ է**:


Երկուշաբթի մենք սովորաբար անգլերենի դաս **չունենք**, մեր ուսուցչուհին միշտ այդ օրը զբաղված է:

Կիրակի զբաղված **չենք, կարող ենք** գնալ անտառ:

Եթե դու **չես կարող** քո տան առջևը ասֆալտապատել, թող քեզ օգնեմ:

Այս ծերունին ու իր պառավ կինը էլ **չեն կարող** մե՛նակ, առանց որևէ մեկի օգնության զբոսնել:

Ես **չեմ կարողանում** քեզ համոզել:

28. Ա) 

ինքը	իրենք
իր	իրենց
իրեն	իրենց
իրենից	իրենցից
իրենով	իրենցով

Բ) 




- Ինչպե՞ս է այսօր ձեր հիվանդը:
- Շնորհակալություն, լավ է զգում իրեն:
- Իսկ դու՞ք ինչպես եք, շա՞տ հոգնած եք:
- Չէ, ոչինչ, մենք էլ ենք մեզ լավ զգում:


- (1) ձեր հիվանդը → քո հիվանդները
- (2) դուք → դու



29. Прочитайте и скажите, верно или нет.
 Կարդացե՞ք և ասացե՞ք՝ ճիշտ է, թե՞ սխալ:

	ճիշտ է	սխալ է
1. Երեք տաքսու վարորդ չգիտեին, թե որտեղ է գտնվում Գարնանային փողոցը:	✓	
2. Արմենն ու չորրորդ տաքսու վարորդը նստում են մեքենա ու երկուսով գնում են Գարնանային փողոց:		
3. Անահիտը գնում է տղամարդկանց հետևից:		
4. Անահիտը հասկանում է, որ դա խաղ է և իրեն լավ է զգում Գարնանային փողոցում:		
5. Մի հայրենադարձ անցորդ ասում է, որ անգլիական Բոստոն քաղաքում կա այդպիսի փողոց:		
6. Արմենը վախենում է արագ գնալ, որպեսզի չանցնեն Գարնանային փողոցը:		
7. Վարորդը չի վախենում անցնել Գարնանային փողոցը:		
8. Վարորդը գտնում է, որ Գարնանային փողոցը դեռ հեռու է:		
9. Մեքենան մի անգամ էլ է կանգնում, և վարորդը բողբոջում է ոստիկանին, որ այդպիսի փողոց չկա:		
10. Գարնանային փողոցը ոչ ասֆալտապատ, տախտակե մի փողոց է:		
11. Մեքենան մտնում է մի նորակառույց և առանց կանգ առնելու շարունակ ազդանշան է տալիս:		
12. Մեքենան ուժեղ արգելակում է ու կանգ է առնում Գարնանային փողոցում:		


30. Ա) 

Ավտոբուսը (տրոլեյբուսը, տրամվայը)	
կանգ է առնում կանգառում:	մեկնում է (շարժվում է):
останавливается на остановке	отправляется (трогается)

Օդանավը (ուղղաթիռը, գնացքը, նավը)	
վայրէջք է կատարում (ժամանում է, գալիս է, տեղ է հասնում) ժամը ...ին:	մեկնում է ժամը ...ին:
	
совершает посадку (прибывает) в ... часов	отправляется в ... часов

 	Ավտոբուս (տրոլեյբուս, տրամվայ, ճոպանուղի, օդանավ, գնացք, նավ, տաքսի, մեքենա, հեծանիվ) նստել:	Ավտոբուսից (տրոլեյբուսից, տրամվայից, ճոպանուղուց, օդանավից, գնացքից, նավից, տաքսուց, մեքենայից, հեծանվից) իջնել: (ջ=չ)
сидеться в ..., на ...	выйти из ..., с ...	
НО:	հեծանիվ քշել – кататься на велосипеде	

Բ) 




1. – Ինչպե՞ս գամ ձեր տուն: – Ոտքով կամ ճոպանուղով:	ոտք → ավտոբուս, տաքսի ճոպանուղի → տրոլեյբուս, հեծանիվ
2. – Որտե՞ղ իջնեմ տաքսուց: Ձեր տան դիմա՞ց: – Այո, ես քեզ կսպասեմ մեր կանգառում:	տաքսի → ավտոբուս, տրամվայ, տրոլեյբուս, մեքենա
3. – Երբ է մեկնում քո գնացքը: Դու չե՞ս ուշանա: – Ոչ, դեռ ժամանակ կա: Ավտոբուսով շուտ կհասնենք:	գնացք → օդանավ, նավ ավտոբուս → տրոլեյբուս, մեքենա, տաքսի, հեծանիվ
4. – Քեռիդ այսօ՞ր է գալիս: Ե՞րբ է տեղ հասնում նրա նավը: – Նավով չի գալիս: Իր մեքենայով է գալիս:	նավ → գնացք, օդանավ
5. – Քեռուդ աղջիկն արդեն տա՞նն է: Ու՞ր է: – Քնած է: Մեքենայից իջնելուց հետո շատ հոգնած էր:	մեքենա → նավ, գնացք, օդանավ, հեծանիվ

Գ) Составьте предложения. Пользуйтесь глаголами գնալ, գալ (прійти), մեկնել
"Գնալ, գալ, մեկնել" բայերն օգտագործելով կազմեք նախադասություններ:

Ամեն օր Արան ու Սոսը դպրոցից ավտոբուսով են տուն գալիս: 

Ե՞րբ	ո՞վ	որտեղի՞ց	ինչո՞վ	ու՞ր
✓ Ամեն օր	Բաբկենը	Մոսկվա	տաքսի	✓ տուն
Այս առավոտ	✓ Արան ու Սոսը	✓ դպրոց	գնացք	թատրոն
Երեկոյան	ընկերուհիս	Երևան	օդանավ	Եգիպտոս
Ձմռանը	ընկերներս ու ես	տուն	նավ	Էրեբունի
Այս աշուն	Ես	Հունաստան	ոտք	Էջմիածին
Մայիսի 16-ին		համալսարան	տրոլեյբուս, տրամվայ	Արցախ
Ուրբաթ օրը		Աշտարակ	✓ ավտոբուս	Կիև
Ամսի յոթին		Բեյրութ	հեծանիվ	Լեհաստան

Դ)  Ответьте на вопросы: Պատասխանե՛ք հարցերին.

Ինչպե՞ս (ինչո՞վ) եք դուք սովորաբար գնում աշխատանքի:

Ինչպե՞ս (ինչո՞վ) եք դուք վերադառնում աշխատանքից:

Ինչպե՞ս (ինչո՞վ) եք դուք գնում թատրոն:

Ի՞նչ են նստում Արան ու Սոսը, որպեսզի գնան Էջմիածին:

Ի՞նչ եք նստում Մոսկվայից Երևան գնալու համար:

Ի՞նչ է նստում Բաբկենը համալսարանից Էրեբունի գնալու համար:

Ե) ☞

չվացուցակ – расписание полетов
ուղերթ – рейс
թռիչք – полет, вылет
ժամանում – прибытие
ինքնաթիռ – самолет
հեղադարձ – обратный (ծ=g)



"Զվարթնոց"
օդանավակայանը



Ответьте на вопросы (см. расписание самолетов):

Պատասխանե՛ք հարցերին (տե՛ս ինքնաթիռների չվացուցակը).

Մոսկվայից

Մոսկվա

	ուղերթ	թռիչք	ժամանում	ուղերթ	թռիչք	ժամանում
Երևան	909	14:25	18:00	910	09:45	11:35
Երևան	893	17:35	21:00	894	14:15	16:05
Գյումրի	919	11:35	15:35	920	08:15	10:25

Ժամը քանիսի՞ն է մեկնում 910 ուղերթի Երևան – Մոսկվա ինքնաթիռը, իսկ ե՞րբ է այն տեղ հասնում: Ե՞րբ է մեկնում 909 ուղերթի ինքնաթիռը Մոսկվայից Երևան: Ըստ չվացուցակի ժամը քանիսի՞ն է այն ժամանում Երևան: Ո՞ր ինքնաթիռն է մեկնում Գյումրի, ո՞ր ուղերթի ինքնաթիռը: Իսկ Գյումրի - Մոսկվա ուղերթ կա՞: Ամեն օ՞ր: Կարծես, ոչ. շաբաթը երկու կամ երեք անգամ միայն: Ժամը քանիսի՞ն է այն Մոսկվա հասնում: Ե՞րբ է դուրս գալիս Գյումրիից:



Поставьте вопросы к следующим предложениям:

Հետևյալ նախադասությունների համար հարցեր տվե՛ք:

Ութ հարյուր իննսուներեք ուղերթի Մոսկվա – Երևան ինքնաթիռը Մոսկվայից դուրս է գալիս ժամը տասնյոթն անց երեսունհինգին և Երևան է ժամանում երեկոյան իննին, այսինքն՝ ժամը քսանմեկին: Հետադարձ ուղերթի ինքնաթիռը ութ հարյուր իննսունչորսը, Երևանից մեկնում է երկուսն անց տասնհինգին, այսինքն՝ տասնչորսն անց տասնհինգ և Մոսկվա է հասնում տասնվեցն անց հինգ րոպե:


31. Ա) ☞

նրբանցք – переулок (բ=փ)
փողոց – улица
պողոտա – проспект
խճուղի – шоссе
հրապարակ – площадь
հյուրանոց – гостиница
թանգարան, տուն-թանգարան – музей, дом-музей
պատկերասրահ – галерея
կայարան – станция (метро), вокзал
ղեսպանատուն – посольство
գերեզմանոց – кладбище
եկեղեցի – церковь
ուղիղ գնալ, գնալ մինչև – идти прямо, идти до
աջ (ջ=չ) / ձախ թեքվել – повернуть направо / налево

Բ)  և  1. Դուր "Աճի" հյուրանոցում եք.

– Ինչպե՞ս գնամ Մատենադարան:

– Դուրս եք գալիս հյուրանոցից, Սայաթ-Նովայի պողոտայով գնում եք աջ՝ մինչև Մաշտոցի պողոտան: Այնտեղ թեքվում եք դեպի աջ և պողոտայի վերջում կտեսնեք Մատենադարանը:



2. Դուք Մատենադարանում եք.

– Ինչպե՞ս գնամ Սարյանի տուն-թանգարանը:

– Մաշտոցի պողոտայով գնում եք մինչև Մուկոյան փողոցը և այդ փողոցով ուղիղ գնում եք մինչև Թումանյան փողոցը: Աջ կողմում կտեսնեք Թումանյանի տուն-թանգարանը և կշարունակեք այդ փողոցով գնալ. դա արդեն կլինի Սարյան փողոցը: Ձախ կողմում կտեսնեք Սարյանի տուն-թանգարանը:


3. Դուք Սարյանի տուն-թանգարանում եք.

– Ինչպե՞ս գնամ Մանկական պատկերասրահ:

– Դուրս եք գալիս տուն-թանգարանից, Սարյան փողոցով գնում եք աջ մինչև Թումանյան փողոցը: Այդտեղ աջ եք թեքվում և գնում Թումանյան փողոցով: Ուղիղ գնում եք մինչև Աբովյան փողոցը, Աբովյան փողոցով ձախ եք թեքվում և հասնում եք Սայաթ-Նովայի պողոտան: Աբովյան – Սայաթ-Նովա խաչմերուկում, ձախ կողմում

կտեսներ Մանկական պատկերասրահը, իսկ դիմացը "ԱՃԻ" հյուրանոցն է:

32. Помогите найти: Օգնե՛ք գտնել.




– Ես մետրոյով գալիս եմ Լուրյանկա կայարանը: Ինչպե՞ս գտնեմ հայկական դեսպանատունը:

Можете воспользоваться словами:

Լուրյանկայա հրապարակը
Մյասնիցկայա փողոց

Կրիվոկոլեննի նրբանցք
Հայկական նրբանցք




– Ինչպե՞ս գտնեմ հայկական եկեղեցին: Ես մետրոյով գալիս եմ "1905 թվականի փողոցը" կայարանը:

Можете воспользоваться словами:

"1905 թվականի փողոցը" կայարան
1905 թվականի փողոց
Բոլշայա Դեկաբրսկայա փողոց
(Մեծ Դեկտեմբերյան փողոց)

Զվենիգորոդյան նրբանցք
Սերգեյ Մակեևի փողոց
Վազանկովո գերեզմանոց
Հայկական գերեզմանոց



Մտուզարք

1. Сделайте правильный выбор: ճիշտ ընտրությունը կատարեք.

1. Ի՞նչ են անում այստեղ այս ...:	Ա. մարդիկ: Բ. մարդիկը: Գ. մարդը:
2. Մեր հարևանի ... քույրը բժշկուհի է:	Ա. կնի Բ. կնոջ Գ. կանանց
3. Ես քեզ խնդրում եմ, որ դու այս երեկո ժամանակին տուն ...	Ա. ես գալիս: Բ. գաս: Գ. կգաս:
4. Եթե ժամը ութին ... կայարան, մեր գնացքը կգնա, մենք չենք հանդիպի:	Ա. չիսանք Բ. չեք հասնում Գ. չեք հասնի
5. Եթե փողոցի անկյունում աջ թեքվեք, ... մեր շենքը:	Ա. տեսնում եք Բ. տեսնեք Գ. կտեսնեք
6. Եթե արագ ..., ... եղբորդ հասնել:	Ա. վազես, կարողանաս Բ. վազես, կկարողանաս Գ. կվազես, կկարողանաս
7. Եթե հեռուստացույց ... ու թերթ ..., ոչ մի նորություն ...:	Ա. չնայես, չկարդաս, չիմանաս Բ. չնայես, չես կարդա, չես իմանա Գ. չնայես, չկարդաս, չես իմանա
8. Հայրիկի աշխատասենյակում ...	Ա. չեն խաղա: Բ. չխաղան: Գ. չեն խաղան:
9. Եթե ... գնան զբոսանքի, մենք էլ նրանց կմիանանք:	Ա. Կարոենք Բ. Կարոյենք Գ. Կարոյենքը
10. Ի՞նչ նորություն կա ...:	Ա. ձերոնքից Բ. ձերոնցից Գ. ձեզոնցից
11. Ի՞նչ կաթսա, ես ... կաթսա էլ չունենմ:	Ա. ոչինչ Բ. ոչ մեկ Գ. ոչ մի
12. – Ո՞վ է ուզում թեյ: – ..., մենք սուրճ ենք ուզում:	Ա. Ոչ մեկը Բ. Ոչ ոքը Գ. Ոչինչ
13. – Ուրեմն, ... թեյ չի ուզում, բոլորն էլ սու՞րճ են ուզում:	Ա. ոչ մեկ Բ. ոչ ոք Գ. ոչինչ
14. Անձրև է գալիս, անձրևանոցդ վերցրու, պահարանի ... է:	Ա. մեջ Բ. մեջտեղն Գ. միջև
15. – Ու՞ր կախեն այս նկարը: – Ես կարծում եմ, որ բազմոցի ... լավ կլինի:	Ա. վեր Բ. վերևը Գ. վրա

2.  Ответьте на вопросы: Պատասխանե՞ք հարցերին.

Ա) Ինչո՞վ կարելի է ջուր բերել:

Ջամբյուղով, դուլյով, բաժակով, պատառաքաղով, գդալով, ափսեով, քամիչով, կաթսայով, քերիչով, թեյամանով, շշով, ձագարով, շերեփով, սրճեփով:

Բ) Ինչո՞վ կարելի է մեխ խփել (забить гвоздь):

Արդուկով, կացնով, պտուտակով, մուրճով, սղոցով, թավայով, ափսեով, բաժակով, դանակով, կաթսայով, ածելիով:

Գ) Ի՞նչ է հարկավոր կարելու համար:

Մկրատ, պտուտակահան, թել, ասեղ, կոճակներ, կարի մեքենա, գրտնակ, արդուկ:

Դ) Որտե՞ղ են լինում, բնակարանու՞մ, թե՞ շենքում:

Աղբատար խողովակը, աղբահանը, աղբի դուլը, միջանցքը, խոհանոցը, զուգարանը, վերելակը, աստիճանները, լոգասենյակը, խորդանոցը:

Ե) Որտե՞ղ են լինում, տա՞նը, թե՞ բակում:

Ճաղիկները, սառնարանը, օջախը, սալօջախը, մանղալը, մահճակալը, բազկաթռռը, ճաշասեղանը, գրասեղանը, գրադարակները, ճոճանակը, հեծանիվը:

Ձ) Ու՞ր դնենք այս իրերը:

Միջանցքու՞մ, խոհանոցու՞մ, խորդանոցու՞մ, լոգասենյակու՞մ, հյուրասենյակու՞մ, ճաշասենյակու՞մ, մնջարանու՞մ, թե՞ աշխատասենյակում:


Լվացարանի կոնքը, մահճակալը, ամանեղենի պահարանը, զգեստապահարանը, աթոռները, բազմոցը, կախիչը, հայելին, գրապահարանը, սառնարանը, պատի ժամացույցը, բազկաթռռը, գորգը, սալօջախը, կացինը, սղոցը, լոգարանը, պտուտակահանը, պտուտակներն ու մեխերը, գրասեղանը, բյուրեղապակյա ջահը:

Է) Ե՞րբ են հագնում (ե՞րբ են հարկավոր), գարնա՞նը, ամռա՞նը, աշնա՞նը, թե՞ ձմռանը:

Վերարկուն, անձրևաթափը, բոկոտիկները, շալվարը, թեթև շրջագգեստը, բաճկոնակը, լողագգեստը, գլխարկը, երկարաճիտ կոշիկները, փողկապը, գլխաշորը, թաշկինակը, ծղոտե գլխարկը:

Ը) Ինչպե՞ս են ճանապարհորդում, ինչպե՞ս են գնում աշխատանքի:

Օդանավով, ոտքով, հեծանվով, տրոլեյբուսով, գնացքով, նավով, ձիով, տրամվայով, ավտոբուսով, տաքսիով:

3. Ա) 

Դպրոցը՝ Մուրատ Ռափայելյան¹ վարժարանը, 17-րդ դարի սկզբներին² կառուցված Ձենոբիա տոհմի պալատն էր: Մխիթարյանները այդ հնադարյան պալատը դպրոց էին դարձրել: Դպրոցի գրադարանը Վենետիկի հարուստ գրադարաններից մեկն էր:


Դպրոցի ռեժիմը խիստ էր: Յուրաքանչյուր աշակերտ ուներ իր առանձին ննջարանը, որի մեջտեղում դրված էր ընկուզենուց մի պարզ մահճակալ, առանց բարձի, սավանի և վերմակի. պառկում էինք չոր տախտակի վրա: Սենյակը դուռ չուներ: Մինչև լույս միջանցքում դանդաղ ման էր գալիս հերթապահ հսկիչը և սենյակները մտնելով՝ ստուգում էր աշակերտների քունը:

Շենքի ջերմաստիճանը նույնն էր ամառ թե ձմեռ: Ժամը վեցին արթնացնում էին բոլորիս, որից հետո կանգնում էինք մեր անդուռ ննջարանի շենքին, և հերթապահ հսկիչը, շլանգը ձեռքին, սառը ջրով ողողում էր մեզ: Այդ սպարտական լոգանքից հետո մի տասը րոպե վազում էինք ու մի քսան րոպե մարզանք անում: Դրանից հետո վերադառնում էինք մեր սենյակները և, հագնվելով, գնում ճաշարան: Այս բոլորից հետո միայն սկսում էին դասերը:

Ըստ Վ. Փափազյանի՝ «Հեղադարձ հայացք»

¹ Մուրատ Ռափայելյան – западноармянский вариант; в восточноармянском должно быть Մուրադ Ռաֆայելյան.

² 17-րդ դարի սկզբներին – примерно в начале XVII века



Բառեր

վարժարան – лицей
կառուցված – построенный
տոհմ – род
պալատ – дворец
հնադարյան – древний
դարձնել – превратить (ծ=g)
հարուստ – богатый
ռեժիմ – режим
յուրաքանչյուր – каждый
պարզ – простой, просто
պառկել – ложиться
լույս – свет, ձ. утро, մինչև ~ – до утра
ման գալ – ходить, прогуливаться

հերթապահ – дежурный
հսկիչ – надзиратель
քուն – сон
ջերմաստիճան – градус (температура)
արթնացնել – разбудить
անդուռ – без дверей
շենք – порог
շլանգ – шланг
ողողել – орошать, полоскать
սպարտական – спартанский
լոգանք – купание
սկսել – начинать, -ся
հեղադարձ – обратный, ретроспективный (ծ=g)

Գ) Восстановите правильный порядок:
Վերականգնե՞ք ճիշտ կարգը.

1. Աշակերտները հազնվում էին:
2. Մուրատ Ռափայելյան վարժարանում սկսում էին դասերը:
3. Աշակերտները սպարտական լոգանք էին ընդունում:
4. Աշակերտները պառկում էին չոր տախտակի վրա, առանց բարձի, սավանի ու վերմակի:
5. Աշակերտները կանգնում էին իրենց անդուռ ննջարանների շենքին:
6. Մխիթարյանները 17-րդ դարում կառուցված Ձենորբիա տոհմի պալատը դարձնում են դպրոց:
7. Հերթապահ հսկիչը վերցնում էր սառը ջրով շլանգը:
8. Միջանցքում ման էր գալիս հերթապահ հսկիչը և ստուգում էր աշակերտների քունը:
9. Աշակերտները մի տասը բոպե վագում էին ու մի քսան բոպե մարզանք էին անում:
10. Մուրատ Ռափայելյան վարժարանում Մխիթարյանները հարուստ գրադարան են հավաքում:
11. Աշակերտներն արթնանում էին ժամը վեցին:
12. Դպրոցի ռեժիմը խիստ էր:
13. Աշակերտները վերադառնում էին իրենց սենյակները:
14. Աշակերտները գնում էին ճաշարան:

Урок 13. Տախներեբերորդ դաս

Грамматика

Структура армянского глагола.

Прошедшее простое время: образование и употребление.

Суффиксы -ալան, -ութուն (продолжение).

Тексты

Ամենալավ վկայականը (Լուսաբերից)

Մեծապատիվ մուրացկանները (Հակոբ Պարոնյան)

Детские стихи

Անսովոր մարդը (Հենրիկ Սևան)

Структура армянского глагола Բայերի կազմութունը



Для того, чтобы образовать все глагольные формы в армянском языке, т.е. все причастия и времена, необходимо знать две основы армянского глагола: **основу настоящего времени** и **основу прошедшего времени**.

Основа настоящего времени, как уже известно, образуется отбрасыванием окончания неопределенной формы глагола **-ել**, **-ալ**. С ее помощью строится причастие настоящего времени (для образования настоящего времени и прошедшего несовершенного), формы желательного и сослагательного наклонений.

Для определения основы прошедшего времени следует ознакомиться со структурой армянского глагола. В частности, для образования прошедшего простого времени глаголов необходимо уметь различать глаголы **по составу** и следовать правилам образования прошедшего простого времени каждого типа глаголов.

Различаются простые глаголы (**պարզ բայեր**) и глаголы с суффиксами, которые ставятся между корнем и окончанием глагола (**ածանցավոր բայեր**). Среди глаголов с суффиксами различаются три группы глаголов. Так:

простые глаголы
спряжения **-ել** и **-ալ**
(**պարզ բայեր**)

глаголы с суффиксами
(**ածանցավոր բայեր**).

с суффиксами страдательно-возвратно- взаимного значения (կրավորական բայեր)	с суффиксом -վ- с суффиксами -ացվ- , -եցվ- , -ցվ- образованные от -ացն- , -եցն- , -ցն-
с незначимыми суффиксами (սուկածանցավոր բայեր)	1. с суффиксами -ն- , -չ- 2. с суффиксами -ան- , -են-
с суффиксами каузативного значения (պատճառական ածանցներով բայեր)	с суффиксами -ացն- , -եցն- , -ցն-

NB: Каузативные и страдательно-возвратные суффиксы – грамматические, они показывают направление действия. А суффикс **-ան-** в современном армянском языке – весьма продуктивный *словообразовательный* суффикс, при помощи которого можно построить глаголы от других частей речи с примерным значением “превратиться, преобразоваться, стать чем-либо, каким-либо”. Так,

- ուժեղ – ուժեղանալ (стать сильным)
- թույլ – թուլանալ (слабеть)
- ուրախ – ուրախանալ (радоваться)
- մեծ – մեծանալ (расти)
- բարձր – բարձրանալ (подняться)
- հպարտ – հպարտանալ (гордиться)
- հիվանդ – հիվանդանալ (заболеть)
- վերջ – վերջանալ (кончатся)
- ընկեր – ընկերանալ, բարեկամ – բարեկամանալ (подружиться),
- ծանոթ – ծանոթանալ (познакомиться)
- մի – միանալ (соединиться, объединиться).

Рассмотрим три регулярных типа образования основы прошедшего времени с подтипами (по структуре глагола).

Основа прошедшего времени образуется заменой окончания неопределенной формы **-լ** суффиксом **-ց** (**-լ** → **-ց**):

1 **1** у простых глаголов спряжения **-ել**: գրել → գրեց-, բերել → բերեց-, մեկնել → մեկնեց-.

1 **2** у простых глаголов спряжения **-ալ**: կարդալ → կարդաց-, խաղալ → խաղաց-, մնալ → մնաց-.

1 **3** у глаголов с суффиксом страдательно-возвратно-взаимного значения **-վ** (варианты **-ացվ**-, **-եցվ**-, **-ցվ**): բացվել → բացվեց-, լվացվել → լվացվեց-.

2 **1** Глаголы с незначимыми суффиксами **-ն**-, **-չ**- утрачивают эти суффиксы: մտնել → մտ-, գտնել → գտ-, հազնել → հազ-, տեսնել → տես-, առնել → առ-, թռնել или թռչել "летать" → թռ-, փախնել или փախչել "убегать" → փախ-, հասնել → հաս-.

2 **2** В глаголах с незначимыми суффиксами **-են**-, **-ան**- при образовании основы прошедшего времени происходит чередование **-են**- → **-եց**- и **-ան**- → **-աց**-: մոտենալ → մոտեց-, հեռանալ → հեռաց-, վախենալ → վախեց-, հասկանալ → հասկաց-, մոռանալ → մոռաց-.

3 В глаголах с суффиксами каузативного значения **-ացն**-, **-եցն**-, **-ցն**-, при образовании основы прошедшего времени происходит чередование **-ացն**- → **-ացր**-, **-եցն**- → **-եցր**-, **-ցն**- → **-ցր**-: բարցնել → բարցր-, տխրեցնել → տխրեցր-, բարձրացնել → բարձրացր-, մեծացնել → մեծացր-, и по аналогии հարցնել → հարցր-, (վերա)դարձնել → (վերա)դարձր- (**ձ**=**ց**).

Прошедшее простое совершенное время

Անցյալ կախարյալ



Прошедшее простое время (անցյալ կախարյալ), в отличие от прошедшего несовершенного времени (անցյալի անկախար), обозначает совершенное, законченное в прошлом действие, лишённое длительности. Прошедшее простое время, как показывает его название, простое, т.е. образуется не при помощи какого-либо причастия и вспомогательного глагола, а глагольными окончаниями.

В системе изъявительного наклонения это единственное простое время. Вспомните:

- Ինչու՞ կանգնեցինք: – Հասանք:
- Չեր կաթսան երեկոյան ծնեց: – Չեր կաթսան մեռավ:
- Ուրեմն չկարողացա՞ր գտնել: – Կարողոցա, ես է:

В разговорной речи прошедшее простое время употребляется также для обозначения ближайшего будущего. Ср. русск. "ну я пошел" – դե ես գնացի.

Образование прошедшего простого времени

Для образования прошедшего простого времени простых глаголов и глаголов с суффиксом страдательно-возвратно-взаимного значения **-վ-** (варианты **-ցվ-**, **-եցվ-**, **-ացվ-**) конечное **-լ** заменяется окончаниями **-ցի**, **-ցիր**, **-ց**, **-ցինք**, **-ցիք**, **ցին**, где **-ց** и есть показатель прошедшего времени.

① ① գրել		① ② կարդալ	
утвердительная форма	отрицательная форма	утвердительная форма	отрицательная форма
հաստատական ձև	ժխտական ձև	հաստատական ձև	ժխտական ձև
գրեցի	չգրեցի	կարդացի	չկարդացի
գրեցիր	չգրեցիր	կարդացիր	չկարդացիր
գրեց	չգրեց	կարդաց	չկարդաց
գրեցինք	չգրեցինք	կարդացինք	չկարդացինք
գրեցիք	չգրեցիք	կարդացիք	չկարդացիք
գրեցին	չգրեցին	կարդացին	չկարդացին
հազնվել (զ=ք) ① ③		լվացվել	
հազնվեցի	չհազնվեցի*	լվացվեցի	չլվացվեցի
հազնվեցիր	չհազնվեցիր	լվացվեցիր	չլվացվեցիր
հազնվեց	չհազնվեց	լվացվեց	չլվացվեց
հազնվեցինք	չհազնվեցինք	լվացվեցինք	չլվացվեցինք
հազնվեցիք	չհազնվեցիք	լվացվեցիք	չլվացվեցիք
հազնվեցին	չհազնվեցին	լվացվեցին	չլվացվեցին

Для образования прошедшего простого времени глаголов с незначимыми суффиксами **-ւ-, -չ-, -են-, -ան-** к основе прошедшего времени прибавляются окончания **-ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան**.

②① հազնել (զ=ք)		②② հասկանալ	
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև	утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև
հազա	չհազա*	հասկացա	չհասկացա*
հազար	չհազար	հասկացար	չհասկացար
հազավ	չհազավ	հասկացավ	չհասկացավ
հազանք	չհազանք	հասկացանք	չհասկացանք
հազաք	չհազաք	հասկացաք	չհասկացաք
հազան	չհազան	հասկացան	չհասկացան

!*Т.к. придыхательный h в армянском языке – полноценный согласный, произнесите отрицательные формы этих глаголов со скрытым слогом չհազնվեցի, չհազա, չհասկացա.

Для образования прошедшего простого времени глаголов с суффиксами каузативного значения **-ացն-, -եցն-, -ցն-** к основе прошедшего времени прибавляются окончания **-ի, -իր, -եց, -ինք, -իք, -ին**. В разговорной речи встречаются также формы **-եցի, -եցիր, -եց, -եցինք, -եցիք, -եցին**. Так спрягаются также очень распространенные глаголы **հարցնել** и **(վերա)դարձնել**.

③ բարձրացնել (ծ=ց)	
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև
բարձրացրի / բարձրացրեցի	չբարձրացրի / չբարձրացրեցի
բարձրացրիր / բարձրացրեցիր	չբարձրացրիր / չբարձրացրեցիր
բարձրացրեց	չբարձրացրեց
բարձրացրինք / բարձրացրեցինք	չբարձրացրինք / չբարձրացրեցինք
բարձրացրիք / բարձրացրեցիք	չբարձրացրիք / չբարձրացրեցիք
բարձրացրին / բարձրացրեցին	չբարձրացրին / չբարձրացրեցին
հարցնել	
հարցրի / հարցրեցի	չհարցրի / չհարցրեցի
հարցրիր / հարցրեցիր	չհարցրիր / չհարցրեցիր
հարցրեց	չհարցրեց
հարցրինք / հարցրեցինք	չհարցրինք / չհարցրեցինք
հարցրիք / հարցրեցիք	չհարցրիք / չհարցրեցիք
հարցրին / հարցրեցին	չհարցրին / չհարցրեցին
վերադարձնել (ծ=ց)	
վերադարձրի / վերադարձրեցի	չվերադարձրի / չվերադարձրեցի
վերադարձրիր / վերադարձրեցիր	չվերադարձրիր / չվերադարձրեցիր
վերադարձրեց	չվերադարձրեց
վերադարձրինք / վերադարձրեցինք	չվերադարձրինք / չվերադարձրեցինք
վերադարձրիք / վերադարձրեցիք	չվերադարձրիք / չվերադարձրեցիք
վերադարձրին / վերադարձրեցին	չվերադարձրին / չվերադարձրեցին

4 Запомните спряжение следующих неправильных глаголов в прошедшем простом времени. Даны только утвердительные формы этих глаголов в прошедшем простом времени, т.к. образование отрицательной формы не составляет исключения.

լինել	ուրել	գալ	տրանել	ասել	լվանալ	անել
եղա	կերա	եկա	տարա	ասացի ¹	լվացի ²	արեցի
եղար	կերար	եկար	տարար	ասացիր	լվացիր	արեցիր
եղավ	կերավ	եկավ	տարավ	ասաց	լվաց	արեց
եղանք	կերանք	եկանք	տարանք	ասացինք	լվացինք	արեցինք
եղաք	կերաք	եկաք	տարաք	ասացիք	լվացիք	արեցիք
եղան	կերան	եկան	տարան	ասացին	լվացին	արեցին

դնել	տրալ	թողնել	(վերա)դառնալ	վեր կենալ
դրեցի	տվեցի	թողեցի	դարձա ³	վեր կացա
դրեցիր	տվեցիր	թողեցիր	դարձար	վեր կացար
դրեց	տվեց	թողեց	դարձավ	վեր կացավ
դրեցինք	տվեցինք	թողեցինք	դարձանք	վեր կացանք
դրեցիք	տվեցիք	թողեցիք	դարձաք	վեր կացաք
դրեցին	տվեցին	թողեցին	դարձան	վեր կացան

¹ А не штегі.

² Как бы от инфинитива լվալ.




³ ձ=g. Глагол դառնալ имеет также формы: դառա, դառար, դառավ, դառանք, դառարք, դառան.

Упражнения

Վարժություններ

1. Образуйте прошедшее простое время следующих глаголов: Դետևյալ բայերը գրե՛ք անցյալ կատարյալ ժամանակով.

Ա) Պարզ և կրավորական բայեր (простые и страдательные глаголы с суффиксом -վ-):

1 ¹ -ել → -եցի	1 ² -ալ → -ացի	1 ³ -վել → -վեցի -ացվել → -ացվեցի -եցվել → -եցվեցի
<i>ամաչեցի...</i> 	<i>գնացի...</i> 	<i>բացվեցի, զգացվեցի,....</i> 

Ամաչել, աշխատել, առաջարկել, առարկել, արգելակել, բացել, բացվել, բերել, գնալ, գրել, գրվել, եփել, երևալ, զգալ, զգացվել, ընդունել, ընդունվել, ժամանել, ժպտալ, լարել, լարվել, լվանալ, լվացվել, խաղալ, խմել, խնդրել, խոսել, խորովել, ծածկել, ծածկվել, ծամել, ծիծաղել, կարդալ, կռվել, կրկնել*, կրկնվել, համբուրել, համբուրվել, համոզել, համոզվել, հանդիպել, հավատալ, հետևել, հիշել, հուզել, հուզվել, ճանաչել, մեկնել, մնալ, մոռացվել, նայել, նստել, շարունակել, շարունակվել*, շարտել, ուղարկել, պատասխանել, պատրաստել, պատրաստվել, սիրահարվել, սիրել, սովորել, սպասել, ստուգել, վաճառել*, վաճառվել, տապակել, տխրել, փակել, փակվել*, փոխանակել, օգնել:

*Употребительно только третье лицо.

Բ) Սոսկածանցավոր բայեր (глаголы с незначимыми суффиксами -ն-, -չ-, -ան-, -են-):

2¹

2²

-նել → -ա	-չել → -ա	-անալ → -ացա	-ենալ → -եցա
<i>անցա,...</i>	<i>թռա,...</i>	<i>բարեկամացա,...</i>	<i>մոտեցա,...</i>

Անցնել, առնել, բարեկամանալ, բարկանալ, բարձրանալ, գտնել, գայրանալ, ընկնել, թռչել, իմանալ, իջնել, հագնել, հասկանալ, հասնել, հեռանալ, հիվանդանալ, մեծանալ, մեռնել, միանալ, մոռանալ, մոտենալ, մտնել, ուզենալ, ուրախանալ, ստանալ, վախենալ, վերջանալ, տեսնել:

Գ) Պատճառական բայեր (причинные глаголы с суффиксами -ացն-, -եցն-, -ցն- и аналогичные им, типа հարցնել, դարձնել):

3


-ացնել → -ացրի	-եցնել → -եցրի	-ցնել → -ցրի
<i>բարձրացրի,...</i>	<i>դադարեցրի,...</i>	<i>թաքցրի,...</i>

Բարձրացնել, դադարեցնել, թաքցնել, թոցնել, ծիծաղեցնել, կանգնեցնել, հագցնել, հասկացնել, հավատացնել, հարցնել, հեռացնել, հիշեցնել, մեծացնել, մոտեցնել, մտցնել, սովորեցնել, վախեցնել, վերցնել, տխրեցնել, փախցնել:

Դ) 4 Բացառություններ (исключения):

Անել (ն → ռ), ասել (-ա-), գալ (եկ-), դառնալ (դարձ-), դնել (ն → ռ), թողնել (-եց), լինել (եղ-), վեր կենալ (կաց-), տալ (տվ-), տանել (տար-), ուտել (կեր-):

2. Ա) 1¹ և 1³



Ես աղբյուրից սառը ջուր եմ խմում:



Ես աղբյուրից սառը ջուր խմեցի:

Ես աղբյուրից սառը ջուր եմ խմում:

Դու նրան երկա՞ր ես սպասում:

Մենք ճանապարհին կանգնում ենք ու աղբյուրից սառը ջուր ենք խմում:

Մայրը զգույշ ծածկում է քնած երեխային:

Երեկոյան դու պառկում ես և անմիջապես քնում ես:

Նա արագ դասերը սովորում է ու վազում է բակ:

Դուք լուսամուտը բացում եք և դուրս եք նայում, բայց ինձ չեք ճանաչում:

Վռանշապուհը նախ ծիծաղում է, ապա տխրում է, հետո խնդրում է Մաշտոցին իր անունը գրել. Մաշտոցը գրում է իր անունը:

Մենք նրան աթոռ ենք առաջարկում և կոնֆետ ենք հյուրասիրում, բայց նա նույնիսկ չի նստում, այլ անմիջապես խոսում է քննությունից:

Այս ամիս մենք մեր բնակարանը փոխանակում ենք:


Իսկ ես այս շաբաթ մեքենաս վաճառում եմ ու փողն ուղարկում որդուս:


Այդ լուրը լսելով Տիգրանը լարվում է ու պատրաստվում է կռվել իր եղբոր հետ:

բ)  ①②

Անահիտը չի հավատում, թե Երևանում Գարնանային փողոց կա:

→



Անահիտը չհավատաց, թե Երևանում Գարնանային փողոց կա: 

Անահիտը չի հավատում, թե Երևանում Գարնանային փողոց կա:

Այդ կատակից նա իրեն լավ է զգում ու ժպտում է:

Ես այս գիրքը երեք ժամում եմ կարդում:


Այդ պահին աջ կողմում երևում է Մասիսի սպիտակ գագաթը:

– Երեխաներ, այս առավոտ շատ երկար եք մնում բակում:

– Մայրիկ, մենք այնքան լավ ենք խաղում:


Կեսօրին մայրիկը գնում է աշխատանքի և մենք մնում ենք տանը մենակ:

Մի քանի օր հետո Պըլը Պուղու հարևանը նորից փողի կարիք է զգում և գնում է Պըլը Պուղու մոտ:

գ)  ②①

Այս առավոտ նա հագնում է իր սև կոշիկները:

→



Այս առավոտ նա հագավ իր սև կոշիկները: 

Այս առավոտ նա հագնում է իր սև կոշիկները:

Մենք ճանապարհին մի հյուրանոց ենք տեսնում ու կանգ ենք առնում մի քիչ հանգստանալու:

Բարձր նպատակին չի հասնում ու ընկնում է հատակին:

Նա մտնում է սենյակ և զարմացած կանգ է առնում:

Ինչու՞ ես փախչում, սա բարի շուն է:

Ես փողոցն անցնում եմ, բայց այդպես էլ չեմ գտնում ավտոբուսի կանգառը:


Կոմիտասը մեռնում է 1935թ. Փարիզում:

դ)  ②②

Տերն իմանում է, որ բաղնիսում շատ մարդ կա և խիստ բարկանում է ծառայի վրա:

→



Տերն իմացավ, որ բաղնիսում շատ մարդ կա և խիստ բարկացավ ծառայի վրա: 

Տերն իմանում է, որ բաղնիսում շատ մարդ կա և խիստ բարկանում է ծառայի վրա:

Ամձրևը վերջանում է և մենք բարձրանում ենք սարը:

Ով, սիրուն, սիրուն, ինչու՞ ես մոտենում, սրտիս գաղտնիքը ինչու՞ ես իմանում:

Նա չի վախենում, երեկոյան հեռանում է տնից, բարձրանում է սարը և միանում է ֆիդայիներին:

Այդ ամառ նրանք ծանոթանում են ու անմիջապես բարեկամանում են:

Ամպը մեծանում է, քամին ուժեղանում է:

Սառը ջուր խմելուց հետո նա հիվանդանում է:

ե)  ③



Այդ ո՞վ է, – հարցնում են ներսից: → Այդ ո՞վ է, – հարցրին ներսից:

– Այդ ո՞վ է, – հարցնում են ներսից:

Ես արագ վերցնում եմ նամակը և թաքցնում եմ այն գործերի ետևում:

Վարժապետը այդպես էլ գրել-կարդալ չի սովորեցնում Պըլը Պուղուն:

Դուք ինձ հիշեցնում եք իմ տատիկին:

Դու բուլդրին ծիծաղեցնում ես քո պատմություններով:

Վարորդը դադարեցնում է ընթացքը և կանգնեցնում է մեքենան:

Գաբրիելը բարձրացնում է գլուխը ու հարցնում է որդուն.

“Ստեփան, դու ծովեզերքի քարտեզի մասշտաբը մեծացնու՞մ ես և պակասը լրացնու՞մ ես”:

Աշակերտները մոտեցնում են իրենց աթոռները ուսուցչի սեղանին, որ լավ տեսնեն քարտեզը:

զ)  ④



Այս անգամ հարևանը փողը չի դնում բարձի տակ:



Այս անգամ հարևանը փողը չդրեց բարձի տակ:

Այս անգամ հարևանը փողը չի դնում բարձի տակ:

Վարորդը ազդանշան է տալիս, բայց կանգ չի առնում ու ետ չի դառնում:

Առավոտյան ծյուն է գալիս ու ես դուրս չեմ գալիս տնից:

Մայրիկը երեխաներին չի թողնում բակ գնալ, երեխաներն էլ լաց են լինում:

Մենք ամեն ինչ ասում ենք մեր ուսուցչուհուն, և նա չի զայրանում:

Տղաները լավաշն ու պանիրը տանում են այգի ու այնտեղ ախորժակով ուտում են:

Այդ լսելով, ես վեր եմ կենում ու լուռ դուրս եմ գալիս սենյակից:

Իմ վերջին քննությունից հետո հայրս ուրախությունից խորոված է անում:



Ամենալավ¹ վկայականը

Մի գիտնական պատրաստվում էր կարևոր ճանապարհորդություն կատարելու: Նրան օգնական էր հարկավոր: Շատ մարդ եկավ-գնաց, վերջապես գիտնականը մեկին ընտրեց:

– Ասացե՛ք², խնդրեմ, – հարցրեց մի ծանոթ, – ինչու՞ սրան³ ընտրեցիք, երբ ոչ մի վկայական չունեի: Մինչդեռ մյուսները լավ վկայականներով եկան, բայց դուք նրանց մերժեցիք:

– Միսավում եք, – պատասխանեց գիտնականը, – այս երիտասարդը շատ լավ վկայականներ ունի: Սենյակ մտնելուց առաջ ոտքերը մաքրեց և դուռը ծածկեց առանց աղմուկ հանելու, ուրեմն մաքրասեր է և կարգապահ: Իր նստած տեղից անմիջապես բարձրացավ և աթոռը առաջարկեց ներս մտնող⁴ մարդուն. ուրեմն հարգում է մեծերին: Դեռ շենքից ներս չմտած⁵ գլխարկը հանեց,

ուրեմն քաղաքավարի է: Գիրքը, որ ես դիտմամբ զգել էի⁶ հատակին, կռացավ ու վերցրեց, մինչդեռ մյուսները գրքի մոտից անցնում էին անտարբեր, ուրեմն ուշադիր է: Հարցերիս շատ կարճ, արագ ու գրագետ էր պատասխանում, ուրեմն կրթված է և ընդունակ: Հագուստները արդուկված էին, ձեռքերը՝ մաքուր, մազերը՝ սանրած... Ի՞նչ եք կարծում, այս բոլորը ամենալավ վկայականները չե՞ն:



"Լուսաբերից"

- ¹ ամենալավ – самый хороший
- ² ասացեք, խնդրեմ – скажите, пожалуйста
- ³ սրան – этого (род. п. от местоимения он) (вспомните: սրա՞ն տեսե՞ք)
- ⁴ ներս մտնող – входящий
- ⁵ ներս չմտած – не успев войти
- ⁶ ես զգել էի – я бросил (загодя)

Слова Բառեր


վկայական – свидетельство
կարևոր – важный
ճանապարհորդություն –
 путешествие
 (непроизносимое h)
կատարել – совершать
օգնական – помощник (զ=ք)
վերջապես – наконец (ջ=չ)
ընտրել – выбрать
մինչդեռ – в то время, как
մերժել – отказать
սխալվել – ошибаться
մաքրել – чистить
աղմուկ – шум
աղմուկ հանել, աղմուկ անել
 – поднимать шум
մաքրասեր – чистоплотный
կարգապահ –
 дисциплинированный (զ=ք)
ուրեմն – значит
հարգել – уважать

մեծ – зд. взрослый
շեմք – порог
գլխարկ – шапка
հանել – снять
քաղաքավարի – вежливый
դիմամբ – нарочно
կռանալ – наклоняться
անտարբեր – безразличный,
 безразлично
ուշադիր – внимательный,
 внимательно
կարճ – коротко, короткий
գրագետ – грамотно,
 грамотный
կրթված – образованный
արդուկված – выглаженный
 (դ=թ)
մաքուր – чистый
մազ – волос
սանրած – расчесанный



Комментарии, задания и упражнения

Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

3.Ա) 

h не произносится после **p** в словах:



աշխարհ – "мир, свет" и производных:



աշխարհամաս – часть света

աշխարհագրություն – география

աշխարհազոր – ополчение

համաշխարհային – всемирный



ճանապարհ – "дорога" и производных:



ճանապարհել – провожать

ճանապարհորդ, ճանապարհորդություն

ճանապարհորդել – путешествовать

ճանապարհաշինարարություն – строительство дорог



շնորհ – "дар, милость" и производных:



շնորհիվ – благодаря (послелог)

շնորհք – дар

շնորհալի – одаренный, умелый

անշնորհք – бездарный

շնորհակալ, շնորհակալություն, շնորհավոր,

շնորհավորել



խոնարհ – "покорный, смиренный" и производных:



խոնարհաբար – покорно

խոնարհել – склонить, поникнуть; грам. спрягать

խոնարհություն – покорность

խոնարհվել – преклоняться

խոնարհում – грам. спряжение

NB: **h** не произносится после **второго p**

արհամարհել – "пренебрегать" и производных:

արհամարհանք – пренебрежение

արհամարհելի – достойный пренебрежения

արհամարհական – пренебрежительный



խորհուրդ – "совет" (դ=թ) и производных:



խորհրդատու – советник (դ=թ)

խորհրդակցել – совещаться (դ=թ)

խորհրդակցություն – совещание (դ=թ)

խորհրդավոր – таинственный (դ=թ)


Բ)  


Նա մի խորհրդավոր շնորհ ունի. ճանապարհորդներին միշտ ճիշտ խորհուրդներ է տալիս, այս աշխարհում որտեղ էլ նրանք լինեն, որ աշխարհամասն էլ զման՝ ճանապարհորդության ժամանակ նրանց ճիշտ ճանապարհ է ցույց տալիս: Զարմանալի է:

Քարև ' Ձեզ, իմ բարի' խորհրդարար


Հիշում եմ ինչ, ես մի տրիգրամարտի շնորհալի գրող եմ և անպայման կրատեմ համաշխարհային մեծություն: Ես շար շնորհակալ եմ Ձեզ Ձեր բարի խորհուրդների համար: Շնորհակալ եմ, որ Ռոբ շնորհ ակնայիք և առանց առհանարհանքի կարգապիք իմ գրածը, իսկ մեր բաղաժամ ես շար առհանարհանք քեզ անշնորհիք և իսկապես առհանարտի գրողների կողմից: Բայց ես խոնարարար քարս կրակ առհանարհանք ժայթկեցրեք և եկա Ձեզ մոտ: Հիշում եմ՝ Ռոբ ասեցիք, որ ես դեռ տրիգրամարտ եմ ու շար բան ունեմ սովորելու, որ կարելի է գրել միայն աշխար քեզաներուց և ճանապարհորդելուց հետո: Եվ հետո Ռոբ ասեցիք, որ ես հայտնեմի բայերը շար էեմ խոնարհում: Հիմա ես Ձեր խորհրդով սովորեմ եմ բայերի խոնարհումը և աշխարհագրություն: Շար օգրակարի գիրություն է: Աշխարհագրության շնորհով իմ կարագրած ճանապարհորդությունները բնական են երևում: Շուրով դարցյալ Ձեզ կայելեմ Ձեզ հետ խորհրդակցելու կարգակով:


Մեամ Ձեր խոնարի ծառեան՝
գրող Անգրագիրյան

4. Ա) 

ընդունակ + ություն = 

способность

ընդունակ	ընդունակություն 	способность
քաղաքավարի NB: (h→0)		вежливость
մաքուր NB: (ու→0)		чистота
մաքրասեր NB: (ե→ի)		чистоплотность
ուշադիր NB: (h→0)		внимание
գրագետ NB: (ե→ի)		грамотность
կարևոր		важность
կարգապահ		дисциплина




Շնորհակալություն (ուշադրություն
– род.-дат.) համար:



Շնորհակալություն
ուշադրության համար:

Շնորհակալություն (ուշադրություն - սեռ.-տր.) համար:
Այս աշակերտը լավ (ընդունակություն - հոգն.հայց.) ունի, բայց ուսուցիչը (կարգապահություն - բաց.) միշտ բողոքում է:
Հայաստանում (գրագիտություն - ուղղ.-հայց.) բավականին բարձր է:
Տեսա՞ր նրանց բալի (մաքրություն - ուղղ.-հայց.):
Ամեն հարցի (կարևորություն - ուղղ.-հայց.) չեն տա:
– Ներեցե՞ք, ես Ձեր հարցը լավ չհասկացա, – (քաղաքավարություն - գործ.) պատասխանեց անժանորդ:

5. Ա) 

от названий лиц:



Суффикс **-ական** образует прилагательные со значением "относящийся к":

հայր – հայրական
մայր – մայրական
եղբայր – եղբայրական
ընկեր – ընկերական
բարեկամ – բարեկամական

от названий племен, наций, народов и т.п.



հայ – հայկական
ռուս – ռուսական
հույն – հունական
վրացի – վրացական
պարսիկ – պարսկական
Եվրոպա – Եվրոպական
Ժողովուրդ – Ժողովրդական "народ, народный"

от других существительных:




երաժշտություն – երաժշտական
"музыкальный"
նկարչություն – նկարչական "рисовальный"
պատմություն – պատմական "исторический"
մանուկ – մանկական "детский"
սովորություն "обычай" – սովորական
տոն "праздник" – տոնական "праздничный"
հոգի – հոգեկան (от հոգի-ական) "душевный"
 դպրոց "школа" – դպրոցական

Запомните также:



Многие образования с суффиксом **-ական** употребляются как существительные. Ср.
դպրոցական – школьник
ազգական – родственник
փախստական – беглец
գաղթական – беженец
բախառական – бродяга

Բ) 



Ես սիրում եմ (հույն) (ժողովուրդ) սիրտակի պարր:

→ Ես սիրում եմ հունական ժողովրդական սիրտակի պարր:

Ես սիրում եմ (հույն) (ժողովուրդ) սիրտակի պարր:
Մարդ երբեք չի կարող մոռանալ իր (հայր) տունը:
Ես մի (բարեկամ) հրավեր ստացա:
(Յայ) կոնյակը շատ հայտնի է:
Դու հաճախ ես հանդիպում քո (դպրոց) ընկերներին:
Այդ երեկո նա շատ գեղեցիկ էր իր (տոն) շրջագգեստով:
Փոքր քույրս (երաժշտություն) դպրոց է գնում:
"Շաղգամը" (բրեքա) (ռուս) հեքիաթ է:



6. Из двух рядов слов составьте словосочетания:




Երկու շարքի բառերից բառակապակցություններ կազմեք.
քաղաքավարի օգնական 

քաղաքավարի, մաքրասեր,
կարգապահ, անտարբեր, ուշադիր,
կարծ, գրագետ, լավ, կրթված,
ընդունակ, կարևոր

օգնական, գիտնական,
ճանապարհորդություն,
հարց, պատասխան,
վկայական

7. 



..., ուրեմն մաքրասեր է:

→ Սենյակ մտնելուց առաջ ոտքերը մաքրեց, ուրեմն մաքրասեր է:

..., ուրեմն մաքրասեր է:
..., ուրեմն կարգապահ է:
..., ուրեմն հարգում է մեծերին:
..., ուրեմն քաղաքավարի է:
..., ուրեմն ուշադիր է:
..., ուրեմն կրթված է և ընդունակ:

8. Переведите прямую речь в косвенную; пользуйтесь подчинительными союзами որ или թե:

Ուղղակի խոսքը դարձրեք անուղղակի օգտագործելով "որ" կամ "թե" շաղկապը.

Մի ծանոթ հարցրեց գիտնականին. "Ինչու՞ այս երիտասարդին ընտրեցիք": Գիտնականը պատասխանեց. "Նա լավ վկայականներ ուներ": Ծանոթն առարկեց. "Մյուս երիտասարդները ցույց տվեցին իրենց վկայականները, իսկ այս երիտասարդը ցույց տալու բան չուներ": Ու նորից հարցրեց. "Ո՞րն էր նրա վկայականը": Եվ գիտնականը բացատրեց. "Ինձ թղթե վկայականները չեն հետաքրքրում, կարևորն այն է, որ ես կրթված, քաղաքավարի, գրագետ և ուշադիր օգնական էի ուզում ընտրել ճանապարհորդության համար:"

9. Прочитайте следующий отрывок из повести "Высокочитимые попрошайки" А. Пароняна и сравните с оригиналом; обратите внимание на характерные особенности западноармянского языка:

Կարդացե՛ք հետևյալ հատվածը Հակոբ Պարոնյանի "Մեծապատիվ մուրացկանները" վիպակից, համեմատե՛ք այն բնագրի հետ, ուշադրություն դարձրե՛ք արևմտահայերենի բնորոշ առանձնահատկություններին.



և Աբխաղոմ
աղան

Նկարը՝ Հովհ. Շավարշի
Հակոբ Պարոնյանի
"Մեծապատիվ մուրացկանները"
գրքից (Երևան, "Հայպետհրատ",
1961)



Հագար ութ հարյուր
յոթանասուն ... չեմ հիշում
քանիսին, սեպտեմբերի
երեսունմեկին, – ներեցեք,
երեսունին պիտի ասեի*,
որովհետև սեպտեմբերն երեսուն
օր միայն ունի, – երկար և
ընդարձակ մի քիկնոցի մեջ
փաթաթված միջառասակ և
գիրուկ մի մարդ, որ Տրապիզոնի
շոգենավից նոր էր իջել,
Ղալաթիայի նավամատույցին
կանգնած՝ մի նավակից իր
սնդուկները հանել էր աշխատում:

Այս ճանապարհորդն օժտված
էր մի գույգ խոշոր և սև աչքերով,
մի գույգ հաստ, սև և երկար
հոնքերով, մի գույգ մեծ
ականջներով և մի գույգ քթեր ...
չէ՛, չէ՛, մեկ քթով թեպետև, բայց մի
գույգ քթերի տեղ կարող էր
ծառայել. նրա մեծությունը
սխալեցրեց ինձ:

Հագար ութը հարյուր
յոթանասուն ... չեմ հիշե՛ր
քանիին, սեպտեմբերի երեսունը
մեկին, – ներեցեք, երեսունին
պիտի ըսեի, վասնզի սեպտեմբերն
երեսուն օր միայն ունի, – երկար և
ընդարձակ քիկնոցի մը մեջ
փաթտըված միջառասակ և
գիրուկ մարդ մը, որ Տրապիզոնի
շոգենավեն նոր ելած էր,
Ղալաթիո նավամատույցին վրա
կայնած՝ նավակե մը յուր
սնդուկները հանել կաշխատեր:

Այս ճամփորդն օժտված էր
գույգ մը խոշոր և սև աչքերով,
գույգ մը հաստ, սև և երկար
հոնքերով, գույգ մը մեծ
ականջներով և գույգ մը քիթեր ...
չէ՛, չէ՛, մեկ քիթով թեպետև, բայց
գույգ մը քիթերու տեղ կրնար
ծառայել. անոր մեծությունը
սխալեցուց գիս:



Ըստ Հակոբ Պարոնյանի "Մեծապատիվ մուրացկանները"

*պիտի ասեի – (я) должен был сказать

Слова բառեր

ընդարձակ – просторный (դ=թ, ծ=ց)
թիկնոց – плащ, накидка
փաթաթված – закутанный
միջահասակ – среднего роста (ջ=չ)
գիրուկ – поленький (գեր – полный)
շոգեՆավ – пароход (գ=ք)
Նավամապույց – пристань
Նավակ – лодка, шлюпка
սնդուկ – сундук
աշխատել – зд. стараться
ճանապարհորդ – путешественник (դ=թ)

օժտված – одаренный
զույգ – пара (զ=ք)
խոշոր – крупный
հասար – толстый
հոնք, ունք (разг.) – бровь
ականջ – ухо
քիթ – нос
թեպերև – хотя и (союз)
մի բանի տեղ ծառայել – служить чем-то
սխալեցնել – ввести в заблуждение





Գիտնականին օգնական էր <i>պետք</i> :	<i>պետք</i> =հարկավոր (СИНОНИМ, հոմանիշ)	Գիտնականին օգնական էր <i>հարկավոր</i> :
-------------------------------------	--	---

Գիտնականին օգնական էր *պետք*: *Ի վերջո* գիտնականը մեկին ընտրեց:

Սենյակ մտնելուց առաջ ոտքերը մաքրեց և դուռը *լուռ* ծածկեց: Երկար և *լայն* թիկնոցի մեջ փաթաթված մի մարդ նավակից իր սնդուկները հանել էր *ջանում*:

Այս ճանապարհորդն *ուներ* մի զույգ *մեծ* և սև աչքեր: Նրա քթի *խոշորությունը* սխալեցրեց հեղինակին:



Գիտնականը <i>անմիջապես</i> մեկին ընտրեց:	անմիջապես зд. ≠ վերջապես (АНТОНИМ, հականիշ)	Գիտնականը <i>վերջապես</i> մեկին ընտրեց:
--	---	---

Գիտնականը *անմիջապես* մեկին ընտրեց:

Դեռ շենքից *դուրս չեկած* գլխարկը *հագավ*, ուրեմն *անբաղադրարի է*:

Սենյակ մտնելուց *հետո* ոտքերը մաքրեց և դուռը *բացեց աղմուկ հանելով*:

Հարցերիս շատ *երկար, դանդաղ* ու *անզրագետ* էր պատասխանում, ուրեմն *անկիրթ* է ու *անընդունակ*:


Կարճ և *մեղ* մի թիկնոցի մեջ փաթաթված *ցածրահասակ* և *նիհար* մի *կին* նավամատույցին *նստած* աշխատում էր իր սնդուկները մի *նավակի մեջ դնել*:

Այս ճանապարհորդն օժտված էր *մանր* ու *կապույտ* աչքերով, սև ու *բարակ* հոնքերով և *փոքր* ականջներով:



12. Составьте возможные словосочетания с приведенными словоформами:

Բերված բառաձևերով հնարավոր բառակապակցություններ կազմեք.

կատարել	հանձնարարություն, ժամանակին, տնային աշխատանք
պատրաստվել	ճանապարհորդության, քննության, ճաշ, ճաշի, ճաշը
ընտրել	խորտիկներ, գույն, վկայական, համալսարան, քիթ
մերժել	դասախոս, դասախոսը, դասախոսին, առաջարկությունը
սխալվել	անցորդը, բժիշկը, արքան, երբեք, միշտ, դանդաղ
բարձրանալ	վերջապես, վերջնականապես, շարունակ, մի անգամ
հարգել	մեծերին, փոքրերին, արագ, անմիջապես, անընդհատ
հանել	աղմուկ, շորեր, սնդուկը, նավակի տակ, նավակի տակից
զգել	զլխի վրայից, զլխաշոր, ֆուտբոլիստին, ֆուտբոլիստ
կրճատել	գիտնականը, նկարիչը, նկարչին, անհանգիստ, լուռ
անցնել	դաս, քիմիա, քիմիայից, ուրախ, ծառի տակ, ծառի տակով
սխալեցնել	աշակերտը, աշակերտին, դիտմամբ, մեծ մասամբ, գլուխը
նստել	աթոռ, աթոռը, աթոռին, տրոլեյբուս, տրոլեյբուսը, տրոլեյբուսին, հեծանիվ
քշել	ծի, աթոռ, մեքենա, հեծանիվ, հեծանվով

13.Ա)  Տախտակե ցուցանակի վրա գրված է "Գարնանյին փողոց": (գրված-հարակատար դերբայ "результативное причастие")

Դ) Выпишите из обоих текстов результативные причастия. Դասի երկու տեքստից դուրս գրեք հարակատար դերբայները:

Ամենայն վկայականը	Արհեստողմ աղան
<i>նստած</i> 	<i>փաթաթված</i> 

Գ) Поставьте вместо точек одно из приведенных результативных причастий:

Կետերի փոխարեն օգտագործեք բերված հարակատար դերբայներից մեկը.

Կարենը պատուհանի մոտ ... կատակներ էր անում հարևանուհու հետ:
 Զգեստապահարանը ... է ճաշասենյակում, որովհետև ննջարանում տեղ չկա:
 Այսօր ճաշին ... հավ ունենք:
 Երբ բոլոր հյուրերը արդեն ... էին սեղանի շուրջը, ներս մտավ Կարինեի ընկերը:
 Նրա հագուստները ... էին, մազերը ..., և բոլորը գտան, որ նա ... երիտասարդ է:
 Ճանապարհի համար կարելի է նաև ... ձու վերցնել:
 Ես ուզում եմ քո ... Մասին սարը կախել իմ մահճակալի վերևը:
 Սա մեր ... դասն է:

անցած
 արդուկված
 դրված
 խաշած
 կանգնած
 կրթված
 նստած
 նկարած
 սանրած
 տապակած



Անսովոր մարդը (Յենրիկ Սևան)

Слова Բառեր

- ոպ** – разг. нога (лит. **ոպք**)
- ձեռ** – разг. рука (лит. **ձեռք**)
- ուևք** – разг. бровь (лит. **հուևք**)

Մի մարդ	Մի այտ,
Ուևեր	Մի քուևք,
Մի ոտ,	Մի մատ,
Մի ձեռ,	Մի ռուևգ,
Մի աչք,	Մի նեղ
Մի ուևք,	Որկոր
Մի շուրթ,	Եվ մի
Մի ծուևկ,	Մեծ փոր:

- շուրթ** – губа
- ծուևկ** – колено
- այտ** – щека
- քուևք** – висок
- մատ** – палец
- ռուևգ** – ноздря
- որկոր** – пищевод
- փոր** – живот

14. Ա)

կրթված ≠ անկիրթ



սովորական ≠ անսովոր

կարգապահ ≠

քաղաքավարի ≠

ուշադիր ≠

գրագետ ≠

Դ) Вместо точек поставьте подходящее прилагательное:

Կետերի փոխարեն օգտագործե՛ք համապատասխան ածական.

Լա կոպիտ է պատասխանում մեծերին, ուրեմն ... է:

Դուք այդ դասախոսությունից ոչինչ չեք հիշում, ուրեմն ... էիք:

Լա ավտորուսում ծերերին տեղ չի տալիս, ուրեմն ... է:

Այս դիմորդի աշխատանքում քառասուն սխալ կա, ուրեմն ... է:

Ձեր տղան դասի ժամանակ շատ անհանգիստ է, կարելի է ասել նույնիսկ ...:

Այս կիսաշրջագետը մի քիչ ... է, բայց քեզ սազում է:

15. Поставьте вместо точек одно из слов, приведенных в правом столбце:

Կետերի փոխարեն օգտագործե՛ք աջ սյունակում բերված բառերից մեկն ըստ իմաստի.

Քսանմեկերորդ դարի ... (տր. հ.) մարդիկ մտածում էին անցած ճանապարհի ու ապագայի մասին (о будущем):


Հազար ինը հարյուր քսանհինգ թվականին մա ... հեռացավ տնից: ... դու հասկացար, թե ի՞նչ ենք ուզում քեզնից:

Օրբելի եղբայրների ... աշխատանքները մեծ նշանակություն (значение) ունեն գիտության համար: Վիկտոր Համբարձումյանը հայ խոշոր ... (հոգն., բաց. հ.) մեկն է:

շենք
շենք

վերջապես
վերջնականապես

գիտական
գիտնական

16.Ա) 



գլուխ – голова, глава, кочан, лук-репка
 գլխով անել – кивнуть
 գլխի ճարը տեսնել – спасаться
 գլխի գցել – надумать
 գլխի ընկնել – догадаться
 գլուխ գալ – удаваться
 գլխին գալ – случиться (о несчастьях)
 գլուխ տալ – кланяться
 գլխին տալ – горевать
 գլուխ պահել – сачковать
 գլուխն ամնել ու գնալ – отчаявшись, уходить (уйти)
 գլուխ գովել – хвастаться
 գլուխ ցավեցնել, գլուխ տանել – надоедать



Երբ ուսանողը պատասխանեց հարցին, դասախոսը **գլխով արեց** և ասաց, որ գոհ է:

Մարդ չի իմանում, թե վաղն իր **գլխին** ինչ **կգա**:

Ով կարող է, թող իր **գլխի ճարը** տեսնի:

– Վայ, Կիկոս ջան, վայ, – **գլխին փվեց** տատը ու նստեց իր աղջիկների կողքին:

Ես **գլխի ջընկա**, թե նա սուտ է ասում, դու՛ ինձ **գլխի գցեցիր**:

Նա այնպես է **գլուխ գովում**, որ ուղղակի **գլուխ է ցավեցնում**:




Դ) Найдите две половинки каждого предложения в левой и в правой части и соедините их в одно.

Ձախ և աջ կողմերում գտե՛ք յուրաքանչյուր նախադասության երկու կեսերը և միավորե՛ք:

Եթե բնակարանիս փոխանակությունը գլուխ չգա, գլուխս կառնեմ ու կգնամ: 

✓ Եթե բնակարանիս փոխանակությունը գլուխ չգա,	նա իսկապես խոշոր գիտնական է:
Պետրոսն ամեն օր գնում է աշխատանքի,	և լավ զգաց իրեն:
Բնակարանի վաճառքից հետո	իր գլխի ճարը տեսավ:
Գնամ շուկա, գոնե	✓ գլուխս կառնեմ ու կգնամ:
Ուսուցիչն ասաց, որ աշակերտները	իր և իր ծնողների գլխին եկածր:
Անահիտը գլխի ընկավ, որ դա խաղ է	նա անընդհատ գլխին էր տալիս:
Պապս գլուխ չի գովում,	մի գլուխ կաղամբ, մի կես կիլո գլուխ սոխ գնեմ:
Ընկերս հայրենադարձ է, նա հաճախ է պատմում	բայց ոչինչ չի անում, գլուխ է պահում:
Այդպես մենք փախանք մեր գյուղից, ով կարողացավ,	երեք գլուխ կարդան այս գրքից:

17.Ա) 




աչքով անել – подмигнуть
 աչքով տալ – сглазить
 աչքի անցկացնել – просмотреть
 աչքի առաջ ունենալ – иметь в виду
 աչքիս վրա – речевая формула, показывающая готовность говорящего к чему-либо
 աչքս(դ, ը) լու՛յս – речевая формула поздравления
 աչքի լույսի պես պահել – беречь как зеницу ока
 աչքից ընկնել – падать в глазах



–Ձեր տղան դասերը լավ չի սովորում, միայն **աչքի է անցկացնում**, դասն էլ ուշադիր չի լսում, ընկերոջը **աչքով է անում** դասի ժամանակ, մինչդեռ պետք է **աչքի առաջ ունենալ**, որ այս տարի քննություն ունենք: Բայց, **աչքով չփամ**, մաթեմատիկայից երբեմն գերազանց է ստանում, **աչքներդ լու՛յս**:

ԴԲ) Найдите две половинки каждого предложения в левой и в правой части и соедините их в одно.

Ձախ և աջ կողմերում գտե՛ք յուրաքանչյուր նախադասության երկու կեսերը և միավորե՛ք:

Ամեն առավոտ, աշխատանքից առաջ նա աչքի է անցկացնում օրվա թերթերը: 

✓ Ամեն առավոտ, աշխատանքից առաջ Չարկավոր է աչքի լույսի պես պահել	բայց նա գլխի չընկավ: մեր հիվանդն իրեն լավ է զգում:
Տղաս, հարկավոր է տնային աշխատանքները լավ կատարել, որպեսզի	✓ նա աչքի է անցկացնում օրվա թերթերը:
Ես նրան աչքով արեցի որ գլխի զգեմ, Վախենում են, թե աչքով տամ, բայց այսօր	մայրենի լեզուն: ուսուցիչների աչքից չընկնես:

ԴԳ) Поставьте вместо точек аչքիս վրա или աչքդ լույս по смыслу:


Կեսերի փոխարեն օգտագործե՛ք "աչքիս վրա" կամ "աչքդ լույս" արտահայտությունները.


1. – Պողոս, կինդ ազատվեց (разрешилась): – Ո՞վ է, տղա՞ է, թե՞ աղջիկ: – ..., տղա է:

2. – Մի բաժակ ջուր տա՞ս: – ..., հիմա կբերեմ:

3. – Քույրի՛կ, թաշկինակս արդուկե՞ս: – ..., հիմա կարդուկեմ:

4. – Մայրի՛կ, ..., ֆիզիկայի քննությունից գերազանց ստացա:

18.Ա) 



ձեռք տալ – трогать
 ձեռք բերել – приобретать
 ձեռք քաշել – отстать
 ձեռ(ք) առնել – издеваться
 ձեռքով անել – поманить
 ձեռներեց – предприимчивый,
 ձեռներեցություն – предприимчивость


Շամփուրին **ձեռք չփաս**, տաք է:
–Ձեռ է՞ք առնում, երևանում այդպիսի փողոց չկա:
 Պըլը Պուրին "այբ" չէր ասում, որ վարժապետը **ձեռք քաշի** իրենից:
 Նա իր **ձեռներեցությամբ** շատ բանի հասավ, շատ բան **ձեռք բերեց**:

Դ) Найдите две половинки каждого предложения в левой и в правой части и соедините их в одно.

Ձախ և աջ կողմերում գտեք յուրաքանչյուր նախադասության երկու կեսերը և միավորե՛ք:

Ուսուցիչն ասաց, որ բոլորը **ձեռք բերեն այս բառարանը**: 

✓ Ուսուցիչն ասաց, որ բոլորը	իսկ դու շարունակ ինձ ձեռք ես առնում:
Նա ձեռներեց մարդ է. եթե մի բան ուզի	որ բախում ամեն ինչի ձեռք չտա:
Ես քեզ հետ լուրջ եմ խոսում,	հազվագյուտ մասնագիտություն ձեռք բերեց:
Մայրիկը սովորեցնում է իր աղջկան,	✓ ձեռք բերեն այս բառարանը (словарь):
Նա գնաց Ֆրանսիա սովորելու և	ձեռք չի քաշի, մինչև չհասնի նպատակին:

19.Ա) 



ականջի հետևը զցել – пропустить мимо ушей
 ականջին օղ անել – зарубить себе на носу
 ականջակալ – наушник
 ականջօղ – серьга
 ականջը քաշել – тянуть за ухо (наказывать)
 քիթը ամեն ինչի մեջ խոթել – совать нос во все
 քիթը ցցել – задирать нос
 քիթ քորելու ժամանակ չունենալ – не иметь свободной минуты, букв. не иметь времени почесать нос

Տղաս ամբողջ օրը **ականջակալները** չի հանում իր վրայից, ասում է, թե՛ անգլերեն եմ սովորում:
 Այս **ականջօղերը** քեզ շատ են սազում:
Ականջիդ հետևը չզցես, կնոջդ կասես, որ **ականջին օղ անի**, **քիթը ամեն ինչի մեջ չխոթի**:
 Ի՞նչ ես **քիթդ ցցել**, ինձ չես օգնում, ես ամբողջ օրը **քիթ քորելու ժամանակ չունեմ**:

Գ) Найдите две половинки каждого предложения в левой и в правой части и соедините их в одно.

Ձախ և աջ կողմերում գտե՛ք յուրաքանչյուր նախադասության երկու կեսերը և միավորե՛ք:

Նա ուշադիր լսում էր, թե ինչ է ասում հայրը և ամեն ինչ ականջին օղ էր անում:

✓ Նա ուշադիր լսում էր, թե ինչ է ասում հայրը և ամեն ինչ	քիթը խոթում է ամեն տեղ:
Նա անտարբեր լսում էր, թե ինչ է ասում հայրը և ամեն ինչ	չլսեմ փողոցի աղմուկը:
Փոքր քույրս շատ հետաքրքրասեր է, Ականջակալներն ինձ օգնում են, որ	✓ ականջին օղ էր անում:
Դեռ այնքան աշխատանք կա անելու,	ականջի հետևն էր օգնում:
Կարիք չկա քիթը ցցելու,	հետո՞ ինչ, որ գիտնականը թեզ ընտրեց իրեն օգնական:
	իսկ ես քիթ քորելու ժամանակ չունեմ:

20. Ա) Для описания портретов пользуйтесь следующими выражениями и конструкциями:



Մարդկանց նկարագրելիս օգտագործե՛ք հետևյալ արտահայտությունները և կառույցները.

☞ թուխ – смуглый խարտյաշ ցածրահասակ միջահասակ բարձրահասակ բարեկազմ – стройный	բերան – рот (մեծ, փոքր) ճակատ – лоб (բարձր, լայն, նեղ) հոնքեր (երկար, բարակ, հաստ, խիտ – густые) քիթ (մեծ, երկար, լայն, փոքր, կարճ, նեղ, ուղիղ)
☞ Նա ունի սև աչքեր = Նա օժտված է սև աչքերով = Նա սև աչքերով մի մարդ (տղա, աղջիկ, կին) է:	

Բ) Опишите Ваших друзей и знакомых, опираясь на следующие вопросы:

Նկարագրե՛ք Ձեր ընկերներին և ծանոթներին հիմնվելով հետևյալ հարցերի վրա.

Քանի՞ տարեկան է: Թու՞խ է, թե՞ խարտյաշ: Ցածրահասա՞կ է, միջահասա՞կ է, թե՞ բարձրահասակ: Նիհա՞ր (նիհարի՞կ) է, թե՞ լիքը (զեր, գիրուկ): Ի՞նչ (ինչպիսի՞) մազեր ունի (կա՞րճ, թե՞ երկար): Ի՞նչ (ինչպիսի՞) աչքեր, հոնքեր, քիթ, բերան, ճակատ ունի:

Գ. 21.  և  Прослушайте и заполните пропуски:

Լսե՛ք ձայնագրությունը և լրացրե՛ք բացերը.

- Տիկին Մարիամ, նայե՞ս:
- Էհ, ի՞նչ ասեմ, օրհորդ ջան: Երեք կետից՝ երեք ..., երեք ... կամ երեք ... հետո կհանդիպես մի երիտասարդի՝, ուղիղ ..., սև մորուքով ու բեղերով, ուղիղ ետ, .., թիկնեղ մի տղայի:
- Տիկին Մարիամ, էդ բոլորը սուրճի բաժակի մե՞ջ ես տեսնում:
- Ոչ միայն սուրճի բաժակի մեջ եմ տեսնում, այլև քո պատշգամբի տակ եմ տեսնում:

Урок 14. Տասնչորսերորդ դաս


Грамматика
Прошедшее простое время (продолжение).
Повелительное наклонение.
Отглагольные существительные на -ում, их склонение.
Склонение существительных, имеющих окончание -ու.
Предлог բազի.
Детские стихи
Մի լինիր միշտ ուրազի պես
Песня
Ծիծեռնակ
Текст
Քոչարի (Վարդգես Պետրոսյան)


Прошедшее простое время (продолжение)

Անցյալ կապարյալ (շարունակություն)

Վարժություններ

Упражнения

1. 



Դուռը բացվում է ու ներս է մտնում Կարենը:

→ Դուռը բացվեց ու ներս մտավ Կարենը:

Ա. Դուռը բացվում է ու ներս է մտնում Կարենը: Նա խորամանկ ժպտում է: Անմիջապես հասկանում են, որ ասելու բան ունի: Ես քնծիծաղ եմ տալիս ու հայացքով հետևում նրան: Նա ման է գալիս սենյակում, մոտենում է գրադարանիս, ուր քիչ գրքեր կան, բայց բոլորն էլ ընտիր են: Քիչ հետո նույն խորամանկ ժպիտը դեմքին դուրս է գալիս սենյակից: Ես գայրույթից բարձս շարտում եմ նրա հետևից: Բայց դուռն արդեն փակվում է, և բարձը նպատակին չի հասնում: Ջայրացած վեր եմ կենում ու գնում եղբորս սենյակը: Բաց եմ անում դուռը ու տեսնում եմ եղբորս լուսամուտի առաջ: Ես ականա ժպտում եմ և զգում, որ այլևս չեմ կարող բարկանալ:

Բ. Մի օր էլ Պըլը Պուղու հարևանը մտածում է. "Պըլը Պուղին չի նայում բարձի տակ, չի ստուգում՝ փողը բերել եմ, թե չէ: Արի այս անգամ էլ փողը չդնեմ": Ու փողը գրպանում ետ է դառնում բարձի մոտից: Անցնում է երկար ժամանակ: Մի օր նա փողի խիստ կարիք է զգում: Ստիպված դարձյալ Պըլը Պուղուն է դիմում: Հարևանը գնում է բարձի մոտ ու դատարկ գտնելով՝ ետ է գալիս:

Գ. Պըլը Պուղին գալիս է: Մելիք Շահնազարը նայում է, տեսնում, որ Պըլը Պուղու հագուստը նոր կարկատաններ ունի մի քանի տեղ:


– Տեղ-տեղ շնորհավոր լինի հագուստդ, Պուղի, – ասում է մելիք Շահնազարը:

– Օր ու մեջ ապրես, Մելիք, – պատասխանում է Պուղին:

Գ. Մի անգամ մոլլա Նասրեդինը հարևանից մի մեծ կաթսա է խնդրում, որ փլավ եփի: Հարևանը տալիս է և մոլլան հաջորդ օրը վերադարձնում է մի փոքրիկ կաթսա էլ հետը: Հարևանը մտքում ծիծաղում է մոլլա Նասրեդինի վրա և վերցնում է երկու կաթսան էլ: Մի քանի օրից հետո մոլլան նորից է խնդրում մեծ կաթսան: Հարևանը ուրախությամբ տալիս է, հուսալով, որ այս անգամ էլ կծնի: Սակայն անցնում է մի քանի օր, բայց մոլլան չի վերադարձնում կաթսան: Հարևանը բարկանում է, իսկ մոլլան այլևս կաթսան չի տալիս:

Ե. Արմենը տաքսի է կանգնեցնում ու երկուսն էլ նստում են:

– Գարնանային փողոց, – ասում է Արմենը: Անահիտը, որ լուռ հետևում էր տղամարդկանց, հասկանում է, որ դա խաղ է, ու լավ է զգում իրեն: Խաչմերուկներից մեկի մոտ վարորդը հարցնում է մի անցորդի. "Զգիտե՞ք որտեղ է Գարնանային փողոցը": Արմենը չի կարողանում առարկել: Վարորդը մի անգամ էլ է կանգնեցնում մեքենան, մոտենում է մի ոստիկանի, նույն հարցը տալիս ու վերադառնում: Նրանք մտնում են նորակառույց, ոչ ասֆալտապատ մի փողոց: Վարորդը չի դադարեցնում ընթացքը: Հանկարծ ուժեղ արգելակում է ու կանգ առնում: Արմենը նայում է դուրս ու տեսնում, որ փողոցի մեջտեղում, տախտակե ցուցամակի վրա, կարմիր ներկերով գրված է "Գարնանային փողոց":

2. Ա) 

Անցյալի անկադար
(прошедшее
несовершенное
время) показывает
продолженное,
повторяющееся,
привычное действие
в прошлом.

Անցյալ կարարյալ
(прошедшее простое время)
показывает действие как факт,
безотносительно к его
длительности. Действие в
прошедшем простом времени
достаточно быстротечно, т.е оно
началось и кончилось в тот
момент в прошлом, о котором
говорится.


Բ) 

Աշխենը
առավոտյան վեր
է կենում...

→  և 

1. Մի անգամ Աշխենը առավոտյան վեր կացավ...
2. Ամեն օր Աշխենը առավոտյան վեր էր կենում...

Աշխենը առավոտյան վեր է կենում, մարզանք է անում, լվացվում է, հագնվում է ու սպասում է հեռախոսի զանգին: Հեռախոսի զանգ չի լինում: Նա վերցնում է օրվա թերթերը, բայց չի կարողանում կարդալ: Ապա սուրճ է եփում ու սուրճի գավաթը ձեռքին՝ մոտենում է պատուհանին: Հետո սուրճի գավաթը տանում է խոհանոց, մի կտոր կարկանդակ է ուտում ու վճռում է նամակ գրել: Բայց ոչինչ էլ չի գրում, գրիչն ու թուղթը նորից տեղն է դնում ու դարձյալ սպասում:


3. 



Երբ մայրիկը (ներս մտնել), երեխաները դասերն էին սովորում:

→ Երբ մայրիկը ներս մտավ, երեխաները դասերն էին սովորում:

Երբ մայրիկը (ներս մտնել), երեխաները դասերն էին սովորում:
 Երբ դու (գալ), ես հեռախոսով էի խոսում:
 Երբ նա ինձ (զանգել), ես աշակերտների տետրերն էի ստուգում:
 Երբ որ մենք (վերադառնալ), բոլորն արդեն ճաշում էին:
 Երեկ, երբ որ դու (զնալ), արդեն կեսգիշեր էր:


4. 




ռադիո լսել, դուրս գալ սենյակից

→ Երբ բոլորը ուշադիր ռադիո էին լսում, Սարգիսը դուրս եկավ սենյակից:

1. Ռադիո լսել, դուրս գալ սենյակից.
2. նախաճաշել, բացվել.
3. հեռուստացույց նայել, հյուր գալ.
4. թերթ կարդալ, ներս մտնել.
5. փողոցն անցնել, տեսնել.
6. զբոսնել, հանդիպել:

5. 



(ըստ իմաստի)

Գագիկը չի հասկանում այսօրվա դասը, և ես նրան նորից եմ բացատրում:
 Երբ մենք հասնում ենք մեր գյուղը, ձյուն է գալիս:

→ Գագիկը չէր հասկանում այսօրվա դասը, և ես նրան նորից բացատրեցի:
 Երբ մենք հասանք մեր գյուղը, ձյուն էր գալիս:

Գագիկը չի հասկանում այսօրվա դասը, և ես նրան նորից եմ բացատրում:

Երբ մենք հասնում ենք մեր գյուղը, ձյուն է գալիս:

Երբ նա իջնում է գնացքից, ես նրան ճանաչում եմ:

Ինչու՞ եք այս երիտասարդին ընտրում, երբ ոչ մի վկայական չունի:

Ծառան մոտենում է բաղնիսի դռանը ու տեսնում, որ դռան առաջ մի քար կա. մարդիկ ընկնում են ու վեր կենում, բայց քարը չեն վերցնում:

Չայի համար ջուրը կրակի նման սրբազան մի բան է:

Ֆրեզնոյի ջուրը Չայաստանի ջրին շատ նման է: Հողն էլ բավականին նման է Չայաստանի հողին կամ գուցե հիշեցնում է Չայաստանի շատ շրջանների հողը: Այստեղ ծաղկում են շատ մրգատու ծառեր, մանավանդ ծիրանի ծառը: Չայկական հրաշալի երգերից մեկը կոչվում է «Ծիրանի ծառ»: Չայերն այստեղ թթենի են տնկում որովհետև թթենին այն ծառն է, որ դեռ Չայերենիքից գիտեն և սիրում են: Տնկում են նաև նռնենի, ձիթենի, նշենի և ընկուզենի. շատերը փորձում են նաև պիստակենի աճեցնել, բայց պիստակենին չի աճում Կալիֆոռնիայում: Ցանում են ծմերուկ և սեխ: Ցանում են սմբուկ, լոբի, վարունգ, դդում, լոլիկ, պղպեղ, ազատքեղ, անանուխ և ամեն տեսակ կանաչի:

Повелительное наклонение

Հրամայական եղանակ



Повелительным наклонением оформляются просьба, побуждение к действию, прямой приказ, исходящие от говорящего (первого лица) и направленные непосредственно к собеседнику (второму лицу). Поэтому повелительное наклонение имеет только формы второго лица (единственного и множественного числа). Глаголы в повелительном наклонении (и предложения, содержащие такие глаголы) произносятся с побудительной интонацией, а на письме эта интонация часто отмечается знаком '2ե2ս (ударение) на последнем слоге. Отсутствие знака '(2ե2ս) означает, что побудительное высказывание произносится с интонацией, приближающейся к нейтральной, что не лишает фразу побудительности. Свободный порядок слов в армянском языке позволяет также ставить знак '(2ե2ս) на том слове в предложении, которое произносится с наиболее интенсивной интонацией.

Образование повелительного наклонения



Формы повелительного наклонения образуются от основы настоящего или прошедшего времени.

① ① Простые глаголы спряжения -ել и

① ③ глаголы со страдательно - возвратным суффиксом -վ- имеют в единственном числе второго лица окончание -ի՛ր, прибавляемое к основе настоящего времени, а во множественном числе окончание -եցե՛ք или -ե՛ք. Причем более разговорный вариант -եք имеет тенденцию вытеснить более литературный вариант -եցեք.

① ② Простые глаголы спряжения -ալ имеют в единственном числе второго лица окончание -ա՛, а во множественном числе окончание -ացե՛ք.

① ① գրել՝ գրի՛ր – գրե՛ք խոսել՝ խոսի՛ր – խոսե՛ք կրկնել՝ կրկնի՛ր – կրկնե՛ք ծածկել՝ ծածկի՛ր – ծածկե՛ք	① ② կարդալ՝ կարդա՛ – կարդացե՛ք մնալ՝ մնա՛ – մնացե՛ք գնալ՝ գնա՛ – գնացե՛ք խաղալ՝ խաղա՛ – խաղացե՛ք շշջալ "шептать"՝ շշջա՛ – շշջացե՛ք
① ③ ծածկվել՝ ծածկվի՛ր – ծածկվե՛ք հազնվել՝ հազնվի՛ր – հազնվե՛ք	

Мы рекомендуем употреблять формы ների՛ր – ներեցե՛ք в речевой формуле "извини – извините" и օգնի՛ր – օգնեցե՛ք в речевой формуле "на помощь!" как более устоявшиеся.

2① В глаголах с незначимыми суффиксами **-ն-, -չ-**, суффиксы **-ն-** и **-չ-** выпадают при образовании повелительного наклонения.

2② В глаголах с незначимыми суффиксами **-ան-, -են-** при образовании повелительного наклонения происходит чередование **-են-→-եց-** и **-ան-→-աց-**.

<p>2① մտնել՝ մտի՛ր – մտե՛ք գտնել՝ գտի՛ր – գտե՛ք հազնել՝ հազի՛ր – հազե՛ք թռնել или թռչել՝ թռի՛ր – թռե՛ք փախնել или փախչել՝ փախի՛ր – փախե՛ք</p>	<p>2② մոտենալ՝ մոտեցի՛ր – մոտեցե՛ք վախենալ՝ վախեցի՛ր – վախեցե՛ք հասկանալ՝ հասկացի՛ր – հասկացե՛ք մոռանալ՝ մոռացի՛ր – մոռացե՛ք</p>
---	---

NB: Не путайте простые глаголы спряжения **-ալ** (**1②**) и глаголы с суффиксами **-ենալ** и **-անալ** (**2②**) при образовании **ЕДИНСТВЕННОГО ЧИСЛА** утвердительной формы повелительного наклонения, но обратите внимание на то, что во **МНОЖЕСТВЕННОМ ЧИСЛЕ** формы повелительного наклонения простых глаголов на **-ալ** и глаголов с суффиксом **-անալ** совпадают!

3 Глаголы с суффиксами **-ացն-, -եցն-, -ցն-** в повелительном наклонении имеют в единственном числе второго лица окончание **-ու՛**, а во множественном числе второго лица окончание **-ե՛ք**, перед ними чередуя **-ն-→-ր-**.

Так: **3** հարցնել՝ հարցրու՛ – հարցրե՛ք
 վերցնել՝ վերցրու՛ – վերցրե՛ք
 մոտեցնել՝ մոտեցրու՛ – մոտեցրե՛ք
 բարձրացնել՝ բարձրացրու՛ – բարձրացրե՛ք
 մեծացնել՝ մեծացրու՛ – մեծացրե՛ք

Отрицательная форма повелительного наклонения (**արգելափան** – букв. "запретительное наклонение") образуется при помощи частицы **մի՛** (с ударением), которая ставится перед глаголом. По общему правилу

• частица **մի՛** ставится перед повелительным наклонением простых глаголов **ЕДИНСТВЕННОГО** числа второго лица без изменения: **մի՛ գրիր, մի՛ կարդա, մի՛ հազնվիր** (**1①, 2** и **3**)

• для глаголов с незначимыми суффиксами **-ն-** и **-չ-**, а также с каузативными суффиксами **-ացն-, -եցն-, -ցն-** частица **մի՛** ставится перед причастием отрицания (**փխտման դերբայ**)*, к которому прибавляется конечный звук **-ր**: **մի՛ մտնիր, մի՛ փախչիր, մի՛ հարցնիր, մի՛ բարձրացնիր, մի՛ վախեցնիր** (заметьте, что все эти глаголы относятся к спряжению **-ել**) (**2①** и **3**)

*Вспомните: չեմ մտնի, չի գտնի, и т.д. (մտնի, գտնի – причастия отрицания).

• глаголы с незначимыми суффиксами **-ան-** и **-են-** образуют отрицательную форму подобно простым глаголам на **-ալ** (отбрасыванием конечного **-լ**)՝ մի՛ մոռանա, մի՛ վախենա (кстати, это и есть причастие отрицания – ժխտման դերբայ – этих глаголов) (зд. ①② = ②②)

• для образования отрицательной формы второго лица **МНОЖЕСТВЕННОГО** числа частица **մի՛** ставится перед неопределенной формой глагола, в которой имеет место чередование конечного **-լ** → **-ք**՝ մի՛ գրեք, մի՛ կարդաք, մի՛ մտնեք, մի՛ փախչեք, մի՛ հարցնեք, մի՛ բարձրացնեք, մի՛ վախեցնեք, մի՛ մոռանաք, մի՛ վախենաք.

Однако при образовании отрицательной формы повелительного наклонения в **РАЗГОВОРНОЙ РЕЧИ** наблюдаются следующие тенденции.

Во-первых, отрицательная форма повелительного наклонения образуется от утвердительной формы повелительного наклонения, перед которой ставится частица **մի՛**.

Во-вторых, в окончании **-իր** выпадает конечный звук **-ր**.

Итак:

• ①①, ②, ③ գրել՝ մի՛ գրի(ր) – մի՛ գրեք, կարդալ՝ մի՛ կարդա – մի՛ կարդացեք կամ մի՛ կարդաք, ծածկվել՝ մի՛ ծածկվի(ր) – մի՛ ծածկվեք,

• ②① մտնել՝ մի՛ մտի(ր) կամ մի՛ մտնի(ր) – մի՛ մտեք կամ մի՛ մտնեք, փախնել կամ փախչել՝ մի՛ փախի(ր) կամ մի՛ փախնի(ր), մի՛ փախչի(ր)) – մի՛ փախեք կամ մի՛ փախնեք, մի՛ փախչեք

• ②② մոտենալ՝ մի՛ մոտեցի(ր) կամ մի՛ մոտենա – մի՛ մոտեցեք կամ մի՛ մոտենաք, զայրանալ՝ մի՛ զայրացի(ր) կամ մի՛ զայրանա – մի՛ զայրացեք կամ մի՛ զայրանաք

• ③ հարցնել՝ մի՛ հարցրու կամ մի՛ հարցնի(ր) – մի՛ հարցրեք կամ մի՛ հարցնեք, մոտեցնել՝ մի՛ մոտեցրու կամ մի՛ մոտեցնի(ր) – մի՛ մոտեցրեք կամ մի՛ մոտեցնեք, մեծացնել՝ մի՛ մեծացրու կամ մի՛ մեծացնի(ր) – մի՛ մեծացրեք կամ մի՛ մեծացնեք

Таким образом, сводная таблица регулярных форм повелительного наклонения выглядит так:

единств. ч. (եզակի թիվ)		множ. ч. (հոգնակի թիվ)	
утвердительная форма հրամայական	отрицательная форма արգելական	утвердительная форма հրամայական	отрицательная форма արգելական

①	-ի՛ր		-ե՛ք	
① գրել	գրի՛(ր)	մի՛ գրի(ր)	գր(եց)ե՛ք	մի՛ գրե՛ք
③ ծածկվել	ծածկվի՛(ր)	մի՛ ծածկվի(ր)	ծածկվ(եց)ե՛ք	մի՛ ծածկվե՛ք

②	-ա՛		-ացե՛ք	
կարդալ	կարդա՛	մի՛ կարդա	կարդացե՛ք	մի՛ կարդացեք մի՛ կարդաք

②	-ի՛ր		-ե՛ք	
① մտնել	մտի՛(ր)	մի՛ մտի(ր) մի՛ մտնի(ր)	մտե՛ք	մի՛ մտեք մի՛ մտնեք
թռչել	թռի՛(ր)	մի՛ թռի(ր) մի՛ թռչի(ր)	թռե՛ք	մի՛ թռեք մի՛ թռչեք
② հեռանալ	հեռացի՛(ր)	մի՛ հեռացի(ր) մի՛ հեռանա	հեռացե՛ք	մի՛ հեռացեք մի՛ հեռանաք
մոտենալ	մոտեցի՛(ր)	մի՛ մոտեցի(ր) մի՛ մոտենա	մոտեցե՛ք	մի՛ մոտեցեք մի՛ մոտենաք

③	-ացրու՛ -եցրու՛ -ցրու՛		-ացրե՛ք -եցրե՛ք -ցրե՛ք	
հեռացնել	հեռացրու՛	մի՛ հեռացրու մի՛ հեռացնի(ր)	հեռացրե՛ք	մի՛ հեռացրեք մի՛ հեռացնեք
մոտեցնել	մոտեցրու՛	մի՛ մոտեցրու մի՛ մոտեցնի(ր)	մոտեցրե՛ք	մի՛ մոտեցրեք մի՛ մոտեցնեք
թաքցնել	թաքցրու՛	մի՛ թաքցրու մի՛ թաքցնի(ր)	թաքցրե՛ք	մի՛ թաքցրեք մի՛ թաքցնեք



Т.о., ①①, ①③, ②①, ②② имеют окончания -ի՛ր, -(եց)ե՛ք

①② имеют окончания -ա՛, -ացե՛ք


③ имеют окончания (-ա/-ե)ցրու՛, (-ա/-ե)ցրե՛ք

4 Запомните несколько глаголов, образование повелительного наклонения которых составляет исключение:

անել	արա՛	մի՛ արա մի՛ անի(ր)	արե՛ք	մի՛ արեք մի՛ անեք
ասել	ասա՛	մի՛ ասա մի՛ ասի(ր)	ասե՛ք ասացե՛ք	մի՛ ասեք
բացել, բանալ	բաց՛ (արա)	մի՛ բաց	բացե՛ք	մի՛ բացեք, մի՛ բանաք
բերել	բեր՛	մի՛ բեր	բերե՛ք	մի՛ բերեք
գալ	արի՛ ե՛կ	մի՛ արի մի՛ եկ մի՛ գա	եկե՛ք	մի՛ եկեք մի՛ գաք
դառնալ	դարծի՛ր	մի՛ դարծի(ր) մի՛ դառնա	դարծե՛ք դառե՛ք	մի՛ դարծեք մի՛ դառեք, մի՛ դառնաք
դնել	դի՛ր	մի՛ դիր մի՛ դնի(ր)	դրե՛ք	մի՛ դրեք մի՛ դնեք
թողնել	թո՛ղ	մի՛ թող մի՛ թողնի(ր)	թողե՛ք	մի՛ թողեք մի՛ թողնեք
լինել	եղի՛ր	մի՛ եղիր մի՛ լինի(ր)	եղե՛ք	մի՛ եղեք մի՛ լինեք
լվանալ	լվա՛	մի՛ լվա	լվացե՛ք	մի՛ լվացեք մի՛ լվանաք
(վեր) կենալ	կաց՛	մի՛ կաց մի՛ կենա	կացե՛ք	մի՛ կացեք մի՛ կենաք
տալ	տու՛ր	մի՛ տուր մի՛ տա	տվե՛ք	մի՛ տվեք մի՛ տաք
տանել	տա՛ր	մի՛ տար մի՛ տանի(ր)	տարե՛ք	մի՛ տարեք մի՛ տանեք
տեսնել	տես՛ս	մի՛ տես մի՛ տեսնի(ր)	տեսե՛ք	մի՛ տեսեք մի՛ տեսնեք
ուտել	կե՛ր	մի՛ կեր մի՛ ուտի(ր)	կերե՛ք	մի՛ կերեք մի՛ ուտեք

Վարժություններ

Упражнения



Նախ հիմ դասը կրկնի՛ր, ապա նոր դասը սովորի՛ր:

→ Նախ հիմ դասը կրկն(եց)ե՛ք, ապա նոր դասը սովոր(եց)ե՛ք:

Ա) Նախ հիմ դասը կրկնի՛ր, ապա նոր դասը սովորի՛ր: Դուռը փակի՛ր, ցուրտ է: Հետևի՛ր ինձ: Շարունակի՛ր կարդալ: Դանդաղ ծամի՛ր: Այս նամակն այսօր ուղարկի՛ր: Աշխատի՛ր, որ ուտես: Մի քիչ սպասի՛ր, գալիս եմ: Լավ սովորի՛ր, պատրաստվի՛ր քննություններին և ընդունվի՛ր համալսարան: Արագ լվացվի՛ր, քեզ ենք սպասում:

Արագ մտի՛ր և դուռը ծածկի՛ր: Վազգենի՛ն գտի՛ր, խնդրում եմ, և ուղարկի՛ր ինձ մոտ: Թռի՛ր*, պապիկի՛ն օգնի՛ր: Այսօր զով է, վերարկու հագի՛ր: Ավտոբուսից հե՛րի և փողոցը անցի՛ր, մենք դիմացի շենքում ենք ապրում:

Հասկացի՛ր, ես չեմ կարող քեզ օգնել, միայն ինքդ կարող ես քեզ օգնել: Տղա՛ ջան, շուտ մեծացի՛ր, միասին աշխատենք: Բարձրացի՛ր աթոռին և քարտեզը կախի՛ր: Մոտեցի՛ր ինձ, կարևոր բան ունեն ստելու: Արագ հեռացի՛ր, որ քեզ ոչ ոք չտեսնի:


Թռի՛ր – слетай (призыв быстро сняться с места, обращаясь к детям).

Բ) Գնա՛ պապո՛նց տուն, ասա՛, թող շուտ գան, մենք սպասում ենք: Արդեն նկարում եմ, ժպտա՛. մեկ երկու, երեք: Այս անգամ մի քիչ երկար մնա ինձ մոտ: Հավատա՛ ինձ, ես ճիշտ եմ ասում:

Գ) Դադարեցրո՛ւ ընթացքը, կանգնեցրո՛ւ՝ մեքենան, ես արդեն տեսնում եմ Գարնանային փողոցը: Քրոջդ հասցեն հիշեցրո՛ւ ինձ, խնդրում եմ: Ընկերուհուդ հարցրո՛ւ՝ այսօրվա դասը: Կարկանդակ վերցրո՛ւ, մի՛ ամաչի՛ր: Վերցրո՛ւ՝ այս փողը և լավ թաքցրո՛ւ: Քեռի՛, ինձ քոչարի պարել սովորեցրո՛ւ: Երեխային տաք հագցրո՛ւ, Մոսկվայում շոգ չէ: Աչքերդ բարձրացրո՛ւ և ինձ նայի՛ր: Խնդրում եմ, հայերեն գրերը մեծացրո՛ւ ու կախի՛ր իմ գրասեղանի վերևը:

Դ) Դուռը բաց արա, մարդ է գալիս: Ասա՛ տեսնենք, ի՞նչ նորություն կա: Խորովածն արդեն պատրաստ է, լավաշը բեր: Իմ փոքրիկ օգնական, լավաշը տար տու՛ր հայրիկին: Այստե՛ղ արի, մեզ մոտ ազատ տեղ կա: Շուտ վերադարձի՛ր, սպասում ենք: Ծաղիկները դի՛ր սեղանին: Հանգի՛ստ թող ինձ, ես ոչ մի տեղ էլ չեմ գալիս: Իմ փոքրիկ Նունե, բարի եղի՛ր ինձ ասել, որտե՞ղ է մայրիկի աչքի ներկը: Սա թուֆ չէ, խաղող է, լվա՛, հետո կեր: Բալիկ ջան, վե՛ր կաց, տատիկին տեղ տուր: Տե՛ս, ինչ լավ է նկարում Անին:

7. 



Այստեղից ջուր մի՛ խմիր, մաքուր չէ:



Այստեղից ջուր մի՛ խմեք, մաքուր չէ:

Ա) Այստեղից ջուր մի՛ խմիր, մաքուր չի: Մի՛ ծիծաղիր, ես այդ բանը լուրջ եմ ասում: Ծնողներիդ մի՛ առարկիր, ուշադիր լսի՛ր, թե ինչ եմ ասում: Դասի՛ ժամանակ հանգիստ նստի՛ր, մի՛ խոսիր: Բարձերը հատակին մի՛ շարտիր: Մի՛ հուզվիր, ամեն ինչ կարգին է:

Ներս մի՛ մտիր (մի՛ մտնիր), դրսում սպասի՛ր: Սենյակում մի՛ թռիր, հարևանները բողոքում են: Վերարկու մի՛ հագիր (մի՛ հագնիր), այսօր շոգ է: Փողոցը մի՛ անցիր (մի՛ անցնիր), մենք հենց ավտոբուսի կանգառում կհանդիպենք:

Մի՛ գայրացիր (մի՛ գայրանա): Մի՛ բարկացիր (մի՛ բարկանա), ես ամեն ինչ կանեմ, ինչպես որ ուզում ես: Մի՛ մոտեցիր (մի՛ մոտենա) պատուհանին, այսօր ցուրտ է: Մեր շնից մի՛ վախեցիր (մի՛ վախենա):

Բ) Դու քեզ վատ մի՛ զգա, նա ամեն ինչ կհասկանա: Այս գիրքը մի՛ կարդա, հետաքրքիր չէ, ես քեզ ուրիշ բան կբերեմ: Արևի տակ երկար մի՛ մնա, ամառվա արևը վառում է:

Գ) Ինձ մի՛ ծիծաղեցրո՛ւ (մի՛ ծիծաղեցնիր). ոչ ոք քեզ այդքան փող փոխ չի տա: Ոչինչ չեմ ուզում լսել այդ մասին, ինձ մի՛ հիշեցրո՛ւ (մի՛ հիշեցնիր): Իմ գրասեղանից ոչինչ մի՛ վերցրո՛ւ (մի՛ վերցնիր): Ինձնից ոչինչ մի՛ թաքցրո՛ւ (մի՛ թաքցնիր): Ես փոքր չեմ, ինձ մի՛ վախեցրո՛ւ (մի՛ վախեցնիր): Թուղթը կրակին մի՛ մոտեցրո՛ւ (մի՛ մոտեցնիր): Երեխային վատ բաներ մի՛ սովորեցրո՛ւ (մի՛ սովորեցնիր):

Դ) Աղմուկ մի՛ արա, տատիկը քնած է: Ինձ ոչինչ մի՛ ասա, ես արդեն գիտեմ: Դու մի՛ արի ինձ հետ, ես ուզում եմ մենակ գնալ: Ոչինչ մի՛ բեր, այստեղ ամեն ինչ էլ կա: Պայուսակը սեղանին մի՛ դիր: Երեխային մի՛ թող (մի՛ թողնիր) մենակ գնա բակ: Ոչինչ, կանցնի, լաց մի՛ եղիր (մի՛ լինիր): Այդ գիրքը մի՛ տուր (մի՛ տա) նրան կարդալու, նա դեռ փոքր է: Հայրիկի գրիչները մի՛ տար (մի՛ տանիր) դպրոց: Հաց, խմորեղեն, կոնֆետ մի՛ կեր (մի՛ ուտիր), միրգ կեր:




ուրագ
— гвоздодер (զ=ք)

Մի՛ լինիր միշտ ուրագի պես,
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ,
Այլ դու եղի՛ր սոցոցի պես,
Մին դեպի քեզ, մին դեպի մեզ:



սոցոց —
пила



Այստե՛ղ նստե՛ք (նստեցե՛ք),
այստեղ հարձար է:

→ Այստե՛ղ նստիր, այստեղ հարձար է:

Ա) Այստե՛ղ նստե՛ք (նստեցե՛ք), այստեղ հարձար է: Սիրե՛ք (սիրեցե՛ք) գիր և ուսում, ճանաչե՛ք (ճանաչեցե՛ք) զբանս հանճարո: Տանը հայերեն խոսե՛ք (խոսեցե՛ք): Կրկնե՛ք (կրկնեցե՛ք) երեկվա դասը: Հարցերին կարճ պատասխանե՛ք (պատասխանեցե՛ք): Շարունակե՛ք (շարունակեցե՛ք) երգել: Պատրաստվե՛ք (պատրաստվեցե՛ք), բոլորս գնում ենք ամսառ:


Գտե՛ք տեքստի մեջ Ֆ տառով բառերը: Գնացքից իջե՛ք, ավտոբուսի կանգառը գտե՛ք ու ինձ սպասեք, ես անպայման կգամ: Առաջ անցեք, խնդրում եմ:

Վերև՝ բարձրացե՛ք: Մոտեցե՛ք այս նկարին, խնդրեմ և ուշադիր նայեք (նայեցե՛ք): Հեռացե՛ք այստեղից, Նվարդը ձեզ հետ չի գա: Ստացե՛ք ձեր տոմսերը, խնդրեմ:

Բ) Լուռ խաղացե՛ք, հայրիկը աշխատում է: Այս գիշեր մնացե՛ք մեզ մոտ: Կարդացե՛ք հետևյալ տեքստը: Հավատացե՛ք մեզ: Դուք շատ հմայիչ ժպիտ ունեք, հաճախ ժպտացե՛ք:

Գ) Ձեր ազգանունը հիշեցրե՛ք ինձ, խնդրում եմ: Եթե ուզում եք հարց տալ, ձեռք բարձրացրե՛ք: Այդ տղաներին հասկացրե՛ք, որ փողոցի մեջտեղում չի կարելի խաղալ: Վերցրեք ձեր գրքերը և տեսրերը:

Դ) Դուռը լայն բաց արեք, որ պահարանը մտնի: Ասացե՛ք, խնդրեմ, Մոսկվայի տոմսը ի՞նչ արժե: Մյուս անգամ որ գաք Հայաստան, ձեր մայրիկին էլ ձեզ հետ բերեք: Եկեք այստեղ, տեսեք, թե այստեղ ի՞նչ մեծ սունկ կա: Գնացե՛ք Ֆրանսիա, Ամերիկա, սովորեցե՛ք, հետո վերադարձե՛ք Հայաստան աշխատելու: Միրգը լվացե՛ք ու դրե՛ք սեղանին: Պայուսակը թողե՛ք ներքևում, կարիք չկա բարձրացնել: Ժամը վեցին պատրաստ եղե՛ք, ես կգամ ձեր ետևից: Դե շուտ վեր կացեք, ծուլվե՛ր, ինչքա՞ն կարելի է քնել: Այս փողը տարեք տվե՛ք ձեր հարևանին, որ այլևս չասի, թե, փողը փոխ եմ առնում ու ետ չեն տալիս: Դանդաղ կերեք, դեռ ժամանակ ունենք:



Առայժմ ոչինչ մի՛ գրեք: → Առայժմ ոչինչ մի՛ գրի՛(ր):

Ա) Առայժմ ոչինչ մի՛ գրեք: Պատուհանը մի՛ փակեք: Այստեղ բարձր մի՛ խոսեք: - Ալլո, դուք ինձ լսու՞մ եք, ինչ որ ասում եմ, մի՛ կրկնեք: Վատ բաները մի՛ հիշեք: Ոչ, ինձ մի՛ համոզեք, մի՛ աշխատեք ինձ համոզել: Այդպես մի՛ լարվեք, մի՛ հուզվեք, կարիք չկա:

Հիվանդի սենյակը մի՛ մտեք (մի՛ մտնեք), չի կարելի: Վերարկու մի՛ հագեք (մի՛ հագնեք), արև է: Մի՛ փախեք (մի՛ փախնեք, մի՛ փախչեք), ես ձեզ տեսնում եմ: Մի՛ իջեք (մի՛ իջնեք) բակ, անձրև է գալիս: Մի՛ անցեք (մի՛ անցնեք) փողոցը, ես ձեզ կանգառում կապատեմ:

Մի՛ գայրացեք (մի՛ գայրանաք), մի՛ բարկացեք (մի՛ բարկանաք), ես արդեն հեռանում եմ: Մի՛ վախեցեք (մի՛ վախենաք), ես ձեզ մենակ չեմ թողնի: Ձգու՛յ՛, մի՛ բարձրացեք (մի՛ բարձրանաք) պատուհանից: Մի՛ մոռացեք (մի՛ մոռանաք) մեզ, նամակ գրե՛ք:

Բ) Մի՛ զնացեք (մի՛ զնաք) անտառ, այս տարի գրեթե սուսկ չկա: Մի՛ մնացեք (մի՛ մնաք) դրսում, կսառեք: Մի՛ խաղացեք (մի՛ խաղաք), դաս սովորեք:

Գ) Տաքսի մի՛ կանգնեցրեք (մի՛ կանգնեցնեք), թատրոնը հեռու չէ: ես ոչինչ չգիտեմ, ինձ մի՛ հարցրեք (մի՛ հարցնեք): Բոզբաշ մի՛ վերցրեք (մի՛ վերցնեք), բոզբաշը կծու է: Լվացքի մեքենան ծանր է, մենակ մի՛ բարձրացրեք (մի՛ բարձրացնեք): Երեխային մի՛ վախեցրեք (մի՛ վախեցնեք):

Դ) Դուք ոչինչ մի՛ արեք (մի՛ անեք), մենք ամեն ինչ կանենք, կպատրաստենք: Առայժմ նրան մի՛ ասեք, որ քննությունը Մոկացյանն է ընդունում: Գրքերը մի՛ բացեք, հիմա ոչինչ չենք կարդում: Երեխային այստեղ մի՛ բերեք, այստեղ շատ հիվանդներ կան: Ներեցե՛ք, այսօր ես շատ զբաղված եմ, այսօր մի՛ եկեք (մի՛ գաք) ինձ մոտ, վաղը՝ եկեք: Ժամը իննից հետո այլևս մի՛ վերադարձեք (մի՛ վերադառնաք), մնացե՛ք պապոնց տանը: Պապիկի բազկաթոռը մի՛ դրեք (մի՛ դնեք) դռան առաջ: Նրան տանը մենակ մի՛ թողեք (մի՛ թողնեք): Անտարբեր մի՛ եղեք (մի՛ լինեք), անտարբերությունը լավ բան չէ: Լուսամուտները դեռ մի՛ լվացեք (մի՛ լվանաք), անձրև է գալիս: Դեռ վեր մի՛ կացեք (վեր մի՛ կենաք) սեղանից, սուրճ ու թեյ եմ բերում: Այս նկարներն ու նամակները նրան ցույց մի՛ տվեք (ցույց մի՛ տաք): Աթոռները բակ մի՛ տարեք (մի՛ տանեք): Այս ծառի թուփը քաղդր չէ, մի՛ կերեք (մի՛ ուտեք):

Ծիծեռնակ

Խոսք՝ Գ. Դողոխյանի

մշակումը՝ Ալ. Դուլխանյանի

Ծի - ծեռ - նակ ծի - ծեռ - նակ, դու գար -
 նան սի-րուն թըռչ- նակ, դե - պի ու՞ր ինձ ա -
 սա, թըռ - չում ես այդ-պես ա - րագ:

(Ուշադրություն դարձրեք հրամայական եղանակի գործածությանը)

Ծիծեռնակ
 Ծիծեռնակ, ծիծեռնակ,
 Դու՛ գարնան սիրուն
 թռչնակ,
 Դեպի ու՛ր, ինձ ասա,
 Թռչում ես այդպես արագ:
 Ա՛խ, թռի՛ր, ծիծեռնակ
 Ծնած տեղս Աշտարակ,
 Անդ շինիր քո բույնը
 Հայրենի՛ կտուրի տակ:
 Անդ հեռու ավեր
 Հայր ունի՞մ՝ սգավոր,
 Որ միակ իր որդուն
 Սպասում է օրեօր:
 Դե՛հ, սիրուն ծիծեռնակ,
 Հեռացի՛ր, թռի՛ր արագ
 Դեպ հայոց երկիրը՝
 Ծնած տեղս Աշտարակ:

Քառեր (слова)
ծիծեռնակ – ласточка
թռչնակ – птичка, от **թռչուն** – птица
դեպի ո՛ւր – куда, в каком направлении?
ծնած տեղս (իմ ծնած տեղը) – место, где я родился, родина
անդ – **այնտեղ**
շինել – строить, зд. вить
բույն – гнездо
կտուր – крыша
հեռու – далеко
ավեր – седой, старый
սգավոր – скорбящий (գ=ք)
միակ – единственный
օրեօր – изо дня в день
դեպ (դեպի) հայոց երկիրը – в сторону страны армян (армянской), по направлению к ...

¹հայրենի (տուն, կտուր, երկիր) – родной (дом, крыша, страна); вспомните тж. հայրենիք – родина, но: մայրենի լեզու – родной язык
²ունիմ – ունեմ

Склонение существительных Փոյականների հոլովումը



Суффикс -ումն служит для образования существительных от глаголов, обозначающих название действия. Запомните склонение отглагольных существительных (բայանուն):


Ուղղական-հայցական հոլով Им.-вин. п.	միացում(ը), դիմում(ը)
Սեռական-տրական հոլով Род.-дат. п.	միացման, но դիմումի
Քացառական հոլով - Отл. п.	միացումից, դիմումից
Փորձիական հոլով - Тв. п.	միացումով, դիմումով
Ներգոյական հոլով - Местн. п.	—

10.Ա)


անցում – переход	ճնշում – давление
բորբոքում – воспаление	միացում – объединение
դիմում – заявление	մոտեցում – подход
զարգացում – развитие	մվաճում – завоевание
թաղում – погребение (похороны)	շարժում – движение
ծագում – возникновение (գ=ք)	որոշում – решение
հանդիպում – встреча	ուսում – учеба



Ուսումը ոսկի է, **առանց ուսման** հեռու չես գնա: Գլխի արագ **շարժումով** նա ետ գցեց մագերը ճակատից: Հայաստանի ու Արցախի **միացման** օրը դեռ հեռու է: Հարևան գյուղում **թաղում** կա, մերոնք գնացին **թաղման**: Մենք կաշխատենք այդ **որոշումները** կատարել: Վաղը ես կարևոր **հանդիպում** ունեմ:



(ուսում) Առանց ... լավ աշխատանք չես գտնի:



Առանց ուսման լավ աշխատանք չես գտնի:

(ուսում) Առանց ... լավ աշխատանք չես գտնի:

(թաղում) ... հետո բոլորը լուռ ու տխուր վերադարձան:

(ծագում) Դուք ընդունու՞մ եք Դարվինի մարդու ... տեսությունը (теория).

(մոտեցում) Նրա ... մեջ հետաքրքիր բան կա:

(միացում) Փողոցները լի էին մարդկանցով և բոլորը գոռում էին "..."

(շարժում) Նա ձեռքի ... ինձ հասկացրեց, որ իրեն չսպասեմ:


(որոշում) Ձեր ... ինձ զարմացրեց:

(հանդիպում) Այդ ... հետո նա որոշեց բժիշկ դառնալ:

(անցում – գործ. հ.). Փողոցը ... անցեք:



Քոչարի



Ախուրյան գետի կամուրջը

Ամեն ինչ լավ էր, միայն թե նվազ չկար: Գյուղի գուռնաչիները թաղման էին գնացել* հարևան գյուղ: Նվազ չկար:

Մի քանի բաժակ էլ դատարկեցին, մի քիչ էլ ուրախացան, մի քիչ էլ տխրեցին:

Նստած էին գետափին, ծառերի տակ: Գետի մյուս ափին, բավական հեռվում, ավերակներ էին: պարիսպների, պալատների, վանքերի: Ուրախանալու ժամանակ էլ էին նայում, տխրելու ժամանակ էլ էին նայում: Ջահելներն էլ էին նայում, ծերերն էլ:

Գետի մյուս ափին, ավերակների մեջ մարդիկ են երևում, բացի սովորական սահմանապահներից, ուրիշ մարդիկ: Անորոշ ծայներ են հասնում, նույնիսկ նվազի ծայն:

Մի քիչ էլ խմեցին:

– Պարենք, – ասաց մեկը:

– Նվազ չկա, – պատասխան եղավ:

– Կերգենք, – ասացին աղջիկները:
 – Հայ-տարանա, տա-նա-նա...
 Գետի մյուս ափին, ավերակների մեջ, մարդիկ շատանում էին:
 – Պարե՛ք, – հանկարծ գոռաց ծերերից մեկը: – Առանց նվագի պարեք, ոտներդ չեն կոտրվի:
 – Քոչարի՛, – ճչաց ջահելներից մեկը:
 Քոչարի բռնեցին, իսկ նվագ չկար:
 Ու հանկարծ...

Պարկապգուկը քոչարի էր փչում: Ո՞վ: Որտեղի՞ց: Մի քանի վայրկյան խուճրդ պարում էր լավ, ճիշտ, կատաղի:

Հետո տեսան՝ պարկապգուկը այն, մյուս ափին էր, որտեղ ավերակներն են: Պարկապգուկը ճչում էր զիլ ու հաղթական, ճչում էր այն ափից, իսկ այս ափին պարում էին:

– Հայ է, – ասաց ծերերից մեկը, – հայ է, խմենք էդ մարդու կենացը, հայ է:

Քանի՞ րոպե պարեցին, ո՞վ գիտե: Գուցե պետք է հարցնել քանի ժամ: Ո՞վ գիտե: Ու հանկարծ ձայնը կտրվեց: Հետո տեսան՝ երկու սահմանապահ զինվոր գոռոգոռում են մարդու վրա, մեկը քաշում էր նրա թևից, պարկապգուկը ընկած էր հողին՝ սպանված երեխայի նման:

– Հայ էր, – ասաց նույն ծերունին, – խմենք:

Ըստ Վարդգես Պեպրոսյանի "Հայկական էսքիզներ"

*թաղման էին գնացել – ушли (ранее) на похороны



Բառեր (слова)

Նվագ – игра на музыкальном инструменте
(խաղ – детская, азартная, театральная)
զուռնաջի – музыкант, играющий на зурне
թաղում – похороны, погребение
դափարկել – опорожнять
ուրախանալ – радоваться
փխրել – грустить
գետ – река, **ափ** – берег
գետափ – речной берег
պարիսպ – крепостная стена
պալատ – дворец
վանք – монастырь

ջահել – молодой (разг.)
ծեր – старый, пожилой
բացի – кроме (предлог)
սահմանապահ – пограничник
անորոշ – неопределенный
ձայն – голос, звук
պարել – танцевать
երգել – петь (զ=ք)
շարանալ – увеличиться, умножиться
հանկարծ – вдруг
գոռալ – кричать, орать, реветь
կոտրվել – сломаться
ճչալ – кричать, вскрикнуть, визжать

բռնել – держать, зд. քոչարի
 ~ – танцевать кочари
 պարկապոկ – волынка
 փչել – дуть, зд. պարկապո-
 գոկ ~ – играть на волынке; в
 тексте: волынка играла
 խումբ – группа
 կարադի – яростный, неист-
 товый, яростно, неистово
 զիլ – пронзительный,
 зычный, пронзительно
 հաղթական – победный,


победоносный, победно,
 победоносно
 կենաց – тост, խմել մեկի կե-
 նացը – выпить за кого-то
 կտրվել – обрываться
 զինվոր – солдат
 գոռգոռալ – кричать,
 накричать, шуметь
 քաշել – тянуть
 թև – рука (от кисти до плеча)
 հող – земля, почва
 սպանված – убитый

Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ
Комментарии, задания и упражнения

11. Կետերի փոխարեն գրե՛ք ռի կամ ռ տառերը.

Вместо точек поставьте буквы рн или р:

Հանկա.ծ երիտասա.դները ճանապա.ի միջին պա. բռնեցին:
 Հինգե.որդ դասա.անի աշխա.ագրության դասագրքում կան
 բոլո. աշխա.ամասերի քա.տեզները:
 Պըլը Պուղին խոնա. ու շնո.քով ծառա էր:
 Ներսես Շնո.ալին տասներկուերորդ դա.ի հայ նշանավո.
 բանաստեղծ ու երաժիշտ էր:
 Այսօ. դպ.ոցում խո.րդակցություն կա:

12. Ա) 

լեզու, լեզվի, լեզվից, լեզվով, լեզվում.
 կատու, կատվի, կատվից.
 հեռու, հեռվից, հեռվում.
 Բաքու Բաքվի, Բաքվից, Բաքվով, Բաքվում.

Բ) Կետերի փոխարեն գրե՛ք աջ սյունակում բերված բառը՝ ճիշտ հոլովածևով.

Вместо точек поставьте приведенное в правом столбце слово в нужном падеже.

Հայերենը դժվար ... չէ, բայց հայոց ... շատ ժամանակներ կան: Նա միշտ ոռուսաց ... գերազանց է ստանում: Բերանիդ շուրջը ելակ է, ... մաքրիր:	լեզու
Մենք մի փոքրիկ ... ունենք, այսինքն ... ձագ: Հարևանի աղջիկը հաճախ գալիս է մեր ... հետ խաղալու, իսկ նրա մայրը կարծես թե վախենում է ...:	կատու
Ի՞նչ ես տեսնում ...: Որտեղի՞ց եք գալիս, .., հոգնա՞ծ եք: ... մի՞ գնա, այստեղ խաղա:	հեռու
– Դու որտեղի՞ց ես, Աղբբեջանի՞ց: – Այո, ...: – Իսկ ծնող-ներդ հիմա որտե՞ղ են, ..: – Չէ, Արցախում են, ... չեն:	Բաքու

13.Ա)

существительное, прилагательное или наречие

→ глагол (простой или с незначимым суффиксом)

NB:

մաքուր, գիր, զգույշ, հպարտ, մեծ, վերջ, սանր (расческа) նկար, ծանոթ, ընկեր, բարեկամ, հիվանդ, ծիծաղ, աշխույժ (бодрый), բարձր, առողջ, ճաշ, շատ, դատարկ, նախաճաշ, տխուր, ուրախ

→ մաքրել, գրել, զգուշանալ, հպարտանալ

ուլ→0
ի→0
ուլ→ուլ
-ան-

Դ) Կետերի փոխարեն օգտագործեք աջ սյունակում բերված բայերից մեկը նշված ժամանակով.

Употребите один из глаголов правого столбца в указанном времени:

Եկեք ծանոթանանք, իմ անունը Վարդան է, իսկ ի՞նչ է Ձեր անունը:

✓ Եկեք ..., իմ անունը Վարդան է, իսկ ի՞նչ է Ձեր անունը:

Ես ցանկանում եմ, որ Դուք շուտով ... և այլևս ...:

Դասը ... ու երեխաներն ...:

– Այսօրվա թերթը ուզու՞մ եք:

– Ոչ, շնորհակալություն, թերթը ինձ ...:

Այս ուսանողները նույնիսկ քննությունից առաջ ..., թե մի անգամ գիրքը բացեն, կրկնեն:

Ես նրանից ոչ մի լավ բան չեմ սպասում, դու էլ ...:

աշխուժանալ (անցյալ կատարյալ – прост. прост.)

առողջանալ (ըղծականի ապառնի – желат.)

զգուշանալ (իրամայական – повел.)

ծուլանալ (ներկա – наст.)

✓ ծանոթանալ (ըղծականի ապառնի – желат.)

հետաքրքրել (ներկա, ժխտ. – наст. отр. ф.)

հիվանդանալ (ըղծականի ապառնի, ժխտ. – желат. отр.ф.)

վերջանալ (անցյալ կատարյալ – прост. прост.)

14.Ա)

բացի + բաց. հ. (отн. н.)

Մարդիկ են երևում, բացի սովորական սահմանապահներից, ուրիշ մարդիկ:

Բոլորը համաձայն են, բացի մեկից, բացի քեզնից:

Նա բացի պարելուց ուրիշ ոչինչ չգիտի անել:

Դ) Ե



Բոլորը գալիս են մեզ հետ, իսկ դու չես գալիս:

→

Բոլորը գալիս են մեզ հետ, բացի քեզնից:


Բոլորը գալիս են մեզ հետ, իսկ դու չես գալիս:

Ոչ ոք սպաս չի ուզում ուտել, իսկ մեր հյուրն ուզում է:

Ես այդտեղ ոչ մի բան չեմ տեսնում, միայն մի քանի կետ են տեսնում:

Ես ոչինչ չեմ ուզում, միայն մի բաժակ սուրճ եմ ուզում:

Դու անընդհատ գլուխ ես գովում, թե ամեն ինչ կարող եմ, ամեն ինչ գիտեմ, միայն զուռնա փչել չգիտեմ, բայց նույնիսկ քոչարի պարել չգիտես:

15.Ա) 

ծայնը բարձրացնել – 1. повысить голос, сердиться
 2. сделать громче (звук телевизора, радио и т.д.)
 ծայնը գլուխը գցել- բարձր ծայնով խոսել, գոռոռալ, երգել
 ծայնը կտրել – 1. [ռել, այլևս չխոսել. 2. [ռեցնել, աղմուկը դադարեցնել
 ծայնը կտրվել – 1.охрипнуть, 2.воцариться (о молчании)
 ծայն խնդրել – попросить слово
 ծայն տալ – предоставить слово
 ծայն ծայնի տալ – միասին երգել, խոսել, [ալ – сделать что-то созвучно
 ծայնագուրկ – лишенный права голоса
 անծայն – беззвучный, беззвучно
 բարձրածայն ≠ ցածրածայն – громко ≠ тихо



Ինչու՞ ես **ծայնդ բարձրացնում**, միևնույն է, ես ոչինչ չգիտեմ: Կարեն ջան, մի այդ ռադիոյի **ծայնը բարձրացնե՛ս**: Աշակերտները **անծայն** սպասում էին ուսուցչի որոշմանը: Երեկոները պապս փակվում է իր սենյակում ու **ցածրածայն** երգում է "Ծիծեռնակը": Ինչ ես **ծայնդ գլուխդ գցում**, **կտրի՛ր ծայնդ**, ոչինչ չի լսվում: Ասում եմ, թե մեզ մոտ հիմա **ծայնագուրկ** մարդ չկա: Ջինվորի ոտների **ծայնը** որ **կտրվեց**, գլուխներս բարձրացրիմք: – Այս ի՞նչ աղմուկ է: – Մեր հարևանների տանը այսօր ուրախություն է, **ծայն ծայնի են տվել**, ամբողջ օրը **բարձրածայն** երգում են: Ես վերջում **ծայն կիսնդրեմ** ու կասեմ, ինչ որ մտածում եմ:


Ի

Բ) Կետերի փոխարեն գրե՛ք "ծայն" բառով համապատասխան արտահայտություն.

Вместо точек поставьте одно из выражений со словом "ծայն", подходящих по смыслу:

- երգիչը սառը ջուր խմեց և նրա ...:
- Հեռուստացույցի ... մի քիչ ..., խնդրում եմ:
- Նա ... իր անգլերենի դասն էր սովորում, իսկ տղաներն ասում էին "...":
- Աղջիկները ... ու քոչարի երգեցին, իսկ տղաները պարեցին:
- Ինչու՞ չեք թողնում, որ ես էլ ասեմ, ինչ որ մտածում եմ, ես, ինչ է, ... եմ:
- Եթե ուզում ես խոսել, բոլորի նման ... ու խոսի՛ր:
- Նա ... մտավ այն սենյակը, որտեղ երեխան քնած էր:
- Նա տեսավ, որ իրեն ոչ ոք չի լսում և բարկացավ,
- Փոքրիկը ... ու երկար լաց եղավ:

Ի 16. 



Ձուռնա նվագել գիտե՞ս:

(նվագել = ձգ.փչել)

Ձուռնա փչել գիտե՞ս:

→

Ձուռնա նվագել գիտե՞ս:
 Ա՛յս, գլխարկս մոռացա, արագ բարձրացիր վերև, գլխարկս բե՛ր, դու ինձնից **երիպասարդ** ես:
 Ինչու՞ ես այդպես **ճչում**, ես քեզ շատ լավ եմ լսում:
 Մեր **ալևոր** հարևանները ամբողջ օրը նարդի են խաղում:

17.Ա) ☞



Դաշնակահարը դաշնամուր (фортепиано) է նվագում:
 Ջութակահարը ջութակ (скрипка) է նվագում:
 Թավջութակահարը թավջութակ (виолончель) է նվագում:
 Երգեհոնահարը երգեհոն (орган) է նվագում:
 Ջուռնաչին զուռնա ու պարկապուկ է փչում:
 Շեփորահարը շեփոր (труба, горн) է փչում:
 Թմբկահարը թմբուկ (барабан) է զարկում:
 Երգչախումբը (хор) երգում է:
 Նվագախումբը (оркестр) նվագում է:
 Թատերախումբը (театральная труппа) ելույթ է ունենում,
 շրջագայում է: (выступает, гастролирует)
 Շուրջապար (хоровод) պարել, կամ բռնել:

Դ) Կետերի փոխարեն օգտագործեք համապատասխան բառ՝ ըստ իմաստի.

Вместо точек поставьте подходящее по смыслу слово:

Մեր վերևի հարևանը դաշնակահար է, առավուտից երեկո ... է նվագում:

Ջարմիկս ամբողջ օրը ջութակ է ..., ուզում է ... դառնալ:

... փչելով, ... զարկելով նվագախումբը գնում էր փողոցով:

Մեծ եղբայրս թավջութակ է ..., փոքր եղբայրս թմբուկ է ..., պապս ջահել ժամանակ իրենց գյուղի հայտնի ... էր ու դեռ երբեմն զուռնա է ..., ես էլ գուցե ... դառնամ, դաշնամուր նվագեմ, այդ ժամանակ մեր ընտանիքը կդառնա իսկական ...:

Նվագելուց հետո երգեհոնահարը դեռ մի քանի վայրկյան անշարժ մնաց ... առաջ:

Շատ երգիչներ հիվանդ են, այսօր ... լրիվ չէ:

Եկեք Քոչարի կամ մի ուրիշ ... բռնենք:

18.Ա) ☞

Կենաց խմել, կենաց առաջարկել – предложить тост
 բաժակաճառ ասել – произносить тост
 քո (Ձեր, թամադայի) կենացը – за тебя (Вас, тамаду)
 անուշ լինի (եղավ) – на здоровье! (говорится пьющему)

Դ) Կետերի փոխարեն օգտագործեք համապատասխան արտահայտություն.

Вместо точек поставьте подходящее выражение:

– Հարկավոր է թամադա ընտրել և խմել ...: Այսպիսով (таким образом) Դուք մեր սեղանի թամադան եք, ես խմում եմ ...:

– Բարեկամս, այսօր դու՛ ես մեր թամադան, ես էլ եմ խմում ...:

– ..., շնորհակալ եմ: Առաջին բաժակաճառով ես ուզում եմ ... այսօրվա հերոսի ...: Կարծես, ինձնից հետո մեր տանտերն է ուզում ...:

19.Ա) ☞

մատուռ – часовня
 վանք – монастырь
 եկեղեցի – церковь
 տաճար – храм

Դ) Ստուգեք, ճանաչու՞մ եք արդյոք Հայաստանի վանքերն ու տաճարները: Բերված շարքից ո՞րն է դուրս մնում:


Проверьте себя, знаете ли Вы монастыри и храмы Армении? Скажите, что выпадает из приведенного ряда:

Գառնի, Գեղարդ, Էջմիածին, Զվարթնոց, Հաղբաք, Սանահին:



Անի. Մայր տաճարը.



Ի20. Կարդացե՛ք և ասացե՛ք՝ ճի՞շտ է, թե՞ սխալ: 

Прочитайте и скажите, верно или нет.

	ճիշտ է	սխալ է
1. Չախ կողմում երևում են Աղջկաբերդի պարիսպները և պալատի ավերակները:	✓	
2. Ախուրյանի դիմացի ափին երևում է Էջմիածնի մայր տաճարը:		
3. Ախուրյանի այս ափին մարդիկ էին նստած. ուտում-խմում էին:		
4. Նվագ չկար. գյուղացիները գնացել էին զուռնաչու թաղմանը:		
5. Նվագ չկար, բայց աղջիկների երգչախումբ կար:		
6. Աղջիկներն ու ծերերը շատ էին ուզում, որ տղաները քոչարի բռնեն:		
7. Ախուրյանի այն ափին դեռ հայ կա:		
8. Պարկապզուկի զիլ ձայնը լսելով մարդիկ շատացան և քոչարի բռնեցին այն ափին:		
9. Զինվորները զուռնաչու թևից քաշեցին և նրան տարան պալատը:		
10. Սահմանապահը թույլ չտվեց, որ այն մարդը շարունակի նվագել:		
11. Մարդիկ նայեցին և տեսան, որ հողին մի սպանված երեխա է ընկած:		
12. Ծերը մի բաժակաճառ ասաց ու դատարկեց իր բաժակը:		

Урок 15. Տասնհինգերորդ դաս

Грамматика
 Повелительное наклонение (продолжение).
 Указательные местоимения и их склонение.
 Определенные и неопределенные местоимения.
 Словообразование.
 Образование сложных слов.
 Суффиксы -եղեն, -ական.
 Употребление прилагательных в роли существительных.
 Послелогоս մոտ, վրա, համար, հետ, պես, նման и их сочетание с личными местоимениями.
 Послелогоս в роли наречий.
 Предлоги դեպի, մինչև, послелог պատճառով, союз այլ.

Текст
 Որտեղ ես ծնվել եմ, այնտեղ մարդիկ բարեկիրթ են (Վիլյամ Սարոյան)

Стихи
 Խոսք իմ որդուն (Սիլվա Կապուտիկյան)
 Բերանն արնոտ Սարդակերը էն անբան (Հովհ. Թումանյան)

Հրամայական եղանակ (շարունակություն) Повелительное наклонение (продолжение)

Վարժություններ Упражнения

1. Գտե՛ք ձախ կողմում բերված "հրամայական" արտահայտությունների պատասխանը աջ կողմում.

Найдите к "повелительным" репликам в левой части подходящие ответные реплики в правой части:



- *Եղբորդ հետ հայերեն խոսիր:* - *Եղբայրս հայերեն չգիտի:*

1. ✓ – Եղբորդ հետ հայերեն խոսիր:	– Ոչ, դասարանում ես ոչինչ չեմ թողնում:
2. – Սուրճի հետ մի՞րգ էլ բեր:	– Ես քո տետրը չեմ վերցնում: Ների՛ր ինձ, ես կարծում էի, թե սա իմ տետրն է:
3. – Գրքերդ մի՞ թող դասարանում:	– Արդեն բերում եմ:
4. – Նախ ծիրանը լվա՛, հետո սուրճ կեփես:	– Շատ մեծ է պայուսակս, ամհմար է բարձրացնել:
5. – Իմ տետրը մի՞ վերցրու:	✓ – Եղբայրս հայերեն չգիտի:
6. – Պայուսակդ այստեղ մի՞ թող, վերցրու՛ քեզ հետ:	– Ծիրանը լվացի, հիմա սուրճը կեփեմ:

7. – Վերցրու՛ր Ռաֆֆու "Սամվելը" կարդա՛:	– Ես ծուլլ չեմ, պարզապես տունը մաքրելու ժամանակ չունեմ:
8. – Դեռ մի՛ մտնիր, բժիշկը դեռ զբաղված է:	– Առաջ գնացեք, ես հետևում եմ ձեզ:
9. – Խնդրում եմ, ընկերոջս մի՛ մեղժիր:	– Հենց այսօր կվերադարձնեմ:
10. – Ուշադիր եղիր, մի՛ սխալվիր:	– Ես ինքս չեմ հիշում այդ դեպքը:
11. – Ծուլլ մի՛ եղիր, ծուլութունը լավ բան չի:	– Չէ, ես դիտմամբ չեմ սխալվում, ես իսկապես մոռանում եմ մաթեմատիկան:
12. – Երիտասարդ, ձեր վկայականը ցույց տվեք, խնդրեմ:	– Ձեր փողոցում չի կարելի ազդանշան տալ, այնտեղ հիվանդանոց կա. դու ինձ սպասիր ձեր փողոցի ցուցամակի մոտ:
13. – Աղմուկ մի՛ հանեք, տատիկը քնած է:	– Ես չեմ կռանում, բայց ճիշտն ասած՝ լավ չեմ տեսնում:
14. – Մայրիկ, դիտմամբ մի սխալվիր, դու շատ լավ էլ գիտես, որ հինգ անգամ հինգ քսանվեց չի անում:	– Մենք իսկապես չենք բողոքում, արդեն ամեն ինչ սովորական է:
15. – Հագուստների մաքրիր ու մազերդ սանրիր:	– Ամեն մի խաչմերուկում հարկավոր է ստուգել, թե ինչպես է կոչվում այս փողոցը:
16. – Քույրիկ, վերնաշապիկս արդուկիր, խնդրում եմ:	– Մենք աննպատակ չենք զբոսնում, խաչմերուկում մեր ընկերուհուն ենք սպասում:
17. – Գրելիս մի՛ կռանա:	– Արդեն մազերս եմ սանրում, իսկ հագուստներս մաքուր եմ:
18. – Հետևեցեք ինձ:	– Տու՛ր վերնաշապիկդ, որ արդուկեմ:
19. – Այդ դեպքը նրան մի հիշեցրեք:	– Մենք չենք աղմկում, պարզապես ես օրանալ եմ, իսկ Գագիկը՝ զնացք:
20. – Աննպատակ փողոցներում մի՛ զբոսնեք:	– Այո, ես միշտ անցորդներին կամ տաքսու վարորդներին կամ ոստիկանին եմ հարցնում:
21. – Ամեն մի խաչմերուկում կանգ մի՛ առեք:	– Մի՛ անհանգստանա, ես երբեք ոչ ոքի չեմ մեղժում:
22. – Հենց որ հասնեք մեր փողոցը, ինձ ազդանշան տվեք, ես անմիջապես կիջնեմ:	– Չէ, չեմ մտնում, սպասում եմ:
23. – Հարևանիդ արդուկը դեռ քեզ մո՞տ է, վերադարձրու՛:	– Ես չեմ ուզում "Սամվելը" ռուսերեն կարդալ, մի քիչ էլ հայերեն կսովորեմ, հետո արդեն հայերեն կկարդամ:
24. – Մի՛ բողոքեք, ոչինչ, ավելի դժվար օրեր էլ են լինում:	– Ահա իմ վկայականը:
25. – Եթե մեր փողոցի ցուցամակը չգտնեք, որևէ անցորդի հարցրեք:	– Ես աշխատում եմ ուշադիր լինել, բայց հոգնած եմ:

2.

Ա) – Մայրիկ, Փառանձեն քույրիկը իր գիրքը չի տալիս ինձ:
 Բ) – Մայրիկ, Փառանձենը երգում է, չի քնում:

 
 Ա) – Փառանձեն, տու՛ր գիրքդ եղբորդ:
 Բ) – Փառանձեն, քնի՛ր, մի՛ երգիր:



Ա) – Մայրիկ, Փառանձեն քույրիկը իր գիրքը չի տալիս ինձ. իր նկարները ինձ ցույց չի տալիս. ինձ հետ չի գալիս բակ. ինձ հետ չի խաղում. ինձ համար չի կարդում. հայերեն գրերը ինձ չի սովորեցնում. իմ գլխարկը չի տալիս, իմ ներկերը չի վերադարձնում:

Բ) – Մայրիկ, Փառանձենը երգում է, չի քնում. խաղ է անում, դասերը չի սովորում. հայրիկի գրիչը տանում է դպրոց. հեռուստացույց է նայում, չի քնում. վերարկուն ու գլխարկը շարտում է, չի կախում. ինձ չի հավատում. դասի ժամանակ խոսում է, չի թողնում, որ դասը լսեն. կարկանդակ է ուտում, ճաշ չի ուտում:

Փառանձեն	→	Քնարիկ և Փառանձեն
Գ) – Մայրիկ, Քնարիկն ու Փառանձենը իրենց գիրքը չեն տալիս ինձ: Դ) – Մայրիկ, Քնարիկն ու Փառանձենը երգում են, չեն քնում:	→	Գ) – Քնարիկ, Փառանձեն, սվեք ձեր գիրքը ձեր եղբորդ: Դ) – Քնարիկ, Փառանձեն, քնե՛ք, մի՛ երգեք:

3.

Ա) – Ես կարող եմ չաղմկել:
 Բ) – Մենք կարող ենք պատշգամբում խորոված անել:

 
 Ա) – Մի՛ աղմկիր:
 Բ) – Արե՛ք:

Ա) – Ես կարող եմ չաղմկել. չսխալվել. չկռանալ. չբողոքել:
 Ես ուզում եմ մի քիչ զբոսնել. իմ հագուստները ինքս լվանալ. գաթա թխել. տունը մաքրել. թատրոն գնալ. մի հետաքրքիր ճանապարհորդություն կատարել. բազկաթոռները մոտեցնել բազմոցին. գրասեղանը դնել լուսամուտի դիմաց:

Բ) – Մենք կարող ենք պատշգամբում խորոված անել. այս ամառ Հայաստան գնալ. երեկոյան ձեզ այցելել. նրան հասկացնել իր սխալը. քեզ համար մի գեղեցիկ վերարկու ընտրել. չառարկել. նրան ոչինչ չասել. ձեր ընկերուհուն չմերժել:

Մենք ուզում ենք նրան ամեն ինչ պատմել. մեր բնակարանը փոխանակել. Մասիս սարը բարձրանալ:



թող + третье лицо (ед. или мн. ч.) желательного наклонения – побуждение к действию третьего лица

ես	→	նա
մենք	→	նրանք
Գ) – Ես կարող եմ չաղմկել: Դ) – Նրանք կարող են պատշգամբում խորոված անել:	→	Գ) – Թող չաղմկի: Դ) – Թող անեն:

См. примеры из пунктов А) и Б).
 Տե՛ս Ա) և Բ) կետերի օրինակները:

– Ի՞նչ անեմ: (Մի գիրք վերցնել կարդալ, աննպատակ չգրսնել:)



– Մի գիրք վերցրու՛ կարդա, աննպատակ մի՛ գրսնիր:


- Ի՞նչ անեմ: (Մի գիրք վերցնել կարդալ, աննպատակ չգրսնել:)
- Ի՞նչ երգեմ: (Մեր հոր երգը երգել:)
- Ինչպե՞ս գտնեմ ձեր տունը: (Փողոցն անցնել, հարցնել շենքը:)
- Ի՞նչ դառնամ: (Բժիշկ դառնալ:)
- Ի՞նչ ասեմ տնօրենին: (Ասել, որ ժամամակ չունենք:)
- Ու՞ր գնանք երեկոյան: (Թատրոն չգնալ, մեզ հյուր գալ:)
- Ի՞նչ ուտեմ, քաղցած եմ: (Հաց ու պանիր ուտել:)
- Ե՞րբ զանգեմ համալսարան: (Հենց հիմա զանգել:)
- Ու՞ր դնեմ ծաղիկները: (Տանել, դնել Անի քույրիկի սենյակում:)





Побуждение к действию (без особых оттенков) чаще оформляется повелительным наклоением, в то время как второе лицо желательного наклоения употребляется для выражения смягченного, ненавязчивого побуждения.

Внимание! Если носитель армянского языка чаще выбирает положительную форму побудительного наклоения для выражения побуждения (ներս մտիր – ներս մտեք), то для достижения обратной цели предпочитает отрицательную форму второго лица желательного наклоения (ներս չմտնես – ներս չմտենք) с соответствующей побудительной интонацией. Т.е. в сознании армян часто антонимом повелительного наклоения выступает отрицательная форма второго лица желательного наклоения, вместо ожидаемого "запретительного" наклоения. Очевидно, это происходит потому, что повелительное наклоение, выражая побуждение, как бы направлено в будущее; но и отрицательная форма желательного наклоения, выражая предостережение, имеет такую же направленность. Это и "роднит" повелительное наклоение и отрицательную форму желательного наклоения. Можно предположить, что носители языка прибегают к "запретительному" наклоению, когда хотят остановить уже совершающееся действие, когда хотят вмешаться в происходящее событие или изменить известное говорящему намерение. Иными словами, если повелительное и желательное наклоения одинаково относятся к предстоящему, то "запретительное" наклоение скорее применимо к более актуальным событиям, связанным с моментом речи.

Например, ребенку, играющему с мусором или с опасным предметом, говорят: Ձեք մի՛ տա, փտափաքաքաղով մի՛ խաղա: А ребенку, подходящему к чему-то грязному или опасному – Ձեք չտա՛ս, չխաղա՛ս:

 При выражении побуждения побудительным или желательным наклоением часто можно встретить (особенно услышать в устной речи) наречие մի (очень разговорный, не рекомендуемый вариант մի հատ), смягчающее побуждение. Не путайте смягчающее наречие մի, которое *никогда* не носит ударения, и запретительное ударяемое մի! Ср. Մի գնա՛, ասա՛, բող գա: Մի գնա՛ս, ասես, որ գա: и Մի՛ գնա, ասա, բող չգա: (Մի - смягчающее наречие, Մի՛ - запретительная частица)

Կ5. 



Լամպը մոտեցնել:

-
- Լամպը մոտեցրու՛ / մոտեցրե՛ք ինձ, խնդրում եմ (խնդրեմ): (*ռուս. - հրամ.*)
 - Մի լամպը մոտեցրու՛ / մոտեցրե՛ք ինձ, խնդրում եմ (խնդրեմ):
 - Լամպը մի մոտեցրու՛ / մոտեցրե՛ք ինձ, խնդրում եմ (խնդրեմ):
 - Լամպը մոտեցնե՛ս / մոտեցնե՛ք ինձ: (*թեթ. - ըղձ.*)
 - Մի լամպը մոտեցնե՛ս / մոտեցնե՛ք ինձ:
 - Լամպը մի մոտեցնե՛ս / մոտեցնե՛ք ինձ:

Լամպը մոտեցնել:

Վերնաշապիկը արդուկել:

Շարունակել կարդալ:

Դուռը փակել:

Գնալ խանութ:

Բարձրանալ երրորդ հարկ:

Կարենի հասցեն գտնել, մեզ ասել:


Մեքենան կանգնեցնել:


Վազգենի հեռախոսի համարը հիշեցնել:

Կաթսան տանել, վերադարձնել

հարևանին:

Վեր կենալ, տատիկին տեղ տալ:

Կ6. 



Չմոտենալ պատուհանին:

-
- Մի՛ մոտեցիր (մի՛ մոտենա) պատուհանին:
 - Մի՛ մոտեցեք (մի՛ մոտենաք) պատուհանին:
 - Չմոտենա՛ս պատուհանին:
 - Չմոտենա՛ք պատուհանին:

Չմոտենալ պատուհանին:

Բնակարանը չվաճառել:

Սենյակում չծխել:

Ննջասենյակում չաղմկել:

Իմ օգնականին չմերժել:

Վասակին չհավատալ:

Իմ նամակները չկարդալ:

Իմ գլխարկը չհագնել:


Երեխային տանը մենակ չթողնել:


Մայրենի լեզուն չմոռանալ:


Գիշերը անտառում չվախենալ:

Ընթացքը չդադարեցնել:

Հիվանդին չվախեցնել:

Կ7. Ա) 




—...  ...
 - Ի՞նչ: Ի՞նչ ես ասում:
 - Ասում եմ, որ ինձ օգնես անգլերենի դասը սովորել:

→ - Օգնի՛ր ինձ անգլերենի դասը սովորել, խնդրում եմ:

• —...  ...


- Ի՞նչ: Ի՞նչ ես ասում:

- Ասում եմ, որ ինձ օգնես անգլերենի դասը սովորել:

• —...  ...


- Ի՞նչ է գրում մայրիկը:

- Գրում է, որ իր նամակին շուտ պատասխանեմք:

• —...  ...


- Ի՞նչ է ասում հայրիկը:

- Պահանջում է, որ տետրս իրեն ցույց տամ:

• -...  ...


- Ի՞նչ է ասում մայրիկը հայրիկին:

- Ասում է, որ նա երեկոյան սուրճ չխմի, թեյ խմի կամ, ավելի լավ է, մածուն ուտի:

• -...  ...

- Ի՞նչ է ասում ուսուցչուհին:

- Ասում է, որ հիմա մեր տետրերը դնենք իր սեղանին, իսկ վաղը ոչ մի գիրք ու ոչ մի տետր դպրոց չբերենք, թողնենք տանը:

• -...  ...



- Ի՞նչ է ասում մեծ եղբայրդ:



- Ասում է, որ ինքը կարևոր աշխատանք է անում, որ իրեն չխանգարենք:

• -...  ...

- Ի՞նչ է ասում տատիկդ:

- Ասում է, որ լուսամուտը չբացես, ցուրտ է:

 **Բ)** 

- Կարեն, մոտեցի՛ր ինձ, Արտակ ու Վազգեն, դուք էլ ձեր սեղանը մոտեցրեք:

- Ի՞նչ է ասում ուսուցչուհին:


-...  ...:

→

- Ասում է, որ Կարենը մոտենա իրեն, Արտակն ու Վազգենն էլ իրենց սեղանը մոտեցնեն:


• - Կարեն, մոտեցի՛ր ինձ, Արտակ ու Վազգեն, դուք էլ ձեր սեղանը մոտեցրեք:

- Ի՞նչ է ասում ուսուցչուհին:

-...  ...:

• - Աննա՛, մեծերին հարգի՛ր:

- Ի՞նչ է ասում եղբայրդ:

-...  ...:

• - Արմինե, դեմքդ ու ձեռքերդ լվա՛, մազերդ սանրիր:

- Ի՞նչ է ասում մայրիկս:

-...  ...:

• - Վարդանիկ, գլխարկդ հանիր ու քաղաքավարությամբ բարևի՛ր պարոն բժշկին:

- Ի՞նչ ես ասում, մայրիկ, չեմ լսում:

-...  ...:

• - Համլետ և Հասմիկ, հետևեցե՛ք ինձ:

- Ի՞նչ:

-...  ...:

• - Շնորհակալ եմ, ինձ այլևս մի՛ ստիպեք ուտել:

- Ի՞նչ է ասում մեր հյուրը:

-...  ...:

Խոսք իմ որդուն (հատված)

Լսի՛ր, որդիս, պատգամ որպես
Սիրող քո մոր խոսքը սրտանց.
Այսօրվանից հանձնում եմ քեզ
Հայոց լեզուն հազարազանձ:
Պահի՛ր նրան բարձր ու վճիտ
Արարատի սուրբ ձյունի պես,
Պահի՛ր նրան սրտիդ մոտիկ
Քո պապերի աճյունի պես:
Ու տե՛ս, որդիս, ուր էլ լինես,
Այս լուսնի տակ ուր էլ գնաս,
Թե մորդ անգամ մտքիցդ հանես,
Քո մայր լեզուն չմոռանա՛ս...

Սիլվա Կապուտիկյան

Բառեր Слова

խոսք – слово

պատգամ – завет

սրտանց – от сердца, от души

հանձնել – вручить

հազարազանձ – содержащий

тысячи сокровищ

զանձ – сокровище

պահել – хранить, беречь

վճիտ – кристальный, чистый,
чисто

սուրբ – святой (բ=փ)

ձյուն – снег

աճյուն – прах

լուսին – луна

անգամ – даже (գ=բ)

մտքից հանել – забыть

Указательные местоимения

Ցուցական դերանուններ



Вспомните известные Вам указательные местоимения и запомните остальные:

ի՞նչը (ո՞վ*)	սա	դա	նա	նույնը
ինչե՞րը (ովքե՞ր*)	սրանք	դրանք	նրանք	նույները
ո՞ր + ցւ.	այս	այդ	այն	նույն
ինչպե՞ս	այսպես	այդպես	այնպես	նույնպես
ինչպիսի՞ + ցւ.	այսպիսի	այդպիսի	այնպիսի	նույնպիսի
ինչքա՞ն, որքա՞ն	այսքան	այդքան	այնքան	նույնքան
որչա՞փ	այսչափ	այդչափ	այնչափ	նույնչափ
որտե՞ղ, ու՞ր	այստեղ	այդտեղ	այնտեղ	

*Местоимения սա и դա, սրանք и դրանք склоняются как նա и նրանք.

Եզակի թիվ Единственное число

Персонифицированное* склонение Անձի առում		Неперсонифицированное склонение Իրի առում	
Ուղղ. հ. Им. п.	աա, դա	Ուղղ.-հայց. հ. Им.-вин. п.	աա, դա
Սեռ.-տր.-հայց. հ. Род.-дат.-вин. п.	սրա(ն), դրա(ն)	Սեռ.-տր. հ. Род.-дат.п.	սրա(ն), դրա(ն)
Բաց. հ. Отл. п.	սրանից, դրանից		
Գործ. հ. Тв. п.	սրանով, դրանով		
Ներգ. հ. Местн.п.	սրանում, դրանում		


Հոգնակի թիվ Множественное число

Персонифицированное* склонение Անձի առում		Неперсонифицированное склонение Իրի առում	
Ուղղ. հ. Им. п.	սրանք, դրանք	Ուղղ.-հայց. հ. Им.-вин. п.	սրանք, դրանք
Սեռ.-տր.-հայց. հ. Род.-дат.-вин. п.	սրանց, դրանց	Սեռ.-տր. հ. Род.-дат.п.	սրանց, դրանց
Բաց. հ. Отл. п.	սրանցից, դրանցից		
Գործ. հ. Тв. п.	սրանցով, դրանցով		
Ներգ. հ. Местн.п.	սրանցում, դրանցում		

*Применительно к лицам аа, սրանք и դա, դրանք приобретают пренебрежительный оттенок. Ср. русск. этот, тот. Напр. Սրա՞ն տեսեր "На этого посмотрите!"

Помните, что местоимения, содержащие -ս-, указывают на близость к говорящему (как в пространстве, так и во времени); местоимения, содержащие -դ-, — на некоторую отдаленность от говорящего во времени (в пространстве — на близость к собеседнику); местоимения, содержащие -ն-, — указывают на наибольшую отдаленность от говорящих. Например, սրանից առաջ, սրանից հետո — до этого, после этого (имеется в виду момент речи); դրանից առաջ, դրանից հետո — до этого (до того), после этого (после того) (имеется в виду какой-то момент в прошлом), այսպիսով — таким образом.

8. Ա)



Ես այդ թավան եմ ուզում ծուկ տապակելու համար:



Ո՞ր թավան ես ուզում:

Ես այդ թավան եմ ուզում ծուկ տապակելու համար: Ես այն կաթսան եմ ուզում փլավ եփելու համար: **Նույն** շանփուրները վերցրու: Համալսարանում դասախոսներին **այնքան** եմ վճարում, որ միայն գիտությանը անհնար է ապրել: **Այնպես** ես նայում լուսանկարիս, կարծես առաջին անգամ ես տեսնում: Ես **այսպես** ոչինչ չեմ տեսնում: **Այդպես** չեմ արդուկում վերնաշապիկները: Նա **այնպես** միշտ սև խաղող է բերում: Քննությանը ես **նույնպիսի** հարցեր կտամ:



բ) Կարդացե՛ք և ուշադրութ՞յուն դարձրե՛ք ցուցական դերանուններին:

Прочитайте и обратите внимание на указательные местоимения.





Սրա իմաստը ի՞նչ է: **Սրա** գինն ի՞նչ է: **Սրանից** բան դուրս չի գա: **Դրանից** ի՞նչ օգուտ: **Սրանից** հետո միասին խաղացե՛ք: **Սրանից** հեջո՞ւ են քեզ հաճախ կգրեն: **Դրանից** հեջո՞ւ նա ինձ հաճախ էր գրում: **Դրանով** ի՞նչ են ուզում ասել: **Սրանով** ամեն ինչ վերջանում է: **Դրա համար** նրան դուրս արեցին աշխատանքից: **Սրա՛ն** տեսե՛ք՝ "կարծեմ Մոկացյանենց տանն են:"

գ) Հետևյալ նախադասություններում կոպիտ արհամարհական դերանունները քաղաքավարի դարձրե՛ք:

В следующих предложениях "исправьте" пренебрежительно-грубые местоимения на вежливые:

 **Դու սրա՞ն են լսում:** →  և  **Դու նրա՞ն են լսում:**

Դու սրա՞ն են լսում:
Սա ի՞նչ գիտի, որ դու սրան հավատում ես:
Ես սրանից ոչ մի լավ բան չեմ սպասում:
Դա՞ ինչ է ասում:
Դրա՞ն ով է հարցնում:
Դրա կարծիքը կարևոր չէ:
Սրանց կարծիքն էլ կարևոր չէ:

 գ)  **Այդ աթոռի վրա մի՛ նստիր:** →  և  **Դրա վրա մի՛ նստիր:**

Այդ աթոռի վրա մի՛ նստիր:
Այս գիրքը ուզում ես:
Այս մամակից ի՞նչ հասկացար:
Այս դանակով չեմ կարող նույնիսկ հաց կտրել:
Այդ մեխերը սուր են, այդ մեխերին ձեռք մի՛ տուր:
Այդ ջուրը մաքուր է, այդ ջրից վերցրու, այդ ջրով սուրճ եփիր:
Այս բաժակները մաքուր չեն, այս բաժակները լվա, այս բաժակներով սուրճ խմենք:
Շշերը այդ գամբյուղի մեջ չեն, այն գամբյուղի մեջ են:
Այն շալվարի գրպանում փող չկա, այդ շալվարի գրպանում է փողը:
Նույն վերնաշապիկը երկրորդ օրը չեն հագնի:
– Ո՞ր կաթսան ես ուզում: – Նույն կաթսան:
Սա այն կաթսայի ճուտն է:
Այդ կացնով չես կարող աշխատել, այն կացինը վերցրու:
Այս կոշիկներով չեմ ուզում ներս գալ, հողաթափեր տուր:

Определенные и неопределенные местоимения Որոշյալ և անորոշ դերանուններ



Вот список наиболее употребительных определенных местоимений:

ամեն մեկը, ամեն (յուրաքանչյուր) որ, յուրաքանչյուրը – каждый, всякий

ամենքը – все (лица)

ոմանք – некоторые (лица)

որոշ + сущ. во мн.ч. без артикля – некоторые (лица, неодушевл. предметы)

բոլորը – все (лица, неодушевл. предметы)

բոլոր + сущ. во мн.ч. с опред. артиклем – все + сущ.

ամեն ինչ, ամեն բան – всё

ամեն (մի), յուրաքանչյուր + сущ. без артикля – каждый + сущ.

ուրիշ + сущ. без артикля – любой другой + сущ.

ուրիշը, ուրիշները – любой(ые) другой(ие)

այլ + сущ. без артикля – иной + сущ.

նույն + сущ. с опред. артиклем – тот же + сущ.

մյուս + сущ. с опред. артиклем – другой (не этот)

մյուսը, մյուսները – другой (не этот), другие (не эти)

ամեն տեղ, ամենուր, ամենուրեք – везде, всюду

ամեն կերպ – по-всякому, любым способом

ամբողջ – весь, целый

Запомните следующие ряды неопределенных местоимений:

որևէ մեկը кто-нибудь, кто-либо	ինչ-որ մեկը кто-то	մի մարդ, մեկը некто
որևէ (մի) բան что-нибудь, что-либо	ինչ-որ (մի) բան что-то	մի բան нечто
որևէ (մի) + сущ. какой-нибудь, какой-либо	ինչ-որ (մի) + сущ. какой-то	մի + сущ. некий
որևէ (մի) տեղ где-нибудь, где-либо	ինչ-որ (մի) տեղ где-то	մի տեղ кое-где
որևէ կերպ как-нибудь, как-либо	ինչ-որ կերպ как-то	մի կերպ кое-как

Употребление неопределенных местоимений

Говорящие прибегают к неопределенным местоимениям при необходимости называть в речи нечто неопределенное, неизвестное.

Для того чтобы разобраться в том, какая существует смысловая и функциональная разница между приведенными рядами местоимений, полезно проанализировать природу неизвестного, отраженного в каждом из типов местоимений. Так,

- первый ряд с **որևէ** употребляется, когда речь идет о чем-то, что **объективно** неизвестно говорящему (он не мог этого знать). Местоимения этого ряда встречаются, **во-первых**, в побудительных предложениях или в предложениях со сказуемым в будущем времени (то, что еще не произошло, объективно неизвестно говорящему), **во-вторых**, в вопросительных предложениях (если действие относится к настоящему или прошлому);


- второй ряд с **իւնչ-որ** употребляется, когда речь идет о чем-то, что говорящему **субъективно** неизвестно (он полагает, что мог это знать, но почему-то не знает). Местоимения этого ряда встречаются как в вопросительных, так и в утвердительных предложениях со сказуемым в настоящем или в одном из прошедших времен;
- третий ряд с **մի** — наиболее частотный в армянском языке. Он объединяет понятия объективной и субъективной неизвестности, но не дифференцирует их. Поэтому местоимения этого ряда употребляются, когда речь идет о чем-то, что просто неизвестно, и говорящему безразлична природа этой неизвестности. Местоимения этого ряда встречаются как в вопросительных, так и в утвердительных предложениях со сказуемым в настоящем, будущем, прошедшем временах и в побудительных предложениях.

В отрицательных и вопросительно-отрицательных предложениях, естественно, появляются отрицательные местоимения.

Заметьте: третий ряд местоимений содержит, как признак неизвестности, только препозитивный неопределенный артикль **մի** (форма числительного "один" — см. урок 3), который легко можно опустить в армянском языке, так как для носителей армянского языка отсутствие определенного артикля в конце слова (**ը** или **ւ**) само по себе воспринимается, как что-то, не важно, что, какой-то, не важно, какой и т.д. Ср. **մի մարդ եկավ, մեկը եկավ** "кто-то пришел" и **մարդ եկավ** "(к нам) пришли"; **ես քեզ մի բան եմ ուզում ասել** "я хочу тебе одну вещь сказать" и **ես քեզ բան եմ ուզում ասել** "я хочу тебе что-то сказать"; **մենք այսօր մի տեղ ենք գնում** "мы сегодня куда-то (в одно место) идем (едем)" и **մենք այսօր տեղ ենք գնում** "мы сегодня не сидим дома, куда-то идем (едем)".

Более того, в отрицательных местоимениях **ոչ մի մարդ, ոչ մի բան, ոչ մի տեղ, ոչ մի + сущ.**, компонент **ոչ մի** также может опускаться. Ср. **բաղնիքում մարդ չկար** "в бане никого не было" и **բաղնիքում ոչ մի մարդ չկար** "в бане не было ни души"; **նա բան չի հասկանում** "он ничего не понимает" и **նա ոչ մի բան չի հասկանում** "он ни черта не понимает"; **ես գլխարկ չունեմ** "у меня нет шапки" и **ես ոչ մի գլխարկ չունեմ** "у меня нет никакой (ни одной) шапки", **դու այսօր տեղ չե՞ս գնում** "ты сегодня дома?" и **դու այսօր ոչ մի տեղ չե՞ս գնում** "ты сегодня никуда не идешь?"

Так же можно опустить специфические компоненты первых двух рядов неопределенных местоимений **որևէ** и **իւնչ-որ**. Не вдаваясь в подробности об объективности и субъективности неизвестного в разговорной речи, можно обойтись местоимениями **մարդ** (неопределенно-личное) или **մեկը** и **բան** (т.н. слово-омнибус, означающее "дело, вещь, предмет" и т.п., в древнеармянском языке означало нечто вроде логоса).

9.  Պատասխանեք հարցերին օգտագործելով անորոշ դերանուններ: Բացատրեք տվյալ դերանվան ընտրությունը որևէ մեկնաբանությամբ:

Ответьте на вопросы, используя неопределенные местоимения; оправдайте ваш выбор именно данного местоимения каким-либо комментарием, который послужит нужным контекстом.


որևէ մարդ (բան, տեղ) *ինչ-որ մեկը* *ինչ-որ մարդ (բան, տեղ)*

ոչ մի մարդ (բան, տեղ) *ոչ մեկը* *մի մարդ (բան, տեղ)*

ինչ-որ...

մի...

ոչ մի...



→
– Որևէ մեկը գիտի՞, թե որտեղ է Գարնանային փողոցը:

– **Ինչ-որ մեկը** գուցե և գիտի, բայց չի ասում (բայց ես նրան չեմ ծանաչում, բայց ես դրանում վստահ չեմ):
– **Մեկը** գիտի, բայց չի ասում (բայց նա այստեղ չէ, բայց չգիտեմ, թե ով):
– **Ոչ մեկը** չգիտի (ուրիշի հարցրեք):
– **Մարդ** չգիտի (գուցե չկա այդպիսի փողոց):

- Որևէ մեկը գիտի՞, թե որտեղ է Գարնանային փողոցը:
- Դուք հիմա զբաղված եք, որևէ մեկը սպասու՞մ է Ձեզ:
- Որևէ մեկը կարո՞ղ է ինձ բացատրել այս նախադասության իմաստը "Սիրիբր զգիր և գիրատ, ճանաչիր զբանս հանճարո":
- Որևէ մեկը հիշու՞մ է "Ծիծեռնակի" մեղեդին (мелодия):
- Որևէ մեկը կգա՞ այս երեկո ինձ հետ թատրոն:
- Որևէ բան կուտե՞ս:
- Որևէ բան տեսա՞ր այնտեղ:
- Դու կարծում ես, թե նա որևէ բան հասկացա՞վ դրանից:
- Այն աղջիկը անընդհատ մեզ է նայում, տեսնես որևէ բա՞ն է ուզում հարցնել:
- Ի՞նչ եք կարծում, հիմա երիտասարդներին որևէ բան հետաքրքրու՞մ է:
- Որևէ թերթ ստանու՞մ ես:
- Որևէ մատիտ ունե՞ս:
- Որևէ խմորեղեն ուզու՞մ եք:
- Բնության ժամանակ դասախոսը քեզ որևէ հարց տվե՞ց:
- Որևէ գիրք կտա՞ս կարդալու:
- Արդյոք, որևէ տեղ կա՞ Հայաստանի ջրի նման ջուր:
- Այս ամառ որևէ տեղ գնու՞մ եք:



10. Կարդացե՛ք, ընտրե՛ք համապատասխան դերանունը.

Прочитайте и выберите подходящее местоимение:

Ա) (Որևէ մեկը / մի մարդ) ճանապարհորդում է (որևէ / մի) հեռավոր երկրում, որտեղ նրան (ամեն ոք / ոչ ոք) չի հասկանում: Վերջապես մի ճաշարանի մուտքին տեսնում է մի քանի լեզուներով գրված հայտարարություն. "Այստեղ խոսում են (ամեն / բոլոր / ուրիշ / նույն) լեզուներով": Ուրախացած ներս է մտնում և դիմում է անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլ լեզուներով, որոնց ինքը տիրապետում է: Բայց նրան դարձյալ չեն հասկանում: Նա ցույց է տալիս մուտքի դռան վրայի հայտարարությունը և (ամեն կերպ / մի կերպ) կարողանում է հարցնել, թե ինչ է նշանակում այն: Ճաշարանի տերը ուսերը վեր է քաշում և պատասխանում է.

– Նշանակում է, որ մեր ճաշարանում հաճախորդները խոսում են (ամբողջ / բոլոր / մյուս) լեզուներով:



Բ) Միասին ճանապարհորդելիս (ուրիշ / մյուս) շախմատիստները նկատեցին, որ աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը (ամեն / մյուս / ուրիշ) երկրում տեղացիների հետ խոսում էր առանց (որևէ / ինչ-որ) թարգմանչի: (Մյուսները / բոլորը / ուրիշները) կարծում էին, որ նա տիրապետում էր աշխարհի (մյուս / բոլոր / ուրիշ) լեզուներին: Իրականում նա (ինչ-որ / մի / յուրաքանչյուր) երկրում հայերի էր հանդիպում և նրանց հետ խոսում էր հայերեն՝ առանց թարգմանության:

հեռավոր – далекий

երկիր – страна

ճաշարան – столовая, харчевня

հայտարարություն – объявление

տիրապետել – владеть

նշանակել – означать

ուսերը վեր քաշել – пожимать плечами

շախմատիստ – шахматист

նկատել – заметить

չեմպիոն – чемпион

տեղացի – местный (житель)

թարգմանիչ – переводчик (q=p)

թարգմանություն – перевод (q=p)

իրականում – на самом деле





Որպեղ ես ծնվել եմ¹, այնպեղ մարդիկ բարեկիրթ են

Մի առավոտ մտնում եմ գրասենյակ, տեսնեմ² մեր հաշվապահ միսիս Զիլփլին վերարկուն հագնում է, գլխարկը դնում, իսկ աչքերից արցունք է հոսում:

— Բարի լույս, միսիս Զիլփլի, — ասացի ես:

— Բարի լույս, Ջո՛, — ասաց նա:

Միսիս Զիլփլին պառավ կին էր, նա բեղեր ուներ, կուզիկ էր, նրա ձեռքերը չոր էին, կնճռապատ, և նա ոչ ոքի դուր չէր գալիս: Ես չեմ կարող ասել, թե նրան սիրում էի, բայց նա բարեսիրտ պառավ էր:

— Միսիս Զիլփլի, — ասացի, — որևէ բա՞ն է պատահել³:

Նա գլխով ցույց տվեց միստր Ուայլիի առանձնասենյակի կիսաբաց դուռը և նշան արեց, որ ես չխոսեմ, այլ պարզապես գնամ գլխարկս կախեմ և գործի անցնեմ:

“Չասկանում եմ, — մտածեցի ես, — տնօրենը նրան վնդդել է⁴:

Այսբա՞ն տարվա աշխատանքից հետո:

— Ես ինքս եմ ուզում հեռանալ, — ասաց միսիս Զիլփլին:

— Ճիշտ չէ, — ասացի ես: — Դուք չեք ուզում: Ես երեխա չեմ, ամեն ինչ հասկանում եմ:

Միսիս Զիլփլիի ռոճիկը շաբաթական քսանյոթ դոլլար հիսուն սենթ էր: Բայց ես արդեն կարող էի նրա աշխատանքը կատարել, և իմ ռոճիկը տասնհինգ դոլլար էր, դրա համար նրանք վնդդել էին պառավ լեդիին: Իհարկե, ես շատ գոհ էի, որ աշխատանք ունեի, բայց ինձ ամենևին դուր չէր գալիս, որ իմ պատճառով լաց լինի միսիս Զիլփլին:

— Միսիս Զիլփլի, — ասացի, — ես այսօրվանից թողնում եմ իմ ծառայությունը: Ես մի քեռի ունեմ Պորտլանդում, նա նպարեղենի խանութ է բաց անում, և ես գնում եմ նրա մոտ՝ նրա հաշիվները պահելու:

— Ջո՛, — ասաց միսիս Զիլփլին, — դուք հիանալի գիտեք, որ Պորտլանդում ոչ մի քեռի էլ չունեք:

— Միսիս Զիլփլի, — ասացի ես, — դուք ինձ ինչի՞ տեղ եք դնում⁵: Գամ այստեղ և գրավեմ ձեր տե՞ղը: Դա անարդար բան է: Դուք այստեղ ծառայում եք քսան տարի կամ գուցե և ավելի:

— Ջո՛, — ասաց միսիս Զիլփլին, — գնացեք կախեցեք ձեր գլխարկը և գործի անցեք:

— Ոչ, — ասացի ես, — ես հենց հիմա թողնում եմ իմ ծառայությունը:

Ես գնացի ուղիղ միստր Ուայլիի առանձնասենյակը: Միստր Ուայլին թաղման ընկերության փոխնախագահն⁶ էր: Նա տափակ քթով, բարձրահասակ մի ծերուկ էր: Ժլատի մեկն էր:

— Ի՞նչ կա⁷, — հարցրեց միստր Ուայլին:

— Չեռանում եմ ձեզանից, — ասացի:

— Այդ ինչու՞ այդպես հանկարծ, — ասաց նա:

— Քիչ եք վճարում, — ասացի:

— Որքա՞ն եք ուզում, — ասաց նա:

Ա՛յ թե գարմացա ես:

— Շաբաթական երեսուն դոլլար, — ասացի:

— Լա՛վ, — ասաց նա, — տեսնենք:

Ա՛յ քեզ բան⁸: Այդպիսի փողով ես շատ շուտով կկարողանամ “Չարլեյ Դեվիդսոն” մոտոցիկլետ գնել:

– Ո՛չ, – ասացի: – Ես հեռանում եմ:
– Ինչու՞ եք հեռանում, – հարցրեց նա: – Ես կարծում էի ձեզ դուր է գալիս ձեր աշխատանքը:

– Կար ժամանակ, – ասացի, – երբ դուր էր գալիս, իսկ հիմա՝ ոչ:
– Միստր Ուայլի, – ավելացրի ես, – մի՞թե դուք դուրս եք արել⁹ միսիս Յիլփիլին:

Միստր Ուայլին ետ ընկավ բազկաթոռում և ինձ նայեց: Ո՞վ եմ ես, որ այդպիսի հարցեր տամ նրան:

– Երիտասարդ, – ասաց նա, – դուք դեռ շատ բան ունեք սովորելու: Ահա իմ խորհուրդը. չարժե կծել այն ձեռքը, որ կերակրում է ձեզ:

– Ես ոչ մի ձեռք չեմ կծում, – ասացի:

– Դուք հեռանում եք մեզանից, չէ՞, – ասաց նա:

– Այո, սրբ, – ասացի, – բայց ոչ ոքի չեմ կծում:

– Լավ, էլ ի՞նչ եք ուզում:

– Ես պարզապես ուզում էի, որ դուք իմանաք. ես միանգամայն քաղաքավարի եմ:

– Լավ, – ասաց միստր Ուայլին: – Բարի ճանապարհ:

– Մնաք բարով, – ասացի ես:

Ապա դուրս եկա առանձնասենյակից:

– Միսիս Յիլփիլի, – ասացի, – նրանք ստիպված կլինեն նորից ձեզ ծառայության ընդունել, որովհետև այժմ չկա մեկը, որ ձեր գործն անի:

Այդ ժամանակ առանձնասենյակի դռան մեջ երևաց միստր Ուայլին և գլխով արեց միսիս Յիլփիլին: Վերջինս մտավ առանձնասենյակ, և միստր Ուայլին դուռը ծածկեց: Միսիս Յիլփիլին այնտեղից դուրս եկավ, գլխարկն ու վերարկուն հանեց, մի չեկ գրեց և տարավ, որ միստր Ուայլին ստորագրի:

Չեկն ինձ համար էր: Դա տասներեք դոլլարի չեկ էր:

– Ահա ձեր չեկը, Ջո՛, – ասաց միսիս Յիլփիլին: – Ես ուզում էի նրան համոզել, որ տասնհինգ տա ձեզ, բայց նա ասաց, որ դուք ամբարտավան եք:

– Ես ձեզ նորից ծառայությա՞ն ընդունեց, – հարցրի ես:

– Այո:

– Միսիս Յիլփիլի, – ասացի, – ես շատ ուրախ եմ, որ դուք նորից ստացաք ձեր տեղը:

– Շատ շնորհակալ եմ, Ջո՛, – ասաց միսիս Յիլփիլին:

– Իսկ ի՞նչ է նշանակում ամբարտավան:

– Ամբարտակիրո՞ք:

– Դա ճիշտ չէ, – ասացի: – Որտեղ ես ծնվել եմ, այնտեղ մարդիկ բարեկիրո՞ք են:

Ըստ Վիլյամ Սարոյանի "Որտեղ ես ծնվել եմ, այնտեղ մարդիկ բարեկիրո՞ք են"

¹ որտեղ ես ծնվել եմ – где я родился

² տեսնեմ – зд.в функции наст. времени "вижу"

³ որևէ բա՞ն է պատահել – что-нибудь (что-то) случилось?

⁴ տնօրենը նրան վճնդել է – директор ее выгнал (прогнал)

⁵ դուք ինձ ինչի՞ տեղ եք դնում – за кого вы меня принимаете?

⁶ թաղման ընկերության փոխնախագահ – зам. председателя похоронного

бюро

⁷ ի՞նչ կա – что нового?

⁸ ա՛յ քեզ բան – вот тебе на!

⁹ դուրս եք արել – (вы) выгнали

Բառեր Տրամաբանական


- գրասենյակ – канцелярия, контора
հաշվապահ – бухгалтер
վերարկու – пальто
արցունք – слеза
հոսել – течь
բեղ – ус
կուզիկ – горбатый, согбенный.
չոր – сухой
կնճռապար – морщинистый, покрытый морщинами
դուր գալ – нравиться
գլխով ցույց տալ – указывать головой
առանձնասենյակ – кабинет
կիսաբաց – полуоткрытый
նշան անել – сделать знак
պարզապես – просто
գործի անցնել – приняться за дело
տնօրեն – директор
ոոճիկ – зарплата
շաբաթական – в неделю (բ=փ)
ամենևին – вовсе
պարտաճանաչ – из-за (послелог)
ծառայություն – служба
նպարտեղենի խանութ – бакалея
հաշիվները պահել – вести счет
հիանալի – прекрасный, прекрасно
գրավել – занимать, завладеть
անարդար – несправедливый, несправедливо (դ=թ)
ծառայել – служить
ավելի – больше
ուղիղ – прямой, прямо
տափակ – плоский, плоско
բարձրահասակ – высокий (ростом) (ձ=g)
ժլատ – скупой
հանկարծ – вдруг
վճարել – платить
զարմանալ – удивляться
կարծել – думать, полагать
ավելացնել – добавить
մի՞թե – неужели?
դուրս անել – выгнать
եք ընկնել – откинуться
խորհուրդ – совет (դ=թ)
չարժե – не сто'ит
կծել – кусать
կերակրել – кормить
միանգամայն – вполне (գ=բ)
բարի ճանապարհ – доброго пути, зд. скатертью дорога
մնաք բարով – счастливо оставаться
ծառայության ընդունել – принять на службу
այժմ – сейчас
գործ – дело
գլխով անել – сделать (знак) головой
վերջինս – этот (последний) (ջ=չ)
ստորագրել – подписать
ամբարտաճան – надменный
անբարեկիրթ – неблагоприятный

Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

Комментарии, задания и упражнения

Словообразование

Բառակազմություն

11.Ա) 

В армянском языке много сложных слов, состоящих из двух корней. Основное значение сложных существительных передается вторым компонентом.

հյուր-ա-սենյակ* – комната для гостей

աշխատ-ա-սենյակ* – рабочая комната

!*-ա- соединительная гласная


Բ) Բացատրեք հետևյալ բարդ գոյականների կազմությունը և նշանակությունը.

Объясните состав и значение следующих сложных существительных:

նախասենյակ	 <i>передняя (комната)</i>
ճաշասենյակ	
ննջասենյակ	
գրասենյակ	
առանձնասենյակ	
լողասենյակ	
դասասենյակ	
գրասեղան	
ճաշասեղան	
գարդասեղան	
գրատախտակ	
հաշվապահ	

Գ)  Պատասխանեք հարցերին. Ответьте на вопросы:

 Գիբորը երբեմն **քաղցից** չէր կարողանում քնել:

Բ) Շեղագիր բառերի և բառակապակցությունների փոխարեն օգտագործեք հոմանիշներ.

Замените выделенные курсивом обороты синонимами:

- Տղաներ, գործի անցնե՞նք, թե՞ նախ մի բան ուտենք:
- Շնորհալալ եմ, ես *քաղցած չեմ*.
- Իսկ դու՞:
- Ես մի բան կուտեմ, *սովից* մեռնում եմ:
- Իսկ ես միայն *խմել եմ ուզում*, մի բաժակ ջուր սովեք, խնդրում եմ:

գ) 

 և 

–**Քաղցա՞ծ** ես:

→

–Այո, **քաղցից** ուղղակի մեռնում եմ:

- Քաղցա՞ծ ես:
- Սովա՞ծ ես:
- Ծարա՞վ ես:

13.Ա) ☞

գլխիս գեներալ չես – ты мне не генерал
գլխիս բժիշկ (երաժիշտ, մեծ եղբայր ...) է (դառել) – тоже мне врач (музыкант, старший брат ...), говорится о человеке, который, не будучи генералом, врачом и т.п., претендует на соответствующую роль



Ամբողջ օրը շեփոր է փչում, էլ դաշնամուր չի նվագում, **գլխիս (գլխներիս) շեփորահար է դառել**: Մեծ քույրս անընդհատ դժգոհում է ինձնից, ես էլ ասում եմ՝ **գլխիս սկեսուր չես**:



Դ) Ավարտեք նախադասությունները.

Закончите предложения:

Եղբայրս բոլոր պատերից ու դռներից նկարներ է նկարել, ...:

Փոքր քույրս բժշկական ինստիտուտում է սովորում, առավոտյան բոլորիս ստիպում է այգում վազել, թույլ չի տալիս գինի խմել, ...:

Նա երեկոյան տուն է գալիս, պառկում է բազմոցին ու հրամայում է բոլորին, ...:

14.Ա) ☞

հաշվել – считать
հաշիվ – счет, հաշվապահ – бухгалтер
հաշիվ տալ – отчитаться
հաշվետու զեկուցում – отчетный доклад
հաշվետվություն – отчет
հաշիվ(ը) փակել – рассчитаться
հաշվի առնել մի բան – принять что-л. в расчет
հաշվի նստել մեկի հետ – считаться с кем-либо



Նախագահն իր **հաշվետու զեկուցումն** է կարդում: **Հաշվապահը** ամեն ինչի համար **հաշիվ է փակիս** տնօրենին: Միստր Ուայլին ամնիջապես **փակեց** Ջոյի **հաշիվը** և նրան ազատեց աշխատանքից: Տասներորդ դասարանում քույրս գրականության հետ **հաշիվները փակեց** և գնաց բժշկական ինստիտուտ: **Առանց հաշվի առնելու**, որ միսիս Հիլփին երկար ժամանակ աշխատել էր գրասենյակում, նրան դուրս էին արել աշխատանքից: **Նրա հետ հաշվի են նստում** գրասենյակում: Տարին վերջանում է, հարկավոր է **հաշվետվություն ներկայացնել** (представить):



Դ) Ավարտեք նախադասությունները.

Закончите предложения:


Գիտական ճանապարհորդությունից հետո հարկավոր է ...:

Տղաներին կալանքից ազատեցին, ..., որ խուզի ժամանակն է:

Նրան ոչ ոք չի լսում, նրա հետ ոչ ոք ...:

Վերջ, այլևս չեմ ուզում սովորել, գնում եմ աշխատելու, ինստիտուտի հետ ...:

Սկեսուրս ինձ այնպես է հարցաքննում, պահանջում է, որ ամեն ինչում իրեն ...:

15.Ա) 

մաս – часть

բաժին – порция (բաժանել – делить)

պատառ – ломоть (պատռել – разорвать,

պատառոտել – разрывать) (NB: պատառաքաղ),

կտրր – кусок (կտրել – резать, կտրատել – разрезать)

փշուր – крошка (փշրել – крошить) (փշրանք – крошки, собир.)

կաթիլ – капля (կաթել – капать)



Քո բաժին տվժիկը պահել եմ, ուզու՞մ ես:

Ամառը մեր երեխաները ամբողջ օրը դրսում խաղում են,

մի պապառ հաց են վերցնում ու գնում դրսում ուտում:

Ծարավից մեռնում եմ, մի կաթիլ ջուր տուր:

Նա ժլատի մեկն է, մի փշուր հաց չի տա հարազատին:

Մի գրայ էլ սպաս կեր, որ շուտ առողջանաս:




Դ) Ավարտեք նախադասությունները.

Закончите предложения:

Մայրը ճաշը բաժանեց և ամեն մեկին տվեց իր ...: Ապա հացը կտրատեց և ամեն մեկին տվեց երկու ...: Հետո մայրը հավը պատառոտեց ու ամեն մեկին տվեց մի ... հավ:

– Բժիշկն ասաց, որ քեզ սուրճ չի կարելի: – Մի՞թե նույնիսկ մի ... չի կարելի:

16.Ա) 

թեժ կրակ ≠ մեղմ, մարմանդ կրակ

"жаркий огонь" ≠ "тихий, медленный огонь"

խուզի թեժ ժամանակ – разгар стрижки



Ո՞վ է սուրճը թեժ կրակով եփում, սուրճը մարմանդ կրակով են եփում:

Քննությունների այս թեժ ժամանակ նա շարունակում է ընկերների հետ հանդիպել, կինո գնալ:



Դ) Ավարտեք նախադասությունները.

Закончите предложения:

Բաղրջանը կարելի է և ... խորովել, բայց միսը հարկավոր է ... խորովել, կամ նույնիսկ ածուխների վրա (на углях):

Նա չի սիրում, որ իրեն խանգարում են աշխատանքի ...:

17. Ա) 

առնել – 1. վերցնել (ռժ. գլուխը, ընտանիքն առնել ու գնալ), 2. գնել




Դ) "Առնել" բայի փոխարեն օգտագործեք "գնել" կամ "վերցնել" ըստ իմաստի.

Выберите правильный синоним глаголу **առնել** и замените его:

Առ էս փողը, գնա շուկա, մի քիչ միրգ ու միս **առ**:

Ափսեներն **առ** տար լվա՛ ու սուրճ պատրաստիր, խնդրում եմ, իսկ ես վազեմ հաց **առնեմ**, թե չէ ընթրիքի համար հաց չմնաց:

18. "Բամբասանք". իմանալով հաղորդե՛ք ուրիշի: Սկսեք այսպես.
 "Сплетня": узнав – передайте другому. Начните так:



Քննիչին չպահեցին
 հացի, որպեսզի
 անհարմար չզգա:
 Նա գյուղից
 փախավ թաքուն:

→ **Գ**իտե՞ք, թե ի՞նչ է
 եղել՝
Գիտե՞ք, թե ի՞նչ է
 պատահել՝
 Ասում են, թե
 քննիչին չեն պահել
 հացի, որպեսզի
 անհարմար չզգա: Նա
 գյուղից փախել է
 թաքուն:



Քննիչին չպահեցին հացի, որպեսզի անհարմար չզգա: Նա գյուղից փախավ թաքուն: Քննիչը գողությունը բացահայտեց, Պավլեին կանչեց հարցաքննության: Տղաներին վերցրին կալանքի: Տնտեսության նախագահն այդ գործով գնաց մայրաքաղաք, և բանտարկություն չեղավ: Ունակը ցուցմունքը փոխեց, և ցուցմունքը փոխելու համար դատարանին տուգանք վճարեց Անտառամեջի նախագահը: Տղաները վերադարձան տուն, գնացին սարերը: Դրանից հետո Պավլեն հաշիվները փակեց ոչխարի հետ, ընտանիքն առավ, գնաց քաղաք:

† 19. Կետերի փոխարեն գրեք բերված տառերից մեկը.

В следующих предложениях и словах поставьте одну из указанных букв:

բ - պ - փ

Գետի մյուս ա.ին պարիս.ների, վանքերի ավերակներն էին: Ջոն ոչ ան.արտավան էր, ոչ էլ ան.արեկիրթ, իսկ միստր Ուայլին .ավականին անտար.եր մի մարդ էր՝ տա.ակ քթով ու ժլատ:

գ - կ - ք

Գիտնա.անին օ.նա.ան էր հար.ավոր: Նա ոտ.երը մա.րեց, ուրեմն մա.րասեր է և կար.ապահ: Նվա. չկար, եր.ում էին: Մի զույ. երկար հոն.եր, շո.ենավ, օրեն., կյան., թա.ուն, զան. տալ, միան.ամից, զան.ատվել:

դ - ր - թ

Շա. մար. եկավ-գնաց, բայց գի.նականը ըն.րեց այն երիտասար.ին, որն իր ա.ռոն առաջարկեց ուրիշին: Երիտասար.ը ուշա.իր էր, ըն.ունակ և կր.ված: Ըն.արծակ աշխա.ասենյակ, մոր.ել, ըն.հակառակը, գ.ալ, ճակա., դա.արան, ար.ար, ըն.անիք:

ջ - չ - ճ

Վեր.ապես գիտնականը ընտրեց մեկին, որն անմի.ապես իր տեղն առա.արկեց ներս մտնող մարդուն: Նա հարցերին պատասխանում էր կար. ու գրագետ: Մին.դեռ մյուսները լավ վկայականներ ունեին: .ահելներից մեկը .չաց Քո.արի ու առանց նվագի սկսեցին պարել: Քննի., տան.անք, խո.կոր, ո.խար, հորան.ել:

ծ - ց - ծ

Երիտասարդը կռա.ավ ու վեր.րեց հատակի. գիրքը, որ գիտնականն էր գ.ել, իր տեղի. բար.րա.ավ, երբ մի ան.անոթ ներս մտավ, երևում էր, որ հարգում է մե.երին: Սենյակ մտնելու. առաջ գլխարկը հանեց, ապա դուռը ծա.կեց առան. աղմուկ հանելու: Ընդար.ակ թիկնո.ի մեջ փաթաթվա. մի մարդ, հան.անք, բա.ահայտել, քաղ.ած:



պատասխանները)

Отвeтeть нa вoпpocы: (нaйдитe пpавильные oтвeты)

1. Ո՞վ է Պավլեն:
- Քննիչ է, գեներալ է, տղամարդ է, գյուղացի է:*
2. Որտե՞ղ էր ապրում Պավլեն:
- Անտառում, գյուղում, քաղաքում:*
3. Քանի՞ տարի է նա ծառայել բանակում:
- Երեք տարի, հինգ տարի, յոթ տարի:*
4. Ինչպե՞ս է ծառայել:
- Մի կերպ է ծառայել, տղամարդու պես է ծառայել, գլուխ է պահել, պորտ է մաշել:*
5. Անտառամեջ գյուղում որտե՞ղ կարելի է տեսնել (կարդալ) Պավլե անունը:
- Գյուղխորհրդի պատերին, գյուղխորհրդի ծակատին, դռան հետևի նստարանին:*
6. Ի՞նչ վատ բան է արել Պավլեն:
- Պավլեն ուրիշի ոչխար է մորթել, գյուղխորհրդի ծակատի քարին իր անունն է գրել, փայտե նստարանը դանակով փորել է:*
7. Պավլեն մեռա՞կ է մորթել ու կերել ոչխարը:
- Մեռակ է կերել ոչխարը, Անտառամեջի նախագահի հետ է կերել, գեներալի հետ է կերել, տղաների հետ է կերել, Ռևազի հետ է կերել:*
8. Քանի՞ մարդ են կալանքի վերցրել:
- Պավլեին և ևս երեք գյուղացու են կալանքի վերցրել, բոլոր տղաներին կալանքի են վերցրել, չորս մարդ են կալանքի վերցրել:*
9. Ինչու՞ են տղաները ոչխար մորթել:
- Ուրիշ գործ չկար, սոված էին, ծարավ էին:*
10. Ոչխար մորթելը հանցա՞նք է:
- Սեփական ոչխար մորթելը հանցանք չէ, ուրիշ ոչխար մորթելը հանցանք է, ուրիշի ոչխար մորթելը հանցանք չէ:*
11. Ու՞մ ոչխարն են մորթել:
- Ռևազի ոչխարը, նախագահի ոչխարը, քննիչի ոչխարը:*
12. Որտեղի՞ց է եկել քննիչը:
- Քննիչը եկել է բանակից, գեներալի մոտից, Երևանից:*
13. Ե՞րբ կալանավորեցին Պավլեին ու նրա ընկերներին:
- Տղաներին կալանավորեցին ոչխար մորթելիս, ոչխար ուտելիս, ոչխարի խուզի ժամանակ:*
14. Այդ գործով նախագահն ու՞ր և ու՞մ մոտ գնաց:
- Նախագահը գնաց բանակ՝ գեներալի մոտ, Երևան՝ ծանոթ գեներալի մոտ, բանակ՝ քննիչի մոտ:*
15. Ի՞նչ խնդրեց նրանից:
- Նախագահը նրանից խնդրեց խոճկորի պատմությունը պատմել, զանգ տալ տղաներին, օգնել՝ տղաներին ազատել կալանքից:*
16. Գեներալը խնդրանքը կատարե՞ց:
- Այո, խոճկորի պատմությունը պատմեց: Ոչ, տղաներին չզանգեց: Ոչ, տղաներին բանտարկությունից չազատեց:*
17. Ի՞նչ հիշեց ու պատմեց գեներալը:
- Գեներալը պատմեց, որ քննիչը քաղցած էր, բայց նրան չիյուրասիրեցին: Գեներալը պատմեց, որ մի անգամ իրենք ուրիշի խոճկոր մորթեցին ու անալի կերան: Գեներալը պատմեց, որ այն ժամանակ իրենք անտառում էին ապրում:*

18. Վերջում ի՞նչ ասաց գեներալը հորանջելով:

Գեներալն ասաց, որ չի կարելի մորթել ուրիշի ոչխար, ուրիշի խոճկոր:

19. Ցուցմունքը փոխելու համար ո՞վ դատարանին տուգանք վճարեց:

Ցուցմունքը փոխելու համար Ռևազը դատարանին տուգանք վճարեց, տղաները դատարանին տուգանք վճարեցին, նախագահը դատարանին տուգանք վճարեց:

20. Ոչխարների դեպքից հետո էլի որևէ մեկին կալանքի վերցրե՞լ են: Ինչու՞, մի՞թե Պավլեն միակ գողն էր, նա գնաց քաղաք ու վերջ: Մի՞թե Անտառամեջ գյուղում այլևս գողություն չի եղել:

Ոչխարների դեպքից հետո շատերին են կալանքի վերցրել, որովհետև ուրիշ գողեր էլ կային: Ոչխարների դեպքից հետո ուրիշ գողություն չի եղել, որովհետև Պավլեն միակ գողն էր: Ոչխարների դեպքից հետո ոչ ոքի չեն կալանավորել, որովհետև ուրիշ գողություն չի բացահայտվել: Ոչխարների դեպքից հետո ոչ ոքի չեն կալանավորել, որովհետև ուրիշ գողություն չի եղել:

21. Որտե՞ղ է ապրում հիմա Պավլեն: Իսկ տղաները՞:

Անտառում, գյուղում, քաղաքում:



Այրի կին և որդի

Մի այրի կին ուներ տասը այծ և մի որդի: Եվ ամեն օր որդին այծերը տանում էր արոտ և մայրն ամեն օր մի շերեփ ջուր էր լցնում կաթի մեջ և փոխ տալիս հարևաններին: Եվ որդին մորն ասաց, թե ինչու՞ են այդպես ջուր լցնում կաթի մեջ և փոխ տալիս հարևաններին: Մայրն ասաց. "Որդի, մեր կաթը քիչ է, նրա համար են անում, որ մեր կաթը մի քիչ ավելի լինի, ծնռանը քաղցած չմնանք":

Իսկ մի օր, երբ որդին այծերն արոտ էր տարել, երկնքում ծնվեց մի փոքր ամպ, և անձրև եկավ, և հեղեղ եկավ և այծերը սրբեց լցրեց գետը: Որդին տուն եկավ արևով* ու դատարկ և ձեռքին միայն փայտը: Մայրն ասաց. "Որդի, ու՞ր են այծերը և ինչու՞ դու այսօր արևով եկար": Որդին ասաց. "Մայրիկ, այն մի շերեփ ջուրը, որ խառնում էիր կաթին և փոխ տալիս հարևաններին, հավաքվեց, հեղեղ դարձավ և եկավ մեր այծերը տարավ լցրեց գետը":

Ըստ Վարդան Այգեկցու "Այրի կին և որդի"

*արևով – լույսով, ցերեկով, днем, засветло

Բառեր Слова

այրի – вдова

այծ – коза

արոտ – пастбище

շերեփ – половник

լցնել – 1. лить, 2. сбросить

(нечто собирательное, несчитаемое)

ավելի – больше

հեղեղ – поток

սրբել – зд. смыть (բ=փ)

փայտ – палка, посох

խառնել – мешать,

подмешивать

հավաքվել – собираться



Պատասխանեք հարցերին.

Ответьте на вопросы:

Ի՞նչ վատ բան էր անում այրի կինը: Ինչու՞ էր այրին վախենում ծնռանը քաղցած մնալ: Մայրն ուզում էր, որ ինքն ու որդին ծնռանը քաղցած չմնան. դա հանցա՞մբ է: Իսկ կաթին ջուր խառնելը՞: Ինչպե՞ս Աստված պատժեց (наказал) այրուն:

Ստուգարք

1. Ճիշտ ընտրություն կատարեք.

Сделайте правильный выбор:

1. Մեկիք Շահնազարը կանչում է ծառային և ասում է.	Ա. թող Պըլը Պուղին շուտ գա: Բ. թող Պըլը Պուղին շուտ կգա: Գ. թող Պըլը Պուղին շուտ գալիս է:
2. "Պըլը Պուղի՛,, մեկիք Շահնազարը քեզ կանչում է:"	Ա. շուտ եկի՛ր Բ. շուտ գա Գ. շուտ արի՛
3. "Մեկիքն ապրած կենա, ես ...:"	Ա. գալեցի Բ. եկա Գ. եկեցի
4. Երեխաներ, ո՞վ կարող է ասել, թե ... "Շունն ու կատուն":	Ա. ո՞վ էր գրում Բ. ո՞վ է գրել Գ. ո՞վ գրեց
5. Պարոն ուսուցիչ, ես դասս գրել եմ, բայց տեսրս, ուզու՞մ եք, զանգեք մայրիկիս հարցրեք:	Ա. մոռացել եմ տանը Բ. մոռացել էի տանը Գ. մոռացա տանը
6. – Ո՞վ է իմ աթոռին պնդիչներ դրել: – Պարոն ուսուցիչ, ես գիտեմ, ...	Ա. Հովհաննեսն է դրել: Բ. Հովհաննեսն էր դրել: Գ. Հովհաննեսը դրեց:
7. – Ոչ, պարոն ուսուցիչ, դա ճիշտ չէ, ես տեսա, ...	Ա. Հովսեփն է դրել: Բ. Հովսեփն էր դրել: Գ. Հովսեփը դրեց:
8. – Ծաղկամանը դի՛ր պատուհանին: – Արդեն ...	Ա. դիրում եմ: Բ. դրում եմ: Գ. դնում եմ:
9. – Իսկ ու՞ր դնենք միրգը: – ... սառնարանը:	Ա. դնեցե՛ք Բ. դրեցե՛ք Գ. դիրեցե՛ք
10. – Այսքանը կարի՛ր, կհասնես դժվար տեղը՝ ինձ ասա: – ... հիմա ինչ անեմ:	Ա. Հասնեցի, Բ. Հասեցի, Գ. Հասա,
11. – Որտե՞ղ է իմ կարմիր գրիչը: – ... չգիտեմ, թե ուր է:	Ա. Քո Բ. Քոն Գ. Քոնը
12. – Իսկ սա ու՞մ ն է, սա ... չէ՞ արդյոք:	Ա. իմ Բ. իմը Գ. իմնը
13. – Տեսե՞լ եք, թե Հակոբենց ծառը ինչ ծիրան է տվել: – Այդ ծառը ... չի, ... է:	Ա. Հակոբենց, հարևանի Բ. Հակոբենցը, հարևանին Գ. Հակոբենցը, հարևանին

14. Նվարդը ... գեղեցիկ է երգում, ... ձայն ունի, կարծես սոխակ լինի:	Ա. այնպես, ինչպիսի Բ. այնպես, այնպիսի Գ. այնպիսի, այնպես
15. Առավոտից ... անընդհատ զանգում է, ... է ուզում ասել, բայց ոչինչ չի լսվում:	Ա. որևէ մեկը, որևէ բան Բ. ինչ-որ մեկը, ինչ-որ բան Գ. ամեն մեկը, մի բան
16. Եթե միանգամից չգտնես մեր տունը, ... բոլորն էլ գիտեն մեր շենքը, ցույց կտան:	Ա. որևէ մեկին հարցրու, Բ. ինչ-ո մեկին հարցրու, Գ. ամեն մեկին հարցրու,
17. – Ի՞նչ զգեստով էր նա եկել ...	Ա. ընդրիքի: Բ. ընտրիքի: Գ. ընթրիքի:
18. – ... զգեստ էր հագել:	Ա. ուրիշ Բ. մյուս Գ. նույն
19. – ... եք որոշել Հայաստանում մնալ, մի շաբա՞թ:	Ա. Որչա՞փ (կամ ինչչա՞փ) Բ. Որքա՞ն (կամ ինչքա՞ն) Գ. Ինչպե՞ս
20. – Ես Ձեզ ... կտամ, անպայման Մատենադարանն այցելել:	Ա. խորուրդ Բ. խորհուրդ Գ. խորհուրհդ

Ի 2. Վերհիշեք մարդու մարմնի և դեմքի մասերի անվանումներով դարձվածքները: Որոշեք ճիշտ տարբերակը.

Вспомните фразеологические обороты с названиями частей тела и лица. Определите правильный вариант:



1. Այս աշխարհում ով ինչպես կարող է, ...	Ա. գլուխ է տալիս: Բ. գլուխ է պահում: Գ. գլխի է ընկնում:
2. Նրանք ամբողջ օրը ... նշանակում է "շատ զբաղված են":	Ա. "քիթը խոթում են ամեն ինչի մեջ" Բ. "քիթը ցցել են" Գ. "քիթ քորելու ժամանակ չունեն"
3. Երբ մեր ընտանիքում մեկը հիվանդանում է, տատիկս ասում է՝ ...	Ա. աչքով են տվել: Բ. աչքով են արել: Գ. աչքը լույս:
4. Երբ մեր հարևանի երեխան դպրոցում երկուս է ստանում, մայրը նրա ...	Ա. ականջին օղ է անում: Բ. ականջի ետևն է զգում: Գ. ականջն է քաշում:
5. Թանգարանում հաճախ կարելի է կարդալ՝ ...	Ա. ձեռք չտալ: Բ. ձեռք չբերել: Գ. ձեռ(ք) չառնել:

3. Կարդացե՛ք հետևյալ հատվածը և ասացե՛ք, թե քանի՞ անգամ է բայը գործածված սահմանական եղանակի ներկա ժամանակով, սահմանականի վաղակատարով, ըղծականի ապառնիով, հրամայական եղանակով, արգելականով:

Прочитайте следующий отрывок и скажите, сколько раз в нем глагол стоит в настоящем времени изъявительного наклонения, в совершенном времени изъявительного наклонения, в будущем времени желательного наклонения, в повелительном наклонении.

Ինչքա՛ն քաղաքների հետ են խոսել ես լուռ գիշերներին: Նրա պատերը, փողոցի քարերը լեզու են առնում, երբ մարդն իր անկողնում է:

Փորձե՛լ ես դու այդ, ի՞նչ ընթերցող:

Ապա լսի՛ր ինձ, վե՛ր կաց անկողնուցդ, կյանքումդ գոնե մի գիշեր ման եկ, օրինակ, ի՞նչ երևանում, քո երևանում: Չէ, մի՛ ծիծաղիր, ինչ է, կարծում ես ծանո՞թ ես դու քո երևանին... Դու ծանոթ ես նրա կյանքի աղմուկին, որին մասնակից ես, որովհետև կա՛ս. ուրեմն ծանոթ ես քո սեփական աղմուկին, քո սեփական գոյությանը երևանում, բայց ոչ երևանին: Եվ որպեսզի ճանաչես քաղաքը, ապա ման եկ գիշերը երևանում: Լսի՛ր նրան, խոսի՛ր հետը, որ լինես նրա քաղաքացին, ոչ թե բնակիչը:

Ըստ Վահրամ Փափազյանի՝ "Յերադարձ հայացք"

լեզու առնել – обрести язык

փորձել – пытаться (ծ=ց)

ընթերցող – читатель

աղմուկ – шум


մասնակից – участник

սեփական – собственный

գոյություն – существование

քաղաքացի – гражданин



բնակիչ – житель



4. Արդյոք ճանաչու՞մ եք երևանը:

Ա. Որտե՞ղ են գտնվում՝

Կամերային դահլիճը (Камерный зал)	Հանրապետության հրապարակում (площадь Республики)
Սպորտային համալիրը (Спортивный комплекс)	Իսահակյան պուրակում (сквер Исаакяна)
Երևանի պետական օպերան	Ծիծեռնակաբերդում
Երևանի պետական պատկերասրահը (Государственная картинная галерея)	Ազատության հրապարակում (площадь Свободы)
Արամ Խաչատրյանի անվան Հայհամերգի մեծ դահլիճը (Большой зал Армфилармонии)	Աբովյան փողոցում
Հայհամերգի փոքր դահլիճը	Մաշտոցի պողոտայում



Բ. Որտե՞ղ են գտնվում.



Անի հյուրանոցը Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի նախագահության շենքը (здание президиума АН Армении)	Թումանյան փողոցում Աբովյան պուրակում
Ժողովրդական ստեղծագործության տունը (Дом народного творчества)	Սայաթ-Նովայի պողոտայում
Մանկական պատկերասրահը (Детская картинная галерея)	Բաղրամյան պողոտայում
Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանը	Աբովյան փողոցում

Գ. Ու՞մ հուշարձաններն են գտնվում՝ Ազատության հրապարակում:

Ալեքսանդր Թամանյանի, Մարտիրոս Սարյանի, Կոմիտասի, Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Միքայել Նալբանդյանի:



Դ. Ու՞մ հուշարձանն է գտնվում՝ Կայարանի հրապարակում:



Անդրանիկի, Սասունցի Դավթի, Վարդան Մամիկոնյանի:



Ե. Ո՞ր նկարներում են պատկերված՝

1. Երիտասարդական պալատը.
2. "Էրեբունի" թանգարանը.
3. Ժամանակակից արվեստի թանգարանը.
4. "Մոսկվա" կինոթատրոնը.




Ծ)  և  Прочитайте и ответьте, согласны ли Вы с автором?

Կարդացե՛ք և ասացե՛ք՝ արդյոք հեղինակի հետ համաձայն եք:

Տարօրինակ քաղաք է մեր այս երևանը: Երբ այստեղ ես, թվում է, ոչ մի հետաքրքիր բան չես գտնում նրա մեջ, տներ, փողոցներ, այգիներ, մարդիկ, սովորական կյանք և ուրիշ ոչինչ: Հեռանում ես, թեկուզ մի օրով, թեկուզ մի ժամով, ասես արտակարգ տներ, փողոցներ, այգիներ, մարդիկ ու կյանք ես թողել ետևում: Եվ քաղաքը կանչում է քեզ, դեպի իրեն քաշում:

Ըստ Փարեզին Բեսի՝ "Ջարմանակի սեր"

տարօրինակ – странный
այգի – сад
կյանք – жизнь
ուրիշ ոչինչ – больше ничего
թեկուզ – хоть
արտակարգ – необычный (q=ք)
թողնել – оставить
քաշել – притягивать



Ընթերցանության նյութեր

Материал для чтения

Երկու հայր

1896-ի կոտորածի ծնեռն էր: Մի խումբ փախստականներ Սասունի կողմերից հասան Էջմիածին: Նրանց մեջ էր և Ա. գյուղի ծերունի տեր Սարգիսը¹:

– Հայրիկի աջը կուզեմ համբուրել², – խնդրեց նա վեհարանում, ու ներս թողին³:

– Բարով, տեր հայր, – աջը մեկնեց հայրիկը: Քահանան համբուրեց ու ետ եկավ, կանգնեց դահլիճի մեջտեղը հոգնած, խորտակված:

– Որտեղի՞ց կուզաս⁴:

– Սասունի կողմերեն⁵. ես Ա.-ի տեր Սարգիսն եմ ...

– Ա.-ի տեր Սարգի՞սը ...

– Այո, Հայրիկ:

– Է...

– Ես քսան հոգուց գերդաստան ունեի, Հայրիկ. տղաներիս կոտորեցին, հարսներիս տարան, թոռներս կորան, տուճաթալանեցին, վառեցին. մնացի այսպես...

– Է, հիմի⁶...

– Ես ոչինչ չեմ ուզում, Հայրիկ. ես ... այնպես, եկել եմ ... եկել եմ Հայրիկին ասեմ ... էլ ոչինչ չեմ ուզում: Երկուսն էլ լուռ էին:

– Քանի՞ որդի կորցրիր, տեր Սարգիս, – գլուխը բարձրացրեց կաթողիկոսը:

– Ամենքը միասին քսան, Հայրիկ:

– Դու քսան որդի ես կորցրել, իսկ ես՝ քսան հազար, – պատասխանեց Հայրիկը. այդ էլ քսան՝ եղավ քսան հազար ու քսան... Ու՞մն է շատ, տեր Սարգիս ...

Քահանան ցնցվեց ու լուռ կանգնած էր:

– Ու՞մ վիշտն է մեծ, տեր Սարգիս:

– Հայրիկինը...

– Դե, ե՛կ, տեր Սարգիս, մոտ եկ, աջդ դիր գլխիս, աղոթիր, օրհնիր, որ այս վշտին դիմանամ:

Այսպե՛ս ու գլուխը խոնարհեց: Քահանան շտապեց առաջ, աջը դրավ⁷ իր Հայրապետի գլխին, սկսավ⁷ աղոթք մրմնջալ ու աչքերը լցվեցին արտասուքով ...

Նա օրհնում էր հայոց կաթողիկոսին ...

Նրա առջև խոնարհած էր հայոց Հայրիկը:

Ըստ հոգևորականի Թումանյանի "Երկու հայր"

¹ տեր Սարգիս – отец Саркис (церковн.)

² Հայրիկի աջը կուզեմ համբուրել – Հայրիկի աջն եմ ուզում համբուրել

³ ներս թողին – ներս թողեցին, пропустили

⁴ որտեղի՞ց կուզաս – որտեղի՞ց ես գալիս

⁵ Սասունի կողմերեն – Սասունի կողմերից

⁶ հիմի – հիմա

⁷ ասավ, դրավ, սկսավ – ասաց, դրեց, սկսեց

Բառեր

կոտորած – резня
ծերունի – старец
գյուղ – деревня, село
վեհարան – покои патриарха
մեկնել – зд. протянуть
քահանա – священник
դահլիճ – зал
խորտակված – зд.: сокрушенный
գերդաստան – семейство
կոտորել – зд.: зарезать
հարս – сноха, невестка
կորել – потеряться
թալանել – грабить
վառել – жечь
կորցնել – потерять

ցնցվել – вздрогнуть
վիշտ – горе
աղոթել – молиться
օրհնել – благословить
դիմանալ մի բանի – вытерпеть что-либо
խոնարհել – склониться
շտապել – поспешить
Չայրապետ – патриарх
սկսել – начать
աղոթք – молитва
մրմնջալ – бормотать
լցվել – наполниться
արտասուք – слезы (собирают)

Մի գաղթականի պատմածից

...Այդ օրը մեր գյուղի շատ տներում հաց էին թխում, ծխում էին երդիկները: Եվ հանկարծ փողոցները լցվեցին թուրք զինվորներով: Չրամանատարը, կամ ինչպես իրենք են ասում՝ բինբաշին, կարգադրեց. "Չանգցնել բոլոր օջախները, ոչ մի տնից թող ծուխ չբարձրանա:" Մի քանի ժամ հետո, երբ մեզ քշում էին սարալանջով, մեր գյուղը կարծես գերեզմանոց լիներ, ոչ մի երդիկից ծուխ չէր բարձրանում: Մեր գյուղը շատ հեռվից էր երևում. գնում էինք, գնում, իսկ նա կարծես գալիս էր մեզ հետ: Երբ հասանք սարի գագաթը, մթնել էր, իսկ առջևում ծորն էր՝ նույնիսկ ցերեկը զարիուրելի: "Գիշերը կմնանք, – ասաց բինբաշին, – առավոտյան կքշենք սրանց": Մեծ-փոքր իրար կպանք, երևի քնեցինք: Չիշում են՝ զարթնեցի թուրքերի աղմուկից: Արդեն առավոտ էր, բայց ի՞նչ էր պատահել: Բինբաշին կատաղած էր. "Գյավուրներ, շեյթանի զավակներ, կկոտորեն, բոլորիդ կկոտորեն," գոռգոռում, սպառնում էր նա, իսկ աչքերը զարիուրած էին: Չեռվում երևում էր մեր գյուղը, բայց ա՛յ քեզ հրաշք՝ բոլոր երդիկներից ծուխ էր բարձրանում, ինչպես հաց թխելու ժամանակ, ինչպես երեկ առավոտ: Ծեր կանայք ծնկաչոք աղոթում էին, որովհետև միայն Ամենաբարձրյալը կարող էր անել այդ հրաշքը: Բայց իրականում ո՞վ, մի՞թե Մարանը, այն պառավը, որին բինբաշին չսպանեց, այլ թողեց գյուղում, որ նա վերջնականապես խելագարվի իր հարագատների դիակների կողքին: Մի՞թե նա: Բայց ուրիշ ո՞վ ... Բինբաշին և մի քանի զինվորներ արշավեցին դեպի գյուղ, մյուսները հարձակվեցին մեզ վրա: Խառնաշփոթությունից օգտվելով, ես փախա խելագարի նման, իմ ճանապարհին ոչինչ չտեսնելով: Երբ հանդիպակաց բլուրի վրա էի, նորից վերջին անգամ տեսա մեր գյուղը՝ բոլոր երդիկներից ծուխ էր բարձրանում:

Ըստ Վարդես Պետրոսյանի՝ "Չայկական էքզիզներ"

Բառեր

պատմած – рассказанное

ծխել – зд. дымить

երդիկ – дымовое отверстие на крыше (դ=թ)

թուրք – турок

հրամանատար – командир

կարգադրել – распоряжаться (զ=ք)

հանգցնել – гасить (զ=ք)

օջախ – очаг

ծուխ – дым

քշել – гнать

սարալանջ – склон горы

գերեզմանոց – кладбище

մթնել – стемнеть

ծոր – ущелье

զարհուրելի – ужасающий

կանել (կպչել) – прилипнуть, пристать

զարթնել – проснуться

կատաղած – разъяренный, взбешенный

գյավուր – гяур

զավակ – сын

սպառնալ – угрожать

զարհուրած – в ужасе

հրաշք – чудо

ծնկաչոք –

коленопреклоненный

Ամենաբարձրյալ – Всевышний (ծ=ց)

իրականում – в

действительности

սպանել – убивать

խելագարվել – обезуметь

դիակ – труп

արշավել – совершить

нашествие

հարձակվել – нападать (ծ=ց)

խառնաշփոթություն – суматоха

խելագար – обезумевший,

сумасшедший

հանդիպակաց –

противоположный

բլուր – холм

Հարստությունը

Լենկ-Թեմուրը գրավել էր Գոշավանքը: Գյուղացիներից նա ուզում էր խլել թաքցրած ոսկիները, վանքի հարստությունը: Տանջանքները արդյունք չտվին*. ոչ ոք չէր ասում գաղտնարանի տեղը: Նրա մերձավորներից մեկը, որ երևի լավ գիտեր հայ մարդկանց ուժն ու թուլությունը, խորհուրդ տվեց զորավարին. "Այրի՛ր վանքի գրքերը և նրանց լեզուները կբացվեն": Հավաքեցին ձեռագիր մատյանները և արդեն ուզում էին կրակի տալ, երբ ժողովուրդը փակեց կրակի ճանապարհը. "Մի՛ այրեք, կասենք":

Եվ ասացին:

Ջարմացել էր Լենկ-Թեմուրը:

Բերին*, գրքերի մոտ դիզեցին ոսկի, թանկարժեք քարեր: Լենկ-Թեմուրը ձեռքն առավ ձեռագիր մի մատյան, թերթեց, նկարները լավն էին, ափսոս, նկարների ոսկին անհնար էր քերել:

– Կարդա՛, ի՞նչ է գրված, – Լենկ-Թեմուրը գիրքը մեկնեց կողքին կանգնած մարդուն: Մարդը վերցրեց մատյանը, զգույշ, ինչպես քնած երեխային, թերթեց, թերթեց ...

– Կարդալ չգիտեմ, զորավար, – ասաց մեղավոր:

Լենկ-Թեմուրը գիրքը խլեց նրա ձեռքից: Տվեց մեկ ուրիշի, հետո երրորդին:

- Մենք կարդալ չգիտենք, գորավար, վանականներին ասա:
- Մեր պատմութիւնն է, գորավար, – տեղից ասաց վանահայրը,
- մեր պատմութիւնն է և մեր աղոթքը:

Լենկ-Թեմուրը նայեց հավաքվածներին, նայեց գրքերին, հետո ոսկուն, թանկարժէք քարերին և կնճռոտվեց ճակատը:

Հասկացա՞վ արդոք, թե ո՞րն էր իսկական հարստութիւնը:

Այդ գրքերից շատերը հիմա ապրում են Մատենադարանում, իսկ ու՞ր է Լենկ-Թեմուրի ոսկին:

*տվին, բերին (диал.-разг.) – տվեցին, բերեցին

Բառեր

խել – отнять	ժողովուրդ – народ (դ=թ)
արդյունք – результат (դ=թ)	դիզել – навалить в кучу
գաղտնարան – тайник (դ=խ)	թանկարժէք – драгоценный
մերձավոր – приближенный (ծ=g)	թերթել – листать
ուժ – сила	ափսոս – жаль
գորավար – военачальник	քերել – соскребать
այրել – сжечь	մեղավոր – виноватый
լեզուն բացվել – заговорить	վանական – монах
հավաքել – собирать	կնճռորվել – покрываться морщинами
ձեռագիր մատրյան – рукописная книга	վանահայր – настоятель
կրակի փալ – предать огню	հավաքվածները – собравшиеся

Ախլաթի Կարապետը

– Անդրանիկից հետո, – սկսեց իր պատմութիւնը ծերունին, – Հայաստանում էլ այդպիսի հերոս չկար: Կարապետից քաջ միայն Անդրանիկն էր: Ոչ ոքից չէր վախենում Ախլաթի Կարապետը:

Ինչէ՞ր էր անում: Թուրքերը լաց էին լինում: Ահից դողում էին: Իսկ բռնել ոչ մի կերպ չէին կարողանում: Թաքնվում էր Կարապետը ընկերների հետ սարերում, քարանձավներում:

Շատ էին ... Մեկին թուրքերը անտուն էին թողել, մեկի ազգ ու բարեկամին էին կոտորել... Ով կենդանի էր մնացել և դեռ ուժ ուներ, եկել միացել էր Կարապետին:

Գյուղի, սարերի տերն էր:

Եվ բոլորին օգնում էր, ոչ ոքի թույլ չէր տալիս նեղացնել:

Քսաներէք տարի սարերում մնաց:

Մահվան հետ պահմտոցի էր խաղում: Մարդ չէր, սովեր էր միայն, թուրքերի ծեռքը չէր ընկնում:

Ստամբուլում սկսեցին մտածել.

– Առաջ մեկը զենք կվերցնի, հետո մյուսները ... ժողովուրդը մեր դեմ դուրս կգա: Հարկավոր է Ախլաթի Կարապետի վերջը տալ:

Ասելը հեշտ էր, անելն էր դժվար:

Մի քիչ էլ մտածեցին ու նրա գլխին գին նշանակեցին. «Ով Ախլաթի Կարապետին բռնի ու մեզ հանձնի 1000 լիրա կստանա, իսկ ով նրա տեղը ցույց տա՝ 250:»

Երկու լեզվով գրեցին, գյուղերում տարածեցին:

Հայերը կարդում, զարմանում էին.

– Վա՛յ, վա՛յ, վա՛յ, խեղճ Կարապետ: Տեսնես՝ ի՞նչ է արել:

– Ի՞նչ էլ մեծ գին եմ նշանակել: Հանկարծ մեկն ու մեկը գնին նայելով տեղը չասի՞: Վա՛յ, վա՛յ, վա՛յ:

Իսկ Կարապետը հանկարծ ինքը հայտնվեց:

Օնբաշին նրան տեսավ, վախից գոռաց.

– Գնա՛, Կարապետ, հեռացի՛ր: Ես քեզ ի՞նչ եմ արել:

– Է՛հ, Ահմե՛դ, Ահմե՛դ, ի՞նչ ես այդպես դողում: Ես, ի՞նչ է, քեզ սպանելու՞ եմ եկել: Ես փողի ետևից եմ եկել:

Իր գլխի գինը՝ հազար լիրան, առավ ու հեռացավ:

Փողը աղքատներին բաժանեց:

Քսաներեք տարի Կարապետի ահից թուրքերը գյուղացիներին ձեռք չտվեցին:

– Ախլաթցի Կարապետի լուսանկարը, – շարունակեց ծերն իր պատմությունը, – նույնիսկ Ռուսաստանում էին վաճառում, Կովկասում: Որպեսզի Ռուսաստանում էլ իմանան, թե ի՞նչ տեսք ունեն¹ հայ ֆիդայիները:

Լավ էր, սուլթանը շուտով իշխանությունից հրաժարվեց: Սահմանադրություն ընդունեցին: Բոլորին ներում շնորհվեց: Ֆիդայիները սարերից իջան, զենքը հանձնեցին:

Կյանքը մի քիչ թեթևացավ, գյուղացիները մի քիչ հարստացան, ծանր ժամանակները, արյունարբու սուլթան Աբդուլ-Համիդին մոռացան:

Կարծում էին, թե երիտթուրքերը հայերին չեն նեղացնի:

Կարապետը տնից տուն հյուր էր գնում. ինքը տուն չուներ, ընտանիք չուներ: Բոլոր տները, բոլոր դռներն իրենն էին: Ժամանակին բոլորին օգնել էր:

... Բայց ժամանակները փոխվել էին:

Տասնչորս թվականի օգոստոսին գյուղում, կռվի ժամանակ սպանեցին Ախլաթցի Կարապետին:

Յուրայիները, հայերը:

Տեղացի հարուստը՝ Աշուտը:

Մահակն առավ ու ետևից ...

– Իսկ տասնհինգ թվականին դուք ինքներդ էլ գիտեք, թե ի՞նչ սկսվեց, – մի քիչ լռելուց հետո նորից խոսեց ծերունին: Այ այդ ժամանակ հիշեցին Կարապետին, բայց արդեն ուշ էր ...

Ամբողջ գյուղը կոտորեցին: Մեծահարուստ Աշուտը թուրքերին փրկագին՝ ոսկի առաջարկեց, որ ազատվի: Թուրքերը ոսկին առան ու իրեն ընտանիքի հետ իր տանը վառեցին: Ոչ մեկին չխնայեցին:

Միայն Կարապետին ձեռք չտվեցին: Գերեզմանն այսինքն: Վախեցան:

Այս պատմությունը Թիֆլիսում ինձ մի ծերունի պատմեց: Ես նրան չեմ ճանաչում, նրա մասին ոչինչ չգիտեմ: Գիտեմ միայն, որ Ախլաթի օրինյալ երկրում Կարապետ անունով մի քաջ ֆիդայի է եղել:

Այսքան բան²:

ըստ Լևոն Հովսեփյանի

¹ ինչ տեսք ունեն – как выглядят

² այսքան բան – вот и все

Բառեր

հերոս – герой
լաց լինել – плакать
ահ – страх
դողալ – дрожать
սար – гора
քարանձավ – пещера
անտուն – бездомный, без
крова
ազգ ու բարեկամ – родня
կոտորել – зарезать
կենդանի – живой
փեր – хозяин
նեղացնել – обидеть,
обижать
մահ – смерть
պահմարոցի – прятки, ~
խաղալ – играть в прятки
սովեր – тень
ձեռքը ընկնել – попасть в
руки
զենք – оружие, ~ վերցնել –
вооружиться, ~ը հանձնել –
сдать оружие
դեմ դուրս գալ – восстать
վերջը փալ – покончить (ջ=չ)
գին – цена
նշանակել – назначить
փարածել – распространять
խեղճ – жалкий, бедный
(դ=խ)
հայտնվել – объявиться
օնբաշի – сержант (в
турецкой армии)
վախ – боязнь
սպանել – убивать
սուլթան – султан
շուրով – скоро, вскоре

իշխանություն – власть, ~ից
հրաժարվել – отречься от
власти
հրաժարվել – отказаться,
отречься
սահմանադրություն –
конституция
ներում – амнистия
շնորհել – даровать, ներում
~ – амнистировать
թեթևանալ – облегчиться
հարստանալ – разбогатеть
արյունարբու – кровожадный
(բ=փ)
երիտրուրքեր – младотурки
(полит. партия)
ժամանակին – в свое время
փոխվել – меняться,
измениться,
յուրային – свой (человек)
փեղացի – местный (житель)
մահալ – дубина
սկսվել – начинаться
լռել – молчать, помолчать
նորից – снова
ուշ – поздно
մեծահարուստ – очень
богатый, богатей
փրկագին – откуп, выкуп
ազատվել – освободиться
(откупиться)
խնայել – беречь, щадить
գերեզման – могила
մասին – о (послелог)
օրինյալ – благословенный
անուն – имя

Հայերեն

(հատված)

Մեր շուրջը լեզուներ նոր ու հին,
Մեր շուրջը խոսում են այլորեն,
Եկ խոսենք, եղբայր իմ,
հայերեն:

Մենք ունենք աշխարհում Մասիս սար,
Այդ սարը գալիս է դարերեն*,
Նա անվերջ խոսում է
հայերեն:

Ջավակիդ հայկազյան դպրոց տար,
Եկ գրենք մեսրոպյան տառերով,
Եկ խոսենք մեր անուշ
բառերով:

Մեզ ցրեց մի բազուկ անօրեն,
Թե կուգես սերունդներ** մեզ ներեն,
Մենք հայ ենք, եկ խոսենք
հայերեն:

Այս օտար աշխարհի ցրտերում
Եկ սիրենք մեր լեզուն ջերմորեն,
Եկ վառենք ու վառվենք
հայերեն:

Խաչիկ Դաշտենց

* NB: դարերեն – западноармянский вариант отложительного падежа: в восточноармянском – դարեր/ից

**NB: Отсутствие определенного артикля, как в некоторых западноармянских диалектах.

Բառեր

այլորեն – иначе, иным способом
անվերջ – без конца
հայկազյան – армянский (племени Айка)
մեսրոպյան – месроповский (имеется в виду Месроп Маштоц)
փառ – буква

ցրել – рассеять
բազուկ – часть руки от локтя до кисти
անօրեն – беззаконный, незаконный
սերունդ – поколение
օտար – чужой
ցուրպ – зд. сущ. холод
ջերմորեն – горячо
վառվել – гореть

Урок 17. Տառնյութերորդ դառն

Грамматика

Залог глагола; каузативный оборот "неопределенная форма глагола + տալ".

Словообразовательный прием повтора.

Суффикс -անի.

Послелог փոխարեն.

Употребление определенного артикля (обобщение).

Тексты

Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղին

Պըլը Պուղին մեկիք Շահնազարին աղբյուրն է տանում, ծարավ ետ բերում

Հիմարների ու գժերի ցուցակը

Չարենցի կատակներից

Залог глагола. Каузативный оборот "неопределенная форма глагола + տալ"

Բայի սեռը

Պատճառական դարձվածք





Исходя из отношений субъекта и объекта, иными словами, рассматривая направление действия от субъекта к объекту, в языках различают переходные и непереходные глаголы.

Переходные глаголы могут иметь прямое дополнение (дополнение в винительном падеже), а **непереходные** – не могут.

Непереходные глаголы (անանցողական բայեր) в армянском языке представлены:

нейтральными глаголами (չեզոք բայեր) типа: 1①, 1②, 2①, 2②	страдательными по форме глаголами со следующими значениями (կրավորական բայեր) 1③			
	нейтральным	страдательным	возвратным	взаимным
ծիծաղել, քնել, մնալ, մտնել, մոտենալ	Լույսը բացվեց: Եւ բաքնվում է:	Պատի վրա ներկերով գրված է "Գարնանային փողոց":	Եւ լվացվեց ու սանրվեց:	Նրանք համբուրվեցին:

Переходные глаголы (անցողական բայեր) представлены:

собственно переходными глаголами (ներգործական բայեր) ①①, ①②, ②①, ②②	причинными глаголами (պարճառական բայեր) ③
կորորել, կարդալ, տեսնել, հասկանալ	մոտեցնել, հեռացնել
	

Для того чтобы употребить переходный глагол в нейтральном значении (без указания прямого объекта), иногда достаточно образовать от переходного глагола страдательный глагол; а для того, чтобы показать, что действие, совершенное субъектом, перешло на объект, бывает достаточно образовать от непереходного глагола причинный глагол. Для многих переходных глаголов можно указать непереходные глаголы соответствующего значения; как правило, собственно переходным глаголам соответствуют страдательные глаголы, а причинным глаголам – нейтральные.

Так,

переходный глагол (ներգործական) минус переходность = страдательный глагол (կրավորական)	переходный или непереходный глагол (չեզոք) плюс переходность = причинный глагол (պատճառական)
լսել – լսվել գրել – գրվել ներկել – ներկվել շրջել – շրջվել	խնել – խնեցնել մոտենալ – մոտեցնել մտնել – մտցնել քնել – քնեցնել

NB: Только глаголы спряжения **-ել** образуют страдательную форму простым прибавлением суффикса **-վ-** перед окончанием.

Глаголы спряжения **-ալ** при необходимости образуют страдательную форму от причинной формы чередованием **-ացն-, -եցն-, -ցն-** → **-ացվ-, -եցվ-, -ցվ-**.

խաղալ – **խաղացվել**
"играть" – "быть сыгранным"

կարդալ – **կարդացվել**
"читать" – "читаться"

զգալ – **զգացվել**
"чувствовать" – "чувствоваться"

NB: Обратите внимание на пару **քնել – քնեցնել** (спать – усыплять). Если в парах **մոտեցնել – մոտենալ**, **մտցնել – մտնել** субъект совершает в первом случае переходное действие, во втором – нейтральное (**Արմենը մոտեցնում է աթոռը: Աթոռը մոտենում է Ռչ, հնարավոր չէ: Արմենը մոտենում է:**) то глаголом **քնեցնել** субъект побуждает другого ко сну, а не спит сам. Напр., **Մայրիկը կաթ է խմեցնում Արմենին և քնեցնում է, այսինքն Արմենը կաթը խմում է և քնում է: խմեցնել, քնեցնել** – это собственно причинные глаголы.

От многих глаголов можно образовать причинные глаголы, которые показывают побуждение к действию, где субъект является как бы "причиной" совершения другим данного действия. Так можно построить глаголы լսեցնել "дать послушать", խաղացնել "занимать, заставить играть", կարդացնել "заставить прочитать" и т.д.

Можно, при желании, построить страдательную форму от причинных глаголов (чередую -ացն-, -եցն-, -ցն- → -ացվ-, եցվ-, -ցվ-), но такие глаголы крайне неупотребительны, потому что образованы искусственно: նստցվել и т.д.



Страдательный глагол		Переходный глагол		Причинный глагол
խմվել	←	խմել	→	խմեցնել
հիշվել	←	հիշել	→	հիշեցնել
		սովորել	→	սովորեցնել
→ կարդացվել		կարդալ	→	կարդացնել →
→ զգացվել		զգալ	→	զգացնել →
→ հասկացվել		հասկանալ	→	հասկացնել →

Однако отметим, что по причинам благозвучия не от каждого глагола можно образовать причинные глаголы с суффиксом -ացն-, -եցն-, -ցն-. Этот прием скорее подходит для непереходных глаголов.



Непереходный или нейтральный глагол		Причинный глагол
NB: страд. лишь по форме! սխալվել	→	սխալեցնել
ծիծաղել	→	ծիծաղեցնել
տխրել	→	տխրեցնել
զայրանալ	→	զայրացնել
բարկանալ	→	բարկացնել

Для собственно переходных глаголов прибегают к аналитическому обороту "неопределенная форма глагола + տալ". Ср.



նամակ գրել – նամակ գրել տալ
"написать письмо – побудить, заставить кого-то написать письмо"



շոր կարել – շոր կարել տալ
"сшить одежду – дать кому-то, заказать сшить одежду"

Վարժություններ




1. Ա) Հետևյալ բայերից կազմեք ձևով պատճառական, իմաստով ներգործական բայեր.


Из следующих глаголов образуйте причинные по форме переходные глаголы:

	непереходный (нейтральный) глагол		переходный (причинный) глагол
ալելանալ	прибавляться (в количестве, объеме)	ալելացնել 	прибавить
բարձրանալ	подняться		поднять
եռալ	кипеть		кипятить
զարգանալ	развиваться		развивать
զարմանալ	удивляться		удивлять
իջնել	опуститься		опустить
լայնանալ	расшириться		расширить
նեղանալ	сузиться, обидеться		сузить, обидеть
կարճանալ	укоротиться		укоротить
շատանալ	умножиться		приумножить
մեծանալ	расти		увеличить
լրանալ	исполниться		заполнить
հեռանալ	отойти		удалить
մոտենալ	подойти		приблизить
զգուշանալ	остерегаться		предупредить



Բ) Հետևյալ բայերից կազմեք բուն պատճառական բայեր.


Из следующих глаголов образуйте собственно причинные глаголы:

	нейтральный глагол		причинный глагол
քնել	спать	քնեցնել 	усыплять
ծիծաղել	смеяться		смешить
խմել	пить		напоить
վազել	бегать		заставить бегать
կարդալ	читать		заставить читать
հոգնել	устать		утомить

2. Ա) 


В некоторых случаях направленность действия передается другим глаголом или особой причинной формой:

непереходный глагол	переходный глагол
անցնել – проходить	անց կացնել – проводить
ընկնել – падать	զցել – ронять
 գլխի ընկնել Հարևանների աղմուկից գլուխս գնաց:	գլխի զցել Հարևանները գլուխս տարան:
 ճանապարհ ընկնել – отправиться в путь	ճանապարհ զցել (դնել) – провожать
տեսնել – видеть	ցույց տալ – показывать
դառնալ – стать	դարձնել – превращать
վեր կենալ – встать	վեր կացնել – поднимать

 Բ) Ընտրե՛ք ճիշտ բայը.

Выберите правильный глагол:

1. Այդ դեպքից հետո նա իմ աչքից ...:	ընկավ / զցեց
2. Ի՞նչ շնորհքով աղջիկ է քույրդ, այս ինչպե՞ս հին շալվարը այսքան գեղեցիկ կիսաշրջագծեստ ...:	դարձավ / դարձրեց
3. Կիրակի մայրս ինձ թույլ է տալիս մի քիչ երկար քնել, շուտ չի ...:	վեր կենում / վեր կացնում
4. Ես նրան աչքով արեցի, որ գլխի ..., որ լուռ մնա, բայց նա ինձ չիսկացավ:	ընկնեմ / զցեմ
5. Այս ամառ գնացել էիք Ղրիմ, ինչպե՞ս ... ժամանակը:	անցավ / անց կացրեց
6. Առաջ երբ մեծը սենյակ էր մտնում, երիտասարդները ... աթոռից:	վեր էին կենում / վեր էին կացնում
7. Շաբաթ օրը մեր մի քանի բարեկամների հետ գնացել էինք քաղաքից դուրս՝ խորոված անելու, հոյակապ ժամանակ ...:	անցանք / անց կացրինք

 3. Ա) Հետևյալ անցողական բայերը դարձրեք անանցողական.

Образуйте непереходные глаголы от следующих переходных глаголов:

ներգործական → կրավորական (переходный) (страдательный)	պատճառական → չեզոք (причинный) (нейтральный)
առաջարկել → առաջարկվել զգալ → զգացվել	ավելացնել → ավելանալ

Առաջարկել, ավելացնել, արդուկել, բացել, բացահայտել, բացատրել, բարկացնել, բարձրացնել, բերել, գտնել, գրավել, գրել, դադարեցնել, դատարկել, եփել, զայրացնել, զգալ, զգուշացնել, ընդունել, ընտրել, թոցնել, իջեցնել, լվանալ, խաղալ, խառնել, խմել, խմեցնել, խորովել, ծածկել, ծամել, ծիծաղեցնել, կալանավորել, կանգնեցնել, կարդալ, կատարել, կոտրել, կտրել, կրկնել, հագցնել,

համոզել, հայտնաբերել, հասկանալ, հասկացնել, հավատացնել, հավաքել, հարգել, հեռացնել, հիշել, հիշեցնել, հուզել, ղեկավարել, ճանաչել, մաքրել, մեծացնել, մերժել, մոռանալ, մոտեցնել, մորթել, մտցնել, նստեցնել, շատացնել, շարունակել, շարտել, որոշել, պառկեցնել, պատրաստել, պահել, սանրել, սխալեցնել, սկսել, սովորեցնել, սպանել, սպասել, ստանալ, ստուգել, վաճառել, վախեցնել, վերջացնել, տապակել, տխրեցնել, ցավեցնել ուղարկել, ուրախացնել, փախցնել, փակել, փաթաթել, փորել, փոքրացնել:

NB: սխալեցնել – սխալվել



բ)

անել – արվել
դնել – դրվել
տալ – տրվել
տանել – տարվել



Գ) Ընտրեք ճիշտ բայը.

Выберите правильный глагол:

1. Ծառայի պատասխանը տիրոջը ... :	զայրացավ / զայրացրեց
2. Քույրս լոբին հինգ ժամ է ... և դեռ ասում է, որ հինգ ժամում լոբին հագիվ է ... :	եփում / եփվում եփում / եփվում
3. Օպերայի թատրոնը ... է Ազատության հրապարակում:	գտնում / գտնվում
4. Դասերից հետո դպրոցը ... :	դատարկեց / դատարկվեց
5. Փողոցն անցնելիս հարկավոր է ... մեքենայից:	զգուշանալ / զգուշացնել
6. Սխտորը քիչ ես գցել, սխտորի համը բոլորովին չի ... :	զգում / զգացվում
7. Այդ տարի Տիգրանը չուզեց քննություններ հանձնել ու համալսարան ... :	ընդունել / ընդունվել
8. Իմ լավ բարեկամը ... մեր ընկերության նախագահ:	ընտրեց / ընտրվեց
9. Նա ամաչեց ու ... աչքերը:	իջավ / իջեցրեց
10. Փոքրիկս, ինչու՞ ես լաց լինում, դարձյա՞լ մեծ տղաները քեզ չեն ... :	խաղում / խաղացնում
11. Խորովածը չէր ... :	ծամում / ծամվում
12. Թամադան ... և բոլորը լռեցին:	կանգնեց / կանգնեցրեց
13. "Խորհուրդ" բառի հ-ն չի ... :	կարդում / կարդացվում
14. Վերջապես նրա երազանքը ... :	կատարեց / կատարվեց
15. Աղջիկը մի անզգույշ շարժումով բաժակը ... և ... :	ընկավ / գցեց կոտրեց / կորտվեց
16. Բժիշկն ասաց, որ զգույշ լինեն, որպեսզի հիվանդությունն այլևս ... :	չկրկնի / չկրկնվի

17. Արդեն շատ ուշ էր, բայց ես չկարողացա նրան ... , որ այդ գիշեր մեր տանը մնա:	համոզել / համոզվել
18. Ի՞նչ է գրված այստեղ, լավ չի ... :	հասկանում / հասկացվում
19. Ուսուցիչը շատ աշխատեց, բայց այդպես էլ չկարողացավ աշակերտներից մեկին օրվա դասը ... :	հասկանալ / հասկացնել
20. Մեր հայերենի ուսուցիչը շաբաթը մեկ անգամ ... է մեր տետրերը, որպեսզի ... :	հավաքում / հավաքվում ստուգի / ստուգվի
21. Դու քո կոշիկներն ամեն օ՞ր ես ... :	մաքրում / մաքրվում
22. Վատ օրերը շուտ են ..., ասենք, լավ օրերն էլ երկար չեն ...:	մոռանում / մոռացվում հիշում / հիշվում
23. Կարո՞ղ ես այս պայուսակն ու այս ճամպրուկը պահարանի տակ ...:	մտնել / մտցնել
24. Այս գիրքը էլ մի ..., ... գրադարան:	պահիր / պահվիր, վերադարձրու / վերադարձիր
25. Քույրիկ, ... ինձ ջութակ նվագել:	սովորիր / սովորեցրու
26. Ներիր ինձ, որ այսքան քեզ ...:	սպասեցի / սպասեցրեցի
27. Այս բնակարանը չի ...:	վաճառում / վաճառվում
28. Հավն արդեն ..., սեղան նստեք:	տապակեց / տապակվեց
29. Պապը շատ ..., որ թոռնիկը բժշկական ինստիտուտ ... :	ուրախացավ / ուրախացրեց ընդունեց / ընդունվեց
30. Մայրիկ, այս վերնաշապիկը ինձ վրա մեծ է, եթե մի քիչ ... կհագնեմ:	փոքրանաս / փոքրացնես
31. Հայերենում շեշտը ... է վերջին վանկի վրա:	դնում / դրվում



4. Գտեք հնարավոր կապակցությունները.
Найдите возможные сочетания:



Ա) Ի՞նչը կամ ո՞վ կարող է

ավելանալ, բարկանալ, գտնվել, դատարկվել, եռալ, զգացվել, զգուշանալ, ընդունվել, ընտրվել, իջնել, լայնանալ, կանգնել, կատարվել, կոտրվել, կտրվել, կրկնվել, համոզվել, հայտնաբերվել, հասկացվել, հավաքվել, հեռանալ, հիշել, հիշվել, մաքրվել, մեծանալ, մերժվել, մոռացվել, շատանալ, շարունակվել, որոշվել, պատրաստվել, պահվել, սանրվել, սխալվել, ստացվել, ստուգել, վաճառվել, տապակվել, տխրել, փախչել, փոքրանալ

բաժակը, սուրճը, հոտը, տղաները, թամադան, գլխարկը, թելը, դեպքը, ճաշը, կաթը, հանցանքը, դասը, հեռախոսի համարը, ջուրը, վերնաշապիկը, առաջարկությունը, պատմությունը, քույրերը, ձուկը, աղը, տետրերը

Բ) Ի՞նչ կամ ու՞մ կարելի է

արդուկել, գտնել, գրավել, բարձրացնել,
 գգուշացնել, ընդունել, ընտրել, իջեցնել,
 լվանալ, ծիծաղեցնել, կանգնեցնել,
 կատարել, կոտրել, կտրել, կրկնել,
 հագցնել, համոզել, հայտնաբերել,
 հասկանալ, հավատացնել, հավաքել,
 հարգել, հեռացնել, հիշել, հիշեցնել, հուզել,
 ճանաչել, մաքրել, մեծացնել, մերժել,
 մոռանալ, մոտեցնել, մորթել, մտցնել,
 շարունակել, որոշել, պատրաստել, պահել,
 սանրել, սովորեցնել, սպանել, սպասել,
 ստանալ, ստուգել, վաճառել, վախեցնել,
 տապակել, ուղարկել, ուրախացնել,
 փախցնել, փաթաթել, փոքրացնել


փողոցը, եղբորը,
 շավարը, գյուղը,
 հյուրին, գրքերը,
 Քոչարի, ափսեմ, դլմա,
 երգը, երեխաներին,
 ձեռնոցները, այծը,
 միջանցքը, թերթը,
 հարցը, բազկաթոռը,
 բնակարանը, ձմերուկը,
 բարեկամությունը,
 մախաճաշը, մարդկանց,
 սպանաղը, գողությունը,
 նկարը, ձեռքը, մեքենան




5. Ավարտե՛ք բայերը.
 Дополните глаголы:




- Ալլո, Զակո՛ք, դու՞ ես, բարձր խոս... , չի լս... :
- Անահիտ, ցուրտ է, մի՛ բաց... պատուհանը:
- Եթե արագ գնանք, շուտ կմոտ... Գարնանային փողոցին, իսկ եթե դանդաղ գնանք՝ քիչ կհեռ... Գարնանային փողոցից:
- Ինչպե՞ս է գր... վարդ բառը, դ-ո՞վ, թե՞ թ-ով:
- Արի՛ շախմատ խաղ... :
- Այն տունը վաճառ... է:
- Ժամը քանիսի՞ն է խանութը փակ... :
- Տղա՛ս, դու ո՞ր դպրոցում ես սովոր... : Ո՞վ է քեզ սովոր... մեքենա վարել:
- Վահրամ, արագ ներքև իջ..., ներքևում ինչ-որ մեկը քեզ է սպաս... :
- Հիվանդը քնած է, երբ որ նա արթն..., հարկավոր է նրան նստ... և գոնե մի բաժակ թեյ խմ... :
- Առավոտից գորգն են լվ..., բայց կարծես թե չի մաքր... :
- Ես չեմ կարողանում քեզ հասկ... : Ես չեմ կարողանում քեզ հասկ..., որ ուշանալը տգեղ սովորություն է:
- Ե՞րբ է վերջ... ձեր մաթեմատիկայի դասը: - Իսկ ե՞րբ է սկս... անգլերենի դասը:
- Ես այլևս չեմ ուզում շարունակ..., ինձ ոչ ոք չի լս... :

6. Ա) 




Շոր կարել: → Դու ի՞նքո՞ղ ես կարել այս շորը, թե՞ կարել ես տվել:

Շոր կարել: Դռները ներկել: Ոչխար մորթել: Հյուրասենյակի պատերը նկարներով ծածկել: Լավաշ թխել: Սագերո՞ղ կտրել: Վերարկուն մաքրել: Գլխարկը մեծացնել: Թիկնոցը փոքրացնել:



– Այս դու՞ ես նկարել այս այծը:
– Այո,
– Ոչ,



– Այո, ես ինքս եմ նկարել:
– Ոչ ես ինքս չեմ նկարել, նկարել եմ տվել:

Այս դու՞ ես նկարել այս այծը: – Այո, – Ոչ,
Այս հոյակապ տորթը մայրի՞կդ է թխել: – Այո, – Ոչ,
Այսօրվա դուլման դու՞ ես փաթաթել: – Այո, – Ոչ,
Այս խմորեղենը քու՞ յրդ է պատրաստել: – Այո, – Ոչ,
Ձուկը եղբա՞րդ է տապակել: – Այո, – Ոչ,
Այս մուշտակը ամուսի՞նդ է բերել Ֆրանսիայից: – Այո, – Ոչ,



Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղին

Պըլը Պուղին մեկիք Շահնագարի զվարճախոսն էր: Նա խելոք, սրամիտ ու համարձակ մարդ էր: Նա ուրախացնում էր իշխանին ու նրա հյուրերին: Ղարաբաղի ժողովուրդը սիրում էր հանդուզն Պըլը Պուղուն և շատ սիրելով "պել", այսինքն գիժ անունն էր տվել: Մեկիք Շահնագարն էլ էր սիրում Պըլը Պուղուն: Նա գնահատում էր սրամիտ խոսքը և միաժամանակ ուզում էր ցույց տալ, որ ինքը պակաս սրամիտ չէ, քան Պըլը Պուղին:

Բառեր

զվարճախոս –

балагур,
весельчак,
шутник

խելոք – умный

համարձակ –
смелый (ծ=ց)

ժողովուրդ –
народ (դ=թ)

հանդուզն –
дерзкий

գիժ –
сумасшедший

գնահատել –
ценить

միաժամանակ –
одновременно, в
то же время


պակաս սրամիտ

քան – менее
остроумный, чем



Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

Комментарии, задания и упражнения

7.Ա) 



խոսք – 1. слова (песни), 2. слово (взять, дать и т.д.)
3. речь (о чем-то)

բառ – слово (словарное), բառարան – словарь

ճառ – речь (тамады, официального лица)

խոստում – обещание

խոստանալ, խոսք տալ – обещать

խոսքի տակից դուրս գալ – отпарировать

խոսքի տակից դուրս չգալ, խոսքի տակ մնալ – не смочь ответить, отпарировать

խոսքի տակ թողնել – сказать такое, чтобы собеседник не смог отпарировать

խոսքը կտուրը զգել – отклониться от предмета речи, переводя речь на другую тему (կտուր – крыша)

խոսքը մեր մեջ – между нами говоря

խոսք քաշել – вытянуть из кого-то слово




"Էրեբունի" երգի **խոսքը** Պ. Սևակն է գրել: Ձոննին առանց **մթերքի մասին խոսք բաց անելու** կարողացավ հաց ու պանիր վերցնել պարոն կոզակից: "**խոսքը** **տրվում** է մեր ընկերության փոխնախագահին", ասաց նախագահը ու նստեց իր տեղը: Նա **ինձ խոսք է տվել** այլևս քրոջս չանհանգստացնել, բայց ես նրա **խոսքումին** առանձնապես **չեմ հավատում**: Այս դասում գրեթե **Նոր բառեր** չկան, բոլոր **բառերն** էլ հասկանալի են: Հեռուստացույցով հաղորդում են (передают) մեր նախագահի երեկվա **ճառը** Միացյալ Ազգերի Կազմակերպությունում (Организация Объединенных Наций): Փոքր եղբայրդ ինչ **լեզվանի է, խոսքի տակ չի մնում**, ում ուզես **լեզվով կհաղթի, խոսքի տակ կթողնի**: "**խոսքը կտուրը մի գցիր**, ասա, թե ով է մորթել ոչխարը": Կինդ ուզում եր **ինձնից խոսք քաշել**, իմանալ, թե երեկ որտեղ ես եղել, բայց ես ոչինչ չասացի: **խոսքը մեր մեջ**, կարող էիր գոնե զանգ տալ:



Բ) Կետերի փոխարեն գրեք բառ, խոսք или ճառ.

Вместо точек поставьте բառ, խոսք или ճառ:

Ես քեզ ... չեմ տալիս, որ կգամ քեզ հետ մեր ընկերոջը շնորհավորելու, բայց կաշխատեմ զանգել նրան: Եթե անծանոթ ... հանդիպի, հարցրու ուսուցչուհուն, մի՛ ամաչիր: Նա ինձնից ... առավ, որ իրեն նամակ կգրեմ, բայց վախենում եմ, չկարողանամ: Թամադայի ... հետո երիտասարդները սկսեցին պարել: Ինչի մասին էլ ... լինի, նա՛ միշտ մի հետաքրքիր բան ունի ասելու: Ընկերուհիդ շատ խորամանկ աղջիկ է, նրանից ... քաշել չի լինում, եթե չի ուզում մի բան ասել, ... կտուրն է զգում: ... մեր մեջ, ես նրան լավ չեմ հասկանում:

8.Ա) 



խելք – ум
 խելացի – умный (лит.)
 խելոք – умный, послушный (разг.)
 անխելք – глупый
 խելագար – сумасшедший (գիժ)
 խելագարություն – сумасшествие (գժուրյուն)
 խելագարվել – с ума сойти (գժվել)
 խելահեղ – безумный
 խելահեղություն – безумие
 խելքը (ուշքը) գնալ մի բանից, մեկից, մի բանի, մեկի համար – с ума сходить
 խելքը տալ մի բանի – чрезмерно увлекаться чем-то
 խելքը կորցնել, խելքը հացի հետ ուտել – сглупить
 խելքի գալ – опомниться, поумнеть
 խելքի բերել մեկին – наставлять кого-л., заставить опомниться
 խելքը գլխին – в здравом уме
 խելքը գլուխը հավաքել – собраться с мыслями и поступить умно



Մեր հարևանի երեխան շատ **խելացի (խելոք) փղա է**, դեռ տասնմեկ տարեկան է, բայց արդեն յոթերորդ դասարանում է: –Մայրիկ, ասա՛ Վահրամիկին, **թող խելոք մնա**, ինձ չխանգարի դաս սովորել: Հայկական շատ հեքիաթներ այսպես են սկսվում. "Լինում են երկու եղբայր, **մեկը խելոք, մյուսը՝ անխելք:**" Պապն իր փոքրիկ թոռնիկին այնպես է սիրում, որ **խելքը գնում է նրա համար:** Եղբայրս **խելքը փվել է կինոյին**, ուրիշ բանով չի հետաքրքրվում: **Խելքդ կորցրե՛լ ես**, ի՛նչ է, ի՛նչու՞ ես այս մարդուն փող վստահում: **Խելքը գլխին մարդը** այդպիսի գործ չի սկսի: Այս անձրևին **խելագարություն է** տնից դուրս գալը: Ընկերներինս հետ երեք օրով գնացել էի Վենետիկ, **խելահեղ օրեր** անց կացրիմք:

Գ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից կամ արտահայտություններից մեկը.


Вместо точек поставьте нужное слово или выражение из правого столбца:

1. Թե ... ունես, առողջությունդ գնահատիր:	անխելք
2. Դու ... աղջիկ ես, մի վախենա ... ու համարձակ գնա քննության:	խելք
3. Մի՞թե այդ ... հանդգնեց գալ ձեր տուն ու կռվել եղբորդ հետ:	խելացի
4. Քննիչը Պավլեին կանչեց իր մոտ, բայց Պավլեն ... ցուցմունք չտվեց:	խելքը գլխին
5. Այսօր երեկոյան հեռուստացույցով Բոմարշեի "... օր կամ Ֆիզարոյի ամուսնությունը" ներկայացունճ (представление) են տալիս:	խելքդ գլուխդ հավաքիր
6. Նասրեդդինի հարևանը կարծեց, թե Նասրեդինը ... է ու մտքում ծիծաղեց նրա վրա:	խելագարը
	խելահեղ

Գ) Հետևյալ նախադասություններում օգտագործեք "գլուխ" կամ "խելք" բառով արտահայտություն.

В следующие предложения вставьте выражения со словом **գլուխ** или **խելք**:

1. Քրոջս ... գնում է ժամանակակից երաժշտության համար:	գլուխը / խելքը
2. Հեռուստացույցի ձայնը իջեցրու՛, ի՞նչ կլինի, ... գնաց:	գլուխս / խելքս
3. Ընկերս արդեն քառասուն տարեկան է, բայց ... չի գալիս, չի լրջանում:	գլուխ / խելքի
4. Մեր տների փոխանակությունը... չի գալիս:	գլուխ / խելքի
5. Հենց որ ձեր գործերը ... բերեք, մեզ իմաց տվեք, խնդրեն:	գլուխ / խելքի
6. Ոչ ծնողները, ոչ ուսուցիչները չեն կարողանում այս երեխային... բերել. չի ուզում սովորել, ուզում է այժմվանից վաճառող դառնալ:	գլուխ / խելքի
7. Դերասանը ներկայացումից հետո դուրս է գալիս ու ... է տալիս:	գլուխ / խելքն
8. Նա... տվել է խմելուն, ոչնչով չի հետաքրքրվում:	գլուխ / խելքը

9. Ա) 



հանդուգն հանդգնել – дерзать հանդգնություն – дерзость
համարձակ (ծ=ց) համարձակվել – осмелиться (ծ=ց) համարձակություն – смелость (ծ=ց) անհամարձակ – робкий (ծ=ց)
ժողովուրդ (դ=թ) ժողովրդական – народный (դ=թ)
գնահատել գնահատական – оценка անգնահատելի – неоценимый



Մարդիկ **համարձակությունը** բարձր են գնահատում, բայց **համարձակ լինել** չի նշանակում **հանդուգն լինել**: Աշակերտի սրամիտ խոսքը դասարանին ծիծաղեցրեց, բայց ուսուցչուհին ասաց, որ դա **հանդգնություն է**: Եթե նորից **համարձակվես** քրոջս անհանգստացնել, այն ժամանակ կտեսնես իմ ուժը: Նա հրաշալի ձայն ունի, կարող է լավ երգիչ դառնալ, բայց շատ **անհամարձակ է**: Կան հայկական **ժողովրդական երգեր**, որ մեզ են հասել իններորդ-տասներորդ դարերից: Ի՞նչ **գնահատական ես ստացել** մաթեմատիկայից: Կոմիտասի ծառայությունը հայ **ժողովրդին անգնահատելի է**:

Կ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. Անճանոթի ... բոլորին գարնացրեց:	չհամարձակվես
2. ... այլևս քրոջս անհանգստացնել:	անհամարձակ
3. Փոքրիկ Սողոմոնը նայեց իր շուրջը և ... ծայնով սկսեց երգել:	հանդգնությունը
4. Վերջապես գիտնականը իր համար մի ... օգնական գտավ:	ժողովուրդը գնահատականը
5. Նշանավոր մարդկանց իսկական ... միայն ... կարող է տալ:	ժողովրդական
6. Հայկական ... հեքիաթների լեզուն մի քիչ տարբեր է մեր լեզվից:	անգնահատելի



և **Պըլը Պուղին մելիք Շահնազարին աղբյուրն է փանում, ծարավ ետ բերում**

Ցանկանալով իր սրամտությամբ փայլել, մելիք Շահնազարը մի անգամ փորձում է Պըլը Պուղուն խոսքի տակ թողնել:

Դա տեղի է ունենում հրապարակում, ուր ներկա են լինում շատ մելիքներ և ազնվականներ: Եվ Պըլը Պուղին խոսքի տակ չի մնում.

– Մելիքն ուզում է ինձ հաղթել, բայց չի իմանում, որ իրեն կարող եմ տանել աղբյուրը և ծարավ ետ բերել:

– Չե՛ս կարող, – ասում է մելիք Շահնազարը:

– Կարող եմ, – ասում է Պըլը Պուղին:

– Չե՛ս կարող:

– Կարող եմ:

– Արի գնանք, – քաշում է մելիք Շահնազարը Պըլը Պուղու թևից, – թե չկարողանաս, լավ իմացիր, որ գլուխդ կտրել եմ տալու:

– Գնանք, – ասում է Պըլը Պուղին և ճանապարհ ընկնում:

Երբ մելիք Շահնազարն ու Պըլը Պուղին հասնում են աղբյուրին, Պըլը Պուղին ասում է.

– Կա՛ց*, մելիք, հապա ո՞վ կլինի մեր վկան, որ դու աղբյուրից ջուր ես խմել. դու կասես խմել եմ, ես էլ կասեմ՝ չե՛, չես խմել: Ի՞նչ դուրս եկավ սրանից: Լավն էն է, որ գնանք մի վկա կանչենք:

– Լավ, – համաձայնում է մելիք Շահնազարը:

– Հը՛, աղբյուրի ջուրը սա՞ռն էր, – հարցնում են մարդիկ, երբ Պըլը Պուղին և մելիք Շահնազարը վերադառնում են հավաքվածների մոտ:

– Պուղին չթողեց, ասում է՝ վկա չկա, գնանք վկա կանչենք:

– Վա՛յ, քո տունը շինվի, մելիք, բա մարդ էդքան միամիտ կլինի՞, – ասում են հավաքվածներն ու ծիծաղում:

*կաց – погоди

Բառեր

աղբյուր – родник (ղբ=խա)

սրամտություն – остроумие

փայլել – блеснуть, блистать

փորձել – пытаться (ծ=g)

ազնվական – дворянин

հաղթել – победить (ղ=խ)

կտրել – срубить

վկա – свидетель

համաձայնել – согласиться


հավաքվածներ – собравшиеся

միամիտ – наивный человек,

простак

10.Ա)


Ուղղ.-հայց հ.	սա	դա	սրանք	դրանք
Սեռ.-տր. հ.	սրա(ն)	դրա(ն)	սրանց	դրանց
Բաց. հ.	սրանից	դրանից	սրանցից	դրանցից
Գործ. հ.	սրանով	դրանով	սրանցով	դրանցով
Ներգ. հ.	սրանում	դրանում	սրանցում	դրանցում

Բ) 



(Սա – սեռ.) ... իմաստն ի՞նչ է: → Սրա իմաստն ի՞նչ է:

(Սա – սեռ. հ.) ... իմաստն ի՞նչ է: (դա – բաց. հ.) ... ի՞նչ հասկացար ...: (Ղա – գործ. հ.) ... չես կարող շիշը բացել: (Սրանք – բաց. հ.) ... ո՞րն են ուզում: (Սա – բաց. հ.) ... երկու հազար տարի առաջ Հայաստանի տեղում եղել է Ուրարտու պետությունը (государство): (դրանք – գործ. հ.) Այդ կոշիկները մի հազմիր, ... չես կարողանա սար բարձրանալ: (Սա – սեռ. հ.) ... զինն ի՞նչ է: (Ղա – բաց. հ.) ... հետո երկար ժամանակ հարևանը այլևս չէր դիմում Պուղուն:

11.Ա) 



- փորձել
- փորձ – опыт, попытка, эксперимент, репетиция (ծ=ց)
- փորձագետ – эксперт
- փորձագիտություն – экспертиза
- փորձադաշտ – экспериментальное поле
- չափափորձ – примерка
- փորձված – испытанный, бывалый
- անփորձ – неопытный
- փորձառու – опытный
- փորձանք – беда, злоключение
- փորձարկել – провести испытание
- փորձարկում – испытание




Ժողովրդական խոսքն ասում է **փորձը փորձանք չէ**: Ժողովրդական մի իմաստուն ասացվածք (поговорка) էլ կա՝ **փորձված թանը անփորձ մածունից լավ է**: Տառիկս իր զավակներին հրաժեշտ տալիս երբեք լաց չէր լինում, ասում էր՝ **որ փորձանք չպատահի**, միայն օրինում էր: Երգչախումբն արդեն հավաքվել է, բայց **փորձը** դեռ չի սկսվում, որովհետև խմբավարն ուշանում է: **Անփորձ** բժիշկներին մի դիմիր, **փորձադաշտ** մի դարձիր նրանց համար, ես քեզ խորհուրդ եմ տալիս իմ բժշկին դիմել, նա շատ **փորձառու** մասնագետ է: **Փորձագիտությունը** ցույց տվեց, որ գողություն չի եղել, դատական **փորձագետների** կարծիքով կալանավորին պետք է ազատել: Մի գլխարկ կամ կոշիկ ընտրելիս մարդիկ երկար **չափափորձ** են անում, իսկ ամուսնանալիս ընդհակառակը, հասուն մարդիկ են, բայց ամուսնանում են կարծես փակ աչքերով: Այս շաբաթ մեր գործարանում մեր նոր էլեկտրական թոնիրն են **փորձարկում**, իսկ **փորձարկումից** հետո կսկսեն էլեկտրական թոնիրների վաճառքը:

Գ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. Մեր անգլերենի ուսուցչուհին մի ..., երիտասարդ օրիորդ է, իսկ մաթեմատիկայի ուսուցիչը ... մասնագետ է:	փորձ փորձել
2. Մի քանի օր է, որ ամուսինս շատ ուշ է տուն գալիս, ասում է ինչ-որ մեքենա են ...:	փորձագետ
3. Տիգրանը ... անձայն անցնել ննջարանով իր սենյակը, որ ծնողներին չարթնացնի, բայց ծնողները քնած չէին, նրան էին սպասում:	փորձադաշտ չափափորձ
4. Հայրդ շատ ... մարդ է, լավ կլինի, որ դու նրա խորհուրդները լսես:	փորձված
5. Երբ մի քիչ ուշանում եմ, մայրս անհանգստանում է, չգիտեմ ինչու է կարծում, որ ինձ ... կպատահի:	անփորձ
6. Մի վերարկու եմ կարել տալիս, արդեն երեք ... եմ արել:	փորձառու
7. Առաջին տարին է, որ փոքր եղբայրս դպրոցում քիմիա է անցնում, ամեն օր լոգասենյակում մի նոր քիմիական ... է անում, ուզում է դատական ... դառնալ, այնպես որ մեր լոգասենյակը դարձել է իսկական ...:	փորձանք փորձարկել

12.Ա) 



ազնվական ազնվականություն – дворянство ազնիվ – честный, благородный (в том числе о металле) ազնիվ խոսք – честное слово անազնիվ – нечестный ազնվություն – честность անազնվություն – нечестность ազնվորեն – честно ազնվորեն ասած – честно говоря
փայլել փայլ – блеск փայլուն – блестящий, блистательный փայլեցնել – довести до блеска
հաղթել հաղթանակ – победа հաղթանակ տանել – одержать победу հաղթող – победитель հաղթված – побежденный անհաղթ – непобедимый
վկա վկայել – свидетельствовать
համաձայնել համաձայն – согласный, согласно համաձայնություն – согласие համաձայնեցնել – согласовать



Եւ անազնիվ երիտասարդ է, երբեք իր խոստումը չի կատարում: Ոսկին ազնիվ մեդալ է: Մարդիկ բարձր են գնահատում ոչ միայն համարձակությունը, այլև ազնվությունը: Ազնվորեն ասած՝ ես քեզ հետ համաձայն չեմ: Ժամանակակիցները (современники) վկայում են, որ Վահրամ Փափազյանը փայլուն էր կատարում Օթելլոյի դերը: Կինդ այնպես է փայլեցնում ձեր հատակը, որ մարդ վախենում է ձեր տուն գալ ու հատակին ոտք դնել: Տիգրան Պետրոսյանը փայլուն հաղթանակ տարավ: Այս խաղում հաղթողներ ու հաղթվածներ չկան, խաղն ավարտվեց ոչ ոքի: Դավիթ Անհաղթը հինգերորդ դարի հայ փիլիսոփա է: – Մայրիկ, քննություններից հետո գնանք Դրին, համաձայն ես: – Ես համաձայն եմ, բայց չեմ կարծում, թե հայրիկն էլ իր համաձայնությունը տա: Այս ամառ նա շատ զբաղված է, ինչ-որ փորձարկումներ են անում, իսկ նրա տնօրենի հետ որևէ բան համաձայնեցնել անհնար է:

Գ) Կետերի փոխարեն գրեք այլ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

- | | |
|--|------------------|
| 1. 1918թ. հայ ժողովուրդը Սարդարապատում ... տարավ: | ազնվականությունը |
| 2. Երրորդ տաքսու վարորդը վերջապես ... Արմենին ու Անահիտին Գարնամային փողոց տանել: | անազնվություն |
| 3. Ջոն մտածում էր, որ իր կողմից ... կլինի գալ ու գրավել միսիս Չիլփիլի տեղը: | ազնվորեն |
| 4. Ուսանողուհու սև մազերը ... էին արևի տակ և նրանց ... զարմացնում էր տղաներին: | փայլ |
| 5. Մեր դասարանում մի տղա կար, ինքն իրեն ... էր կարծում ու միշտ բոլորի հետ կռվում էր: | փայլել |
| 6. – Տղաներ, ֆուտբոլը վերջացավ, ո՞վ ...: | փայլուն հաղթանակ |
| 7. – Ոչ ոք, այսօրվա խաղում ... ու ... չկա: | փայլեցնել |
| 8. Տղաներին կալանքից ազատելու համար հարկավոր էր Ռևազի ցուցմունքը քննիչի հետ ...: | հաղթել |
| 9. ... ասած՝ դժվար բան է թուրքիայում հայ լինել: | հաղթող |
| 10. Դարաբաղի ... նույնպես սիրում էր մելիք Շահնազարի զվարճախոսին: | հաղթված |
| 11. Աղջիկը ... կաթսաներն ու թավաները, բայց խորթ մայրը (мачеха) դարձյալ դժգոհ էր մնում: | անհաղթ |
| | համաձայնել |
| | համաձայնեցնել |



13. Հետևյալ հարցերը դասավորեք պատմվածքի տրամաբանությանը և ընթացքին համապատասխան կարգով և պատասխանեք նրանց.



Расположите следующие вопросы в том порядке, который соответствует логике и ходу рассказа, и ответьте на них:

1. Ի՞նչ է պատասխանում մելիք Շահնագարը:
2. Աղբյուրի մոտ ի՞նչ է ասում Պըլը Պուղին մելիքին:
3. Որտե՞ղ և ու՞մ ներկայությամբ է մելիք Շահնագարը փորձում Պըլը Պուղուն խոսքի տակ թողնել:
4. Ու՞ր են գնում մելիք Շահնագարն ու Պըլը Պուղին միասին:
5. Ի՞նչ կարող է անել Պըլը Պուղին ցույց տալու համար, որ մելիքն իրեն չի կարող հաղթել:
6. Ինչու՞ է մելիք Շահնագարը ուզում Պըլը Պուղուն խոսքի տակ թողնել:
7. Ինչու՞ են մելիքներն ու ազնվականները ծիծաղում մելիք Շահնագարի վրա:
8. Ի՞նչ են հարցնում մարդիկ, երբ մելիքն ու Պըլը Պուղին աղբյուրի մոտից վերադառնում են:



Հիմարների և գժերի ցուցակը

Երբ մելիք Շահնագարը տեսնում է, որ չի կարողանում Պըլը Պուղուն հաղթել, մտածում է.

– Հիմարների և գժերի ցուցակը գրել կտամ Պըլը Պուղուն, հո՛ իր անունը թողած՝ ուրիշի անունը չի՞ գրի: Պուղին ի՞նչ է իմանում, թե ինչի համար են ցուցակը գրել տալիս:

– Հը՛, խանում, – դիմում է մելիք Շահնագարը իր տիկնոջը, – ի՞նչ ես ասում, լավ չե՞մ մտածել, կանչեմ Պուղուն, թող իր ձեռքով իր անունը գրի հիմարների ցուցակում: Այն ժամանակ նրա սանձը իմ ձեռքում կլինի, էլ մեծ-մեծ չի կարող խոսել: Ծոցիցս ցուցակի ծայրը ցույց կտամ և կասեմ "Պուղի, ցուցակը": Իսկույն ձայնը կկտրի:

Հենց այդ ժամանակ ներս է մտնում Պուղին:

– Մելիքն ապրած կենա՞, ինձ կանչե՞լ ես:

– Այո, կանչել եմ, ինձ հարկավոր է մեր երկրի բոլոր հիմարների ու գժերի ցուցակը: Կարո՞ղ ես կազմել:

– Ինչու՞ չէ, մելիքն ապրած կենա, առավոտյան ցուցակը պատրաստ կներկայացնեմ:

Հետևյալ օրը Պըլը Պուղին ներկայացնում է հիմարների ցուցակը: Մելիք Շահնագարը նայում է, տեսնում, որ Պըլը Պուղին հիմար մարդկանց ցուցակի մեջ առաջին անունը գրել է մելիք Շահնագար:

– Պուղի՛, դու ես ի՞նչ ես արել:

– Ի՞նչ է, մելիքն ապրած կենա:

– Իմ անունը ինչու՞ ես գրել, քո անունը գրելու փոխարեն: Ի՞նչ է, ես հիմա՞ր եմ, ես գի՞ժ եմ: Եթե չկարողացար հաստատել, գլուխդ կտրել կտամ:

– Մելիքն ապրած կենա, թե բարկանաս, չեմ կարող բացատրել, իսկ եթե հանգիստ մնաս, այն ժամանակ կբացատրեմ:

– Ասա՛, շուտ արա, դու քանի՞ գլխանի ես³, որ իմ անունը գրել ես հիմարների ու գծերի ցուցակում:

– Մեկիքն ապրած կենա, ես ասեմ, դու լսիր: Լավ է, որ խանումն էլ այստեղ է: Հիշու՞մ ես, որ սրանից երկու տարի առաջ Պարսկաստանից մի առևտրական էր եկել: Դու նրան տեսե՞լ էիր մի ուրիշ տեղ, դու նրան ճանաչու՞մ էիր:

– Հետո ի՞նչ, որ չէի ճանաչում, չէի տեսել:

– Հետո այն որ խելոք մարդը մի անծանոթ մարդու հազար բուման փող չի տա, թե դու ինձ համար Պարսկաստանից թանկարժեք քարեղեն կբերես: Ապա, ասա, խանում ջան, խելոք մարդը էդքան ոսկին կտա ճանապարհով գնացող⁴ օտարականի, թե ինձ համար ադամանդ կբերե՞ս: Սա խելքը գլխին մարդու գո՞րծ է:

– Իսկ եթե բերե՞ց, – ասում է մեկիք Շահնազարը բարկացած, – այն ժամանակ ի՞նչ կասես:

– Այն ժամանակ, մեկիքն ապրած կենա, ես քո անունը կջնջեմ, նրա անունը կգրեմ:

¹ Իր անունը թողած – оставив свое имя

² Մեկիքն ապրած կենա – да будет жив Мелик!

³ Դու քանի՞ գլխանի ես – как ты смеешь?

⁴ գնացող – идущий

Բառեր

հիմար – дурак

ցուցակ – список

ասանձ – вожжи

նրա ասանձը իմ ձեռքում

կլիսի – он будет в моих руках

ծոցից – из-за пазухи

ծայր – кончик

իսկույն – сразу же

կազմել – составить

ներկայացնել – представить

փոխարեն – вместо
(послелог)

հաստատել – подтвердить

առևտրական – торговец


բացատրել – объяснить


թանկարժեք քարեղեն –
драгоценные камни

օտարական – чужестранец

ադամանդ – бриллиант

ջնջել – стереть




14.Ա) 

В армянском языке часто используется прием повтора для образования наречий от существительных или прилагательных:




տեղ-տեղ շնորհավոր լինի
կամաց-կամաց – потихоньку
մեծ-մեծ խոսել – бахвалиться
սուրճը տաք-տաք խմել – пить кофе горячим
հիվանդ-հիվանդ աշխատանքի գալ – прийти на работу совсем больным
ուշ-ուշ այցելել – редко посещать
շուտ-շուտ զանգել – часто звонить
չոր-չոր պատասխանել – сухо отвечать
արագ-արագ մի քան ուտել – быстро (спешно) перекусить

 Բ). Կետերի փոխարեն օգտագործեք կրկնությամբ կազմված համապատասխան մակրայ.

Вместо точек поставьте подходящее наречие, образованное при помощи повтора:

1. Թեյը տաք է, ես չեմ սիրում թեյը ... խմել: 2. Նա բոլորովին հիվանդ է, և այդպես ... ելել է հյուր: 3. Նա չոր մարդ է, հարցերին միշտ ... է պատասխանում: 4. Ես նրանից լուր չունեմ, ... է գալիս, զանգում: 5. Մենք մեր ուսուցչուհուն չենք մոռանում, ... այցելում ենք: 6. Ընկերդ ասում է, թե ինքը կարող է ծովը լողալով անցնել, բայց ես նրան չեմ հավատում, երևում է, որ սիրում է ... խոսել:
7. – Ո՞նց եք, ի՞նչ կա: – ..., նորություն չկա:


15.Ա) 

Суффикс **-անի** образует прилагательное со значением "имеющий, обладающий":

Դու քանի՞ գլխանի ես – (досл.) ты о скольких головах?




անվանի – именитый
լեզվանի – языкастый, с хорошо подвешенным языком
մեծքրանի
երկուդռնանի
երեքգլխանի
միաչքանի и т.д.


 Բ) Կետերի փոխարեն գրեք համապատասխան ածական.


Вместо точек поставьте соответствующее прилагательное:

1. – Նրա ամուսինը քեզ դուր եկա՞վ: – Այո, բարեսիրտ մարդ է, բայց ի՞նչ մեծ քիթ ունի: – Ճիշտ է, ... է: 2. – Տատիկ, իսկ դները քանի՞ գլուխ են ունենում: – Մեկ, երեք, յոթ: Տարբեր հեքիաթներում տարբեր դեր են լինում: – Ուրեմն, լինում են ..., ..., ... դեր: 3. – Փոքր քույրդ ի՞նչ սուր լեզու ունի: – Հա, մի քիչ ... է: 4. – Լավ չեմ հիշում, ձեր զգեստապահարանը երկու՞ դուռ ունի, թե՞ երեք: – Երեք, մեր պահարանը ... է: 5. Կիկլոպը ... կենդանի է: 6. Նրա ամուսինը շատ հայտնի ու ... գիտնական է:


16.Ա) 

род. п.+փոխարեն=вместо кого, чего; вместо того, чтобы

Բ. 




Սենյակը հավաքելու փոխարեն հեռախոսով ես խոսում:	սենյակը հավաքել → գիրք կարդալ, դասդ սովորել, քնել
--	---

Գ) 



(մի սովորական զգեստ հագնել) Ինչու՞ ես փայլուն զգեստդ հագել ...:	→ Ինչու՞ ես փայլուն զգեստդ հագել մի սովորական զգեստ հագնելու փոխարեն:
---	---

(մի սովորական զգեստ հագնել) Ինչու՞ ես փայլուն զգեստդ հագել ...: (աղբյուրից ջուր բերել) Սենք ջուր չունենք, իսկ նա նստած հեռուստացույց է նայում ...: (փոքր կաթսան վերադարձնել) Հարևանը կաթսան վերցրեց ու մտքում ծիծաղեց Նասրեդինի վրա ...: (քարը վերցնել) Մարդիկ բաղնիսի դռանը ընկնում էին ու շարունակում իրենց ճանապարհը ...:

17.Ա) 



թանկարժեք = թանկ + արժեք
 թանկ – дорогой, недешевый (≠ էժան, էժանագին)
 թանկագին – дорогой (прям. и перен.)
 թանկանալ – подорожать (≠ էժանանալ)
 թանկություն – дороговизна (≠ էժանություն)
 թանկացում – подорожание (≠ էժանացում)
 արժեք – стоимость (զին – цена)
 արժեքավոր – ценный
 անարժեք – ничего не стоящий
 անզին – бесценный



Ի՞նչ **արժեք**¹ խաղողը: Նրա խոստումները ոչինչ **չարժեն**:
 – Այս **ինչ թանկություն** է, հիշու՞մ եք՝ **թանկացումից առաջ** ձուն արժեք մի քանի կոպեկ:
 – Հիմա ամեն ինչ **թանկացել է, էժան բան** չի մնացել:
 – Քո մատանու քարը **թանկարժեք** է, մասնագետը ինչպե՞ս **գնահատեց** այն:
 – Ես կարծում էի, թե ադամանդ է և շատ **արժեքավոր** մատանի է, իսկ նա ասաց, որ **անարժեք** քար է: Բայց այս մատանին ինձ համար **անզին է, զին չունի**, որովհետև մորս մատանին է:

¹Глагол арժենալ спрягается, как գիտենալ՝ արժե/արժի, արժեն, արժեր, արժեին.




Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. Ի՞նչ ... այս գղալներն ու պատառաքաղները:
2. Ի՞նչ ... այս ձմերուկը:
3. Եթե դուք ճիշտ եք ասում և այս մատանու քարը ադամանդ է, ապա մատանին շատ ... է, իսկ եթե անարժեք քար է, ապա շատ ... է:
3. Մինաս Ավետիսյանի շատ ... նկարներ չեն պահպանվել (не сохранились):
4. Ես սովորաբար իմ նամակներն այսպես եմ սկսում ... բարեկամ:

արժեքավոր
 արժե
 արժեն
 թանկ
 էժան
 թանկագին

18.Ա) 



կազմել կազմ – состав, переплет կազմություն – сложение, образование կազմվածք – сложение, комплектация կազմվել – слагаться, образовываться կազմակերպել – организовать կազմակերպվել – организоваться կազմակերպված – организованный կազմակերպություն – организация
ներկայացնել ներկայացում – представление (театральное) ներկա ≠ բացակա (присутствующий ≠ отсутствующий) ներկայություն ≠ բացակայություն (присутствие ≠ отсутствие)
բացատրել բացատրություն – объяснение բացատրելի ≠ անբացատրելի (объяснимый ≠ необъяснимый)
առևտրական առևտուր – торговля, առևտուր անել – торговать
օտարական օտար – чужой, иностранный (язык) օտարություն – чужбина
Ի՞նչ գեղեցիկ է այս գրքի կազմը: Երևում է, որ այս կինը երիտասարդ ժամանակ լավ կազմվածք է ունեցել: Մեր դասարանը շատ կազմակերպված էր: "Առևտուր" բառը կազմված է առև և տուր բառերից: Մեր դպրոցի օտար լեզվի ուսուցիչը հաճախ օտար լեզվով ներկայացումներ էր կազմակերպում: Հայերենի վերջին դասին բոլորն եկել էին, բոլորը ներկա էին, ոչ ոք բացակա չէր: Մարդիկ օտարության մեջ հայրենիքն ավելի են սիրում: Այսօր դպրոցում բայի կազմությունն անցանք, դասարանի կեսը ուսուցչի բացատրությունից բան չհասկացավ:



Գ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. Գրականության ուսուցիչը դպրոցում թատերական խմբակ ...:
2. Ընկերուհիս ու ես նույնպես խաղում էինք մեր թատերական խմբակի ...:
3. Վերջին ներկայացումից հետո մի ... տխրություն զգացի և մեր խմբակի ամբողջ ... գնացինք զբոսանքի:
4. Դպրոցում ի՞նչ ... լեզու եք անցել, անգլերե՞ն, թե՞ գերմաներեն:
5. Մաթեմատիկայի իմ ուսուցիչը՝ Հուսիկ Մելիք-Սդանյանը, դժվար ... բաները այնպես էր բացատրում, որ իր աշակերտները մեկ անգամից էին հասկանում:
6. Թե խելք ունես, բարեկամիդ հետ ... չես անի:

- առևտուր
- բացատրելի
- անբացատրելի
- օտար
- կազմով
- կազմակերպեց
- ներկայացմանը

Употребляются с определенным артиклем	Употребляются без артикля
<ul style="list-style-type: none"> • с слово, дополненное сущ-ным в род. п. • իմ, քո, նրա, իր, մեր, ձեր, նրանց, իրենց • այս, այդ, այն, նույն • ո՞ր • մյուս, հաջորդ, նախորդ 	<ul style="list-style-type: none"> • ի՞նչ • ուրիշ • ինչ-որ • ինչպիսի՞, այսպիսի, այդպիսի, այնպիսի
<p>բոլոր + сущ. во мн. ч. ամբողջ + сущ. в ед. ч.</p>	<p>մի + сущ. в ед. ч. յուրաքանչյուր + сущ. в ед. ч. ամեն (մի) + сущ. в ед. ч. որևէ + сущ. в ед. ч.</p>

Գ) Կետերի փոխարեն օգտագործեք "ցուցակ" բառը.

Մելիք Շահնազարը հրամայեց պատրաստել գծերի ու հիմարների ...: "Ես նրան մի ... գրել կտամ, որ էլ չհամարձակվի ինձ ձեռ առնել", մտածեց մելիքը: ... արդեն պատրաստ է: "Սա ի՞նչ է, սա քոթի կտոր է, սա ... չի", բարկացավ մելիքը: "Դու քանի՞ զլխանի ես, որ ասում ես, թե սա գծերի ու հիմարների ... է": "Մելիքն ապրած կենա, սա իմ ... է, իմ ... այս հիմարներից է կազմված, եթե ուզում ես, դու էլ քո ... կազմիր", իր մտքում ասաց Պուլիկն: "Այսպիսի ... ես դեռ չէի տեսել, այս ... վերցրու և մի ուրիշ ... ներկայացրու: Ես քո կազմած բոլոր ... կստուգեմ, եթե որևէ ... ինձ դուր չգա, զուխդ կտրել կտամ: Եվ տեն, ամեն ... ինձ մի՛ ցույց տուր, նախ ինքդ ամբողջ ... կարդա՛, ստուգի՛ր:" "Ո՞ր ... նրան ցույց տամ, որը ցույց չտամ": "Բերեցի՞ր ... , տուր տեսնեմ, այդ ի՞նչ ... է, սա խելոքների՞ ... է, թե՞ նույն ... է, որ ես արդեն տեսել եմ":



20. Հետևյալ նախադասություններում երրորդ դեմքի եզակի թվի դերանվան փոխարեն օգտագործեք համապատասխան գոյական "Հիմարների և գծերի ցուցակը" տեքստի հերոսներից.



В следующих предложениях замените везде местоимение третьего лица единственного числа соответствующим существительным – одним из персонажей текста "Հիմարների և գծերի ցուցակը":

1. Նա տեսնում է, որ չի կարողանում նրան հաղթել:
2. Նա մտածում է, որ նրան գծերի ու հիմարների ցուցակը գրել տա:
3. Նա ի՞նչ է իմանում, թե ինչի համար է այդ ցուցակը:
4. Նա անպայման իր անունը կգրի այդ ցուցակում:
5. Այն ժամանակ նա այլևս չի կարող մեծ-մեծ խոսել, և նրա սանձը նրա ձեռքում կլինի:
6. Այդ ժամանակ նա ներս է մտնում:
7. Նա խոստանում է առավոտյան ցուցակը պատրաստ ներկայացնել:
8. Առավոտյան նա ցուցակը բերում է:

9. Նա նայում է ու տեսնում, որ նա ցուցակում առաջինը իր անունն է գրել:

10. Նա բարկանում է, բայց նա բացատրում է, թե ինչու է այդպես արել:

11. Սրանից երկու տարի առաջ նա եկել էր այստեղ:

12. Նա նրան առաջ չէր ճանաչում, ոչ մի տեղ չէր տեսել, բայց նրան փող տվեց ու խնդրեց իր համար թանկարժեք քարեղեն բերել:

13. Եթե նա իսկապես քարեղենը բերի, նա նրա անունը ցուցակից կջնջի ու նրա անունը կգրի նրա անվան փոխարեն:



21. Պատմե՛ք տեքստը հիմնվելով բանալի բայերի վրա.



Перескажите рассказ, опираясь на ключевые глаголы:

Տեսնել, չկարողանալ հաղթել, գրել տալ, չիմանալ, մտածել, սանձը ձեռքում լինել, մեծ-մեծ չխոսել, ծայրը ցույց տալ, ծայրը կտրել:

Ներս մտնել, կանչել, կազմել, ներկայացնել, գրել, հիմար լինել, հաստատել, կտրել տալ, բարկանալ, չկարողանալ բացատրել, հանգիստ մնալ, բացատրել:

Հիշել, գալ, տեսնել, ճանաչել, փող տալ, բերել, ջնջել, գրել:



և **Չարենցի¹ կապակներից**

Շիրվանզադեն¹ ու Աբեյանը² տարիներով խռով էին և իրար հետ չէին խոսում: Շիրվանզադեն ասում էր.

– Իմ պիեսներով դերասան դարձավ Աբեյանը:
Իսկ Աբեյանը.

– Իմ խաղի շնորհիվ դրամատուրգ հռչակվեց Շիրվանզադեն:

Չարենցը երկուսին էլ սիրում էր և որոշում է հաշտեցնել: Նրանց հրավիրում է ընթրիքի, բայց մեկը մյուսից անտեղյակ: Ներկա էին նաև Ակսել Բակունցը³ և Գուրգեն Մահարին:

Երկու հրավիրյալները գալիս նստում են: Նախ երկուսն էլ իրար հանդեպ դիրք են բռնում, ըստ Մահարու "փքվեցին, չեն խոսում":

Բայց Չարենցի անկեղծ բաժակաճառից հետո երկու պատկառելի հայերը ոտքի են կանգնում և հուզված ողջագուրվում են: Շիրվանզադեն լցնում է Աբեյանի բաժակը, իսկ Աբեյանը խորովածի կտոր է դնում Շիրվանզադեի ափսեի մեջ:

Այս տեսնելով՝ Չարենցը դառնում է Բակունցին և Մահարուն ու ասում է.

– Նորից կռվեցնե՞մ նրանց:

– Պետք չէ, – ժպտալով ասում է Բակունցը: Բայց չարածնի Չարենցը դառնալով Շիրվանզադեին, կատակով ասում է.

– Իսկապես ասած, Շիրվան, Հովհաննեսը որ չլիներ, քո պիեսները ո՞վ պիտի խաղար³:

"Նավասարդ" ամսագրից

¹ Եղիշե Չարենց, Շիրվանզադե, Ակսել Բակունց, Գուրգեն Մահարի – известные армянские писатели и поэты XX в.

² Հովհաննես Աբեյան – известный армянский актер XX в.

³ Հովհաննեսը որ չլիներ, քո պիեսները ո՞վ պիտի խաղար – если бы не Оганес, кто бы играл твои пьесы?

Բառեր

խռով լինել – быть в ссоре

շնորհիվ – благодаря
(послелог)

հռչակվել – прославиться

հաշտեցնել – мирить

անտեղյակ – без ведома

հրավիրյալ – приглашенный

հանդեպ – по отношению к

դիրք բռնել – принять позу

փքվել – дуться

անկեղծ – искренний

պարկառելի – уважаемый

ողջագուրվել – обниматься,

приветствовать друг друга

(ղջ=խչ)

չարածճի – проказник

22. Ա) տարիներով խռով էին – годами были в ссоре

Դ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. Եւ ... խոսում է, հոգնեցնում:	ամիսներով
2. Վազգենն ու ես ... իրար չենք տեսնում, բայց իրար չենք մոռանում, երբ հանդիպում ենք, հին ծանոթների նման ենք:	ժամերով
3. Կարինեն ... դասի չի գալիս, ասում են, թե աշխատում է ինչ-որ տեղ:	շաբաթներով
4. Եղբայրս ... նամակ չի գրում, տեղեկություն չի տալիս իր մասին, մայրս անհանգիստ է:	օրերով

23. Ա) խռով (լինել) ≠ հաշտ (ապրել)
խռովել, կռվել ≠ հաշտվել
կռվեցնել ≠ հաշտեցնել
խռովկան – обидчивый
հաշտություն (կնքել) – (заключить) мир

Դ) Լրացրե՛ք բացերը (վերցրե՛ք "խռովել, կռվել" դաշտի բառերից).

Заполните пропуски (возьмите слова из лексического поля խռովել, կռվել):

Քույրս չարածճի էր, բայց ... չէր: Իսկ եթե ... էր, շուտ հաշտվում էր, երկար չէր կարող ... լինել: Հիմա մեծացել է ու երբ իր ընկեր-ընկերուհիները ... են, նա կարողանում է նրանց հաշտեցնել:

Գ) Լրացրե՛ք բացերը (վերցրե՛ք "հաշտ, հաշտվել" դաշտի բառերից).

Заполните пропуски (возьмите слова из лексического поля հաշտ, հաշտվել):

Սևրի ... կնքվեց 1918թ: Մեր հարկի հարևանները ... են ապրում, երբեք չեն կռվում և կարիք չի լինում նրանց ...:



24. Պատմեք, թե ինչ են ասում և անում տեքստի հերոսները.



Скажите, что говорят и делают персонажи текста:

Շիրվանզադեն ասում է.
 Հովհաննես Արեւյանը ասում է.
 Չարենցն ասում է.
 Ակսել Բակունցն ասում է.
 Գուրգեն Մահարին ասում է.
 Շիրվանզադեն ...
 Արեւյանը ...
 Չարենցը ...
 Բակունցը ...
 Մահարին ...



Zeynep Zeynep



25. Պատմեք նույն տեքստը՝ հիմնվելով բանալի բայերի վրա.



Расскажите тот же текст по ключевым глаголам:

Խոռով լինել, չխոսել, ասել, դառնալ, պատասխանել, հռչակվել:
 Սիրել, որոշել հաշտեցնել, հրավիրել, ներկա լինել:
 Գալ նստել, դիրք բռնել, "փքվել, չխոսել":
 Ոտքի կանգնել, ողջագուրվել, լցնել, դնել, տեսնել, ասել,
 կռվեցնել:
 Ժպտալ, ասել, չլինել, խաղալ:

Урок 18. Տասնութերորդ դաս

Грамматика

Степени сравнения прилагательных и наречий.

Мн. ч. существительных на -ք и словообразовательный суффикс -ք.

Послелого շնորհիվ, չափ.

Союзы իբրև, թեև (թեպետ) ... սակայն (բայց), մինչ (մինչդեռ).

Притяжательный артикль как показатель лица.

Суффиксы -արան, -ելի (-ալի), -ավոր, -յան.

Тексты

Ուսուցիչ, թե՞ սան՝ "Մուսա լեռան քառասուն օրը" վեպից (Ֆրանց Վերֆել)

Հայը, հայերը (Վարդգես Պետրոսյան)

Աշխարհի ամենաօրինակելի տղան (Ազատ Շահինյան)

Стихи

Հեյ, ազաի մարդ, հեյ, անգոի մարդ (Հովհ. Թումանյան)

Այսքան փոքրիկ մի մորից (Հովհ. Շիրազ)

Степени сравнения прилагательных и наречий

Ածականների և մակբայների համեմատության աստիճանները



Сравнительная степень прилагательных и наречий в армянском языке образуется при помощи наречия **ավելի** (более), которое ставится перед качественными прилагательными и некоторыми наречиями образа действия, меры и степени. Эти наречия, подобно прилагательным, могут иметь степени сравнения.

բարի "добрый" – ավելի բարի "добрее (более добрый)"

ուժեղ "сильный" – ավելի ուժեղ "сильнее (более сильный)"

գեղեցիկ "красивый" – ավելի գեղեցիկ "красивее (более красивый)"

շատ "много" – ավելի շատ "больше"

քիչ "мало" – ավելի քիչ "меньше"

արագ "быстро" – ավելի արագ "быстрее"

Превосходная степень образуется при помощи приставки **ամենա-** "самый".

բարի – ամենաբարի


ուժեղ – ամենաուժեղ

գեղեցիկ – ամենագեղեցիկ


քիչ – ամենաքիչը

արագ – ամենաարագը

Сравнительная степень служит для сравнения двух предметов или качеств по данному признаку. Возможны два случая:



сравнительная степень прилагательных и наречий	
Существительное, с которым сравнивается другое существительное, ставится в отложительном падеже. При этом наречие ավելի можно и опустить.	Перед существительным, с которым сравнивается другое существительное, ставится союз քան "чем".
Կարինեն Մարինեից (ավելի) բարի է: Սուրենը Ռուբենից (ավելի) ուժեղ է: Անին Աստղիկից (ավելի) գեղեցիկ է:	Կարինեն ավելի բարի է, քան Մարինեն: Սուրենը ավելի ուժեղ է, քան Ռուբենը: Անին ավելի գեղեցիկ է, քան Աստղիկը:
Արսենը Արմենից (ավելի) քիչ է կարողում: Այս աղջիկը այն տղաներից (ավելի) արագ է վազում:	Արսենը ավելի քիչ է կարողում, քան Արմենը: Այս աղջիկը ավելի արագ է վազում, քան այն տղաները:
превосходная степень прилагательных и наречий	
Կարինեն ամենաբարի աղջիկն է: = Կարինեն ամենաբարին է: Սուրենը ամենաուժեղ տղան է: = Սուրենը ամենաուժեղն է: Անին ամենագեղեցիկ աղջիկն է: = Անին ամենագեղեցիկն է: Արսենը ամենաքիչն է կարողում: Այս աղջիկը ամենարագն է վազում:	

 В формах превосходной степени обратите внимание на определенный артикль обобщающего (родового) слова – տղան, աղջիկը. Родовое слово можно опустить, тогда артикль переходит на прилагательное в превосходной степени.

Превосходная степень наречий также употребляется с **определённым артиклем** (т.к. нет другого компонента, которому можно было бы передать артикль).

Превосходная степень некоторых прилагательных образуется также при помощи суффикса -ազույն. Ср.

ամենալավ "самый хороший" – լավազույն "(наи)лучший"

ամենավատ "самый плохой" – վատազույն "(наи)худший"

ամենամեծ "самый большой" – մեծազույն "величайший"

ամենախոշոր "самый крупный" – խոշորազույն "крупнейший"

ամենաուժեղ "самый сильный" – ուժեղազույն "сильнейший"

ամենաբարձր "самый высокий" – բարձրազույն "высший"

նվազազույն "малейший"

գերազույն "верховный"

Как и в русском языке, регулярная форма образования превосходной степени ամենա- (самый) употребляется скорее в прямом значении, а форма -ազույն (наи...ший) в переносном значении. Ср.

ամենամեծ դասատենյակը, но: մեծազույն նկարիչը

ամենախոշոր ուլունքը, но: խոշորազույն գիտնականը

ամենաուժեղ ծին, но: ուժեղազույն շախմատիստը


ամենաբարձր ծառը, но: բարձրազույն կրթութունը

նվազազույն սխալը, Գերազույն Խորհուրդը

Վարժություններ

1. 

– Ձեր փոքր եղբայրը ուշադի՞ր է: (մեծ եղբայր)




– Այո, նա *իմ մեծ եղբորից* (ավելի) ուշադիր է:
– Այո, նա ավելի ուշադիր է, *քան իմ մեծ եղբայրը*:

- Ձեր փոքր եղբայրը ուշադի՞ր է: (մեծ եղբայր)
- Ձեր ճաշասենյակը մե՞ծ է: (ննջարան)
- Երկրորդ հարցը հե՞շտ էր: (առաջին)
- Սրբուհին բարեկի՞րթ է: (քույրը)
- Նրա վերջին վեպը հետաքրքի՞ր է: (մյուս բոլոր վեպերը)
- Այս զգեստը գեղեցի՞կ է: (քո վարդագույն զգեստը)
- Ձեր հաշվապահը ժլա՞տ է: (տնօրեն)
- Նա այսօր ու՞շ վերադարձավ: (երեկ)
- Նրանք հաճա՞խ են գնում թատրոն: (ես)
- Հարևանուհուդ մուշտակը լա՞վն է: (իմը)
- Նասրեդինը խորամա՞նկ է: (հարևան)
- Մելիք Շահնազարը հիմա՞ր է: (առևտրական)
- Պըլը Պուղին խելոք է ու փորձվա՞ծ: (մելիք Շահնազար)

2. 

Մետրոն հարմար է:
Մեքենան ...:




Մեքենան *ավելի հարմար է, քան* մետրոն:
Մեքենան *մետրոնից* (ավելի) *հարմար է*:

1. Մետրոն հարմար է: Մեքենան ...: 2. Գնացքը արագ է գնում: Օդանավը ... (թռչել) 3. Հայերենը դժվար լեզու է: Չինարենը ...: 4. Այսօրվա թերթը հետաքրքիր է: Երեկվա թերթը ...: 5. Աշնանը Մոսկվայում ցուրտ է: Չմռանը ...:

3. 

Սա փոքր սենյակ է:




Սա մեր բնակարանի *ամենափոքր* սենյակն է:

Սա փոքր սենյակ է: Սա լայն փողոց է: Սա գեղեցիկ նկար է: Դա լավ վկայական է: Սրանք հին դրամներ են: Սա կարճ դաս է:

4. 

Ես շուտ եմ զարթնում:
Եղբայրս ինձնից շուտ է զարթնում:
Բայց ծնողներս ...:




Բայց ծնողներս *ամենաշուտն* եմ զարթնում:

Ես շուտ եմ զարթնում: Եղբայրս ինձնից շուտ է զարթնում: Բայց ծնողներս ...: Բաբկենը արագ է վազում: Եղբայրս Բաբկենից արագ է վազում: Բայց ես ...: Ես ուշ եմ պառկում քնելու: Քույրս ինձնից ուշ է պառկում: Բայց ծնողներս ...: Կարինեն վատ է նկարում: Նարինեն Կարինեից վատ է նկարում: Բայց Մարինեն ...: Հովիկը լավ է պարում: Հարութը Հովիկից լավ է պարում: Բայց սասունցիները ...:

մտերմություն –
 привязанность, приязнь
 դեղագործ – аптекарь
 սան – воспитанник
 ճակատագրական – роковой
 թերություն – недостаток
 աշխարհ – мир (հ не произн.)
 քաղաքակիրթ –
 цивилизованный
 ամուսին – супруг, -а
 անշուշտ – несомненно
 ազգ – нация
 քրիստոնեություն –
 христианство
 իբրև – как, в качестве
 (предлог) (ք=փ)
 պետական –
 государственный
 կրոն – религия
 փառահեղ – славный
 պետություն – государство
 եկեղեցի – церковь
 համարվել – считаться

հրաշալիք – чудо, диво
 կառավարել – править,
 царствовать
 Բյուզանդիա – Византия
 դեռևս – лит. դեռ
 ծայրահեղ – крайний, в
 высшей степени
 բարբարոսություն –
 варварство
 գրկում – в лоне
 դասական – классический
 նմուշ – образец
 զորավոր – мощный, зд.
 великий
 հեղինակ – автор
 գործ – зд. произведение
 խուլ – глухой
 անգամ – даже (զ=ք)
 կարգին – нормальный,
 приличный (զ=ք)
 ժամանակի ընթացքում – со
 временем
 ստեղծվել – создаться

Սեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ
 Комментарии, задания и упражнения.

5.Ա) 


Показатель множественного числа в древнеармянском языке **-ք** (հնչափսիք) сохранился как вариант образования множественного числа для многосложных слов, оканчивающихся на -ի, напр., существительные с суффиксом -ցի (-ացի, -եցի).

գյուղացիք (род. п. գյուղացոց)
 քաղաքացիք (род. п. քաղաքացոց)
 վրացիք (род. п. վրացոց)



Суффикс **-ք** очень распространен в современном армянском языке (значение показателя множественного числа уже не ощущается).



աչք	միտք "мысль"	կարծիք "мнение"
ծեռք	մեղք "вина"	արժանիք "достоинство"
ուտք	մուտք "вход"	հաճույք "удовольствие"
գիրք	ելք "выход"	գործիք "инструмент"
գնացք	վերք "рана"	աղոթք "молитва"
ընտանիք	դեմք "лицо"	շնորհք "дар, дарование"
խելք	շարք "ряд"	տարիք "возраст"
խոսք	տեսք "вид"	հրաշք "чудо" (оцен.)
դեպք	բարիք "добро"	հրաշալիք "чудо, редкостное явление"
կյանք	չարիք "зло"	
օրենք	փառք "слава"	

Գ) Կետերի փոխարեն գրեք աչ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:


1. Աստված ամեն մեկին մի ... է տվել, որ իր գլուխը պահի:	աղոթք
2. – Սուրճ կխմե՞ք: – ...:	արժանիք
3. Տղայի հայերեն ... հուզեց հորը:	գործիք
4. Կնոջ ... չեն հարցնի:	դեպք
5. Ոչխարների ... հետո Պավլեն հաշիվները փակեց գյուղի հետ, գնաց քաղաք:	խելք
6. Ես Արցախում մի խաչքար եմ տեսել, որ աշխարհի յոթ ... էլ գեղեցիկ է:	խոսք
7. Հայր միայն թերութիւն ունի, ... չունի՞, ինչ է:	հաճույքով
8. Տեր Սարգիսը մոտեցավ կաթողիկոսին, ձեռքը դրեց նրա գլխին ու ... մրմնջաց:	հրաշալիքներից
9. Լավ ... գործի կեսն է:	միտք (մտքում)
10. Մեր սարերի ... ոչխար մողթելը հանցանք չէ:	շնորհք
11. Հարևանը կաթսան վերցրեց ու ... ծիծաղեց Լասրեղինի վրա:	տարիք
12. Բա դու ... չունե՞ս, որ թույլ ես տալիս երեխային կրակի հետ խաղալ:	տեսք
13. Ավտոբուսի առջևի դռան վրա գրված է ..., ետևի դռան վրա՝ ...:	փառք
14. ... Աստծո, ամեն ինչ լավ վերջացավ:	օրենքով
15. Մեր հիվանդն արդեն առողջանում է, այսօր շատ լավ ... ունի:	ելք, մուտք



Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ, Բանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ. Ի՛նչ են տարել նրանք կյանքից, թե ի՛նչ տանես դու քեզ հետ, Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան ես ճամփեդ:

Հովհաննես Թումանյան

ազահ – жадный
խաղաղ – мирный, мирно



քաղաքակիրթ = քաղաք + ա + կիրթ



Գտե՛ք հայերեն բառի թարգմանությունը.
Найдите перевод армянских слов:



✓ քաղաքացի	политический	✓ կրթված	образование
մայրաքաղաք	вежливый	կրթություն	благовоспитанный
քաղաքային	мещанин	անկիրթ	неблаговоспитанный
քաղաքական	✓ гражданин	բարեկիրթ	необразованный
քաղթենի	столица	անբարեկիրթ	✓ образованный
քաղաքավարի	городской		

բ) 

ղեղագործ = ղեղ (лекарство) + ա+ գործ (дело)



Գտե՛ք հայերեն բառի թարգմանությունը.
Найдите перевод армянских слов:



✓ ղեղատուն	произведение, творение	✓ գործիչ	завод
ղեղատուն	творческий	գործիք	✓ деятель
ստեղծագործություն	рецепт	գործարան	деловой
ստեղծագործ	✓ аптека	գործնական	инструмент

գ) 

ճակատագիր = ճակատ + ա+ գիր



Գտե՛ք հայերեն բառի թարգմանությունը.
Найдите перевод армянских слов:



✓ ձեռագիր	телеграмма
հեռագիր	паспорт
սևագիր	ежемесячный журнал
անձնագիր	✓ рукопись
ծրագիր	черновик
ամսագիր	газета
ուղեգիր	программа
լրագիր	путевка



7. Ա) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"ճառագայթ, ֆրանսերեն, գյուղացի, բարություն, ժողովուրդ"** գոյականները: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել նույն գոյականները: Բերե՛ք օրինակներ:



В каких словосочетаниях употреблены существительные **ճառագայթ, ֆրանսերեն, գյուղացի, բարություն, ժողովուրդ**? Приведите также свои примеры.

բաղաբաղկրության ճառագայթ, արևի ճառագայթ

Բ) Տեքստի ո՞ր գոյականներին են վերաբերում հետևյալ ածականները. **ընտիր, ճակատագրական, խեղճ, հնագույն, պեղական, փառահեղ, զորավոր, ծայրահեղ, խուլ, կարգին, դասական, պարկառուի**: Այս ածականներով ուրիշ ի՞նչ գոյականներ կարելի է բնութագրել: Բերե՛ք օրինակներ:

Какие существительные характеризуют прилагательные **ընտիր, ճակատագրական, խեղճ, հնագույն, պեղական, փառահեղ, զորավոր, ծայրահեղ, խուլ, կարգին, դասական, պարկառուի**? Приведите также свои примеры.

ընտիր շրջապատ, ընտիր գրքեր

Գ) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"բերել, վայելել, կառավարել, սպեղծվել, ամաչել"** բայերը: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել այս բայերը: Բերե՛ք օրինակներ:

В каких сочетаниях употреблены глаголы **բերել, վայելել, կառավարել, սպեղծվել, ամաչել**? Приведите также свои примеры.

բաղաբաղկրության ճառագայթ բերել, խոհանոցից սուրճը բերել



8. Գտեք հնարավոր կապակցությունները.
Найдите возможные сочетания:



երախտապարտ	թերություն
զրնգուն	ժողովուրդ
տարօրինակ	ազգ
ընտիր	հեղինակ
խուլ	գործ
ճակատագրական	ծայն
պետական	դեպք
փառահեղ	սան
ծայրահեղ	շրջապատ
կարգին	կրոն
պատկառելի	աղջիկ
չարածճի	

9. Ա)



պետություն, պետական
պետ – начальник
պետականություն – государственность
հանրապետություն – республика
հանրապետական – республиканский
կառավարել
կառավարություն – правительство
կառավարական – правительственный

Բ) Կետերի փոխարեն գրեք այս սյունակի բառերից մեկը.
Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. Երկար դարեր, մինչև 1918թ. Հայաստանը ... չի ունեցել:	պետություն
2. Ուրարտուն ուժեղ ... է եղել:	պետական
3. 1991թ. Հայաստանը դարձավ ինքնուրույն ...:	պետականություն
4. Հայկական հանրապետության առաջին (1918թ.) ... դաշնակցական էր:	հանրապետություն
5. Հայաստանի ... դրոշը (փլագ) եռագույն է:	կառավարություն



10. Ա) Ի՞նչ կարելի է բնութագրել **ճակատագրական, քրիստոնեական, կրոնական, ժողովրդական, եկեղեցական, պեղական, կառավարական, ազգային** ածականներով: Բերե՛ք օրինակներ:
Что можно охарактеризовать приведенными прилагательными? Приведите примеры.



ճակատագրական սխալ, քրիստոնեական տոն, և այլն



Բ) Գտեք հնարավոր կապակցությունը.
Найдите возможное сочетание:

Եկեղեցակա՞ն, կրոնակա՞ն, թե՞ քրիստոնեական զգացմունք (чувство):

Պետակա՞ն, թե՞ կառավարական օրհներգ (гимн):
Ազգայի՞ն, թե՞ ժողովրդական հպարտություն:

11. Շեղագիր բառերի փոխարեն օգտագործեք նույն կամ մոտ իմաստով բառեր:

Замените выделенные курсивом слова синонимами или словами близкого значения:

Ես շատ *շնորհակալ* եմ Ձեզ Ձեր բարության համար: Այդ օրը *գարնանալի* մի բան պատահեց: Դեղագործ Գրիգորը մի կարևոր դաս տվեց իր *աշակերտին*: Դուք, *իհարկե*, գիտեք, որ Մատենադարանում պահվում են ոչ միայն հին հայկական, այլև հին հունական, արաբական ծեռագրեր: Ո՞վ է այս *վեպի* հեղինակը: Յողոնօլուքում *նույնիսկ* կարգին փողոց չկար:

12. Ա) տիկնոջ բարության շնորհիվ = благодаря доброте ...

Բ) Ձախ և աջ սյունակներում գտեք յուրաքանչյուր նախադասության երկու կեսը.

Найдите две половинки каждого предложения из левого и правого столбца.

Իր աշխատանքի շնորհիվ	Շիրվանզադեն դրամատուրգ հռչակվեց:
Ձեր շնորհիվ ...	Նա դարձավ ավելի բարեկիրք:
Գրքերի շնորհիվ ...	Նա մի կտոր հացի տեր դարձավ:
Իր տաղանդի շնորհիվ ...	Նա մի դժվար գործ գլուխ բերեց:
Արդյո՞ք միայն Աբելյանի խաղի շնորհիվ ...	Նա հասկացավ իր սխալը:

13. Ա) քրիստոնեությունը իբրև պետական կրոն – христианство как государственная религия

Բ) Ձախ և աջ սյունակներում գտեք յուրաքանչյուր նախադասության երկու կեսը.

Найдите две половинки каждого предложения из левого и правого столбца.

1918 թվից մինչև 1920 թիվը Հայաստանը հայտնի էր ...	իբրև Հայաստանի մայրաքաղաք
Պարույր Սևակը լուրջ գիտնական էր, թեև մեծ մասամբ նրան ճանաչում են ...	իբրև անկախ պետություն:
Դվինը, ..., ծաղկել է 4-ից 9-րդ դարերում:	իբրև հայ հարուստ վաճառականի:
Գիտե՞ք, թե ում է Հ. Պարոնյանը անվանում "մեծապատիվ մուրացկաններ". հեղինակներին, դերասաններին, լրագրողներին, որոնք դիմում են Աբխտղոմ աղային ...	իբրև բանաստեղծի (поэт):

14. Ստուգեք Ձեզ.

Проверьте себя:

	ճիշտ է	սխալ է
1. Ա. Ղազար Փարպեցին եղել է քսաներորդ դարի սկզբի պատմիչ, նկարագրել է (описал) հայ ժողովրդի և հայ կոմունիստների ազատագրական պայքարը (освободительная борьба).		
Բ. Ղազար Փարպեցին եղել է տասնիններորդ դարի պատմիչ, նկարագրել է հայ ժողովրդի և ղաշնականների ազատագրական պայքարը:		
Գ. Ղազար Փարպեցին եղել է հինգերորդ դարի պատմիչ, նկարագրել է հայ ժողովրդի ու Վարդան Մամիկոնյանի ազատագրական պայքարը:		
2. Ա. Մեր պատմահայր Մովսես Խորենացին պատմել է հայոց պատմությունը հին ժամանակներից մինչև 440 թվականը:		
Բ. Մեր պատմահայր Մովսես Խորենացին պատմել է հայոց պատմությունը հին ժամանակներից մինչև 1600 թվականը:		
Գ. Մեր պատմահայր Մովսես Խորենացին պատմել է հայոց պատմությունը հին ժամանակներից մինչև 1920 թվականը:		
3. Ա. Հայերը քրիստոնեությունն ընդունել են իբրև պետական կրոն 988 – 989 թթ. Ռուսաստանի հետ:		
Բ. Հայերը քրիստոնեությունն ընդունել են իբրև պետական կրոն 321թ. վրացիների հետ:		
Գ. Հայերը քրիստոնեությունն ընդունել են իբրև պետական կրոն 301թ.:		



Հայը – հայերը

"Տարօրինակ բան է, – դժգոհեց մի ֆրանսահայ, – երբ ֆրանսիացին է հանցանք թույլ տալիս, ասում են, ենթադրենք, Պոլ Լավալյեն այսինչ բանն արեց: Իսկ երբ ասենք, ես՝ Սիրակ Անթոսյանս եմ ինչ-որ բան անում, հայը հանցանք թույլ տվեց: Հայը: Կարծես թե ես անուն-ազգանուն չունեմ":

Հարցին հարցով եմ պատասխանում. "Իսկ երբ Սիրակ Անթոսյանը մի լավ բան է անում: Ի՞նչ են ասում, չե՞ն ասում, այ կեցցեն հայերը, տեսեք ինչ ժողովուրդ են աշխատասեր, տաղանդավոր... Եվ ընդամենը՝ Սիրակ Անթոսյանը մի լավ բան է արել":

Ես մտածում եմ՝ փոքր ազգերի զավակները, երևի, անուն-ազգանուն չունեն. նրանց անուն-ազգանունը իրենց ժողովուրդն է:

Դա և պատիվ է, և պատիժ:


Եթե վայելում ենք պատիվը, պատրաստ լինենք նաև պատիժը կրելուն:


Շար Կարդեա Պերրոսյանի "Հայկական էքզիզների"

Բառեր


- դժգոհել** – выразить недовольство
- Ֆրանսահայ** – французский армянин
- թույլ փալ** – зд. допустить
- ենթադրել** – предположить
- այսինչ** – такой-то
- ազգանուն** – фамилия

- փաղանդավոր** – талантливый
- ընդամենը** – всего (դ=թ)
- զավակ** – сын
- երևի** – наверное, по-видимому
- պատիվ** – честь
- պատիժ** – наказание
- կրել** – нести

15. Ա)  притяжательный артикль показывает не только принадлежность, но является вообще показателем лица. Ср. մենք հայ խեղճ գյուղացիներս. ես Սիրակ Անթոնյանս.

 Ես դեղագործ եմ, ես ասում եմ, որ ծխելուց օգուտ չկա: → Ես դեղագործս, ասում եմ, որ ծխելուց օգուտ չկա:

Ես դեղագործ եմ, ես ասում եմ, որ ծխելուց օգուտ չկա:
 Ես այս գործի հեղինակն եմ, ես գոհ չեմ:
 Ես Ռուսաստանի բաղաբացի եմ, ես պատրաստ եմ Ռուսաստանի համար կռվել:
 Մենք հայ ենք, մենք շատ թերություններ, բայց և շատ արժանիքներ ունենք:
 Ես հայ ժողովրդի զավակն եմ, ես ուզում եմ հայերեն իմանալ:

 16. Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. Աղքատ լինելը ... չէ, դժբախտություն է:	շրջապատ
2. Արևի ... ընկան աղջկա խարտյաշ մազերին, և տղան հիացավ նրա ոսկե մազերով:	թերություն
3. Ի՞նչ ... ստացավ այրի կինը, որը կաթին ջուր էր խառնում:	անապատ
4. Մենք-Եկզյուպերին փոքրիկ արքայազնին հանդիպեց Սահարա ...:	ճառագայթները
5. Նա ինձ հայկական կոնյակ հյուրասիրեց. անունը հինգ տառից էր, "Դվին" չէր, "Ախթամար" չէր, հինգ տառից էր, հիշեցի՝ ...:	պատիժ
6. Իմ շուրջը շատ ծանոթ նկարիչներ կան, բայց իմ ընկերական ... ոչ մի երգիչ չկա:	ընտիր
7. Գրիգոր Խանջյանի գործը (գորելենը) ցույց է տալիս հայ ժողովրդի ... անցյալը:	պատիվ
8. Ինձ համար մեծ ... է, որ Դուք ընդունեցիք իմ հրավերը:	փառահեղ



Նայում մորս, նայում ինձ՝
Միտք ես անում. բանաստեղծ,
Այսքան փոքրիկ մի մորից
Ո՞նց ես ծնվել այսքան մեծ: ...
... Մի՞թե դու էլ մայրս չես,
Դու էլ, իմ հայ ժողովուրդ.
Դու էլ թեև մի բուռ ես,
Բայց Նարեկի՝ մայրն ես սուրբ.
Ինքդ մի բուռ, բայց սիրտդ
Քո հինավուրց հողի չափ՝
Վանա ծովից՝ մինչ Սևան
Բաբախում է ափեափ:
Ինքդ հազիվ մի Սևան,
Բազուկդ՝ կարճ մի Ջանգուլ³,
Մինչ հանճարդ՝ մի օվկիան,
Ազգ իմ, հազար մեծ ես դու...
Քո Մաշտոցով եռամեծ՝
Երեք ազգի գրերով⁴,
Նարեկներով եղար մեծ,
Ավա՛ղ, ոչ թե թրերով...

Հովհաննես Շիրազ

"Հուշարձան մայրիկիս" ժողովածուից

¹ Նարեկ – имеется в виду великий средневековый поэт Григор Нарекаци.

² Վանա ծով или Վանա լիճ – озеро Ван в Турецкой Армении.

³ Ջանգուլ, иначе Հրազդան – река, вытекающая из озера Севан и впадающая в Аракс.


⁴ Երեք ազգի գրերով – имеются в виду созданные М. Маштоцем армянские, грузинские, агванские письмены.

Բառեր

- միտք անել** – разг. մտածել
- թեև** – хотя (союз)
- բուռ** – горсть, մի ~ – немногочисленный
- սուրբ** – святой (բ=ս)
- հինավուրց** – старинный
- ծով** – море
- բաբախել** – биться (о сердце)
- ափեափ** – от одного берега к другому
- հազիվ** – едва
- բազուկ** – часть руки от кисти до плеча
- մինչ** – 1. сокр. от մինչև – до (предлог); 2. сокр. от մինչդեռ – в то время как (союз)
- հանճար** – гений




օվկիան կամ օվկիանոս – океан
եռամեծ – трижды великий
թուր – меч


17. Ա)  Երևի "по-видимому" = գուցե "может быть"
անշուշտ "несомненно" = իհարկե "конечно"

Բ) Հետևյալ նախադասություններին ավելացրեք "երևի" և "անշուշտ" միջանկյալ բառերը և տեսե՞ք, թե ինչպես է փոխվում ասվածի իմաստը.


Прибавьте к следующим предложениям вводные слова ерևի и անշուշտ и посмотрите, как изменится смысл сказанного:

Գարրիելն ու Ժյուլյեթը ... սիրում են իրար: Նա ... հասկանում է հայերեն: Մենք երկար սպասեցինք Վարդուհուն, բայց նա չեկավ. Վարդուհին ... հիվանդ է: Գիտաշխատողները ... լուրջ մարդիկ են:

18. Ա)  քո հինավուրց հողի չափ – размером с твою древнюю землю

 Խոհանոցը մե՞ծ էր: –Չէ, **ձեր խոհանոցի չափ էր**: Մայրիկ **մի թաշկինակի չափ կտոր** տուր ինձ, տիկնիկիս համար շոր կարեմ: Տղաները ամաչում են նայել ուսանողուհու ոտքերին և սիրահարվում են **լաց լինելու չափ**: Եթե դու էլ **Կարենի չափ կարդաս**, դու էլ պատմությունից հինգ կստանաս:


Բ) 




– Ի՞նչ չափսի կտոր "отрез"
ես ուզում: (–Այս սեղանը) → Այս **սեղանի չափ** կտոր են ուզում:


- Ի՞նչ չափսի կտոր ես ուզում: (սրբիչ, բարձ)
- Ինչպիսի՞ն է նրա աշխատասենյակը: (մեր մանկական սենյակը, մեր ճաշասենյակը, մեր ննջարանը)
- Մի՞թե դու նրան սիրում ես: (արև, աշխարհ, երկինք)

Գ) 


– Ո՞ր **չափսի** կոշիկ եք հագնում:
– Ձգեստ են կարել տալիս. այսօր գնալու են **չափափորձի**:
 չափել – мерить
մեկին ոտքից գլուխ չափել – мерить с ног до головы
չափչփել – 1. перемерить, 2. обдумать
փողոցները չափչփել – бесцельно шататься по улицам
չափավոր ≠ անչափ (в меру ≠ без меры)

 Դ) Կետերի փոխարեն գրե՞ք աջ սյունակի բառերից մեկը.

1. – Ոչ, նա շատ չի խմում, կարելի է ասել՝ ... է խմում:	չափս
2. – Դու նրա խոսքին չես հավատում, բայց ես կարծում եմ, որ նա թե՛գ ... սիրում է:	փողոցները չափչփել
3. – Դու քննություններին պատրաստվելու փոխարեն ամբողջ օրը ...:	ոտքից գլուխ չափել
4. – Այս զգեստը թե՛ն քո ..., բայց կարծես թե՛գ չի սագում:	չափափորձ
5. – Ես դե՛ռ ... ժամանակ հասկացա, որ շատ սիրում փե՛շ է լինելու:	չափավոր
6. Մարդուն ... անբարտավանություն է:	անչափ


19.Ա) 

գետ, գետափ, Հրազդանի (Ջանգվի) ափ
լիճ, լճափ, Սևանի ափ
ծով, ծովափ, Սև ծովի ափ
օվկիանոս, օվկիանոսի ափ



 Բ) Կետերի փոխարեն օգտագործեք համապատասխան գոյական՝ ճիշտ հոլովածևով, ուշադրություն դարձրեք որոշիչ հոդին.




Вместо точек поставьте соответствующее существительное в нужной падежной форме, обратите внимание на артикль:

Հայաստանի անենամեծ ... Սևանն է: Կարմիր ... ջուրը բավականին աղի է: Կասպից ծովը, իսկապես ասած, ... է: ... մյուս ափին երևում են Անիի ավերակները: Երկրագնդի վրա (на земном шаре) կա չորս ... Մեծ կամ Խաղաղ, Ատլանտիկ, Հնդկական և Հյուսիսային:

20.Ա) 

թեև (թեպետ, թեպետև)..., բայց (սակայն)... – Хотя..., но...
..., (մինչ) մինչդեռ ... – ..., в то время, как ...

 Բ) 

  և 

Գիտնականն ընտրեց այս քաղաքավարի երիտասարդին: Մյուսները լավ վկայականներ ունեին:

→

Թեև (թեպետ, չնայած) մյուսները լավ վկայականներ ունեին, **բայց** գիտնականն ընտրեց այս քաղաքավարի երիտասարդին: Գիտնականն ընտրեց այս քաղաքավարի երիտասարդին, **մինչդեռ (թեև, թեպետ, չնայած)** մյուսները լավ վկայականներ ունեին:

1. Նա ուշացավ աշխատանքից: Նա շուտ դուրս եկավ տնից:
2. Ծառան ասաց, թե բաղնիսում մարդ չկա: Բաղնիսում տեղ չկար:
3. Տիգրանի ծնողները գնացին դասախոս Սոկացյանի մոտ: Տիգրանը չէր ուզում, որ Սոկացյանն իմանա, թե ինքը ու՛մ տղան է:
4. Ջոն ուրիշ աշխատանքի տեղ չուներ: Ջոն որոշեց միսիս Հիլփիլի տեղը չգրավել:
5. Միստր Ուայլին ասաց, որ Ջոն ամբարտավանի մեկն է: Ջոն միանգամայն բարեկիրթ երիտասարդ էր:
6. Գյուղում գիտեին, որ քննիչը քաղցած է: Քննիչին չպահեցին հացի, որպեսզի անհարմար չզգա:
7. Պըլը Պուլին մեկիք Շահնազարի անունով էր սկսել հիմարների ու գժերի ցուցակը: Մեկիք Շահնազարը չկարողացավ Պըլը Պուլուն պատժել:
8. Մեկիք Շահնազարն ուզում էր Պըլը Պուլուն խոսքակոշվում հաղթել: Պըլը Պուլին կարող էր մեկիք Շահնազարին տանել աղբյուրն ու ծարավ ետ բերել:



Աշխարհի ամենաօրինակելի տղան



Յ.Յակոբյան, 1957

Ես նախանձում եմ բոլոր օրինակելի տղաներին: Նրանք կանոնավոր են, ուշադիր, քաղաքավարի: Իսկ ես ... Ամեն ինչ անում եմ, որ զոհեմ մի անգամ էլ ես դառնամ այդպիսին, բայց չի ստացվում:

Ես գիտեմ, օրինակելի տղաներ ու աղջիկներ շատ կան: Բայց կա մեկը, որ իմ կարծիքով ամենաօրինակելին է ամբողջ աշխարհում:

Ես և նա սովորում ենք միևնույն դպրոցի միևնույն դասարանում: Ապրում ենք միևնույն շենքի միևնույն մուտքի միևնույն հարկում: Ընդամենը մուտքի մի լուսամուտ է բաժանում մեր պատշգամբներն իրարից:

– Ինչքան դուրս եմ գալիս պատշգամբ, – ասում է մայրս, – գիրքը ձեռքին եմ տեսնում, իսկ դու ...

Գիրքը ձեռքին պատշգամբ դուրս գալն այնքան էլ դժվար բան չի, բայց կարդալ ...

Ես նստում եմ առաջին շարքի ամենավերջին նստարանին՝ պատուհանի մոտ: Իմ կողքին նստում է Ամենաօրինակելի տղան: Մորս ասելով՝ բախտս բերել է, որ նա նստում է իմ կողքին: Այդպիսով գուցե ես մի քիչ կարգ ու կանոն սովորեմ նրանից:

Եվ այսպես, մենք երկուսով նստում ենք միևնույն շարքի միևնույն նստարանին:

...– Բավական է հորանջես, – զգուշացրեց ինձ Ամենաօրինակելի տղան:

Այդ պահին՝

– Ապա մի ասա տեսնեմ, ո՞վ է Տորիչելլին:

– Իտալացի նշանավոր գիտնական:

– Այդպե՛ս... Իսկ ի՞նչ է հայտնագործել:

– Դատարկություն, – վստահ պատասխանեցի ես:

Դասարանը քրքջաց:

"Մի՞թե սխալվել եմ, – մտածեցի ես: – Եթե այդպես է, բա էլ ինչու՞ էր իմ սիրելի մեծ եղբայրը մատով թրխկացնում ճակատիս և ասում "է՛", դու, տորիչելլյան դատարկություն..." Եվ հետո, ես ի՞նչ մեղավոր եմ, որ այդ Տորիչելլի կոչվող գիտնականը¹, կարևոր բաները թողած ինչ-որ դատարկություն է հայտնագործել":

(շարունակելի)




Յ.Յակոբյան, 1958

¹այդ Տորիչելլի կոչվող գիտնականը – этот ученый, называемый Торичелли

Բառեր

օրինակելի – примерный
 նախանձել – завидовать
 կանոնավոր – правильный,
 исправный
 ստացվել – получиться
 միևնույն – один и тот же
 մուտք – вход, зд. подъезд
 շարք – ряд
 նստարան – зд. школьная парта
 բախտ – судьба, везение
 կարգ ու կանոն – порядок (q=ք)

զգուշացնել – предупредить
 պահ – момент
 նշանավոր – знаменитый
 հայտնագործել – открыть
 (сделать открытие)
 դատարկություն – пустота
 վստահ – уверенно
 քրքջալ – хохотать
 մատ – палец
 թրխկացնել – стучать
 մեղավոր – виноватый

21.Ա) 

Суффикс **-արան** образует существительные со значением места:



Մատենադարան	պահարան
գրադարան	առողջարան
համալսարան	դատարան
ճաշարան	դասարան
սրճարան	կայարան "вокзал"
ննջարան	գործարան "завод"
սառնարան	նստարան "сиденье"




Имена существительные со значением места образуются также при помощи суффикса **-անոց**:



խոհանոց	հյուրանոց "гостиница"
հիվանդանոց	ամառանոց "дача"
վարսավիրանոց	զորանոց "казарма"
"парикмахерская"	որրանոց "сиротский приют"
արհեստանոց "мастерская"	դարբնոց "кузница"

Գ) Լրացրե՛ք նախադասությունները.

- Այս ամառ որտե՞ղ էիր: – Արզնի ...:
- Այս գիրքը որտեղի՞ց ես վերցրել: – Մեր դպրոցի ...:
- Եղբայրդ որտե՞ղ է սովորում: – Քեմբրիջի ...:
- Ու՞ր դրեցիր կարագը: –...:
- Ամուսինդ որտե՞ղ է աշխատում: – Էլեկտրական լամպերի ...:
- Մայրիկ, ես չեմ գտնում շագանակագույն կիսաշրջագծեստ: – Լավ նայիր ...:
- Գնացքը ժամը յոթին է մեկնում, արի հանդիպենք վեցն անց կեսին ...:
- Ընկերս ծանր հիվանդացավ, տարան ...:
- Բարեկամս ինձ հրավիրում է Հայաստան և ասում է, որ գնամ իրենց տուն, չգնամ ...:
- Ես ինքս եմ մազերս կտրում, չեմ գնում ...:
- Բանտարկություն չեղավ, բայց Անտառամեջի նախագահին ստիպված եղավ տուգանք վճարել ...:
- Բանակում ծառայելիս ես ... ծանոթացա մի հայ տղայի հետ:

22. Ա) 

Суффикс **-ելի, -ալի** образует прилагательное:




սիրելի	սպասելի
հարգելի	անսպասելի
օրինակելի	վստահելի "доверенный"
զարմանալի	անվստահելի
պատկառելի	բացատրելի
հիանալի	անբացատրելի
հրաշալի	նախանձելի "завидный"
սքանչելի	շարունակելի

Կ Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի ածականներից մեկը (հիշե՛ք, որ ածականը նաև մակբայաբար է օգտագործվում).

Вместо точек поставьте одно из прилагательных правого столбца (помните, что прилагательное употребляется также как наречие):

1. Մեր կուրսում մի ... տղա կա, նա ... ջուրակ է մկագում:
2. Դուք ... գիտեք, որ Պորտլանդում ոչ մի քեռի էլ չունեք:
3. Ես մի ... նամակ ստացա:
4. Ինչու՞ ես կարծում, թե նա ... է, ես նրան շատ եմ վստահում:
5. Ցածր դասարաններում սովորաբար աղջիկները տղաներից ավելի ... են:
6. Ես արդեն կարող եմ հայերեն նամակ գրել. ընկերներիս գրում եմ այսպես՝ ... Վարդան, իսկ գործնական նամակները սկսում եմ այսպես՝ ... պարոն:
7. Այդ գործի համար ... մարդ է հարկավոր, իսկ այս մարդուն դժվար է վստահել:
8. Պապս ... բեղ ու մորուք ունի:

սիրելի
հարգելի
օրինակելի
զարմանալի
պատկառելի
հիանալի
հրաշալի
սքանչելի
անսպասելի
վստահելի
անվստահելի
անբացատրելի
նախանձելի

23. Ա) 

Суффикс **-ավոր** образует **прилагательные** со значением "имеющий, носящий на себе":



տաղանդավոր	արժեքավոր "ценный"
սզավոր	զոլավոր
կանոնավոր	վանդակավոր
մեղավոր	նշանավոր
գունավոր	բախտավոր "удачливый"
լուսավոր "светлый"	թևավոր "крылатый"



и такие **существительные**, как



զինվոր "солдат"	ծիավոր "всадник"
բանվոր "рабочий"	աշխատավոր "трудящийся"

Գ) Կետերի փոխարեն գրեք -ավոր ածանցով համապատասխան ածական.

Вместо точек поставьте соответствующее прилагательное с суффиксом -ավոր:

Օրբելի եղբայրները ... գիտնականներ են, նրանք շատ ... գործեր են թողել: Երեխան ի՞նչ ... է, որ տարօրինակ ազգանուն ունի: Մեր հեռուտացույցը ... է: ... կիսաշրջագծեստին ... վերնաշապիկ չի սազում: Հենց այդ պահին զինվորները ... շարքերով անցան մեր պատուհանի տակով: Մեր հյուրասենյակը մնջարանից ... է: Եղբորս բախտը միշտ բերում է, նա ինձնից ... է: "Ծիծեռնակ" երգում որդին դիմում է իր ... բարեկամին և խնդրում է, որ նա լուր տանի իր ... հորը:

Գ) Կետերի փոխարեն գրեք -(ա)վոր ածանցով համապատասխան գոյական.

Вместо точек поставьте соответствующее существительное с суффиксом -ավոր:

Ձինանոցից շարքերով դուրս եկան ...: Իմ զարմիկը գործարանում է աշխատում, նա ... է: Մայիսի մեկը ... տոնն է: ... երեք ժամում Ա. գյուղից հասավ Բ. գյուղը:


24.Ա) ☞

Суффикс **-յան** образует прилагательное, показывающее отношение к какому-л. месту, времени или лицу (например, последователи какого-л. учения):



աջակողմյան	մայիսյան
ծախակողմյան (շարժում)	սեպտեմբերյան
երևանյան	փետրվարյան
մոսկովյան	երեկոյան
փարիզյան	առավոտյան
արևելյան	լենինյան
արևմտյան	տորիչելլյան
(Խօ: հյուսիսային, հարավային)	(դատարկություն)


Բ) ☞



Լեհաստանը գտնվում է (արևելք) Եվրոպայում, իսկ Ֆրանսիան (արևմուտք) Եվրոպայում:

→ Լեհաստանը գտնվում է արևելյան Եվրոպայում, իսկ Ֆրանսիան արևմտյան Եվրոպայում:

Լեհաստանը գտնվում է (արևելք) Եվրոպայում, իսկ Ֆրանսիան (արևմուտք) Եվրոպայում: – Գիտե՞ք, որ Մոսկվայում (Երևան) փողոց կա: – Հետո ինչ, Երևանում էլ (Մոսկվա) փողոց կա: Ընկերուհիս ապրում է Երևանում (Կիև) փողոցում: (Փետրվար) դեպքերից հետո Երևանում ամեն ինչ փոխվեց: Մեզ մոտ ընդունված է մեքենաների (աջ կողմ) շարժում, իսկ Անգլիայում (ծախ կողմ) շարժում: Էդիսոնի հայտնագործությունը նրանում է, որ նա էլեկտրական լամպում (Տորիչելլի) դատարկություն ստեղծեց:


25. Ա) 



բախտ – счастье, удача
բարեբախտություն – благополучие
բարեբախտաբար – к счастью
բախտավոր – удачливый, благополучный, счастливый
դժբախտություն – несчастье
դժբախտ (≠ երջանիկ) – несчастный
դժբախտաբար – к несчастью
անբախտ (≠ բախտավոր) – злосчастный
բախտը բերել – повезти
բախտը ժպտալ մեկին – улыбнуться (о счастье)
բախտը բացել, նայել – гадать (на кофейной гуще, на картах)
բախտի անիվ – колесо фортуны
մեկի բախտին քար զգել – препятствовать удаче



Շնորհավորում եմ Ձեր նոր Տարին, ցանկանում եմ Ձեզ **բարի բախտ (բարեբախտություն)**, երջանկություն և երկար կյանք: – Տատիկ, քննությունից առաջ **բախտս չբացեցիր**, գնացի **բախտս չբերեց**: – Ոչի՞նչ, թոռնիկ ջան, **բախտի անիվը շուռ կգա**, ամեն ինչ լավ կլինի: **Բարեբախտաբար**, այսօր անձրև չի գալիս, կարող եմք պատուհանները ներկել: – Դրանում ոչ որ մեղավոր չի, դու ինքդ ես քո **բախտին քար զցում**: – Դե լավ, մի քիչ ուշացա, դա ի՞նչ **դժբախտություն** է, որ...: **Դժբախտաբար**, ձյուն եկավ և ճանապարհները փակվեցին: Հայի ճակատագիրն է՝ **բախտ չունենք**: Խմենք երիտասարդների կենացը, ցանկանանք, որ **բախտը միշտ ժպտա** նրանց, թող **բախտավոր** լինեն: – Հիմա ես քո **բախտը կնայեմ**. չի կարելի ասել, թե դու **դժբախտ** ես, ընդհակառակը՝ դու առողջ ես, լավ ծնողներ, լավ ընտանիք ունես, բայց կարծես թե մի հարցում **անբախտ** ես, մի հարցում **բախտդ չի բերում**. երևի չի ստացվում քո Ամերիկա գնալը:

 Բ) Կետերի փոխարեն գրեք համապատասխան բառ կամ արտահայտություն.

Вместо точек поставьте подходящее слово или выражение:

Դեռ մի լվա սուրճի բաժակները, ես ուզում եմ, որ տիկին Արփին իմ ...: Եկեք ցանկանանք իրար ..., որ միշտ ...: Այսպիսի ... ես նույնիսկ իմ թշնամիներին չեմ ցանկանում:




Գ) "Կենաց" ասեք օգտագործելով հետևյալ բառերն ու արտահայտությունները՝ բարի բախտ, բախտավոր, բախտը բերել, բախտը ժպտալ, բախտին քար զգել (ով որ քո բախտին քար զցի, թող ինքը ...):



Составьте "тост", употребите соответствующие слова и выражения.

26. 


Գեղեցիկ, աշխարհ:



→

Նա ամենագեղեցիկն է ամբողջ աշխարհում:


Գեղեցիկ, աշխարհ: Ուրախ, դպրոց: Կարգապահ, դասարան: Ուժեղ, քաղաք: Խորամանկ, բակ: Անկիրթ, շենք: Մաքրասեր, զորանոց: Աշխատասեր, դարբնոց:

27.Ա) 

Իմ (քո, նրա, հորս, եղբորս, Կարենի) կարծիքով, ասելով

Իմ կարծիքով նա ամենատիպարի մարդն է ամբողջ աշխարհում:

Մորս ասելով՝ բախտս բերել է:


Բ) 

Նա քեզանից երեք տարով մեծ է (ես այդպես եմ կարծում):

→


Իմ կարծիքով նա քեզանից երեք տարով մեծ է:

Նա քեզանից երեք տարով մեծ է (ես այդպես եմ կարծում):
Վահրամ Փափագյանը մեր մեծագույն դերասանն է (մենք այդպես ենք կարծում):
Սա մեր նոր գրադարանի շենքն է (մեր տնօրենն այդպես է ասում):
Այսօրվա տոլման աղի է (եղբորս կինն այդպես է ասում):
Ձեր տան ետևում երկու վարսավիրանոց կա (դու այդպես ես ասում):
Հայերենը դժվար լեզու չէ (մեր ուսուցիչն այդպես է ասում):
Ես նրան նախանձում եմ (նա այդպես է կարծում):
Վաղը անձրև չի գա (հայրս այդպես է ասում):
Այս թիկնոցը քեզ ավելի է սազում, քան քոջդ (ես այդպես եմ կարծում):
Դարբնոցում աշխատելու համար հարկավոր է շատ ուժեղ և ուշադիր լինել (ես այդպես եմ կարծում):

28.Ա) 

գիրքը ձեռքին եմ տեսնում

խելքը գլխին

Բ) 

(գիրք, ձեռք) Նա ... դուրս եկավ պատշգամբ:

→

Նա գիրքը ձեռքին դուրս եկավ պատշգամբ:

(գիրք, ձեռք) Նա ... դուրս եկավ պատշգամբ: (ձեռնափայտ, ձեռք) Պառավը ... դուրս էր եկել զբոսնելու: (գլխարկ, գլուխ) Երիտասարդը ... ներս մտավ ու ամբարտավան նայեց տնօրենին: (բաժակ, ձեռք) Թամադան ... տեղից բարձրացավ: (գլխաշոր, վիզ) Հիվանդը ... քնեց: (երկարաճիտ կոշիկներ, ոտքեր) Փոքրիկ աղջիկը .. նման էր Կոշկավոր կատվին: (խելք, գլուխ) Սա ... մարդու գո՞րծ է:



29. Ո՞ր բառն է "ալելուրդ" բերված շարքում:
Укажите "лишнее" слово в ряду.



Կույր, խուլ, զրնգուն, խեղճ:
Ժողովուրդ, ազգ, թերություն, պետություն, քաղաքակրթություն:
Բացահայտել, հայտնաբերել, հայտնագործել, ստեղծել:
ճառագայթ, դեղագործ, սան, քրիստոնյա, ուսմասվար:
Անտառ, անապատ, պարիսպ, գետ:
ճուտ, զավակ, սան, որդի:
Պատիժ, պատիվ, հանցանք, դատարան:
Անուն, ազգանուն, անձնագիր, հեռագիր:



30. Ա) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"նախանձել, բաժանել, հայր-նագործել, քրքջալ, թրխկացնել"** բայերը: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել այս բայերը: Բերե՛ք օրինակներ:



В каких сочетаниях употреблены глаголы **նախանձել, բաժանել, հայտնագործել, քրքջալ, թրխկացնել**? Приведите также свои примеры.

Ես նախանձում եմ նրանց, ովքեր նկարել գիպեն:

Բ) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"օրինակելի, միևնույն, սիրելի, կարևոր, տորիչելլյան"** ածականները: Այս ածականներով ուրիշ ի՞նչ գոյականներ կարելի է բնութագրել: Բերե՛ք օրինակներ:

В каких сочетаниях употреблены прилагательные **օրինակելի, միևնույն, սիրելի, կարևոր, տորիչելլյան**? Приведите также свои примеры.

Ես մի քանի օրինակելի ուսանողուհի ունեմ:



31. Պատմե՛ք տեքստը հիմնվելով բանալի բառերի վրա.
Перескажите текст по ключевым словам:



Նախանձել, կանոնավոր, ուշադիր, քաղաքավարի, օրինակելի, ամենաօրինակելին, միևնույն դպրոց, դասարան, շենք, հարկ, պատշգամբ, գիրքը ձեռքին, դժվար բան, միևնույն շաբթ, նստարան, բախտը բերել, հորանջել, Տորիչելլի, հայտնագործել, դատարկություն, քրքջալ, թրխկացնել, ճակատ:

Урок 19. Տառնի ներդրող դաս

Грамматика

Будущее время и "будущее в прошлом" изъявительного наклонения: образование и употребление.

Изъявительное наклонение.

Суффиксы -իլ, -ուլ.

Повтор как словообразовательный прием (продолжение).

Тексты

Հիսուսի արթուրքուն (Ավետիս Այվազյան)

Աշխարհի ամենաօրհնակելի տղան (Հարունակուրթուն)

Изъявительное наклонение

Սահմանական եղանակ



Изъявительным наклонением мы пользуемся, когда речь идет о реальных событиях, имеющих место в действительности, если, конечно, по остроумному выражению известного лингвиста М. Абеяна, говорящий не заблуждается и не лжет.

Будущее время и «будущее в прошлом» изъявительного наклонения

Սահմանականի ապառնի և անցյալի ապառնի



Будущее время изъявительного наклонения обозначает действие, которое должно совершиться в будущем, а время "будущее в прошлом" обозначает действие, которое должно было происходить в прошлом, но почему-то этого не произошло.

Будущее и "будущее в прошлом" изъявительного наклонения образуются при помощи причастия будущего (иначе его называют причастием последующего действия – **ապակադար դերբայ**) и вспомогательного глагола; причем для будущего времени употребляются формы настоящего времени вспомогательного глагола (**եմ, ես...**), а для "будущего в прошлом" – формы прошедшего времени (**էի, էիր...**).

Причастие последующего действия образуется прибавлением окончания **-ուլ** к неопределенной форме глагола: **գնալու, գալու, մեկնելու, ասելու** и т. д. (обратите внимание на внешнее сходство причастия последующего действия и родительного падежа неопределенной формы глагола и не путайте их).

**Спряжение глаголов в будущем времени
изъявительного наклонения**

գնալ		մեկնել	
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև	утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև
ես գնալու եմ	չեմ գնալու	մեկնելու եմ	չեմ մեկնելու
դու գնալու ես	չես գնալու	մեկնելու ես	չես մեկնելու
նա գնալու է	չի գնալու	մեկնելու է	չի մեկնելու
մենք գնալու ենք	չենք գնալու	մեկնելու ենք	չենք մեկնելու
դուք գնալու եք	չեք գնալու	մեկնելու եք	չեք մեկնելու
նրանք գնալու են	չեն գնալու	մեկնելու են	չեն մեկնելու

**Спряжение глаголов в "будущем в прошлом"
изъявительного наклонения**

գնալ		մեկնել	
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև	утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև
գնալու էի	չէի գնալու	մեկնելու էի	չէի մեկնելու
գնալու էիր	չէիր գնալու	մեկնելու էիր	չէիր մեկնելու
գնալու էր	չէր գնալու	մեկնելու էր	չէր մեկնելու
գնալու էինք	չէինք գնալու	մեկնելու էինք	չէինք մեկնելու
գնալու էիք	չէիք գնալու	մեկնելու էիք	չէիք մեկնելու
գնալու էին	չէին գնալու	մեկնելու էին	չէին մեկնելու

**Употребление будущего и "будущего в прошлом"
изъявительного наклонения.**

Будущее время изъявительного наклонения показывает действие, которое, по твердому убеждению говорящего, **совершится в будущем**. Ср.: будущее время условного наклонения обозначает действие, **совершение которого предполагается в будущем**.

На первый взгляд может показаться, что будущее время изъявительного наклонения и будущее время условного наклонения употребляются синонимично, заменяя друг друга. Однако заметьте, что будущее время изъявительного наклонения выражает **твердое знание о действии в будущем** (насколько это возможно применительно к будущему, а т.к. это редко возможно, оно и употребляется реже, чем предположительное будущее). Носитель армянского языка употребляет будущее время изъявительного наклонения, когда говорит о твердых намерениях на момент речи, о таких событиях в будущем, которые, с его точки зрения, не подлежат сомнению. Например:

Այս տարի երեխան դարձնո՞ց է գնալու:

Здесь вопрос не о том, пойдет или нет ребенок в школу; говорящий **твердо знает**, что в каком-то возрасте все должны пойти в школу, вопрос в том, достиг ли ребенок этого возраста.

Возможные ответы:

– Այո, գնալու է:

– Ոչ, չի գնալու:

– Չգիտեմ, գնալու է, թե չէ:

Из последнего ответа можно заключить, что говорящий не уверен, в этом или не в этом году ребенок дорастет до нужного возраста, скажем, если ребенок мало знакомый; или можно заключить, что решение о том, чтобы именно в этом году пойти в школу, еще не принято или об этом решении говорящему не известно и т.д., но сам факт, что ребенок пойдет-таки в школу, не подлежит сомнению.

Если будущее время *сослагательного* наклонения употребляется для обозначения ожидаемого, предполагаемого действия, то употребление будущего времени *изъявительного* наклонения выглядит сообщением о заблаговременной договоренности о предстоящем.

Այս կիրակի **գնալու ենք** Վահանենց տուն, Դու **սովորելու ես** Սորբոնի համալսարանում: – выражено твердое намерение

Չեր ինքնաթիռը ժամը հինգին է **մեկնելու**: Գազիկը վաղն է **գալու** Մոսկվայից: – выражено твердое знание

Не вдаваясь в тонкости, многие употребляют одно время вместо другого. Однако будущее время *изъявительного* наклонения не зависит от условий, как будущее время *сослагательного* наклонения, поэтому невозможно его употребление с придаточным условия, вводимым с եթե. Ср. եթե փող ունենանք, այս ամառ կգնանք Դրիմ: и Այս ամառ գնալու ենք Դրիմ:

Ср. также:

Յոթ սարի հետևից մի արքայազն է գալու ու ինձ տանելու է լուսավոր ու երջանիկ մի աշխարհ: (выражено убеждение в том, что это произойдет, как гадание)

Յոթ սարի հետևից մի արքայազն կգա ու ինձ կտանի լուսավոր ու երջանիկ մի աշխարհ: (выражена надежда, мечта)

"Будущее в прошлом" *изъявительного* наклонения обозначает действие, которое, по мнению говорящего, должно было произойти после какого-то момента в прошлом. В момент речи говорящему либо неизвестно, произошло ли это действие, либо оно не произошло, и тогда то обстоятельство, которое помешало событию (непредвиденное, неучтенное и т.п. обстоятельство) передается прошедшим простым временем. Ср.

– Երեկ նա **մեկնելու էր** Երևան: Չգիտե՞ս, **մեկնե՞ց**, թե՞ չէ:

– Երեկ նա **մեկնելու էր** Երևան, բայց **հիվանդացավ, չկարողացավ** մեկնել:

Таким образом, в изъявительном наклонении мы выделили следующие времена*:

Вспом. глагол Причастие	форма наст. вр. вспом. гл. եմ	форма прош. вр. вспом. гл. էի
причастие настоящего времени ներկա դերբայ գնում	настоящее время ներկա գնում եմ	прошедшее несовершенное անցյալի անկադար գնում էի
совершенное причастие վաղակադար դերբայ գնացել	совершенное վաղակադար գնացել եմ	давнопрошедшее անցյալի վաղակադար գնացել էի
причастие последующего действия ապակադար դերբայ գնալու	будущее ապառնի գնալու եմ	будущее в прошлом անցյալի ապառնի գնալու էի
прошедшее простое անցյալ կադարյալ գնացի		

*Позднее рассмотрим еще одну пару видо-временных форм, так называемые результативные времена: նստած եմ, նստած էի.

Единственное синтетическое время изъявительного наклонения – прошедшее простое: գնացի.

Причастия **գնում**, **գնացել**, **գնալու** не имеют самостоятельного употребления, они как составные части входят в состав аналитических времен.

Из таблицы видно, что причастие настоящего времени **գնում** обозначает продолженное состояние действия. В сочетании с настоящим временем вспомогательного глагола оно указывает на то, что действие разворачивается в момент речи, в сочетании с прошедшим временем вспомогательного глагола – что действие разворачивалось в какой-то момент в прошлом (или повторялось в прошлом).

Совершенное причастие **գնացել** указывает на завершенность действия. В сочетании с настоящим временем вспомогательного глагола оно показывает, что действие завершилось к моменту речи, в сочетании с прошедшим временем вспомогательного глагола – что действие завершилось к какому-то моменту в прошлом.

Причастие последующего действия **գնալու** указывает на еще не совершенное, даже не начатое действие, на намерение. В сочетании с настоящим временем вспомогательного глагола оно показывает, что действие совершится после момента речи, в сочетании с прошедшим временем вспомогательного глагола – что действие должно было совершиться после какого-то момента в прошлом.

Простое прошедшее время обозначает совершенное законченное действие, лишенное длительности.

Если прочитать таблицу не слева направо, как мы это сделали, а сверху вниз, то видно, что средствами изъявительного наклонения армянского языка можно выразить происходящее, происходившее и то, что произойдет по отношению к моменту речи и по отношению к какому-то моменту в прошлом.

NB: Говоря о каком-л. моменте в будущем, можно употребить другие временные формы, как и в русском языке. Ср. Վաղը մեկնում եմ Կիպրու: "Завтра уезжаю на Кипр" (наст. время вместо будущего). Դե, ես գնացի: "Ну, я пошел" (прошедшее простое время вместо будущего) Հենց որ վերջացրիր, արի ինձ մոտ. "Как закончишь, приди ко мне" (в армянском языке – прошедшее время вместо будущего).

Վարժություններ




1. Հետևյալ նախադասություններում վեր հանեք -ու-ով բայածևերը և ասեք, թե ի՞նչ են նրանք ներկայացնում անորոշ դերբա՞յ, թե՞ ապառնի ժամանակ:



В следующих предложениях выделите глагольные формы на -ու и скажите, являются ли они родительным падежом неопределенной формы глагола или будущим временем изъявительного наклонения:

Մեզ զգուշացնելու համար նա պատուհանին ծաղկաման էր դրել: Ես քեզ կայցելեմ երեք օրից հետո. վաղն ու վաղը չէ մյուս օրը հաջորդ քննությանն եմ պատրաստվելու, ազատ ժամանակ չեմ ունենալու: Եթե առանց հորանջելու դասդ լսես, ամեն ինչ կհասկանաս: Գյուղացիները քննիչին չպահեցին հյուրասիրելու: Ուսուցչուհին ասաց, որ այսօր չի ստուգելու մեր տետրերը, վաղն է ստուգելու: Ազգականներս ուզում են տեղափոխվել Ստավրոպոլ, բայց ապրելու տեղ չունեն: Վաղը այս կինոնկարի շարունակությունն են ցույց տալու: Մի բաժակ խմելու ջուր կտա՞ք: Հայրիկն իմացել է, որ օգոստոսի հինգին Սոկացյանն է քննություն ընդունելու: Այսօր երեկոյան Կարենին մի սպասեք, այսօր նա զբաղված է, գնալու է ընկերոջը հանդիպելու: Մաթեմատիկան ամսի մեկին ենք գրելու, իսկ ռուսերենը՝ ամսի չորսին:

2.




Երեկոյան ժամը յոթին նա մեզ սպասում է Թատերական հրապարակում:

→ Երեկոյան ժամը յոթին նա մեզ սպասելու է Թատերական հրապարակում:

Երեկոյան ժամը յոթին նա մեզ սպասում է Թատերական հրապարակում: Երեքշաբթի եղբայրս մեկնում է Սանկտ-Պետերբուրգ: Այս ամառ վերջապես գնում ենք Հայաստան: Քսան թուփեից խանութը բացվում է: Այս ձմեռ երեք քննություն ենք հանձնում: Մի շաբաթից քո դիմանկարն եմ նկարում:

3. Հետևյալ նախադասությունները դարձրեք ապառնի. օգտագործեք սահմանականի ապառնին կամ ենթադրականի ապառնին կամ երկուսն էլ, եթե հնարավոր է, և բացատրեք, թե ինչ է արտահայտում Ձեր ընտրած յուրաքանչյուր ժամանակը.

В следующих предложениях употребите будущее время; выберите будущее время изъявительного или сослагательного наклонения (или оба, если возможно) и объясните, что выражает в каждом конкретном случае Ваш выбор:




Մինչև ես սանրվեմ, քույրս սուրճ է եփել:

→ Մինչև ես սանրվեմ, քույրս սուրճ է եփելու: (Նա ինձ խոստացել է, մենք պայմանավորվել ենք:)
Մինչև ես սանրվեմ, քույրս սուրճ կեփի: (- Խնդրում եմ, քույրիկ ջան, սուրճ եփիր ինձ համար:)

Մինչև ես սանրվեմ, քույրս սուրճ (եփել): Ինստիտուտից հետո գարմիկա (աշխատել իբրև բժիշկ): Հենց որ եղբայրս գա, ես ձեզ (զանգել): Դպրոցն ավարտելուց հետո նա (աշխատել ինստիտուտ ընդունվել): Վարդանը վաղը չի կարող մեզ հետ գալ, (զնայ հիվանդանոց) մորը տեսնելու: Վաղը, ժամը ութին Բարկեյնը (զալ Մոսկվայից): Մյուս շաբաթ գարմիկա (ամուսնանալ) մի ֆրանսուհու հետ ու (զնայ ճանապարհորդության): Երբ որ բոլոր քննությունները հանձնես, բոլորս միասին (զնայ ծովափ):

4. Գտեք հետևյալ նախադասություններից յուրաքանչյուրի համար հարմար շարունակություն և համոզվեք որ դրանց կապը հնարավոր է միայն սահմանականի ապառնին անցյալի ապառնի դարձնելով.

Найдите подходящее продолжение для каждого предложения и убедитесь, что их связь возможна лишь при замене будущего времени изъявительного наклонения «будущим в прошлом»:



Նա քեզ նամակ է գրելու:

→ Նա քեզ նամակ էր գրելու: Ի՞նչ եղավ, գրե՞ց, ստացա՞ր նրա նամակը:

Նա քեզ նամակ է գրելու:
Մենք մեր բնակարանը չենք վաճառելու, փոխանկելու ենք:
Տիգրանը ամսի հինգին քննություն է հանձնելու:
Ես բժիշկ չեմ դառնալու:
Ճաշը դու չե՞ս եփելու:
Մենք նրանց այլևս չենք հանդիպելու:
Նա ինձ այստեղ է սպասելու:


Ի՞նչ եղավ, գրե՞ց, ստացա՞ր նրա նամակը:
Բայց հարմար տարբերակ չգտանք, ստիպված՝ այն բնակարանը վաճառեցինք և սա գնեցինք:
Բայց, իմանալով, որ իր ծնողները դասախոսի հետ պայմանավորվել են իր մասին, չգնաց քննության:
Բայց երբ մեր շնիկը ոտքը կոտրեց, և ես տեսա, որ կարող եմ նրան օգտակար լինել, որոշեցի բժշկական ինստիտուտ ընդունվել:
Ես կարծում էի, թե մենք առավոտյան պայմանավորվեցինք, և ես կարող եմ չմտածել օրվա ճաշի մասին:
Մենք հույս չունեինք, թե երբևէ կկարողանանք այսպիսի հեռավոր ճանապարհորդություն կատարել:
Դուք նրան չե՞ք տեսել:

5. Տեղափոխեք գործողության պահը ներկայից անցյալ և շարունակեք նախադասությունը սահմանակամի անցյալի ապառնու գործածությունն արդարացնելու համար:

Перенесите момент действия в прошлое и придумайте продолжение фразы так, чтобы оправдать употребление времени "будущее в прошлом" изъявительного наклонения.



Նա գնալու է Մոսկվա: (երեկ)



Երեկ նա **գնալու էր** Մոսկվա, բայց տոմս չկար, չգնաց: Կամ՝ Երեկ նա **գնալու էր** Մոսկվա, բայց չգիտեմ, զնաց, թե չէ: և այլն

1. Նա գնալու է Մոսկվա: (երեկ) 2. Կարծեմ Մոկացյանն է քննությունն ընդունելու: (երեկ) 3. Նրանք մեկնելու են Ամերիկա: (անցյալ տարի) 4. Դու գնալու ես թատրոն: (երեկ երեկոյան) 5. Ես ձեր փողը բերելու եմ: (այս առավոտ) 6. Նրանք ամուսնանալու են: (անցյալ շաբաթ) 7. Կարենը իմ գիրքը քեզ է տալու: (երեք օր առաջ)



Հիասթափություն

Ամեն ինչ կորցնեմ, կգնամ գյուղ: Հողամաս կվերցնեմ, ծառեր կտնկեմ, բանջարեղեն կցանեմ: Ծառերին անուցներ կդնեմ ու մեկ-մեկ կխնամեմ (ինչպես երեխաներին են խնամում), մինչև այգի դառնան: Մի փոքրիկ տուն կկառուցեմ, ինչի՞ս է պետք մեծը:

Կով կառնեմ, ինքս կկթեմ: Մեղուներ կպահեմ, կուտեմ իմ քաշած մեղրը, կաթը, մածուկը, թթվասերը, իմ միրգն ու բանջարեղենը, իմ թխած հացն ու դավուրման...

Երեկոյան կնստեմ տանս կտուրին, արևամուտի դիմաց, արևին ճանապարհ կզգեմ: Առավոտյան արևածագի հետ կարթնանամ ու ... չեմ մտածի, թե գնալու եմ, էլի սկսի...

Ձի կառնեմ, ինչի՞ս է պետք մեքենան: Անտառից փայտ կբերեմ, մաքուր ու գեղեցիկ կշարեմ խորդանոցում, որ ծնռանը չոր փայտը վառարանում ճրթճրթա, որ ծխնելույզից կապույտ ծուխ դուրս գա...

Առավոտյան, երբ արթնանամ, արագ-արագ կհագնվեմ, խորդանոցից փայտ կբերեմ, փայտը վառարանում կճրթճրթա, կնստեմ վառարանի մոտ, կհիշեմ քաղաքի իմ ընկերներին... Ու հանգիստ կլինեմ, որ չեմ գնալու, որ էլի սկսի...

Ըստ Ավետիս Այվազյանի "Հիասթափություն" պատմվածքի

Բառեր

հիասթափություն – разочарование

հողամաս – участок земли

փնկել – сажать (дерево, куст)

ցանել – сеять

խնամել մեկին – ухаживать за

կառուցել – строить

կրթել – доить

մեղու – пчела

պահել – держать

քաշել (մեղր) – зд. получить (мед)

դավուրմա – каурма (сваренное, зажаренное и залитое жиром мясо для зимнего хранения)

կտուր – крыша

արևամուտ – закат

ճանապարհ գցել –

проводить

արևածագ – восход (զ=ք)

փայտ – дерево (материал), дрова

շարել – складывать (в ряд)


վառարան – печка


ճրթճրթալ – трещать



ծխնելույզ – дымоход


արագ-արագ – быстро

Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ


6. Ա) 	Суффикс -իկ имеет уменьшительно-ласкательное значение. Ср.
прилагательные:	փոքր – փոքրիկ քաղցր – քաղցրիկ անուշ – անուշիկ ցածր – ցածրիկ
наречие:	մոտ – մոտիկ "близко"
существительные: NB: чередование звуков!	աստղ – աստղիկ պապ – պապիկ տատ – տատիկ թռռ – թռռնիկ հայր – հայրիկ մայր – մայրիկ շուն – շնիկ սիրտ – սրտիկ քիթ – քթիկ բերան – բերանիկ պանիր "сыр" – պանրիկ "сырок" Տիգրանիկ, Ստեփանիկ, Հակոբիկ, и т.д.

 Встречаются и другие суффиксы с аналогичным значением:
գեր "полный" – գիրուկ "полненький", տուն – տնակ "домик"

Բ) 	Суффикс -ակ — очень распространенный словообразовательный суффикс:
	նավ "корабль" – նավակ "лодка, шлюпка" գետ – գետակ "речка" թռչուն – թռչնակ "птичка" դուռ – դռնակ "дверца" լեզու – լեզվակ "язычок на обуви" խումբ "группа" – խմբակ "кружок" վեպ "роман" – վիպակ "повесть" պատանի "юноша" – պատանյակ "юноша" (уменьш.-ласк.) որդի – որդյակ "сыночек" գունդ "шар" – գնդակ "мяч"

 Գ) Ասացեք նույնը մեղմ, փաղաքշական.
Скажите то же самое ласково:

1. – Ստեփան, որդի՛ս, քիթդ մաքրիր, բերանդ լվա, հայրդ քեզ է սպասում: 2. – Մայր, ես ուզում եմ մեր շան համար տուն կառուցել, մի տախտակ տուր, որ դուռը պատրաստեմ: 3. Տատն իր փոքր թռռանը շատ է սիրում, միշտ ասում է. "Մոտ արի, իմ անուշ Հակոբ, արի քեզ հեքիաթ պատմեմ:"

7.Ա) 

В армянском языке часто используется прием повтора:



для образования наречий:

մեծ-մեծ
տաք-տաք
հիվանդ-հիվանդ
ուշ-ուշ
շուտ-շուտ
արագ-արագ и т.д.



для усиления значения:

հին-հին պատմություններ – очень старые истории
մեծ-մեծ ճամպուրակներ – очень большие чемоданы
սև-սև աչքեր – очень черные глаза
երկար-երկար թարթիչներ – очень длинные ресницы



для придания числительным значения: по одному, по два и т.д.

երկու երկու, երեք երեք
NB: մի մի կամ մեկ մեկ – по одному, но: մեկ-մեկ – иногда



для придания глаголам итеративного значения:


գոռալ – գոռոգոռալ
ծամել – ծամծամել "пожевывать"
վազել – վազվազել "побегать"
Некоторые звукоподражательные глаголы существуют только с повторенным корнем:
ճրճրճրալ
չխկչխկալ, չխկչխկացնել – звенеть, греметь (о погремушке)
թնկթնկալ – ныть
տզտզալ – хныкать
փնրփնրալ – ворчать


Դ Կետերի փոխարեն օգտագործեք . աջ սյունակում բերված բառերի կրկնությամբ կազմված մակրայ.

Вместо точек поставьте наречие, образованное приемом повтора из приведенных в правом столбце слов:

1. Հացը շատ ... ես կտրատում, մի քիչ ... կտրատիր:
2. Խորովածի միսը այսպես ... չեն կտրատում, ավելի ... են կտրատում:
3. Սեղանի վրա ափսեները ... մի՛ դիր, աթոռները ... են դրված:
4. Դպրոցից ուշանում էր, դրվան ... կերավ ու գնաց:
5. Դժվար օրերին հացը ... հավաքում էինք և ուտում:
6. Դեղագործը խորհուրդ տվեց այս դեղը ... խմել:

մեծ
փոքր
հաստ
բարակ
հեռու
մոտ
կաթիլ
փշուր
սառը

4) 



Մեր հարևանուհին **շափ կարճ մազերով, շափ սիրուն** կին է:



Մեր հարևանուհին **կարճ կարճ մազերով, սիրուն սիրուն** կին է:

Մեր հարևանուհին **շափ կարճ մազերով, շափ սիրուն** կին է: Մայրիկի **շափ մեծ** կոշիկները ոտքերին նա ծիծաղելի տեսք ունի: Ինչու՞ են հավատում նրա **շափ հիմար** պատմություններին: Առավոտյան երկինքը **շափ կապույտ** էր, ես չէի կարծում, թե անձրև կգա: Նա **շափ երկար** նայեց ինձ, բայց ոչինչ չասաց: Փոքրիկն ուզում էր **շափ կեղտոտ** ձեռքերով միրգ ուտել, ես թույլ չտվեցի, հիմա լաց է լինում:

7) 



Երեխաներ, **մեկական** խնձոր վերցրեք, ճաշը դեռ պատրաստ չէ:



Երեխաներ, **մի մի** խնձոր վերցրեք, ճաշը դեռ պատրաստ չէ:

Երեխաներ, **մեկական** խնձոր վերցրեք, ճաշը դեռ պատրաստ չէ: Երեխաներ, այս դասասենյակը փոքր է, այստեղ նստարանները քիչ են, ստիպված կլինեք ոչ թե **երկուական**, այլ **երեքական** նստել: Այս խաղը խաղալու համար խաղաթղթերը (игральные карты) բաժանում ենք ոչ թե **վեցական**, այլ **չորսական**:




Ե) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բայերից մեկը.

Вместо точек поставьте один из глаголов правого столбца:

1. Չոր փայտը ... է վառարանում:
2. Այս ափից մարդիկ տեսան, թե ինչպես էին սահմանապահները քաջքշում զուռնաչու թևից ու ... նրա վրա:
3. Ամառ է, շոգ է, երեխաները ամբողջ օրը ... են գետի ափին:
4. Մեր հաշվապահը ծեր ու դժգոհ մարդ է, ամբողջ ժամանակ ... է:
5. Հարևանուհիս հիվանդ կին է, անընդհատ ... է, թե մեջքս ցավում է, մեջքս ցավում է:
6. Երեխան ... է, չեն հասկանում, թե ինչ է ուզում, խաղալիքը ... են, բայց չի հանգստանում:

գոռգոռալ
թնկթնկալ
ճրթճրթալ
չխկչխկացնել
վազվազել
տոտոտալ
փնթփնթալ

8. Ա) 



արևածագ, ծագել – восходить, происходить*
 արևամուտ (редко), մտնել – заходить
 մայրամուտ (часто) – закат; մայր մտնել – заходить (о солнце)
 լուսաբաց – рассвет, լույսը բացվել – светать
 մթնշաղ – сумерки, մութ – темно, մթնել – темнеть



Արևածագին արևը ծագում է, լուսաբացին լույսը բացվում է, մայրամուտին արևը մայր է մտնում, մթնշաղին մթնում է, գիշերը մութ է, ցերեկը լույս է:

*Напр., գիտնականները կարծում են, որ Արարատ անունը ծագում է Ուրարտուից:

❖ 6) Պատասխանե՛ք հարցերին և նմանատիպ հարցեր տվե՛ք Ձեր ընկերներին:

Ամռանը ե՞րբ է լույսը բացվում, ժամը չորսի՞ն, թե՞ ժամը հինգին: Իսկ ե՞րբ է ծագում արևը: Իսկ ժամը քանիսի՞ն է ամռանը արևը մայր մտնում: Իսկ ձմռանը՞: Հունիսին Սանկտ-Պետերբուրգում գիշերվա ժամը տասներկուսին մու՞թ է, թե՞ լույս է: Իսկ Հայաստանում սպիտակ գիշերներ լինու՞մ են: Դուք սիրու՞մ եք արևածագը դիմավորել: Դուք անտառում մթնշաղին վախենու՞մ եք: Իսկ մութ փողոցների՞ց: Հիշու՞մ եք Սենթ-Էկզյուլպերիի փոքրիկ արքայազնին, նա ամենից շատ ի՞նչն էր սիրում դիտել՝ լուսաբա՞ցը, արևածա՞գը, մայրամու՞տը, թե՞ մթնշաղը:

9.Ա) ✱ ճանապարհ ընկնել – поуститься в дорогу
 ճանապարհ գցել = ճանապարհ դնել = ճանապարհել
 ≠ դիմավորել

👁️

👁️ Եղբայրս մեկնում է Սանկտ-Պետերբուրգ աշխատելու, ես նրան **ճանապարհ եմ գցում (դնում, ճանապարհում եմ)** Սանկտ-Պետերբուրգ: Նա արդեն վերադառնում է, ես գնում եմ օդանավակայան նրան Սանկտ-Պետերբուրգից **դիմավորելու:**


👁️ Բ) Շեղագիր բառերի ու արտահայտությունների փոխարեն օգտագործե՛ք հակառակ իմաստով բառեր ու արտահայտություններ.
 Вместо слов и выражений, выделенных курсивом, употребите антонимы:


👁️

→


Վաղը գնում ենք օդանավակայան՝ հայրիկին Մոսկվա <i>ճանապարհելու:</i>	→	Վաղը գնում ենք օդանավակայան՝ հայրիկին Մոսկվայից <i>դիմավորելու:</i>
---	---	---

Վաղը գնում ենք օդանավակայան՝ հայրիկին Մոսկվա *ճանապարհելու:* Ընկերս *գալիս է* երկար ճանապարհորդությունից, գնում եմ կայարան նրան *դիմավորելու:* Ամեն օր մայրիկս մեզ *ճանապարհ է դնում* դպրոց: Երբ ես *վերադառնում եմ* անառանցից, հարևանուհիս միշտ ինձ *դիմավորում է* բակում:

👁️ 10. Գտե՛ք հնարավոր կապակցությունները: 

Ծառերը տնկում են, ջրում են, խնամում են: 

Ծառերը, ծաղիկները, միրգը, բանջարեղենը, մեղուները, մեղրը, հացը, մածուցը, տունը, այծերը, ձիւն, ոչխարները, հավը		Տնկել, ցանել, խնամել, կթել, մերել, թխել, քաշել, կառուցել, արոտ տանել, մորթել, ջրել
--	--	--

👁️ ❖ Պատասխանե՛ք հարցերին. 

Հեղինակը գյուղ գնալու՞ է: Ձեր կարծիքով հեղինակը ու՞ր չի ուզում գնալ և ինչու՞: Ո՞վ և ի՞նչ է սկսելու:



Աշխարհի ամենաօրինակելի տղան

(շարունակություն)

Բայց ահա այս բոլորից հետո մեր դասարանում մի ուրիշ փոփոխություն էլ կատարվեց: Ներս մտավ մեր դպրոցի ուսմասվարը, և նրա հետ՝ ակնոցավոր մի աղջիկ: Դա այն աղջիկն էր, որի հետ ամռանը ծանոթացել էի ճամբարում: Ինձ համար նա աշխատի ամենագեղեցիկ և ամենահրաշալի աղջիկն էր:

Ես ուզում եմ, որ նա որևէ բան հարցնի; իսկ ես պատասխանեմ նրան՝ աշխարհի ամենահետաքրքիր և հրաշալի խոսքերով. "Պատրաստ եմ քեզ համար խաշվել եռացրած ջրի մեջ..." Կամ ավելի սքանչելի մի բան. "Եթե ուզես, կուտեմ ամենափշուտ ձուկը առանց որևէ բան հանելու:" Բայց այդ բոլորից ոչ մեկն էլ չեմ կարողանում ասել: Իսկ Ամենաօրինակելի տղան ... Նրանք միշտ միասին են: Միասին դպրոց են գալիս, միասին էլ տուն են գնում: Պատահում է, դասերից հետո մեկ-մեկ ես էլ եմ նրանց հետ տուն գնում:

...Եվ ահա մի անգամ փողոցի անկյունում կանգնած մի տղա բղավեց.

– Է՛յ, դուք, աբլորներ:

Միանգամից մեխվեցի տեղում, բայց տեսնելով, որ Ամենաօրինակելի տղան և Ամենահրաշալի աղջիկը ուշադրություն չեն դարձնում, ես էլ արհամարհանքով շրջեցի դեմքս և նրանց հետ շարունակեցի ճանապարհը:

Բայց փողոցի տղան դարձավ Ամենահրաշալի աղջկան.

– Է՛յ, չորսաչքանի ...

Այստեղ արդեն գետինը դողաց ոտքերիս տակ: Այսինքն, ավելի ճիշտ, ոտքերս դողացին գետնի վրա ... Քիչ անց Փողոցի տղան և ես գլորվում էինք չոր ասֆալտի վրա:

Երբ վեր կացա, Փողոցի տղան փախավ, իսկ Ամենաօրինակելի տղան հանդիմանեց ինձ.

– Այնուամենայնիվ դու կոիվ սարքեցիր փողոցում: Դու մոռացար, որ մեզ հետ աղջիկ կա:



Խաչմերուկում, որտեղից մենք միշտ բաժանվում էինք, Ամենահրաշալի աղջիկը շրջվեց դեպի ինձ ու մի հրաշալի ժպիտով ասաց.

– Այսօր հեռուստացույցով "Գանձերի կղզին" են ցուցադրելու: Կգա՞ս մեր տուն, միասին նայենք:


Ըստ Ազգար Ճահինյանի "Աշխարհի ամենաօրինակելի տղան"

Բառեր

փոփոխություն – изменение
կարարվել – происходить
ուսմասվար – завуч
 (ուսումնական մասի վարիչ)
ակնոցավոր – носящий очки
հրաշալի – чудесный
խաշվել – свариться
եռացրած – кипяченный
սքանչելի – восхитительный
փշոտ – костистый
միասին – вместе
մեկ-մեկ – иногда
անկյուն – угол
բղավել – кричать
աքլոր – петух
մեխվել – остановиться и
 стоять, как пригвожденный
ուշադրություն դարձնել –
 обратить внимание (ծ=g)

արհամարհանք – пренебрежение
 (второе h не читается)
շրջել – повернуть
դեմք – лицо
չորսաչքանի – очкарик (досл.
 четырехглазый)
գեպին – земля
դողալ – дрожать
գլորվել – кататься
հանդիմանել – журить
այնուամենայնիվ – все-таки, тем
 не менее
կոիվ սարքել – устроить драку
շրջվել – повернуться
գանձ – сокровище
գանձերի կղզին – остров
 сокровищ
ցուցադրել – демонстрировать

Սեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

11.Ա) 

Суффикс **-ու** образует прилагательное со значением имеющий что-то на себе, в себе временно или постоянно:



միս "мясо" – մսոտ "мясистый"
 ոսկոր "кость" – ոսկորոտ "костистый, о мясе
 млекопитающих"
 փուշ "заноза, колючка, косточка рыба" – փշոտ
 "колючий, костистый, о рыбе"
 փոշի "пыль" – փոշոտ "пыльный"
 կեղտ "грязь" – կեղտոտ "грязный" (ղ=խ)
 հող "земля, почва" – հողոտ "выпачканный в земле"
 ցեխ "мокрая, уличная грязь" – ցեխոտ "грязный"
 մոխիր "зола" – մոխրոտ, Մոխրոտիկ "Золушка"
 ժանգ "ржавчина" – ժանգոտ "ржавый"
 յուղ "жир" – յուղոտ "жирный"
 также: հիվանդոտ – "болезненный, человек,
 подверженный болезням"
 ցավոտ – "болезненный, причиняющий боль (вопрос,
 лекарство и т.д.)"

Բ) Կետերի փոխարեն օգտագործեք -ու ածանցով համապատասխան ածական.

Вместо точек употребите соответствующее прилагательное с суффиксом -ու:

Այս միի մեջ բոլորովին ոսկոր չկա, ... չի, իսկական դոլմայի միս է: Շատերը հաճախ ձկնից հրաժարվում են, որովհետև ձուկը սովորաբար ... է լինում: Կոշիկներից վրայի ցեխը մաքրիր, հետո առաջ արի, այդ ... կոշիկներով ներս մի գա: Ճաշից առաջ անպայման լվացվիր, ... ձեռքերով չի կարելի հաց ուտել: Սեղանի փոշին չես մաքրել, տես ի՞նչ ... է: Այս բոլոր մեխերի վրա ժանգ կա, ի՞նչու՞ ես պահում այս ... մեխերը: Սունկի ոտքը ... կլինի, հարկավոր է հողից լավ լվանալ, հետո եփել: Ես ինքս յուղ չեմ սիրում և աշխատում եմ ... ճաշեր չեփել: Այս տղան հաճախ է հիվանդանում, մի քիչ ... է: Այս դեղը ... չէ:




Суффиксы **-ական, -երեն, -յան, -ուր** настолько продуктивны, что в разговорной речи возможно образование от них вопросительных местоимений **ինչական** "чье производство", **ինչերեն** "на каком языке", **ինչյան** "как фамилия", **ինչո՞ւր** "чем испачкано".



- Այս երշիկը **ինչական է**, հողանդակա՞ն, թե՞ ֆրանսիական:
- **Ինչերեն** են խոսում այն երիտասարդները:
- Դուք **ինչյան** եք, իսկ ձեր մայրը **ինչյան է**:
- Դեմքդ **ինչո՞ւր է**, ճաշո՞ւտ է, թե՞ ներկուտ:

12.Ա)

Послелого **հետ, համար** (как и **մոտ, վրա, պես, նման**) употребляются с *родительным падежом существительных и местоимений третьего лица, но с дательным падежом местоимений первого и второго лица.*






Բ)



- | | |
|--|--|
| - Ու՞մ համար է այս խաղալիքը: | տղաս → ընկերուհիդ, բույրիկս, դու, դուք, նա |
| - Տղայիս համար է: | ես → մենք, դու, նրանք, տիկին |
| - Ու՞մ համար սուրճ եփեմ: | Արթուրի, մերոնք, ձերոնք |
| - Ինձ համար: | նկարել → եղբորս ուղարկել |
| - Ինչի՞ համար են այս ներկերը: | |
| - Նկարելու համար են: | ընկերներս → կինս, ամուսինս, դու, դուք, նա, նրանք |
| - Ու՞մ հետ ես գնալու այս տարի Բուլղարիա: | |
| - Ընկերներիս հետ: | ես → մենք, մերոնք, Վազգենը, նա, նրանք |
| - Երեկ երեկոյան Վարդանը ու՞մ հետ էր: | |
| - Ինձ հետ էր: | |

13.Ա)

	փոխ առնել "занимать" ≠ փոխ տալ "дать взаймы" փոխանակություն – обмен, փոխանակել – обменять փոխնախագահ – зам. председателя փոխել – менять, поменять, изменить, заменить
	փոխառություն – заем, заимствование
	փոխատվություն – ссуда փոխ առ փոխ, փոխեփոխ – попеременно, посменно փոխարինարար – взаймы
	փոխարինել – заменить
	փոխարինելի ≠ անփոխարինելի (заменяемый ≠ незаменимый)
	փոխարինում – замена, смена փոխանակվել – обменяться
	փոխարքա – наместник, вице-король փոխգնդապետ – подполковник
	փոխակերպել – видоизменить, трансформировать (грам.)
	փոխվել – меняться, измениться, переодеться
	փոփոխել – изменить
	փոփոխական – переменный, изменчивый
	փոխադրել – перевезти, перевести
	փոխադրվել – перевестись
	փոխադրական – перевозочный, транспортный
	փոխադրամիջոց – перевозочное средство
	փոխանցել – передать, перечислять
	փոխանցվել – передаваться, перечисляться
	փոխանցում – перенос, перевод, перечисление
	փոխնորդ – смена белья



Չայոց լեզվում շատ **փոխառություններ** կան պարսկերենից, արաբերենից, հունարենից: Կինս երեք մուշտակ ունի, **փոխեփոխ** հագնում է: – Կարո՞ղ ես ինձ **փոխարինաբար** երեք հարյուր դրամ տալ, մինչև երկուշաբթի: Շնորհակալ եմ, դու **անփոխարինելի** ընկեր ես: Մեր ուսուցչուհին հիվանդ է և մի ուրիշն է նրան **փոխարինում**, դաս **կարդալու փոխարեն** թատերական ներկայացումներ ու խաղեր է կազմակերպում: Երեխաները սիրում են խաղալիքներ, գրքեր, մուլմիսկ հագուստ **փոխանակել**, բայց նման **փոխանակությունը** հաճախ դուր չի գալիս մեծերին: Քո մեծ եղբայրն արդեն գնդապետ է, թե՞ դեռ **փոխգնդապետ** է: Բարեկամս ինձ կոշիկներ նվիրեց, բայց ոտքիս փոքր էին, տարա խանութ **փոխեցի**: Ամառվա ընթացքում երեխաները մեծացել են ու **փոխվել**: Արագ **փոխվիր**, մի սիրուն շոր հագիր, թատրոն ենք գնում: Գիտե՞ս ինչ, եթե տատիկիդ շորը մի քիչ **փոփոխես** ու հագնես, ոչ ոք չի հասկանա, որ դա ինձնուս տարվա շոր է: Հիվանդի դրությունը շատ **փոփոխական** է, բժիշկը դեռ ոչ մի վերջնական բան չի կարող ասել: Տարին վերջացավ, աշակերտները լավ գնահատականներով **փոխադրվեցին** հաջորդ դասարան: Մեքենան հարմար **փոխադրամիջոց** է, իսկ ինքնաթիռը՝ արագ: Այս տոմսակը **փոխանցեք**, խնդրեմ, այն կնոջը: Նրանք արդեն փողը **փոխանցել** են, բայց մենք դեռ չենք ստացել: Ամեն անգամ ճանապարհորդելիս մայրս ինձ երեք կամ չորս **փոխնորդ** է տալիս ու շատ շատ տաք շորեր:

Գ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Вместо точек поставьте одно из слов правого столбца:

1. – Դուք ձեր բնակարանը արդեն ...°: – Չէ, մեր բնակարանը չի ..., ոչ ոք չի ուզում վերջին հարկը գալ:	փոխել
2. Ուսերենում շատ ... կան գերմաներենից, ֆրանսերենից, հունարենից:	փոխվել
3. Միստր Ուայլին թաղման ընկերության ... էր, նա գտնում էր, որ Ջոն կարող է աշխատել միսիս Դիլփլիի ...:	փոխանակել փոխանակվել
4. Մարտ ամսին եղանակը ... է:	փոխարեն փոխնախագահ փոխարինաբար
5. Երկար տարիների բացակայությունից հետո այցելեցի իմ քաղաքը ու տեսա, որ այն ... է, բայց միևնույն ժամանակ ամեն ինչ նույնն է մնացել:	
6. – Ի՞նչ ... ես նկատում մեր հյուրասենյակում: – Ոչ, ջահը չենք ..., ջահը նույնն է մնացել, պարզապես նոր վարագույր ենք կախել:	փոխարինել
7. Մայրս աշխատանքից տուն է գալիս և անմիջապես ... է:	փոփոխություն
8. Ես որոշել եմ այս երեկո մոխրագույն կոշիկները հագնել, բայց հարմար պայուսակ չունեմ, դու քո պայուսակը ... չե՞ս տա ինձ, մի օրով:	փոփոխական
9. Ոչ ոք չի կարող մորը ...:	փոխանցել
10. Տիգրանը այս գիրքը տվեց ինձ, որ քեզ ...:	փոխանցվել
11. Մի շաբաթով ճանապարհորդելիս երկու ... բավական է:	փոխադրվել
12. Շատ հիվանդություններ օդով են ...:	փոխմորդ
13. Տղաս, դու ո՞ր դասարան ես ...:	փոխառություն

Դ) 14. Հետևյալ նախադասություններին ավելացրեք աջ սյունակի մակբայներից մեկը.

К следующим предложениям добавьте одно из наречий правого столбца:

1. Գնում ենք, նստում Ախուրյանի ափին ու դիմացի ավերակներին ենք նայում:	միանգամից
2. Ես քեզ խնդրել էի, որ չուշանաս, բայց դու դարձյալ ժամանակին չեկար:	մեկ-մեկ
3. Գետի մյուս ափից լսվեց պարկապզուկի ձայնը:	այնուամենայնիվ
4. Ամբողջ դասարանը քրքջաց:	հանկարծ
5. Քույրս կգա համալսարանից և ես քեզ նրա հետ կժամոթագնեմ:	քիչ առաջ
6. Նա այստեղ էր, բայց, կարծեմ, արդեն գնաց:	քիչ անց
7. Նրանք արդեն իրար ժպտում էին հին ծանոթների պես:	քիչ հետո



15. Հետևյալ գոյականներից բայ կազմեք.



Կռիվ, ծիծաղ, ճանապարհ, ժպիտ, մեխ, սարք, հաշիվ, դավաճան, ճաշ, ընթրիք, ծառա, հագուստ:



16. Գտեք բառը նրա սահմանումով.



Найдите слово через его определение:

Գտնել, ստեղծել մի բոլորովին նոր բան	հայտնաբերել
Գտնել քեզ համար մի անհայտ բան	հայտնագործել
Գտնել մի բան, որ ուզում էին քեզնից թաքցնել	բացահայտել



17. Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"կատարվել, ծանոթանալ, խաշվել, մեխվել, շրջել, շարունակել, դողալ, գլորվել, փախչել, հանդիմանել, ցուցադրել"**:



Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել այս բայերը: Բերե՛ք օրինակներ:

Փոփոխություն կատարվել, երազանքը կատարվել.



18. Պատմեք տեքստը հիմնվելով բանալի բառերի վրա.



Ուսմասվար, փոփոխություն, ակնոցավոր աղջիկ, ծանոթանալ, ճամբար, ամենագեղեցիկ ու ամենահրաշալի, հարց, պատասխան, հետաքրքրիչ ու հրաշալի խոսքեր, չկարողանալ ասել, Ամենօրինակելի տղան, միշտ միասին, տուն գնալ, փողոցի տղա, բղավել, ուշադրություն չդարձնել, արհամարհել, շարունակել ճանապարհը, չորսաչքանի, գլորվել ասֆալտի վրա, հանդիմանել, կռիվ սարքել, հրաշալի ժպիտ, "Գանձերի կղզին":

Урок 20. Քիաներորդ դաս

Грамматика

"Будущее в прошлом" желательного и сослагательного наклонений: образование и употребление.

Суффиксы, образующие наречия -արար, -ապես, -որեն.

Относительное местоимение որ и его склонение. Послелог մասին.

Тексты

Լեռներում է իմ սիրտը (Վիլյամ Սարոյան)

Սարոյանը խոսում է Սարոյանի հետ

Стихи

Լիներ հեռու մի անկյուն (Հովհ. Թումանյան)

Գայիր անցնեիր վրանիս մոտով (Վ. Տերյան)

Պատահարար են պատահում կյանքում (Պ. Սևակ)

"Будущее в прошлом" желательного и сослагательного наклонений

Ընթացիկի և ենթադրականի անցյալի ապառնի

Образование времени «будущего в прошлом» желательного наклонения

գրել		կարդալ	
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև	утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև
գրեի*	չգրեի**	կարդայի*	չկարդայի
գրեիր	չգրեիր	կարդայիր	չկարդայիր
գրեր	չգրեր	կարդար	չկարդար
գրեինք	չգրեինք	կարդայինք	չկարդայինք
գրեիք	չգրեիք	կարդայիք	չկարդայիք
գրեին	չգրեին	կարդային	չկարդային

Образование "будущего в прошлом" сослагательного наклонения

գրել		կարդալ	
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև	утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև
կգրեի**	չէի գրի	կկարդայի	չէի կարդա
կգրեիր	չէիր գրի	կկարդայիր	չէիր կարդա
կգրեր	չէր գրի	կկարդար	չէր կարդա
կգրեինք	չէինք գրի	կկարդայինք	չէինք կարդա
կգրեիք	չէիք գրի	կկարդայիք	չէիք կարդա
կգրեին	չէին գրի	կկարդային	չէին կարդա

!*Полугласный j между гласными обычно слышится, но не пишется; он пишется только после гласных ш и п.

!**Произносится со скрытым слогом (после частиц կ- и չ-): կգգրեի չգգրեի.

Употребление времени «будущего в прошлом» желательного наклонения



Если действие в желательном будущем выражает зависимость от желания говорящего, от реального условия и т.д., то временем "будущее в прошлом" можно выразить:

① сожаление о совершенном или несовершенном в прошлом действии (в зависимости от того, в утвердительной или отрицательной форме стоит глагол в желательном наклонении):

Դու էլ գնայիր նրանց հետ: "Ты бы тоже пошел с ними". (Они ушли, а ты нет. Жаль!)

Չասեիր, թե որտեղ է գտնվում փողը, ինքդ տայիր: "Ты бы не сказал, где лежат деньги, сам бы дал."



② относясь к настоящему или будущему, время "будущее в прошлом" выражает действие, зависящее от нереального условия, например мечту, которую сам говорящий оценивает, как нереализуемую:



Լինե՛ր հեռու մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար քուն,
Երազի մեջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն:

Был бы отдаленный угол,
Был бы детский невинный сон,
В счастливом сне
(Было бы) дружное, мирное
человечество.

(Հովհաննես Թումանյան)



Լինե՛ի չորան սարերում հեռու,
Գայիր, անցնե՛իր վրանիս մոտով,
Իրար նայե՛ինք անուշ կարոտով,
Քնրու՛շ ժպտայինք հանկարծ
իրարու:

Был бы я пастухом далеко в
горах,
Ты пришла бы и прошла мимо
моего шатра,
Посмотрели бы мы друг на
друга со сладостной тоской,
Нежно улыбнулись бы вдруг
друг другу.

(Վահան Տերյան)

③ относясь к настоящему моменту, форма второго лица этого времени может выразить также очень вежливую, очень неназойливую просьбу, т.к. этим временем говорящий подчеркивает, что он не настаивает на совершении данного действия.

Ծաղիկները ջրե՛իր: Սորդ մի նամակ գրե՛իր:

Употребление "будущего в прошлом" сослагательного наклонения



Если будущим временем желательного наклонения и будущим временем сослагательного наклонения мы выражаем условие и следствие, которые представлены как возможные, ожидаемые, реальные, то временем "будущее в прошлом" желательного и сослагательного наклонений, наоборот, выражаются такие условие и следствие, которые представлены как невозможные, неожиданные, нереальные.

1 Если действие относится к прошлому, ясно, что уже невозможно вернуть то время, а следовательно, и то условие:


Եթե երեկ անծրև չգար, կգնայինք ման գալու:




2 Если действие относится к настоящему или будущему, временем "будущее в прошлом" говорящий выражает, что он не верит в реальность условия. Иными словами, если будущее время сослагательного наклонения обозначает предполагаемое действие в будущем, которое МОЖЕТ совершиться при определенном условии, то прошедшим временем сослагательного наклонения обозначается действие, которое МОГЛО БЫ совершиться при определенном условии (выраженном прошедшим же временем желательного наклонения), но не совершается. Ср.

Եթե հիմա անծրև չգար, կգնայինք ման գալու:
(Բայց, ցավոք, անծրև է գալիս:)


Եթե վաղը ազատ լինեի (ժամանակ ունենայի, կարողանայի), միասին կայցելեինք բժշկուհուն:
(Բայց, ցավոք, վաղը ազատ չեմ լինի, ժամանակ չեմ ունենա, չեմ կարողանա:)



Առաջադրանքներ և վարժություններ



(Մենք) Փարիզում լինել:



Երանի՜ (Գոնե ..., Ու՞ր է, թե ..., Ի՞նչ կլինեի ...) Փարիզում լինեիմք:

(Մենք) Փարիզում լինել: (Որդիս) համալսարան ընդունվել: Դուք, մեզ հետ ծովափ գալ: (Այն աղջիկը) շրջվել, ինձ ժպտալ: (Ուսուցչուհին) ամբողջ դասարանի առաջ ինձ չհանդիմանել: (Նարինեն) արհամարհանքով իմ կողքից չանցնել, ինձ մի քիչ ուշադրություն դարձնել: Այս երեկո հեռուստացույցով "Գանձերի կղզին" ցուցադրել:

2.

Երեք շաբաթ մնացինք
Հայաստանում, Սևան չգնացինք:
Տղաները ոչխար են մորթել:



- *Գնայիք*, ինչու՞ չգնացիք:
- *Չմորթեին*, ինչու՞ են մորթել:

Երեք շաբաթ մնացինք Հայաստանում, Սևան չգնացինք:
Տղաները ոչխար են մորթել: Գյուղացիները քննիչին չպահեցին
հացի: Անտառամեջի նախագահը ցուցմունքը փոխելու համար
տուգանք վճարեց: Այրին ամեն օր կաթին մի շերտի ջուր էր
խառնում: Ձգույշ չեղա, արագ վագեցի ու ընկա, աստիճաններից
գլորվեցի: Շրջագգեստս չփոխեցի, այս շորով կովը կթեցի, շորս
կեղտոտեցի: Նամակ չգրեցիր, հարսանիքիդ չհրավիրեցիր:

3. Ա)

Արդեն ուշ է, մութ է, Ձեզնից մեկը
օրիորդին (ճանապարհել):



Արդեն ուշ է, մութ է, Ձեզնից
մեկը օրիորդին *ճանապարհեր*:

Արդեն ուշ է, մութ է, Ձեզնից մեկը օրիորդին (ճանապարհել): Իմ
ազգականը այսօր Բուլղարիայից է գալիս, (զնալ, մենք) կայարան,
(դիմավորել): Թեյը քաղցր չէ, (դու) մի քիչ շաքար (ավելացնել):
Մայրդ հիվանդ է, նրան (խմանել): (Դու) հարևանին (կանչել), (դուք)
միասին այս ծորակը (кран) (սարքել):

Բ)

- Որտե՞ղ է Օպերայի թատրոնը:



- *Չի՞ք ասի*, թե որտեղ է
Օպերայի թատրոնը:

- Որտե՞ղ է Օպերայի թատրոնը:
- Որտե՞ղ է հինգերորդ "Ա" դասարանը:
- Որտե՞ղ է փոստատունը:
- Որտե՞ղ է Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը:
- Որտե՞ղ է Մատենադարանը:

Գ)

- Այս նամակը գցիր
փոստարկղը, խնդրեմ:



- Այս նամակը *գցեիր*
փոստարկղը:
- Այս նամակը *չի՞ր գցի*
փոստարկղը:

- Այս նամակը գցիր փոստարկղը, խնդրեմ:
- Սենյակում շոգ է, դուռը բացեք, խնդրեմ:
- Պատմեք ինձ, խնդրեմ, Անի քաղաքի մասին:
- Վերարկուների համար կախիչ են գնել, մեխիր, խնդրեմ, դռան
եղև:



4. Ընտրեք համապատասխան բայաձևը.




Եթե բարձր չբղավեիր, քույրիկին չէիր արթնացնի: 

Եթե բարձր չբղավեիր, քույրիկին ...:	կարթնացնեիր / չէիր արթնացնի
Եթե Գարնանային փողոց չլիներ, Անահիտն ու Արմենը այն ...:	կգտնեին / չէին գտնի
Եթե երիտասարդը գիտնականի բոլոր հարցերին կարճ ու գրագետ չպատասխաներ, գիտնականը նրան ... իբրև օգնական:	կվերցներ / չէր վերցնի
Եթե Ուկրաին չզանգատվեր, տղաներին կալանքի ...:	կվերցնեին / չէին վերցնի
Եթե այն զուռնաչին հայ չլիներ, նա ... Քոչարի նվագել:	կկարողանար / չէր կարողանա
Եթե սահմանապահները հայ լինեին, նրանք խեղճ զուռնաչու վրա ...:	կգոռգոռային / չէին գոռգոռա
Եթե Անտառամեջի նախագահը դատարանին տուգանք չվճարեր, տղաներին ...:	բաց կթողնեին / բաց չէին թողնի
Եթե ոչխարների դեպքը չլիներ, Պավլեն իր ընտանիքը ... քաղաք:	կառներ ու կգնար / չէր առնի ու գնա
Եթե Ջոն չիրաժարվեր իր աշխատանքից, միսիս Յիլփլիին ... թաղման ընկերությունից:	կվճնդեին / չէին վճնդի
Եթե Ջոն ուշադրություն չդարձներ միսիս Յիլփլիի արցունքներին, նա ... իր աշխատանքը:	կկորցներ / չէր կորցնի





5. Կապակցեք համապատասխան գլխավոր և երկրորդական նախադասությունները.



Եթե տղաները քաղցած չլինեին, ոչխարը չէին մորթի: 

✓ Եթե տղաները քաղցած չլինեին, ...	ճանապարհ կընկնեինք:
Եթե գյուղում ապրեի, ...	հիմար-հիմար պատասխաններ չէր ստանա:
Եթե արևը ծագեր, ...	հայը չէր թողնի իր հայրենիքը ու գաղթական չէր դառնա:
Եթե տղան դասի ժամանակ չհորանջեր, ...	✓ ոչխարը չէին մորթի:
Եթե նա հիմար-հիմար բաներ չասեր, ...	մի փոքրիկ տուն կկառուցեի:
Եթե բախտը հային մի քիչ ժպտար, ...	դասարանը չէր քրքրջա:


6. Ա) 




Եթե ամռանը մի փոքր քամի (փչել), այսքան շոգ չէր լինի:

→ Եթե ամռանը մի փոքր քամի *փչեր*, այսքան շոգ չէր լինի:

Եթե ամռանը մի փոքր քամի (փչել), այսքան շոգ չէր լինի:
Եթե ձմռանը քամի (չփչել), այսքան ցուրտ չէր լինի:
Եթե այրին այծի կաթին ջուր (չխառնել), Աստված նրան չէր պատժի:
Եթե Ամենասօրինակելի տղան վախկոտ (չլինել), նա ինքը կպաշտպաներ իր ընկերուհուն:
Եթե Ամենահրաշալի Աղջիկը (ցանկանալ), տղան կուտեր ամենափշոտ ձուկը առանց որևէ բան համելու:


Բ) 




Եթե Պըլը Պուղին իր հարևանին չվստահեր, նա (թույլ չտալ) նրան իր բարձի տակից փող վերցնել:

→ Եթե Պըլը Պուղին իր հարևանին չվստահեր, նա *թույլ չէր տա* նրան իր բարձի տակից փող վերցնել:

Եթե Պըլը Պուղին իր հարևանին չվստահեր, նա (թույլ չտալ) նրան իր բարձի տակից փող վերցնել:
Եթե ուսանողուհին այդպես գեղեցիկ ու տխուր չծամեր, տղաները (չսիրահարվել) նրան:
Եթե մյուս երիտասարդներն էլ կրթված ու քաղաքավարի լինեին, նրանք (բարձրացնել) գետնին ընկած գիրքը:
Եթե քննության ժամանակ ուշադիր լինեի, (չսխալվել):
Եթե Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերը չգտներ, հայ մանուկները հայ (չմեծանալ):
Եթե նա չուշանար, մենք (հանդիպել):

7. 



Եթե հարցնես, կասեն:

→ Եթե *հարցնեիր*, կասեին:

Եթե հարցնես, կասեն:
Եթե դարակունդ կարգ ու կանոն լինի, տետրերդ չեն կորչի:
Եթե ինձ զգուշացնեն, ոչինչ չեն հարցնի:
Եթե այս խուլ անապատում դուք ինձ քաղաքակրթության մի ճառագայթ ցույց տաք, ես ձեզ երախտապարտ կլինեմ:
Եթե նրան չհամոզեմ, նա չի գա օդանավակայան քեզ դիմավորելու:
Եթե այն տղայի խոսքերին ուշադրություն չդարձնես, գետինը ոտքերիդ տակ չի դողա ու դուք էլ ասֆալտին չեք գլորվի:
Բայց եթե ես այն տղայի հետ կռիվ չսարքեմ, աշխարհի Ամենահրաշալի աղջիկն ինձ չի հրավիրի իրենց տուն միասին հեռուստացույց նայելու:



և **Լեռներում է իմ սիրտը**

1914 թվականին մի ծերունի երևաց մեզ մոտ՝ Սան Բենիտո փողոցում: Նա գնում էր փող փչելով: Ու հանկարծ կանգ առավ մեր տան առաջ:

– Երիտասարդ, մի բաժակ ջուր բերե՞իք ծերուկիս, որի սիրտն այստեղ չէ, այլ լեռներում:

– Ո՞ր լեռներում, – հարցրի ես:

– Շոտլանդական, – ասաց ծերունին: – Դե, մի բաժակ ջուր բերեք:

– Իսկ ի՞նչ է անում ձեր սիրտը շոտլանդական լեռներում:

– Թախծում է, – ասաց ծերունին: – Խնդրում եմ մի բաժակ սառը ջուր տվեք:

– Իսկ որտե՞ղ է ձեր մայրը, – ասացի ես:

– Իմ մայրը Տալսում է, Օկլահոմայի նահանգում, բայց նրա սիրտը այնտեղ չէ:

– Հապա որտե՞ղ է, – հարցրի:

– Շոտլանդական լեռներում, – ասաց ծերունին: – Երիտասարդ, ես խիստ ծարավ եմ: Ծարավից մեռնում եմ:

– Ջոննի, – հանկարծ ասաց հայրս, – վազիր նպարավաճառի մոտ, վերցրու մի հատ ֆրանսիական բատոն և մի ֆունտ պանիր:

– Փող տուր, – ասացի ես:

– Պարոն Կոզակին ասա՛ ապառիկ բաց թողնի:

– Լավ, կփորձեմ, – ասացի ես:

Ես մտա կրպակ: Պարոն Կոզակն արթնացավ ու աչքերը բարձրացրեց ինձ վրա:

– Պարոն Կոզակ, – ասացի ես, – ի՞նչ կանե՞իք, եթե հանկարծ ընկնե՞իք Չինաստան և ոչ մի գրոշ փող չունենայիք գրպաններումդ: Մի՞թե հույս չե՞իք դնի, որ այնտեղի քրիստոնյաներից մեկը մի ֆունտ բրինձ կտա ձեզ:

– Ի՞նչ ես ուզում, – հարցրեց պարոն Կոզակը:

– Ես հենց այնպես, խոսելու համար, – ասացի: – Դուք հավանորեն կիուսայիք, որ որևէ մեկը անպայման կօգնի՞ ձեզ, ճիշտ է, չէ՞, պարոն Կոզակ:

– Գոնե մի քիչ փող բերե՞լ ես, – հարցրեց նա:

– Խոսքը փողի մասին չի, պարոն Կոզակ, – ասացի ես, – խոսքը Չինաստանում գտնվող՝ մարդու մասին է:

– Ոչինչ չեմ իմանում, չեմ լսել – ասաց պարոն Կոզակը:

– Ի՞նչ կանե՞իք նման դրության մեջ Չինաստանում, – հարցրի ես:

– Ի՞նչ գործ ունեմ այնտեղ, Չինաստանում, – ասաց նա:

– Ենթադրենք, – ասացի, ընկել եք Չինաստան ու խիստ սոված եք: Կարո՞ղ եք պատկերացնել, որ որևէ մի քրիստոնյա ձեզ բաց թողնի առանց զոնե մի ֆունտ բրնձի, հը՞, պարոն Կոզակ:

– Երևի ոչ, – ասաց պարոն Կոզակը: – Բայց Ջոննի, դու Չինաստանում չես, քո հայրը նույնպես: Ես այլևս ապառիկ բաց չեմ թողնի ձեզ:

– Պարոն Կոզակ, – ասացի, – դուք ինձ ճիշտ չհասկացաք: Մթերքի մասին խոսք անգամ չի եղել: Ես ասում եմ, պատկերացնենք, թե դուք Չինաստանում եք, ձեր չորս կողմը կռապաշտներ են, և դուք նրանց մեջ՝ մեռնում եք սովից...

– Մենք Չինաստանում չենք, – ասաց պարոն Կոզակը: – Այստեղ, այս երկրում ապրելու համար հարկավոր է աշխատել: Ամերիկայում բոլորն էլ աշխատում են:

– Պարոն Կոզակ, – ասացի ես, իսկ ի՞նչ կանեիք, եթե միայն ձեր կյանքը պահպանելու համար կարիք ունենայիք ինչ-որ ֆրանսիական բատոնի ու մի ֆունտ պանրի: Մի՞թե կքաշվեիք այդ բանը խնդրել քրիստոնեական միսիոներից:

– Կքաշվեի, – ասաց պարոն Կոզակը, – կամաչեի խնդրել:

– Դե, դե, դա արդեն լավ չի, պարոն Կոզակ: Մի՞թե դուք կմեռնեիք հեռու ընտանիքից, օտարության մեջ, Չինաստանում: Օ՛, պարոն Կոզակ:

– Քեզ ի՞նչ է հարկավոր, Ջոննի, – հարցրեց պարոն Կոզակը, – ինչքա՞ն փող ես բերել:

– Պարոն Կոզակ, – ասացի ես, – ախր ես չեմ եկել գնումներ կատարելու: Գիտեք, մեկ-մեկ սիրում եմ պարզապես փիլիսոփայել: Տվեք ինձ մեկ ֆրանսիական բատոն և մի ֆունտ պանիր:

– Վճարումը կանխիկ, – ասաց պարոն Կոզակը:

– Իսկ ընդհանրապես ինչպե՞ս եք, պարոն Կոզակ, ինչպե՞ս է ձեր ընտանիքը, – ասացի ես:

– Հոյակապ, Ջոննի, բոլորն էլ լավ են:

– Որքա՞ն ուրախ եմ ձեզ համար, պարոն Կոզակ, – ասացի ես, – և մի շիշ գարեջուր մեր հյուրի համար:

– Չէ՛, գարեջուր տալ չեմ կարող:

– Ի՞նչ եք ասում, ո՞նց թե չեք կարող:

– Չեմ կարող, – ասաց պարոն Կոզակը, – ես քեզ բաց կթողնեմ երեկվա բատոնն ու մի ֆունտ պանիր, ուրիշ ոչինչ: Իսկ ինչո՞վ է զբաղվում քո հայրը, երբ աշխատանք չունի:

– Իմ հայրը բանաստեղծություններ է գրում, պարոն Կոզակ, նա աշխարհի մեծագույն բանաստեղծներից մեկն է:

– Իսկ ե՞րբ է փող ստանալու, – հարցրեց պարոն Կոզակը:

– Երբեք, – ասացի ես, – չի կարելի լինել մեծ և դրա համար փող վերցնել:

Ըստ Վիլյամ Սարոյանի "Լեռներում է իմ սիրտը"

¹Չինաստանում գտնվող – находящийся в Китае

Բառեր

փող – зд. труба

թախծել – грустить

նահանգ – штат

խիստ – зд. очень

նպարավաճառ – бакалейщик

ապառիկ – в кредит

բաց թողնել – отпустить

կրպակ – киоск

հույս դնել – возлагать надежду

քրիստոնյա – христианин

բրինձ – рис

հավանորեն – вероятно


հուսալ – надеяться

անպայման – обязательно


մասին – о (послелог)
 դրություն – положение
 նման դրություն – подобное
 положение
 ենթադրել – предположить
 մթերք – продовольствие
 կռապաշտ – идолопоклонник
 երկիր – страна
 պահպանել – сохранить
 կարիք ունենալ – нуждаться
 քաշվել – стесняться, робеть
 քրիստոնեական –
 христианский
 միսիոներ – миссионер

օտարության մեջ – на чужбине
 ախր – ведь
 գնում – покупка
 գնումներ կատարել – делать
 покупки
 փիլիսոփայել – философствовать
 վճարումը կանխիկ – оплата
 наличными
 ընդհանրապես – вообще (դ=թ)
 գարեջուր – пиво
 ո՛նց թե – как так?
 զբաղվել – заниматься
 բանաստեղծություն –
 стихотворение

Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

8.Ա) 

Суффиксы -աբար, -ապես, -որեն образуют наречия образа действия.		
սովորաբար	վերջապես	ազնվորեն
բարեկամաբար	վերջնականապես	լրջորեն
ընկերաբար	ընդհանրապես	հավանորեն կամ
որդիաբար	պարզապես	հավանաբար
եղբայրաբար	առանձնապես	անկեղծորեն
պատահաբար	"особенно"	"искренне"
"случайно"	տնտեսապես	փաստորեն
անհրաժեշտաբար	"экономически"	"фактически"
"по	մոտավորապես	(от փաստ
необходимости"	"приблизительно"	"факт")

 Բ) Կետերի փոխարեն գրեք այդ սյունակի բառերից մեկը.

1. Հայրը որոշեց որդու հետ ... խոսել կյանքի դժվարությունների մասին:	մոտավորապես
2. 1920թ. արևելյան Հայաստանում ... յոթ հարյուր հազար հայ էր մնացել:	տնտեսապես
3. Քույրս ... սուրճ չի խմում:	լրջորեն
4. Հայ եկեղեցին աշխատում է օտարության մեջ հայերին ... օգնել:	պարզապես
5. Ես ուզում եմ ... ասել, որ նա մեղավոր չէ:	ընդհանրապես
6. Նա այսօր լավ տեսք չունի, ... հիվանդ է:	բարեկամաբար
7. Մենք ... խոսեցինք ու ամեն ինչ պարզեցինք:	հավանորեն



Պատահաբար են պատահում կյանքում

Մի՛շտ էլ սիրածին պատահաբար են պատահում կյանքում
Ու հրաժեշտ են տալիս սիրածին անհրաժեշտաբար...

Թե կուզես՝ լռիր,

Թե կուզես՝ ոռնա՛,

Թե կուզես՝ ծամիր սեփական լեզուդ,

Թե կուզես՝ խցիր բերանդդ բարձով,

Թե կուզես՝ ոտքով հարվածիր բարձին.

Հավատացյալ ես՝ հայհոյիր աստծուն,

Հավատացյալ չես՝ աստծուն հավատա.

Թե կուզես՝ ուզիր էլ չուզել – իզու՛ր,

Թե կուզես՝ ուզիր էլ չապրել – իզու՛ր...

Ու, եթե կուզես, ապրելն այս է հենց,

Եվ սերն իսկական հենց այս է, որ կա.

– Պատահաբար ես պատահում կյանքում,

Անհրաժեշտաբար հրաժեշտ տալիս...

Պարույր Սևակ

Բառեր

սիրած – любимый

պատահել – зд. встречаться

հրաժեշտ փալ – прощаться

ոռնալ – выть

սեփական – собственный

խցել – затыкать

հարվածել – ударять

հավատացյալ – верующий

հայհոյել – ругаться

աստված (աստծո՞ւ, աստծուն) – бог

իզուր – напрасно

իսկական – настоящий

В жизни встречаемся мы случайно

В жизни встречаемся мы случайно,

А расстаемся – волей-неволей.

Хочешь – молчи,

Хочешь – кричи,

Если поможет крик.

Хочешь – рви зубами подушку,

Хочешь – уткнись в подушку

И прикуси язык.

Если ты верующий – кляни бога,

Если неверующий – поверь.

Хочешь не хочешь – одна дорога,

Жить не жить – все равно теперь!

Поздно что-нибудь изменить,

Дело это пропащее.

Но, знаешь, это и есть – жить.

Это и есть любовь. Настоящая.

В жизни встречаемся мы случайно,

А расстаемся – волей-неволей.

Перевод О. Чухонцева

9.Ա) ▫

Սա չորրորդ **դարձին է, որ** նստում են: = Սա չորրորդ **դարձին է, դարձի** են նստում:

NB: ▫

Относительное местоимение **որ** связывает относительное придаточное предложение с главным, в котором можно указать слово, представленное в относительном придаточном предложении относительным местоимением (антецедент).


Местоимение **որ** склоняется в единственном и множественном числе.

Բ) ☞

Неперсонифицированное склонение	Персонифицированное склонение	ед. ч.	мн. ч.
Ուղղ. - հայց . հ. им.- вин. ք.	Ուղղ. հ. им. ք.	որ(ը)	որոնք (որ)
Սեռ.-տր. հ. род.-дат. ք.	Սեռ.-տր.- հայց . հ. род.-дат.- вин. ք.	որի(ն)	որոնց
Բաց. հ. исх. ք.		որից	որոնցից
Գործ. հ. тв. ք.		որով	որոնցով
Ներգ. հ*. местн ք.		որում	որոնցում

!*Часто прибегают к обороту **որի մեջ, որորնց մեջ**

Գ) ☞




Մի բաժակ ջուր բերեիք ծերուկիս: Իմ սիրտն այստեղ չէ:



Մի բաժակ ջուր բերեիք ծերուկիս, **որի** սիրտն այստեղ չէ:

1. Մի բաժակ ջուր բերեիք ծերուկիս: Իմ սիրտն այստեղ չէ:
2. Մենք դիմում ենք այն տղաներին: Այն տղաները ամբողջ օրը պեղումներ են կատարում:
3. Ես գնում եմ դասի: Դասից առաջ ուզում եմ դասախոսի հետ իմ կուրսային աշխատանքի մասին խոսել:
4. Սա այն գրիչն է: Այն գրչով դու քո տնային աշխատանքն ես գրել:
5. Դու կվերցնես այն զամբյուղը: Այն զամբյուղի մեջ շշերն են:
6. Սա այն աղջիկն է: Այն աղջկան ես ամեն առավոտ հանդիպում եմ աշխատանքի գնալիս:
7. Մեր դասարանի ֆուտբոլիստը դարձավ երգիչ: Մեր ֆուտբոլիստով ամբողջ դպրոցն էր հպարտանում:
8. Վերջապես գտանք այն գրքերը: Այն գրքերից մեկը քեզ էի խոստացել:
9. Կան մարդիկ: Այդ մարդկանց համար ոչ մի սուրբ բան չկա:
10. Սա այն աղջիկն է: Այն աղջկա հետ ծանոթացել եմ ճամբարում:
11. Սա այն աղջիկն է: Առանց այն աղջկա տղան թախծում է:

10.Ա) 


գործ – дело
գործարան – завод
գործիք – инструмент



գործնական – деловой (о неодушевл. предметах)
գործարար – деловой, практичный (о людях)
գործունյա – деловой, деятельный, энергичный (о людях)



գործունեություն – деятельность
գործադիր (օրգան, հանձնաժողով) – исполнительный (орган, комитет)
գործել – 1. действовать, 2. вязать
գործակալ – агент
գործակալություն – агентство
գործիչ – деятель
գործող – действующий
գործած – связанный
գործվածք – трикотаж
գործվածքեղեն – трикотажные изделия

 Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

1. Սա շատ ... առաջարկություն է, չի կարելի այն մերժել:
2. Նրա ամուսինը ... մարդ է, կարծ ժամանակուն իր նպատակին հասավ:
3. Ընկերս թողեց իր դասախոսական աշխատանքը համալսարանում և ... խանութ բաց արեց:
4. Բայց նա ... մարդ չէ, ոչինչ չստացվեց:
5. Մեր դպրոցից ոչ հեռու ... եկեղեցի կա:
6. Բազազ Արտեմն իր խանութում ... էր վաճառում, իսկ Գիքորը խանութի դռանը՝ հաճախորդ էր կանչում:
7. Ամռանը սարում ... բրդյա շորերով էլ ցուրտ է:
8. Դրոն դաշնակցական հայտնի ... էր:
9. Յուրաքանչյուր պետություն ունի իր գաղտնի ...:
10. Ֆրանս-պրես ... հայտնում է, որ թշնամու բանակում ... են գաղտնի ...:
11. Այս հոդվածի հեղինակը վեր է լուծում (анализирует) ... հանձնաժողովի ...:

գործնական
գործարար
գործունյա
գործունեություն
գործել
գործակալներ
գործակալությունը
գործադիր
գործիչ
գործող
գործած
գործվածք
գործվածքեղեն



Գ) 

Մտապահե՛ք նաև. Запомните также

ի՞նչ գործ ունեմ (ունես, ...) – какое мне (тебе...) дело до ...?
ես (դու...) գործ չունեմ (չունես...) – мне (тебе...) нет дела до...

իմ (քո...) ի՞նչ գործն է – какое мое (твое...) дело?

իմ (քո...) գործը չէ – не мое (твое...) дело

ի՞նչ գործի ես – чем ты занят?

գնա գործիդ – иди своей дорогой

տան գործ – домашние (хозяйственные) дела

գործի (աշխատանքի) լինել – быть на работе

Դ) Լրացրե՛ք երկխոսությունները համապատասխան արտահայտություններով.



• – Լսի՛ր, այսօր մեր հարևանի տատիկի եղբոր աղջկա ամուսնու քրոջ տղայի հարսանիքն է: Չգնա՞նք հարսանիք:
 – ... ձեր հարևանի տատիկի եղբոր աղջկա ամուսնու քրոջ տղայի հարսանիքին:

- – Ալլո, Սահակը տա՞նն է:
- Ոչ, տանը չէ:
- Իսկ որտե՞ղ է:
- ...:



- – Այսօր ..., ի՞նչ ես անում:
- ..., ինչպես միշտ:



- – Եյ, աքլորներ:
- Այ տղա, կո՞իվ մի սարքիր, ...:
- – Ի՞նչ է գրում կինդ նամակում:
- ...:

• – Մայրիկ, ես ուզում էի քո երեկոյան շրջագգեստը ավելի գեղեցկացնել, ու դրա համար քո շրթներկով (губная помада) նրա վրա վարդեր նկարեցի:
 – Ախր, ..., ինչու՞ ես իմ զգեստը վերցնում:

11.Ա)

Род.п. + մասին	
հայրենիքի ընտանիքի իմ, մեր քո, ձեր նրա, նրանց	
մասին, ու: այդ մասին	




Խոսել այդ մասին, մի բանի մասին կամ մի բանից: Նա եկավ մեր տուն և երկար խոսեցինք մեր հին-հին ծանոթներից: Այս գիրքը բժիշկների մասին է: Այսօրվա թերթում Հայաստանի տնտեսության մասին մի մեծ հոդված (статья) կա: – Եթե իմ մասին խոսք լինի, ոչինչ չասես, լա՞վ: – Մի՛ անհանգստացիր, քո մասին ոչ ոք չի հարցնի: Այդ մասին խոսք անգամ չի կարող լինել: Ջոննին առանց մթերքի մասին խոսք բաց անելու կարողացավ հաց ու պանիր վերցնել պարոն կոզակից:


Բ)

առանց	<ul style="list-style-type: none"> սխտորի, մածոնի (род.-дат. п.) ընտանիքի, ընկերոջ (род.-дат.-вин. п.) ինձ, մեզ (дат.-вин. п.) քեզ, ձեզ (дат.-вин. п.) նրա, նրանց (род. п.) 	
		համար հետ վրա մոտ

9) 




Այս հոդվածը մեր մասին է:	մենք → դուք, նրանք, ուսուցիչներ, մեր քաղաքը
Նա ձեզ համար մի գեղեցիկ նվեր է գնել:	դուք → ես, դու, նա, մենք, Անահիտը, Վազգենենք, իր քույրը
Ես չեմ կարողանում նրա հետ երկու ընկերացիս հետ խոսել:	նա → նրանք, Պողոսը, դու
Եկեք երեկոյան հավաքվենք մեր տանը, մեզ մոտ տաք է:	մենք → ես, դու, դուք, պապոնք, Հակոբենք, նա, նրանք

12.Ա) 

հայ լուսավորչական եկեղեցի – армяно-григорианская церковь

ո՞վ	ի՞նչ փաճար, պետություն, և այլն	ի՞նչ կրոն
քրիստոնյա	քրիստոնեական	քրիստոնեություն
ուղղափառ "православный"	ուղղափառ "православный"	ուղղափառություն "православие"
կաթոլիկ "католик"	կաթոլիկ "католический"	կաթոլիկություն "католичество"
բողոքական "протестант"	բողոքական "протестантский"	բողոքականություն "протестантство"
մահմեդական կամ մուսուլման	մահմեդական	մահմեդականություն
կռապաշտ	կռապաշտական	կռապաշտություն
հեթանոս "язычник"	հեթանոսական "языческий"	հեթանոսություն "язычество"

Բ)  Պատասխանե՛ք հարցերին.

Ո՞վ էր Տրդատը, հեթանո՞ւ, թե՞ քրիստոնյա: Ո՞վ էր Գրիգոր Լուսավորիչը: Իսկ Գրիգոր Նարեկացի՞ն: Ո՞վ էր Տիգրան Մեծը, հեթանո՞ւ, թե՞ քրիստոնյա: Ո՞վ էր Մուհամեդը: Ինչպիսի՞ պետություն էր Ուրարտուն:



13. Շեղագիր բառերի փոխարեն օգտագործեք իմաստով նույն կամ մոտ բառեր.



Պարոն Կոզակը նպարեղենի *խանութ* ուներ:
 Ծերունին *շատ* հոգնած էր ու ծարավ:
 Տղաները նայում էին ուսանողուհու գեղեցիկ ոտքերին ու *տխրում*:


Նվագախմբի առջևից *չեփոր* փչելով մի փոքրիկ տղա էր գնում:
 – Առ այս բատոնն ու գնա, իսկ գարեջուր *չե՛մ տա*, – *հավանաբար* ասաց պարոն Կոզակը, – և մյուս անգամ *հույս չունենա*, թե քեզ էլի ապառիկ որևէ բան *կվաճառեմ*:



14. Շեղագիր բառերի փոխարեն օգտագործեք հակառակ իմաստով բառեր.



Կիրակի օրը մարդիկ *գալիս են* շուկա՝ մի բան *վաճառելու* կամ պարզապես իրար հանդիպելու, խոսելու ու փիլիսոփայելու:
 Այս կրպակում ոչինչ *ապառիկ* բաց չեն թողնում:
 Նա ապրում է *իր հայրենիքում*:

15. Ա) 

պահել – беречь, хранить, держать
 հաշիվը պահել (հաշվապահ)
 մեղու (կով, ոչխար, երեխա) պահել – иметь, воспитывать
 պահարան



պահակ – сторож
 պահեստ – склад, запас
 պահեստախցիկ – багажник
 պահասենյակ – камера хранения
 պահածո – консервы
 պահապան – хранитель, стража
 պահպանողական – консервативный



Պահեստի պահակն ասաց, որ **պահեստում** շատ **պահածոներ** կան: Գրքերդ **գրապահարանում** պահիր, ինչու՞ ես դրել **զգեստապահարանը**: Կարո՞ղ ես այս վերջին ճամպուրկը **ծնկներիդ** վրա **պահել**, **պահեստախցիկում** այլևս տեղ չկա, հետո բոլոր ճամպուրկներն ու մեծ պայուսակները կհանձնենք **պահասենյակ**: Հայրս **պահպանողական** հայացքներ ունի: Մենք աշխատում ենք մեր դասասենյակում **մաքրություն պահպանել**:

Դ) Կետերի փոխարեն գրեք այսուհետևի բառերից մեկը.

1. Ուսուցչուհին մի քանի բոլորով դուրս եկավ դասարանից և խնդրեց լռություն ...:	պահակ
2. Մայրիկն ամեն ամառ շատ ... է պատրաստում:	պահել
3. Ձոն ասաց միսիս Հիլփիին, որ գնում է իր քեռու մոտ՝ նրա նպարեղենի խանութի հաշիվները ...:	պահածո
4. Ճիշտ է, պապս մի քիչ ... է, բայց նա կյանքը լավ է հասկանում ու խելոք խորհուրդներ է տալիս:	պահեստ
5. Չե՞ք ասի, թե որտեղ է ..., ես ուզում եմ ճամպուրկներս հանձնել:	պահեստախցիկ
6. Ուսանող ժամանակ նա ցերեկը սովորում էր, իսկ գիշերն աշխատում էր իբրև ...:	պահասենյակ
7. ...ի դուռը միշտ փակ է:	պահպանել
8. Ես չեմ ուզում այս տուփը ... դնել, այստեղ կոտրվող բան կա, կարելի՞ է մեքենայի նստարանին դնել:	պահպանողական



16. Եթե հետևյալ նախադասություններում սխալ բան կա, ապա ուղղեք:



1. Ծերունին մի բաժակ սառը ջուր խնդրեց Ջոննիից, որովհետև խիստ քաղցած էր:
2. Ծերունու մոր սիրտը Օկլահոմայի նահանգի լեռներում է:
3. Ջոննիի հայրն ասաց, որ նա վազի նպարավաճառի մոտ, մի ֆրանսիական բատոն, մի ֆունտ պանիր ու մի շիշ գարեջուր վերցնի:
4. Պարոն Կոզակը քնած էր իր ննջարանում, երբ Ջոննին ներս մտավ:

5. Ձոննի՛ն մթերքի կարիք չունեն, նա պարզապես եկել էր պարոն Կոզակի հետ մի քիչ փիլիսոփայելու:


6. Ձոննի՛ն սովորաբար կանխիկ մթերք էր գնում պարոն Կոզակից:

7. Պարոն Կոզակը տվեց Ձոննի՛ն մի ֆունտ բրինձ, որպեսզի նա իր կյանքը պահպանի:

8. Ձոննի՛ի հայրը հայտնի բանաստեղծ էր:



Վիլյամ Սարոյան՝ գրող, մարդկամ Սարոյանը խոսում է Սարոյանի հետ



Չարց. – Վիլյամ Սարոյան, ո՞վ եք դուք, ի՞նչ կարծիք ունեք ձեր մասին, ի՞նչ կուզենայիք լինել:

Սարոյան. – Չգիտեմ, ով եմ ես, չգիտեմ ինչ կածորիք ունեմ իմ մասին, գիտեմ միայն, որ կուզենայի լինել այն, ինչ կամ:

Չ. – Ինչի՞ մասին եք գրում:

Ս. – Ես մեծ թեմաներ չեմ շոշափում, մեծ կերպարներ չեմ ստեղծում: Ես պարզ հասարակ լեզվով նամակներ եմ գրում հասարակ մարդկանց և ասում, որ

նրանք եղբայրներ են: Ոմանք կարող են ծիծաղել ինձ վրա, բայց դա բոլորովին չի անհանգստացնում ինձ:

Չ. – Ի՞նչ եք կարծում, ձեզ կտա՞ն "Նոբելյան մրցանակ":

Ս. – Չեմ ուզում:

Չ. – Իսկ եթե տա՞ն:

Ս. – Չեմ ընդունի: Բայց մի անհանգստացեք, չեն տա:

Չ. – Իսկ ինչու՞ չէ. դուք արժանի եք դրան. ոչ ոք չի գրել ու չի գրի այնպես, ինչպես դուք եք գրում:

Ս. – Դուք իրավացի եք. ես մեծ գրող եմ:

Չ. – Ինչու՞ եք հաճախ ձեր մասին հումորով խոսում:

Ս. – Ինձ ես ավելի լավ գիտեմ, քան մեկ ուրիշը: Իսկ այն, ինչ գիտեմ իմ մասին, ինձ թույլ է տալիս այդպես խոսել:

Չ. – Երբեմն դուք գրում եք այնպես, կարծես ձեզանից առաջ ընդհանրապես գրականություն չի եղել, և ահա դուք առաջին անգամ հայտնաբերում եք մարդկային մտքերի ու զգացմունքների մարմնավորման հրաշալի արվեստը բառերի մեջ:

Ս. – Իմ և Շեքսպիրի միջև եղած հիմնական տարբերությունն¹ այն է, որ Շեքսպիրը հայ չէ:

Չ. – Ի՞նչ ազգի գրող եք համարում ձեզ:

Ս. – Թեպետ անգլերեն եմ գրում և ծնունդով ամերիկացի եմ, բայց ինձ համարում եմ հայ գրող: Օգտագործած բառերս անգլերեն են, միջավայրը, որի մասին գրում եմ՝ ամերիկյան է, սակայն այն ոգին, որն ինձ գրելու է մղում՝ հայկական է: Չետևաբար ես հայ գրող եմ:

Հայ ժողովրդի ազնվությունը, քաջությունը, ուշիմությունը, հեզմանքն ու սրամտությունը ժառանգությունն են բոլոր ճշմարիտ հայերի: Դրանք սնուցել են իմ կյանքը, և ես երախտապարտ եմ դրա համար:

Հ. – Ի՞նչ է ձեր կարծիքը "լավի" մասին:

Ս. – "Լավը" մի բաժակ սառը ջուրն է, երբ ծարավ ես:

Հ. – Ի՞նչ բան է լավ գիրքը:

Ս. – Լավ գիրքը այն գիրքն է, որ գրել է լավ մարդը:

Հ. – Ուզում եք ասել, որ դուք լավ մարդ եք:

Ս. – Այո... Ենթադրում եմ: Եթե իմ գրածները² լավն են, ուրեմն ես լավ մարդ եմ:

Հ. – Ձեզ մոտ գրեթե չկան մտավորական մարդիկ, ձեր հերոսները գրեթե երբեք ոչինչ չեն կարդացել, վերացական փիլիսոփայական ու սոցիալ-քաղաքական պրոբլեմները նրանց չեն հետաքրքրում:

Ս. – Ես ուզում եմ օգնել դժբախտ մարդկանց, սրտապնդել, համոզել, որ կարիք չկա հուսահատվելու, որ այս աշխարհում ևս արժե ապրել և դեռ կարելի է սիրել այս աշխարհը, և կան բաներ, որոնց վրա կարելի է ծիծաղել կամ գոնե ժպտալ:

Հ. – Ո՞վ է աշխարհի ամենամեծ մարդը, որին երբևէ հանդիպել եք:

Ս. – Ես եմ, թեպետ ինքս ինձ երբեք չեմ հանդիպել:

Հ. – Իսկ ո՞վ է աշխարհի ամենամեծ մարդը ձեզանից հետո:

Ս. – Տատիկս:

Հ. – Իսկ ո՞վ է աշխարհի ամենամեծ մարդը ձեր ընտանիքից դուրս:

Ս. – Միստր Հուֆը...

Հ. – Ո՞վ է միստր Հուֆը և ինչո՞վ է նա մեծ:

Ս. – Երբ ես տասը տարեկան էի, միստր Հուֆը յոթանասուներե մոտ մի ծերուկ էր և մեր փողոցի անկյունում շագանակ էր վաճառում: Ա՛յ, նա մեծ մարդ էր: Միստր Հուֆը նկատեց ինձ: Իսկ երբ մի մեծ մարդ նկատում է մեկ ուրիշին, ապա վերջինն էլ է մեծ:

Եվ ընդհանրապես ես չեմ հանդիպել մեկին, որ մեծ չլինի:

Հ. – Ինչի՞ մասին է այն գիրքը, որը դուք հիմա գրում եք:

Ս. – Մեռնելու մասին:

Հ. – Գիրքը ձե՞ր մասին է:

Ս. – Իհարկե. ինչ էլ գրի գրողը՝ իր մասին է:

Հ. – Ինչի՞ համար եք ամենից շատ ցավում:

Ս. – Երբ մտածում եմ այն մեծ մարդկանց մասին, որոնց չկարողացա հանդիպել և հիմա մեռած³ եմ: Մյուսների մասին, որոնք դեռ կենդանի են, բայց մեռնում են, ու երբեք չեմ հանդիպելու: Նրանց մասին, ովքեր գալիս են այն ժամանակ, երբ ես գնում եմ... Ցավում եմ, որ չփնտրեցի նրանց, թեկուզ միայն ու միայն հարցնելու համար. "Ո՞նց եք":

Հ. – Ի՞նչ կուզենայիք հարցնել մեռնող⁴ մարդուն:

Ս. – Մեռնող մարդուն ես չէի ասի՝ ո՞նց ես, ես նրան լավություն կանեի ու կհարցնեի, թե ինչու՞ է նա այդպիսի հիմարություն անում:

Հ. – Դա ի՞նչ լավություն է:

Ս. – Գուցե դա հենց ամենամեծ լավությունն է. այդ մարդը գուցե կծիծաղեր ... մեռնելուց առաջ:

Հ. – Վերջին տարիներս դուք անհամգիստ եք, երկրից երկիր եք անցնում. ի՞նչ եք փնտրում, արդյո՞ք ճշմարտությունը:

Ս. – Ճշմարտություն... Ճշմարտությունը գտել եմ, գիտեմ ... Ես ավելի լավ բան եմ փնտրում: Ամեն ինչ գիտեմ այս աշխարհի մասին՝ չարիք և թշվառություն, ատելություն և վախ, անմաքրություն և փտություն ... թող այդպես լինի, ես սիրում եմ այս աշխարհը այնպես, ինչպես այն կա:

Նստ Սուրեն Բուրսայանի գրական մոնոլոգի ("Պարուն" ամսագրից)

- ¹ իմ ու Շեքսպիրի միջև եղած հիմնական տարբերությունը – основное различие между мной и Шекспиром
- ² իմ գրածները – написанное мной
- ³ մեռած են – (они) мертвы
- ⁴ մեռնող – умирающий

Բառեր

- թեմա** – тема
- շոշափել** – затронуть
- կերպար** – образ
- պարզ** – простой, несложный
- հասարակ** – простой, обыкновенный
- ոմանք** – некоторые
- Նոբելյան մրցանակ** – Нобелевская премия
- իրավացի** – правый (быть)
- գրող** – писатель
- հումոր** – юмор
- զգացմունք** – чувство
- մարմնավորում** – воплощение
- արվեստ** – искусство
- համարել** – считать
- ծնունդ** – рождение
- օգտագործել** – использовать (первое q=ք)
- միջավայր** – среда (ջ=չ)
- ոգի** – дух (գ=ք)
- մղել** – толкать на
- հետևաբար** – следовательно
- ազնվություն** – честность
- քաջություն** – храбрость

- ուշիմություն** – сметливость
- հեգնանք** – ирония
- ժառանգություն** – наследство
- ճշմարիտ** – истинный
- սնուցել** – питать
- մտավորական** – интеллектуал
- հերոս** – герой
- վերացական** – абстрактный
- սոցիալ-քաղաքական** – социально-политический
- սրտապնդել** – ободрить
- շագանակ** – каштан
- նկատել** – заметить
- ընդհանրապես** – вообще (դ=թ)
- ցավել** – сожалеть
- կենդանի** – живой (դ=թ)
- փնտրել** – искать
- երկիր** – страна
- ճշմարտություն** – истина
- չարիք** – зло
- թշվառություն** – нищета, бедственное положение
- աղբյուրություն** – ненависть
- փրություն** – гниль, гнилость



17. Ա) Գտեք հնարավոր կապակցությունները.



- | | |
|------------------|-------------|
| պարզ | մարդ |
| հասարակ | միտք |
| արժանի | պատմություն |
| իրավացի | հարց |
| վերացական | պատասխան |
| սոցիալ-քաղաքական | զգեստ |

Գ) Կետերի փոխարեն գրեք աչ սյունակի ածականներից մեկը.

1. Դու ինչպես միշտ ... ես:
2. Ու՞մ եք դուք Նոբելյան մրցանակի ... համարում:
3. Ես ոչինչ չհասկացա քո ... բաժակաճառից:
4. Ոմանց կարծիքով, միայն ռեալիստական արվեստն է ... արվեստ:
5. Աշխատիր մտքերդ ... արտահայտել:
6. ... հարցերը նրան չեն հետաքրքրում:
7. Շորերդ փոխիր, մի՞թե այս ... հագուստով ես համերգ գնալու:

արժանի
իրավացի
հասարակ
պարզ
սոցիալ-
քաղաքական
վերացական
իսկական



18. Լրացրեք բացերը.



Սարոյանը գտնում է, որ ինքը մեծ թեմաներ ..., մեծ կերպարներ ..., պարզ, ճամակներ մարդկանց:

Սարոյանը ծ... ամերիկացի է, օգտ... .. անգլերեն են, բայց ոգին, որն իրեն գ... մ... հայկական է:

Հայ ժողովրդի ազն..., քաջ..., ուշ..., հեզ... ու սր... սնուցել են Սարոյանի կյանքը և դրա համար նա երախ...:

Սարոյանի հերոսներին չեն հետաքրքրում վեր..., ս...-ք... պրոբլեմները:

Իր գրվածքներով Սարոյանը օգնում է դժ... մարդկանց չիուս..., սրտապն...:

Միստր Հուլիո մի ծ..., որ փողոցի անկյունում շ... վաճառում:

Նա նկ... փոքրիկ Սարոյանին:

Սարոյանը ցավում է, երբ մտած..., որ չկարողացավ հանդ... շատ մեծ մարդկանց, որ չփնտր... նրանց թեկուզ միայն հարցնելու համար, թե ո՞նց են:

Սարոյանը ասում է, որ ինքը ճշմ... չի փնտ..., նա ավելի լավ բան է փն...:

Թեև ավելի լավ բան չի գտնում, բայց սիրում է այս աշ... այնպես, ինչպես կա:

19. Պատասխանեք հարցերին.

Սարոյանը չգիտի, թե ինչ կարծիք ունի իր մասին, իսկ Դուք ի՞նչ կարծիք ունեք Ձեր մասին:

Ի՞նչ կուզենայիք լինել, կուզենայի՞ք գրող լինել: Դուք համաձայն եք Սարոյանի հետ, որ գրողը ինչ էլ գրի, իր մասին է գրում: Եթե Դուք գրող լինեիք, ինչի՞ մասին կգրեիք:

Եթե Դուք նկարիչ լինեիք, ի՞նչ կնկարեիք:

Դուք Ձեզ հաճա՞խ եք թույլ տալիս հումորով խոսել Ձեր մասին: Իսկ ուրիշների մասի՞ն:

Ի՞նչ ազգի նկարիչ էք համարում Դուք Այվազովսկուն: Ի՞նչ ազգի երգիչ էք համարում Ազնավուրին: Դուք կարդացե՞լ էք Անրի Թրուայայի գործերից, ի՞նչ ազգի գրող էք համարում նրան:

Դուք համաձայն էք Սարոյանի հետ, որ ազնվությունն ու քաջությունը ճշմարիտ հայերի ժառանգությունն են:

Ձեր կարծիքով հայ գող կամ մարդասպան լինու՞մ է:

Ամեն տեղ հայ կա. ավելի շատ ազնիվ ու քաջ հայի էք հանդիպել, թե՞ անազնիվ ու վախկոտ:

Ի՞նչ էք կարծում, հայերը ավելի խաղաղասե՞ր են, թե՞ կռվարար. աշխատասե՞ր են, թե՞ ծույլ. ընկերասեր ու բարեկամասե՞ր են, թե՞ եսասեր (эгоист) ու անհատապաշտ (индивидуалист). մաքրասե՞ր են, թե՞ փնթի (неряшливый), հետաքրքրասե՞ր են, թե՞ անտարբեր:

Գիտե՞ք, որ եթե հային հիշեցնեք, որ նա հայ է ու եղբայր կամ քույր անվանեք, նա Ձեզ անպայման եղբայրաբար կամ քույրաբար կվերաբերվի:

Սարոյանը գտնում է, որ "լավը" մի բաժակ սառը ջուրն է, երբ ծարավ ես, իսկ ի՞նչ է Ձեր կարծիքը լավի մասին:

Ի՞նչ էք կարծում, այս աշխարհում արժե՞ ապրել և կարելի՞ է սիրել այս աշխարհը: Դուք երբևէ հիասթափվե՞լ էք այս կյանքից ու աշխարհից: Ընդհանրապես Դուք հոռետես՞ս (пессимист) էք, թե՞ լավատես (оптимист):

Դուք կուզե՞նայի՞ք Սարոյանի հետ անձամբ (лично) ծանոթ լինել միայն ու միայն նրան հարցնելու համար՝ ո՞նց էք:

Իսկ Դուք կարո՞ղ էք ասել, թե ո՞վ է աշխարհի ամենամեծ մարդը Ձեզանից բացի: Ինչո՞վ է նա մեծ:

Մարտի



Ընտրեք ճիշտ տարբերակը.



1. Թագ, թագուհի, թագադրել բառերում "գ" գրում ենք, "զ" կարդում ենք, իսկ թագավոր բառում "զ"-ն ... է "ք":	Ա. կարդում Բ. կարդացնում Գ. կարդացվում
2. Մեր տնօրենը շատ զբաղված մարդ է, բայց միշտ ինքն է գործնական նամակները ...:	Ա. գրում Բ. գրվում Գ. գրել տալիս
3. Երիտասարդը կռացավ և ... գետնին ընկած գիրքը:	Ա. բարձրացավ Բ. բարձրացրեց Գ. բարձրացնել տվեց
4. Լենկ Թեմուրը լսեց խորհուրդը և որոշեց ... վանքի գրքերը:	Ա. վառել Բ. վառվել Գ. վառել տալ
5. Խոհանոցում ... է քան խորդանոցում:	Ա. ավելի տաք Բ. ամենատաք Գ. ամենատաքն
6. Խոհանոցում ... տաք է:	Ա. խորդանոցում Բ. խորդանոցից Գ. խորդանոցը
7. Այս տղաները շատ արագ են վազում, բայց նրանց փոքր եղբայրը ... է վազում:	Ա. արագագույն Բ. ամենաարագ Գ. ամենաարագն
8. Մինաս Ավետիսյանը հայ ... նկարիչներից է:	Ա. ավելի մեծ Բ. ամենամեծ Գ. մեծագույն
9. Նա ախորժակով նայեց մրգին ու ընտրեց ... խնձորը:	Ա. ավելի մեծ Բ. ամենամեծ Գ. մեծագույն
10. Ես քաղաքական գրքեր չեմ սիրում, մի ... բան չունե՞ս:	Ա. ավելի հետաքրքիր Բ. ամենահետաքրքիր Գ. ամենահետաքրքիրը
11. – Այս երեկո հյուր ունենք: – Ո՞վ ...	Ա. կգա: Բ. է գալու: Գ. էր գալու:
12. – Տիկին Արուսյակը, որ վերջերս ... Լիբանանից:	Ա. է եկել: Բ. էր եկել: Գ. եկավ:
13. – Նա Լիբանան՞ն ...	Ա. է գնացել: Բ. էր գնացել: Գ. գնաց:

14. – Այո, երեք տարի Լիբանանում ... ու վերադարձավ:	Ա. է մնացել Բ. էր մնացել Գ. մնաց
15. – Շաբաթ երեկոյան ազա՞տ ես: –Չէ, շաբաթ օրը մորաքրոջս աղջկա ծնունդն է, ... նրանց տուն:	Ա. կգնամ Բ. գնալու եմ Գ. գնալու էի
16. – Ափսոս, որ զբաղված ես, եթե ազատ լինեիր, ... համերգ Կոնստանտին Օրբելյանն է եկել Ամերիկայից:	Ա. կգնայինք Բ. գնայինք Գ. գնալու էինք
17. Երեկ ... Աստղիկին, չգիտեմ ինչու չեկավ:	Ա. հանդիպելու եմ Բ. հանդիպելու էի Գ. կհանդիպեի
18. Ի՞նչ հարց ... Սարոյանին, եթե կարողանայիք նրան հանդիպել:	Ա. տայիք Բ. կտայիք Գ. էիք տալու
19. Եթե ..., կհասնեիր ավտոբուսին:	Ա. վազեիր Բ. կվազեիր Գ. վազելու էիր
20. Եթե ժամանակին ... նրանց մեքենան, կանգ չէինք առնի ու միմյանց չէինք հանդիպի:	Ա. նկատեինք Բ. չնկատեինք Գ. չէինք նկատի
21.– Եթե Սարոյանին Նորբելյան մրցանակ ... Դուք նրան արժանի կհամարեի՞ք:	Ա. տան Բ. տային Գ. կտային
22– Տիգրանը համերգի տոմս է գնել. շաբաթ օրը ... Լորիս Ճգնավորյանի համերգին:	Ա. գնանք Բ. գնալու ենք Գ. կգնանք
23 – Ո՛չ մի համերգ: Այս շաբաթ մեր Սերոբի հարսանիքն է: – Ճիշտ է, ... երբ են հավաքվում	Ա. չէի՞ր ասի Բ. չասեի՞ր Գ. կասեի՞ր
24 – Տիգրանը համերգի տոմս էր գնել շաբաթ օրվա համար, ... համերգ, բայց նույն օրը Սերոբի հարսանիքն էր. դրա համար բաց թողեցինք համերգը:	Ա. գնայինք Բ. կգնայինք Գ. գնալու էինք
25 – Ոչինչ, ուրիշ անգամ ..., էլի համերգ ...	Ա. գնաք, լինի Բ. կգնաք, կլինի Գ. եք գնալու, է լինելու

Урок 21. Քսանձեկերորդ դաս

Грамматика

Долженствовательное наклонение: образование и употребление.
Архаические формы склонения существительных. Сводная таблица всех типов склонения.

Предлог ի.

Песня

Լեւլեբիջիների բայլերգը

Стихи

Հայրենիքիս (Պարույր Սևակ)

Հին աշխարհը ամեն օր (Հ. Թումանյան)

Տաղ Հարության (Գրիգոր Նարեկացի)

Երկու հայրեն (Նահապետ Քուչակ)

Текст

Նորավանք (Հարություն Մկրտչյան)

Архитектура Армении.

Долженствовательное наклонение

Հարկադրական եղանակ



Долженствовательное наклонение имеет два времени: будущее и "будущее в прошлом".

Формы долженствовательного наклонения образуются при помощи частицы **պիտի** (**պետք է** – разг.) "должен", которая присоединяется к соответствующим формам желательного наклонения, но пишется раздельно.

При образовании отрицательных форм долженствовательного наклонения отрицательная частица **չ** присоединяется либо к показателю долженствовательного наклонения **պիտի** (**պետք է**), либо к глаголу и пишется слитно с ними. Ср. русск. "я не должен идти" и "я должен не идти".

Спряжение глаголов в будущем времени долженствовательного наклонения:

գնալ		
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև	
պիտի գնամ	չպիտի գնամ	պիտի չգնամ
պիտի գնաս	չպիտի գնաս	պիտի չգնաս
պիտի գնա	չպիտի գնա	պիտի չգնա
պիտի գնանք	չպիտի գնանք	պիտի չգնանք
պիտի գնաք	չպիտի գնաք	պիտի չգնաք
պիտի գնան	չպիտի գնան	պիտի չգնան

Спряжение глаголов во времени "будущее в прошлом" долженствительного наклонения:

գնալ		
утвердительная форма հաստատական ձև	отрицательная форма ժխտական ձև	
պիտի գնայի	չպիտի գնայի	պիտի չգնայի
պիտի գնայիր	չպիտի գնայիր	պիտի չգնայիր
պիտի գնար	չպիտի գնար	պիտի չգնար
պիտի գնայինք	չպիտի գնայինք	պիտի չգնայինք
պիտի գնայիք	չպիտի գնայիք	պիտի չգնայիք
պիտի գնային	չպիտի գնային	պիտի չգնային

Употребление долженствительного наклонения

Будущее время долженствительного наклонения обозначает действие, которое должно обязательно совершиться. Это время синонимично будущему времени изъявительного наклонения, и часто оно показывает простую убежденность говорящего в том, что действие в будущем реально, неотвратимо, неизбежно. Ср. -Որ ասեմ "այր", - վերջապես խոսում է Պըլը Պուղին, - հետո էլ **պիտի ասի**՝ ասա՝ "բեն": Որ ասեմ "բեն" հետո էլ **պիտի ասի** "գիմ":

Формы второго лица будущего времени долженствительного наклонения могут выражать повеление, побуждение к действию:

Առաջ **պիտի** շարժարն ու ձուկն լավ **խառնես**, հետո կարձա **ավելացնես**:

Обратите внимание на то, что показатель долженствительного наклонения **պիտի** может быть отделен от глагольной формы другими членами предложения; а также на то, что если в предложении больше одного глагола в долженствительном наклонении, то **պիտի** обычно ставится при первом из них.

Прошедшее время долженствительного наклонения обозначает действие, которое должно было совершиться в прошлом, но не совершилось или о его совершении неизвестно говорящему. Как будущее время долженствительного наклонения синонимично будущему времени изъявительного наклонения, так и прошедшее время долженствительного наклонения синонимично "будущему в прошлом" изъявительного наклонения. Ср. Վարդուհին էլ **պիտի** նրանց հետ սար **գնար**, բայց հիվանդացավ, չգնաց:

Не путайте модальные выражения "պետք է անել" ("надо делать") и "պիտի անեմ, անես, անի ..." ("я, ты, он ... должен делать")



Լեւեբիջիների քայլերգը

Խոսք՝ Թ. Նայանի


Երաժշտությունը՝ Տ. Չուխաջյանի

Հոր-հոր


Չափավոր արագ




Մենք քաջ տոհմի զաւակներ ենք, չենք վախի,



Մաւորը - մոււրը փորձանքնե-րից չենք փախչի,



Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջութիւն,




Ինչ էլ որ լինի, չենք հանդուրժի պարտութիւն:

Խումբը




Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջութիւն,




Ինչ էլ որ լինի, չենք հանդուրժի պարտութիւն:


Հոր-հոր




Ուրեմն՝ առաջ, գարկենք թըմբուկ հաղթական



Տանք թըշնամուն մենք ծեծ ու ջարդ պատվական




Թող իմանան՝ մենք չենք դառնա խաղալիք,




Այնպես պիտ ծեծենք, որ հիշեն հոր հարսանիք

Խումբը



Թող իմանան՝ մենք չենք դառնա խաղալիք,



Այնպես պիտ ծեծենք, որ հիշեն հոր հարսանիք

Առաջին քառյակ՝

Հոր-հոր. – Մենք քաջ տոհմի զավակներ ենք, չենք վախի,
Մանր-մուկն փորձանքներից չենք փախչի,
Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջություն,
Ինչ էլ որ լինի՝ չենք հանդուրժի պարտություն:
Խումբ. – Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջություն,
Ինչ էլ որ լինի՝ չենք հանդուրժի պարտություն:

Կրկներգ՝

Հոր-հոր. – Ուրեմն՝ առաջ, զարկենք թմբուկ հաղթական,
Տանք թշնամուն մեծ ծեծ ու ջարդ պատվական,
Թող իմանան՝ մենք չենք դառնա խաղալիք,
Այնպես պիտ ծեծենք, որ հիշեն հոր հարսանիք:
Խումբ. – Թող իմանան՝ մենք չենք դառնա խաղալիք,
Այնպես պիտ ծեծենք, որ հիշեն հոր հարսանիք:

Երկրորդ քառյակ՝

Հոր-հոր. – Տոհմը մեր եղել է քաջերից քաջը,
Անարգել է կայծակների շառաչը,
Մենք էլ նրա զավակներն ենք հարազատ,
Էլ ուրիշ ժառանգ չկա, չկա մեզնից գատ:
Խումբ. – Մենք էլ նրա զավակներն ենք հարազատ,
Էլ ուրիշ ժառանգ չկա, չկա մեզնից գատ:

Կրկներգ

Բառեր

տոհմ – род, племя

չենք վախի – չենք վախենա (как бы от глагола վախել)

մանր-մուկն – мелкий (NB: чередов. гласных при повторе)

փորձանք – испытание (ծ=g)

փոքրուց – сизмальства

հանդուրժել – вытерпеть, вынести, сносить

պարտություն – поражение

թմբուկ զարկել – бить, ударить в барабан

հաղթական – победный, победоносный (ղ=խ)

թշնամի – враг

ծեծել, ծեծ փալ, ջարդ փալ – побить, надавать тумаков (ղ=թ)

պատվական – зд. славный

հարսանիք – свадьба

անարգել – зд. презреть

կայծակ – молния


կայծակների շառաչը – шум, грохот молнии, гром


հարազատ – родной

ժառանգ – наследник

մեզնից գատ – кроме нас

Առաջադրանքներ և վարժություններ

1. 



(տղան) Արևածագին այծերն ու գառները պետք է արոտ տանել, իսկ մայրամուտին՝ տուն բերել:
(դու) Դասի ժամանակ պետք չէ հորանջել, պետք է դասը լսել:

→

Արևածագին տղան այծերն ու գառները *պիտի* արոտ *տանի*, իսկ մայրամուտին՝ տուն *բերի*: Դասի ժամանակ *չպիտի* *հորանջես* (*պիտի չհորանջես*), *պիտի* դասը *լսես*:

(տղան) Արևածագին այծերն ու գառները պետք է արոտ տանել, իսկ մայրամուտին՝ տուն բերել:

(դու, դուք, բոլոր աշակերտները) Ամառվա ընթացքում պետք է կարդալ մի քանի ստեղծագործություն, մի քանի վեպ:

(ես, դու, մենք, դուք) Այս բանաստեղծությունը պետք է լավ սովորել:

(դու, նա, դուք, նրանք) Օրեկան երկու անգամ պետք է կովը կթել:

(ես, մենք) Տարեկան մի քանի անգամ պետք է ծխնելույզը մաքրել:

(դու) Պետք է կարագն ու ձուն լավ խառնել, հետո կաթ ավելացնել:

(դուք) Պետք է պատուհանների ապակիները լվանալ, որ սենյակը լուսավոր երևա:

(դու) Դասի ժամանակ պետք չէ հորանջել, պետք է դասը լսել:

(դուք, նրանք) Պետք չէ կայծակից վախենալ:

(նա / նրանք) Պետք չէ ուշանալ դասից, ուսուցիչը դժգոհում է:

(դուք) Պետք չէ դրսում երկար մնալ, պետք չէ հոգնել, մի քիչ զբոսնեք ու վերադարձեք:


(նա / նրանք) Պետք չէ տնօրենին կոպիտ պատասխանել:

(դու) Պետք չէ եղբորդ գրասեղանի վրայից որևէ բան վերցնել:

(դու) Պետք չէ քրոջդ գրադարակից նրա նամակները վերցնել:

2. Ա) Ասացե՛ք, թե ինչ հաստատ պլան ունեք այս երեկոյի, վաղվա, այս ամառվա, այս տարվա համար:

Расскажите о своих (определенных) планах на вечер, на завтра, на это лето, на этот год.

 Այս երեկո (վաղը, այս ամառ, այս տարի) ես պիտի ...

Բ) Պատասխանեք հարցերին և նման հարցեր տվեք ձեր ընկերներին, բարեկամներին:

Ответьте на вопросы, задайте аналогичные вопросы Вашим коллегам, друзьям:

Այսօր ու՞ր պիտի գնաս: Այս ամառ որտե՞ղ պիտի հանգստանաք: Այս ձմեռ քանի՞ քննություն պիտի հանձնեք, ի՞նչ քննություններ պիտի հանձնեք: Այդ քննությունները հանձնելու համար ի՞նչ գրքեր պիտի կարդաք, ո՞ր գրքերը պիտի վերցնեք գրադարանից: Իսկ եթե գրադարանում այդ գրքերը չլինեն, չպիտի՞ հանձնեք այդ քննությունները: Քո հարազատի հարսանիքին պիտի գնա՞ս, ի՞նչ նվեր պիտի տանես: Երբ պիտի ներկես դռները: Ե՞րբ պիտի լուսամուտները լվանաս:

Տ3.

Այս տարի մեր հողամասում
թփի ու ընկույզի ծառ *ենք
տնկելու*, սամիթ ու ռեհան
ենք ցանելու:
Վաղվանից *չեն ծխելու*:

→ Այս տարի մեր հողամասում թփի ու
ընկույզի ծառ *պիտի տնկենք*,
սամիթ ու ռեհան *պիտի ցանենք*:
Վաղվանից *չպիտի ծխեն (պիտի
ծխեն)*:

Այս տարի մեր հողամասում թփի ու ընկույզի ծառ ենք տնկելու,
սամիթ ու ռեհան ենք ցանելու:

Երկուշաբթվանից գնալու եմ գերմաներենի դասերին:

Այս տարի անպայման ամառանոցային տնակի կտուրը
նորոգելու եմ (чинить):

Նախ կահույքի (мебель) փոշիներն ես սրբելու, ապա հատակն
ես փայլեցնելու:

Այս երեկո այցելելու ենք մեր ուսուցչուհուն, դու մեզ հե՞տ ես:

Վաղը հյուր ունենք. դո՞ւմ եմ փաթաթելու, փախլավա եմ
թխելու, մի քանի տեսակ աղցան եմ պատրաստելու, ամուսինս էլ
խորոված է անելու:

Վաղվանից չեն ծխելու:

Այլևս նրա խոսքերին ուշադրություն չենք դարձնելու:

Այլևս նրան չեմ հավատալու:

Շաբաթ օրը հեռուստացույցով "Սոխրոտիկն" եմ ցուցադրելու,
բայց դժբախտաբար չեմ կարողանալու դիտել. շաբաթ օրը մտերիմ
ընկերս վերադառնալու է Վենետիկից, գնալու եմ նրան դիմավորելու:

Տ4.

Քննությունից առաջ *պիտի*
այս գիրքը *կարդաք*:
Դասի ժամանակ *չպիտի*
հորանջես, պիտի դասը լսես:

→ Քննությունից առաջ *պիտի* այս
գիրքը *կարդայիք*:
Դու դասի ժամանակ *չպիտի*
հորանջեիր, պիտի դասը լսեիր:

Քննությունից առաջ պիտի այս գիրքը կարդաք:

Պիտի պահպանենք մեր ծառերը:

Այդ պահին պիտի ինձ նայես:

Առավոտյան պիտի սուրճ խմեմ, որ ինձ լավ զգամ:

Նախաճաշի համար պիտի կաթնաշոռ գնես, երեխաները սիրում
են:

Երիտասարդները, եթե ուզում են աշխատանք ունենալ, պիտի
կարճ ու գրագետ պատասխանեն հարցերին:


Դասի ժամանակ չպիտի հորանջես, պիտի դասը լսես:


Ջոննի, ես քեզ ապառիկ մթերք չպիտի բաց թողնեմ ու չպիտի
հուսամ, որ մի օր վերջապես կվճարես:

Չպիտի անաչես, չպիտի քաշվես, պիտի բոլոր հարցերը
պարզես:

Փոքրերի հետ պիտի զբաղվեք, որպեսզի ժամանակին գրել-
կարդալ սովորեն:

Ծուլություն ու անտարբերություն չպիտի հանդուրժի:

5. 



(ես) Պետք էր գնալ դեղատուն,
դեղ առնել:
(ես) Պետք չէր հավատալ նրա
խոսքին:

→ Պիտի գնայի դեղատուն, դեղ
առնել:
Նրա խոսքին չպիտի հավատայի
(պիտի չհավատայի):

(ես) Պետք էր գնալ դեղատուն, դեղ առնել:

(դուք) Պետք էր նրան ամեն ինչ պատմել, բացատրել:

(դու) Պետք էր նրանց ցույց տալ ճանապարհը:

(մենք) Պետք էր նրանց ասել, որ չքաշվեն, անպայման գան մեզ
հետ:

(երիտասարդները) Պետք էր ներս մտնելուց առաջ ոտքերը
մաքրել, հատակին ընկած գիրքը բարձրացնել:

(մարդիկ) Պետք էր բաղնիսի դռան առաջից քարը վերցնել և
մուտքն ազատել:

(ես) Պետք չէր հավատալ նրա խոսքին:

(ուսուցիչները) Պետք չէր այս աշակերտին հանդիմանել:

(հարևանը) Պետք չէր հավատալ, որ կաթսան կծնի, պետք չէր
ուրիշի կաթսան վերցնել, պետք էր վերադարձնել կաթսան իր
տիրոջը:

(այրիմ) Պետք չէր հարևանների կաթին ջուր խառնել:


(տղաները) Պետք չէր Ռևազի ոչխարը մորթել:

(գյուղացիները) Այնուամենայնիվ պետք էր քննիչին հացի
պահել, չէ՞ որ սոված էր:

(նախագահը) Պետք չէր գեներալի պես մարդուն դիմել
օգնության:

(Մելիք Շահնազարը) Պետք չէր անծանոթ մարդուն շատ փող
վստահել:

6. 



Այս ամառ *գնալու էինք*
Ջերմուկ, բայց չստացվեց:
Մենք այսօր *չէինք*
հանդիպելու, մի շաբաթ
առաջ *էինք հանդիպելու*:

→ Այս ամառ *պիտի գնայինք*
Ջերմուկ, բայց չստացվեց:
Մենք այսօր *չպիտի*
հանդիպեինք, մի շաբաթ առաջ
պիտի հանդիպեինք:

Այս ամառ գնալու էինք Ջերմուկ, բայց չստացվեց:

Ես նրան ցույց էի տալու Հայաստանի մեր նկարները, բայց նա
չուտ գնաց, ժամանակ չուներ:

Մենք նրան հարցնելու էինք Կարինեի հասցեն, բայց նա ասաց,
որ ինքն էլ չուներ:

Նա դաշնամուրի փոշիները սրբելու էր և նվագելու էր,
երաժշտության դասին էր պատրաստվելու, բայց ընկերուհին
զանգեց ու կանչեց խաղալու:

Մենք այսօր չէինք հանդիպելու, մի շաբաթ առաջ էինք
հանդիպելու:



Հայրենիքիս



Բառեր չկան կարծես քեզ երգելու համար,
Եվ ես որդու նման անվանում եմ քեզ "նայր":

"Հարազատ" եմ ասում և այնուհետ լռում.
Սիրող սիրտն է այդպես խոսքը շուտ սպառում:

Իսկ թե ոնց եմ սիրում՝ դու գիտենաս պիտի,
Բայց քեզանից առաջ՝ քո թշնամին գիտի...

Պարույր Սևակ

Բառեր


անվանել – называть
այնուհետ, այնուհետև – затем

սիրող – любящий
սպառել – исчерпать




Հին աշխարհը ամեն օր
Հազար մարդ է մտնում նոր,
Հազար տարվա գործն ու փորձ
Սկսվում է ամեն օր:

Հովհաննես Թումանյան




Ի՞նչ գործերի մասին է խոսքը: Ու՞մ
գործն է դժվար, տղամարդու՞, թե՞ կնոջ:
Ո՞վ պիտի անի այս գործերը. լվացք
անել, փռել կամ կախել (вешать), որ
չորանա, արդուկ անել, ամանները
լվանալ, ամանները սրբել, չորացնել,
տունը (խոհանոցը) հավաքել, կահույքի
փոշին սրբել, հատակը ավելել, լվանալ,
փայլեցնել, սեղան գցել (դնել), հավաքել,
պատուհանների ապակիները լվանալ,
խանութ (շուկա) գնալ, ճաշ եփել, այգին
ջրել, ծաղիկները ջրել, այգում
նստարանները նորոգել*, արդուկը նորոգել*:



*նորոգել (զ=ք)

Տղամարդը պիտի ...

Կինը պիտի ...



անեղ,		ավել, հավանգ			մուրճ,	

Մուրճ, ասեղ, դուլլ, արդուկ, մեխ, կացին, ավել, մկրատ, հավանգ, պտուտակներ, պտուտակահան, սղոց, աքցան, քլունգ, բահ, պտուտակաբանալի (մանեկաբանալի), մանեկ, հեղույս, պտուտակամեխ, դանակ, շերեփ, գրտնակ, կաթսա, թավա, շամփուր:

Склонение существительных
 (продолжение)



Следующие существительные сохранили архаические формы падежных окончаний:

Родительный падеж на -п:

- Սեր – սիրո, սիրուն, սիրուց, սիրով
- Սուգ – սզո, սուգից, սուգով "траур" (զ=բ).
- սզո նշան – знак траура, но սզի или սուզի մեջ – в трауре
- Հուր – հրո, հրից, հրով "огонь"
- Աստված – Աստծո, Աստծուն, Աստծուց, Աստծով

Родительный падеж на -վան:

- Մահ – մահվան, մահին или մահվանը, մահից или մահվանից, մահով или մահվանով "смерть"
- Անուն – անվան, անունից, անունով

Родительный падеж на -եր:

Դուստր – դստեր "дочь" (остальные падежные формы не употребительны)

Родительный падеж на -յան: (нек.-ые слова на -ուսր, -ունը)

- Գալուստ – գալստյան "приход, прибывание, пришествие"
- Ծնունդ – ծննդյան "рождение"

Таким образом, сводная таблица всех типов склонений выглядит так:

Окончание р.-д. п.	Примеры	Примечания
-ի	большинство сущ. ед. и мн. ч գիր - գրի, բուն - բնի, ձվեր - ձվերի	возм. черед. корнев.гласного
вариант -վի	сущ-ые на -ու՝ ձու - ձվի, լեզու - լեզվի, կապու - կապվի, Բաքու - Բաքվի	
-ան	1. ряд сущ-ых, потерявших -ն: եզ - եզան, գառ, լեռ, մուկ, մուկթ и т.д. 2. времена года: գարուն - գարնան, ամառ, աշուն, ձմեռ , тж. մանուկ и т.д. 3. отглагольн. сущ-ые на -ում: գարգացում - գարգացման и т.д. 4. сущ-ые տուն-տան, շուն-շան	другие формы от осн. им.п. другие формы от осн. р.-д.п. другие формы от осн. им.п.
	5. сущ-ые на -յուն (-ույթյուն) получают -յան (-ույթյան)՝ արյուն - արյան, քաջություն - քաջության	выпад. корнев. гласного: տնից, շնից другие формы от осн. им.п., тв. п. на -ամբ
-ոջ	ряд одушевл. сущ-ых: բույր - բրոջ, փեր, աներ, ընկեր и т.д.	другие формы от осн. р.-д.п.
-որ	ряд одушевл. сущ-ых: հայր - հոր, մայր - մոր, եղբայր - եղբոր	другие формы от осн. р.-д.п.
-ու	1. մարդ - մարդու, ամուսին - ամուսնու, փղամարդ - փղամարդու, անկողին - անկողնու 2. сущ-ые на -ի՝ այգի - այգու 3. неопр.форма глагола ուտելու, խմելու	отл. п. на -ուց и сущ. ծի-ծիու
-վա	сущ-ые, обозначающие время: օր - օրվա, ժամ, գիշեր, փարի и т.д., тж. ամառ, ձմեռ	другие формы от осн. им.п. или р.-д.п.; искл.-ия: դար, թույլ, վայրկյան и т.д.
-ա	աղջիկ - աղջկա	другие формы от осн. р.-д.п.
-ո	сущ-ые սեր - սիրո, սուգ, հուր, Աստված	др.формы обыч- но от осн. им.п.
-վան	сущ-ые մահ - մահվան, անուն - անվան	другие формы от осн. им.п. или р.-д.п.
-եր	сущ-ое դուստր - դստեր	
-յան	нек. сущ-ые на -ուտ, -ունդ՝ գալուտ - գալտարյան, ծնունդ - ծննդյան	другие формы от осн.им.п., тв. п. возм. на -բ
-նց	сущ-ые мн.ч. մարդիկ - մարդկանց, կանայք - կանանց, փիկնայք - փիկնանց	другие формы от осн. р.-д.п.
-ենց -ոնց -անց	сущ-ые мн.ч.на -ենք, -ոնք, -անք՝ Տիգրանենք - Տիգրանենց, պապոնք - պապոնց, Վարանանք - Վարդանանց	другие формы от осн. р.-д.п.
-ոց	сущ-ые мн.ч.на -իք՝ գյուղացիք - գյուղացոց	другие падежи от правильной формы на -ներ



Թափառական վարպետ Մոմիկը տեսավ ու սիրեց Սյունյաց մեծավոր իշխանի միակ աղջկան՝ Լուսիկին: Լուսիկն էլ սիրեց Մոմիկին: Իշխանը, որ իմացել էր փոխադարձ սիրո մասին, կանչեց Մոմիկին և էսպես պայման դրեց:

Մոմիկը երեք տարում պիտի շիներ երեք տաճար, որոնցից երրորդում պիտի կատարվեր նրա պսակադրությունը Լուսիկի հետ: Մոմիկը վանքը պիտի կառուցեր այնպիսի վարպետությամբ, որ այն անկրկնելի մնար Հայոց աշխարհում:

Երիտասարդ վարպետը ընդունեց այդ պայմանը: Վերցրեց իր մուրճը և իջավ ձորը: Ապառաժից քարեր կտրեց, տաշեց և քարերը ծածկեց քանդակներով: Նա աշխատում էր օր ու գիշեր...

Երկրորդ տաճարի քարերի վրա Մոմիկը քանդակեց երկչոտ ու նրբիրան եղնիկներ՝ նշածև, գեղեցիկ աչքերով, նոներ՝ հյուսքով առլեցուն հատիկներով, նոր բացված վարդեր՝ նուրբ բուրմունքով, սպիտակ շուշաններ՝ ձյան պես անարատ, սիրամարգներ՝ երկար ու ոսկեգույն փետուրներով, կաքավներ՝ փոքրիկ, գեղեցիկ գլխիկներով, սիրագորով աղավնիներ՝ ի նշան անբիծ սիրո: Այդ յոթ քանդակները ներկայացնում էին Լուսիկի յոթ հրապույրները: Մոմիկը այդ բարձրաքանդակներով ավարտեց քարերի մշակումը, մտքում ստեղծեց տաճարները: Պատրաստեց նաև երրորդ տաճարի վերջին քարը՝ վրան նետահար մի սիրտ, որին վերևից նայում էր լուսինը: Ապա գարնանն սկսեց կառուցել առաջին տաճարը: Եկավ աշունը, ապա՝ ձմեռը, գարունը... Նորից անցավ մի ամառ, աշուն, ձմեռ, գարուն, և վարպետն ավարտեց նաև երկրորդ տաճարը...

Վերջին տաճարը Մոմիկը կառուցում էր ավելի մեծ եռանդով: Շարուն էր ցերեկը, շարուն էր գիշերը: Նայում էր լուսնին, հիշում էր Լուսիկին, որ կանթեղի պես լույս էր տալիս նրա մտքին: Ահա վերջապես վարպետը հասել էր գմբեթին ու պիտի դներ վերջին քարը:

..Այն պահին, երբ վարպետը վերցրեց գմբեթի վերջին քարը, աղոթք արեց և ուզեց տեղը դնել, իշխանի սեպուհը սրի նենգ հարվածով խոցեց նրան: Վարպետը վերջին քարի հետ արնաթաթախ ընկավ եկեղեցու սեղանի առջև, ուր պիտի կատարվեր պսակադրությունը: Այնտեղ թաղեցին նրան, և տաճարը կիսատ մնաց, որովհետև նրա վերջին քարը շիրմաքար դարձավ վարպետի համար: Վանքը մնաց անավարտ, ուստի՝ միշտ էլ նոր: Դրա համար անունը մնաց Նորավանք:

Ըստ Հարություն Մկրտչյանի

Բառեր

թափառական – бродяга

մեծավոր – великий

միակ – единственный

փոխադարձ – взаимный

(ծ=g)

սայման – условие

շինել – сделать, строить

սասկադրություն –

венчание

կառուցել – строить

վարպետություն –

мастерство

անկրկնելի – неповторимый

մուրճ – молот

ձոր – ущелье

ապառաժ – утес, скала

փաշել – точить

քանդակ – скульптура

քանդակել – лепить, ваять

երկչոտ – робкий

նրբիրան – грациозный (ր=փ)

եղնիկ – олень

նշածն – миндалевидный

հյուր – сок

հատիկ – зерно

նուրբ – нежный (ր=փ)

բուրմունք – аромат

շուշան – лилия

անարատ – непорочный

սիրամարգ – павлин

փետուր – перо

կաքավ – куропатка

գլխիկ – головка

աղավնի – голубь

ի նշան – в знак

անրիժ – незапятнанный

հրապույր – прелесть,


обаяние

բարձրաքանդակ – барельеф

(ծ=g)

ավարտել – закончить

մշակում – обработка



նետահար – пронзенный
стрелой

եռանդ – рвение, усердие

շարել – класть (камни)

կանթեղ – лампада

լույս փալ – светить

գմբեթ – купол

աղոթք անել – молиться

սեպուհ – военачальник

սուր – меч

նենգ – коварный

հարված – удар

խոցել – пронзить

արնաթաթախ –

окровавленный

թաղել – хоронить

կիսատ – наполовину

շիրմաքար – надгробный


камень

անավարտ – незавершенный


ուստի – следовательно,

поэтому

Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

7. Ա) 

շոր կարել տալ, վերարկուն մաքրել տալ

Բ) 

Դու ի՞նքո՞ք ես տան
շուրջը ծառեր տնկելու:



→ – Այո, ինքս եմ տնկելու:
– Ոչ, ինքս չեմ տնկելու, տնկել եմ տալու:

Դու ի՞նքո՞ք ես տան շուրջը ծառեր տնկելու:

Ամուսի՞նդ պիտի կովը կթի:

Հա՞յրդ պիտի ցայտադրուրի քարին եղնիկ քանդակի:


Իսկ նուռն ու խաղողը ինքնե՞րդ եք քանդակելու:

Պատուհանների ապակիները դու՞ պիտի լվանաս:

Այգու նստարանները պապի՞կդ պիտի ներկի:

Բահն ու քլունգը ինչու՞ ես բերել, այգին պիտի փորե՞ս:

Ահա քեզ հեղույսներ ու մանեկներ, արքան ու պտուտակաբանալի. հիմա ծորակը կնորոգե՞ս:

8. Ա) 

ձև – форма



նշաձև (նաէշ + ա + ձև) – миндалевидный

ծվաձև – овальный

լուսնաձև – лунообразный

խաչաձև – крестообразный, крест-накрест

աստղաձև – звездообразный

տանձաձև – грушевидный

օղակաձև – кольцевидный

սրտաձև – в виде сердца

կլոր – круглый



Բ) Կետերի փոխարեն օգտագործեք Ա) կետի ածականներից ըստ իմաստի.

1. – Սա ի՞նչ բան է, ո՞վ է տեսել ծնկի վրա սիրտ: – Տասիկ, հիմա ընդունված է շալվարների ծնկներին ... կարկատան դնել:

2. – Մայրիկ, ի՞նչ գեղեցիկ թխվածքաբլիթներ ես պատրաստել, այս մեկը աստղի է նման, այս մեկը՝ լուսնի, այս մեկը՝ տանձի, իսկ սա օղակ է, ինչպե՞ս ես կարողացել: – Պարզապես այս մեկի համար խմորը ... եմ կտրել, այս մեկի խմորը ... եմ կտրել, այս մեկի խմորը ... եմ դրել, իսկ սրա խմորը ... եմ դրել ու թխել:

3. Ա. Հռիփսիմեի տաճարի հիմքը ... է:

4. Մեր ճաշասեղանը փակ ժամանակ կլոր է, բայց այն կարելի է բացել, երկարացնել, և այն ժամանակ նա ... է:

5. Եղնիկը գեղեցիկ ... աչքեր ունի:

9) 

ծանալ – притворяться	ծակերպել – сформулировать
ծազնել – делать вид	ծափոխել – видоизменять
ծնել – кроить	հնածն – старомодный
ծափոր – фигурный	նորածն – модный
ծափորել – оформлять	նորածնություն – мода
ծափորիչ – оформитель	




Ձևում ենք մենք կարեք ինքներդ: Դու ինձ լավ չես հասկանում, երևի վատ եմ **ծակերպում** մտքերս: Ո՞վ է **ծափորել** այս ներկայացումը: Վերնաշապիկդ արդեն **հնածն** է, եթե մի քիչ **ծափոխենք**, էլի կարելի է հազնել իբրև **նորածն**: **Նորածնությունների** հանդեսը (журнал) սովորեցնում է **ձևել** ու կարել: Երբ ես դեռ փոքր էի, Նոր Տարուն ծնողներս ինձ **ծափոր** շոկոլադ էին նվիրում: Փոքրիկը չէր ուզում վեր կենալ, երբ նա լսեց մոր քայլերի ձայնը, քնած **ծազնավ**, որպեսզի մայրը իրեն չարթնացնի: Նասրեղինի հարևանը **ծազրեց**, թե հավատում է, որ իր կաթսան մի ուրիշ կաթսա է ծնել և վերցրեց երկուսն էլ:



Դ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

1. Շավվար կարելը դժվար չէ, ... է դժվար:
2. Քույրս ոչ միայն համեղ տորթեր է թխում, այլև գեղեցիկ ... է:
3. Նա իր մտքերը լավ է ...:
4. Քրոջս ընկերուհին տանն է աշխատում:
5. Միսիս Չիլփլին ... գլխարկ էր դնում:
6. Մայրիկիս հին մուշտակը փոքրացրի ու ..., դարձավ շատ ... կիսամուշտակ:
7. Ի՞նչ ես անմեղ ..., կարծես թե դու չես կերել իմ բաժին ... շոկոլադը:
8. Պըլը Պուղու հարևանը ..., թե փողը դնում է բարձի տակ ու բարձի մոտից վերադարձավ փողը գրպանում:

- ծանալ
- ծազնել
- ծնել
- ծափոր
- ծափորել
- ծակերպել
- ծափոխել
- հնածն
- նորածն
- նորածնություններ

9. Ա) 

ի միջի այլոց – между прочим
ի միջի այլոց, հայրիկն ու մայրիկը տանը չեն:
ի նշան (+абстр. сущ.) – в знак чего
ի պատիվ (+одуш. сущ.) – в честь кого
ի դեպ – кстати




Նվիրում եմ Արշակին **ի նշան** բարեկամության (дарственная надпись): Վերջապես հասավ վերջին ներկայացման օրը, որը, **ի դեպ, ի պատիվ ինձ** էր նշանակված. պիտի ներկայացնեիր Շիլլերի "Ավագակները (разбойники)": (*Վահրամ Փափազյան*)



Բ) Կետերի փոխարեն օգտագործեք "ի դեպ, ի միջի այլոց" միջանկյալ բառերը կամ "ի նշան, ի պատիվ" կապերը:


Երբ մեծերը ներս են մտնում սենյակ՝ երիտասարդները վեր են կենում ... հարգանքի: Նպարավաճառին համոզելու համար Ջոննին ծազրեց, որ ինքը միայն փիլիսոփայելու է եկել, իսկ իր խնդրանքը ... հայտնեց: ..., Ջոննին իսկապես վատ փիլիսոփա չէ, ի՞նչ եք կարծում: Նա ուզում էր ... հյուրի նաև մի շիշ գարեջուր վերցնել, բայց պարոն Կոզակը չտվեց:

10.Ա) 

Նոր բացված վարդեր – только что распустившиеся розы
Նոր ներկած – только что покрашенный
Նոր թխած հաց – свежесвепеченный (только что выпеченный) хлеб

Դ Բ) Կետերի փոխարեն օգտագործեք Ա) կետում բերված համապատասխան արտահայտություն.

Եթե գյուղում որևէ տանը հաց են թխում, կարելի է համարձակ այդ տունը հյուր գնալ. ասում են, թե գյուղում ...ի հոտը հրավիրատոմս է: Ինչո՞ւ է շալվարդ, որտե՞ղ ես նստել, դու չգիտեի՞ր, որ պապիկն այդում նստարաններն է ներկում, նստել ես ուղղակի ... նստարանին: Բանաստեղծները սիրում են աղջիկների դեմքը համեմատել ... հետ:

11.Ա) 

նշանդրեք – обручение
նշանած – нареченный
նշանված – обрученный
պսակադրություն – бракосочетание
նորապսակներ – новобрачные
հարսանիք – свадьба
հարսնացու – невеста
փեսացու – жених
հարս – невестка, сноха
փեսա – зять
ամուսնացած – женатый, замужем
ամուրի – неженатый, незамужем, холостой



Բ) Պատասխանեք հարցերին և նման հարցեր տվեք Ձեր ընկեր-ընկերուհիներին.

Դուք ամուսնացա՞ծ եք, ամուրի՞ եք, բաժանվա՞ծ եք: Եթե Դուք դեռ ամուսնացած չեք, կարո՞ղ եք, ասել, թե ինչպես եք ուզում որ անցնի Ձեր պսակադրությունը: Վերջին անգամ ու՞մ նշանդրեքին կամ հարսանիքին եք ներկա եղել. Ձեզ դու՞ր եկավ պսակադրությունը: Հարսնացուն գեղեցի՞կ էր, ի՞նչ գույնի զգեստ էր հագել: Իսկ փեսացու՞ն: Դուք նկատե՞լ եք, որ հարսանիքի օրը միշտ ամենագեղեցիկը հարսնացուն է լինում: Իսկ նորապսակները միշտ նման են սիրագորով աղավնիների, համաձա՞յն եք:

Դ 12. Շեղագիր բառերի փոխարեն օգտագործեք նույն կամ մոտ իմաստով բառեր:

Վարդերի *հոտից* գուլխս պտտվում է (кружится): Երևանի "Չվարթնոց" օդանավակայանը *շինել են* Չվարթնոցի տաճարից ոչ հեռու: Պուլշկինի "Դուբրովսկին" *կիսատ է*: Հայ Վերածնունդի (Возрождение) նշանավոր բանաստեղծ Նահապետ Քուլչակի ստեղծագործությունները նվիրված են *անբիծ* սիրուն:



13. Գտեք ավելորդ բառը յուրաքանչյուր շարքում.



Սար, ծոր, անապատ, գետ, գետափ, ապառաժ, բարձրաքանդակ, լեռ, անտառ:

Վարդակ, մեխակ, շուշան, մանուշակ, արևածաղիկ, ձմածաղիկ, մարգարտածաղիկ:

Աղավնի, ոգնի, կաքավ, կռունկ, ծիծեռնակ, արծիվ, սիրամարգ, սոխակ:

Քլունգ, բահ, կացին, պտուտակահան, պտուտակամեխ, պտուտակաքանակի, մանեկ, խրոց, սղոց, հեղույս, արցան:



14. Ա) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"պայման, փաճար, պսակադրություն, վարպետություն, աշխարհ, մուրճ, ձոր, ապառաժ, քանդակներ, միտք, եռանդ, կանթեղ, գմբեթ, աղոթք, հարված, շիրմաքար"** գոյականները: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել նույն գոյականները: Բերե՛ք օրինակներ:



դժվար պայման, անսպասելի պայման



Բ) Տեքստի ո՞ր գոյականներին են վերաբերում հետևյալ ածականները. **թափառական, մեծավոր, միակ, փոխադարձ, անկրկնելի, նենգ**: Այս ածականներով ուրիշ ի՞նչ գոյականներ կարելի է բնութագրել: Բերե՛ք օրինակներ:



թափառական վարպետ, թափառական երաժիշտ

15. Լրացրեք բացերը.

1. Տղաս, գնա ... մոտ, մի շիշ մածուն առ: Անցյալ տարի ... մոտ Ներսեսին հանդիպեցի, մի կտոր լյարդ (печень) առա նրա համար:	նպարավաճառ կաթնավաճառ մսավաճառ
2. Ծիծեռնակաբերդը մի գեղեցիկ ... բլուր է: 1915թ. մեկ ու կես միլիոն հայ իր գերեզմանը գտավ Տեր-Ջոր ...ում:	շրջապատ անապատ անտառապատ
3. Այս երեկո թատրոնում ... են Պ. Ջեյթունցյանի "Ղատը" Սողոմոն Թեյլերյանի մասին: Րաֆֆին իր վեպերում մեծ սիրով է ... բնությունը:	պատկերացնել ներկայացնել նկարագրել
4. Սայաթ-Նովան մի քանի տարի մնաց ... իշխանի արքունիքում (дворец), իբրև նրա բանաստեղծն ու երգիչը: Եթե Ջոննիի հայրը ոչ միայն տաղանդավոր, այլև ... բանաստեղծ լիներ, նպարավաճառը, առանց մի խոսք ասելու, ապառիկ մթերք բաց կթողներ նրա որդուն:	գորավոր մեծավոր նշանավոր
5. Հայրիկ, օգնիր ինձ այս խնդիրը ..., մի անգամ էլ բացատրիր, խնդրում եմ: Ես չեմ կարող հիմա կանխիկ ..., խնդրում եմ, ինձ ապառիկ բաց թողներ:	վճարել վաճառել վճռել

6. Դրա համար չարժե երեխային ...: Դեղագործ Գրիգորը չկարողացավ ... իր սան՝ ուսուցիչ Շատախյանի խոսքերը:	հանդուրժել հանդիմանել հանդիպել
7. Վարպետ Մոմիկը շատ վանքեր ու տաճարներ է ... եղեգնածորի շրջանում: Հետաքրքիր է, Նորավանքն իրո՞ք նրա վերջին աշխատանքն է: Առաջին հայկական պետությունը դաշնակներն են ...:	կառավարել կառուցել կռվել
8. Ընդունիր այս փոքրիկ նվերը ի ... մեր բարեկամության: Այս գործվածքների ...ից կարող ես մի բան ընտրել քո երեկոյան շրջագգեստի համար:	նմուշ նշան նշույլ
9. Մեր որդին ուղղակի ... է, այսօր դարձյալ ինձ դպրոց էին կանչել. պատկերացնու՞մ ես՝ ուսուցչի աթոռին ներկեր էր դրել: Ես ուզում եմ մի կենաց առաջարկել ի ... մեր թամաղայի:	պատիվ պատիժ ապառաժ
10. Տղաներն ուզում են Քոչարի պարել սովորել, կարծես արդեն ... է: Նա ... հերոսաբար:	ստացվել ստեղծվել սպանվել
11. Սա սովորական կեղտ չի, ... է, պետք է քիմիական մաքրման տանել: Արքան ծերացել էր, բայց դեռ ... չուներ:	նահանգ ժառանգ ժանգ
12. Քանի որ նա ժառանգ չուներ, միշտ ... էր: Երբ որ մայրս ուշադիր նայում է աչքերիս մեջ, ես ոչինչ չեմ կարողանում նրանից ...:	թախծել թաքցնել թափել
13. Մեր դպրոցի տնօրենը ... սպիտակ մորուք ուներ: Երգչի ... ձայնը բոլորին լռեցրեց:	պատկառելի հաղթական փառահեղ
14. Եթե բարձրանաք Արագածի ... ու այնտեղից նայեք Մասիսին, կթվա, թե Մասիսը շատ մոտ է: Ռուս ողղափառ եկեղեցիների ... կարծես սոխի ձև ունի:	գմբեթ գագաթ գաթա
15. Մարդ պիտի իր պատիվը ... ու ... պահի: Երբեք մի՛ ծուլանա, սկսած գործը ... մի թող:	անավարտ անարատ անբիծ
16. Տղաները նայեցին ... և զգացին, որ պիտի կռվեն, եթե ուզում են իրենց պատիվը բարձր պահել աղջկա աչքում: Մենք երեք եղբայր ենք, իսկ Նարինեն մեր ... քույրն է:	միևնույն միմյանց միակ
17. Եղբայրս ինձ համար գլխարկ գնեց, ես ... և տեսա, որ մեծ է, տարա խանութ՝ ...:	փոխել փորձել

18. – Ինչպե՞ս է ... այս հրապարակը: – Սա Ազատության հրապարակն է, բայց շատերը այն դեռևս ... են Օպերայի հրապարակ:	կանչել անվանել կոչվել
19. – Ես չեմ կարող այդ ... ընդունել: – Ցանկանանք նորապսակներին, որ իրենց ... հասնեն: – Ինչու՞ ես առանց ... ծիծաղում: – Պարոնյան եմ կարդում:	պայման պատճառ նպատակ
20. Մինչև անտառում ... հավաքեցինք, որ կրակ անենք, մութն ընկավ: Մինչև գրիչ հայտնագործելը մարդիկ ... են գրել:	փայտ փայլ փետուր
21. – Այս պատը ինչի՞ց է: – Կարծես, է:	աղյուսից հեղույսից
22. – Թռռնիկ ջան, հեղույսներն ու պտուտակամեխերը բերեցիր, բայց ... էլ են հարկավոր, առանց նրանց չեմ կարող աշխատել:	նամակներն մանեկներն մանուկներն
23. – Ոչ, շնորհակալություն, ... չեմ ուզում, միայն ոսպապուր կամ հարիսա:	աղցան աքցան
24. – Հարկավոր է նստարանը ..., մուրճն ու մեխերը բեր, կամ մի քանի հեղույս ու մանեկ:	ներկել նորոգել
25. – Այս ի՞նչ ես բերել, ինչու՞ ես ներկերը բերել: Ես գործիքներ ուզեցի ու ասացի, որ պետք է նստարանը ..., ոչ թե ...:	ներկել նորոգել
26. – Դեղատունը հեռու՞ է: – Ոչ, մի քանի ... է այստեղից:	փայլ քայլ

16. Եթե ճիշտ լրացնեք բացերը հետևյալ բառերով, ապա կստանաք բարձրաքանդակների նկարագրությունը տեքստում բերված կարգով. *աղավձիներ, եղնիկներ, կաքավներ, նռներ, շուշաններ, սիրամարգներ, վարդեր.*

երկչոտ ու նրբիրան	...՝	նշածն, գեղեցիկ աչքերով
	...՝	հյութով առլեցուն հատիկներով
նոր բացված սպիտակ	...՝	նուրբ բուրմունքով
	...՝	ծյան պես անարատ
	...՝	երկար ու ոսկեգույն փետուրներով
	...՝	փոքրիկ, գեղեցիկ գլխիկներով
սիրագորով	...՝	ի նշան անբիծ սիրո



17. Պատմեք "Նորավանք" տեքստն ըստ բանալի բայերի.



Տեսնել, սիրել, իմանալ, կանչել, պայման դնել, շինել, կատարվել, կառուցել, մնալ, ընդունել, վերցնել, իջնել, կտրել-տաշել, ծածկել, աշխատել, քանդակել, ներկայացնել, ավարտել, ստեղծել, պատրաստել, սկսել, կառուցել, շարել, նայել, հիշել, լույս տալ, հասնել, դնել, խոցել, ընկնել, կիսատ մնալ, դառնալ:

Գիտե՞ք, որ ...

Հին հայկական եկեղեցին միանեֆ կամ եռանեֆ բազիլիկա է: Գմբեթը հիշեցնում է կենցաղային շինության երդիկը ("գլխատուն"):



Միջին դարերում ավելի հաճախ հանդիպում է կենտրոնագմբեթ հորինվածքը: Լավագույն մնուշներից է ս. Հռիփսիմեի տաճարը:

Ս. Հռիփսիմեն (618 թ.) պարզ, խիստ ոճով կենտրոնագմբեթ սրահ է:

Կենտրոնագմբեթ հորինվածքի տարբերակն է հայկական ճարտարապետության մեջ լայնորեն հայտնի խաչաձև հիմքով գմբեթավոր սրահը, օրինակ՝ ս. Գրիգոր եկեղեցին


Հաղբատուն, Ամենափրկիչը՝ Սանահնում (10-րդ դ.):

Ուշ միջնադարում վանքերի ճարտարապետական համալիրները լրացնում են գավիթը, սեղանատունը, գրատունը, զանգակատունը, դամբարանը (Սանահին, Հաղբատ, Հաղարծին, Առիճ, Սաղմոսավանք, Հովհաննավանք և այլն):

Բառեր

նեֆ – неф, пространство между рядами колонн
միանեֆ – однефный
եռանեֆ – трехнефный
բազիլիկա – базилика, прямоугольный храм, обычно разделенный на нефы
կենցաղային – бытовой
շինություն – строение
գլխատուն – традиционное армянское жилище
երդիկ – отверстие в потолке над тоне́ром
միջին – средний (ջ=չ)
կենտրոնագմբեթ – центрально-купольный, ~
հորինվածք – центрально-купольная композиция

հորինվածք – композиция
նմուշ – образец
խիստ – строгий
ոճ – стиль
սրահ – зал
տարբերակ – вариант
ճարտարապետություն – архитектура
լայնորեն – широко
գմբեթավոր – купольный
միջնադար – средневековье
ճարտարապետական – архитектурный
համալիր – комплекс
գավիթ – притвор
սեղանատուն – трапезная
գրատուն – книгохранилище
զանգակատուն – колокольня
դամբարան – усыпальница



Ըստ մի ավանդության Գրիգոր Լուսավորիչը երազում տեսնում է Քրիստոսին՝ Աստծո միածին որդուն, որը հրեղեն մուրճը ձեռքին իջնում է երկնքից և ցույց է տալիս տաճարի կառուցման տեղը: Այստեղից էլ առաջացել է տաճարի անունը՝ Էջմիածին, այսինքն Միածնի իջնելու տեղը ("место сошествия едиnorodного"):



Սանահին, որտեղ Սայաթ-Նովան անց է կացրել իր մանկության ու դպրության տարիները: Սանահինի վանքի հետ է կապված նաև միջնադարի նշանավոր գիտնական Գրիգոր Սագիստրոսի գիտական գործունեության մի մասը:

Քառեր

ավանդություն – предание
երազ(ում) – сон, во сне
միածին – едиnorodный
հրեղեն – огненный
կառուցում – строительство





Իր կյանքի վերջին տարիները բանաստեղծ և երգիչ Սայաթ-Նովան անց է կացրել Հաղբատի վանքում:

առաջանալ – происходить
անց կացնել, անցկացնել – провести
դպրություն – ученичество
կապված – связано



Մ.թ. 1-ին դարում
 հելլենիստական ոճով
 կառուցված
 հեթանոսական տաճար
 Գառնիում: 301թ.
 քրիստոնեությունը իբրև
 պետական կրոն
 ընդունելուց հետո
 շարունակում է ծառայել
 իբրև արքայական
 ամառանոց
 ("գովարան"):



Գեղարդ. 4-րդ դարից հայտնի է Այրիվանք անունով (пещерный монастырь): 18-րդ դարում ստացել է Գեղարդ անունը: Ըստ ավանդության այս վանքում է պահվել առասպելական գեղարդը ("копье"): 12-13-րդ դարերում կառուցվել է Կաթողիկե վերգետնյա եկեղեցին իր գավիթով: 1283-88 թթ. հին քարանձավի տեղում ճարտարապետ Գալձազը ստեղծել է վիմափոր շինությունները: Ավագան վիմափոր եկեղեցուն այսօր էլ դեռ բխում է հեթանոսական ժամանակներից հայտնի սուրբ աղբյուրը: Եկեղեցու ժայռափոր գմբեթի կենտրոնում բացված է երդիկը:

Բառեր

Մ.թ.՝ մեր թվագրության –
 нашей эры (**Մ.թ.ա.՝ մեր
 թվագրությունից առաջ** – до
 нашей эры)
հելլենիստական –
 эллинистический
կառուցված – построенный
արքայական – царский
ամառանոց – загородный дом
գովարան – устар. дача,
 загородная резиденция
 армянских царей
առասպելական – легендарный
գեղարդ – копье (η=թ)

կառուցվել – быть построенным
վերգետնյա – надземный
քարանձավ – пещера
ճարտարապետ – архитектор
վիմափոր – высеченный в стене
շինություն – строение
ավագան – бассейн, зд. чаша
 источника
բխել – течь
սուրբ – святой (թ=խ)
աղբյուր – источник (ղբ=խա)
ժայռափոր – высеченный в
 скале
կենտրոն – центр

Образцы средневековой армянской поэзии

Գրիգոր Նարեկացի (10-11-րդ դ.դ.)



Տաղ Հարություն
(հատված)



Փառք Քրիստոսի անենազոր հարության:
Սայլն այն իջնում էր Մասիս լեռն ի վայր,
Եվ նրա վրա աթոռներ կային կարգով շարեշար,
Եվ նրա վրա գահույք ոսկեղեն,
Եվ նրա վրա բեհեզ ծիրանի,
Եվ նրա վրա որդին արքայի.
Աջից՝ վեցթևյան սերովբեներն են,
Ձախից՝ բազմաչյա քերովբեներն են,
Առջևում նրա՝ մանկունք գեղեցիկ,
Գրկերում նրանց՝ խաչ տերունական,
Ձեռքերում՝ քնար ու սաղմոսարան,
Որ երգելով ասում էին.

Փառք Քրիստոսի անենազոր հարության:

(Գրաբարից թարգմանեց՝ **Վազգեն Գևորգյանը**)

Բառեր

հարություն – воскресение

փառք – слава

ամենազոր – всемогущий

սայլ – арба, телега

կարգով շարեշար – строем,

по порядку (զ=ք)

գահույք – престол

բեհեզ – ткань

ծիրանի – пурпур, мантия

վեցթևյան սերովբեներ –

шестикрылые серафимы

բազմաչյա քերովբեներ –

многоокие херувимы

մանկունք – младенцы

գրկում – в объятиях,

прижимая к груди

տերունական – господний

քնար – лира

սաղմոսարան – псалтырь

Песнь на Воскресение Христово

Телега идет с Масиса-горы.

На телеге той – высока скамья,

А на той скамье – золотой престол,

А на том столе – пурпурова ткань

А на том тканьье – сидит царский сын,

А по праву с ним – шестикрылые,

А по леву с ним – многоокие,

А пред самым ним – отроки-краса,

А в объятиях их – то Господень крест,

А в руках у них – лира да псалтырь,

Воспевают те, славословят те:

Слава всемогущему Христову Воскресению!

(перевод **В. Брюсова***)

*Валерий Яковлевич Брюсов (1873 – 1924) – русский поэт, много переводивший армянскую поэзию и способствовавший популяризации армянской культуры в России.

Նահապետ Քուչակ (16-րդ դ.)

Երկու հայրեն



Ես աչք ու դու լույս, հոգի,
առանց լույս՝ աչքն խավարի.
Ես ձուկ ու դու ջուր, հոգի,
առանց ջուր՝ ձուկըն մեռանի.
Երբ զձուկն ի ջրընն հանեն
և այլ ջուր ձրզեն, նա ապրի,
Երբ զիս ի քենն զատեն,
քան զմեռնելն այլ ճար չի լինի:

Подстрочный перевод:

Я – глаза, а ты – свет, душа моя.
Без света глаза меркнут.
Я – рыба, а ты – вода, душа моя.
Без воды рыба умирает.
Если вытащить рыбу из воды
и бросить в другую, она будет жить.
Если меня разлучат с тобой – умру,
и только смерть мне будет
избавлением.

Литературный перевод

В. Звягинцевой:

Я – глаз, ты – свет.
Без света глазу лишь темнота
видна,
Я – рыба, ты – вода.
а рыба жить лишь в воде должна.
Но рыбу брось в другую воду,
и оживет она,
Я ж без тебя – мертвец,
а помощь умершим не нужна.



Եկո քեզի նուռ մի տամ,
կըտրե, տես քանի՞ հատ ունի.
Ամեն հատի պագ մի տուր,
ավելին հարամ, թե պիտի.
– Գընա, ծո տըղա՛ տըղխմար,
ես ըզքեզ խելոք գիտեի.
Ամեն հատի պա՞գ մի տամ,
ու՞ր եղեր կամ ու՞ր տի լինի:

Подстрочный перевод:

–Я дам тебе гранат, разрежь его,
подсчитай, сколько внутри зернышек.
За каждое зерно – по поцелую,
большого я не прошу.
–Уйди, глупый парень.
Я считала тебя умным,
За каждое зернышко – один поцелуй,
было ли когда такое и может ли быть?

Литературный перевод

В. Звягинцевой:

Вот гранат, разрежь,
ты видишь, сколько зернышек внутри, –
За зерно по поцелую,
лишнего мне не дари.
–Я тебя считала умным,
уходи и не дури.
Это слыханное ль дело –
целоваться до зари?!

Урок 22. Քառաներկուերորդ դաս

Грамматика

Результативное причастие.

Тексты


Հավերժական ծաղիկները (Ս. Հարությունյան)

Մեծ նկարիչը (Վազներ)

Изобразительное искусство Армении.

Результативное причастие


Հարակապար դերբայ

 Результативное причастие образуется от основы настоящего или прошедшего времени с прибавлением окончания **-ած**. Ср. գրած, գրված, կարդացած, մնացած, փեսած, գրած, կերած, եկած и т.д.

Результативным причастием обозначают действие, совершенное в прошлом и оставившее результат в настоящем. Употребляется в качестве самостоятельного члена предложения, а именно определения (**նստած մարդ**), или в сочетании с вспомогательным глаголом: **նա նստած է**.

Результативное причастие служит для выражения устойчивого состояния.

1 Результативное причастие глаголов в страдательной форме выражает то состояние, в которое "попал" субъект – бывший объект; в этих случаях, как правило, не указывается "бывший субъект", т.е.



кем или чем было вызвано указанное состояние. Но в случае необходимости можно ввести соответствующее дополнение послелогом **կողմից**, например, **նա սիրված է իր ընկերների կողմից** = նրա ընկերները նրան սիրում են.

2 В результативном причастии многих глаголов ощущается "результат" действия, совершенного субъектом, например, **հոգնած մարդ**;



3 или действия, совершенного над объектом, например, **նրա բռնած ծուկը, ներեցե՛ք՝ սփեպղինը, նրա նկարած գլուխգործոցը** (шедевр).



Приведем еще несколько примеров. Итак, в результативном причастии выражено состояние:

1	2	3A	3B
<p>Устойчивое состояние, выраженное страдательным глаголом</p>  <p>սիրահարված մարդ</p>	<p>Устойчивое состояние, как результат совершенного действия</p>  <p>զարմացած մարդ</p>	<p>Результат совершенного над объектом действия, выраженного переходным глаголом (с указанием субъекта действия)</p>	<p>Результат совершенного над объектом действия, выраженного переходным глаголом (без указания субъекта действия)</p>
<p>Может употребляться и как определение, и с вспомогательным глаголом (т. наз. результативное время)</p>		<p>Может употребляться только как определение.</p>	

1 Ես **ստիպված** եմ (էի) մի բան անել = Ինձ ստիպում են (ստիպում էին, ստիպեցին) (հանգամանքները, մարդիկ) մի բան անել

Ղու **հուզված** ես (էիր) = մի բան, մեկը քեզ հուզում է (հուզում էր, հուզեց). **հուզված** մարդ

Իմ ընկերը **սիրված** ու **հարգված** է (էր) = իմ ընկերոջը սիրում ու հարգում են (էին)

Նա **գբաղված** մարդ է:



2

հոգևած, նստած մարդ



Ես հոգնել եմ և նստել եմ (հոգնեցի և նստեցի) = ես **հոգևած** եմ և **նստած** եմ
Ես հոգնել էի և նստել էի = ես **հոգևած** էի և **նստած** էի

զարմացած մարդ



Ղու զարմանում ես = ղու **զարմացած** ես

կարդացած մարդ



Նա շատ է կարդացել = նա **կարդացած** է
Նա շատ էր կարդացել = նա **կարդացած** էր

զայրացած մարդ



Ղուք զայրացել եք (զայրացաք) = ղուք **զայրացած** եք
Ղուք զայրացել էիք = ղուք **զայրացած** էիք

խմած, հարբած մարդիկ



Նրանք խմել, հարբել են (խմեցին, հարբեցին) = նրանք **խմած, հարբած** են
Նրանք խմել, հարբել էին = նրանք **խմած, հարբած** էին

3A

Ես գիրք եմ կարդում → իմ **կարդացած** գիրքը,
կարդացածս գիրքը

Դու ծաղիկ բերեցիր → քո **բերած** ծաղիկը, **բերածդ**
ծաղիկը

Մա ջուր խմեց → նրա **խմած** ջուրը

Արմինեն նամակ է գրել → Արմինեի **գրած** նամակը

Մենք սովորեցինք այս դասը → մեր **սովորած** դասը

Դու ճամպրուկ բերեցիր → քո **բերած** ճամպրուկը

Նա միտք հայտնեց → նրա **հայտնած** միտքը

Դուք վազեցիք վեց կիլոմետր → ձեր **վազած** վեց
կիլոմետրը

Նրանք եկան այս ճանապարհով → նրանց **եկած** ճանապարհը

Относясь к объекту, результативное причастие употребляется только в функции определения. При этом "бывший субъект" передается родительным падежом (или притяжательным прилагательным, или притяжательным артиклем).



Заметим, что одна и та же форма результативного причастия может относиться как к субъекту, так и к объекту действия, т.е. может выразить состояние как того, кто выполнил действие, вызвавшее это состояние, так и того, с кем или с чем произошло это действие. Ср. в приведенных примерах **խմած մարդ** и **նրա խմած ջուրը**, **կարդացած մարդ** и **իմ կարդացած գիրքը** (выпивший человек и выпитая вода, начитанный человек и прочитанная книга). Обычно семантика глаголов настолько прозрачна, что она сама подсказывает, относится ли результативное причастие к субъекту, совершившему действие (բարկացած, հոգնած, նստած, կանգնած, քնած, մեռած, պառկած, հարբած, զարմացած) или к объекту. Результативное причастие большинства прямо-переходных глаголов, по жизненному опыту говорящих, может относиться только к объекту; в таких случаях подразумевается неопределенно-личное подлежащее (кто-то). Тогда ничто не препятствует употреблению одинаковых по форме результативных причастий в разных случаях – "сделавший" и "сделанный".

3B



Ներկած նստարան.

(նստարանը **ներկած** է (էր) → նստարանը ներկել են (էին),
ինչ-որ մեկը ներկել է (էր) նստարանը)

Կծած խնձոր. (խնձորը **կծած** է (էր) → ինչ-որ մեկը կծել է (էր)
խնձորը)

Կտրած գաթա → ինչ-որ մեկը կտրել է (էր) գաթան
բաց **թողած** տառեր.

տառերը բաց են (էին) **թողած** → տառերը բաց են (էին)
թողել

Կտրած բաժակ. (բաժակը **կտրած** է (էր) → բաժակը
կտրել են (էին), ինչ-որ մեկը կտրել է բաժակը)

Մերած մածուկ. (մածուկը **մերած** է (էր) → մածուկը մերել են
(էին), ինչ-որ մեկը մերել է (էր) մածուկը)



Разницу между 3А и 3В мы видим в том, что семантика глаголов в 3А требует указать **субъект действия**, т.к. иначе (без указания **субъекта действия**) может возникнуть:

- двусмысленность, как в случаях с **կարդացած** и **խմած**,
- ошибочность выбора результативного причастия («принесенный цветок, написанное письмо» – **բերված ծաղիկ, գրված նամակ** (1), а не **բերած, գրած**, т.к. необходимо указать кем принесенный, кем написанное),
- невозможность образования, но семантическая невозможность употребления результативного причастия типа **սովորած, վազած, եկած**.




К примерам 3В можно указать субъект действия, и это будет лишь **дополнительная, уточняющая информация**: **սլացիս ներկած նստարանը, փափրկի մերած մածուկը** и т.д.

Легко увидеть, что результативное причастие подобных глаголов никак не может относиться к субъектам этих действий. Поэтому даже при легкости образования результативного причастия от любого глагола предпочитают не выделять результативное время в системе изъявительного наклонения.

Если мы все-таки хотим результативным причастием выразить (давнопрошедшее, имевшее место) действие, а не состояние, то вместо вспомогательного глагола **են** употребляем глаголы **ունեմ** или **կամ**. Например: **Լսած չունեմ: Տեսած չկամ:** (Не слыхивал. Не видывал.) **Լավաշ թխած կա՞ս: Մածառ խմած կա՞ս:** (Ты когда-либо пек лаваш? Ты когда-либо пил молодое вино?)

Առաջադրանքներ և վարժություններ

1. Դուրս գրեք հարակատար դերբայները չորս սյունակով ըստ հետևյալ տիպերի.

Ենթակային վերաբերող Относящееся к субъекту		Խնդրին վերաբերող Относящееся к объекту	
Կրավորական բայ Страдательный глагол	չեզոք բայ Нейтральный глагол	գործող անձի հիշատակումով С упоминанием действующего лица	առանց գործող անձի հիշատակման Без упоминания действующего лица
1	2	3А	3В
		Արա <u>ասած</u> խոսքին 	հալած յուղի տեղ


– Ի՞նչ ես նրա ասած խոսքին հավատում, ամեն ինչ հալած յուղի տեղ ես դնում:

– Ես շատ եմ սիրում տատիկիս գործած զգեստը:

– Դու խաշած կարտոֆիլ ես սիրում, թե՞ տապակած: – Միևնույնն է, եփած, խաշած, կամ տապակած, միայն վառած կարտոֆիլ չեմ սիրում:


– Եթե այս շաբաթ զբաղված չես, գուցե գնանք ցուցահանդէս:

- Ձբաղված չեմ, բայց գիտե՞ս, շատ հոգնած եմ:
 - Բարձր մի խոսիր, երեխան արդեն պառկած է: - Դեռ քնած չի՞:
- Ոչ, դեռ քնած չի, բայց շուտով կքնի, հոգնած էր:
 - Սա մայրիկիդ կարած շո՞րճ է:
 - Ի՞նչ է գրված այստեղ:
 - Մայրիկ, ինչու՞ է այն մարդը ճանապարհին կանգնած: - Երևի ուշացած ուղևոր է, ուզում է, որ որևէ մեքենա իրեն վերցնի:
 - Կռացած մի կարդա, կհոգնես:
 - Գիտե՞ս, քո առած կաթը լավը չէր, ստիպված թափեցի:

 2. Կազմեք և հետևյալ նախադասություններում օգտագործեք փակագծերում բերված բայերի հարակատար դերբայը.



Նա գնալու է գյուղ, որպեսզի ապրի իր (կառուցել) տանը, ուտի իր (աճեցնել) բանջարեղենը, իր (քաշել) մեղրը, իր (մերել) մածուկը:



Նա գնալու է գյուղ, որպեսզի ապրի իր կառուցած տանը, ուտի իր աճեցրած բանջարեղենը, իր քաշած մեղրը, իր մերած մածուկը:

Նա գնալու է գյուղ, որպեսզի ապրի իր (կառուցել) տանը, ուտի իր (աճեցնել) բանջարեղենը, իր (քաշել) մեղրը, իր (մերել) մածուկը:

Ես դեռ չեմ կարդացել քո (տալ) գիրքը:

Ընկերուհիս շատ խելացի է ու (կարդալ):

(Ջայրանալ) մարդու հետ դժվար է խոսել:

Քո (զալ) ճանապարհը հիմա չես գտնի, արդեն ծյունով (ծածկվել) է:

Դու քեզ (պարտվել) ճանաչու՞մ ես:

Ինչու՞ ես այդպես (զարմանալ) նայում, առաջին անգամ ես ինձ տեսնում:

Քո (զնել) կոշիկները փոքր էին:

Նա հյուր էր սպասում. ամանները (լվանալ) էին, տունը (հավաքել) էր, հատակը (փայլեցնել) էր:

Պըլը Պուղու հագուստը (կարկատել) էր:

Նրանց (գտնել) փողոցը իսկապես կոչվում էր Գարնանային փողոց:

Միսիս Յիլփիի (ստանալ) ռոճիկն ավելի մեծ էր, քան Ջոյինը:

Երիտասարդի մազերը (սանրել) էին, հագուստները՝ (արդուկվել) էին, և նա միակն էր, որ հատակից բարձրացրեց գիտնականի (զցել) գիրքը:

Աբխողոմ աղան դուրս եկավ նավակից՝ մի լայն թիկնոցի մեջ (փաթաթվել):

Գետնին (ընկնել) պարկապզուկը նման էր (սպանվել) երեխայի:

Տղաների (մորթել) ոչխարը Ռևազինն էր:

Սրանք Պավլեի (դնել) պատերն են:

Պավլեն քննիչին ցույց տվեց նաև դռան ճակատին (փորել) իր անունը:

Պըլը Պուղին մեկից Շահնագարին միշտ (հիմարանալ) էր թողնում:

Երբ Ջոնին եկավ խանութ, պարոն Կոզակը վաճառասեղանի մոտ (նստել քնել) էր:

Մոմիկի (բանդակել) խաչքարերը անկրկնելի են:



Ծաղիկներն ինչքա՞ն կարող են ապրել. ինչքա՞ն կապրեն նրանք մանավանդ ծաղկամանում, ջրի մեջ դրված, մե՞կ օր, թե՞ դարեր...

Ցածրիկ մի սեղանի վրա ծաղկամաններով ծաղիկներ էին դրված: Ոսկեդեղինն ու ալ կարմիրը, կապույտն ու մանուշակագույնը, նարինջն ու ճերմակը վառվում էին կանաչի վրա: Դրանց մի մասը բերված էր ծաղկանոցներից, մյուս մասը դաշտային էր:

Ալեհեր նկարիչը, հսկայական մի ճերմակ կտավի առաջ նստած, վրձինն ու ներկապնակը ձեռքին, երկար նայում էր ծաղիկներին:

Յետո նա սկսեց նկարել: Վրձինը բարձրանում ու իջնում էր այնպես, որ կարծես նկարչի ձեռքին ոչ թե վրձին էր, այլ մուրճ, և նա ոչ թե նկարում, այլ կոփում էր ծաղիկները, որոնք իրար ետևից բացվում էին ճերմակ կտավի վրա: Այսպես սպիտակ կտավը ծաղկեց, կենդանացավ, իսկ երրորդ օրը նկարիչը կտավի վրա հոգնած ձեռքով դրեց իր ստորագրությունը՝ "Մարտիրոս Սարյան":

Ամեն ոք, երբ նայում էր նկարչի ստեղծած կտավին, ասում էր. "Այս ծաղիկները դարեր կապրեն:"

Վարպետը ծերությունն չապրեց: Նա ֆիզիկապես թույլ էր, բայց միտքն ու հոգին միշտ պայծառ էին, մինչև կյանքի վերջին օրը: Աշխատում էր անընդհատ: Երբ հարցնում էին, թե ի՞նչ է նկարելու, պատասխանում էր. "Չգիտեմ, ինքն իրեն է ստացվում, ինչ որ նկարում եմ, Հայաստան է դուրս գալիս":

Նրանք եկել էին հեռվից: Մեկը հյուսիսից էր, մյուսը՝ Հեռավոր Արևելքից, երրորդը՝ Լիտվայից: Կային Բելոռուսիայից, Ուրալից ու Միջին Ասիայից: Ձրոսաշրջիկներ էին, եկել էին Հայաստանը տեսնելու: Երբ օդանավը իջավ Երևանի օդանավակայանում, նրանք հնարավորություն չունեցան նույնիսկ Արարատը տեսնելու: Ամպամած օր էր, և զբոսաշրջիկները միանգամից չզգացին Հայաստանը այնպես, ինչպես որ պետք էր: Հաջորդ օրը նրանք գնացին թանգարան, որից հետո այցելեցին Մարտիրոս Սարյանի ցուցահանդեսը: Հենց այստեղ էլ զբոսաշրջիկների խումբը բաժանվեց երկու մասի: Սկսեցին վիճել, համոզել իրար: Մի երիտասարդ նկարիչ, որ Մարտիրոս Սարյանին վաղուց գիտեր, աշխատում էր մի տարիքոտ կնոջ հասկացնել, որ Սարյանը մեծ, շատ մեծ նկարիչ է:

– Ես ի՞նչ եմ ասում, – արդարանում էր կինը, – ես համաձայն եմ, բայց տեսե՛ք, մի՞թե սովերը երկնագույն է լինում, կամ մի՞թե աշխարհում այսպիսի ծառեր կան:

– Լինում են, մայրիկ, լինում են:

Այսպես նրանք վիճում էին մերթ այս, մերթ այն նկարի առաջ կանգնելով, և նրանցից ամեն մեկն իր կողմնակիցներն ուներ: Բայց նրանց վեճը շուտ ավարտվեց: Տասնմեկ օր հետո, երբ Հայաստանում շրջագայելով նրանք օդանավով վերադառնում էին Երևանից, մի տեղացի ուղևոր հարցրեց.

– Հավանեցի՞ք Հայաստանը:

Տարիքոտ կինը, որ մինչ այդ պատուհանից դուրս էր նայում, շուռ եկավ ու ասաց.

– Իսկ մենք Հայաստանը տեսել էինք արդեն Սարյանի կտավներում:


**Ըստ Ս. Հարությունյանի "Հավերժական ծաղիկները"
պարմվածքի (փոխադրության նյութերի ժողովածուից)**

Բառեր

- հավերժական – вечный
- ծաղիկ – цветок
- մանավանդ – в особенности
- ծաղկաման – цветочная ваза (դ=խ)
- ոսկեդեղին – золотисто-желтый
- ալ կարմիր – алый
- նարինջ – зд. оранжевый
- ճերմակ – белый
- վառվել – зд. пылать
- ծաղկանոց – цветник (դ=խ)
- դաշտային – полевой
- ալեհեր – седой
- հսկայական – огромный
- կրավ – полотно
- վրձին – кисть, кисточка (ծ=g)
- ներկապանակ – палитра
- կոփել – ковать
- բացվել – распуститься (օ цветax)
- ծաղկել – цвести (դ=խ)
- կենդանանալ – оживиться (դ=բ)
- ստորագրություն – подпись
- ծերություն – старость
- հոգի – душа (զ=ք)
- ստացվել – получаться
- Հեռավոր Արևելք – Дальний Восток
- Միջին Ասիա – Средняя Азия (ջ=չ)



- գրոսաշրջիկ – турист
- օդանավ – самолет (դ=բ)
- օդանավակայան – аэропорт (դ=բ)
- հնարավորություն – возможность
- ամպամած – облачный
- զգալ – чувствовать
- հաջորդ – следующий (դ=բ)
- թանգարան – музей
- ցուցահանդես – выставка
- խումբ – группа
- բաժանվել – разделиться



**Սարգիստո Սարյան.
քանդակագործ՝ Լ.Թոքմաջյան**

- վիճել – спорить
- վաղուց – давно
- տարիքոտ – в возрасте
- արդարանալ – оправдываться (դ=բ)
- ստվեր – тень
- մերթ ..., մերթ ... – то ..., то ...
- կողմակից – сторонник
- վեճ – спор
- ավարտվել – завершиться
- շրջագայել – совершить поездку
- տեղացի – местный
- հավանել – любить, симпатизировать
- շուռ գալ – обернуться



3. Ընտրեք հարակատար դերբայի ճիշտ ձևը.

Սենյակում հեռուստացույց կա՞ր, որտե՞ղ էր ...:	դրած / դրված
Նրա եղբայրը ինստիտուտն ... ինժեներ է:	ավարտած / ավարտված
Այս խաղողը ... է իմ պապի այգուց:	բերած / բերված
Քո ... հոտը գազի հոտ էր:	զգացած / զգացված
Ու՞ր է Ամերիկայից ... հրավերը:	ստացած / ստացված
Ջրոսաշրջիկների խումբը վիճում էր երկու մասի ...:	բաժանած / բաժանված
Մի վախենաք, մեր ... սունկը լավն է, թունավոր չէ:	հավաքած / հավաքված
– Փոքրիկս, սեղանի մոտ այդպես չեն նստի՝ սեղանից ...:	շուռ եկած / շուռ տված
Սենյակ մտա ու տեսա, որ աղջիկս աթոռները ... դրել է սեղանին ու հատակն է լվանում:	շուռ եկած / շուռ տված



4. Եթե հետևյալ նախադասություններում սխալ բան կա, ապա ուղղե՛ք:

1. Սարյանը նկարում էր հավերժական ծաղիկներ, որոնք բերված էին ծաղկանոցից ու դաշտից:
2. Սարյանը աշխատում էր մուրճով, նա կոփում էր ծաղիկները:
3. Սեղանին դրված էին կարմիր, կապույտ, սպիտակ ծաղիկներ և ոսկեգույն նարինջներ:
4. Երբ զրոսաշրջիկները Հայաստան եկան, նրանք Մասիսը չտեսան և Հայաստանը չզգացին այնպես, ինչպես որ պետք էր, որովհետև անձրևոտ օր էր:
5. Ջրոսաշրջիկների մի մասը եկել էր Մերձավոր Արևելքից, մյուս մասը՝ Փոքր Ասիայից:
6. Օդանավում մի զրոսաշրջիկ հարցրեց մի տեղացի ուղևորի, արդյոք նրան դու՞ր է գալիս Հայաստանը:
7. Երիտասարդ նկարիչն ասաց, որ իրենք Հայաստանը տեսել էին Սարյանի կտավներում:



5. Ա) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"ծաղիկներ, նկարիչ, կրավ, միտք, հոգի, ուղևոր"** գոյականները: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել նույն գոյականները: Բերե՛ք օրինակներ:




դաշտային ծաղիկներ, գույնզգույն ծաղիկներ




Բ) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"վառվել, սրացվել, կոփել, բացվել, կենդանանալ, զգալ, հավանել"** բայերը: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել այս բայերը: Բերե՛ք օրինակներ:



Արևը վառվում էր Սևանի վրա, կարգոֆիլը վառվեց.

6.  Պատասխանեք հարցերին.



Հակոբ Հակոբյան.
Լեռնային ճանապարհ, 1970

Դուք Հայաստանում եղե՞լ եք:
Սարյանի կտավները տեսե՞լ
եք: Ձեզ դու՞ր են գալիս նրա
գործերը: Սարյանի
կտավները Ձեզ օգնու՞մ են
ավելի լավ ճանաչել
Հայաստանը: Ուրիշ ի՞նչ հայ
նկարիչների եք ճանաչում:
Հայ վարպետների
ստեղծագործություններից
ո՞րը գլուխ-գործոց
կանվանեիք: Հակոբ
Հակոբյանի կտավները Ձեզ
հիշեցնու՞մ են Հայաստանը:
Իսկ Գրիգոր Խանջյանի
գորելեններ՞ը:



Հակոբ Հակոբյան.
Քարքարոտ բլուր, 1975

Գիտե՞ք, որ
«Վարդանանք»
գորելենի վերևում
գործված է 5-րդ դարի
հայ պատմիչ Եղիշեի
խոսքը՝ «Մահ ոչ
իմացեալ մահ է. մահ
իմացեալ՝
անմահություն է»*:
Ուշադիր դիտելով
գորելենը կարելի է
տեսնել, որ
Վարդանանց կռվին են
ելել հայ մշակույթի
բոլոր անմահները:

*«Смерть неосознанная
есть смерть, смерть
осознанная – бессмертие».



Գրիգոր Խանջյան.
Դրվագ «Վարդանանք» գորելենից, 1983թ.



Լրագրերը հաղորդեցին, որ Թուրքիայի բարբարոսները հայերի նոր, արյունոտ ջարդեր են կազմակերպել:

Այդ օրերին համընդհանուր սուգ էր հայերի համար, սգի մեջ էր նաև արվեստագետի տունը:

Թեոդոսիայի հայերը վաղ առավոտից հավաքվում էին Այվազովսկու տան մոտ՝ իմանալու Թուրքիայում կատարվող՝ վերջին իրադարձությունները:

Մի անգամ, առավոտյան, երբ բազմությունը սովորականի նման հավաքվել էր արվեստագետի տան մոտ և անհամբերությամբ սպասում էր Այվազովսկու երևալուն, դուրս եկավ նրա սպասավորը:

– Օ՛, բարի մարդիկ, – ասաց նա, – գիտե՞ք ի՞նչ է կատարվում:

– Ի՞նչ, – զարմացած հարցրին հավաքվածները:

– Հովհաննես Այվազովսկին հանեց սուլթան Աբդուլ Ազիզի կողմից իրեն շնորհված բոլոր շքանշանները և կախեց Ռեքս շան վզից:

Սպասավորը դեռ չէր ավարտել իր խոսքը, երբ բացվեց շքանուշքի դուռը, և Այվազովսկին երևաց իր շան հետ միասին: Շունը բարձրաձայն հաչում էր: Նրա լայն վզնոցից կախված էին ադամանդներով զարդարված թուրքական "Օսմանիե" շքանշանները: Քառասուն տարի առաջ այդ շքանշաններով սուլթան Աբդուլ Ազիզը պարգևատրել էր Այվազովսկուն այն նկարների համար, որոնք նա գնել էր իր պալատը զարդարելու նպատակով:

Այվազովսկին իրեն ուղեկցող² բազմության հետ միասին ուղղվեց դեպի ծովափ և նստեց ծերունի Անդրեասի նավակը: Երբ լողացին դեպի ծովի հեռուները, Այվազովսկին Ռեքսի վրայից հանեց վզնոցը, կապեց մի քարից և նետեց ծովը: Դրանից հետո նա կռացավ ծովի վրա, խնամքով լվաց ձեռքերը, Ռեքսին հրամայեց նույնպես լվացվել ծովի ջրում լողանալով: Նա իրեն և շանը մաքրեց շքանշանների կեղտից:

Ափ վերադառնալով՝ Այվազովսկին այսպես դիմեց բազմությանը.


– Սիրելի հայրենակիցներ, այս գիշեր ես արթնացա և հանկարծ հիշեցի սուլթանական զարչելի պարզների մասին, հասկացա, որ դրանք են թունավորում իմ տան օդը և իմ հոգին: Այժմ ես նրանցից ազատվեցի և կարող եմ հանգիստ խղճով աշխատել:

Հաջորդ առավոտյան ծեր նկարիչը իր սովորական ժամին մտավ արվեստանոց: Նա հավաքեց իր ուժերը և սկսեց նկարել "Հայերի կոտորածը Տրապիզոնում" և "Թուրքերը հայերին լցնում են նավերը" կտավները:

Ըստ Վազների "Այվազովսկի" գրքի (փոխադրության Նյուլթերի ժողովածուից)

¹ կատարվող – происходящий

² ուղեկցող – сопровождающий



Յովհ. Այվազովսկի. Բայրոնի մուտքը Սուրբ Ղազար կղզի



Բառեր

լրագիր – газета
 հաղորդել – сообщить (ղ=թ)
 բարբարոս – варвар
 արյունոտ – кровавый
 ջարդ – погром, резня (ղ=թ)
 համընդհանուր – всеобщий
 (ղ=թ, h не произн.)
 սուգ – траур (զ=ք)
 արվեստագետ – артист,
 художник, искусствовед
 վաղ – рано
 կատարվել – совершаться
 հավաքվել – собираться
 իրադարձություն – событие
 (ծ=g)
 բազմություն – толпа
 անհամբերություն –
 нетерпение (բ=փ)
 սպասավոր – прислуга
 շնորհել – даровать (h не
 произн.)
 շքանշան – орден
 կախել – вешать
 վիզ – шея
 ավարտել – завершить
 շքամուտք – парадный вход
 հաչել – лаять



վզնոց – ошейник
 զարդարել – украшать (ղ=թ)
 պարգևատրել – наградить (զ=ք)
 նետել – бросить
 խնամքով – старательно
 լողանալ – купаться, мыться
 ուղեկցել – сопровождать
 ուղղվել – направиться
 ծովափ – берег моря
 ծերունի – старик
 լողալ – плавать
 կապել – привязать
 մաքրել – очистить
 կեղտ – грязь (ղ=խ)
 դիմել – обратиться
 հայրենակից – соотечественник
 գարշելի – гадкий
 պարգև – награда (զ=ք)
 թունավորել – отравлять
 խիղճ – совесть (ղ=խ)
 արվեստանոց – мастерская
 художника
 հավաքել – собирать
 ուժ – сила
 կտրորած – резня
 լցնել – грузить

7. **?** Ա) Պատասխանեք հարցերին.


Ո՞վ հաղորդեց, որ թուրքերը հայերի նոր ջարդ են կազմակերպել: Ո՞վ էր հավաքվում արվեստագետի տան առաջ: Ո՞վ կախեց թուրքական շքանշանները Ռեքս շան վզից: Ո՞վ ասաց հավաքվածներին, որ նկարիչն իր շան վզից շքանշաններ է կախել: Ո՞վ էր վարում ձկնորսական նավակը: Ո՞վ նետեց շքանշանները ծովը: Ո՞վ լվաց իր ձեռքերը: Ո՞վ լողացավ ծովում:

 Բ)  "Ի՞նչ" դերանվամբ հարցեր կազմեք՝ հետևյալ նախադասություններն իբրև պատասխան ունենալով.


Որ թուրք բարբարոսները նորից ջարդ են կազմակերպել: Շքանշաններ: Որ Այվազովսկին իր շքանշանները հանեց ու կախեց շան վզից: Շքանշանները ծովը նետեց ու ձեռքերը լվաց: Որ այդ շքանշանները թունավորում էին իր տան օդն ու իր հոգին, և հիմա նա կարող է հանգիստ խղճով աշխատել:


 Գ)  "Ու՞մ" դերանվամբ հարցեր կազմեք՝ հետևյալ նախադասություններն իբրև պատասխան ունենալով.

Այվազովսկուն: Հավաքվածներին: Բազմությանը, որ սպասում էր նրան ծովափին:

8. Ա) 


կախել – вешать	անկախություն –
կախված – 1. висячий,	независимость
2. зависимый	կախարան – вешалка, не
անկախ – независимый	путайте с
կախում – зависимость	կախաղան – виселица

 Միջանցքում, աջ կողմում դրված էր **կախարանը**, որից հյուրերն իրենց վերարկուներն ու գլխարկներն էին **կախում**, իսկ տանտերերն իրենց հագուստը պահարանում էին **կախում**: Հայաստանը **անկախություն ձեռք բերեց** 1993թ, իսկ Արցախը դեռ չի ճանաչվել՝ իբրև **անկախ պետություն**: Ընկերոջս սենյակում պատից **կախված է** մի հին օրացույց՝ Գրիգոր Խանջյանի "Այբուբեն"-ով:


 Բ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Դուք ուզում եք ... այս նկարը ծախ պատին, բայց այստեղ ազատ տեղ չկա:
 Եղանակից է ... կզմանք այսօր գրոսանքի, թե ոչ:
 Հայաստանը ... պետություն է, իսկ Արցախը դեռ պայքարում է իր ... համար:
 Ստանիսլավսկին ասում է, որ թատրոնն սկսվում է ..., բայց ավելի ճիշտ կլիներ ասել՝ հանդերձարանից:

անկախ
 անկախություն
 կախարան
 կախել
 կախված

9. Ա) 

շքանշան = շուք + նշան	
շքամուտք = շուք + մուտք	
շուք – блеск, лоск	շքեղություն – роскошь
շքեղ – роскошный	անշուք – невзрачный

 Թեև նրա զգեստը **շքեղ** չէր, բայց աղամանդե ականջօղերն ու մատանին մի առանձին **շուք էին փախս** նրա արդուզարդին (украш): Ես չեմ կարող ընդունել այս նվերը, սա **շքեղ** նվեր է: Սենյակը կահավորված էր (меблировано) ճաշակով, բայց **առանց շքեղության**:



Բ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Սպիտակ գույնը, օրինակ սպիտակ օձիքը ... է տալիս հագուստին:

Այսօր քույրդ ... տեսք ունի, նրան շատ է սագում նոր մուշտակը:

Նա շատ համեստ է ապրում, իրեն ոչ մի ... թյուլ չի տալիս, բայց չի կարելի ասել, թե նա ... է հագնվում:

շուք
անշուք
շքեղ
շքեղություն

10. Ա)



արվեստ – искусство
արվեստանոց,
արվեստագետ
կերպարվեստ –
изобразительное
искусство
գեղարվեստական –
художественный

արհեստ – ремесло
արհեստանոց –
мастерская
ремесленника
արհեստավոր –
ремесленник
արհեստական –
искусственный



Բ) Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից համապատասխանը.

Երևանում, Սայաթ-Նովայի պողոտայի վրա է գտնվում նկարիչ Արա Բեքարյանի ... :

Նրա ... միշտ կարգ ու կանոն է. մեխերը, մուրճը, սղոցը և մյուս գործիքները միշտ իրենց տեղում են:

Վահրամ Փափազյանի պապն ուզում էր, որ իր թռչը մի ... սովորի ու համեստ ... դառնա:

Փափազյանի ... հիացան ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանում ու Եվրոպայի շատ քաղաքներում:

Ամեն երեկո հեռուստացույցով ... կինոնկար են ցուցադրում:

Բնական գործվածքը առողջության համար ավելի լավ է, քան ...:

արհեստանոցը
արվեստանոցը
արհեստանոցում
արվեստանոցում

արհեստ
արվեստ
արհեստավոր
արվեստագետ

արհեստով
արվեստով

արհեստական
գեղարվեստական
արհեստականը
գեղարվեստականը



11. Ա) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"բարբարոսներ, ջարդ, սուգ, պարգև, խիղճ"** գոյականները: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել նույն գոյականները: Բերե՛ք օրինակներ:



Թուրք բարբարոսներ, բարբարոսներն այրեցին գրքերը



Բ) Տեքստի ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"կազմակերպել, իմանալ, սպասել, շնորհել, կախել, թունավորել, աշխարհել, հավաքել"** բայերը: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել այս բայերը: Բերե՛ք օրինակներ:



Չարը կազմակերպել, գործը կազմակերպել

Գիտե՛ք որ...

Հայերեն գրերի գյուտից հետո Հայաստանում զարգանում է ձեռագրերի նկարազարդման արվեստը:



Ավետարան. 13-րդ դար. Ավետումն

Հին հայկական ձեռագրերը հարուստ են մանրանկարներով: Մանրանկարիչները (կամ ծաղկողները), բացի զարդանկարներից, զանազան դիմանկարներից ու իրենց ինքնանկարներից, պատկերում էին Ավետումը, Ծնունդը, Մկրտությունը, Խաչելությունը, Երկրորդ Գալուստը:

Չնայած դարեր են անցել, հայկական մանրանկարչությունը այսօր էլ հիացնում է իր արտահայտչականությամբ ու գույների պայծառությամբ: Մանրանկարիչները իրենք էին պատրաստում ներկերը:

Հայաստանը հնուց ի վեր հայտնի է եղել իր ներկերով, որոնցից ամենահռչակավորը որդան կարմիրն է: Այս ներկը ունի պայծառ, գեղեցիկ երանգ և չի խամրում: Հայտնի է, որ որդան կարմիրը միջատ է: Սակայն Արարատյան դաշտի այս հազվագյուտ զարդը վաղուց ի վեր անհետացել է, և այսօր գիտնականները փնտրում և գտնում են նրա անհետացած օջախները: Որդան կարմիրը պահպանելու և ուսումնասիրելու համար ստեղծված են մի քանի արգելանոցներ:

Մեզ են հասել Թորոս Ռուսիկնի (13-րդ դար, Կիլիկիա), Գրիգոր Տաթևացու (15-րդ դար, Տաթև), Մինասի (15-րդ դար, Վասպուրական) մանրանկարները:

Բառեր

գյուտ – открытие
զարգանալ – развиваться
նկարազարդում – роспись
(դ=թ)
մանրանկար – миниатюра
մանրանկարիչ – миниатюрист
զարդանկար – орнамент (դ=թ)
զանազան – различный
դիմանկար – портрет
ինքնանկար – автопортрет
պատկերել – изобразить
Ավետում – Благовещение
Ծնունդ – Рождество
Մկրտություն – Крещение
խաչելություն – Распятие
Գալուստ – Пришествие
չնայած – несмотря на
հիացնել – восхищать,
вызывать восхищение
արտահայտչականություն –
выразительность

պայծառություն – яркость
ներկ – краска
հնուց ի վեր – исстари
հայտնի – известный
հռչակավոր – знаменитый
որդան կարմիր – кошениль
(դ=թ)
պայծառ – яркий
երանգ – оттенок
խամրել – тускнеть
միջատ – насекомое (ջ=չ)
դաշտ – поле
հազվագյուտ – редкостный
զարդ – украшение (դ=թ)
վաղուց ի վեր – издавна
անհետանալ – исчезнуть
օջախ – очаг
ուսումնասիրել – изучать
արգելանոց – заповедник (գ=թ)
հասնել – дойти до




**Հակոբ Հովնաթանյան
(1806-1881)
Կաթողիկոս
Ներսես
Աշտարակեցու
դիմանկարը**

17-18-րդ դարերում էջմիածինն է դառնում կերպարվեստի կենտրոն: Ամբողջ 18-րդ դարի ընթացքում էջմիածնի տաճարը նկարագարդել են նկարիչ Հովնաթանյանների երեք սերունդ՝ պապը՝ Նաղաշ Հովնաթանը, նրա երկու զավակները՝ Հակոբ և Հարություն Հովնաթանյանները և նրա թոռը, Հակոբի որդին՝ Հովնաթան Հովնաթանյանը:

Ավելի ուշ շրջանի նկարիչներին կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական պատկերասրահում, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում, Մարտիրոս Սարյանի, Հակոբ Կոջոյանի, Արա Սարգսյանի, Երվանդ Քոչարի տուն-թանգարաններում, Ջոտտոյի՝ Գևորգ Գրիգորյանի արվեստանոց-թանգարանում, ժողովրդական ստեղծագործության

թանգարանում և մանկական ստեղծագործության թանգարանում:

Պատկերասրահում ցուցադրված են Հակոբ Հովնաթանյանի դիմանկարները, Գևորգ Բաշինջաղյանի բնանկարները (օրինակ՝ "Սևանը՝ գիշերով"), Վարդգես Սուրենյանցի պատմական կտավները (օրինակ՝ "Ուտնահարված սրբությունը"), Հովհաննես Այվազովսկու ծովանկարները, Եղիշե Թադևոսյանի, Փանոս Թերլեմեզյանի և այլոց կտավները:




Այստեղ ցուցադրվում են ոչ միայն հայ, այլև եվրոպացի և ռուս նկարիչների Վան Դեյկի, Ֆրագոնարի, Գրյոզի, Կուրբեի, Ի. Ռեպինի, Վ. Սուրիկովի, Վ. Սերովի, Կ. Կորովինի, Մ. Վրուբելի, Պ. Կոնչալովսկու, Մ. Շագալի գործերից:

Առանձին ուշադրության են արժանի արտասահմանի հայ նկարիչների գործերը՝ Էդգար Շահինի օֆորտները, ֆրանսահայ Գառնիկ Ջուլյունյանի (Գառզու), ամերիկահայ Հարություն Տիրիդյանի (Տիրիդ), իտալահայ Ժիրայր Օրաքյանի, եգիպտահայ Աշոտ Ջորյանի, բրիտանահայ Օնիկ Աղամյանի և այլոց ստեղծագործությունները:

Բառեր

- կենտրոն** – центр
- ընթացքում** – в течение
- նկարագարդել** – расписывать (դ=թ)
- սերունդ** – поколение
- շրջան** – период
- պատկերասրահ** – галерея
- ստեղծագործություն** – 1. произведение, 2. творчество

- ցուցադրվել** – выставляться
- բնանկար** – пейзаж
- ոտնահարված** – погранный
- սրբություն** – святыня (ք=փ)
- այլոց** – других (застывшая форма род. падежа от այլք)
- գործ** – произведение, труд
- առանձին** – особый
- արտասահման** – заграница



**Գառզու (Գառնիկ Զուկումյան). Երաժիշտը
(դրվագ Մանուսի եկեղեցու
նկարազարդումից
«Հայրնություն»), 1991**



**Ժիրայր Օրացյան.
Երեխաներ, 1960**

Ժամանակակից արվեստի թանգարանը ներկայացնում է Գառզուի, Ալեքսանդր Բաժբեունկ-Մելիքյանի, Երվանդ Քոչարի, Մինաս Ավետիսյանի, Հակոբ Հակոբյանի, Լավինիա Բաժբեունկ - Մելիքյանի և այլ նկարիչների գործերից: Վիլյամ Սարոյանի վկայությամբ նրանցում երևում է հայ ժողովրդի ոգին, գորությունը,



**Մինաս Ավետիսյան.
Զաջուտ, 1960**

անսպառ տաղանդը: Իսկ իտալացի նկարիչ Ռենատո Գուտուզոն, բարձր գնահատելով հայ վարպետների ստեղծագործությունը, ասանց, որ թանգարանի սրահներում հերոսական զգացում ու ճշմարիտ հայրենասիրություն է արթնանում մարդու մեջ:


Բառեր

Հայրնություն – Откровение
վիշտ – горе
վկայություն – свидетельство
ոգի – дух (զ=ք)
զորություն – мощь, сила



**Հակոբ Հակոբյան.
Վիշտ, 1961**

անսպառ – неисчерпаемый
վարպետ – мастер
հերոսական – героический
զգացում – чувство
արթնանալ – пробуждаться

12. Ա) 

արտահայտել – выразить
արտահայտություն – выражение
արտահայտիչ – выразительный
արտահայտչականություն – выразительность




դեմքի արտահայտություն	արտահայտիչ աչքեր
ծանոթ արտահայտություն	արտահայտիչ ծայն
օտար արտահայտություն	արտահայտիչ շարժում
ճիշտ արտահայտություն	արտահայտիչ հայացք
սխալ արտահայտություն	(взгляд)



Բ) Լրացրեք բացերը.

Դու ... գործածեցիր, այդ պատճառով էլ ես քեզ չհասկացա: Այդ արտահայտությունը հայերեն չէ, դա ... է: Նրա ... հիշեցնում է իր մորը: Ես չեմ հիշում, թե ի՞նչ է նշանակում այդ արտահայտությունը, բայց գիտեմ, որ ինչ-որ տեղ լսել եմ, շատ ... է:

Նա ... ունի, իր եղբոր նման: Ընկերները նրան միշտ խնդրում են թամադա լինել և իր ... բաժակաճառեր ասել: Նա մի ... արեց և մենք հասկացանք, որ նա հիմա ժամանակ չունի: Տիգրանը սենյակ մտավ ու տեսավ, որ Կարենը ... է նետում դիմացի շենքի հարևանուհուն:


13. Ա) 

ստեղծել – создать
ստեղծագործել – творить
ստեղծագործ – творческий (человек)
ստեղծագործական – творческий (относящийся к творчеству)



Բ) Լրացրեք բացերը.

Ըստ Աստվածաշնչի (Библия) Աստված ... աշխարհը յոթ օրում: Մանկական ստեղծագործության թանգարանում ցուցադրված են շնորհալի երեխաների ստեղծագործությունները, իսկ ժողովրդական ... թանգարանում՝ ինքնուս (самоучка) նկարիչների ...: Դպրոցներում գործում են ստեղծագործական խմբակներ, որտեղ ստեղծագործ երեխաները կարող են զարգացնել իրենց ... հնարավորությունները:

14. Ա) 

զարդ – украшение (դ=թ)
զարդարել – украшать
զարդարված – украшенный
արդուզարդ – туалет (օձա դ=թ)
ադամանդազարդ – украшенный, расшитый бриллиантами
ժանյակազարդ – украшенный, расшитый кружевами
մարգարտազարդ – украшенный, расшитый жемчугами (զ=թ, դ=թ)
նկարազարդ – расписанный
պատկերազարդ – иллюстрированный




Բ) Լրացրեք.

ժանյակազարդ նշանակում է ժանյակներով զարդարված:

Մարգարտազարդ:

Ադամանդազարդ:

Նկարազարդ:

15.Ա) 



պատկեր – образ
 սրբապատկեր – икона (բ=փ)
 պատկերել – изобразить
 պատկերասրահ – галерея
 պատկերագար – иллюстрированный (դ=թ)
 պատկերացնել – представить (себе), вообразить, не путайте с
 ներկայացնել – 1. знакомить, представить, 2. давать театральное представление
 պատկերացում – представление, понятие, не путайте с
 ներկայացում – представление (театральное)

Դ) Լրացրեք բացերը.

- Հայ մանրանկարիչները հաճախ են ... երկրորդ Գալուստը:
 – Մինչև Հայաստանի պատկերասրահը այցելելը են պատկերացում չունեի հայ նկարիչների մասին:
 – Իսկ հիմա ... կազմեցի՞ր:
 – Այո, բայց չեմ պատկերացում, թե ինչ երանգ ու պայծառություն ունի որդան կարմիրը:
 – Եթե այցելես Մատենադարան, ...:

Գ) Օգտագործեք "ներկայացում" կամ "պատկերացում", "ներկայացնել" կամ "պատկերացնել" բառերը:

- Ծանոթացեք, խնդրեմ, ես ուզում եմ Ձեզ ... մեր հայրենակցին, որը չի ... իր կյանքը առանց Հայաստանի:
 – Ի՞նչ ... կա այսօր թատրոնում:
 – Չգիտեմ, ... չունեմ:

Դ) Լրացրե՞ք բացերը.

Լուսանկարիչը կատարում է լուսանկարներ:
 Մանրանկարիչը, իսկ զարդանկարներ:
 Բնանկարիչը, իսկ ծովանկարներ:
 Դիմանկարիչը:
 Երբ նկարիչը ինքն իրեն է նկարում, դա կոչվում է ...:
 Թորոս Ռոսլինը ... է: Հակոբ Հովնաթանյանը ... է:
 Հովհաննես Այվազովսկին ...: Վստոյ Բաշինջադյանը ... է:



Ժանսեմ



Հովհաննես Այվազովսկի



Էդգար Շահին




Ե)

դիմանկար
 ծովանկար
 մանրանկար
 նապոլեոնի ռիպ
 օֆո ռիպ



Ե. Զոչար

16. Ա) 




դաշտ (էլեկտրական, մագնիսական) – поле
(электрическое, магнитное)
դաշտավայր – долина
մարզադաշտ – стадион
փորձադաշտ – экспериментальное поле (δ=g)




Բ) Լրացրե՛ք բացերը.

Երևանը, Դվինը, Էջմիածինը գտնվում են Արարատյան ... :
Մարզադաշտը լի էր մարդկանցով, ... ասեղ զգելու տեղ չկար: Ի՞նչ էս
մեզ վրա նոր ճաշատեսակներ փորձում, մենք քեզ համար ... ենք:
Դաշտային ծաղիկները աճում են ... :

17. Ա) 

միանալ → միացում 	բացել → ?
հաղորդել → ?	զարգանալ → ?
նկարագարողել → ?	պատկերացնել → ?
կախել → ?	թունավորել → ?




Մեր վերջին (հաղորդել) հետո մենք շատ նամակներ ենք ստացել.

→ Մեր վերջին *հաղորդումից* հետո մենք շատ նամակներ ենք ստացել.

Մեր վերջին (հաղորդել) հետո մենք շատ նամակներ ենք ստացել, որոնցում Դուք խնդրում եք կրկնել Շառլ Ազնավուրի Հայաստանին նվիրված նոր երգը. (հաղորդել) վերջում մենք կկատարենք ձեր ցանկությունը: Ցուցահանդեսի (բացել) տեղի է ունենալու վաղը: Նա չի սիրում (կախել) մեջ լինել որևէ մեկից, նույնիսկ հարազատ հորից: Բժիշկն ասաց, որ բարեբախտաբար հիվանդության (զարգանալ) կանգ է առել, նրա կարծիքով, դա սուր (թունավորել) էր: Էջմիածնի տաճարի (նկարագարողել) կատարվել է 18-րդ դարում: Մինչև Հայաստան գնալը էս (պատկերացնել) չունեի հայկական ճարտարապետության մասին:

Բ) 

առաջարկել → առաջարկություն	եղբայր → եղբայրություն
արտահայտել → ?	բարբարոս → ?
ստեղծագործել → ?	վարպետ → ?
համբերել → ?	վկա → ?
բազմանալ → ?	մեծ → մեծություն
շրջագայել → ?	ծեր → ?
փոփոխել → ?	պայծառ → ?



Նրա դեմքի (արտայատել) հասկացա, որ ...



Նրա դեմքի արտայատությունից հասկացա, որ ...

Նրա դեմքի (արտայատել) հասկացա, որ լավ լուր է ստացել:

Հայաստանը տեսնելուց հետո ավելի հարազատ է թվում Ս. Սարյանի (ստեղծագործել):

Երեխաները (համբերել) չունեն:

Մարգարաշտում հավաքված (բազմանալ) անհամբերությամբ սպասում էր խաղի սկզբին:

Այս ամառ մենք հրաշալի (շրջագայել) կատարեցինք Հունաստանում:

Այդ շաբաթ մեր դասարանում մի (փոփոխել) էլ կատարվեց:

Գրքերը այրելը (բարբարոս) է:

Շատ երկրներում է ճանաչված հայ արվեստագետների (վարպետ):

Հարևանների ու ընկերների (վկա) մեծ նշանակություն ունեցավ դատարանի որոշման համար:

Նա երջանիկ (ծեր) ապրեց: Սենյակի լույսի (պայծառ) խանգարում է հեռուստացույց նայել:



18. Շեղագիր բառերի փոխարեն օգտագործեք նույն կամ մոտ իմաստով բառեր.

Սպիտակ կտավի վրա ծաղկած հավերժական ծաղիկները հիացնում են զբոսաշրջիկներին:

Սպիտակած մազերով մի մարդ դուռը բացեց ու ներս մտավ:

Աղջիկն ուզում էր մի *չատ մեծ* տորթ թխել, բայց բան *դուրս չեկավ*:

Շրջագայությունը *վերջացավ*, և զբոսաշրջիկները, տուն վերադառնալով, հրաժեշտ տվին միմյանց:

Տարիքոտ կինը *ես շրջվեց* և ասաց, որ *նրան* շատ է *դուր գալիս* Հայաստանը:

Ամռանը *շուտ* է լուսանում:

Նա արդեն տարիքն առել էր, երբ Աստված *նրան* մի գավակ *պարգևեց*:

Մութն ընկել է, վախենում եմ, որ *Դուք* ճանապարհը չգտնեք, լավ կլինի, որ մեկը Ձեզ *ճանապարհի*:

1915թ. հայերի *կոտորածը* չի մոռացվում:

Մելիք Շահնազարը *կարգադրեց* ՊՂԸ Պուղուն հիմարների ու գժերի ցուցակը կազմել:

Տերն ուղարկեց իր *ծառային* բաղնիս, որ իմանա, արդյոք ջուր կա՞ այնտեղ:

Ծեր *կախարդի* (колдунья) *ուժը* նրա մազերի մեջ էր:

Նկարիչը սուլթանի տված պարգևները *չպրտեց* ծովը և մաքուր ու հանգիստ խղճով վերադարձավ տուն:




19. Շեղագիր բառերի փոխարեն օգտագործեք հակառակ իմաստով բառեր.

– Ներեցեք, *Դուք արտասահմանցի՞* եք (иностранец): Նրա *երիտասարդությունը* վաղ սկսվեց: Չէ՞ք ասի, թե երբ է *սկսվելու* համերգը:

† 20. Կետերի փոխարեն օգտագործեք համապատասխան բառ աջ սյունակից.

Բաղնիս են գնում ... համար, իսկ ով ուզում է ..., մեկնում է ծովափ:	լողալ լողանալ
Եթե մարդ ... վախենա, գողություն կանի ^օ , մարդ կսպանի ^օ : Ձեր միջանցքը ի՞նչ փոքր է, ... տեղ էլ չկա:	կախաղան կախարան
Այս ... նա ստացել է իր աշխատանքի համար: Ձգույշ, մեր ... դուռը ներկած է:	շքամուտք շքանշան
Գաղթականը միշտ էլ աշխատում է ... երկիր ընկնել, որովհետև այնտեղ կյանքի պայմանները բավարար են:	զարգացած զարմացած
Հայերը ... լավաշ են թխել, և դա է եղել նրանց հացը: Գողթան երգիչները ... հայտնի են եղել Հայաստանում և հարևան երկրներում:	հնուց ի վեր վաղուց ի վեր
Եղբայրս մեծ տղա է, բայց դեռ չի կարողանում փողկապր գեղեցիկ ...:	կախել կապել
Օղանավակայանում մի անծանոթ ... ինձ օգնեց ճամպրուկներս տանել:	սպասավոր ուղևոր
Տատիկս պատշգամբում ... է ստեղծել ու ծաղիկ է աճեցնում: Կատուն ... գցեց, կոտրեց:	ծաղկաման ծաղկանոց
Երեխաներ, ... խաղացեք, մի կռվեք իրար հետ: Այս կիրակի չգնա՞նք ..., խորոված անենք:	դաշտ հաշտ
Այս ... դու քանի ^օ տարեկան ես: Այս ... գեղեցիկ գույն ունի, բայց շուտ է խամրում:	ներկ նկար
Այն ..., որը Սարոյանին գրելու է մղում, հայկական է: Այվազովսկու սիրտն ու ... խաղաղվեցին և նա վերադարձավ աշխատելու:	հոգին ոգին

21.  Ձեր ընկերներին, բարեկամներին Հայաստանի մասին հարցեր տվեք և պատասխանեք նման հարցերի.

Հարցրեք Ձեր ընկերներին, թե ինչպես են նրանք պատկերացնում Հայաստանը՝ պայծառ, թե խամրած գույներով: Հետաքրքրվեցեք, թե կա՞րոյոք մի նկարիչ, որը Ձեր ընկերոջ աչքերով է տեսնում Հայաստանը, թե՞ ոչ մի նկարիչ դեռ չի նկարել նրա տեսած Հայաստանը: Դուք նկարու՞մ եք: Իսկ Ձեր ընկերներից որևէ մեկը նկարու՞մ է: Պատմեք նրա մասին, ինչպե՞ս է նա նկարում, յուղաներկո՞վ, ջրաներկո՞վ: Խնդրեք Ձեր ընկերոջը սար նկարել: Ինչպիսի՞ սար նկարեց նա: Իսկ Դու՞ք: Գիտե՞ք, որ երբ հայ երեխաներին առաջարկում են սար նկարել, նրանք միշտ նկարում են մի փոքր սար ձախից ու մի ավելի մեծ սար աջից, այսինքն՝ ով ինչպես կարողանում է, նկարում է Արարատը՝ Սիսն ու Մասիսը:

Урок 23. Քիաներեքերորդ դաս

Грамматика

Субъектное причастие.

Суффиксы -կից, -յալ.

Стихи

Մոր ձեռքերը (Պ. Սևակ)

Մոր սիրտը (Ավ. Իսահակյան)

Тексты

Տիրամոր պատկերի առջև (հատված) (Սկրտիչ Սարգսյան)

Բանտի օրագիրը (Լեռ Կամսար)

Ծաղրածուն (Միքայել Մանվելյան)

Субъектное причастие

Ենթակայական դերբայ



Субъектное причастие образуется прибавлением суффикса -ող

к основе настоящего времени глаголов спряжения -ել:	к основе прошедшего времени глаголов спряжения -ալ:
ասել - ասող	կարդալ - կարդաց - կարդացող
խոսել - խոսող	հանգստանալ - հանգստաց - հանգստացող
ուտել - ուտող	խաղալ - խաղաց - խաղացող
խմել - խմող	մոտենալ - մոտեց - մոտեցող
գրել - գրող	գալ - եկ - եկող
տեսնել - տեսնող	տալ - տվ - տվող
թողնել - թողնող	դառնալ - դարձ - դարձող
փախչել - փախչող	(վեր) կենալ - (վեր) կաց - (վեր) կացող

Оно имеет значение действительного причастия настоящего времени: говорящий, пьющий, читающий, отдыхающий и т. д.

Как и в русском языке, это причастие выражает также понятие способности к действию или к тому, чтобы стать объектом этого действия. Ср. Աշակիմ կոտրվող է: "Стекло бьущееся."

Результативное и субъектное причастия, как и прилагательные, в армянском языке не согласуются в числе и падеже с существительным: **աշխատող, հոգնած մարդ. աշխատող, հոգնած մարդու հետ. աշխատող, հոգնած մարդիկ. աշխատող, հոգնած մարդկանց մասին.** Но, как прилагательные, они легко субстантивируются, т.е. получают определенный артикль и, употребляясь как существительные, склоняются по типу -ի. **Ջրի բերածը ջուրն էլ կտանի: Ուզողին մի ամոթ, չբովողին՝ երկու:**

Неличные формы глагола

Ղերբայ



Итак, в армянском языке глагол имеет следующие неличные формы:

- причастие настоящего времени (**ներկա ղերբայ**),
- совершенное причастие (**վաղակապար ղերբայ**),
- причастие предстоящего действия (**ապակապար ղերբայ**),
- причастие отрицания (**Ժխտման ղերբայ**),
- неопределенная форма, инфинитив (**անորոշ ղերբայ**),
- результативное причастие (**հարակապար ղերբայ**),
- субъектное причастие (**ենթակայական ղերբայ**),
- причастие сопутствующего действия (**հարակցական ղերբայ**)

• **Причастие настоящего времени (գրում, կարդում), совершенное причастие (գրել, կարդացել), причастие предстоящего действия (գրելու, կարդալու), причастие отрицания (գրի, կարդա)** участвуют в образовании времен: настоящего и прошедшего несовершенного (*գրում եմ, կարդում եմ, գրում էի, կարդում էի*), совершенного и давнопрошедшего (*գրել եմ, կարդացել եմ, գրել էի, կարդացել էի*), будущего и будущего в прошлом изъявительного наклонения (*գրելու եմ, կարդալու եմ, գրելու էի, կարդալու էի*), отрицательную форму будущего и прошедшего времен сослагательного наклонения (*չեմ գրի, չեմ կարդա, չէի գրի, չէի կարդա*).

• **Неопределенная форма, результативное причастие, субъектное причастие и причастие сопутствующего действия** являются самостоятельными формами.

Неопределенная форма глагола склоняется (по типу -ու) и не образует личных форм глагола. Оно в предложении бывает определением (գրելու բուր), употребляясь с различными предлогами, может быть дополнением (ծխելու մասին) или обстоятельством (ուտելու համար, առանց հանգստանալու, գրուներուց հետո, գնալուց առաջ), в творительном падеже имеет функцию деепричастия (գնալով, մտնելով).

Причастие сопутствующего действия употребляется для обозначения действия, совершаемого параллельно с основным: Ժպտալիս նա նմանվում է իր հորը: Վազելիս նա ընկավ ու ոտքը ցալեցրեց: Причастие сопутствующего действия не изменяется.

Результативное и субъектное причастия характеризуют существительное, могут быть определением или именной частью сказуемого. При помощи результативного причастия, при желании, можно образовать т.наз. результативное время: **ներկա հարակապար, անցյալի հարակապար.**

Առաջադրանքներ և վարժություններ



1.



Վեր հանեք դերբայները.



Սուրեն Սաֆարյան,
Սայաթ-Նովա, 1963

– Սայաթ, – ասաց Աճճան, – մեր սերը մեղավոր է, ես վախենում եմ:


– Մեղավոր սեր չկա, – պատասխանեց երգիչը, – սերն աստծո ստեղծածն է, Աճճա: Սիրելը մեղք չէ: Հանցանք չէ գեղեցկություն պաշտելը: Ոճիր չէ սիրածին գրկելը: Համբուրելն անառակություն չէ: Սերն աստվածային է, աստծո ստեղծածը: Բայց աստվածայինը բարձր է աստծուց: Մեռած է չսիրող սիրող: Չհամբուրող շուրթերը չեն երգի կնգովեն: Չգրկող ձեռքերը չեն ստեղծի կկործանեն: Չսիրող մարդուն մարդ մի համարիր, Աճճա...

ըստ Ակրտիչ Սարգսյանի "Տիրամոր պարկերի առջև"

պաշտել – обожать
ոճիր – преступление
գրկել – обнимать
անառակություն – разврат
նգովել – проклинать

կործանել – разрушить,
крушить
համարել – считать (кем-то)
Տիրամայր – Богоматерь

2. Ա)



Սեր, որ աստված է ստեղծել

→ Աստծո ստեղծած սերը:

Սեր, որ աստված է ստեղծել.
Երգ, որ Սայաթ-Նովան է գրել. երգ, որ Սայաթ-Նովան երգեց. կին, որին Սայաթ-Նովան է սիրում.
Մեղր, որ ես եմ քաշել. կաթ, որ ես եմ կթել. ծառ, որ ես եմ տնկել. տուն, որ ես եմ կառուցել:
Անուն, որ Պավլեն է գրել. ոչխար, որ տղաներն են մորթել. եղնիկ, որ իմ բարեկամն է քանդակել. շոր, որ դու ես ձևել, ես եմ կարել:
Նամակ, որ դու չես գրել. ճաշ, որ երեխան չկերավ. կոշիկ, որ ոչ ոք չի հագել:



Բ) Օգտագործեք ստացված բառակապակցությունները հետևյալ նախադասություններում.



Употребите полученные словосочетания в предложениях:

Ուզու՞մ ես իմ քաշած մեղրից:

Ուզու՞մ ես ... մեղրից: Դու խմե՞լ ես ... կաթից: Արի ... ծառի տակ նստե՞մք, հանգստանա՞մք: Նա մեզ սպասում է ... տանը: ... ոչխարը Ռևազիմն էր: Ի՞նչ գեղեցիկ է ... եղնիկը: Խեղճ աղջիկը սպասում է ... նամակին:



3. Ա)



Աստված, որ սեր է ստեղծել

→ Սեր ստեղծող աստված

Աստված, որ սեր է ստեղծել. ձեռքեր, որ (որոնք) գրկում են. շուրթեր, որ համբուրում են. աղջիկ, որ դիմացի շենքում է ապրում. սիրտ, որ չի սիրում. երիտասարդ, որ բոլոր հարցերին կարճ ու զրազետ էր պատասխանում. ծերունիներ, որ զբոսնում էին փողոցում. մարդիկ, որ մեզ էին ուղեկցում. միսիս Զիլփիին, որ լաց էր լինում. մարդիկ, որ շատ են ծխում:



Բ) Օգտագործեք ստացված բառակապակցությունները հետևյալ նախադասություններում.



Употребите полученные словосочетания в предложениях:

Ասում են, թե շատ ծխող մարդիկ շուտ-շուտ են հիվանդանում:

Ասում են, թե շատ ... մարդիկ շուտ-շուտ են հիվանդանում: Գիտնականը իբրև օգնական վերցրեց ... երիտասարդին: Տաքու վարորդը դիմեց ... ծերունիներին, որոնք նույնպես չգիտեին Գարնանային փողոցի տեղը: Մեզ ... մարդիկ հեռվից ցույց տվեցին Մատենադարանը: Ջոն տեսավ ... միսիս Զիլփիին և հուզվեց: Երգիչն ասում է, որ ... սիրտը մեռած է, որ միայն ... ձեռքերը կարող են ստեղծել և ... շուրթերը՝ երգել: Կարենը կատակներ էր անում ... աղջկա հետ:



4. Կարդացե՛ք, վեր հանեք անորոշ դերբայները և ասացե՛ք, թե որ հոլովով են դրված.



Прочитайте, укажите неопределенную форму глагола и скажите, в каком падеже она употреблена:

Ա) Չորս բան կա, որ օգտակար է մարդու թե՛ հոգուն, թե՛ մարմնին. քիչ ուտելը, քիչ խմելը, քիչ խոսելը և քիչ քնելը:

մեր նախնիների խրատներից

օգրակար – полезный (զ=բ)
մարմին – тело



նախնի – предок
խրար – наставление


Բ) Մի զինվոր պատերազմ էր գնում և նա երկու ոտքով կաղ էր: Եվ զինվորներից մեկը նրան ասաց. "Ու՞ր ես գնում, քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող": Եվ նա ասաց. "Ես չեմ գնում պատերազմ փախչելու, այլ՝ կանգնելու, կռվելու և հաղթելու":

Ըստ Վարդան Այգեկցու

զինվոր – солдат
պատերազմ – война
կաղ – хромоյ
իսկույն – сразу же
փախչել – убежать, удирать
կռվել – драться, воевать
հաղթել – побеждать (ղ=խ)





5.Ա)  




Նրան դուր չի գալիս այն,
որ դու ծխում ես:

→ Նրան դուր չի գալիս *քո*
ծխելը:

Նրան դուր չի գալիս այն, որ դու ծխում ես:
 Այն, որ դու խմում ես զայրացնում է հորդ:
 Ինձ անհանգստացնում է այն, որ նա դասը չի լսում:
 Այն, որ ոչխար են մորթել, հանցանք չէ:
 Այն, որ դու առավոտյան մարզանք ես անում, շատ օգտակար է:


Բ)  




(համար) Որպեսզի լավ վազես,
հատուկ կոշիկներ են պետք:
(պատճառով) Ոտքերս ցավում
են, որովհետև շատ քայլեցի:
(առանց) Եթե դաս չսովորես,
լավ գնահատական չես ստանա:

→ Լավ *վազելու համար* հատուկ
կոշիկներ են պետք:
Շատ *քայլելու պատճառով*
ոտքերս ցավում են:
Առանց դաս *սովորելու* լավ
գնահատական չես ստանա:

(համար) Որպեսզի լավ վազես, հատուկ կոշիկներ են պետք:
 (պատճառով) Ոտքերս ցավում են, որովհետև շատ քայլեցի:
 (համար) Այս կաղամբը գնել եմ, որպեսզի դոլմա եփեմ, ոչ թե
 աղցան պատրաստեմ:
 (առանց) Եթե դաս չսովորես, լավ գնահատական չես ստանա:
 (պատճառով) Նա մեզ հետ չեկավ, որովհետև մեքենայում տեղ
 չկար:
 (նպատակով) Նա ամբողջ ամառ մաքեմատիկա պարապեց,
 որպեսզի համալսարան ընդունվի:
 (չնորհիվ) Նա ամեն ինչից տեղեկություն ունի, որովհետև շատ է
 կարդում:
 (առանց) Կարտոֆիլը չեն մաքրում, խորովում են:
 (փոխարեն) Քնից առաջ ոչ թե հեռուստացույց նայիր, այլ մի քիչ
 զբոսնիր:
 (մասին) Դու բոլորովին չես մտածում որ պիտի քննությանը
 պատրաստվես:




Ես չեմ լսել, թե ինչպես է Ծովինարը նվագում: Նասրեղինի հարևանը չի տեսել, թե ինչպես է իր կաթսան ծնում, բայց հավատում է, որ կաթսան ծնի:




Ես Ծովինարի նվագելը չեմ լսել: Նասրեղինի հարևանը չի տեսել իր կաթսայի ծնելը, բայց հավատում է իր կաթսայի ծնելուն:

Ես չեմ լսել, թե ինչպես է Ծովինարը նվագում: Նասրեղինի հարևանը չի տեսել, թե ինչպես է իր կաթսան ծնում, բայց հավատում է, որ կաթսան ծնի: Ես չեմ հիշում, թե նա ինչպես է անգլերեն խոսում: Դու տեսե՞լ ես, թե նա ինչպես է պարում: Պըլը Պուղին չի նայում, թե ինչպես է իր հարևանը փողը դնում բարձի տակ: Հարևանն էլ գիտի, որ Պըլը Պուղին չի տեսել, թե ինչպես է ինքը փողը դնում: Մենք չենք հավատում, որ նա մեզ նամակ գրի:




Շորը նախ կլվանան, հետո կարդուկեն:



Շորը *լվանալուց* հետո կարդուկեն: կամ Շորը *արդուկելուց* առաջ կլվանան:

Շորը նախ կլվանան, հետո կարդուկեն: Նախ կոշիկները (ոտքերը) կտրեն, հետո ներս կմտնեն: Նախ տեղից վեր կկենան, հետո մեծերին կբարևեն: Նախ մարզանք կանեն, հետո սառը ցնցուղ (ալա) կընդունեն:



Քույրս սիրում է տունը հավաքել ու երգել:




Քույրս սիրում է տունը *հավաքելով* երգել: կամ Քույրս սիրում է *երգելով* տունը հավաքել:

Քույրս սիրում է տունը հավաքել ու երգել: Նա տեղից վեր կացավ ու հարգանքով բարևեց աղջկա մորը: Կարենը խորամանկ ժպտաց ու ասաց, որ հայրիկն ու մայրիկը տանը չեն: Այրին ուզում էր, որ ծնեովա բաժին կաթը մի քիչ ավելանա ու կաթին ջուր էր խառնում: Վարպետ Մոմիկը նայում էր լուսնին ու հիշում էր Լուսիկին: Այդ օրը Ամենահրաշալի աղջիկը ինձ առաջին անգամ ժպտաց ու հրավիրեց իրենց տուն:



6.Ա) Գտեք յուրաքանչյուր նախադասության երկու կետերը.
Найдите две половинки каждого предложения:



Ձուր խմելիս հավերը գլուխները բարձրացնում են դեպի երկինք: 

✓ Ձուր խմելիս	Սոխրոտիկը կորցրեց իր կոշիկը:
Վագելիս	կորցրի երեք կոճակ:
Տրամվայ նստելիս	մատր կտրեց:
Աստիճաններով իջնելիս	✓ հավերը գլուխները բարձրացնում են դեպի երկինք:
Սոխ մաքրելիս	նա ընկավ:



Բ) Կարդացեք, ուշադրություն դարձրեք հարակցական դերբային:

Прочитайте, обратите внимание на причастие сопутствующего действия:



Չորս տեղ են փորձում մարդուն. սեղան նստելիս, առևտուր անելիս, գինի խմելիս և ճանապարհի գնալիս:

Մեր նախնիների խրատներից



և Ուշադրություն դարձրեք դերբայներին:

Обратите внимание на причастия.

Սոր ձեռքերը

Այս ձեռքերը՝ մո՛ր ձեռքերը,

Հինավուրց ու մո՛ր ձեռքերը...

Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...

Պսակվելիս ո՛նց են պարել այս ձեռքերը՝

Ի՛նչ նազանքով,

Երազանքով:

Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...

Լույսը մինչև լույս չեն մարել այս ձեռքերը,

Առաջնեկն է երբ որ ծնվել

Նրա արդար կաթով սնվել:

Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...

Չրկանք կրել, հոգս են տարել այս ձեռքերը

Ծով լռությա՛մբ,

Համբերությա՛մբ:

Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...

Երկինք պարզված սյուն են դառել այս ձեռքերը,

Որ չփլվի իր տան սյունը՝

Որդին կռվից դառնա տունը:

Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը՝

Մինչև տատի ձեռք են դառել այս ձեռքերը,

Այս ձեռքերը՝ ուժը հատած,

Բայց թռռան հետ մոր ուժ գտած...

Քար են շրջել, սար են շարժել այս ձեռքերը...

Ինչե՛ր, ինչե՛ր, ինչե՛ր չարժեն այս ձեռքերը՝

Նու՛րբ ձեռքերը,

Սու՛րբ ձեռքերը:

...Եկեք այսօր մենք համբուրենք որդիաբար

Մեզ աշխարհում ծնած-սնած,

Մեզ աշխարհում շահած-պահած,

Մեզնից երբեք չկշտացած,

Փոշի սրբող-լվացք անող,

Անվերջ դատող-անվերջ բանող

Այս ձեռքերը,

Թող որ ճաքած ու կոշտացած,

Բայց մեզ համար մետաքսի պես

Խա՛ս ձեռքերը...

Պարույր Սևակ

Բառեր

հինավուրց – древний
մարել – гасить
առաջնեկ – первенец (զ=չ)
սնվել – питаться
զրկանք – лишение
հոգս – забота (զ=ք)
(ծով) լռութուն –
(бесконечное, как море)
молчание
սյուն – столб
փլվել – рухнуть
կռիվ – зд. война

հափել – иссякнуть
քար շրջել – ворочать камни
սար շարժել – сделать
невозможное, досл. двигать
горы
շահել-պահել – (разг.) холить
կշտանալ – насытиться
անվերջ – без конца (զ=չ)
դափել, բանել – трудиться
ճաքել – растрескаться
կոշտանալ – огрубеть
խաւ – шелковый

Руки матери

Руки, материнские руки,
Эти древние и юные руки!..
Чего они только не делали,
руки!
На свадьбе твоей взлетали, как лебеди,
руки!
Со страстью, с тоской
Изгибались дугой.
Все выносили они,
эти руки!
Света всю ночь не гасили материнские руки,
Чтоб утешать крикуна-малыша.
Все одолеть были в силе
руки!
К небу столбами вносились
скорбные руки.
Чтоб сын не пропал
И столб дома не пал...
Сколько горя и мук
приняли руки,
Пока не взобрался внук
на бабкины руки,
И, внукам под стать,
Молодели опять...
Ворочали камни, копали арыки в округе...
Всех в мире наград достойны
родимые руки!..
Давайте поцелуем по-сыновьи
Руки, обнимающие нас, –
Что холят нас,
И любят нас, и снова
Стряхивают пыль, сметают грязь...
Все в морщинах,
В варежках дешевых,
Трудятся и стряпают чуть свет...
Этих рук, шершавых и тяжелых,
Мягче и нежней на свете нет!

(Перевод А. Коренева)



Մոր սիրտը

(հայկական ավանդակեպ)

Կա հինավուրց մի գրույց,
Թե մի տղա,
Միամորիկ,
Սիրում էր մի աղջկա:

Աղջիկն ասավ¹ – "Ինձ բնավ
Դու չես սիրում,
Թե չէ գնա՛,
Գնա՛ մորդդ սիրտը բեր":

Տղան մոլոր, գլխիկոր
Քայլ առավ²,
Լացեց³, լացեց,
Աղջկա մոտ ետ դառավ:

Երբ նա տեսավ, զայրացավ,
– Է՛լ չերևես⁴
Շեմքիս, ասավ,
Մինչև սիրտը չբերես:

Տղան գնաց և որսաց
Սարի այծյամ,
Սիրտը հանեց,
Բերեց տվեց աղջկան:

Երբ նա տեսավ, զայրացավ,
– Կորի՛ր աչքես⁵,
Թե հարազատ
Մորդ սիրտը չբերես:

Տղան գնաց՝ մորն սպանեց,
Երբ վազ կրտար⁶
Սիրտը՝ ձեռքին,
Ոտքը սահեց, ընկավ վար:

Եվ սիրտը մոր ասավ տխուր,
Լացակումած, –
"Վա՛յ, խեղճ տղաս,
Ոչ մի տեղդ չըցավա՞ց..."⁷

Ավերիք Իսահակյան

¹ ասավ – ասաց

² քայլ առավ – քայլեց

³ լացեց – լաց եղավ

⁴ էլ չերևես – էլ չերևա

⁵ աչքես – աչքիցս

⁶ երբ վազ կտար – երբ վազում էր

⁷ չցավա՞ց – չցավե՞ց

Բառեր

ավանդակեպ – сказание

գրույց – беседа

միամորիկ – единственный у матери

բնավ – вовсе

մոլոր – растерянный

գլխիկոր – с поникшей головой

շեմք – порог

որսավ – изловить, охотиться

այծյամ – серна, козуля

հանել – вынуть

կորել, կորչել – пропасть, исчезнуть

սահել – скользить

լացակումած – готовый заплакать

խեղճ – бедный (ղ=խ)



1935թ. նոյեմբերի 26. – Այսօր ժամը ութին ձերբակալվեցի:

Ու ահա փողոց դուրս գալով քայլում եմ երկու չեկիստների միջև: Հո չե՞մ կարող ասել "զնում եմ": Ոչ, եղբայր, "զնալ" չկա այլևս ինձ համար. դա ազատ մարդու հասկացություն է: Իսկ ե՞ս, "տարվում եմ", միայն "տարվում"...

Քիչ անց բանտի գրասենյակում ենք: Բերողներս ինձ հանձնում են որպես բանտի ինվենտարը, իբրև անշունչ առարկա: Ավելի քան անշունչ առարկա. քանի որ առարկան իրավունք ունի կորչելու, իսկ ես, որ բանական մարդ եմ, պիտի չկորչելու համար ինքս ինձ հսկեմ...

27 նոյ. – Այսօր արդեն բանտ եմ նստած: Բայց ո՛չ, ի՞նչ եմ ասում, – բանտ եմ կանգնած: Բանտարկյալը երբ չգիտի, թե ի՞նչ է իր մեղքը՝ նստել չի կարող: Նա կանգնել իսկ անկարող է: Նա քայլում է, նա վազում է բանտի մի անկյունից մյուսը:

Երբ քայլում ու ձայնում եմ "ի՞նչ է հանցանքս", նայում եմ շուրջս՝ ընկերներին, բարի ու սիրող ընկերներին՝ "հանգստացիր, ասում են, առանց հանցանքի չես մնա":

Ու Մակարը, բանտակիցներիցս ամենասիրվածը վերջապես ասում է.

– Հանգստացիր, սիրելիս, եթե հանցանք չունեցար, կարող ես իմ մեղադրանքից օգտվել: Ես երկու հոդվածով եմ մեղադրվում, մեկը՝ քեզ, մյուսը՝ ինձ:

28. նոյ. – Այսօր ես համեմատաբար հանգիստ եմ: Հանգիստ եմ ոչ այն պատճառով, որ հանցանք ունեմ, այլ այն պատճառով, որ հուզվելու հերթը Գուրգենինն է:

Մեր խուցը այնքան նեղ է, որ տեխնիկապես մեկ մարդու հուզվելու հարմարություն կարող է տալ: Ամեն օր մեկն է հուզվում, մնացյալ ութ հոգին նստած մխիթարում են այդ մարդուն:

Գուրգենին քննիչը "քառասուն հարց է տվել" ու վերջինս միշտ "ոչ" է պատասխանել:

– Մի՞թե քննիչն անկարող էր մի հարց էլ տալ, որին "այո" պատասխանեի: Հա՞: Մի՞թե չէր կարելի: Ո՞վ կհավատա, որ իրոք չգիտեմ: Ամաչում եմ այսքան տգիտությանս համար:

– Ինչու՞ ես ամաչում. հույն փիլիսոփա Սոկրատեսը քեզանից ավելի "տգետ" էր և բոլորովին չամաչեց. ընդհակառակը, պարծեցավ իր տգիտությամբ, – մխիթարեց Գևորգը:

– Այո, բայց այն ժամանակ տգիտությունը քաջալերվում էր, չէր պատժվում 67-րդ հոդվածով:

1 դեկտ. – Ազատ մարդը ողջ ընկույզ է, բանտարկյալը՝ ընկույզի միջուկ: Ազատը դուրսը նախագահ է, դատավոր, գրող, փաստաբան, հռետոր, ըմբիշ: Բայց նույն ազատը բանտում միայն մարդ է:

Ի՞նչ քաղցր է ապրել ըստ էության մարդկանց մեջ: Նրանք անկեղծ են, ինչպես լինում է մարդը իր ծննդյան և մահվան ժամանակ միայն, նրանք հեռագիր վեպեր են, առանց ծանծրալի առաջաբանի ու վերջաբանի:

2 դեկտ. – Կյանքումս ինչ պաշտոնի որ եղել եմ՝ տերերիս գոհ չլինելու պատճառով միշտ "ազատված" եմ եղել: Իսկ այստեղ զինված պահակ են դրել վրաս չփախչելու համար:

Այսքան "անփոխարինելի" կալանավոր լինելս չգիտեի դեռ: Բանի պետք լինելու գիտակցությունը շոյում է ինքնասիրությունս: Սակայն չպիտի ինքս ինձ կորցնեմ գլխապտույտ հաջողությունից. հանկարծ անգգույշ մի քայլ կամ փոքրիկ մի հանցանք կարող է պատճառ դառնալ, որ ես բանտից ազատվեմ ...


Մի քիչ ուշ եմ պառկում: Առավոտյան շատ եմ քնել և վախենում եմ տանջանքիս պլանը թերակատարել:

(շարունակելի)

Բառեր

բանկ – тюрьма	տգիտություն – невежество
բանկ նստել – садиться в тюрьму	փիլիսոփա – философ
ձերբակալվել – быть задержанным, арестованным	տգետ – невежественный
քայլել – шагать	ընդհակառակը – наоборот (դ=թ)
հո՛ – ведь, же	պարծենալ – хвалиться, гордиться
չեկիստ – чекист (от ЧК – чрезвычайная комиссия)	քաջալերվել – поощряться, одобряться, быть одобренным
այլևս – впредь, больше не	պատժվել – наказываться, быть наказанным
հասկացություն – понятие	ողջ – целый (զ=չ)
տարվել – вестись	միջուկ – ядро (զ=չ)
ինվենտար – инвентарь, тж.	հռետոր – оратор
գույք	ըմբիշ – борец (спортсмен)
անշունչ – неодушевленный	ըստ էության – по существу
առարկա – предмет	ձանձրալի – скучный
իրավունք – право	առաջաբան – предисловие (զ=չ)
կորչել – потеряться	վերջաբան – послесловие (զ=չ)
բանական – разумный	պաշտոն – должность
հսկել – надзирать	ազատվել – освободиться, увольняться
բանտարկյալ – арестованный	զինված – вооруженный
մեղք – вина (դ=խ)	փախչել – убежать
հանցանք – преступление	կալանավոր – арестант
իսկ – зд. даже	գիտակցություն – сознание
անկարող – неспособен	շոյել – ласкать, зд. тешить
բանտակից – сокамерник	ինքնասիրություն – самолюбие
ձայնել – голосить, вопить	կորցնել – потерять
մեղադրանք – обвинение	ինքն իրեն կորցնել – потерять себя
օգտվել – пользоваться (զ=թ)	գլխապտույտ հաջողություն – головокружительный успех
հոդված – статья	թերակատարել – недовыполнить
համեմատաբար – сравнительно	քայլ – шаг
հերթ – очередь	
խուց – камера	
տեխնիկապետ – технически	
հարմարություն – удобство	
մնացյալ – остатальной	
ուրթ հոգի, երկու հոգի – восемь человек, двое (զ=թ)	
մխիթարել – утешать	
իրոք – действительно	

Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

7. Ա) 

Բանտակիցը այն բանտարկյալն է, որը մի ուրիշի հետ նույն խցում (կամ բանտում) է բանտարկված:



Բ) Գտե՛ք հայերեն բառի թարգմանությունը.
Найдите перевод армянских слов:




✓ աշխատակից	✓ коллега
բախտակից	разделяющий общую судьбу
գիտակից	сверстник
կողակից	сознательный
հայրենակից	соотечественник
հասակակից	спутник
մասնակից	супруг
մեղսակից	соучастник
ուղեկից	участник


8. Ա) 

էլ=նույնպես էլ=և էլ=այլևս

էլ չե՛րևաս աչքիս. "գնալ" *այլևս* չկա ինձ համար



Բ) 




Դու նրան հավատու՞մ ես:



Ոչ, ես այլևս (էլ) նրան չեմ հավատում:

Դու նրան հավատու՞մ ես: Նա եկա՞վ քեզ մոտ: Դու նրանից նամակ ստանու՞մ ես: Վաղը քննություն պիտի հանձնենք. լսիր, մի քիչ էլ կարդամ դասագիրքը. դու այս դասը հասկանու՞մ ես: Դուք նույն փողոցու՞մ եք ապրում: Ձեր փողոցը դեռ կոչվու՞մ է Լենինի պողոտա:

9. Ա) 

հերթով – по очереди

առանց հերթի – без очереди

հերթից դուրս – вне очереди

ու՞մ հերթն է – чья очередь?

հերթ պահել (բռնել) – занимать очередь

– Մի անհանգստացե՛ք, բոլորդ էլ **հերթով** տոմս կգնեք

հիմա: **Ու՞մ հերթն է:**

– Հիմա **իմ հերթն է:** Խնդրում եմ, մի փորձե՛ք **առանց հերթի** անցնել, օրիորդ, ես **հերթ էի պահել**, ում ուզում եք հարցրեք: Թե՛ն ես կարող էի **հերթից դուրս** տոմս վերցնել, բայց իսկապես հիմա **իմ հերթն է:**

հերթապահ – дежурный

հերթապահություն – дежурство

հերթապահել – дежурить

հերթափոխ – смена

– Ո՞վ է այսօր **հերթապահը**: Աշխե՞ճն է **հերթապահելու**

այսօր: Նրա **հերթապահության** ժամանակ դասարանը միշտ մաքուր է լինում, մյուս **հերթափոխի** ուսուցիչներն ու աշակերտներն էլ միշտ նշում են, որ ամեն ինչ կարգին է:

Բ) Երկխոսություն կազմեք:



-Այո, ես այն օրհորդից հետո էի:

-Ո՞նց թե այն օրհորդից հետո էիք:
Օրհորդը հնձնից առաջ հերթից դուրս տոմս վերցրեց,
որովհետև նա փոքր երեխայի հետ էր:
Ու հիմա իմ հերթն է:

-Դեմա իմ հերթն է:

-Ուրեմն ես ունի՞ց հետո եմ:

-Մի՞թե դուք հերթ էիք անել:

-Զգիտեմ, հարցրեք,
թե ո՞վ է վերջինը:



Գ) Լրացրեք բացերը. Заполните пропуски:



- Երեխաներ, երեկ մյուս ... ուսուցչուհին ասաց, որ մենք
դասասենյակը կեղտոտ էինք թողել: Ո՞վ էր երեկ ...: Այո, երեկ
Աշխենը պիտի ..., բայց նա բացակա էր: Աշխենի ... ժամանակ ամեն
ինչ կարգին է լինում սովորաբար: Անփոխարինելի է մեր Աշխենը:

10.Ա)

հոգի – душа
հոգու հետ խաղալ – подшучивать
հոգին դուրս գալ – замучиться
հոգին հանել – замучить
հոգին ուտել – задержать
числительное (местоим. քանի՞) + հոգի употр. для
обозначения количества людей:
– Քանի՞ հոգի են ինձ սպասում:
– Երեք հոգի:



Այսօր այնքան լվացք արեցի, **հոգիս դուրս եկավ**: Դու
քո հարցերով **հոգիս հանում ես**. ախր ի՞նչ ես ուզում
ինձնից: Դե շուտ տու՛ր նամակս, **հոգուս հետ մի խաղա**:
Հարս ու սկեսուր ամբողջ օրը իրար հետ կռիվ են անում,
իրար հոգի են ուրում. բայց մեկը մյուսի մասին ասում
են՝ **հոգիս կերավ**: Օրը ցերեկով, **հինգ թե վեց հոգով**,
վեր կացանք մի օր դրսի գնացինք: **Քանի՞ հոգի** ես
կանչել քո ծննդյան տոնին:



Բ) Լրացրեք բացերը. Заполните пропуски:



- Ի՞նչ շատ բան եք պատրաստել: ...՞ ... եք սպասում:
- Միայն տիկին Արմինեին ու իր աղջկան: Նվարդը նրանց
այնպես է սպասում: Երեկ մի քանի տեսակ խմորեղեն է թխել, ...: Եվ
իր հարցերով, թե ե՞րբ են գալու, ե՞րբ են գալու ...: Արսենն էլ նրա ...,
ասում է թե չեն գալու, մի սպասիր: Նվարդն ու Արսենը ոնց որ ոչ թե
քույր ու եղբայր լինեն, այլ շունն ու կատուն, ամբողջ ժամանակ
իրար ...:



11. Գտեք ճիշտ սահմանումը.
Найдите правильное определение:



հպարտանալ պարծենալ	... նշանակում է գլուխ գովել, իսկ ... հպարտ լինել:
գնալ բայլել	... նշանակում է ոտքը փոխել՝ մեկ, երկու, մեկ, երկու, իսկ ... դիմել մի որոշակի ուղղությամբ:
բանկակից բանտարկյալ	... նշանակում է կալանավոր, իսկ ... կալանավոր, որ նույն բանտում է նստած:
օգտագործել օգտվել	... նշանակում է գործածել, իսկ ... օգուտ ունենալ:
սրտապնդվել քաջալերվել	... նշանակում է չհուսահատվել, իսկ ... գովասանքի արժանանալ:
առաջաբան վերջաբան	... գրվում է գրքի սկզբում, իսկ ... ով գիրքն ավարտվում է:
միջև միջուկ	... նշանակում է մի բանի միջին մասը, ասում են ընկույզի ..., ատոմի ..., իսկ ... կապ է, ասում են դաշնամուրը դրված է երկու պատուհանների ... :
առողջ ողջ	... նշանակում է թե՛ ամբողջ, թե՛ կենդանի, իսկ ... ոչ հիվանդ:
հռետոր փիլիսոփա	... նշանակում է ճառ ասող, իսկ ... մտածող, իմաստասեր:
գտնել փնտրել	... նշանակում է ուզենալ վերադարձնել այն, ինչ կորել է, իսկ ... վերադարձնել կորածը:
պառել քնել	... նշանակում է հորիզոնական դիրք ընդունել, իսկ ... Սորվեոսին հյուր գնալ:
հասարակ պարզ	... նշանակում է հասկանալի, ոչ բարդ, իսկ ... սովորական:



12. Աջ սյունակից ընտրեք համապատասխան բառ.
Выберите подходящее слово из правого столбца:



Քննության ժամանակ դասախոսը ... է, որ ուսանողները լուրջ աշխատեն:	հանձնել հսկել
– Ընկերդ միշտ մվճվում է՝ ասում է՝ ... չունեն մեքենա վարելու:	իրոք իրավունք իրավացի
– Ոչ, դու նրան մի մեղադրիր, դու ... չես, ես գիտեմ, նա ... հիվանդ է:	
– Քեզ դու՞ր է գալիս իմ մազերի գույնը: – Վատ չէ, բայց գիտե՞ս, ... չէ:	բանական բնական

13. Կետերի փոխարեն գրեք **ըստ էության** կամ **ըստ երևույթի** միջանկյալ բառերը և տեսեք, թե ինչպես է փոխվում ասվածի իմաստը.

Вместо точек поставьте вводные слова **по сути** (по сути) или **по сущ.** (по-видимому) и посмотрите, как изменится смысл сказанного:

Մենք իրար, ..., երբեք չենք հասկացել: Նա, ..., միշտ էլ իր մանկության տարիների ընկերուհուն է սիրել: Նա ոչ մի համալսարան էլ չի ավարտել, բայց, ..., կրթված երիտասարդ է: ..., սա նրա լավագույն բանաստեղծությունն է:

14. Ճիշտ է, թե՞ սխալ.

	Ճիշտ է	սխալ է
1. Լեռ Կամսարին ձերբալակեցին նոյեմբերի 26-ին:	✓	
2. Նույն օրը նա երկու չեկիստների հետ քայլում էր փողոցով, նա նրանց տանում էր բանտ:		
3. Չեկիստները նրան հանձնում են բերողներին, որպես անշունչ առարկա:		
4. Լեռ Կամսարն անհանգստանում է, որովհետև առանց հանցանքի բանտ է նստել:		
5. Լեռ Կամսարի խցում ինը բանտարկյալ կար:		
6. Մակարին երկու մեղադրանք են ներկայացրել, և նա պատրաստ է իր մեղադրանքները կիսել Լեռ Կամսարի հետ:		
7. Հաջորդ օրը Մակարի բարության շնորհիվ Լեռ Կամսարը ավելի հանգիստ է:		
8. Գուրգենը չգիտեր քննիչի տված քառասուն հարցերից ոչ մեկի պատասխանը:		
9. Սոկրատեսի ժամանակ տգիտությունը չէր պատժվում, այլ քաջալերվում էր, իսկ 20-րդ դարում տգիտության համար բանտ են նստում:		
10. Բանտարկյալները մխիթարում են Գուրգենին, որը հուզվում ու իրոք ամաչում էր իր տգիտության ու անկրթության համար:		



Ճաղրածուն

Բժշկի ընդունարանում նստած էին ութ հոգի: Բոլորն էլ անհամբեր իրենց հերթին էին սպասում: Բոլորն էլ աշխատում էին մի բանով զբաղվել, որ ժամանակն աննկատելի անցնի: Մեկը ինչ-որ շաբաթաթերթի նկարներն էր նայում, մի ուրիշը՝ պատի նկարները: Երկու հոգի էլ նստած միմյանց մոտ իրենց հիվանդությունից էին խոսում: Ամեն մեկն աշխատում էր մի բանով զբաղվել:

Եթե բոլորն էլ այդպես զբաղված չլիներին իրենցով, երևի բոլորի ուշադրությունը կկենտրոնանար պատի տակ նստած պարոնի վրա, որ ներս մտավ, առանց ոչ ոքի նայելու մոտեցավ անկյունում դրված աթոռին, մոտի սեղանի վրայից մի գիրք վերցրեց, նստեց, բացեց գիրքը և մնաց անշարժ:

Դա մոտ քառասուն տարեկան մարդ էր կամ գուցե ավելի երիտասարդ, բայց ժամանակից ավելի վաղ ծերացած: Նա շարունակ նայում էր ձեռքին բռնած գրքին, բայց չէր կարդում, որովհետև քառորդ ժամից ավելի էր, որ նա նույն էջին, նույն տողին և գուցե նույն տառին էր նայում:

Երբեմն նա նյարդային կերպով շարժում էր իր ձեռքը, կարծես ձանձրացնող ճանձեր քշելու համար: Աչքերի մեջ ձանձրույթ, թե հոգնածություն կար, շրթունքների աջ անկյունը միշտ վեր քաշած, նա երբեմն ինչ-որ անորոշ ձայներ էր հանում:

Երբ հերթը հասավ նրան, նա արագ, նյարդային կերպով բարձրացավ, բայց չշտապեց, մինչև բժիշկը երկրորդ անգամ չկրկնեց "հետևյալը":

Բժիշկը դիմեց նրան սովորական հարցով, թե ինչո՞վ կարող է օգտակար լինել: Նա մի վայրկյան լուռ էր, կարծես ուզում էր ծայն հանել, մի բան ասել, բայց կարծես մոռացել էր խոսելը. նա մի անորոշ ծայն հանեց, որն ավելի խոզի, քան մարդու ծայնի էր նման:

Բժիշկը հրավիրեց նրան նստել, ինքն էլ նստեց և լուռ սպասում էր:

– Չգիտեմ... չգիտեմ ինչ ասեմ, – նյարդային կերպով մի քանի անգամ կրկնեց նա և էլի լռեց: – Ես հիվանդ չեմ, – շարունակեց նա, – ոչ մի տեղս չի ցավում...

– Երևի լավ չեք քնում, – ընդհատեց բժիշկը:

– Չեզ ո՞վ ասաց, – վախեցած հարցրեց նա:

– Այդ դժվար չէ գուշակել: Պատմեցեք մանրամասն, ես Չեզ լսում եմ:

– Ես առողջ եմ, բոլորովին առողջ, լավ ուտում եմ, խնում, բայց չեմ քնում ... մի ամսից ավելի է, որ ես չեմ քնել... հասկանո՞ւմ եք՝ բոլորովին ... մի ամսից ավելի է, որ ես պառկում եմ և վեր կենում առանց քնելու: Ինձ թվում է, թե քունս տանում է, պառկում եմ, և որքան շատ եմ աշխատում քնել, այնքան ավելի հեռու է փախչում քունն աչքերիցս, և ամբողջ գիշերները լուսացնում եմ բաց աչքերով: Երբեմն ինձ հաջողվում է, և թվում է, որ ահա կքնեմ, վերջապես կքնեմ ... Սիրտս սկսում է ավելի կանոնավոր բաբախել, ուղեղս դադարում է մի մտքից մյուսը ցատկել, ուրախությունից քիչ է մնում ճշամ: Այդ րոպեներին իսկապես չգիտեմ, քնա՞ծ եմ, թե՞ արթուն ... Հազիվ մի քանի րոպե մնում եմ այդ դրության մեջ և անհամբեր սպասում եմ, որ ահա կընկնեմ ինքնամոռացության մեջ, երբ գալիս է նա ... նա ...

(շարունակելի)

Բառեր

ծաղրածու – клоун

ընդունարան – приемная (դ=թ)

անհամբեր – нетерпеливо

(բ=փ)

աննկատելի – незаметно

շաբաթաթերթ – еженедельная

газета (բ=փ)

միմյանց մոտ – друг у друга

կենտրոնանալ –

сосредоточиться

անշարժ – неподвижно

վաղ – рано

բռնել – держать

քառորդ – четверть (դ=թ)

էջ – страница

փող – строка

փառ – буква

նյարդային կերպով – нервно,

нервным образом (դ=թ)

շարժել – двигать, шевелить

ձանձրացնել – надоест

ճանճ – муха

քշել – гнать

ձանձրույթ – тоска, скука

հոգնածություն – усталость

(գ=ք)

շրթունքներ – губы

վեր քաշած – вздернутый

շտապել – торопиться

հետևյալ – следующий

ցավել – болеть

ընդհատել – перебить,

прервать (դ=թ)

գուշակել – угадать, отгадать

մանրամասն – подробно

թվալ – казаться

հաջողվել – удаваться

կանոնավոր – регулярно

բաբախել – стучать

ուղեղ – мозг

դադարել – перестать (второе

դ=թ)


ցատկել – прыгать, скакать

ճշամ – воскликнуть

արթուն – бодрствующий

ինքնամոռացություն –

самозабвение

15.Ա) 

Приставка **ախ-** присоединяется к основам прилагательного, существительного или глагола, образуя прилагательные и наречия отрицательного значения.

Найдите в тексте следующие слова: **нетерпеливо, незаметно, неподвижно, незначительно, неопределенно.**




Բ) Գտն՛ք ուսերե՛ն բառի բարձմանը յունը.



Найдите перевод русских слов:

✓ бездетный	անասելի
безнадежный, безнадежно	անավարտ
безответный, безответно	անբախտ
бесконечный, бесконечно	անդադար
беспрестанный, беспрестанно	✓ անզավակ
бесстрашный, бесстрашно	անզգույշ
невнимательный, невнимательно	անընդիատ
необычный, необычно	անկանոն
неосторожный, неосторожно	անկրկնելի
неповторимый	անհաղթ
непрерывный, непрерывно	անհաջող
несказанный	անհասկանալի
неудачный, неудачно	անույս
беззвучный, беззвучно	անձայն
безнаказанный, безнаказанно	անպայման
безусловный, безусловно	անպատասխան
бесполезный, бесполезно	անպատիժ
бессонный	անսովոր
неталантливый	անսպասելի
незавершенный	անվախ
неожиданный, неожиданно	անվերջ
непобедимый	անվստահ
непонятный, непонятно	անտաղանդ
нерегулярный, нерегулярно	անուշադիր
несчастный	անբուն
неуверенный, неуверенно	անօգուտ

16.Ա) 

Суффикс **-յալ** в прилагательных **մնացյալ, հետևյալ, հրաշիրյալ** – непродуктивный суффикс, восходящий к глагольному окончанию **-եալ**.



Употребительны следующие прилагательные и сочетания с ними:

անցյալ – прошлый, прошедший

մեռյալ (ժամ) – мертвый (час)

Մառուցյալ օվկիանոս – Ледовитый океан



հանգուցյալ – покойник

Միացյալ Նահանգներ – Соединенные Штаты

Միացյալ ազգերի կազմակերպություն – Организация Объединенных Наций.

по отношению к моменту в прошлом			по отношению к настоящему моменту		
←	↓	→	←	↓	→
դրանից առաջ	այդ (այն) ժամանակ	դրանից հետո	քիչ առաջ, հենց նոր	հիմա	քիչ հետո
←	✓	→	←	✓	→
նախորդ օրը (շաբաթ, ամիս, տարի)	այդ (այն) օրը (շաբաթ, ամիս, փարի)	հաջորդ կամ հետևյալ օրը (շաբաթ, ամիս, տարի)	երեկ, անցյալ շաբաթ (ամիս, տարի)	այսօր, այս շաբաթ (ամիս, փարի)	վաղը, մյուս կամ հաջորդ շաբաթ (ամիս, տարի)
←	↑	→	←	↑	→

անցյալ օրը – в тот день, давеча



Անցյալ փարի ես ընդունվեցի
համալսարան, **հիմա** առաջին
կուրսում եմ:

→ **Նախորդ փարի** ես ընդունվել էի
համալսարան, **այդ ժամանակ**
առաջին կուրսում էի:

Անցյալ տարի ես ընդունվեցի համալսարան, հիմա առաջին կուրսում եմ: Անցյալ շաբաթ գնացինք Գեղարդ, այս շաբաթ կայցելենք Էջմիածին, մյուս շաբաթ գնալու ենք Սևան: Այսօր նա զանգեց ու ներողություն խնդրեց, որ երեկ չկարողացավ գալ և խոստացավ, որ վաղը կգա:

17.Ա)

զբաղվել – заниматься
чем-л., напр. մի բանով
զբաղվել

զբաղմունք – занятие
(любое)

զբաղված (լինել) – быть
занятым

внимание!

պարապել – заниматься с
репетитором, репетировать,
тренироваться, напр.
անգլերեն պարապել,
մաթեմատիկա պարապել
պարապմունք – занятие
(урок)
պարապ կամ ազատ,
պարապ-սարապ (լինել) –
быть свободным или
праздным, незанятым.
պարապել ≠ պարապ լինել



– Երեկոյան ի՞նչ ես անում, **ազա՛ր ես:**
– Ոչ, **զբաղված եմ**, անգլերենի **պարապմունք** ունեմ:
– Հա, մոռացել էի, որ դու անգլերեն **ես պարապում:**
– Այո, ես քեզ նման **պարապ-սարապ** չեմ:
– Ես էլ **զբաղմունք ունեմ**, **պարապ չեմ**, ես էլ
մաթեմատիկա ու աշխարհագրություն **եմ պարապում**,
որ տնտեսագիտության ֆակուլտետ ընդունվեմ:
– Դե լավ, կատակ եմ անում, մի նեղացիր:

† P) Լրացրեք բացերը **ազար, գբաղված, պարապ, պարապել** բառերով.

Заполните пропуски словами **ազար, գբաղված, պարապ, պարապել**:

– Գոնե քննությունից առաջ հարկավոր է լավ ...: Իսկ դու ամբողջ օրը ... ման ես գալիս, տեսնու՞մ ես՝ ընկերդ քիթ քորելու ժամանակ չունի, և աշխատում է, և սովորում, անընդհատ ... է:

– Ես էլ ... ժամանակ չունեմ, բայց չեմ հասկանում, թե ուր է գնում ժամանակս:

† Q) Լրացրեք բացերը՝ **գբաղմունք** թե՞ **պարապմունք**.
Заполните пропуски: **գբաղմունք** или **պարապմունք**?

... հետո կհանդիպենք: Ի՞նչ ես անում, էլ ուրիշ ... չունե՞ս, որ այս հիմար ֆիլմն ես նայում: Ի՞նչ ես պարապ ման գալիս, մի որևէ ... գտիր քեզ համար: Ժամը քանիսի՞ն է սկսվում ձեր ...:

18.Ա) ☞

Կենտրոնանալ (сосредоточиться) ≠ շեղվել (отвлечься)
ուշադրությունը կենտրոնանում է մի բանի վրա ≠
ուշադրությունը շեղվում է մի բանից
մեկի ուշադրությունը կենտրոնացնել մի բանի վրա ≠
մեկի ուշադրությունը շեղել մի բանից
մեկի ուշադրությունը գրավել – привлечь чье-либо
внимание

☞


Ուսուցչուհին աշխատում է երեխաների ուշադրությունը գրավել, **կենտրոնացնել դասի վրա**, բայց դրսում արդեն գարուն է, թռչունները երգում են պատուհանի գոգին, և երեխաների **ուշադրությունը շեղվում է**: – Երեխաներ, ասում է ուսուցչուհին, – **կենտրոնացեք**, խնդրում եմ, **մի շեղվեք**, շուտով ստուգարք ենք ունենալու, **ուշադրություն դարձրեք** հատկապես այն բառերի վրա, որոնցում *փ, ք, թ, ց, չ* է լսվում, բայց *բ, գ, դ, ձ, ջ* է գրվում:

† P) Լրացրեք բացերը **գրավել, դարձնել, կենտրոնանալ, կենտրոնացնել, շեղվել** բառերով.

Заполните пропуски словами **գրավել, դարձնել, կենտրոնանալ, կենտրոնացնել, շեղվել**:



– Գիտե՞ք, ձեր տղան շատ ընդունակ է, բայց ցրված է (рассеянный), բոլորովին չի կարողանում իր ուշադրությունը ... մի բանի վրա, հաճախ շեղվում է, լուսամուտից դուրս է նայում, իր ձեռագրին ուշադրություն չի ..., ինձ չի հաջողվում նրա ուշադրությունը ...:

– Այո, ես էլ եմ նկատել, որ վերջերս նա դժվարանում է ..., մի հասարակ բանից ուշադրությունը ... է: Երեխան արդեն հոգնել է, գարուն է:

19. Ա) 



լրագիր, թերթ կամ օրաթերթ – газета
 ամսագիր – журнал (գիտական, բժշկական,
 հասարակական-քաղաքական)
 հանդես – иллюстрированный журнал
 խմբագիր – редактор
 թղթակից – корреспондент
 քարտուղար – секретарь
 հատուկ թղթակից – специальный корреспондент
 սեփական թղթակից – собственный корреспондент




Օրաթերթը լույս է տեսնում ամեն օր:


օր → շաբաթ, ամիս

Գ) Լրացրե՛ք բացերը.


Խմբագրությունում աշխատում են խ..., թ..., ք...: ... խմբագրում է նյութերը (материалы): ... հոդված է գրում կամ հարցազրույց է վարում: Դ... թ... նյութ է ուղարկում խմբագրությանը:

Դ)  Պատասխանեք հարցերին.

Ի՞նչ հասարակական-քաղաքական կամ գիտական ամսագիր եք ստանում: Դուք սիրու՞մ եք նորածնությունների հանդես նայել: Բժշկական ամսագրերի կամ հանդեսների խորհուրդներին հետևու՞մ եք արդյոք: Ո՞ր թղթակցի հոդվածներն են հատկապես գրավում ձեր ուշադրությունը: Դուք ի՞նչ թերթ եք կարդում: Ո՞ր թերթին եք վստահում: Ձեր կարծիքով ո՞ր թերթն է ամենից ուշագրավը, ի՞նչ խորհուրդ կտայիք կարդալ ձեր ընկերներին: Դուք սիրու՞մ եք հարցազրույցներ կարդալ: Ու՞մ հետ հարցազրույց կցանկանայիք կարդալ կամ դիտել հեռուստացույցով: Ավելի լավ չէ՞ր լինի, եթե Դուք հարցազրույց վարեիք. ի՞նչ հարցեր կտայիք Ձեր հերոսին: Իսկ Դուք ինչպե՞ս կպատասխանեիք Ձեր տված հարցերին:

20. Ա) 

նախադասություն – предложение
 բառ
 տառ
 էջ
 պարբերություն – абзац
 տող

Բ)  Պատասխանեք հարցերին.

Քանի՞ էջից է կազմված այս գիրքը: Ո՞ր էջում է սկսվում "Ծաղրածու" նովելը, ո՞ր էջում է այն ավարտվում: Ո՞ր պարբերության մեջ է հանդիպում ծանծ բառը. այդ պարբերության ո՞ր տողում է այն: Քանի՞ նախադասություն կա առաջին պարբերության մեջ: Քանի պարբերություն կա "Ծաղրածու" նովելի առաջին մասում: Քանի՞ տառ կա ծանծրույթ, ծանծրալի, ծանծրացնող բառերում:



21. Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից մեկը.

Ընտանիքում ամենամեծ երեխային ասում են ... :	առաջնեկ միամորիկ
Երբ մարդ շատ է ուզում մի բանի հասնել, ասում են դա նրա ... է:	նազանքն երազանքն
Գայլը որս անելով է ... :	սնվում սնուցում
Էջը ..., քո ուզած բանաստեղծությունը մյուս էջին է:	շարժիր շոջիր
Բժշկի ընդունարանում պետք է ... պահպանել:	լռություն համբերություն
Եթե ..., մի քիչ էլ հաց ու պանիր կեր:	չկշտացար չկոշտացար
Հաց ու պանիր կեր ու ...:	բանիր դատիր
Ինչու՞ չի գալիս այդ Պողոսը, մի՞թե կարելի է այսքան սպասեցնել, համբերությունս ... :	սահեց հատեց

22.Ա) քիչ է մնում + желат. накл. – еще чуть-чуть и ...
 քիչ մնաց կամ քիչ էր մնում + желат. накл. – чуть было не



Բ)



և

- Դու, ի՞նչ է, ծիծաղու՞մ ես ինձ վրա:	→	- Ոչ, բայց քիչ է մնում ծիծաղեմ:
- Դու նրան տվեցի՞ր քո հասցեն:		- Ոչ, բայց էիչ մնաց (քիչ էր մնում) տալի:

- Դու, ի՞նչ է, ծիծաղու՞մ ես ինձ վրա: - Դու նրան տվեցի՞ր քո հասցեն: - Դու, ի՞նչ է, լա՞ց ես լինում: - Այս ի՞նչ ձայն էր, դու ընկա՞ր: - Այս ի՞նչ հոտ է, խորովածը վառվու՞մ է: - Բաժակը կոտրվե՞ց: - Այսօր ի՞նչ ցուրտ է, ձյու՞մ է գալիս: - Ջուրը թափվե՞ց:

23.Ա) հազիվ կամ հազիվ հազ – едва, с трудом
 հազիվ կամ հազիվ թե + желат, накл. – вряд ли
 հազիվ կամ հազվադեպ – редко


Հազիվ (հազվադեպ) են պատահում այդպիսի ծաղրածուներ: Նա հիվանդությունից հետո շատ թույլ է. **հազիվ (հազիվ հազ)** է քայլում: Ի՞նչ ես բացատրում նրան, նա այդ բանը **հազիվ (հազիվ թե)** հասկանա:



Բ) Լրացրեք բացերը՝ օգտագործելով **հազիվ** բառով արտահայտություններ և ասեք, թե որտեղ այն կարելի է փոխարինել **հազիվ հազ, հազիվ թե, հազվադեպ** բառերով.

Заполните пропуски и скажите, где **հազիվ** означает "едва", где "вряд ли", где "редко":


Նա այնքան արագ է խոսում, ես նրան չեմ հասկանում, այսինքն, ուզում էի ասել՝ ...: Նա յոթերորդ դասարանում է, բայց դեռ կարդալ չգիտի, այսինքն ուզում էի ասել՝ ..., 10 տարում դպրոցը չի ավարտի, ուզում էի ասել՝ ...: Այդպիսի ծույլ աշակերտ չի պատահում, այսինքն ...: Եթե նամակ գրես մի շաբաթից շուտ չի հասնի, ուզում եմ ասել՝ ..., ավելի լավ է՝ հեռագիր տաս: Նոր էի վերջացրել գործս, ... էի նստել մի քիչ հանգստանալու, հյուր եկավ:

24. Ա) 

քնած ≠ արթուն
քնել ≠ արթնանալ
քնով անցնել, քնով ընկնել – проспять
քնաթաթախ – сонный
քնատ, քունը գլխին – недоспавший
քնկոտ – сонливый
քնաբեր – снотворный
քունը բերել "усыплять" ≠ քունը փախցնել "отгонять сон"
քունը տանել "хотеть спать" ≠ քունը փախչել
"перестать хотеть спать"
քնեցնել – укладывать
անքուն լինել (մնալ), անքնություն ունենալ, գիշեր(ներ)
լուսացնել
Բարի գիշեր, անուշ քուն, քաղցր երազներ:

Р) Ответьте на вопросы:

Սովորաբար ժամը քանիսի՞ն էք պառկում, անմիջապես քնու՞մ եք: Ե՞րբ եք ալվելի հեշտ քնում, երբ շու՞տ եք պառկում, թե՞ երբ ուշ եք պառկում: Իսկ առավոտյան հե՞շտ եք արթնանում: Առավոտյան ժամը ութին դուք դեռ քնած եք լինում սովորաբար, թե՞ արդեն արթուն եք: Իսկ երեկոյան ժամը տասնմեկին կամ տասներկուսին արդեն քնած եք, թե՞ դեռ արթուն եք: Երբ սովորականից ուշ եք քնում առավոտյան քնո՞վ եք անցնում, թե՞ կարողանում եք ժամանակին արթնանալ: Դուք քնկո՞տ եք: Անքնություն չունե՞ք: Եթե ձեր քունը չի տանում, ի՞նչ եք անում, քնաբե՞ր եք խմում, երաժշտություն եք լսում, գի՞րք եք կարդում: Կարդալուց ձեր քունը չի՞ փախչում: Իսկ երաժշտությունը ձեր քունը փախցնու՞մ է, թե՞ ընդհակառակը, քուն է բերում: Դուք երազ տեսնու՞մ եք: Առավոտյան ձեր երազները հիշու՞մ եք, թե՞ մոռանում եք: Ձեր երազները իրականանու՞մ են: Գոնե մեկը իրականացե՞լ է: Դուք Ձեր երազները ուրիշներին պատմու՞մ եք: Իսկ երբ ուրիշներն են Ձեզ իրենց երազները պատմում, Դուք նրանց հաճույթո՞վ եք լսում: Կարո՞ղ եք պատմել Ձեր երազներից մեկը, օրինակ՝ ամենասարսափելին, կամ ամենազեղեցիկը: Պատահե՞լ է, որ դուք անքուն գիշեր անցկացնեք: Սիրու՞մ եք ընկերների հետ գիշեր լուսացնել խարույկի մոտ (у костра):


25. Ա) 

Ձեր ի՞նչն է ցավում (ի՞նչդ է ցավում, քո ի՞նչն է ցավում) – что болит?
Ձեր որտե՞ղն է ցավում (որտե՞ղդ է ցավում) – где болит?
Գլուխս (աչքս, ձեռքս, ոտքս, փորս "живот", մեջքս "спина", ստամոքսս "желудок", լյարդս "печень", թոքերս "легкие", սիրտս, կոկորդս "горло", ատամս "зуб") է ցավում:



"Վայ, խեղճ տղաս, Ոչ մի տեղդ չըցավա՞ց..."

Р) 



– Ի՞նչ է, Վիգենն իրեն լավ չի՞ զգում:
– Ատամն է ցավում:

ատամ → մեջք, ստամոքս,
լյարդ, սիրտ, գլուխ, թև, ակամոջ

9) Ответьте на вопросы:

• – Այս գիրքը կարդա, հոյակապ գիրք է:

– Ես չեմ կարող կարդալ:

– Ինչու՞:

–:

• – Կանգ առնենք, ես այլև չեմ կարող քայլել:

– Ինչու՞:

–:

• – Խորոված անե՞նք:

– Չէ, այսօր չէ:

– Ինչու՞:

–:

• – Նա չի կարող գրատախտակին գրել:

– Ինչու՞:

–:

• – Ես չեմ կարող կռանալ:

– Ինչու՞:

–:

• – Ես ոչինչ չեմ կարող ուտել:

– Ինչու՞:

–:

• – Անալգին կամ ասպիրին կա՞:

– Ինչու՞, ի՞նչ է պատահել:

–:



գլխացավ – головная боль (физическая)

գլխացավանք – головная боль (забота)

գլուխը պտտվում է – голова кружится

գլխապտույտ – головокружение, головокружительный

(напр. գլխապտույտ հաջողություն)

սրտացավ (մարդ) – сердобольный

սիրտը խառնում է – тошнит

սրտխառնոց – тошнота

փորացավ – 1. боль в животе, 2. беспокойство, просьба




Հիվանդը իրեն վատ է զգում, **հարբուխ** (насморк) **ունի**, նրա **ջերմությունը** (температура) բարձրանում է, նրա **սիրտը խառնում է**, **ցավեր է ունենում**, նա **դիմում է բժշկին**, **դեղեր**, **հաբեր** (лекарства, таблетки) է **ընդունում** (խմում), **բուժվում է** (лечиться), **առողջանում է** (выздоровливает):

Բժիշկը **քննում է** (осматривать) հիվանդին, **լսում է սիրտը** (սիրտը բաբախում է, խփում է), **թոքերը** (հիվանդը խորն է շնչում – глубоко дышать), **շոշափում է փորը ստամոքսը**, **յարդը**, **աղիքները** (кишечник), **հաշվում է զարկերակը** (пульс), **չափում է հիվանդի ջերմությունը**, **ճնշումը** (давление), **նայում է կոկորդը**, **ստամոքսը**, **լեզուն**:

Բժիշկը **բուժում է նշանակում** (назначать лечение), **դեղատոմս է գրում**, **խորհուրդներ է տալիս**, **բուժում է** (лечить):

Ե) Կարդացե՛ք և ասե՛ք՝ այս երիտասարդը շա՞տ հիվանդ է արդյոք, նա կբուժվի՞, ի՞նչպե՞ս կբուժվի:



- Հը, ի՞նչ ասաց բժիշկը:
- Նայեց, լսեց, քննեց, ճնշումս չափեց, զարկերակս հաշվեց, դեղ գրեց: Հետո էլ ասաց՝ լավ կլինի՝ Արզնի կամ Ջերմուկ գնաս:
- Դե խնդրիր պետիդ¹, թող քեզ արձակուրդ² տա, նա սրտացավ մարդ է:
- Կտա՞ որ... Լավ, կփորձեմ:

- Պարոն պետ, գիտե՞ք, վերջերս ես ինձ լավ չեմ զգում. գլխացավեր ու գլխապտույտ եմ ունենում, վատ եմ քնում, սիրտս խառնում է:


- Հետո՞, հետո՞, փորացավդ ասա, ի՞նչ փորացավ ունես:

- Ինձ արձակուրդ է հարկավոր:

- Ես էլ անքնություն ունեմ և գլխացավ ու գլխացավանք: Էլ չեմ ասում, որ շուրջս նայում եմ՝ ամեն ինչից սիրտս խառնում է: Ի՞նչ անենք: Բժշկի դիմիր:

- Դիմել եմ, բուժում է նշանակել: Բայց նաև ասել է, որ մի որևէ առողջարան գնամ:


- Լավ, տեսնենք, մի բան կանենք:





¹պետ – начальник

²արձակուրդ – отпуск (ծ=ց, դ=թ)

Գ) Լրացրեք բացերը. Заполните пропуски:



- Իմ փոքրիկ արջուկ, դու հիվա՞նդ ես: Ի՞նչդ է ..., ցույց տուր ինձ ..., ասա ա՛ա՛ա: Հիմա ես կչափեմ քո ... հետո կչափեմ ..., ահա

...: Հետո կլսեմ  և : Հարկավոր է նաև ... հաշվել: Երևի

 է ցավում: Ես քեզ հետևյալ  եմ նշանակում. մի քիչ  ու մորի որ ուտես, ամեն ինչ կանցնի, դու պարզապես քաղցած ես:

Урок 24. Քաան չորսերորդ դաս

Тексты

Աղվես և թղթատար գայլ (Վ. Այգեկցի)

Այրի կին և խորթ որդի (Վ. Այգեկցի)

Բանտիս օրագիրը (Լեռ Կամսար) (շարունակություն)

Ծաղրածուն (Միքայել Մանվելյան) (շարունակություն)

Песня

Երազ

Две новеллы Л. Енгибаряна ("Зонтик" и "Тореадор") для перевода на армянский язык.



Աղվես և թղթատար գայլ

Աղվեսը մի գրած թուղթ գտավ և տարավ գայլին և ասաց. "Շատ աշխատեցի և իշխանից քեզ համար մի թուղթ հանեցի, որ ամեն գյուղ, ուր հանդիպես, քեզ պիտի տա մի ոչխար:" Եվ այդպես խաբեց գայլին. և միասին գնացին մի գյուղ, և աղվեսը նստեց բլուրի վրա և թուղթը տվեց գայլին: Երբ գայլը գյուղը մտավ, վրա թափվեցին շները, և մարդիկ նրան գանահարեցին: Եվ գայլը, հազիվ ազատվելով, հասավ աղվեսին: Եվ աղվեսն ասաց. "Ինչու՞ թուղթը ցույց չտվիր:" Եվ գայլն ասաց. "Ցույց տվի, բայց գյուղում հազար շուն կար, որ գիր չգիտեր:"

Վարդան Այգեկցի ("Աղվեսագրքից")

Բառեր

աղվես – лиса

գայլ – волк, թղթատար ~ – волк

курьер

իշխան – князь

հանել – зд. достать, добыть

խաբել – обмануть (ը=փ)


բլուր – холм

վրա թափվել – наброситься

գանահարել – избить



Այրի կին և խորթ որդի



Մի այրի կին ուներ մի կով, և նրա խորթ որդին ուներ մի էշ: Եվ խորթ որդին գողանում էր կովի կերը ու տալիս էշին: Եվ այրի կինն աստծուն աղաչեց, որ աստված էշին մեռցնի: Բայց կովը մեռավ, և այրին լաց եղավ ու



"Աղվեսագրքից"

Բառեր

խորթ – неродной

կով – корова

էշ – осел


կեր – корм

աղաչել – умолять

մեռցնել – умертвить

տարբերել – отличить

Մեկնաբանություններ, առաջադրանքներ, վարժություններ

1. Ա) 

խաբել (բ=փ)
խաբվել – обмануться (բ=փ)
խաբերա – обманщик (оба բ=փ)
խաբություն – обман (բ=փ)
խաբերայություն – надувательство (оба բ=փ)
խաբուսիկ – призрачный, обманчивый (բ=փ)
խաբուսիկություն – обманчивость, призрачность (բ=փ)



Բ) Լրացրեք բացերը համապատասխան բառերով.

Այսօր թեև արև է, բայց բոլորովին էլ շոգ չէ, եղանակը ... է: Դու ինձ ինչի՞ տեղ ես դնում, ես ինչպե՞ս կարող էի քեզ ..., քո փողը վերցնել ու քեզ ետ չտալ: Մի՞թե քո կարծիքով ես ... եմ: Ես ինքս եմ ... ու իմ ամբողջ փողը նրանց վատահել: Բայց դու դեռ մի հուզվիր, գուցե դեռ ամեն ինչ պարզվի՞, գուցե ոչ մի ... էլ չկա՞:



2. Լրացրեք բացերը.

Пасынок – *խորթ որդի* 

отчим – ?

падчерица – ?

мачеха – ?

3. Պատասխանեք հարցերին: Բերված պատասխաններից որի՞ հետ եք համաձայն:

С каким ответом вы согласились бы?

Ա) Ո՞վ է ավելի խորամանկ, աղվե՞սը, թե՞ գայլը: Ինչու՞:

Աղվեսը, որովհետև խաբեց գայլին ու սխալ թուղթ տվեց նրան:

Գայլը, որովհետև առանց թուղթը կարդալու ուզեց գյուղացիներին խաբել:

Բ) Ո՞վ է ավելի անգրագետ, գա՞յլը, թե՞ շները: Ինչու՞:


Գայլը, որովհետև նա աղվեսի տված թուղթը նույնիսկ չկարդաց:


Շները, որովհետև նրանք չկարողացան կարդալ գայլի ցույց տված թուղթը:

Գ) Ո՞վ չկարողացավ մի բանը մյուսից տարբերել, Աստվա՞ծ, թե՞ այրի կինը: Ինչու՞:

Աստված, որովհետև էջը կտվից չտարբերեց:

Այրի կինը, որովհետև սոված ու հիվանդ անասունը չտարբերեց կուշտ ու առողջ անասունից ու աստծուց անհնար բան խնդրեց:

4.Ա) 



Запомните названия некоторых животных и несколько фразеологических выражений, сравнений и метафор с названиями животных:

Աղվես ասում են խորամանկ մարդու մասին:

էջ ասում են հիմար ու համար (упрямый) մարդու մասին:

Ոչխար ասում են հիմար ու միամիտ (наивный) մարդու մասին:

Գառ (Ասրծու գառ) ասում են անմեղ մարդու մասին (agnez Божий):

խոզ ասում են փնթի (неряшливый) մարդու մասին:

Արջ (սարի արջ) ասում են կոպիտ, անտաշ (грубый, неотесанный) մարդու մասին:

Մուկ կամ **նապաստակ** (заяц) ասում են վախկոտ մարդու մասին:

Օձ (змея) ասում են ճեղձ (коварный) մարդու մասին:

Փիլ (слон) ասում են խոշոր (крупный) մարդու մասին:

Բ) Գտե՛ք համապատասխան արտահայտողը ընդհանրը.

ոնց որ շունն ու կատուն լինեն
 հավի հիշողություն
ԵԳԱՆ ՈՒՏ
 что коту забава, то мышонку – смерть
 волчий аппетит
 глаза лани
 бычья сила
 считать ворон
 со скоростью черепахи
 куриная память
 повторять, как попугай
 петушиться
 сделать из мухи слона
 (жить) как кошка с собакой
 Թուֆակի պես կրկնել
 Գայլի ատրոժակ
 Կրիայի արագությամբ
 Ճանճ հաշվել
 Եղնիկի աչքեր
 Երևոյան
 Կատվի խաղը մկան մահը
ԼՈՒՆ ՈՒՂՄ ԴԱՐՃՆԵԼ

Գ) Գտե՛ք յուրաքանչյուր նախադասության երկու կեսերը.
 Найдите две половинки каждого предложения:
 Քննություն է, էլի, կանցնի, ի՞նչ ես վախենում, մուկ ես դառել:

✓ Քննություն է, էլի, կանցնի, ի՞նչ ես վախենում, – Այո, բայց իրար հետ ոնց որ շունն ու կատուն լինեն:
Ոչինչ չի ուզում հասկանալ, այստեղ մա՞րդ է ապրում, թե՞ խոզ:
Փիղը մտավ կրկեսը (պրք), բռնեց կրկեսի կեսը:
Զգույշ վերցրու երեխային, որ չարթնացնես, գոռաց փողոցի տղան:
Տնաշեն, զգույշ եղիր, երևի ճանճ ես հաշվում:
Այս ի՞նչ փնթիություն է, երեք հարյուր տարի է ապրում:
– Ի՞նչ սիրում երեխաներ են քո զարմիկն ու զարմուհին: էջի մեկն է:
Հետաքրքիր է, դասարանում ի՞նչ ես անում, որ դասը չես լսում, ի՞նչ ես թուֆակի պես նույն բանը կրկնում:
Արդեն հասկացա, լու՜ն ուղտ մի դարձրու:
– Է՛յ, արևոյան, ու՞ր եք գնում այդ չորսաչքանու հետ, – հավի հիշողություն ունես:
Ենձ մարդու մասին ասում են ...	✓... մուկ ես դառել:
Ասում են, թե կրիան Յագո կամ օձ:
– Էլի՞ մոռացար հեռախոսի համարը, ոնց որ սարի արջ լինես:
– Դե լավ, ի՞նչ է եղել որ, հանձնարարությունդ մոռացել եմ, տես ի՞նչ աստճո գառ է:




Դ) Կենդանաբանական խաչբառ (зоологический кроссворд):

Ուղղահայաց (по вертикали). 1. Բանող անասուն (կովի ամուսինը): 3. Միամիտ կենդանի, որին Պավլեն ու տղաները մորթեցին, երբ քաղցած էին: 4. Դոն-ժուան հավերի շրջանում: 5. Թռչուն: Խոսելիս հայտնում է ուրիշների մտքերը: 8. Ցատկող միջատ (насекомое): Նրան երբեմն ուղտ են դարձնում: 9. Թռչող միջատ: Աղե-ստամոքսային հիվանդություններ է տարածում (распространять) ճաշարաններում: 11. Չորքուտանի (четвероногий): Իր սեփական փորի համար մուկ է բռնում և դա համարվում է օգտակար աշխատանք: 13. Բոլորը վախենում են նրանից, իսկ նա վախենում է մկներից: Պարսկական բանակում ծառայել է որպես տանկ: 14. Փոքրիկ կրծող (грызун): Կատվի խաղը նրա մահն է: 17. Երկար ականջներով կենդանի. հաճախ հիմար ու համառ մարդուն են այդպես անվանում:

Հորիզոնական (по горизонтали). 2. Կենդանի, որն իրեն պահում է փնթի մարդու պես: 6. Գորշ կենդանի, որին հեքիաթներում բոլորը խաբում են՝ խորամանկ աղվեսը, վախկոտ նապաստակը, նույնիսկ յոթ այծիկները: 7. Կենդանի, որի շարժման արագությունը դանդաղ ընթացքի չափանիշ է: 10. Թռչուն, որի երեխաները ուրիշների բներում (гнездо) են ծնվում: 12. Թռչուն, որի փետուրը գրում է գեղեցիկ և անսխալ: 15. Կենդանի, որը երկա՛ր-երկա՛ր ապրում է առանց ջրի: 16. Թռչնակ, որը տաք անկյուն գտնելու հույսով աշնանը չի փախչում օտար երկիր:

Ըստ Էդվարդ Սարգսյանի



Подсказка: блоха – լու, кукушка – կկու, гусь – ւազ



Բանարիս օրագիրը

(շարունակություն)

3 դեկտ. – Զննիչիս մոտ եմ կանչված այսօր առաջին հարցաքննության: Հավասար քանակությամբ "այո" և "ոչ" եմ վերցնում հետս տեսածիս "այո", չտեսածիս "ոչ" ասելու համար: Սակայն երբ երեք ժամ տևող հարցաքննությունից վերադառնում եմ, նկատում եմ, որ բոլորովին "այո" չեմ գործածել և միայն "ոչ"ն է պետք եկել:

Մի անգամ էլ կզնամ. եթե քննիչս այնպիսի հարցեր տա, որոնց պատասխանը բացառապես "ոչ" պիտի լինի՝ այլևս "այո" չեմ վերցնի հետս:

5 դեկտ. – Այսօր խուզարկություն է: Բարձիս տակից տարան հինգ լրագիր, որոնք պահել էի արտաքննցային պետքերի համար: Բողոքեցի ու խնդրեցի կամ թողնել այն, կամ արտաքննոցում թուղթ կախել: Մի պահանջ, որին պատասխանեցին. – այստեղ բանտ է, այստեղ հյուրանոց չէ, որ արտաքննոցում թուղթ կախենք:

Խեղճ մարդ: Եթե միայն արտաքննոցում թուղթ կախելով բանտը կարող է հյուրանոց դառնալ, մի տոննա թղթով աշխարհի բոլոր բանտերը հյուրանոց կդարձնեի ...

7 դեկտ. – Կինս այսօր երշիկ է ուղարկել ինձ և սպիտակ հաց:

Անհրաժեշտ է իմանալ ինձ բռնողների տրամադրությունը: Եթե հարցաքննությունից հետո պիտի ապրեմ, ապա կարելի է ուտել. իսկ եթե պիտի մեռնեմ միանգամայն ավելորդ է:

Կեսօրին մորթվող անասունին առավոտյան չեմ կերակրում սովորաբար:

Բանտում որքա՞ն մուկ կա: Հետաքրքիր է, նրանք գիտե՞ն, որ այստեղ բանտ է :

8 դեկտ. – Եթե ճշմարիտ է, որ մտադրվելը նշանակում է գործի կեսը կատարել, ապա ուրեմն ես այսօր կիսով չափ մեռած եմ, որովհետև մտադրվեցի մեռնել:

Մի հարմար օր, հետագայում, մի անգամ էլ "կմտադրվեմ" և կազատվեմ բոլորովին այս անցավոր աշխարհից:

Քանի օր ինքս ինձ չեմ տեսել: Այստեղ, բանտում, հայելին արգելված առարկա է:

Ու եթե վաղը հարցաքննությանս ժամանակ քննիչի "քեզ ճանաչու՞մ ես" հարցին "ոչ" պատասխանեմ՝ պիտի ասի "սուտ ես խոսում":

10 դեկտ. – Գիշերը երեխաներիս հետ էի: Երջանիկ: Եթե քննիչս բանաստեղծ Թումանյանի այն կարծիքին լինի, թե "կյանքը երազ է, երազն էլ մի կյանք" կդատապարտվեմ անպատճառ երազիս մեջ երջանիկ լինելու համար ...

...Բայց երկար պառկեցի այսօր: Վեր կենամ, լվացվեմ ու շտապ-շտապ բանտարկվեմ:

Ըստ Լեռ Կամսարի "Բանարիս օրագիրը" ("Նավասարդ" ամսագրից)

Բառեր

կանչվել – быть вызванным
հարցաքննություն – допрос
հավասար – равный
քանակություն – количество
բացառապես –
исключительно
խուզարկություն – обыск
արտաքնոց – сортир
պէք – нужда
բողոքել – жаловаться
պահանջ – требование
անհրաժեշտ – необходимо
բռնել – держать, ловить
տրամադրություն –
настроение
միանգամայն – весьма (զ=ք)
ավելորդ – лишний (դ=բ)

անասուն – скот, животное
կերակրել – кормить
մտադրվել – вознамериться
կատարել – выполнить,
исполнить
կիսով չափ – наполовину
հարմար – удобный
հեռագայում – в дальнейшем
անցավոր – преходящий
սուր խոսել – лгать
երազ – сон
դատապարտվել –
осуждаться, быть
осужденным
անպարճառ – безусловно
շտապ-շտապ – быстро,
спешно

5. Ի՞նչ եք կարծում, Լեռ Կամսարի "Բանտի օրագրի" ո՞ր մտքերն են լուրջ ասված, ո՞ր մտքերը՝ հեզմանքով և ո՞ր մտքերը՝ հումորով: Բացատրե՛ք.

"Գնալը" ազատ մարդու հասկացությունն է, իսկ բանտարկյալը քայլում է կամ "տարվում է": Անշունչ առարկան իրավունք ունի կորչելու, իսկ բանական մարդը պիտի չկորչելու համար ինքն իրեն հսկի: Նոյեմբերի 27-ին Լեռ Կամսարն արդեն բանտ է նստած կամ, ավելի ճիշտ, բանտ է կանգնած: Մակարը, որին մեղադրում են երկու հողվածով, ընկերոջն առաջարկում է իր մեղադրանքից օգտվել: Բանտի խուցը տեխնիկապես մեկ մարդու հուզվելու հարմարություն է տալիս, դրա համար բանտարկյալները հերթով են հուզվում: Գուրգենը ամաչում է, որ քննիչի տված քառասուն հարցերից ոչ մեկի պատասխանը չգիտի, ամաչում է իր տգիտության համար: Ազատ մարդը ողջ ընկույզ է, բանտարկյալը՝ ընկույզի միջուկ, մարդ՝ ըստ էության: Նա անկեղծ է, ինչպես լինում է մարդը իր ծննդյան ու մահվան ժամանակ, նա հեռագիր վեպ է, առանց ձանձորալի առաջաբանի ու վերջաբանի: Լեռ Կամսարն անփոխարինելի կալանավոր է, սակայն նա չպիտի ինքն իրեն կորցնի գլխապտույտ հաջողությունից. հանկարծ անզգույշ մի քայլ կամ փոքրիկ մի հանցանք կարող է պատճառ դառնալ, որ նրան բանտից ազատեն, ինչպես ազատում են պաշտոնից: Նա վախենում է իր տանջանքի պլանը թերակատարել: Մի տոննա թուղթը բավական է աշխարհի բանտերը հյուրանոց դարձնելու համար: Քանի որ կեսօրին մորթվող անասունին առավոտյան չեն կերակրում, ապա կարիք չկա բանտարկյալներին հարցաքննությունից առաջ կերակրել, գուցե նրանք հարցաքննությունից հետո չե՞ն ապրելու այլևս: Մկները մարդկանց պես բանտ են նստել: Մի քանի օր իրեն հայելու մեջ չտեսնելով մարդ իրեն կմոռանա ու չի ճանաչի: "Կյանքը երազ է, երազն էլ մի կյանք:"

Խոսք Ս. Շահազիզի
երազուհ

Երազ

Երաժշտությունը Ալ Դոլուխանյանի

Ես լը-սե-ցի մի ա-մուշ ծայն. իմ ծե-րա-ցած
մոր մոտ էր: Փայ-լեց նը-շույլ ու-րա-խու-թյան,
Բայց ափ-սու, որ ե-րազ էր: Փայ-լեց նը-շույլ
ու-րա-խու-թյան, Բայց ափ-սու, որ ե-րազ էր:



Արշիլ Գորկի. Նկարիչը մոր հետ. 1926 - 1936 թթ.



Ծաղրածուն

(շարունակություն)

Դողալով նա կիսով չափ բարձրացավ տեղից:

– Նա, այդ հրեշը, որ հազար անգամ ավելի վատ է, քան անքնությունը ... Ես պատրաստ եմ երբեք, երբեք չքնել, միայն չլսեմ նրա ձայնը ... Նա գալիս է, ժամերով նստում գլխավերև ու պատմում ... պատմում ... և ստիպում է ինձ լսել իրեն ...

– Ո՞վ, – ընդհատեց բժիշկը:

– Չգիտեմ, ես նրա դեմքը չեմ տեսնում ... Ես միայն նրա ձայնն եմ լսում, նրա նուրբ, մելոդիկ ձայնը, որ շարունակ պատմում է ... ի՞նչ՝ չգիտեմ: Ես նրան չեմ հասկանում ... ժամերով նստում է ու պատմում ... պատմում է և ինձ ստիպում է լսել. փակում եմ ականջներս, բայց նա պատմում է անվերջ, համառ կերպով: Ես վեր եմ ցատկում տեղիցս, հուսահատված սկսում եմ պատից պատ խփվել ... նա էլ դանդաղ վեր է կենում և կամաց-կամաց պատմելով անհետանում ... Նրան չլսելու համար ես վախենում եմ անկողին մտնել ... Չորս օր է՝ չեմ պառկել ... Բժիշկ ... բժիշկ, ես կխելագարվեմ: Փրկեցեք ինձ ... փրկեցեք ... ես այլևս չեմ կարող տանել այս տանջանքները ... ազատեցեք ինձ:

Նա հուսահատ գլուխն առավ ձեռքերի մեջ:

Մի րոպե հիվանդն էլ, բժիշկն էլ լուռ էին:

– Ինչու՞ այսքան ժամանակ բժշկի չեք դիմել:

– Դիմել եմ:

– Կարո՞ղ եք բերել նրա տված դեղատոմսերը:

Նա գրպանից հանեց մի կույտ դեղատոմսեր և թափեց բժշկի առաջ:

– Չեմ օգնում ... բոլորը փորձել եմ: Մի անգամ էլ քիչ մնաց... բայց փրկեցին ... ի չարն էի գործ դրել¹ դեղը:

– Չեզ հանգիստ է պետք ... Չեր նյարդերը շատ են թուլացած, ձեզ պետք է հանգիստ կյանք, սնունդ, ճանապարհորդություններ, լավ, ուրախ ընկերների շրջան ... Իսկ բոլորի վրա ավելացրեք, գուցե տարօրինակ թվա, բայց ես իմ հիվանդներից շատերին խորհուրդ եմ տալիս հաճախել կրկես ... Այնտեղ մի ծաղրածու կա, որը ստիպում է մարդկանց սրտանց ծիծաղել ... առողջ ծիծաղով ... Իմ հիվանդներն էլ են վկայում, թե ինչ լավ ազդեցություն է անում նրանց վրա այդ ծիծաղը ... Ես ինքս էլ մեծ հաճույք եմ ստանում նրան լսելով և շաբաթը երեք անգամ գնում եմ հատկապես նրան լսելու: Վերին աստիճանի² սրամիտ և խելոք մարդ է: Հազիվ եմ պատահում այդպիսի ծաղրածուներ, որոնք իսկապես ստիպեն անկեղծ կերպով ծիծաղել: Գուցե պատահմամբ եղել եք և տեսել այդ ծաղրածուին:

Մի դառն ժպիտ խաղաց նրա դեմքի վրա:

– Դուք փորձեցեք:

Նա լուռ վեր կացավ, դրեց փողը սեղանի վրա: Նրա դեմքը ավելի մռայլվեց ... Նա լուռ դիմեց³ դեպի դուռը:

– Սպասեցեք:

Նա արդեն ուզում էր բացել դուռը, բայց թողեց ձեռքը և լուռ ետ նայեց: Մի վայրկյան նայեց բժշկին և շշմջաց:

— Այդ ծաղրածուն ես եմ:

Ըստ Միքայել Մանվելյանի «Ծաղրածուն» նորավեպի

¹ի չարը գործ դնել — применить во зло
²վերին աստիճանի — в высшей степени

³դիմել դեպի — зд. податься к

Բառեր

դողալ — дрожать
հրեշ — чудовище
պարրասպ — готовый
գլխավերև — изгололье
ընդհատել — прервать, перебить (դ=թ)
նուրբ — нежный (բ=փ)
անվերջ — без конца (ջ=չ)
համառ կերպով — упорно
վեր ցատկել — вскочить
հուսահատ, հուսահատված — отчаявшись
խփվել — биться
անհետանալ — исчезнуть
փրկել — спасти
դիմել — обратиться
կույր — куча

թափել — вылить, пролить, выбросить, зд. вывалить
Նյարդ — нерв (դ=թ)
սնունդ — питание
շրջան — круг
ավելացնել — добавить
հաճախել — посещать
կրկես — цирк
սրտանց — от души (от сердца)
վկայել — свидетельствовать
ազդեցություն — влияние
պարահամար — случайно
դառն — горький
մռայլվել — мрачнеть
շշմջալ — шептать



6. Ա) Ո՞ր բառակապակցություններում են օգտագործված **"հասկացություն, գիտակցություն, առարկա, միջուկ, առաջաբան, վերջաբան, պահակ, քայլ, անասուն, նյարդ, ուղեղ"** գոյականները: Ուրիշ ինչպե՞ս կարելի է օգտագործել նույն գոյականները: Բերե՛ք օրինակներ:



В каких словосочетаниях употреблены существительные **հասկացություն, գիտակցություն, առարկա, միջուկ, առաջաբան, վերջաբան, պահակ, քայլ, անասուն, նյարդ, ուղեղ** Приведите также свои примеры.

ազատ մարդու հասկացություն, վերացական հասկացություն



Բ) Ո՞ր գոյականներին են վերաբերում հետևյալ ածականները. **ձանձրացնող, անորոշ, թուլացած, դառն, ձանձրալի, զինված, անփոխարինելի, գլխապարույր, փոքրիկ, հավասար, արգելված, անկեղծ**: Այս ածականներով ուրիշ ի՞նչ գոյականներ կարելի է բնութագրել: Բերե՛ք օրինակներ:



Какие существительные характеризуют прилагательные **ձանձրացնող, անորոշ, թուլացած, դառն, ձանձրալի, զինված, անփոխարինելի, գլխապարույր, փոքրիկ, հավասար, արգելված, անկեղծ**? Приведите также свои примеры.

ձանձրացնող ճանճեր, ձանձրացնող գրույց



7. Հիշեք նույնարմատ բայերը.

Вспомните однокоренные глаголы:

ընդունարան – ընդունել	անհամբեր – ?
աննկատելի – ?	հոգնածություն – ?
ծանձրույթ – ?	անորոշ – ?
հրավիրյալ – ?	անընդհատ – ?
անվերջ – ?	անշունչ – ?
անփոխարինելի – ?	բողոք – ?
պահանջ – ?	հաճախ – ?
խելագար – ?	հուսահատ – ?
մռայլ – ?	հաջողություն – ?
սնունդ – ?	մեղադրանք – ?
մտադրություն – ?	պարծանք – ?
հսկիչ – ?	



8. Կետերի փոխարեն գրեք աջ սյունակի բառերից համապատասխանը.

Выберите подходящее слово из правого столбца:

1. Նա շատ բարեհոգի, ... զգացունով մի մարդ է: Բարեբախտաբար, քո ... չհասկացվեց:	հումոր հեզմանք
2. Ձեր ... անպատասխան չի մնա, բայց աշխատեք ավելի լավ ձևակերպել ձեր ...:	պահանջ բողոք
3. Նրան կանչեցին բանտի գրասենյակը ...: ... ոչ մի բան չպարզեց:	խուլզարկություն հարցաքննություն
4. Դրանք վերացական ... են, պարզ բառերով բացատրիր ուզածդ: Արյուն տեսնելով՝ աղջիկը կորցրեց ...:	գիտակցություն հասկացություն
5. Բժիշկ դառնալու համար անհրաժեշտ է աշխատասիրություն և ...: Այսօր մեր ուսուցչուհին լավ ... ունի:	ուշիմություն տրամադրություն
6. Ձեր խոսքն իհարկե շոյում է իմ ..., բայց ես չեմ կարող ընդունել ձեր առաջարկությունը:	եսասիրություն ինքնասիրություն
7. Գարնանը ես հաճախ ... եմ ունենում:	գլխավերև գլխապտույտ
8. Երեխան չի հետաքրքրվում դպրոցական առարկաներով և մայրը վախենում է, որ նա ... մնա:	տոգեստ տոգել

9. Եթե ... ես հռետոր դառնալ, ապա Դեմոսթենի պես քար լցրու բերանդ ու փորձիր այդպես խոսել: Ես չեմ կարողանում հեռախոսի համարները ..., ստիպված գրի եմ առնում:	մտադրվել մտաբերել մտապահել
10. Մենք աշխատում էինք նրան ..., բայց նա ոչ մի կերպ չէր հանգստանում:	մխիթարել շոյել
11. Եթե ես ..., թե ինչ ֆիլմ ես ուզում նայել, կգա՞ս ինձ հետ կինո:	գուշակել գիտակցել
12. Հարևանի կատուն էլի մտնում է տուն, պետք է ...: Տնաշեն, այնպես ... վերարկուիցս, որ կոճակը կտրվեց:	քշել քաշել
13. Եթե մենք պլանը ..., ոչ մի մրցանակ էլ չենք ստանա: Դուք լսե՞լ եք, թե ինչպես է երգչուհի Լուսինե Ջաքարյանը ... Մակար Եկմայանի "Սուրբ, սուրբ":	կատարել թերակատարել գերակատարել
14. Բժշկուհին ... կնոջ զարկերակը ու հուսահատ նայեց հիվանդի հարազատներին. աղջիկը ... էր մոր կոշտացած ձեռքը:	շոյել շոշափել
15. Ասում են կարդալը քնաբեր է, բայց լավ գրքից իմ քունը ... է: Իսկ իմ քունը մեթեմաների ազդանշաններն են ...:	փախչել փախցնել
16. Որտե՞ղ եմ ... ժամացույցս, չեմ հիշում թե ուր եմ դրել: Կարմիր Գլխարկը գնաց անտառ ու այնտեղ ...:	կորչել կորցնել
17. Սողոմոն Թեյլերյանը ... Թալաաթ Փաշայի սպանության մեջ, բայց դատարանը նրան մեղավոր չճանաչեց ու չ...:	մեղադրվել դատապարտել
18. Բժշիկը շոշափեց իմ զարկերակն ու զարմացավ. սիրտս այնպես արագ էր ..., որ կարծես ուզում էր դուրս ցատկել տեղից:	բաբախել դադարել
19. Դու ինձ ուղղակի ..., չէ՞ որ մինչև ռոճիկը ստանալը դեռ մի շաբաթ կա:	փնտրել փրկել
20. Ինչու՞ այսօր աղբը չես ...: Այստեղ մի քանի մեխ է պետք ... սրբիչները կախելու համար:	թափել խփել
21. Արցախում ... հայեր են ապրում: Նա ... մաթեմատիկայի քննությունից է վախենում:	հատկապես բացառապես
22. Անցյալ տարի մավաճառի մոտ ... Ներսես եղբորը հանդիպեցի: Ես արդեն ... հասկանում եմ հայերեն ներկայացումները:	պատահմամբ մասամբ
23. Հեզնանքով ասված խոսքը վիրավորական է, իսկ, ..., հունորր բարի ժպիտ է առաջացնում:	ընդհակառակը ընդհանրապես
24. Ձեր ամիսնագատությունը ... հասկանալի է: Բժիշկը նայեց հիվանդին և ... հասկացավ, թե ինչու՞մ է բանը:	միանգամից միանգամայն



9. Գտեք նույն կամ մոտ իմաստով բառը և գրեք այն շեղագիր բառի փոխարեն.

Найдите синоним (или близкое по значению слово) и замените им выделенное слово:

կերպար – հարևան, հերոս, ընկեր, ծանոթ	Սարոյանի ստեղծած <i>կերպարները</i> հասարակ մարդիկ են:
գործածել – գործել, կտրել, օգտագործել, օգնել	Ես այս մկրատը չեմ <i>գործածում</i> , բնավ սուր չէ:
ճշմարիտ – բանական, ճիշտ, իսկական, վերացական	<i>Ճշմարիտ</i> արվեստագետի ստեղծածը երբեմն ավելի իրական է քվում, քան կյանքը:
նկատել – դիտել, նայել, տեսնել, հսկել	Փողոցի անկյունում մենք <i>նկատեցինք</i> տարօրինակ հագնված մի աղջկա, որը լրագիր էր վաճառում:
կենդանի – անասուն, հիվանդ, անդամ	Նախկինում մարդիկ և <i>կենդանիները</i> միասին են ապրել մի հարկի տակ:
երկիր – աշխարհ, վայր, հողված	1915թ. թշվառությունը պատեց հայոց <i>երկիրը</i> :
կալանավորել – դատապարտել, ձերբակալել, մեղադրվել, մտադրվել	Քննիչի Անտառամեջից գնալուց հետո տղաներին <i>կալանավորեցին</i> :
հպարտանալ – աքլորանալ, գլուխ գովել, պարծենալ	Պապը <i>հպարտանում է</i> իր թոռով, որովհետև նա դպրոցում լավ է սովորում, լավ գնահատականներ է ստանում:
մեղք – զրկանք, հանցանք, մեղադրանք, տուգանք	Կալանավորներից շատերը, իսկապես ասած, <i>մեղք</i> չունեին:
կշտանալ – կերակրել, սնվել, սնուցել, ուտել	– Մի կտոր էլ խմորեղեն դնե՞մ: – Շնորհակալ եմ, արդեն <i>կշտացա</i> :
շրջապատ – անապատ, միջավայր, աշխարհ	Բժիշկը գտնում է, որ հիվանդին անհրաժեշտ է լավ ընկերների <i>շրջապատ</i> :
ուրեմն – համեմատաբար, հարմար, հետևաբար	Երիտասարդը ոտքերը մաքրեց, գլխարկը հանեց, հետո ներս մտավ, <i>ուրեմն</i> բարեկիրք է ու քաղաքավարի:
անպատճառ – անհրաժեշտ, անպայման, անտարբեր	Ինչպե՞ս հայտնեն նրան այդ լուրը, նա <i>անպատճառ</i> կհարցնի մանրամասները:
թերթ – շաբաթաթերթ, ամսագիր, լրագիր, հանդես	Որտե՞ղ է այսօրվա <i>թերթը</i> :
հայտնագործել – փնտրել, բացահայտել, գտնել	Մաշտոցի մեծությունն այն է, որ նա <i>հայտնագործեց</i> հայոց գիրը, որը մինչ այսօր ծառայում է մեզ:

10. Ակարագրեք (опишите):

- բժշկի ընդունարանը՝ օգտագործելով հետևյալ բայերը.
(приемную врача при помощи глаголов):

Նստել, սպասել, զբաղվել, նայել, խոսել:

- տարօրինակ այցելուին՝ օգտագործելով հետևյալ բայերը.
(странного посетителя при помощи глаголов):

Ներս մտնել, մոտենալ, վերցնել, նստել, մնալ, նայել, չկարդալ, շարժել, քշել, վեր քաշել, ծայն հանել:

- բժշկի ընդունելությունը՝ օգտագործելով հետևյալ բայերը.
(прием у врача при помощи глаголов):

Դիմել, օգտակար լինել, լուռ լինել, հրավիրել նստել, չցավել, չքնել, զուշակել, պատմել:

- հիվանդի գանգատները՝ օգտագործելով հետևյալ բայերը.
(жалобы больного при помощи глаголов):

Պառկել, աշխատել քնել, լուսացնել, հաջողվել, բաբախել, դադարել, ցատկել, գալ, նստել, պատմել, ստիպել լսել, վեր ցատկել, խփվել, վեր կենալ, անհետանալ:

- բժշկի խորհուրդները՝ օգտագործելով հետևյալ բայերը.
(советы врача при помощи глаголов):

Թվալ, հաճախել, ստիպել ծիծաղել, վկայել, ազդեցություն անել, հաճույք ստանալ, գնալ, պատահել, տեսնել:



11. Հակառակ իմաստով բառեր բերեք.

Приведите слова, противоположные по значению:

Ա) (բոլոր բառերը հ-ով են սկսվում – все слова начинаются с h):

մայր, բարակ, պատասխան, դժվար, մոտ, առաջ, մոռանալ, առողջ, առաստաղ, փեսա, նոր, նորածն, հարավ, խելացի, խռով.

Բ) (բառերը ձ-ով կամ ծ-ով են սկսվում – слова начинаются с ձ или ծ):

աջ, ոտք, ամառ, հետաքրքիր, թեթև, աշխատասեր, երիտասարդ.

Գ) (բառերը թ-ով, փ-ով կամ ք-ով են սկսվում – слова начинаются с թ, փ, или ք):

պապ, ուժեղ, էժան, բարեկամ, արժանիք, գերակատարել, ուրախանալ, բաց, մեծ, շատ, եղբայր, վախկոտ.

Դ) (բառերը պ-ով են սկսվում – слова начинаются с պ):

ներել, նստել, հաղթել, տիկին, հաշտություն, զբաղված, բարդ, հարց, խամրած, անհրաժեշտաբար, ծերունի.

Ե) (բառերը ս-ով են սկսվում – слова начинаются с ս):

ճիշտ, տաք, տալ, բուք, ընդհանուր, վերջանալ, վերջացնել.

12. Переведите на армянский язык две из миниатюр, написанных по-русски талантливым армянским клоуном Леонидом Енгибаряном:

☁️ Зонтик ☁️

...Немного помолчав, она сказала: "Но нам же негде жить, у нас нет дома".




Он рассмеялся и сказал, что у него есть зонтик, совсем новый, который сам раскрывается, если нажать на кнопку. И такой зонтик – это прекрасное жилье. Очень уютное для двоих. И в нем хорошо путешествовать, слушать дождь и еще...

Но она не спросила, "что еще...", и ушла к другому, у которого была однокомнатная квартира со всеми удобствами, но, наверное, все-таки не было такого зонтика.



Теперь, спустя много лет, она наконец поняла, какой это был чудесный зонтик. Это был маленький парашют, держась за который, можно улететь далеко-далеко, особенно в дождливые дни...

И ей тоскливо в своей уже трехкомнатной квартире, потому что, чем больше квартира, тем дальше друг от друга те, кто в ней живут. И когда идет дождь, она готова броситься из окна вниз, чтобы найти свой зонтик. Но разве с пятнадцатого этажа узнаешь, какой зонтик – твой?



Тореадор

Она его любила.

Она знала, что он самый искусный тореро.

Он лучше всех владел мулетой, а сверкающая шпага казалась продолжением его гибкой руки. Но хотя он был самый ловкий и быстрый и самый бесстрашный, он так и не стал знаменитым матадором.

Для матадора он не умел самого главного.

Он не умел убивать.

И за это – она его любила.



"Она" следует перевести աղբիւր
 тореадор, тореро – ցլամարտիկ
 броситься – նետվել
 искусный – հմուտ
 владеть – տիրապետել մի բանի

мулета – մուլետ (маленькая шпага)
 шпага – սուրբ
 гибкий – ճկուն
 ловкий – ճարտիկ
 матадор – ցլամարտիկ

Ընթերցանության նյութեր

Материал для чтения

Մայր այծյամը

Կանաչապատ մի լեռան լանջով սողացի վեր և, հասնելով ժայռի գլուխը, նայեցի ցած: Ներքևում, խոտի մեջ նստած որոճում էին վեց-յոթ այծյամ: Նրանք այնպես հանգիստ ու անմեղ էին, որ ես ավստոսում էի կրակել: Բայց ամբողջ օրը շրջել էի այդ լեռներում, հոգնել և սխալ գործած կլիների, եթե այդքան հաջող որսը բաց թողնեի: Կրակեցի խմբից քիչ հեռու նստած մի մեծ այծյամի վրա:

Որոտից սարսափահար այծյամները վեր թռան ու սուրացին ժայռերի երկայնքով: Այն այծյամը, որի վրա կրակել էի, փոխանակ վազելու իր ընկերների հետևից, եկավ և կանգ առավ ժայռի ստորոտում, ինձնից տասնհինգ քայլ ցած: Ես որսացի նրա հայացքը, որը լի էր սարսափով: Ուղիղ հրացանիս փողի դիմաց կանգնել ու տենդագին հայացքով փնտրում էր մեկին:

Մինչ ես նշան էի բռնել նրա կրծքին, և մատս սեղմում էր հրացանի ձգանը, այդ «մեկը», որին նա փնտրում էր, հանկարծ դուրս թռավ ժայռի խոռոչից, հասավ այծյամին ու մտավ նրա վզի տակ:

Ուլիկն էր...

Ես հրացանս ետ քաշեցի՝ այդ սրտաշարժ տեսարանից ազդված:

Երբ մայրը և ուլը իրար գտած միասին սլանում էին փախած հոտի հետևից, ես հրացանս օդում ճոճելով ճանապարհ էի դնում նրանց:

Ուրախ էի, որ չսպանեցի մայր այծյամին և չորբացրի այն սիրունիկ ուլիկին:

Ըստ 4. Անանյանի

Բառեր

այծյամ – серна, косуля
կանաչապատ – покрытый
зеленью
լանջ – склон
սողալ – ползти
գլուխ – зд. вершина
ցած – вниз
որոճալ – жевать,
пережевывать
կրակել – стрелять
հաջող – удачный
որս – охота, дичь
բաց թողնել – упустить
որոտ – грохот
սարսափահար – объятый
ужасом
սուրալ – мчаться
հայացք – взгляд
սարսափ – ужас
վեր թռնել – вскочить

երկայնքով – вдоль
ստորոտ – подножие
որսալ – ловить
հրացան – ружье
փող – дуло
տենդագին – лихорадочный
նշան բռնել – целиться
կուրծք – грудь
սեղմել – нажимать, прижимать
ձգան – курок (զքը)
դուրս թռչել – выскочить
խոռոչ – расщелина
եղ քաշել – отвести
սրտաշարժ – душераздирающий
ազդվել – быть тронутым
սլանալ – мчаться
հոտ – стадо
ճոճել – качать, зд.: махать
որբացնել – сделать сиротой (բ=փ)

Ամենափրկիչ

Արյունարբու Լենկթեմուրը Սամարղանդից եկել ու հասել էր Չայոց աշխարհը մինչև Մոկս, ուր ծանր հիվանդացել և անկողին էր ընկել: Դեղ ճարելու համար Լենկթեմուրի մարդիկ սար ու ձոր ընկան, շատ տեղեր եղան, վերջապես մի վանքում գտան մատենագիր և բժիշկ Առաքել Մոկացուն: Լենկթեմուրի մարդիկ նրան տարան անկողնում պառկած աշխարհակալի մոտ:

Նկատելով ծերունուն՝ Լենկթեմուրը շարժվեց անկողնու մեջ:

– Բուժիր աստծու ծառային, ծերուկ, – թույլ ձայնով աղաչեց թաթար բռնակալը, – ինչ որ ուզես, կտամ՝ ոսկի, արծաթ, իշխանություն, ինչ որ ցանկանաս:

– Ես քեզ կբուժեմ մի պայմանով միայն. դու պարտավոր ես վերադարձնել հայոց բոլոր գրքերը և այնքան գերիներ արձակել, որքան իմ վանքը կտեղավորի: Այնուհետև խոստացիր թողնել հայոց աշխարհն ու հեռանալ:

Փայլեցին աշխարհակալի նենգ աչքերը: Նա պատրաստ էր ազատել հազար-հազար գերիներ, միայն թե մահը հեռանար իրենից: Եվ զարմացած ծերունու համեստ պահանջից՝ մտածեց. «Շեյթանն իր հետ, մի փոքրիկ վանքն ինչքա՞ն պիտի տեղավորի հայոց անհամար գրքերից ու գերիներից. թող նրա ասածը լինի, միայն թե ազատվեմ մահից»:

Ու բռնակալը հրաման տվեց...

Կատարեցին հրամանը: Գերիները ձորից շարժվեցին դեպի վանք, որը մի մատուռի չափ փոքր էր: Տեղ հասնելով՝ տղամարդիկ մի կողմ էին քաշվում, ներս՝ էին մտնում կանալք ու մանուկները, որովհետև գիտեին պայմանը... Բայց ահա կանանց, աղջիկներից և փոքրերից հետո վանքի դռնից ներս էին մտնում անթիվ, անհամար մարդիկ, սակայն վանքը չէր լցվում:

Այդ մասին հայտնեցին աշխարհակալին, և նա կարգադրեց հազար հոգի էլ ուղարկել: Կատարեցին հրամանը, դարձյալ չլցվեց վանքը:

Լենկթեմուրն ուզեց գնալ իր աչքով տեսնել այդ հրաշքը: Բայց հիվանդությունը թույլ չտվեց: «Եթե այդ կախարհ ծերուկը մի վանքում կարող է հազար-հազար գերի տեղավորել, ինձ էլ անպայման կբուժի», – մտածեց նա և հանգստացավ: Ապա կարգադրեց բոլոր գերիներին ուղարկել վանք և պահել միայն մոկաց նախարարին և յոթ իշխաններին:

Կատարեցին բռնակալի հրամանը:

Այդ նկատեց Առաքել Մոկացին և մարդ ուղարկեց՝ հիվանդ բռնակալին հիշեցնելու, որ մոկաց նախարարներին, իշխաններին, նրանց կանանց ու դուստրերին էլ պետք է ուղարկել, որպեսզի վանքը լցվի և սուլթանական խոստումը կատարվի:

Ծերունու հրաշագործությունից և մահից սարսափած Լենկթեմուրը այդ էլ կատարեց և հրամայեց իշխաններից մեկին.

– Գնա՛ տես, թե ինչպես է այդ ծերուկը փոքրիկ վանքի մեջ հազար-հազար մարդ տեղավորում:

Վերջին գերու հետ իշխանը վանք մտավ և տեսավ, որ երբ ծերունին ձեռքը դնում էր ներս մտնող գերիների վրա, նրանք

փոքրանում էին, դառնում բազմերանգ թիթեռներ և վանքի լուսամուտից դուրս թռչելով գնում էին հարազատ լեռները:

Գերությունից փրկված հայ ժողովուրդն այդ օրվանից Մոկաց վանքը կոչեց «Ամենափրկիչ»:

Ըստ Սգ. Կուրպիկյանի

Բառեր

Ամենափրկիչ – Спаситель,
храм Христа Спасителя
արյունարբու – кровожадный
(բ=փ)
հասնել – добраться
ծանր – тяжелый, тяжело
անկողին ընկնել – слечь
ճարել – достать, добыть
սար ու ձոր ընկնել –
прочесывать
մատենագիր – летописец
աշխարհակալ – завоеватель
բուժել – лечить, вылечить
աղաչել – взмолиться
բռնակալ – деспот
պայման – условие
պարտավոր – обязанный

գերի – пленный
արձակել – отпустить (ծ=g)
տեղավորել – поместить,
вместить
համեստ – скромный
պահանջ – требование
մատուռ – часовня
մի կողմ քաշվել – посторониться
լցվել – наполниться
հայտնել – сообщить
կախարդ – волшебник, колдун
հրաշագործություն –
чудотворство
սարսափել – ужасаться
բազմերանգ – разноцветный
գերություն – плен
կոչել – называть

Արա Գեղեցիկ և Շամիրամ (առասպել)

Ասորեստանի Շամիրամ թագուհին, վաղուց լսած լինելով Արայի գեղեցկության մասին, իր ամուսին Նինոսի մահից հետո ցանկացավ նրա հետ ամուսնանալ: Մարդիկ ուղարկեց նրա մոտ մեծամեծ ընծաներով և խոստացավ, որ եթե իր կամքը կատարի Չայաստանի հետ Ասորեստանի վրա էլ կթագավորի նա: Արա Գեղեցիկը, որն ամուսնացած էր Նուարդ իշխանուհու հետ, մերժեց Ասորեստանի թագուհու առաջարկությունը: Շամիրամը զայրացած մեծ զորքով եկավ Չայաստան, որպեսզի ստիպի Արային իր առաջարկությունն ընդունել: Պատերազմից առաջ թագուհին հրամայեց իր զորավարներին, որ աշխատեն հայոց իշխանին չսպանել, այլ ողջ բռնեն և իր մոտ բերեն: Բայց Արան, իր զորքի պարտվելը տեսնելով, ընկավ իր զորքի մեջ և զոհ գնաց:

Պատերազմից հետո Շամիրամը մարդիկ ուղարկեց, որ դիակների միջից Արայի մարմինը գտնեն և մի բարձր տեղ դնել տվեց ցանկանալով կախարդությամբ կենդանացնել նրան: Բայց երբ դիակը սկսեց հոտել, հրամայեց ծածուկ մի փոսի մեջ թաղել: Հայերը, իրենց սիրելի իշխանի մահից գրգռված, նորից գեներ առան և կամեցան պատերազմը շարունակել: Իսկ թագուհին իր իշխաններից մեկին Արայի զգեստներն հագրեց և հեռվից հայերին ցույց տալով հավատացրեց նրանց, թե իր աստվածներն Արայի վերքերը լիզելով կենդանություն տվին նրան:

Ըստ Մովսես Խորենացու

Բառեր

- առասպել – легенда
- մեծամեծ – величайший
- ընծա – дар, подарок
- կամք – воля
- մերժել – отказать
- գորք – войско
- ստիպել – заставить
- ողջ – целый, живой (ղջ=խջ)
- բռնել – поймать, схватить
- պարսպել – потерпеть поражение
- զոհ գնալ – пасть жертвой
- դիակ – труп
- մարմին – тело
- կախարդություն – волшебство
- կենդանացնել – оживить (դ=թ)
- հոտել – вонять
- ծածուկ – тайно
- թաղել – хоронить
- գրգռվել – возбуждаться
- զգեստ – одежда
- վերք – рана
- լիզել – лизать



Վ. Սուրենյանց. Շամիրամը Արա
Չեղեցիկի մարմնի մոտ

Հայրենի հողը

Երեսուն տարի Արշակ թագավորը պատերազմեց Շապուհի գորքերի հետ և ամեն անգամ ջարդեց նրանց:

Չկարողանալով պատերազմում հաղթել՝ պարսից Շապուհ թագավորը մեծ աղաչանքներով, ընծաներով և հրովարտակներով Արշակ թագավորին սիրով իր մոտ կանչեց, որ այնուհետև իրար մեջ սեր և խաղաղություն և մեծ բարեկամություն հաստատեն: Շապուհը պարսից թագավորության հավատարիմ երդման օրինակով վարազագիր մատանիով¹ աղ կնքեց² և ուղարկեց Արշակին:

Երբ Հայոց աշխարհի մարդիկ այս տեսան, շտապեցրին իրենց Արշակ թագավորին, որ վեր կենա, գնա պարսից Շապուհ թագավորի մոտ: Հայոց Արշակ թագավորը վեր կացավ, վերցրեց իր հետ հայոց գորավար սպարապետ Վասակին և ճանապարհ ընկավ հայոց աշխարհից դեպի պարսից աշխարհը:

Ապա պարսից Շապուհ թագավորը կանչեց վիուկներին ու աստղահմաններին և ասաց. «Ես շատ անգամ կամեցա սիրել հայոց Արշակ թագավորին, բայց նա ինձ միշտ անարգեց: Ես նրա հետ

¹ վարազագիր մատանի – մատանի, որի վրա փորագրված էր վարազ պարսից թագավորների գերբը (перстень с головой вервя)

² վարազագիր մատանիով՝ պարսից թագավորների անձնական կնիքով կնքված աղը ամենահաստատ երդման նշան էր: (Соль, запечатанная личной печатью персидских царей, являлась символом самой страшной клятвы).

խաղաղության դաշն կապեցի և բյուր բարիքներ կամեցա նրան անել, իսկ բարիքի դեմ չարիք ինձ արեց: Որովհետև հայոց Արշակ թագավորը ահա երեսուն տարի է, որ Արյաց դեմ պատերազմ է մղում, և ոչ մի տարի մենք չկարողացանք հաղթել, իսկ այժմ ահա ինքն իր ոտով ելել եկել է ինձ մոտ: Բայց եթե իմանայի, որ այսուհետև նա ինձ հետ դաշնը կպահի, ապա շատ մեծարանքներով նրան խաղաղությամբ կարծակեի, որ գնա իր աշխարհը»:

Աստղահմաները նրան պատասխան տվին և ասացին. «Մարդ ուղարկիր Չայոց աշխարհը, բերել տուր այնտեղից Չայստանի հող և մի ամանով ջուր: Չետո հրամայիր, որ քո խորանի հատակի կեսի վրա շաղ տան Չայաստանից բերած հողը և վրայից ցանեն Չայաստանից բերած ջուրը: Ապա դու ինքդ հայոց Արշակ թագավորի ձեռքից բռնած նախ տա՛ր նրան խորանի այն տեղը, որտեղ բնական գետին է, և նրան հարցեր տուր: Չետո նրա ձեռքը բռնած հայկական հող շաղ տված տեղը տար և լսի՛ր, թե ինչ կխոսի, և այն ժամանակ կիմանաս, թե երբ նրան արձակես Չայաստան, քո դաշինքը կպահի՞», թե ոչ: Որովհետև եթե հայկական հողի վրա խիստ լեզվով խոսի՝ իմացիր, որ Չայոց աշխարհը հասնելով հենց նույն օրը նույն պատերազմը, նույն թշնամությունը կշարունակի»:

Պարսից թագավորն այդպես էլ արեց: Եւ մարդիկ ուղարկեց Չայաստան, որ գնան Չայաստանից հող և ջուր բերեն: Ապա հրաման տվեց՝ իր խորանի հատակի կեսի վրա շաղ տալ Չայաստանից բերած հողը և վրայից Չայաստանի ջուր ցանել, իսկ մյուս կեսը թողնել բնական հողով: Եվ Չայոց Արշակ թագավորի ձեռքից բռնած սկսեց ճեմել խորանում: Երբ ճեմում էին պարսկական հողի վրա՝ ասաց նրան. «Արշակ թագավոր Չայոց, դու ինչու՞ ինձ թշնամի եղար. ես կամեցա քեզ հետ դաշն կապել, աղջիկս քեզ կնության տալ, իսկ դու ինձ թշնամի դարձար և ահա ամբողջ երեսուն տարի ինձ հետ պատերազմեցիր»: Արշակ թագավորն ասաց. «Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ»:

Շապուհ թագավորը նրա ձեռքից բռնած շրջում էր ճեմելով և, իբր պատահաբար, բերեց հայկական հող շաղ տված հատակի վրա: Երբ Արշակը հայկական հողի վրա ոտք դրեց՝ ըմբոստանալով լեզուն փոխեց և ասաց. «Չեռու՛ ինձանից, չարագործ, ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը³: Որովհետև այժմ դուք՝ Սասանյաններդ, մեր գահն եք հափշտակել, բայց ես թույլ չեմ տա այդ, մինչև դարձյալ մենք՝ Արշակունիներս, մեր տեղը չգրավենք»:

³Արտավանը Պարսկաստանի վերջին թագավորն էր պարթևական դինաստիայից, որին սպանեց պարսիկ իշխաններից մեկը՝ Արտաշիր Սասանյանը, և Պարսկաստանում նոր՝ Սասանյան դինաստիայի հիմնադիր եղավ: Չայոց Արշակ երկրորդ թագավորը, ինչպես և Արտավան թագավորը, սերում էր Պարթև Արշակ Մեծից, իսկ պարսից Շապուհ թագավորը՝ Սասանյան տոհմից: (Артаван был последним персидским царем парфянской династии, который был убит одним из персидских князей Арташиром Сасанином, ставшим основоположником династии Сасанидов. Армянский царь Аршак Второй, как и царь Артаван, происходил от парфянских царей, персидский царь Шапух – от Сасанидов).

Շապուհը դարձյալ նրա ձեռքից բռնած տանոււմ էր պարսկական հողի վրա. այն ժամանակ Արշակը ապաշխարհում էր, զոջում էր իր ասածների համար: Իսկ երբ ձեռքից բռնած տանոււմ էր հայկական հողի վրա՝ առաջվանից ավելի խիստ էր խոսում:

Այն ժամանակ պարսից Շապուհ թագավորը հրաման տվեց բերել երկաթե շղթաներ, կապել Արշակի ոտքերն ու ձեռքերը, տանել նրան Անհուշ բերդը և կապած պահել այնտեղ մինչև մեռնի:

Ըստ Փավստոս Բուզանդի «Յայոց պատմության»

Բառեր

պարերազմել – воевать
ջարդել – разбить (դ=թ)
աղաչանք – мольба
հրովարտակ – грамота, послание
հաստատել – установить
հավատարիմ – верный, преданный
երդում – клятва (դ=թ)
կնքել – запечатать
շտապեցնել – торопить
զորավար – военачальник
վիուկ – колдун
աստղահմա – звездочет
կամենալ – желать,
անարգել – оскорбить, презирать
դաշն, դաշինք – союз, договор
բյուր – несметный, бесчисленный
բարիք – добро
չարիք – зло
պարերազմ մղել – вести войну
մեծարանք – почести
աման – сосуд, посуда
խորան – 1. алтарь, 2. помещение, зд. шатер

հարակ – пол
շաղ փալ – рассыпать
ցանել – сеять, зд. брызгать
բնական – натуральный, естественный
գեպին – пол, земля
թշնամություն – вражда
ճեմել – гулять, прогуливаться
թշնամի – враг
կնության փալ – отдать в жены
մեղանջել – провиниться
հանցավոր – виноватый
շրջել – ходить, обходить
ըմբոստանալ – восстать
չարագործ – злодей
նախնի – предок
վրեժ – месть
գահ – трон
հափշտակել – похитить, зд. захватить
գրավել – занять
ապաշխարհել – каяться
զղջալ – сожалеть (դջ=խջ)
խիստ – строгий, строго
շղթա – цепь
բերդ – крепость, тюрьма (դ=թ)

Նամակը

Երբ գեներալ Յովհաննես Բաղրամյանի անունը տարածվեց Յայրենական մեծ պատերազմի տարիներին, սփյուռքի հայերից նամակներ հոսեցին դեպի նա:

Ահա այդ նամակներից մեկը.

«Ձեզ գրում է բնօրրանից արմատահան եղած մի հայ կին, որը զօր ու գիշեր երազել է գտնել իր եղբորը՝ թուրքական սրից փրկված միակ հարագատին աշխարհիս վրա: Սկսած այն օրից, երբ լսել եմ Ձեր անունը, ապրում եմ այդ հույսով: Երկար ժամանակ չէի կարողանում գրել, վախենում էի՝ հօդս ցնդեին երազներս և հույսերս:

Ծնվել են Վանա ծովի ափամերձ մի փոքրիկ գյուղում: Բոլորը, բոլորը հիշում են՝ և՛ մեր միգամած լեռները, և՛ խոր ձորերը, մեր բերրի պարտեզները, և՛ մեր կապուտակ լիճը, և՛ Աղթամարա վանքը՝ կղզու վրա: Հիշում եք դուք այդ ամենը:



Վանա լիճը

ես ու եղբայրս՝ դու: Ես՝ ութ տարեկան մի աղջիկ, եղբայրս՝ ինը տարով ինձնից մեծ մի պատանյակ: Փախանք անտառ, հետո՝ մյուս փախստականների հետ՝ Ալաշկերտ, Կարս: Այնտեղ ես եղբորս կորցրի: Նա հրացան առած՝ գնաց թշնամուց վրեժ լուծելու, իսկ ես ընկա Ամերիկա: Հետո իմացա, որ եղբորս տեսել են Սարդարապատի կռիվներում, և, վերջապես, հիմա՝ համաշխարհային այս պատերազմում՝ գեներալ դարձած:

Սիրելի՛ Հովհաննես, հարազատ եղբայր, այլևս անկարող եմ տուրք տալ քաղաքավարությանը և դիմել «Դուք»-ով: Խընդրում եմ շտապ պատասխանիր՝ մի՞թե դու իմ եղբայրը չես. ոչ, չի կարող պատահել, որ իմ քրոջական սիրտը ինձ խաբի:


Թույլ տուր ստորագրել այսպես՝ Բո քույր՝ Անահիտ»:

Գեներալը մի պահ խորհելուց հետո գրեց.

«Թանկագին քույրս: Ձեր նամակը շատ հուզեց ինձ: Ես ծնվել եմ ոչ թե Թուրքահայաստանում, այլ Այուդենյաց աշխարհում և մինչև այսօր Անահիտ անունով քույր չունեի, հիմա ունեմ: Մեզ մի մայր չի ծնել, բայց ծնել է մի ժողովուրդ: Ընդունեցեք իմ և ընտանիքիս բոլոր անդամների կողմից ջերմագին ողջույններ:

Բո եղբայր՝ Հովհաննես»:

Ըստ Հրաչյա Քոչարի



Սարդարապատի համալիրը, 1968թ.

Ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան,
քանդակագործներ՝ Ա. Հարությունյան,
Ա. Մանասյան, Ա. Շահինյան

Բառեր

դարածվել – распространяться	օրորվել – качаться
Հայրենական Մեծ Պատերազմ – Великая Отечественная война	արնաշաղախ – окровавленный
սփյուռք – диаспора	անմեղ – невинный
բնօրրան – колыбель, родина	անարդար – несправедливый (դ=թ)
արմատահան – вырванный с корнем	ուղղել – направить
գօր ու գիշեր – день и ночь	կործանվել – погибать
երագել – мечтать	գերդաստան – семейство
սուր – меч	վրեժ – месть
հույս – надежда	վրեժ լուծել – отомстить
հօդս ցնդել – улетучиться	կռիվ – бой
ափամերձ – прибрежный (ծ=g)	փուրք փալ – отдать должное
միգամած – покрытый туманом	քաղաքավարություն – вежливость
բերրի – плодородный	շտապ – спешно
կապուտակ – лазурный	ստորագրել – подписать, подписаться
պարտեզ – сад	խորհել – думать, обдумывать
կղզի – остров	ջերմագին – теплый, горячий
յաթաղան – ятаган	

Ապրիլի քսանչորսին

Մեծ եղեռն: Այսպես են անվանում 1915թ. Օսմանյան կայսրության կազմակերպած հայերի ցեղասպանությունը: Մեծ: Ուրեմն եղել են նաև, այսպես կոչված, փոքր կոտորածներ: Եվ հազար ութ հարյուր իննսուներս թվականին, և իննսունվեցին: Եվ հազար ինը հարյուր չորսին, և ինը հարյուր ութին: Եվ տասներկու թվականին, և տասնհինգին: Ըստ էության՝ ամեն տարի, ամեն օր, ամեն ժամ: Մի ամբողջ հավերժություն և ամեն պահ հոսել է իր խաչը կրող հայ ժողովրդի արյունը: 1915թ. ամբողջ տարին Եփրատ գետով հոսել են խոշտանգված երեխաների, կանանց ու ծերերի դիակներ: Տասնհինգ թվականի ամբողջ ամառը Տեր-Չոր անապատի շիկացած ավազներում սարսափից խելագարված իրենց մայրերի աչքի առաջ ծարավից չորացել, դիակ են դարձել անթիվ հայ մանուկներ: Տասնհինգ թվականի հուլիս և օգոստոս ամիսներին մոտ քառասուն օր մուսալեռցիները պայքարել են մինչև ատամները զինված ու արյան հոտից հարբած թուրք ասկյարների դեմ՝ կրծքով պաշտպանելով իրենց քարքարոտ հայրենի հողը: Եվ ահա այդ բոլոր օրերից, որոնցից յուրաքանչյուրը, կարելի է ասել, տևել է դարից ավելին, պատմությունն ընտրել է միայն մեկը՝ հազար ինը հարյուր տասնհինգ թվականի ապրիլի քսանչորսը: Դա ամենաարյունալի օրը չէր. և, համենայն դեպս, պատահական չէ, որ ժողովրդի միասնական հիշողությունը դժոխային հավերժությունից առանձնացրել ու պահել է հենց այս քսանչորս ժամը, այս ութսունվեց հազար չորս հարյուր վայրկյանը:

...Տասը տարի առաջ Նյու-Յորքում ժանոթացա ութսունհինգամյա Դոլորես Ջոհրապի՝ հայ նշանավոր գրող ու հրապարակախոս Գրիգոր Ջոհրապի դստեր հետ: Նա պատմեց, որ ապրիլի քսանչորսի ողբերգական առավոտը նախաճաշի ժամանակ

իրենց տուն մտան երկու ոստիկան և հայտնեցին, որ Թալաաթն անձամբ իր մոտ է կանչում «իր բարեկամ» Գրիգոր Չոհրապին: Ապա ավելացրին, որ, ըստ իրենց տվյալների, տանտերը շատ շուտով վերադառնալու է: Թուրք ոստիկաններից մեկը մի հեգնական հայացք նետեց և ասաց վերջում. «Մի՛ անհանգստացեք, Չոհրապ ադան կվերադառնա ու կուտի իր կեռասը»: «Սեղանին, իսկապես, կեռաս կար, – շարունակեց իր պատմությունը տիկին Դոկորեսը: Դա տարվա առաջին կեռասն էր: Հայրս էլ, ես էլ շատ էինք սիրում արևով լեցուն, ոսկեկարմիր, մարգարտանման այդ պտուղները: Մենք՝ տնեցիներս, կեռասին ձեռք չտվինք: Հիշում եմ, թե ինչպե՛ս էի ուզում, բայց ինձ զսպում էի:

Հայրս չվերադարձավ ոչ կեսօրին, ոչ երեկոյան, ոչ գիշերը: Հետո մենք իմացանք, որ այդ օրը և այդ գիշեր Կոստանդնուպոլսում կոտորել էին մոտ յոթ հարյուր մտավորական՝ արվեստի ու գրականության գործիչներ, հոգևորականներ: Պաշտոնական ցուցակներում նրանցից շատերը, այդ թվում և հայրս, նշված էին իբրև հրապարակախոսներ»:

Խունացած աչքերով, չորացած, չամիչ դառած տիկին Դոկորեսը արդեն յոթանասուն տարուց ավելի է, ինչ կեռաս չի ուտում:

Ըստ Զորի Բալայանի

Բառեր

եղեռն – злодеяние, тяжкое преступление, зд. резня
կայսրություն – империя
ցեղասպանություն – геноцид
կոտորած – резня
հավերժություն – вечность
պահ – мгновение
կրել – нести
խռշտանված – истерзанный
դիակ – труп
շիկացած – раскаленный
ավազ – песок
չորանալ – высыхать
պայքարել – бороться
զինված – вооруженный
հոտ – запах
հարբած – пьяный, опьяненный (բ=փ)
կուրծք – грудь
քարքարոտ – каменистый
յուրաքանչյուր – каждый
տևել – длиться
արյունալի – кровавый
համենայն դեպս – все же
միասնական – совокупный
դժոխային – адский
առանձնացնել – выделить
ութսունհինգամյա – восьмидесятипятилетний

նշանավոր – знаменитый
հրապարակախոս – публицист
ողբերգական – трагический (ղբ=խա)
ոստիկան – полицейский
անձամբ – лично
ավելացնել – добавить
տվյալ – сведение
հեգնական – иронический
հայացք – взгляд
նետել – бросить
կեռաս – черешня
արևով լեցուն – наполненный солнцем
ոսկեկարմիր – золотисто-красный
մարգարտանման – похожий на жемчуг (զ=ք)
պտուղ – плод
զսպել (իրեն) – сдерживаться
կոտորել – вырезать
մտավորական – интеллигент
գործիչ – деятель
հոգևորական – священнослужитель
պաշտոնական – официальный
նշված լինել – значиться
խունացած – выцветший
չամիչ – изюм
չամիչ դառնալ – зд. иссохнуть

Կոմիտասի երգը

Այդ դեմքերը հիմա էլ աչքիս առաջ են: Երեք ճապոնացի և նրանց կողքին՝ եղբայրս, ոչ այն է՝ ծիծաղում են, ոչ այն է՝ լալիս են: Ես էլ չգիտեմ, թե ինչ անեմ, ապշած՝ նրանց են նայում: Իսկ նրանք կանգնած են պատից կախված ոչ մեծ մի քանդակադրոշմի առաջ: Դա եղբորս՝ հայտնի խեցեգործ, դրոշմահատ-նկարչի գործն է:

Այնտեղ Կոմիտասն է պատկերված խելագար:

Հազվագյուտ գեղեցկության քանդակադրոշմ է ...

Բայց մի՞ թե բանն այդ է: Ախր Կոմիտասն է, իր շուրջը կատարվող գազանություններից խելքը արդեն կորցրած ...

Իսկ ինչպե՞ս է դրոշմված: Այդ ցնցումն ինչպե՞ս է հաղորդված:

Ես, իհարկե, մասնագետ չեմ, բայց երբ տեսնում ես, թե ինչպես է տղամարդու այտի վրայով արցունք հոսում, դա, երևի, տպավորիչ է: Ես այդպես են կարծում:

Ուրեմն կանգնած են այդ երեք ճապոնացիները եղբորս կողքին և ոչ այն է՝ ուրախությունից ծիծաղում են, ոչ այն է՝ լալիս են: Բայց ինչի՞ համար:

Մի անգամ ճապոնացիներ էին եկել մեր քաղաքը: Ջրոսաշրջիկներ: Դե՛, նայեցին ամեն ինչ, ինչպես հարկն է լուսանկարչական ապարատները չխկչխկացրին, լուսանկարվեցին ի հիշատակ, պատմության համար էլ «ֆիլմ» հանեցին, Արարատը մի կուշտ դիտեցին ու թողեցին գնացին: Տուն վերադարձան: Բայց ոչ բոլորը: Երեք հոգի՝ արվեստի գիտակներ, մնացին: Եվ որտեղի՞ց էին իմացել եղբորս մասին ... Մի խոսքով, նրանց թարգմանիչը՝ իմ հին ծանոթը, օրը ցերեկով զանգում է ինձ ուղիղ աշխատանքի տեղը:

— Էսպես ու Էսպես, — ասում է: — Տար նրանց եղբորդ մոտ:

«Հուշանվեր» է հարկավոր: Առանց այդ ոչ մի կերպ չեն ուզում հեռանալ:

Հանդիպում նշանակեցի, գնացինք եղբորս արվեստանոցը: Աշխարհի կեսը նրա քանդակադրոշմներն է գնում, կամ գուցե կեսից ավելին, ես երբեք չեմ հարցրել: Բայց դա նույնիսկ էական չէ: Կարևորն այն է, որ նրան ճանաչում են ... Ահա այս երեքն էլ հո հենց այնպես չե՞ն եկել, եկել են անպայման գնելու: Հակառակի պես եղբայրս էլ համառում է, չի ուզում վաճառել ու վերջ: Կատաղած ետ ու առաջ է քայլում, ինձնից նեղանում է, որ այդպիսի պատգամավորություն են բերել, իրեն գործից կտրում են: Ինքը մի մեծ պատվեր ունի շտապ ավարտելու, իսկ ես ինչ-որ ճապոնացիների են բերել:

Իսկ ճապոնացիները ... նրանք գործարար մարդիկ են, նրանք մտածում են՝ գինն են բարձրացնում և ցանկանալով ցույց տալ, թե իրենք ի՞նչ արժեն, ուղղակի ասում են.

— Սակարկելու կարիք չկա: Ամբողջը միանգամից գնում ենք: Բոլորը, ինչ որ կախված է սրահում:

Իսկ այնտեղ քիչ բան չկա կախված:

Եղբայրս, այդ տեսնելով, ասում է.

— Լավ, սատանան ձեզ հետ, միայն թե թարգմանեցեք նրանց, որ այս գործը չեմ վաճառում ...

— Ինչպե՞ս թե՛ չեք վաճառում, ինչպե՞ս թե՛ չեք վաճառում, — ծայն ծայնի տվեցին ճապոնացիները: — Ախր, ինչու՞:

Հարցը տրված էր, և ճապոնացիները, լսողություն դարձած, պատասխանի էին սպասում, որովհետև գործի այդպիսի ընթացքը նրանց հետաքրքրությունը շարժեց: Հիմնավորապես: Նրանք, ըստ երևույթին, հասցրել էին գնահատել այդ հազվագյուտ քանդակադրոշմի գեղեցկությունը և որոշել էին պայքարել դրա համար մինչև վերջ:

Ի՞նչ ասես նրանց: Հարկավոր է նաև դիվանագիտություն բանեցնել, որպեսզի հյուրերը չնեղանան: «Եղբայրս խրվեց» մտածեցի:

Նա նրանց նայեց, նայեց, հետո սկսեց բացատրել թարգմանչի միջոցով.

– Հասկանու՞մ եք, հարգելի պարոնայք, սա մեր հայ երգահան Կոմիտասն է: Նա տասնհինգ թվականին իր հայրենակիցների խոշտանգումներից ակամատես լինելով խելագարվեց: Ինձ համար այս պատկերը թանկ է, անչափ: Իսկ ձե՞զ համար ինչ է: Պատարկ ձայն... Պատկեր՝ դրոշմված մետաղի վրա: Չէ՛, պարոնայք, այս մեկը չի վաճառվում: Ցավում եմ, բայց սա չի վաճառվում ...

Ճապոնացիները, մեծ քաղաքավարությամբ թարգմանությունը լսելուց հետո, ավելի մոտեցան քանդակադրոշմին և սկսեցին երգել:

– Տե՛ր Ասովա՛ծ, – զարմացա ես, եղբայրս էլ զարմացավ, թարգմանիչն էլ զարմացավ:

Ճապոնացիների երգածը այլ բան չէր, բան ... Կոմիտասի երգը:

Եվ որտեղի՞ց գիտեին: Անհավատալի էր:

Ես նայում էի նրանց դեմքերին՝ ճապոնացիների և եղբորս: Այտերի վրայով արցունքներ էին հոսում, մինչդեռ այս մեղիկ տնային պատկերասրահում հնչում էր Կոմիտասի երգը, որ հեռավոր կղզիներից եկած մեզ անծանոթ ճապոնացիներ էին կատարում: Պարզապես երգում էին, առանց կեցվածքի ...

Եղբայրս՝ ցնցված, զարմանքից ուշքի գալով, անմիջապես խնդրեց թարգմանել.

– Գիտե՞ք, այս քանդակադրոշմն իսկապես չի վաճառվում: Բայց ես այն ձեզ եմ նվիրում: Պարզապես նվիրում եմ ...

Նա պատից հանեց քանդակադրոշմն ու խնամքով հանձնեց ճապոնացիներին:

Այսբան բան:

Լևոն Հովսեփյան

Բառեր

ճապոնացի – японец
ոչ այն է՝ ..., ոչ այն է՝ ... – не то ..., не то ...
ապշած – изумленный
քանդակադրոշմ – чеканка
խեցեգործ – керамист
դրոշմահատ-նկարիչ – художник-чеканщик
պարկերված – изображено
զազանություն – зверство
դրոշմված – вычеканено
ցնցում – потрясение
հաղորդված – передано (դ=բ)
տպավորիչ – впечатляющий
ապարատ – аппарат, **լուսանկարչական** ~ – фотоаппарат
լուսանկարվել – фотографироваться
ի հիշարակ – на память
հանել – снимать, **ֆիլմ** ~ – снимать фильм
կուշտ – сытый, досыта

գիտակ – знаток, ценитель
օրը ցերեկով – среди бела дня
հուշանվեր – сувенир
գուցեև – может быть, даже
էական – существенный, существенно
հակառակ – наоборот, ~ի պես – как назло
համառել – упорствовать, упрямиться
նեղանալ – обижаться
պարզամավորություն – делегация
գործից կտրել – отвлекать от дела
պարվեր – заказ
շտապ – срочный, срочно
սակարկել – торговаться
կարիք չկա – нет нужды, не стоит
լսողություն – слух, ~ դարձած – обратившись в слух
գործի ընթացքը – оборот дела

հիմնավորապես – основательно
հասցնել – успеть
պայքարել – бороться
դիվանագիտություն – дипломатия
բանեցնել – применить
խրվել – влипнуть
միջոցով – посредством, через (последлог) (ք=չ)
խոշորանգում – истязание
ականապես – очевидно

այլ բան չէ քան ... – не что иное, как ...
անհավատարի – немыслимый, немыслимо
նեղիկ – узенький, тесный
հնչել – звучать
կեցվածք – поза, առանց ~ի – без позы
ցնցված – потрясенный
ուշքի գալ – опомниться
նվիրել – дарить, подарить
հանձնել – вручить

Ազգային երգ

Ցարական կառավարությունը փակել էր հայկական դպրոցները... Գավառներում տեղ-տեղ սկսեցին գործել գաղտնի դպրոցներ: Ուսուցիչներից ոմանք մնալով գյուղերում, երեխաներին գրել-կարդալ էին սովորեցնում:

Ընկերոջս հետ գնացինք գյուղական գաղտնի դպրոցը: Արաքսի ափին հաստաբուն ընկուզենու տակ տեղավորվել էին մեծ թվով մանուկներ ու պատանիներ: Բոլոր աշակերտները միատեղ էին պարապում: Դպրոցը միայն մի ուսուցիչ ուներ, նա նույն գյուղից մի կրակոտ երիտասարդ էր:

Երբ դասաժամը վերջացավ, ընկերս խնդրեց ուսուցչից, որ աշակերտները մի երգ ասեն:

Ուսուցիչը մի պահ մտածելուց հետո դարձավ աշակերտներին.

– Բոլորդ միասին ինձ հետ երգեցեք «այբ, բեն, գիմ»:

Եվ բոլորը հետևելով ուսուցչին սկսեցին միասին բարձր ձայնով հեգել.

Այբ, բեն, գիմ, Դա, եչ, գա, Է, ըթ, թո...

– Ահա ձեզ մի ընդհանուր ազգային երգ, որ ամեն հայ անպատճառ պիտի գիտենա. ահա չորս-հինգ տարի է, որ ես այս երգն եմ սովորեցնում, ուրիշ երգ չեմ ճանաչում, – ասաց ուսուցիչը և սրբեց քրտնած ճակատը:

– Շատ ճիշտ եք ասում և կեցցե՛ք, իսկապես, որ անմման էր, – պատասխանեցինք մենք:

Այա մեր շնորհակալությունը հայտնելով՝ ամուր սեղմեցինք սրամիտ ուսուցչի ձեռքը և ուրախ ու թեթև շարունակեցինք մեր ուղին: Մի պահ այդ տարօրինակ երգի ազդեցության տակ էինք: Ընկերս խզեց լռությունը.

– Համաձայն չե՞ս, որ քանի հայը կապրի հայոց «այբ, բենը» չի մեռնի:

– Այո, – ասացի ես, – բայց ես հակառակին ավելի եմ համաձայն, այն, որ քանի հայոց «այբ, բենը» կապրի, հայը չի մեռնի:

Ըստ Ավ. Իսահակյանի

Բառեր

ցարական կառավարություն – царское правительство
գավառ – провинция, губерния
գաղտնի – тайный (ղ=խ)
ոմանք – некоторые
հաստաբուն – толстоствольный
ընկուզենի – ореховое дерево

տեղավորվել – разместиться
մեծ թվով – в большом количестве
կրակոտ – пылкий
դառնալ – обратиться
հեգել – читать по слогам
անպատճառ – непременно
ճանաչել – признавать

սրբել – вытирать (բ=փ)
քրքրած – потный
աննման – бесподобный, бесподобно
շնորհակալություն հայտնել –
 благодарить
ամուր – крепкий, крепко
սեղմել – жать, пожимать

ուղի – путь
փարփրակ – странный
ազդեցություն – влияние, зд.
 впечатление
խզել – нарушить
հակառակ – обратный,
 обратно, обратное

Մշո ճառընտիրը

Հայ ժողովրդի համար գիրքը եղել է նաև հայրենիք: Երևանի Մատենադարանի ցուցափեղկերից մեկում դրված է աշխարհի ամենից լայնածավալ հայկական ձեռագիրը՝ Մշո Առաքելոց վանքի ճառընտիրը: Սրբություն է եղել այդ մատյանը Մշո գավառի հայության համար: Երբ պայթում է հազար ինը հարյուր տասնհինգ թվականի աղետը, նրանք իրենց ունեցվածքը փրկելու փոխարեն աշխատում են փրկել ձեռագիրը: Եվ որովհետև շատ խոշոր է եղել այն, բաժանում են երկու կեսի: Իրար կորցրած երկու գաղթական եղբայրների պես այդ երկու կեսերն էլ կորչում են գաղթի ճանապարհներին: Հիմա, սակայն, Երևանի Մատենադարանում հանգիստ ու ապահով միացել են այդ երկու կեսերը:

Հայ ժողովուրդն էլ Մշո ճառընտիրի նման աղետի օրերին բաժանվեց, երկու կես եղավ: Մի կեսը հայրենի հողի վրա է հիմա, իսկ մյուս կեսը դեռ դեգերում է աշխարհի ճանապարհներին...


Բայց Մշո ճառընտիրը վկա, կգա, պիտի գա այն օրը, երբ մեր ժողովուրդն էլ իր մատյանի պես կմիանա հայրենի Հայաստանի հանգիստ ու ապահով երկնքի տակ:

Ըստ Ս. Կապուպիկյանի

Բառեր

ցուցափեղկ – витрина (ղ=խ)
լայնածավալ – объемный
Առաքելոց վանք –
 Апостольский монастырь
ճառընտիր – избранные речи
սրբություն – святыня (բ=փ)
մատյան – книга, регистр

պայթել – лопнуть, зд. разразиться
աղետ – бедствие, катастрофа
ունեցվածք – имущество
գաղթ – депортация
դեգերել – блуждать
անհայտ – безвестный
ապահով – безопасный, безопасно



Փառզու (Փառնիկ Զուլումյան, Ֆրանսիա)
 Հայաստան, Երկրաշարժ, հուլիս. 1989թ.

Ключ

Բանալի

Урок 1. Առաջին դաս

–Սա նկար ար: –Իսկ է՞ս: –Էս լուսանկար ար: –Էս ու՞մ լուսանկարն ար: –Արմենի ու Հայկի: Էս Արմենի ու Հայկի լուսանկարն ար: –Իսկ է՞ս: – Էս ես եմ: –Էս դու՞ ես: –Էս իմ լուսանկարն ար: Ստեղ ես մի տարեկան եմ: Ելակ եմ ուտում: Էս իմ քուրն ար: Իրա անունը Լուսինե ար: – Լուսինե: Սիրուն անուն ար: –Տուր ստեղ էն լուսանկարը: –Էս ու՞մ նկարն ար: –Իմ: Այսինքն, մեր: Սա մեր լուսանկարն ար: Ստեղ իմ քուրն ու ես տաս-տասիրեք տարեկան ենք: –Ստեղ դու տասիրեք տարեկա՞ն ես: –Ների, ների, ստեղ ես ինը տարեկան եմ, իհարկե, ինը: Էս իմ հերն ար, էս իմ մերն ար: Իմ հերը հայ ար: Իրա հայրենիքը Հայաստանն ար: Իրա մայրենի լեզուն հայերենն ար: Իմ մերը ռուս ար: Իրա հայրենիքը Ռուսաստանն ար: Իրա մայրենի լեզուն ռուսերենն ար:

Упражнения.

2 6. դերասանը, լեզուն, իհարկե, ռուսերենն, ինը, տարեկան.

2 в. աս-տըղ, դը-րամ, նը-րա, լու-սա-նը-կա-րը.

13. Իմ քույրը քսանինը տարեկան է: Անահիտի մայրենի լեզուն հայերենն է: Հայաստանը Արտակի ու Ռուզանի հայրենիքն է: Նրա անունը Ջարեհ է: Դու ուզու՞մ ես Հայաստան մեկնել: Նրանք այստեղ են:

14 По горизонтали: ինը հազար երեք, տասնմեկ, քսաներկու, հարյուր, տասը, ինը, քառասուն, երեսուն, քսանինը, մեկ, տասներկու. по вертикали: ինը հարյուր երկու, տասներեք, երեք, քսան, հազար, հիսունմեկ, իննսունինը, երկու, տասնինը, երեսուներեք, քառասունինը.

15. Սա իմ լուսանկարն է: Այստեղ ես տասներեք տարեկան եմ: Իսկ դու քանի՞ տարեկան ես: Ես քսանինը տարեկան եմ: Դու հա՞յ ես: Այո, ես հայ եմ: Իմ մայրենի լեզուն հայերենն է, իմ հայրենիքը Հայաստանն է:

Արմենը իմ ընկերն է: Նրա քույրը երեսուներեք տարեկան է: Սա նրա լուսանկարն է: Նրա անունը Աստղիկ է: Աստղիկը մեկնում է Հայաստան:

Ես տասը տարեկան եմ, իմ մայրիկը քսանինը տարեկան է իմ հայրիկը երեսունմեկ տարեկան է:

17. Դու դերասան ես, դասատուն մի ռեսիմ է ուզում, մեր կատուն այստեղ է քնում, սա մենք ենք:

18 а. Դրիմ, 18 6. Դադստան:

Урок 2. Երկրորդ դաս

–Ալլո, Հակոբ, էս կիրակի մենք մեկնում ենք Հայաստան: –Ո՞վ ար մեկնում: –Ամենքս՝ հերս, մերս, ախպերս, քուրս ու ես: –Դուք արդեն տոմս ունե՞ք: –Հա՛, ժամը իննի համար տոմս ունենք: –Առավոտյա՞ն իննի: –Չէ՛, երեկոյան իննի, այսինքն ժամը քսանմեկի համար: Հայաստանում հիմի ի՞նչ եղանակ ար: Հիմի հոկտեմբեր ամիսն ար: Հոկտեմբերի սկզբին Հայաստանում դեռ քավական տաք ար: –Ալլո, Հակոբ, չի լսվում, լավ չի լսվում, ասում եմ ի՞նչ եղանակ ար Հայաստանում:

Упражнения.

1 б. տոմս, վարդ, մատանիդ.

2 б. բարեկամը, կիրակի, երեկոյան, մեկնում է, եղանակ, սովորում, առավոտյան.

2 в. տաս-նը-չորսին, նը-րանք, հը-րա-վի-րում, հայ-րըս, եղ-բայ-րըս, մայ-րըս, քույ-րըս, Հրանտ, տե-տըր, մե-ղըր.

2 г. без оглушения: բարեկամներ, սովորաբար, հոկտեմբեր, սկզբին, դեռ, բավականին, с оглушением: Վարդան, կարդալ, Նվարդ, համբուրում ենք, Սրբուհի, Հակոբ, ընդունակ, եղբայրս, արդեն.

6. Սա Սարյանն է: (Մարտիրոս Սարյան. ինքնընկար:) Սա Սարոյանն է: (Վիլիամ Սարոյան:) Սա Ջիգարիսանյանն է: (Արմեն Ջիգարիսանյան:) Սա Ազնավուրն է: (Շարլ Ազնավուր:)

Սա Սայաթ Նովան է: (памятник лирическому поэту и певцу 18-го в. Саят-Нова на проспекте Маштоца, напротив музыкальной школы им. Саят-Нова. Скульптор – А. Арутюнян.) Սա Սասունցի Դավիթն է: (памятник герою народного эпоса Давиду Сасунскому на привокзальной площади. Скульптор – Е. Кочар.) Սա Վարդան Մամիկոնյանն է: (памятник легендарному полководцу 5-го в. Вартану Мамиконяну, установленный на бульварном полукольце. Скульптор – Е. Кочар.) Սա Ալեքսանդր Թամանյանն է: (памятник архитектору Александру Таманяну на улице Таманяна, у подножья архитектурно-художественного комплекса "Каскад". Скульптор – А. Овсепян.)

13. հրավիրել, հյուր, հյուրը, հրավիրում է, հյուրասեր, հյուրասիրում.

14. սովորում, սովորում, սովորաբար, սովորական.

15 а. Հայաստանում մենք մի հյուրասեր ընկեր ունենք: Ամեն տարի նա մեզ հրավիրում է Հայաստան ու ասում է՝ ամռանը Հայաստանում եղանակը բավականին մեղմ է, իսկ ես ասում եմ՝ ոչ, չեմ կարող:

15 б. числительные: երկու, երեք, տասնինը, քսանչորս, քառասուն, հիսուն; месяцы: հունվար, մայիս, հունիս, հուլիս, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր;

15 г. – Դուք ուսանող եք: – Այո, ես սովորում եմ ինստիտուտում: – Նրա եղբայրը ինժեներ է: – Ոչ, նա ինժեներ չէ: – Դուք սիրում եք մարտ ամիսը: – Ոչ, ես չեմ սիրում մարտ ամիսը, ես սիրում եմ մայիս ամիսը: – Իսկ դու՞ք: Իսկ մենք սիրում ենք հունիսն ու հուլիսը:

15 д. Ե՞րբ, Դու՞ք, Ու՞ր, Ո՞վ, Նրա՞նք, Ո՞վ:

Урок 3. Երրորդ դաս

Упражнения.

16. հայրս, մայրս, գնում, դնում, քանոնս, ռետինս, չկան, մտածում, քանոնդ, ռետինդ, մատիտդ.

1в. հայրդ, մայրդ, մատիտդ, եղբայր.

2 б. երեկոյան, վերադառնում, ինստիտուտից, տեսնում, ռետինս, սովորաբար, բաղնիս;

2 в. եղ-բայ-րըս, մըտ-նում, դը-ռան, դը-նում, չը-կա:

10 а. մածունը, մեղրը՞, կովը, ո՞վ է տալիս, ժիրան.

10 б. ժամը քանի՞սն է, ժամը վեցն է, ամսի քանի՞սն է, օգոստոսի տասնհինգն է հարցնում է, ցույց տալիս հեռուստացույցը, հեռուստացույց են նայում:

11. Մեկնել Ամերիկա, Անգլիայից, տանել Բաղդադ, Գորիսից, գիրք, գրիչ. բերել սենյակից, սենյակ, տուն, նկար. գնալ տուն, Մոսկվա, ամեն օր. գալ համալսարան, համալսարանից, բակ. տեսնել դուռը, Հայաստանը. նայել լամպն օր, ամեն անգամ, հանգիստ, զայրացած, միայն, արագ, հեռուստացույց, ժամացույցին, նկարին. մոտենալ դռանը, տանը, սեղանին, անտառին, մեզ: ընկնել զայրացած, սեղանից, դանդաղ. վեր կենալ արագ, սեղանից, բակում. հարցնել առավոտյան, ամռանը, նամակ, ծառային. դիմել տղային, զայրացած. վերցնել մեղր, մածուն, կողմնացույց, օրացույց, հեռուստացույց. տալ մատանի, լուսանկար, ելակ ու մորի, բալ ու ծիրան. ազատել սենյակը, տեղը, դուռը, մուտքը. ազատագրել հայրենիքը. մտածել հանգիստ, առավոտյան, ամեն երեկո. կարդալ նամակ, գիրք, համալսարանում. գրել նամակ, գիրք, համալսարանում, համալսարանից:

12. Մարդիկ դռան առաջ ընկնում են ու վեր կենում: Մարդիկ ներս են մտնում ու դուրս են գալիս: Ծառան գալիս է բաղնիս ու տեսնում, որ դռան առաջ մի քար կա: Մի մարդ գալիս է բաղնիս ու քարը վերցնում, մի կողմ է դնում: Ծառան վերադառնում է տուն ու ասում, որ բաղնիսում համարյա մարդ չկա: Տերը գնում է բաղնիս ու տեսնում է, որ բաղնիսում մարդ կա, տեղ չկա:

17 Ե. քանի մարդ, մարդը, ամեն մարդ, այս մարդը, մի մարդ

Урок 4. Չորրորդ դաս

—Էս կնոջը տեսնու՞մ ես: Ու՞մ ա նման: —Մորդ ա նման, ո՞վ ա: —Քուրս ա: —Էս ջահել կինը քու՞րդ ա: Ինչ գեղեցիկ ա քուրդ: Իսկական գեղեցկուհի ա: —Իսկ էս քրոջս կեսուրն ա: —Կեսուրը, կեսուրը ... —Քրոջս ամուսնու մաման: —Ա՛, քրոջդ ամուսնու մաման: —Բա էս ո՞վ ա, դու՞ ես: —Հա՛, ես եմ, քրոջս ընտանիքի հետ եմ էս նկարում: —Էս ո՞րտեղ եք բոլորդ, ձեր բակու՞մ եք: —Չէ, մենք բակ չունենք: Իմ քրոջ կեսրոջ տան բակում ենք: Ինքը հյուրասեր տանտիկին ա: Բարի ա ու կատակասեր: Հետաքրքիր կին ա: —Իսկ քրոջդ ամուսինը՞: —Ինքն էլ ա իրա մոր նման հյուրասեր ու սրամիտ: Մի խոսքով, ուրախ ընտանիք են: —Ինչ սիրուն, հանգիստ, մաքուր բակ ա: —Բակում մի մեծ ծիրանի ծառ ունեն, ծառի տակ՝ սեղան, մեծ մասամբ էնտեղ են ուտում: —Իսկ էս ի՞նչ քար ա: —Քար չի, պուլպուլակ ա: Ջուրը չե՞ս տեսնում: Հենց ըտեղից ջուր են խմում: —Ինչ ա, տանը ջուր չունե՞մ, իրանց ջուրը բակու՞մ ա: —Չէ, տանը ջուր կա, տաք ու սառը ջուր ունեն, բայց երբ իրանք բակում են, հենց բակում իսկական աղբյուրի ջուր են խմում: Պուլպուլակից: —Իսկ է՞ս ով ա: —Էս ախպերս ա ու ախպորս ընտանիքը: Հեսա իրա կնոջ նկարը: —Ախպերդ հորդ ա նման: —Հա, ասում են, որ ինքը մեր հոր նման լուրջ տղամարդ ա: Իսկ էս իմ զարմիկն ա, ուսանող ա, համալսարանում ա սովորում: — Ջարմիկդ ո՞վ ա: —Ախպորս տղան: —Իսկ ախպերդ աղջիկ ունի՞: — Իհարկե: Հեսա իմ զարմուկին: Ինքն էլ ա ուսանողուհի:

Упражнения.

1a. Կնոջը, նման, մորդ, քույրս, քույրդ, քրոջս, քրոջդ, նկար, բոլորդ, հետաքրքիր, սրամիտ, նրանց, եղբայրս, եղբորս, նրա, կնոջ, հորդ, տղամարդ, զարմիկդ, տղան, եղբայրդ:

16. Կնոջը, մորդ, քույրդ, քրոջս, քրոջդ, բուրդդ, սկեսրոջ, այդտեղից, աղբյուրի, ցայտաղբյուրից, եղբայրս, եղբորս, եղբայրդ, հորդ, տղամարդ, զարմիկդ, աղջիկ:

2в. հետաքրքիր - գիրք, ընտանիք, անգամ, օգտակար, ուրախ ուսանող, ողջույն, ցայտաղբյուր, աղջիկ, առաջ, աչք, մորաքրոջ աղջիկ, ողջույն, ինչ, ոչ

2г. Իմ ընկերը սրամիտ ու հետաքրքիր տղա է: Մի անգամ նա մի աղջկա հետ զալիս է մեր տուն ու դռան առաջ ընկնում է: Մեր ընտանիքում բուրդը մտածում են՝ կամ նա աչք չունի, կամ սիրում է այս աղջկան:

3д. Նա սիրում է իր սկեսրոջը: Տղան նկարում է իր (իրենց) տունը: Նրանք գնում են իրենց ինստիտուտը: Մենք մեր քրոջը ամեն օր տեսնում ենք: Դու քո եղբորը (նամակ) գրու՞մ ես: Դուք ձեր տանն եք:

4д. Перед домом матери мужа дочери моего дяди, урок дочери сестры нашего друга, дверь дома матери Вашей жены, перед дверью комнаты дочери их хозяйина.

4е. իմ քույրը, իմ քրոջ ամուսինը, իմ քրոջ ամուսնու հայրը, իմ քրոջ ամուսնու հոր տունը; քո եղբայրը, քո եղբոր կինը, քո եղբոր կնոջ մայրը, քո եղբոր կնոջ մոր լուսանկարը

9. բակ, բակը, ձեր բակը, համալսարանի բակը, բակը, ամեն բակ

Зачет (Ստուգարք). 1Ա, 2Բ, 3Բ, 4Բ, 5Գ, 6Բ, 7Գ, 8Բ, 9Ա, 10Գ

Урок 5. Հինգերորդ դաս

4а. Ձվածեղ, (սպաս), նրբերշիկ, մեղր, բլիթ, սնկապուր, բադրջան, ձմերուկ, սնկով փլավ, բրինձ, բրնձով, սխտոր, կծու, թթու, խմորեղեն, ձկնեղեն, մսեղեն, չխրթմա:

4б. Արմ-կա-պուրն է դըժ-վա՞ր, թե՞ չը-խըրթ-ման: Ի՞նչ մը-սից է նըր-բեր-շի-կը: Նըս-տե-ցեք, խըն-դրեմ:

5а. Սպաս, նրբերշիկ, փլավ, երկուշաբթի, ուրբաթ, դպրոց:

5б. Գիրք, միրգ, ձմերուկ, սունկ, կարագ, մաքուր, հավաքել:

5в. Գաթա, խնդրեմ, սխտոր, բլիթ, ընտանիք, թերթ, բադրջան:

5г. Աղցան, խորոված, տապակած, ձվածեղ, դեղձ, մածուն:

5д. Սուրճ, վերջ, ոչխար, առողջարան:

5е. Աշխատանք, ողջույն, աղջիկ, սխտոր:

12б. Եփել, խաշել կաթսայում, տապակել թավայում. թխել, խորովել թոնրի մեջ. խորովել մանղալի վրա:

12в. Եփել ապուր, միս, տոլմա. տապակել հավ, ձուկ. թխել հաց, լավաշ, գաթա, տորթ. խորովել հավ, գառ, միս. խաշել ձու, ձուկ, միս:

13б. Մայրս, քույրդ, պանիր, միս, սունկ, բրինձ, գառ, թոնիր, նուռ, լեռ, թոռ, աղջիկ, զարուն, ամուսին:

13в. Տավարի մսից, առանց մսի, սնկով ու բրնձով փլավ, թոռան սենյակը, ամռան վերջին, ձկան յուղ:

16. Կարմիր լոբի ընկույզով, գառան խաշլամա, խոզի կամ ոչխարի խորոված, բարի ախորժակ, հաց ու պանիր, կեր ու բանիր, մեղրով ձվածեղ, խաշած ձու թարխունով, նրբերշիկ կանաչ ոլոռով: Իշխան ձուկ:

19. 1 Չխրթմա, 2 չխրթմա, 3 չխրթման, 4 չխրթմա, 5 չխրթման, 6 չխրթմա, 7 չխրթմա, 8 չխրթման, 9 չխրթման, 10 չխրթման:

Урок 6. Վեցերորդ դաս

2 Պատուհան, ճանապարհ, նորություն, աչքերիս չեմ հավատում, հոյակապ տեսարան, Մասիսի գագաթը, ոսկի աշունը դեռ շարունակվում է, փողոցներն ու պարտեզները: Մեքենա, Ծիծեռնակաբերդ, ցերեկվա, սիրուն, լի, տերևներով:

3 a. Ծիծեռնակաբերդ, ամբողջ, երբեք, շոգ, հագուստ, հագնվել, հագնել, համբուրել:

3 б. Պատուհան, Հակոբ, Սիրարփի, երբ, երբեք, ուրբաթ, շաբաթ, սուրբ, սրբիչ, համբույր, համբուրել, ամպ, փողոց, երգ, կարագ, Գրիգոր, երեք, անգամ, մաքուր, հինգ, գիրք, հագուստ, հագնել, հագնվել, միրգ, օգուտ, հոգնած, զույգ, շոգ, տաք, երբեք, ցերեկ, գագաթ, մեքենա, արդեն, մարդ, Վարդան, ցուրտ, կարկուտ, թերթ, անդամ, ընդունակ, արդյոք, կարդալ, օդ, որդի, խնդրեմ, այդտեղ, հագուստ, գրեթե, բարձ, հաց, դեղձ, քաղցր, վեց, ծնողներ, ձյուն, անձրև, բացվել, աղջիկ, քաղցր, դեղձ, ողջ, ողջույն, առողջ, առողջարան, հաճախ, աղջիկ, մեջ, մեջք, աջ, առաջ, աչք, Իջևան, էջմիածին, ճանապարհ, աստիճան, վերջ, ողջ, ողջույն, առողջ, առողջարան, հաճախ:

12 б. Մի քանի հայերեն գիրք, մի քիչ մածուկ, մի քանի ծառ, մի քիչ մեղր ու կարագ, իմ մի քանի ընկերուհիների հետ, մի քիչ ծուլ, մի քիչ զբաղված, մի քիչ արագ:

Урок 7. Յոթերորդ դաս

2 a. Երգիչ, աղջիկ, մարդիկ, անգամ:

2 б. С оглушением: Հակոբ, երբեք, նրբերշիկ, սրբիչ, եղբայր, համբույր, հոգի, հագուստ, հագնել, հագնվել, շոգ, անգամ, Գրիգոր, Գևորգ, երգիչ, երգչուհի, արդեն, ընդունակ, օղաչու, կարդալ, անդամ, բարձ, աղջիկ, աջ, առաջ, մեջ, վերջ. Без оглушения: արար, տարբեր, այգի, գարուն, դար, դանակ, հանդիպել, բրինձ, խնձոր, հուշարձան, անձրև, ձյուն, տեղ, խաղող, լուրջ. В Գրիգոր, Գևորգ оглушаются только вторые а.

2в. Նը-կա-րիչ, ինձ նը-ման, նը-րա մոտ, դըպ-րո-ցա-կան տա-րի-ներ, տը-դա, տը-նա-յին տըն-տե-սու-հի, դըժ-գոհ, հը-պարտ, բը-ժիշկ, բը-ժըշ-կու-հի:

3 в. թթենի, թթենին, նռնենի, ձիթենի, նշենի, ընկուզենի, պիստակենի, պիստակենին

4. մատանու, այգուն, "Ռզնուն", ոգու մասին, ոլոռուն, գինուց, ձիուց

6 б. Բժշկին, նկարչին, երաժշտին, երգչին, ուսուցչին:

6 в. Երվանդի, այս գրքին, իմ գրչին, մոխրին, ջրին, այս գծին:

6 г. Բրնձով, դարչնով, նարնջով, մածնով, մրգով, պանրով, սնկով:

7 a. Քրոջս, եղբորով, աղջկան, աշակերտուհուց, ուսուցչին, այս բժշկին, մեր բժշկին:

8 a. Բժիշկներին, քույրերիս, հորեղբայրների, աղջիկներից:

13. Հայկուհին իմ ընկերուհին չէր: Արմենը չէր իմ ընկերը: Այն ժամանակ նա հինգ տարեկան չէր: Տղան չէր լսում մայրիկին: Տղան մայրիկին չէր լսում: Դպրոցական տարիներին նա շատ չէր կարդում:

17. Բժիշկ, բժիշկ, քանի՞ բժիշկ, մի բժիշկ, ամեն բժշկի, Վարդանի բժիշկը, այն բժիշկը, թո բժիշկը, բժիշկը լուրջ էր, մեր բժշկից գոհ, մեր բժշկին հիշում ես, այս բժշկին:

21 Ե. 1-ս, 2-ս, 3-ճ, 4-ս, 5-ճ, 6-ճ, 7-ճ, 8-ս, 9-ճ.

Урок 8. Ութերորդ դաս

4. Ա. Ճանապարհ, Բ. կրակ, Գ. ծառ, Դ. սալ, Ե. լեռ, Զ. ծիրան, Է. երեկ, Ը. աշխարհագրություն, Թ. ժամացույց, Ժ. մուկ, ԺԱ. մածուկ, ԺԲ. կողմնացույց, ԺԳ. օրացույց, ԺԴ. կին, ԺԵ. այցետոմս:

9. 1-Գ, 2-Բ, 3-Գ, 4-Ա, 5-Բ:

14 Բ. ճանաչում ես, գիտես, իմանում եմք, չես ճանաչում, իմանամ, չգիտեմք, գիտեն:

14 Գ. ես լավ եմ ճանաչում մեր քաղաքը, բայց չգիտեմ, թե որտեղ է ապրում իմ դպրոցական ընկերուհին: Իսկ այսօր առավոտյան նա ինձ զանգում է և ես իմանում եմ, որ մենք հարևաններ ենք:

15. Ա.— Մա՛, դու իմ ընկեր-ընկերուհիներին ճանաչու՞մ ես:

—Վարդգեսին ծանոթ եմ, իսկ օրիորդներին չեմ ճանաչում:

—Ծանոթացի՛ր, մա՛, Աստղիկի ու Լիլիկի հետ: Աղջիկներ, ծանոթացե՛ք, խնդրեմ, մայրիկիս հետ:

—Շատ հաճելի է, աղջիկներ՛ր, Վարդգես՛ս, ներս եկեք:

(пять участников)

Բ. —Գիտե՞ք, Ձեր դեմքը (лицо) ինձ ծանոթ է: Մենք ծանոթ չե՞մք:

—Այո, իհարկե, ծանոթ ենք: Ինչպե՞ս չէ: Արամ, ծանոթացի՛ր ընկերոջս հետ:

—Իմ անունը Վարդան է:

—Շատ հաճելի է, Արամ:

(три участника)

16 Ա. Ձեռք, գիրք, Գրիգոր, Գևորգ, արքա, մաքուր, երգիչ, հավաքել, միանգամից:

16 Բ. Վերջին, առաջին, ամաչել, ճանաչել, ամբողջ, աղջիկ, ինչու:

16 Գ. Ջայրացած, դարձյալ, դպրոցական, դեղձենի, փորձել, հարցնել:

17. 1-Գ, 2-Գ, 3-Բ, 4-Ա.

Зачет (Ստուգարք). 1Գ, 2Գ, 3Բ, 4Բ, 5Բ, 6Գ, 7Բ, 8Գ, 9Բ, 10Գ, 11Բ, 12Ա, 13Գ, 14Բ, 15Ա.

Իններորդ դաս

3. Ուսուցիչը *բաց է անում (բացում է)* դուռը ու ներս է մտնում: Ես *կատակ եմ անում (կատակում եմ):* Ինչու՞ եք *կռիվ անում (կռվում):* Երեխաները *բաց են անում (բացում են)* իրենց գրքերը: Մեր ուսուցիչը հաճախ է մեզ հետ *կատակ անում (կատակում):* Մի քիչ առաջ երեխաները բակում հանգիստ խաղ էին անում, իսկ հիմա *կռիվ են անում (կռվում են):*

